

ACADÉMIE DES SCIENCES DE LA RÉPUBLIQUE D'ARMÉNIE
INSTITUT D'HISTOIRE

LES GRANDES PUISSANCES,
L'EMPIRE OTTOMAN
ET LES ARMÉNIENS
DANS LES
ARCHIVES FRANÇAISES
(1914-1918)

TOME II

DOCUMENTS RÉUNIS ET PRÉSENTÉS
PAR
ARTHUR BEYLERIAN

Préface de
JEAN-BAPTISTE DUROSELLE

Traduit par
VAROUJEAN POGHOSSIAN

ERÉVAN "HAYASTAN" 2005

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԵԾ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ,
ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՄՐՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ ՀԱՅԵՐԸ
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԱՐԽԻՎՆԵՐՈՒՄ
(1914-1918)

ՀԱՏՈՐ II

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹՅԱՄԲ
ԱՐԹՈՒՐ ՊԵՅԼԵՐԻԱՆԻ

Առաջաբանը՝
ԺԱՆ-ԲԱՏԻՍ ԴՅՈՒՐՈՉԵԼԻ

Ֆրանսերենից թարգմանեց
ՎԱՐՈՒԺԱՆ ՊՈՂՈՍՅԱՆԸ

ԵՐԵՎԱՆ «ՀԱՅԱՍՏԱՆ» 2005

Բեռնում Ֆրանսիայի դեսպան պ. Բոն Խորհրդի նախագահ, Արտաքին գործերի նախարար պ. Ռիբոյին

Ճ. թիվ 1419:

Բեռն, 30-ը հունիսի 1917 թ.:
(Ստացել են Կար. հուլիսի 2-ին,
Քաղ. վարչ. հուլիսի 3-ին):

Վիեննայում Ալբանիայի նախկին նախարար Սուրեա բեյը հանձնարարել է մեր իրազեկիչներից մեկին ֆրանսերենի փոխադրելու այն զեկուցագիրը, որն ինքը կազմել է ի պատասխան ֆրանսիական Ռազմական նախարարության գործակալի իրեն հանձնած հարցարանի:

Ես Ձերդ գերազանցությանն եմ հղում սրան կից Սուրեա բեյի զեկուցագիրը և այն հարցարանը¹, որին նա պատասխանում է:

Սուրեայի զեկուցագիրն ամփոփում է, մասնավորապես, նրա անձնական զնահատականները, որոնց հարցում հարկ է վերապահություններ անել, չնայած որ թվում է, թե դրանք պարունակում են ճշմարտության առյուծի բաժին:

Ես այսօր ցանկանում եմ առանձնացնել միայն այն, ինչն առնչվում է Հայկական հարցին:

Համաձայն այն տեղեկության, որն սկիզբ է առնում Բեռնում գտնվող Թուրքիայի դիվանագիտական առաքելությունից, նախարար Ֆուադ Սեյիմը մեր իրազեկիչներից մեկին, հավանաբար, ասել է, որ հայերը պատրաստվում են տոնել Գերմանիայի հռչակած Հայաստանի անկախությունը:

Եթե ընդունենք, որ «անկախություն» բառը կարող էր արտասանվել «ինքնավարություն» իմաստով, ապա Սուրեա բեյի զեկուցագրում կարելի կլինի գտնել այդ հայտարարության բացատրությունը:

Իրոք որ, ըստ Սուրեայի, Թալեաթ փաշայի Բեռլին կատարած ճանապարհորդության ընթացքում, մի գաղտնի պայմանագիր պետք է ստորագրված լիներ, համաձայն որի Գերմանիան պետք է պարտավորվեր երաշխավորել այն ամենի ամբողջականությունը, ինչը մնացել է Օսմանյան կայսրությունից՝ պայմանով, որ թուրքական կառավարությունը Հայաստանին հատկացներ լայն ինքնավարություն: Այդ միջոցը, համաձայն գերմանացիների կարծիքի, պետք է լլյուրին դարձներ Ռուսաստանի հետ խոսակցությունները, ինքնաբերաբար համապատասխանելով ազգությունների այն սկզբունքին, որը ռուսական նոր կառավարությունը դարձրել է իր քաղաքականության հիմնաքարը: Բացարձակ ինքնավարություն, հավանաբար, կհատկացվի Էրզրումի, Վանի, Բիթլիսի, Սվազի, Դիարբեքիի և Մամուրեթ-ու Ազիզի վեց վիլայեթներին:

Արդյո՞ք այդ պայմանագիրը գոյություն ունի: Սուրեան այդ հավաստում է: Ամեն դեպքում, Վիեննայից ժամանող Ալբանիայի նախկին նախարարի պնդման և Բեռնում գտնվող Թուրքիայի դեսպանի ելույթի միջև կա ապշեցուցիչ զուգադիպություն, որն ինձ արժանի թվաց հիշատակելու:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 859, ff. 63-63 v).

¹ Որն արտատպելն անհիմաստ է թվում:

կատներից Թուրքական կայսրության դեմ ուղղված լայնածավալ հարձակման գաղափարը և ավելացրել, որ նման ծրագիրը կարող է առիթ հանդիսանալ ճապոնական մի քանի դիվիզիաների միջամտության համար:

I

Ճապոնական առաջարկությունն արժանի է ուշադրության: Այդուհանդերձ, հարկ է նկատել.

ա/ որ դժվար է անվարանդեն հույս տաձել ռուսական հարձակման հետ Հայաստանի ռազմաճակատում, քանի որ Փոքր Ասիայում գործող ռուսական զորքերը վաղուց ի վեր խիստ սահմանափակ հարձակողական եռանդ են ցուցնում և իրենց անգործունեությունն արդարացնելու համար վկայակոչել են հաղորդակցությունների անբավարար վիճակը

բ/ որ ճապոնական համագործակցությունը կլինի՝

- անարդյունավետ՝ Պաղեստինի ռազմաճակատում, որտեղ անգլիական զորքերը, ի դեպ, անհամեմատ մեծաքանակ, բախվում են ամրացված ռազմաճակատի.

- առանց ռազմավարական կարևորության Միջագետքի ռազմաճակատում, որտեղ դժվարին է նշանակալից գերակշռություն ապահովել երկրամասի անապատային բնույթի, հաղորդակցությունների երկարաձգության ու դժվարամատչելիության պատճառով՝ և, ընդ որում, ուղղված չէ դեպի այն սահմանները, որոնք Օսմանյան կայսրության համար կենսական նշանակություն ունեն.

- անիրագործելի՝ Հայաստանի ռազմաճակատում՝ Անդրսիբիրյան երկաթուղու ծանրաբեռնվածության և դրա շարունակությունը կազմող միասնական երկաթգծի (Ռչասիսկ-Մոսկվայից 300 կ {իլոմետր} և հեռավորության վրա գտնվող անդրսիբիրյան կայարան-Թիֆլիս-Կարս-Սարիղամիշ-Էրզրում) շահավետության գործակցի պատճառով, որն արդեն բացահայտորեն անբավարար է ապահովելու՝ Հայաստանում գտնվող ռուսական բանակի բոլոր կարիքները:

II

Բայց եթե Թուրքիայի դեմ ուղղված ճապոնական ներխուժումը Պաղեստինի և Միջագետքի ռազմաճակատներում կարող է անարդյունավետ լինել, իսկ Հայաստանի ռազմաճակատում՝ անիրագործելի, ապա դրանից չի հետևում, թե այն պետք է անտեսվի:

Ասիայում գործող թուրքական երեք բանակները ճեժապես կախում ունեն Փոքր Ասիայի երկաթուղային ցանցից և Անտանոյի շահերի տեսանկյունից՝ նպաստավոր աշխարհա-

1 Փաստաթղթի ծանոթագրությունը. «Բաստրահից մինչ Միջագետքի ռազմաճակատ ընկած տարածությունը կազմում է 900 կ {իլոմետր} Տիգրիսով և 600 կ {իլոմետր} երկաթուղով:

Անգլիական հաղորդակցության գիծը, որը ձգվում է մերթ գետով, մերթ երկաթուղային հատվածներով (Կուր-ճայի և Ամարայի միջև կառուցվել է 115 կ {իլոմետր} ր, Կուտի և Բաղդադի միջև կառուցման ընթացքում է գտնվում 170 կ {իլոմետր} ր), ամբողջությամբ օգտագործվում է և նույնիսկ բավական չէ բրիտանական ռազմաքաղաքային կորպուսի պահանջները բավարարելու համար: Նրա բողոմակությունը կարելի է կլինի բարձրացնել միայն գետային նավագնացության բարելավման միջոցով, որը պայմանավորված է նավատորմի ծավալմամբ, որն իրականացնելը խիստ դժվարին է (Տիգրիսում նավարկելու պահանջներին համապատասխանող հատուկ նավերի բանակի անբավարարության պատճառով):

Քանի դեռ հաղորդակցության այս գիծը հիմնավորապես չի բարելավվել, ճապոնական փոխադրումները Բաստրահից դեպի ռազմաճակատ պետք է իրականացնել ցամաքային ճանապարհով (30-ից 35 օրվա անցուղի):»

գրական առանձնահատկությունների պատճառով, հնարավոր կլինի մեկ գործողությամբ կտրել այդ բանակների հաղորդակցությունների բոլոր գծերը՝ ենթակայության ներքո վերցնելով Բաղդադի երկարուղու ծովամերձ, աչքի զարնող հատվածը, որտեղ ճյուղավորվում են Միջագետք-Հայաստան և Պաղեստին-Արաբիա գծերը, հիմնավորապես գրավելով Ալեքսանդրետի տարածաշրջանը, Կիլիկիայի հարթավայրը և Տավրոսի ու Ամանոսի կիրճերը:

Այդ տարածաշրջանի գրավումը կզրկի Պաղեստինում, Միջագետքում և, հավանաբար, նույնիսկ Հայաստանում գտնվող թուրքական բանակներին մատակարարումներ ստանալու և իբրև դրա հետևանք պատերազմական գործողությունները շարունակելու հնարավորությունից: Նրանք հարկադրված կլինեն կամ անհատուր լինել, կամ ընկրկել այն տարածքներից, որոնց սլաշտպանությունն իրականացնում են՝ Անատոլիայում պատասխարվելու համար, որն այն միակ երկրամասն է, որտեղ նրանք ի վիճակի կլինեն գոյություն պահպանել և այսպես, միևնույն հարվածով կապահովվի Միլիթայի և Միջագետքի նվաճումը:

Խիստ հետաքրքիր է թվում ճապոնական բանակին համանման գործողություն ձեռնարկելուն վերաբերող խնդրանքով դիմելը: Բանակը շատ ավելի կնպաստի Թուրքիայի պարտությանն այդ գործողությունը բարեհաջող ավարտի հասցնելով, քան արդեն գործող ռազմաճակատները հզորացնելով:

Կից քննարկվում են այն պայմանները, որոնցում այն կարող է իրագործվել:

III

ա/ Թշնամու կացությունը:

Թուրքերի տրամադրության ներքո գտնվող ուժերը ներկայումս հասնում են 12 դիվիզիայի.

- 3-ը գտնվում են Թրակիայում և Կոստանդնուպոլսի տարածաշրջանում.

- 2-ը Անատոլիայում.

- 7-ը Կիլիկիայում կամ Սիրիայում:

Կիլիկիա-Սիրիայի 7 դիվիզիաներից 4-ը գտնվում են իրենց տեղերում՝ Հալեպ-Ալեքսանդրետ տարածաշրջանում, մյուս 3-ը Սիրիայում են և պետք է այդտեղ էլ պահվեն՝ Ալեքսանդրետի ու Գազայի միջև ընկած ծովափնյա շրջանի սլաշտպանությունն ապահովելու և հետագայում Պաղեստինի ռազմաճակատը հզորացնելու համար, որը, բնականաբար, պետք է հարձակման ենթարկվի այն նույն պահին, երբ ձեռնարկվի Ալեքսանդրետի գործողությունը:

Կիլիկիայում տեղակայված 4 դիվիզիաները կարող են ամրապնդվել Թրակիայի 3 և Անատոլիայի 2 դիվիզիաներով, որոնց, ծայրահեղության դեպքում, կարող են միանալ եվրոպական ռազմաճակատներից որևէ թերված 5 այլ դիվիզիաներ, եթե գերմանացիները թուրքերին անիրաժեշտ թուլտվություն տան:

Թվում է, թե որևէ դիվիզիա չի կարող հզորացնել Կիլիկիայի զորքերը, որովհետև այդ դեպքում հարկ կլինի որոշ ուժեր առանձնացնել կամ Միջագետքի բանակից, որն ինքը հարձակման կենթարկվի, կամ Հայաստանի բանակից, որն արդեն շատ է ծավալվել և երկաթուղային հաղորդակցությունների միջոցով կապ չունի հայկական ռազմաճակատից 400 կ {իլոմետր} ր հեռավորության վրա գտնվող Ալեքսանդրետի տարածաշրջանի հետ:

Ի վերջո, ակնհայտ է դառնում, որ թշնամին կարող է Կիլիկիայում ձեռնարկված գործողությանը հակադրել.

- տեղում գտնվող 4 դիվիզիա.

- Թրակիայից և Անատոլիայից փոխադրված 5 դիվիզիա.

- հետագայում՝ եվրոպական ռազմաճակատից փոխադրված 5 դիվիզիա:

Բացի դրանից, եթե հաշվի առնվի Բաղդադի երկաթուղու թուրմակության խիստ սահմանափակվածությունը Հայդար Փաշա-Կարա-Բինար ճանապարհահատվածում (Տավրոսի կիրճերի ստորոտում), կարելի է, հավանաբար, հավաստել, որ առաջին 5 բուրքական դիվիզիաներն իբրև օժանդակ ուժեր տեղափոխելու համար անհրաժեշտ կլինի 2.5 ամիս, իսկ 10 դիվիզիաների տեղափոխումն ավարտին հասցնելու համար՝ 5-ից 5.5 ամիս:

Ի վերջո, եթե գործողությունը մախապատրաստվի անհրաժեշտ գաղտնապահությամբ, բուրքերը կկարողանան սկզբնական շրջանում ճապոնական նախաձեռնությանը հակադրել միայն 4 դիվիզիա և նրանց համար կծառանա անհամեմատ երկարատև ժամկետ ունենալու անհրաժեշտությունը՝ փոխադրելու համար այն օժանդակ ուժերը, որոնք կարող են գտնվել նրանց տրամադրության ներքո:

Եվս մեկ անգամ հարկ է նշել, որ բուրքական դիվիզիաները սակավաթիվ անձնակազմեր ունեն և տրամաբանական է բուրքական մեկ հյուծված դիվիզիան դիտել իբրև բոլորովին քարձ ճապոնական 0.5 դիվիզիային համարժեք ուժ:

Այս պայմաններում, 4-ից 5 ճապոնական դիվիզիաներից բաղկացած և անսպասելիորեն ցումաք նետված ռազմարշավային կորպուսը (80-ից 100000 մարդ), որը հետագայում 2-ից 3 դիվիզիայից բաղկացած երկրորդ գորախմբի օգնությունը ստանալու հեռանկարն ունի, միանգամայն բավարար կլինի Կիլիկիայի գրավումը հաջողությամբ ավարտին հասցնելու և հետագայում բուրքական ուժերի յուրաքանչյուր հակահարձակման դիմադրելու համար:

բ/ Իրագործման պայմանները:

Հենց նոր հիմնավորեցինք, որ Կիլիկիայի էքսպեդիցիան հաջողությամբ պսակելու համար հարկ կլինի կարողանալ ամի դուրս բերել 80-ից 100000 ճապոնացիների և ի վիճակի լինել, որոշակի ժամկետում, օժանդակել այդ ուժերին 40-ից 50000 մարդուց բաղկացած երկրորդ գորախմբով:

Իրագործման արագությունն ապահովելու համար անհրաժեշտ է նախապես Էզիպտոսում կենտրոնացնել նվազագույնը ճապոնական ուժերի առաջին գորախումբը: Այդ նախնական կենտրոնացումը, եթե հաշվարկները կատարվեն նկատի ունենալով ճապոնական Ռազմածովային նախարարության պահեստային ուժերը, որոնց տարողությունը, համաձայն հենց իրենց ճապոնացիների՝ 1916 թ. նոյեմբերին ներկայացրած տեղեկությունների, հասնում է 250000 տոննայի և այն տարածությունը, որը հարկ է հատել՝ կպահանջի 135 օրվա հասնող ժամկետ կամ 4.5 ամիս, որի ավարտին Պորտ-Սալոնում համախմբված ճապոնական փոխադրական նավատորմը (250000 տոննա տարողություն ունեցող) ի վիճակի կլինի մեկ ճանապարհորդության ընթացքում Ալեքսանդրետի ծոցում ընտրված որևէ վայր հասցնել ռազմարշավային կորպուսի առաջին 50000 մարդուն, որոնց կարող են շատ կարճ ժամկետում հետևել Եզիպտոսում կենտրոնացված մյուս 50000-ը և մոտավորապես 3 ամիս ժամկետում՝ Ճապոնիայի նավահանգիստներում ժամանակավորապես պահվող 2-րդ գորախումբը:

Այնուհաստ է, որ հնարավոր է շուտափույթ ձևով և մինչ բուրքերի հզորանալն ամի դուրս

1 Փաստաթղթի ծանոթագրությունը. «Նազասակիից մինչ Պորտ-Սալոն ձգվող տարածությունը հասնում է 7450 միլի: Ճանապարհի տեղությունը (ներառյալ նավ բարձրանալը և ամի դուրս գալը) 45 օր է: Տոննաժի հաշվարկը կատարված է (թիվը ներկայացված է ճապոնացիների կողմից) նյեռով յուրաքանչյուր մարդուն 5 տոննա սկզբունքից: 250000 տոննա ունեցող նավատորմը բույլատրում է միաժամանակ տեղափոխել 50000 մարդու»:

բերել ճապոնական 4-ից 5 դիվիզիա (80-ից 100000 մարդ), որը մենք անհրաժեշտ ենք համարում Կիլիկիայի հարթավայրը և կիրճերը գրավելու և այս ձևով օսմանյան երկաթուղային հաղորդակցությունը վերջնականապես խափանելու համար: Ճապոնական պահեստայինները (40-ից 50000 մարդուց) բաղկացած 2-րդ գորախումբը ժամանակ կունենան նույնիսկ ժամանելու ավելի վաղ, քան բուրքերը կկարողանան Ալեքսանդրետ բերել եվրոպական ռազմաճակատից դուրս բերված իրենց դիվիզիաները:

Գործողության համար ներկայանում են համեմատաբար դյուրին պայմաններ. հարկ կլինի ճապոնացիներին խորհուրդներ տալ ռազմական ասպարեզում:

Մնում է, բնականաբար, նկատի ունենալ ռազմարշավային կորպուսի մատակարարման հարցը, որը կարող է երաշխավորել միայն ճապոնական Ռազմածովային նախարարությունը: Այն ներառում է մի շարք նավերի մասնագիտացումը, որոնց տոննաժը կհասնի 120000 տոննայի և որոնք, անկասկած, կհատկացվեն ի թիվս բռնագրավված առևտրական նավատորմի նավերի:

Եզրակացություններ

Ճապոնական ներխուժումը Փոքր Ասիա ցանկալի է:

Կոալիցիայի համար այն շատ օգտակար կլինի, եթե ունենա Կիլիկիայի գրավման և այս կետում բուրքական հաղորդակցության գծերի հատման նպատակ հետապնդող բնույթ:

Այն հնարավոր է, եթե ճապոնական Ռազմածովային նախարարությունը և առևտրական նավատորմը վճռել են դրսևորել անհրաժեշտ ջանադրություն և դիմել այն խիզախմանը, որով հղի է նավարկությունը Միջերկրական ծովում:

Այն թելադրում է 4-ից 5 դիվիզիա (80-ից 100000 մարդ) օգտագործելու անհրաժեշտությունը, որոնց հետագայում օգնության կհասնեն 2-ից 3 դիվիզիա (40-ից 50000 մարդ), որոնք կարող են փոխադրվել ներկայումս ձեռքի տակ գտնվող 250000 տոննա տարողություն ունեցող նավատորմով և որոնց մատակարարումը կապահովվի 120000 տոննա տարողությամբ նավատորմով, որը ճապոնական կառավարությունն առանց դժվարության կարող է ձեռք բերել բռնագրավման միջոցով:

(A.M.G., 16 N 3059).

Հայ կամավորների կենտրոնական կոմիտեի նախագահ պ. Սևաջյանը՝ կապիտան Մերսիեին

Փարիզ, 11-ը հուլիսի 1917 թ.:

Իբրև այսօր առավոտյան կայացած մեր հեռախոսային զրույցի շարունակություն, ես ձեզ ստորև հայտնում եմ երկու հայ կամավորների անունները և հասցեները, որոնցից մեկը ներկայումս գտնվում է Արևելյան Մարոկկոյում, մյուսը՝ Հարավային Օրանտում և որոնք ցանկանում են կցվել Արևելյան լեգեոնին:

Կապրալ Արթուր Ադիլյան
2-րդ արտասահմանյանի 2-րդ հետևակային վաշտ
Բու-Դեննիթ
(Արևելյան Մարոկկո):

Չինվոր Գևորգ Ներսիսյան
1-ին արտասահմանյան զուգոր, 12-րդ վաշտ
Կողմը-Քեշար
(Հարավային Օրան):

(A.M.G., 7 N 2149).

Ասիա-Օվկիանիայի փոխվարչության ծանուցագիրը¹

[19-ը հուլիսի 1917 թ.]:

1916 թ. հունվար ամսին Դեպարտամենտը խնդրել է 500000 ֆրանկի հասնող չնախատեսված վարկ, որը սահմանված է Մուսա լեռան 5000 հայերի կարիքները հոգալու հետ կապված ծախսերի մարման համար, որոնց մեր էսկադրան ազատագրել է ու Եգիպտոս տեղափոխել 1915 թ. սեպտեմբեր ամսին և որոնց բրիտանական իշխանությունները, մեր անմիջական խնդրանքով, անմիջապես հյուրընկալել են Պորտ-Սաիդի արվարձանում՝ հատուկ այդ առթիվ տեղադրված ճամբարում: Դեպարտամենտը չի զլացել հարցը Ֆինանսների նախարարության քննարկմանը ներկայացնելով հանդերձ՝ ընդգծել, որ եթե անգլո-եգիպտական կառավարությունը մինչ այժմ ապահովել է այդ գաղթականների գոյությունը, ապա կարելի է, այդուհանդերձ, կանխատեսել, որ յուրաքանչյուր պահի վերոհիշյալ կառավարությունը մեզմից կպահանջի մարել նրանց համար իր արած ծախսերի ընդհանուր գումարը: Այդ հնարավորությունն առավել ևս հավանական է թվում, քանզի մենք չենք զլացել որոշակիորեն հավաստել Մուսա լեռան հայերի ճակատագրերը տնօրինելու մեր իրավունքը: Այս առթիվ հարկ է նշել, որ Արևելյան լեզոնի ձևավորման ընթացքում կամավորների առաջին զինված անձնակազմը կազմավորվեց գաղթականներից զինվորագրված որոշ թվով մարտունակ տղամարդկանցից:

Այն պահին, երբ Դեպարտամենտի կողմից ձևակերպված վարկին առնչվող խնդրանքը հաղորդվեց Ֆինանսների նախարարությանը, Կահիրեում Ֆրանսիայի նախարարը պատրաստվում էր պ. Բրիանին մի հանգամանակից զեկուցագիր հղել նվիրված հյուրընկալման ճամբարն օգտագործելու հարցին, որի հիմնադրումը պատճառել էր 16000 ֆրանկի ծախս և որի հոգածությունը, թվում է, թե ամսական պետք է հասներ գրեթե 30000 ֆրանկի: Նա այդ զեկուցագրում թղթին էր հանձնել հետևյալ դիտարկումները. «Մենք գտնում ենք, որ իրավունք ունենք տնօրինելու այս գաղթականներին, որովհետև մենք նրանց փրկել ենք այն պահին, երբ թուրքերը պատրաստվում էին նրանց կոտորել և որովհետև նրանք այն երկրամասի բնիկներն են, որն ամենայն հավանականությամբ, պետք է մեզ վերադարձվի: Անգլիացիները կարծում են, որ այս բնակիչներին փրկելուց հետո, մենք նրանց լքել ենք, և որ նրանց նկատմամբ իրենք իրավունքներ են ձեռք բերել՝ նրանց տեղավորելով, հովանավորելով, կերակրելով ու նրանց համար կարևոր ծախսեր անելով: Սակայն անգլիացիները գտնում են կամ համենայն դեպս Գերագույն կոմիսարը գտնում է, որ այս հայերն իրենց պատճառում են բազմաթիվ անհանգստություններ և բազմաթիվ ծախսեր, առանց մինչ այժմ օգուտ բերելու: Ուստի, սրբ Մակ Մահոնն ամբողջությամբ հակված է նրանց մեզ հանձնելու: Եթե մենք մտադրություն ունենք որևէ ձևով օգտագործել այս հայերին, հարկ է,

¹ Նախարարի համար է:

այսպիսով, անհասպող որոշում կայացնել: Այն է՝ վճարել այն ծախսերը, որոնք նրանց համար արել են բրիտանական իշխանությունները՝ վերադարձնելով այն գրավը, որն անգլիացիները դրել էին այս բնակչության վրա»:

Դեպարտամենտի խնդրած 50000 ֆրանկի հասնող վարկն այն ժամանակ հնարավոր չեղավ խնդրել ատյաններից, քանի որ Ֆինանսների նախարարը գտել էր, որ այս կիմունքներով սահմանված գումարը պարզապես նախատեսված է ապագայում օգտագործելու համար, որն Արտաքին գործերի նախարարությունը ցանկանում է ունենալ իր տրամադրության ներքո՝ կանխատեսելու համար որոշ հնարավոր դիպվածներ, բայց որի օգտագործման պայմանները սահմանված չեն անհրաժեշտ ճշգրտությամբ:

Անգլո-եգիպտական իշխանությունները հետագայում շարունակեցին մարել Մուսա լեռան գաղթականներին պահելու ծախսերը:

1917 թ. մայիսի 20-ին Կահիրեում Ֆրանսիայի նախարարը՝ կրկին Դեպարտամենտի քննարկմանը ներկայացրեց՝ ի նպաստ այս գաղթականների կատարվող ծախսերը Հանրապետության կառավարության հոգածության ներքո վերցնելու հարցը: Նշված զեկուցագրում պ. Դեֆրանսը հիշեցնում էր, որ անգլիական իշխանությունները տարբեր առիթներով պատրաստակամություն են դրսևորել թույլատրելու փոխարինել հյուրընկալման ճամբարի բրիտանական վարչությունը ֆրանսիական վարչությամբ: Նա, ի դեպ, պնդում էր այն շահագրգռվածության շուրջ, որը մենք կունենայինք, եթե այսուհետև՝ հնարավորություն չտայինք անգլիացիներին շարունակել տնօրինելու հայերի մեծաքանակ խմբի դաստիարակության և իրենց ձևով ուսուցման գործը և օգտագործելիք մեզ ընձեռվող՝ հովանավորելու առիթը, որի համար ողջ Հայաստանը չէր զլանա մեզ երախտապարտ լինել: Պ. Դեֆրանսի այս զեկուցագրում, մյուս կողմից, հիմնավորվում էր, որ անգլիական կառավարությունը գաղթականների հյուրընկալման ճամբարի հիմնադրման և պահպանման ծախսերի մարումը հետագայում ամբողջությամբ մեզմից պահանջելու մտադրություն ունի և դա կասկածից վեր է:

Դեպարտամենտը Ռազմական նախարարությանը ներկայացրեց Եգիպտոսում գտնվող Ֆրանսիայի նախարարի հաղորդած՝ դիտողությունները: Ի պատասխան, Ռազմական նախարարությունը տեղեկացրեց, որ կատարյալ հավանության է արժանացնում պ. Դեֆրանսի առաջադրած միջոցառումները, բայց որ ինքը հնարավորություն չունի հոգալու այն ծախսերը, որոնք կառաջանան այդ միջոցառումների կենսագործման ընթացքում:

Քաղաքական և առևտրական գործերի վարչությունը հարկադրված կլինի, այսպիսով, երկրորդ անգամ նկատի ունենալ հատուկ վարկի հատկացումը Դեպարտամենտին, որը նախատեսված կլինի թույլատրելու մարել թե՛ այն ծախսերը, որոնք անգլո-եգիպտական կառավարությունը մինչ այժմ կատարել է Մուսա լեռան հայերի օգտին և թե՛ այդ գաղթականներին այսուհետև պահելու ծախսերը:

Այս դիտարկման լույսի ներքո արված առաջարկությունը վերջին հուլիս ամսին ներկայացվել է պ. Ռիբոյին, որը նպատակահարմար չի գտել այն հաշվի առնել:

Վերջերս Եգիպտոս այցելած՝ Հեջազում ֆրանսիական ռազմական առաքելության ղեկավար, գնդապետ Բրենոնի հավաստիացումներից բխում է, որ մեկ տարի առաջ Կոստանդնուպոլսում գտնվող Ֆրանսիայի նախարարի հայտնած մտավախությունները՝ այն օգուտների հարցում, որոնք թվում է, թե անգլիացիները փորձում են ձեռք բերել Մուսա լեռան գաղթականների ճամբարը ղեկավարելուց, դժբախտաբար՝ խիստ հիմնավոր էին: Այս բարձրաստիճան սպան կարողացել է հիրավի նկատել, որ ճամբարում ձևավորված հայ-

¹ Պ. Դեֆրանսը:

կական տարբեր միություններ կազմակերպել են ազգությամբ անգլիացի ուսուցիչներ ունեցող դպրոցներ, որտեղ ուսուցանվում է միմիայն բրիտանական լեզուն: Գաղթականների շրջանում նմանապես անգլիացի քահանաների քաղաքական բնույթի քարոզչություն են ծավալում՝ իրենց պարտականությունների կատարման քողի ներքո: Բարոյական առավելություններին, որոնք Մեծ Բրիտանիայի համար ապահովում է ճամբարի վարչությունը, հավելվում են դրամական բնույթի այլ առավելություններ: Այս վարչության պատասխանատվությունը ստանձնած սպաները հիրավի վճռել են աշխատեցնել գաղթականներին: Վերջիններին արտադրած ապրանքների վաճառքից ժողովված գումարները գանձում են անգլո-եգիպտական իշխանությունները:

Այն առեւելյան ծախսերը, որոնց ամբողջ ծանրությունը մենք հարկադրված ենք կրել, նպաստում են, այսպիսով, Արևելքում բացառապես անգլիական ազդեցության տարածմանը, Նգիպտոսի կառավարության համար գերաճող եկամուտների հայթայթմանը և հազարավոր հայերի շրջանում (որոնց մեր նավաստիներն են փրկել սարսափելի մահվան ճիւղաններից և որոնց գոյությունն իրականում մենք ենք ապահովում) այն համոզմունքի տրամադրմանը, համաձայն որի՝ Ֆրանսիան նրանց ճակատագիրը կատարելապես մատնել է բախտի քսուհաճույքին:

Քաղաքական և առևտրական գործերի վարչությունն իրեն թույլատրում է նախարարի ուշադրությունն ամբողջությամբ հրավիրել այն շահագրգռվածության վրա, որը ներկա իրավիճակում հանգում է երկու անգամ արդեն սերժված՝ հատուկ վարկը վերջապես Դեպարտամենտին հատկացնելուն:

Այն պարագայում, երբ պ. Պիշունը բարեհաճի հավանություն տալ սույն ծանուցագրի եզրակացություններին, Դեպարտամենտը՝ Ֆինանսների նախարարությանը փոխանցելու նպատակով և պահանջված վարկի հատուկ բնույթը մատնանշելու միտումով, կջանա Կահիրեում գտնվող Հանրապետության դիվանագիտական առաքելությանը պիղել անհրաժեշտ ճշգրտումներ հարողորելու ինչպես եգիպտական վարչության կողմից անցյալում կատարված ծախսերը մարելու շուրջ, այնպես էլ այն ծախսերի քանակի շուրջ, որն այսուհետև հարկ է նախատեսել ճամբարի հոգաժողության համար: Ինչ վերաբերում է ի նպաստ Մուսա լեռան հայերի կատարված ամբողջ ծախսերի մարումը մեզինց պահանջելու՝ անգլո-եգիպտական կառավարության մտադրությանը, ապա այն փաստը, որ այս հարցում որևէ կասկած այլևս լինել չի կարող, թվում է, ի դեպ, թե ամբողջությամբ իրենով է պայմանավորում Ֆինանսների վարչության 1916 թ. առաջադրած առարկությունները, որոնք արվել էին հակադրվելու համար վարկ պահանջելու սկզբունքին:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 892, ff. 72-74 v).

376

Հայ կամավորների կենտրոնական կոմիտեի նախագահ պ. Սևաջյանը՝ Ռազմական նախարար պ. Պենկեին

Փարիզ, 20-ը հուլիսի 1917 թ.:
(Ստացել է ԲԸ-ի Աֆրիկայի ենթաբաժինը հուլիսի 25-ին):

Ես պատիվ ունեմ ձեզ տեղեկացնել, որ մեր ներկայացուցիչը հենց նոր է վերադարձել Բորնոյից, ուր նա ուղարկվել էր Արևելյան լեզոնում կամավոր հիմունքներով ընդգրկվելու նպա-

տակով Ամերիկայից եկող հայ կամավորների ընդունելության կոմիտե ստեղծելու համար:

Նա ինձ հայտնում է, որ եթե նկատի ունենանք Բորնոյում բնակվող ցարուցրիվ հայերի գրադմունքը, ապա սրբազ կդառնա, որ նրանք չեն կարող մեր կամավորներով գրադվելու համար անհրաժեշտ չափով ժամանակ հատկացնել, այն է՝ նրանց դիմավորել այնտեղ, որտեղ ափ են դուրս գալու, ընդունել և ռազմական իշխանությունների մոտ լինել նրանց բարգձանիչը:

Մեր լիազոր ներկայացուցիչը հարցրել է 18-րդ օկրուգի շտաբի կարծիքը՝ կայագորի բյուրո և գորանոց, որտեղ Բորնոյում գտնվելու ընթացքում տեղավորվում են հայերը, կամավոր հիմունքներով սկզբից եթե ֆրանսիական բանակում զինծառայության ընդունված մի հայ մարդ գործուղելու շուրջ:

Շտաբն ամբողջությամբ հակված է այդ գործուղմանն իր համաձայնությունը տալուն, եթե այդ առթիվ դուք նրան հրամաններ տաք:

Իմ ընտրությունը կանգ է առել կապրալի աստիճան ունեցող մի հայ երիտասարդի՝ Ադիլյան Արթուրի վրա, որը շատ բանիմաց է և լրջախոհ: Նա կամավոր հիմունքներով զինծառայության է ընդունվել սլատերագմի սկզբում, 15 ամիս մարտնչել է ռազմաճակատում, 1915 թ. վիրավորվել Շամպայնում, այնուհետև՝ ուղարկվել Ալժիր, իսկ այնտեղից՝ Մարոկկո:

Ես ձեզ խիստ երախտապարտ կլինեմ, եթե դուք բարեհաճեք անհրաժեշտ հրամաններ արձակել այս կամավորին կանչելու և նրան Բորնոյում գտնվող 18-րդ օկրուգի շտաբի բյուրո գործուղելու վերաբերյալ: Նրա ներկայությունը Բորնոյում շատ օգտավետ կլինի, որովհետև կամավորները շատ ուրախ կլինեն, երբ ափ դուրս գալու պահին տեսնեն հայազգի ֆրանսիացի զինվորի, որը խոսում է իրենց լեզվով և իբրև թարգմանիչ ծառայում իրենց, քանզի դժբախտաբար ոչ բոլորն է, որ ի վիճակի են բացատրվելու ֆրանսերենով:

Կապրալ Ադիլյանն այն անձնավորությունն է, որին՝ Արևելյան լեզոն փոխադրելու համար ես դիմել էի խնդրանքով: Ամերիկայից կամավորների ժամանումից հետո, ես ձեզ կխնդրեմ նրան՝ իբրև կապրալի գործուղել Արևելյան լեզոն:

(A.M.G., 7 N 2149).

377

Վաշինգտոնում Ֆրանսիայի դեսպան պ. Ժյուստերանը՝ Խորհրդի նախագահ, Արտաքին գործերի նախարար պ. Ռիբոյին

Ճ. թիվ 417:

Վաշինգտոն, 23-ը հուլիսի 1917 թ.:
(Ստացել են Կաբ. օգոստոսի 14-ին,
Քաղ. վարչ. օգոստոսի 16-ին):

Ձերի գերազանցության վերջին մայիսի 11-ի թիվ 340 նամակը՝ ստանալուց անմիջապես հետո, ես պետական քարտուղարի՝ ուշադրությունը հրավիրել եմ հայերի ուղբալի վիճակի վրա՝ ճիշտ այնպես, ինչպես այդ բացահայտել է պ. Չոպանյանը և որն ավելի դժնդակ է դարձել ամերիկյան հյուպատոսների մեկնումից հետո:

Պետական Դեպարտամենտի վարիչը՝ նամակով, որի պատճենը կցվում է, ինձ տեղե-

1 Արտաստված չէ:
2 Պ. Լանսինգը:
3 Պ. Փոքրը:

կացնում է, թե լուծման կարիք ունեցող խնդրի բարոյությունն այնպիսին է, որ ամերիկյան կառավարությունը դեռևս չի կարողացել որդեգրել վերջնական վարքագիծ: Նա մեծ ցանկություն ունի հայերին օգնություններ ուղարկելու, և ես գիտեմ, որ անհրաժեշտ գումարները պատրաստ են, բայց նա տագնապահույզ է այն միջոցի ոլորման հարցում, որի շնորհիվ խնդրո առարկա փողերը հնարավոր կլինի հասցնել հասցեատերերին և ոչ թե նրանց դահիճներին: Հենց որ գործելաձևը հավանության արժանանա, ինձ այդ մասին կհայտնեն, և ես չեմ զլանա Ձերդ գերազանցությունը տեղյակ պահել:

Հ. Գ. - Պետական Դեպարտամենտի առաջին քարտուղարը¹, որի հետ ես հենց նոր գրուցեցի այդ հարցի շուրջ, խնդրելով նրանից դրան լուծում տալ, հավաստեց, որ անհրաժեշտ փողերը պատրաստ են և ինձ հավաստիացրեց, որ ինքը պատրաստվում է արագացնել լուծումը, բացի դրանից նաև սիրիացիների վրա տարածելով այն վճռի շահավետությունը, որը կարող է ընդունվել: Նա մեծ հույսեր է տաժում Կոստանդնուպոլսում գտնվող Շվեդիայի նախարարի² եռանդի և ճարպկության հետ, որն ամուսնացած է մի ամերիկուհու հետ, դրսևարում է մեծ եռանդ և որին գովաբանում է պ. Էլքուսը:

30-ը հուլիսի:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 889, ff. 49-49 v).

ՀԱՎԵԼՎԱԾ

**Գործող պետական քարտուղար պ. Ֆրանկ Լ. Փոլը՝
Ֆրանսիական հանրապետության դեսպան պ. Ժ. Ժյուստերանին**

[Պատճենը]:

Վաշինգտոն, 18-ը հուլիսի 1917 թ.:

Գերազանցություն,

Ես պատիվ ունեմ հավաստել հունիսի 7-ի ձեր գրության ստացումը, որով հայտնում եք, թե պ. Չոպանյանը, մի հայ, որի անհատականությունը և նվիրվածությունն իր հայրենակիցներին բարձր է գնահատել ֆրանսիական կառավարությունը, հրավիրել է Խորհրդի նախագահի, Արտաքին գործերի նախարարի ուշադրությունն այն կործանարար հետևանքների վրա, որոնք Միջագետք և Միջիա տեղահանված հայերի համար ունեցել է Թուրքիայի և Միացյալ Նահանգների միջև դիվանագիտական հարաբերությունների խզումը և որը տեղեկացնում է նաև, թե ձեր կառավարությունը ձեզ կոչել է իրեն հայտնել այն քայլերի մասին, որոնք Միացյալ Նահանգների կառավարությունը ձեռնարկել է կամ առաջարկում է ձեռնարկել, չեզոք պետությունների հետ մեկտեղ, կանխելու համար բարեգործական աշխատանքի ընդհատումը, որին նախապես ընթացք էր տրվել հանուն Թուրքիայում գտնվող հայերի և սիրիացիների բարօրության:

Ի պատասխան, ես պատիվ ունեմ ձեզ տեղեկացնել, որ Միացյալ Նահանգների կառավարության կողմից այս հարցի շուրջ դիրքորոշման ընդունման ճշգրտումը կախված է բազմաթիվ խնդիրների քննարկումից և պարուրված է բազում դժվարություններով, որոնք բխում են նման դրամական միջոցների բաշխումն արդյունավետորեն վերահսկելու

1 Պ. Վիլյամ Ֆիլիպսը:
2 Պ. Անբարսվարդը:

անհրաժեշտությունից՝ ամբողջությամբ կամ մասամբ թշնամու ձեռքը դրանց ընկնելը կանխարգելելու նպատակով: Նման բաշխման ընթացքում անխուսափելիորեն ծագող խոչընդոտների պատճառով, Դեպարտամենտի որոշման մասին ծանուցումն անհրաժեշտաբար հետաձգվել է կիրառման անհրաժեշտություն ունեցող մեխանիզմների, ինչպես նաև ուղիների սահմանման ժամկետները: Հենց որ այս հարցի շուրջ որևէ վճիռ կայացվի, Դեպարտամենտը չի գլանա իսկույն ձեզ տեղեկացնել այդ մասին:

Ընդունեք, Գերազանցություն, իմ ամենախորին հարգանքի կրկնակի հավաստիացումները:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 889, ff. 50-50 v).

378

**Եգիպտոսում գտնվող ֆրանսիական զորքերի գլխավոր տեսուչ,
գեներալ Բելուն՝ Ռազմական նախարար պ. Պենկեին**

Հ. թիվ 18: Գաղտնի:

Կահիրե, 26-ը հուլիսի 1917 թ., ժ. 18.40-ին:

Տեսա Հայերի զինվորագրման կոմիտեի նախագահին: Նա հայտնեց 5000-ի մոտալուծ ժամանման մասին, հույս ունի, որ այդ թիվը կհասնի 10000-ի: Մինչ Նյու Յորքից Բորդո մեկնումը, պետք է անցկացվեն շատ խիստ բժշկական ստուգումներ, խուսափելու համար առողջության պատճառով զինձառայությունից ազատ արձակման դեպքերից, որոնք արձանագրվել են Կիպրոսում՝ մայրկանց բողոքելով առանց միջոցների: Առանձնահատուկ հետաքրքրություն ներկայացնող որոշ դեպքերի համար, պ. Դեֆրանսի հետ մենք փնտրում ենք բարեհաճ լուծում:

(A.M.G., 6 N 192).

379

**Կահիրեում Ֆրանսիայի նախարար պ. Դեֆրանսը՝
Խորհրդի նախագահ, Արտաքին գործերի նախարար պ. Ռիբոյին**

Ճ. թիվ 336: Գաղտնի:

Կահիրե, 26-ը հուլիսի 1917 թ.:
(Ստացել են Կաբ. օգոստոսի 16-ին,
Քաղ. վարչ. օգոստոսի 20-ին):

Կիպրոսում տեղակայված Արևելյան լեգեոնը տեսչական ստուգման ենթարկելուց հետո, վերջերս Եգիպտոս վերադարձած գեներալ Բելուն մի մանրամասն զեկուցագիր է հղում Ռազմական նախարարին, որը վերաբերում է լեգեոնի կազմակերպմանը, հայկական և սիրիական զինված անձնակազմերից սպասվելիք արդյունավետությանը, այն օգտակարությանը, որը կբխեր լեգեոնի կազմակերպման ծավալումից և այն բանին, թե ինչպես է կարելի օգտագործել այս հատուկ նշանակության կորպուսը կամ մեկուսի, կամ ֆրանսիական

բանակից անջատված՝ ներկայումս Եզիպտոսում կամ Պաղեստինում գտնվող այլ տարրերի հետ համագործակցված:

Ես չեմ կասկածում, որ Ռազմական նախարարությունը Դեպարտամենտին է փոխանցում այս գեկուցագրի բնագիրը, որին գեներալը բարեհաճել է ինձ տեղյակ պահել և որի պատճենը պատրաստել չկարողանալու համար, մի բան, որը պայմանավորված է ժամանակի սղությանը և անձնակազմի բացակայությամբ, ես ավստում եմ: Ես պետք է, այսպիսով, սահմանափակվեմ՝ այն ենթարկելով որքան հնարավոր է ճշգրիտ քննության:

Արևելյան լեզոնը ներկայումս բաղկացած է յոթ վաշտից (200 մարդ ընդգրկող 6 հայկական վաշտից և 160 մարդ ընդգրկող մեկ սիրիական վաշտից): Առաջին չորս վաշտերից կազմավորվում է մի լավ մարզված, վարժված և զինված զումարտակ:

Ամերիկայի կամավորների ժամանումը, որի մասին ազդարարվել է, կթուլատրի առաջիկայում ստեղծել ութերորդ վաշտը, որը հնարավորություն կտա մոտալուտ ապագայում կազմավորել երկրորդ զումարտակը: Բացի դրանից, կազմավորվել է գնդացրորդների մի վաշտ:

Լավագույն տարրերն այն հայերն են, որոնք լինելով թուրքական բանակի նախկին զինվորներ, գերեվարվել են Միջագետքում կամ դարձել դասալիք, ապա՝ Մուսա լեռան հայերը, Ամերիկայից ժամանած հայերը, իսկ այնուհետև՝ սիրիացիները: Կիպրոսում տեղակայված Արևելյան լեզոնը տրամադրում է երկու ստորաբաժանում, որոնցից մեկը բաղկացած է հայերից և գտնվում է Կաստելլորիզոյում, մյուսը, որը բաղկացած է սիրիացիներից՝ Ռուադում:

Գեներալ Բելուն համառորեն պնդում է, որ ֆրանսիացի սպաներից և ենթասպաներից բաղկացած հրամանատարական կադրերը պետք է հավաքագրվեն մանրազմին ձևով: Նա առաջարկում է այսուհետև՝ իբրև կապրալների օգտագործել միայն հայերին ու սիրիացիներին, իսկ ենթասպաներ դարձնել որոշ հայերի և սիրիացիների (յուրաքանչյուր վաշտում երկուական՝ մյուս վեցը ֆրանսիացի լինելու պայմանով):

Բացի դրանից, ոչ հեռավոր ապագայում նա հավակնում է որոշակի պայմաններով այն հարցի շուրջ առաջարկությամբ հանդես գալուն, որ որոշ հայերի և սիրիացիների թուլատրվի սպայական կոչում ստանալ, որոնք և կկարողանան ոչ միայն ամրակուռ դարձնել լեզոնի հրամանատարական կազմը, այլև ծառայել իբրև հրամանատարներ տեղական աշխարհագրությունում, որոնք ավելի ուշ կկազմակերպվեն Սիրիայում և Հայաստանում:

Ինչ վերաբերում է այն հարցին, թե ի՞նչ է կարելի սպասել լեզոնի տարբեր տարրերի արդյունավետ գործողությունից, գեներալ Բելուն գովաբանում է հայկական զինված անձնակազմը, որն իրենից ներկայացնում է շատ լույս զինվորական միավորում, բայց նշում, որ հայերը կորստեր են, անկասկած, այն ամենն, ինչ նրանցից կարելի է սպասել միայն այն դեպքում, եթե նրանց օգտագործեն իրենց տարածքը վերանվաճելու համար, այն է՝ Ալեքսանդրետի տարածաշրջանում: Նրանք կգործեն, բայց ավելի նվազ ոգևորությամբ, եթե խոսքը վերաբերի միասնական գործողության կամ մի ռազմարշավի, որը հետապնդում է, օրինակ, Պաղեստինի ազատագրման նպատակը, որը նրանց չի հետաքրքրում:

Ինչ վերաբերում է սիրիական զինված անձնակազմին, գեներալը գտնում է, որ կամավորները, որոնցից այն բաղկացած է, ունեն ավելի նվազ ընդգծված ընդունակություններ, քան հայերը: Նրանք խուլկան են, դժվար կառավարելի և դժվարությամբ են ենթարկվում կարգապահությանը: Սակայն նրանք խելացի են, ճշտապահ և անչափ տոգորված Սիրիան թուրքական լծից ազատագրված տեսնելու ցանկությամբ: Մասնավորապես, նրանց պատճառով է, որ նրանց հատուկ գերին ընտելացած հրամանատարական կադրերի հար-

ցը կարևորություն է ստանում: Սիրիական կամավորները, որոնք սկսում են ժամանել Ամերիկայից, թվում է, թե օժտված են ռազմական ամենաբարձր ընդունակություններով և նրանց ընդգրկումը թույլատրում է կանխատեսել սիրիական զինված անձնակազմի վարկի նշանակալց աճ:

Եզրափակելով, գեներալ Բելուն հավաստում է, որ փորձառությունն ընթանում է բարենպաստ պայմաններում և այդ ասպարեզում ներդրված լուծան յլրավամբ վերագրում է հրամանատար Ռոմիոյին, որն իրեն տրված հանձնարարությանը նվիրված է անսպառ եռանդով ու դրա հանդեպ տաժում է բուռն հավատ:

Հարկ է արդյո՞ք ծավալել Արևելյան լեզոնի կազմակերպումը, որն այսօր ունի մարտական գործողությունների պատրաստ զումարտակ և որը շատ շուտով կունենա համանման երկրորդը:

Գեներալը տալիս է դրական պատասխան: Նախ՝ եթե խոսքը պարզապես վերաբերի ասիական ավի դեմ ուղղված սպառնալիքի, լեզոնն այլևս հզոր չի լինի, սպառնալիքն այլևս հետևանքներ չի ունենա և դրան դիմակայելու համար թուրքերն այլևս զինված անձնակազմերն այդտեղ չեն գամի: Այնուհետև՝ եթե պահը հասնելու պարագայում, ապստամբության ճակատագիրը կանխորոշելու կամ դրան սատարելու նպատակով ցանկանան ցամաք նետել բնիկներից բաղկացած գործերի կորպուսը, լեզոնն այլևս հզոր չի լինի և ձեռնարկումն այլևս հաջողության հասնելու հնարավորություն չի ունենա: Վերջապես, որովհետև այն դեպքում, երբ Արևելյան լեզոնը հարկ կունենա դառնալ գործողությունների համար նախատեսված կորպուսի ավանգարդը և ապահովել այդ կորպուսի ավի դուրս գալն ու ելման բնագծերը, մենք շահագրգռված կլինենք, ոչ առանց շահավետություն ակնկալելու, որ այդ ավանգարդը լինի, հնարավորության սահմաններում, ամենահզորը:

Այն կամավորներից, որոնց գալուտը կանխատեսվում է Ամերիկայից և որոնք, ինչպես վստահեցնում են, բազմաքանակ են, կարելի կլինի մոտ ապագայում ձևավորել 3 և նույնիսկ 4 զումարտակներից բաղկացած զուճ՝ զումարտակի հրամանատար Ռոմիոյի հրամանատարության ներքո, որը կստանա փոխգնդապետի աստիճան: Երբ ամերիկյան զինվորագրումը կատարյալ զարգացման փուլ թևակոխի, կարելի կլինի ձևավորել երկրորդ զուճը և առաջինի հետ մեկտեղ կազմավորել մի բրիգադ, որի հրամանատարությունը գեներալ Բելուն առաջարկում է վստահել գնդապետ Բրենոնին, որն այս իսկ պահից կարող է «նշանակվել իբրև այն ծառայության ղեկավար, որը պարտավորված կլինի նախապատրաստել ազատագրված երկրների ռազմական վարչության կազմավորումը և ժամանակավոր վարչությունը: Այսպիսով, կարելի կլինի խուսափել այն սխալներից, որոնք հաճախ թույլ են տրվել ռազմական միջոցով գրավման սկզբնական շրջանում, երբ նախապես մանրակրկիտ ձևով չեն ուսումնասիրվել մասամբ՝ այդ ներխուժմամբ պայմանավորված բազմաթիվ նուրբ հարցեր: Արևելքի մարդկանց և գործերին վերաբերող այն զիտելիքները, որոնց հիմնավորապես տիրապետում է գնդապետ Բրենոնը, ամենաօգտավետ արդյունքը կունենան ինչպես սիրիացիների, այնպես էլ մեզ համար»:

Գեներալ Բելուն եզրափակում է իր գեկուցագիրը, քննարկելով այն երկու եղանակները, որոնցով, ըստ նրա, կարելի կլինի օգտագործել Արևելյան լեզոնը.

1/ Հարձակում կազմակերպելու համար: Չենքով և ռազմամթերքներով կատարելապես ապահովված որոշ համարձակ պարտիզաններ, ինչպիսիք են Մուսա լեռան հայերը, ավի դուրս կբերվեն, իսկ միևնույն ժամանակ, գեներալի և ռազմամթերքների պաշարները նավերով կտեղափոխվեն նախօրոք համաձայնեցված համապատասխան վայրեր: Այս դետանտի ավի դուրս բերումը կհետապնդի բազմաթիվ վայրերում ժողովրդական ապստամբու-

թյուններ հրահրելու նպատակը, որոնք անհանգստություն կպատճառեն թուրքական ուժերին և կտարանջատեն դրանք: Այս ձևով ափ դուրս բերված պարտիզաններին հարկ է կամ եռանդորեն կենտրոնացնել մի վայրում և նավերով ետ ուղարկել, որպեսզի օգնության հասած թուրքական ուժերը նրանց չկոտորեն կամ աջակցել ափ դուրս բերվող գործերի կողմից: Գեներալն, ի դեպ, չի թաքցնում, որ նման բնույթի հարձակումը բնակչությանը կենթարկի, հավանաբար, սարսափելի բռնությունների վտանգի:

2/ Լայն ընդգրկման գործողության նախապատրաստության համար: Ամբողջ լեզեոնն ափ դուրս կբերվի անսպասելի հարձակում գործելու համար որևէ վայրում, «օգտագործելով այն քաղաքական իրավիճակը, որի հետևանքով Օսմանյան կայսրությունը բախվում է ներքին դժվարություններին»:

Այս կարևոր դեսանտի ափ դուրս բերումը կկանխորոշի, հավանաբար, համընդհանուր ապստամբության բռնկումը և թույլ կտա մատակարարել Լիբանանը, ինչպես նաև համախմբել մեր կողմնակիցներին ու թուրք դասալիքներին: Հարկ կլինի դեսանտ ափ դուրս բերելու համար ընտրել, կարճ ժամկետում ամուր հենակետի վերածելու մտադրությամբ, նպատակահարմար մի վայր, ուր լեզեոնն ի վիճակի լինի իր դիրքերը պահպանել բավական երկար, որպեսզի հնարավորություն ընձեռի ապստամբությանը ծավալվելու, իսկ ծրագրված ռազմարշավային խմբին՝ իր հերթին ժամանելու և ափ դուրս գալու: Նման բնույթի գործողությունը կարելի է փորձել իրականացնել երեք վայրերում՝ Ալեքսանդրետում, Տրիպոլիում, Կայֆայում:

Գործողությունն Ալեքսանդրետում կհանգեցնի ամենանշանակալից արդյունքների, բայց այս տարածաշրջանը լավ է հսկվում և լավ է ամրացված: Այն, այսպիսով, կառաջադրի մեծաքանակ զինված անձնակազմերի անհրաժեշտությունը, ոչ միայն դրա հետագա ծավալման, այլև հենց սկզբում, դեսանտի ափ դուրս բերումն ապահովելու համար:

Գործողությունը Կայֆայում միջոց կձառայի տարանջատելու Գազայի ռազմաճակատը և Պաղեստինի ֆրանսիական ստորաբաժանումը կկարողանա դրան իր մասնակցությունը բերել: Բայց գործողության այս թատերաբեմը գտնվում է լիբանանցի և սիրիացի մեր կողմնակիցների գործունեության ոլորտից դուրս, որոնք չեն կարողանա դրան մասնակցել: Այս գործողությունը, որը կարող էր դուրսին լինել մի քանի ամիս առաջ, այսօր դարձել է ավելի դժվարին՝ թուրքերի սպառնալուծությամբ պաշտպանողական կառույցների պատճառով, որոնք, բացի դրանից, կարող են հապճեպորեն մեծաթիվ օժանդակ ուժեր փոխադրել Գազայի ռազմաճակատի թիկունքում գտնվող իրենց պահեստայիններից:

Գեներալ Բելուն իր զեկուցագրում ասում է, որ Կայֆայի դեմ ուղղված հապճեպ գործողությունը կարող է առավելություններ ընձեռել անգլիացիներին, որոնք մեծապես խթանում են հարձակման կազմակերպմանն այս վայրում: Այդ համապատասխանում էր իրականությանը մի քանի շաբաթ առաջ, սակայն ոչ այսօր: Գեներալ Բելուն, հիրավի, ինձ ասել է, որ գեներալ Ալլենբին՝ նոր գլխավոր հրամանատարը, Կայֆայի դեմ ուղղված գործողության կողմնակիցը չի, քանի որ ծովակալությունը խիստ դժվարին, եթե ոչ անհնար է համարում դեսանտի ափ դուրս բերումը և մատակարարումներն անհրաժեշտ չափով սուզանավերից պաշտպանելու գործը Կայֆայի խարսխակայանում:

Գեներալ Բելուն գտնում է, որ անակնկալ հարձակումը հաջողությամբ պսակվելու ամենամեծ հավանականությունը կունենա Տրիպոլիում: Թվում է, թե թուրքերը մեզ չեն սպասում այդ տարածաշրջանում (?): Մեկ գիշերվա ընթացքում Արևելյան լեզեոնը կարելի է տեղափոխել Կիպրոսից Տրիպոլի: Թուրքական կայսզորի մի մասը մեզ հետ համաձայնության կգա: Բնակիչները քաղաքը մեզ կհանձնեն: Լեզեոնի զինված անձնակազմերը կգրավեն

Տրիպոլիի մոտակայքում գտնվող պաշտպանողական կառույցները: Ամիջապես վրա կհասնեն Պաղեստինի ֆրանսիական ստորաբաժանման առաջին օժանդակ ուժերը: Մենք կկարողանանք տնօրինել այն ճանապարհը, որը Հոմս է տանում և այս ձևով հասնել երկարություն, որը Պաղեստինը և Արաբիան սնուցող միակ զիծն է: Մեզ կաջակցեն Լիբանանի լեռնականները, մետաղալիները, անսարիները, որոնց օգնությունը մեզ կթույլատրի «ինարավորություն չտալ թուրքերին հաջողության հասնել, սպասելով այն կարևոր օժանդակ ուժերի ժամանմանը, որոնք հարկ է ներգրավել Սալոնիկից, Ալժիրից կամ Ֆրանսիայից»:

Տրիպոլիի հիմնական բազային կօժանդակի Ռուալի երկրորդական բազան:

«Ներխուժմանը դիմելու մասին վճռի կայացումը, - եզրափակելով ասում է գեներալ Բելուն, - պատկանում է կառավարությանը, և միայն նա ունի վճիռ կայացնելու համար անհրաժեշտ բոլոր հիմքերը՝ խորապես իրագրել լինելով հարցի էությանը և կրելով դրա ողջ պատասխանատվությունը»:

Վերջապես, գեներալ Բելուն հետզոտությամբ ասում է, որ այս զեկուցագիրը փոխանցել է ծովակալ Վարնեյին՝ Սիրիայի ռազմածովային դիվիզիայի հրամանատարին, «որի հետ ինքը մտքերի փոխանակության մեջ է գտնվում»: Այն նավերը, որոնք ծովակալի տնօրինության ներքո են, արդեն անբավարար են Կիպրոսում գտնվող լեզեոնը մատակարարելու համար: Անհրաժեշտ է նրան նոր նավեր տրամադրել, որովհետև լեզեոնի կազմը շուտով ընդլայնվելու է, առավել ևս, եթե ցամաքում հարձակում ձեռնարկվի:

Ծովակալ Վարնեյը գեներալ Բելունի ուշադրությունը հրավիրում է այն բանի վրա, «որ եթե սկզբնական շրջանում ինքը հակադրվել է հարձակման գաղափարին, ապա այն պատճառով, որ այդ ժամանակ, համաձայն հրամանատար Ռոմիոյի՝ իրեն տրամադրած տեղեկությունների, լեզեոնականների ռազմական ուսուցումն անբավարար է համարել՝ պատերազմական գործողության ընթացքում նրանց վտանգի ենթարկելու համար, և երկրորդ հերթին՝ նպատակակետը (Բեյլանը), որը վերջին ժամանակներս նրան մատնացույց է արել պ. Պիկոն, գտնվել է ավից շատ հեռու և անճշան տարածության վրա շրջապատված է եղել թուրքական մեծաքանակ ուժերով, մի բան, որը գործողությանը փոքր-խսկ հաջողության հասնելու հնարավորություն չէր ընձեռում: Մեր ստորաբաժանումը շրջափակման մեջ կընկներ և կոչնչացվեր՝ մինչ կարողանար որևէ բան անել»:

Նախորդող վերլուծությունից հետևում է, որ գեներալ Բելուն գոհ է մնացել Կիպրոսում գտնվող Արևելյան լեզեոնի ստուգումից և նրա համար նախատեսված զինվորագրմանը խթանելու ու այն բրիգադայի վերածելու բացահայտ կողմնակիցն է: Ես կարող եմ միայն համաձայնվել այս կարծիքի հետ, քանի որ այս հատուկ նշանակության կորպուսը, երբ պահը հասնի, կարող է մեզ շատ օգտակար ծառայություններ մատուցել:

Ինչ վերաբերում է լեզեոնի օգտագործմանը, զեկուցագրից, ընդհանուր առմամբ, հետևում է, որ հատուկ նշանակության այս կորպուսը, պետք է օգտագործվի մասնավորապես, եթե չասենք բացառապես, իբրև ավանգարդ, դուրսին դարձնելու համար արշավող կորպուսի ափ դուրս բերումը Սիրիայի որևէ կետում, որը հարկ է ճշգրտել: Անկախ այն բանից, թե որը կլինի այդ կետը՝ Ալեքսանդրետը, Տրիպոլին կամ որևէ մեկ ուրիշը, գեներալը կրկին անդրադառնալով դրան, գտնում է, որ օգտագործման ենթակա զինված անձնակազմերը, պետք է բավարար լինեն նախ՝ դիրքերը պահպանելու, այնուհետև՝ առաջ ընթանալու համար, չնայած կառուցված ամրություններին և այն օժանդակ ուժերին, որոնք թուրքերը կուղարկեն: Իմ կարծիքը միշտ այսպիսին է եղել: Ես միշտ եղել եմ Սիրիայում գործողություն ծավալելու կողմնակիցը, բայց ոչ թե մասնակի զինված ուժն իբրև դեսանտ ափ դուրս բերելու միջոցով, որը կհանգեցնեք փոքրիշատե գիտակցված ձևով ծովում վերստին տնօրինության հաստատմանը՝ երկրամասը և ժողովրդին հանձնելով թուրքերի բռնություններ:

րին, այլ լավ մտածված արշավանքի միջոցով, որը կձեռնարկվի դեսանտ ափ դուրս բերելու և ընտրված շրջանը հիմնավորապես գրավելու և այնտեղ հաջողությունների հասնելու համար անհրաժեշտ բոլոր միջոցներով:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 892, ff. 96-99 v).

380

Ֆզիպտոսում գտնվող բրիտանական զինված ուժերի հրամանատարություն գործողված լեյտենանտ Ռոյնել դը Սեն-Քուենտինը՝ Ռազմական նախարար պ. Պենլեեին

Հ. քիվ 331: Գաղտնի:

Կահիրե, 29-ը հուլիսի 1917 թ., ժ. 12.55-ին:
(*Ստացել է* ԲԸ-ի Առաջապահ խումբը հուլիսի 30-ին):

Գեներալ Բելուի հեռագիրը.

«Կահիրեի Հայկական կոմիտեի նախագահը գաղտնաբար պնդում է ...¹ և այն անսլատեհության շուրջ, որին հանգեցնում է Ամերիկայի կոմիտեների կամավոր հիմունքներով իրենց զինվորագրվածներին տված հավաստումն առ այն, ըստ որի նրանց կօգտագործեն բացառապես Հայաստանում:

Տրանսիայի նախարարը² և ես անհրաժեշտ ենք համարում գաղտնաբար դրդել ներկայումս Փարիզում գտնվող Հայաստանի կոմիտեի ներկայացուցիչներին՝ հակազդելու այդ մտքին, որը կարող է ետ պահել Հայաստանի զինվորներին, եթե ցանկանայինք կամավոր հիմունքներով նրանց զինձառայության ընդունել Փոքր Ասիայում գտնվող որևէ այլ վայրում, որը նրանց նվազ ձեռնտու է: Բոսնիական գումարտակի օրինակով:

Կարելի է պարտավորվել միայն նրանց Սալոնիկում չօգտագործելու հարցի շուրջ, որտեղ նրանք չեն ցանկանում ծառայել, բայց Փոքր Ասիայի, Սիրիայի, Կիլիկիայի որևէ վայրում բուրքերի դեմ պայքարելու անկաշկանդվածությունը պետք է պահպանվի»:

(A.M.G., 16 N 3013).

381

Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշան՝ Սպառազինության և ռազմամթերքների պատրաստման նախարար պ. Ալբեր Տոմասին

Ն:

Փարիզ, 16-ը օգոստոսի 1917 թ.:
(*Ստացվել է* օգոստոսի 18-ին):

Թեպետ ես ձեզ ճանաչելու պատվին չեմ արժանացել, ինձ՝ իբրև Հայկական ազգային

1 Վերձանման բացթողում:
2 Պ. Դեֆրանսը:

պատվիրակության նախագահի, բույատրում եմ ձեզ շնորհակալություն հայտնել այն մի քանի խոսքերի համար, որոնք ի նպաստ հայկական խնդրի դուք ասել եք Շամայինյի ձեր ելույթում:

Հայերը ձեզ խորապես երախտապարտ են այն պարգևորչ հիմնավորման համար, լստ որի դաշնակցները, որոնք կռվում են իրավունքի և արդարության, ճնշված ժողովուրդների ազատագրման և վերջիններիս՝ իրենց սահական կառավարությունն ընտրելու իրավունքի համար. Հայաստանի, ինչպես նաև Էլզաս-Լոթարինգիայի համար, այլևս չեն կարող ընդունելի համարել, որ Թուրքիայի հայկական նահանգների ժողովուրդներին հնարավորություն տրվի սմտրինելու իրենց ճակատագիրը հանրաքվեի միջոցով: Դրան համաձայնություն տալը կնշանակի հաշվի նստել բուրքերի իրականացրած կոտորածների, հանցագործությունների հետ, որոնք խախտել են մեծամասնության հաշվեկշիռը՝ այս ժողովուրդներին իրենց կեղեքիչների լծի տակ բռնելու համար:

(A.N., 94 AP 225).

382

Քանակի շտաբի 3-րդ բաժանմունքի ծանուցագիրը

Գաղտնի:

[18-ը օգոստոսի 1917 թ.]:

Կովկասի տեղաբնակ գորքերը

I. Մահմեդական գորքեր.

Նրանք ներկայումս օգտագործվում են արևմտյան ռազմաճակատում և ընդգրկում են. օսական (վրացիների հարևանությամբ գտնվող ցեղ) 4 գումարտակ. հեծելազորի 2 գումդ, որոնցից մեկը՝ օսական. հեծելազորի 3 բրիգադա ունեցող (երկուական գնդից բաղկացած) 1 դիվիզիա:

II. Վրացական գորքեր.

հրաձգային 1 գումդ (Կովկասի 7-րդ կորպուսը). հեծելազորային 1 գումդ (Կովկասի հեծելազորային 1-ին կորպուսը). հետևակային 1 գումարտակ (ներկայումս ունի 2500 մարդ և 200 սպա, որոնք գումարտակի հաստիքացուցակով նախատեսված չեն). գնդացրորդների 1 ստորաբաժանում. կրետանային 1 ենթաբաժին. Սպասվում է նոր կազմավորումների ձևավորման բույլտվություն:

III. Հայկական գորքեր.

հրաձիգների 6 գումարտակ. 3-ը գտնվում են Կովկասի 7-րդ կորպուսում (Ուրմիայի տարածաշրջանում). 2-ը՝ 4-րդ կորպուսում (Վանի տարածաշրջանում). 1-ը՝ 1-ին կորպուսում (Երզնկայի տարածաշրջանում): Շուտով անհապաղ ստեղծվելու են 6 նոր գումարտակներ: Այդ ժամանակ կձևավորվեն 2-ական գումարտակ ունեցող 6 գնդեր: Հավանական է, որ մոտալուտ ապագայում դրանք կօգտագործվեն գերազանցապես Պաղեստինում:

(A.M.G., 16 N 3181).

**Կահիրեում Ֆրանսիայի նախարար պ. Դեֆրանուը՝
Խորհրդի նախագահ, Արտաքին գործերի նախարար պ. Ափրոյին**

Հ. թիվ 543:

Կահիրե, 18-ը օգոստոսի 1917 թ., ժ. 12.15-ին:
(Ստացել է Բաղ. վարչ. օգոստոսի 19-ին):

Հայկական ազգային միության եզիպտական կոմիտեն վճռել է, գեներալ Բելուի և Արևելյան լեգեոնի հրամանատարի հետ համաձայնություն կայացնելուց հետո, Փարիզի կոմիտեի և Պոեղ [sic] փաշա Նուբարի մոտ ուղարկել մի ներկայացուցչի, որին հանձնարարություն կտրվի կարգավորել որոշ հարցեր, որոնք առնչվում են Ամերիկայից եկող կամավորներին և, մասնավորապես, այն անձանց հայրենիք վերադարձին, ովքեր վաղուց ի վեր կամավորներ են, բայց ծառայության համար պիտանի չեն ճանաչվել կորպուս ժամանելու պահից ի վեր:

Այս առաքելությունը ստանձնած ներկայացուցիչը պ. Վահան Թիքեյանն [sic] է, որը հայկական «Արև» թերթի գլխավոր խմբագիրն է: Նա կմեկնի (առաջին իսկ) նավով: Հաշվի առնելով հրատապությունը, ես թույլատրում եմ նրա անձնագրում թույլտվության նշում անել և ձեզ երախտապարտ կլինեմ, եթե դուք Մարսելի իշխանություններին տեղեկացնեք նրա մոտալուր ժամանման մասին:

(A.M.A.E., Guerre 1914-1918, Turquie, tome 892, f. 137).

**Հայկական կամավորական կենտրոնական կոմիտեի քարտուղար
պ. Բոչնաղյանը՝ Ռազմական նախարար պ. Պենկեին**

Փարիզ, 18-ը օգոստոսի 1917 թ.:
(Ստացել է ԲԸ-ի Աֆրիկայի ենթաբաժինը
օգոստոսի 20-ին):

Իմ տրամադրության ներքո է գտնվում օգոստոսի 11-ի ձեռք բերված 6062-9/11 նամակը՝ և թեպետ Ամերիկայի իմ ներկայացուցիչների համար ես հստակորեն մանրամասնել եմ, որ հայ կամավորների զինծառայության ընդունումը բացառապես նախատեսված է Փոքր Ասիայում հետագայում կայանալիք գործողությունների համար, ես կրկին նրանց եմ փոխանցում ձեռք հրահանգները, որպեսզի այս առթիվ որևէ թյուրիմացություն չծագի:

(A.M.G., 7 N 2148).

1 Չի հայտնաբերվել:

**Կովկասում գտնվող ֆրանսիական ռազմական առաքելության ղեկավար,
փոխգնդապետ Շարդինյին՝ Ռուսաստանում գտնվող ֆրանսիական
առաքելության ղեկավար, գեներալ Ժանինին**

Ճ. թիվ 36:
[Պատճենը]:

Թիֆլիս, 18-ը օգոստոսի 1917 թ.:

Օգոստոսի 15-ի թիվ 35 ծածկագրված հեռագրով՝ ես պատիվ ունեցա ձեզ հաշվետվություն տալ այն մասին, որ Կովկասի ռազմաճակատի համար մահմեդական զնդերի կազմավորումն ինձ վտանգավոր է թվում և որ հարկ կլինի ռազմական իշխանություններին և ժամանակավոր կառավարությանը համառոտեմ պնդել, որպեսզի Կովկասի մահմեդական կոմիտեների՝ այս նպատակով արվող խնդրանքներին բավարարում չտրվի: Մեկ ամսից ի վեր, իրոք որ, արտաքին քաղաքական իրավիճակը փոփոխություններ է կրում: Ռուսական կենտրոնական իշխանության թուլությունը, որը հեղափոխությունից ի վեր աստիճանաբար զգալի է դառնում, ոչ միայն նպաստել է տեղացիների շրջանում անկախության զաղափարների զարգացմանը, այլև մտավախություն է առաջ բերել այն հարցում, որ ռուսական բանակն այս ռազմաճակատում, ինչպես և արևմտյան ռազմաճակատում, ի վիճակի չի լինի պահպանելու ներկայիս իր դիրքերը Թուրքաստանում: Մինչ այժմ որևէ ահազանգ հիմք չի տվել կարծելու, որ այդ մտավախությունները կարող են հիմնավոր լինել, և ես դրանց բացարձակապես որևէ հավատ չեմ ընծայում, բայց պարտավոր եմ հավաստել, որ ժողովրդի շրջանում դրանք գոյություն ունեն: Դրանց արձագանքներն ինձ են հասել Պարսկաստանի ռազմաճակատում, Տրապիզոնում և Կովկասում²:

Կանխատեսելով այդ, թաթարները*, վրացիները, հայերը՝ յուրաքանչյուրը ցանկանում է ունենալ իր բանակը, ինչպես իրենք են հայտարարում, անհրաժեշտության դեպքում, իրենց երկրի պաշտպանությունը թուրքերից ինքնուրույնաբար ապահովելու համար, իսկ իրականում՝ ունենալու համար նաև մեկը մյուսին դիմակայող այնպիսի մի ուժ, որն ի վիճակի լինի իրենց հանդեպ հարգալից վերաբերմունք ներշնչել:

Մինչ վերջին հուլիսը, երեք խմբերի միջև տիրում էր բացահայտ համաձայնություն, որն ըստ Չիտենկելու՝ Կովկասի գործադիր կոմիտեի անունից Մոսկվայի վեհաժողովում օգոստոսի 16-ին արված հայտարարության, շարունակում է գոյություն ունենալ, ինչպես և նախկինում: «Կովկասի ժողովուրդները, - ասել է նա, - համերաշխ են ոչ միայն միմյանց հետ, այլև ռուս ժողովրդի և կայսրության այլ ժողովուրդների հետ: Մինչ այժմ նրանք անկախանալու որևէ փորձ չեն ձեռնարկել: Ես կասեմ ավելին. նրանք միավորվել են հավանություն տալու դեմոկրատիայի անունից այստեղ արված հռչակագրին»:

Սակայն իրականում, բոլորովին վերջերս, մահմեդականները և վրացիները համաձայնության են եկել և կազմել բլոկ՝ Կովկասում գործերի կառավարումն իրենց ձեռքը վերցնելու համար, բացառելով հայերին: Այդ քաղաքականության առաջին քայլը վրաց քաղաքա-

1 Արտատպված չէ:
2 Փաստաթղթի ծանոթագրությունը. «Ես նկատի ունեմ մի փոքր անց այցելել Երզնկայից Վան ձգվող Հայաստանի ռազմաճակատը՝ տեղում ծանոթանալու գործերի վիճակին և այն միջոցին, որով այս ձևով կարգավորվելու է բանակի մատակարարման՝ անհանգստություն պատճառող խնդիրը»:
* Նկատի ունի ադրբեջանցիներին: - Մ. թ.:

պետի նշանակումն էր՝ նախկին հայ քաղաքապետի՝ փոխարեն՝ Թիֆլիսում հենց նոր կա-
յացած ընտրությունների ժամանակ:

Այն փաստը, որ մահմեդականները և վրացիներն իրենց դաշինքում չեն ընդգրկել հայե-
րին, կիմք է տալիս ենթադրելու, որ թուրք նվաճողի դեմ հնարավոր պայքարը նրանց միակ
մտահոգությունը չէ: Կովկասի բոլոր տեղաբնակներից հայերը, հիրավի, ամենախորին
ատելությունն են տածում թուրքերի նկատմամբ. նրանք պարտերազմի սկզբից ի վեր ամե-
նաբազում ապացույցներն են ի հայտ բերել առ այդ և այսօր կստանան շահագրգռվածության,
կամ գուցե համակրանքի պատճառով ամենանվիրվածներն են ռուսական գործին: Ռուս-
ների գրաված հայկական նահանգների կորուստը, իրար որ, հավասարազոր կլինի նրանց
հույսերի խորտակմանը:

Արդյո՞ք մահմեդականների² և վրացիների միջև այդ, այսպես կոչված, պաշտպանողա-
կան դաշինքի ձևավորումն այլ պատճառներ ունի:

Ես կարծում եմ, որ առաջին և ամենաբնական բանը հարկ է փնտրել՝ թե՛ առաջինների
և թե՛ երկրորդների կողմից հայերի հանդեպ տածվող ընդհանուր հակակրանքի մեջ:

Դրա երկրորդ պատճառը ես տեսնում եմ վրացիների՝ ինքնավարությանը (որին նրանք
ձգտում են) զգուշությամբ վերաբերվելու ցանկության մեջ, անկախ այն բանից, թե հնարա-
վոր վատթարագույն դիպվածների պարագայում, իրադարձություններն ինչպի՞սի ընթացք
կատանան: Նրանց դաշինքը մահմեդականների հետ թույլ կտա, թուրքերի կողմից Կովկա-
սի ասպատակման դեպքում, հույս տաժել նրանց բարյացակամ վերաբերմունքի և իրենց
ինքնավարության ճանաչման հետ:

Այն, որ այս հետին գաղափարն այս պահին նրանց չեզոքության վրա որևէ ներգործու-
թյուն չունի, ես դրանում համոզված եմ, ճիշտ այնպես, ինչպես կասկած չունեն Կովկասի
մահմեդական ժողովուրդների չեզոքության հանդեպ, բայց կարծում եմ, ինչպես ձեզ այդ
մասին հայտնել եմ վերջին մայիսի թիվ 28 իմ հեռագրով, որ այս ժողովուրդների վրա ան-
հասկացելի ազդեցություն կգործեն³ թուրքերի կարևոր հաջողությունները և որ նրանք արագու-
րեն կհակվեն դեպի այն կողմը, դեպի ուր, ըստ էության, մղվում են նրանց անձնական հա-
մակրանքները:

Ինչպի՞սի բուն հետևանքի կհանգեցնի մահմեդականների և վրացիների այս դաշինքը,
եթե Կովկասի ռազմաճակատը պատրաստվի ընկրկել գորքերի անկարգապահության կամ
մատակարարման բացակայության պատճառով այս ձմռանը:

Երևանի նահանգում ասպատակված թուրքահպատակ հայ բնակչության և, ընդհանուր
առմամբ, Կովկասի ռուսահպատակ բոլոր հայերի համար սպասվում է հալածանքների և
կոտորածների նոր դարաշրջան և այդ առիթով կարելի է կասկածներ չտածել:

1 Պ. Խատիսյանը:

2 Փաստաթղթի ծանոթագրությունը. «Մահմեդականներ ասելով, հարկ է նկատի ունենալ ոչ միայն բաբարնե-
րին, որոնք ամենաբազմաբանակ և ամենակարևոր տարրն են, այլև Հյուսիսային Կովկասի բոլոր մահմեդական
լեռնականներին՝ ինգուլներին, կարադիներին, օսերին, չեչեններին, դադատանցիներին և այլոց»:

3 Փաստաթղթի ծանոթագրությունը. «Վրացական եկեղեցու ինքնավարությունն արդեն ճանաչվել է Սուրբ սի-
նոդի կողմից: Թիֆլիսի վրաց մետրոպոլիտը հենց նոր է նշանակվել՝ մինչև Վրաստանի կաթողիկոսի մոտալուտ
ընտրությունը»:

4 Փաստաթղթի ծանոթագրությունը. «Գերմանիայի կողմից վարձատրվող մահմեդական գործակալների քա-
րոզյությունը Կովկասում, ինչպես և Պարսկաստանում, ընթանում է առանց կառավարության դիմադրությանը
հանդիպելու: Օգոստոսի 11/24-ին Թիֆլիսում տեղական թերթերն արտասպասում են մահմեդական երկու թերթե-
րում՝ Բարվի «Աչքը սյոզում» և Կազանի «Դուրմուշում» լույս ընծայված հոդվածից մի քաղվածք: Հոդվածում մե-
ծարվում էր թուրքերի կողմից Բաղդադի և Կոստ-է-Ամարայի վերազավումը: Առայժմ ոչ մի միջոց չի ձեռնարկվել
խնդրո առարկա թերթերի դեմ»:

Ամեն դեպքում, նախորդող դատություններից հետևում է, որ Կովկասում մահմեդա-
կան զնդերի ձևավորումը և օգտագործումը՝ կհակասի ռուսական, ինչպես նաև դաշնակից-
ների ընդհանուր գործի շահերին:

Հարցն ինձ բավականաչափ կարևոր թվաց, որից ելնելով, ես անհրաժեշտ համարեցի
այդ մասին ձեզ հեռագրով հաշվետվություն տալ և խնդրել փաստին տեղյակ պահել Պետ-
րոզարիյի մեր դեսպանին²:

(A.M.A.E., Guerre 1914-1918, Opérations stratégiques, tome 1027, ff. 276-279).

Քաղաքական գործերի տնօրեն պ. դը Մարտերին՝ Նյու Յորքում Ֆրանսիայի հյուպատոս պ. Լիեբերին

Հ. թիվ 518:

Փարիզ, 21-ը օգոստոսի 1917 թ., ժ. 15-ին:

Պողոս փաշան հենց նոր, ևս մեկ անգամ ինձ հաղորդեց իր մտահոգությունները կապ-
ված հայ կամավորներին մեծ խմբերով, ճանապարհորդական նավերով Ֆրանսիա ուղար-
կելու հետ, որտեղ նրանց ներկայությունն աննկատ չի մնա:

Հիմնվելով իմ թիվ 348 հեռագրի վրա¹, ես ձեզ խնդրում եմ, հայ ներկայացուցիչների հա-
մաձայնությամբ, ձեռնարկել ցանկացած միջոց, բոլոր շոգեճակտերով, բեռնամակերով և այլ
նավերով, համաձայն տրամադրված տվյալների՝ նավ բարձրանալու պատրաստ թվով
4000 կամավորների Ֆրանսիա տեղափոխելու համար, մի բան, որը կթույլատրի
նվազեցնել խմբերի կարևորությունը, որից սարսափում է Պողոս փաշան և, անկասկած,
այդուհանդերձ, ասպառելի տեղափոխումը Ֆրանսիա, որը ցանկալի է ավարտին հասցնել,
յուրաքանչյուր պարագայում, մի քանի շաբաթ անց:

Բարեհաճեք ինձ հրատապ տեղեկացնել ձեր կողմից ընդունված՝ մտքերի այս շարանին
համապատասխան միջոցներին:

(A.M.A.E., Guerre 1914-1918, Turquie, tome 892, f. 140).

Եգիպտոս և Կիպրոս գործուղված հրամանատար Ռոմինո՝ Եգիպտոսում բրիտանական զինված ուժերի հրամանատարություն գործուղված կապիտան Դոյնել դը Սեն-Քուենտինին

Թիվ 763⁴:

Փ {ոստային} ք {աժանմունք} 601, 25-ը օգոստոսի 1917 թ.:

1 Փաստաթղթի ծանոթագրությունը. «Կովկասի բանակների գլխավոր հրամանատար, գեներալ Պրոկոպևիչն
կտրականապես հակադրվել է դրան»:

2 Պ. Նուլբնալ:

3 Մայիսի 16-ի վերջ հրապարակված է թիվ 359 փաստաթղթում:

4 Մենք արտատպում ենք միայն մի հատված, որը վերաբերում է հայերին:

1/ Ես ձեզ շնորհակալություն եմ հայտնում այն հետաքրքրության համար, որը դուք բարեհաճել եք դրսևորել փոխվեցե՞նանա՞ն Մուետտի հանդեպ: Ես երջանիկ կլինեմ, եթե նրա դասընթացներն արագ ավարտին հասցվեն՝ թույլատրելով նրան վերադառնալ Կիպրոս: Արձակուրդների և սանիտարական վիճակի պատճառով սպայական անձնակազմը նվազել է 20 %-ի չափով: Վաշտերի սպասարկումն ապահովելն, այսպիսով, դառնում է դժվարին:

2/ Ես կարծում եմ, որ պ. Թեբեյանի քայլը, որը վերաբերում է հայկական անձնակազմերի օգտագործմանը, արժանի է ուշադրության:

Ռազմական նախարարին հղված վերջին հունիսի 17-ի թվակիր գեկուցագրում (թիվ 17), ի պատասխան այն հարցի, որն ինձ էր տրվել ԱԼ-ի ներկայիս հնարավորությունների շուրջ, ես անհրաժեշտ համարեցի վերապահություն անել հետևյալ արտահայտություններով.

«Բարոյական տեսակետից ամեն ինչ կախված կլինի նպատակից: Հայկական ազգային կուսակցությունը, որն այս զինվորագրման առիթով է ձևավորվել և օժանդակում է այդ գործընթացի տևական դառնալու խնդրին, մասնավորապես, ընտանիքներին ցուցաբերվող օգնությամբ, բոլոր այս մարդկանց նախապատրաստել է այն գաղափարին, համաձայն որի նրանք պետք է կռվի գնան իրենց ազգային տարածքը վերագրավելու համար: Այն ենթադրում է գործ և հանգամանքներ, որոնք այդ հույսը հավանական են դարձնում: Անգլիական շտաբին ես հենց այդ մասին եմ ասել, որը գնդապետ Դեեդեսի միջոցով ինձ հարցրել է, թե արդյո՞ք մեր զումարտակը կարող է թուրքական բանակի հաղորդակցությունների դեմ ուղղված սրընթաց և կարճատև գործողություն իրականացնել Պաղեստինում»:

Մենք պետք է, ես կարծում եմ, այս խսկ պահից գործադրենք բոլոր ջանքերը, կանխելու համար յուրաքանչյուր թյուրիմացություն կոմիտեի հետ, որը գուցե և իր նյութական գոհաբերությունների պատճառով միշտ իրեն իրավասու կհամարի վերահսկելու զինված անձնակազմի օգտագործումը, համեմայն դեպս այն թույլատրելիության սահմաններում, որն ընձեռում է գործողությունների գաղտնիությունը և որը մեր մարդկանց շրջանում ունեցած իր ազդեցության շնորհիվ միշտ ի վիճակի կլինի ներգործելու նրանց տրամադրվածության վրա ժամանման պահին:

Եթե նոր հանգամանքների հետևանքով, կամավորների զինձառայության ընդունման ակտի որոշ հոդվածներ կարիք ունենան կամ փոփոխության ենթարկվելու, կամ առնվազն նախնական մտահղացումից զանազանվող ոգով մեկնաբանվելու, անհրաժեշտ կլինի քննության առնել այդ փոփոխությունների հնարավոր դեպքերը, որովհետև դժվարություններն ավելի լուրջ բնույթ կկրեն ապագայում՝ զինված անձնակազմերի աճի, կոմիտեների ծախսերի ընդլայնման և երկարատև պատրանքի հետևանքով: Ինչ եք դուք մտածո՞ւմ այս մասին:

3/ Ես հնարավոր չեմ համարում հայցել պ. Վեոնի նշանակումը, հատկապես այն մերժումից հետո, որը ես ստացա վերջին գարնանը:

Իբրև ֆրանսիացի աստիճանավորներ՝ ես իմ տնօրինության ներքո ներկայումս ունեմ միայն ենթասպաներ. այն պահից ի վեր, ինչ ես հայ սերժանտեր ունեմ, ֆրանսիացի կապրալների կացությունն աստիճանաբար դառնում է ավելի արտասովոր:

Նախարարությունն ինձ կարգադրել է կազմակերպել ամերիկյան նոր վաշտեր, երկատելով նախկին ստորաբաժանումների հրամանատարական կադրերը և նշանակելով լեգեոնականներին:

Ես, ի դեպ, պատասխան չեմ ստացել հուլիսի 30-ի թվակիր իմ հեռագրային հարցումին՝ ի նպաստ լեյտենանտ Շանի:

4/ Ես մեծապես հաշվի կառնեմ այն, ինչ դուք ասում եք կամավոր հիմունքներով նոր

զինվորագրված Ժոզեֆ Նահայի մասին: Ես կջանամ նրան օգտագործել իր ունակություններին համապատասխան:

(A.M.G., 17 N 495).

388

Կահիրեում Ֆրանսիայի նախարար պ. Դեֆրանսը՝ Արտաքին գործերի նախարար պ. Ռիբոյին

Հ. թիվ 607:

Կահիրե, 16-ը սեպտեմբերի 1917 թ., ժ. 12-ին:
(Ստացել է Քաղ. վարչ. սեպտեմբերի 16-ին):

Պորտ-Սալո ժամանման երրորդ տարեկիցի առթիվ, հայ գաղթականներն ինձ խնդրել են Ձերո՞ գերազանցությանը հաղորդել իրենց երախտագիտության հավաստիքն այն բարյացակամության առթիվ, որին արժանացել են ֆրանսիական իշխանությունների կողմից:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 889, f. 87).

389

Արտաքին գործերի նախարար պ. Ռիբոն՝ Կահիրեում Ֆրանսիայի նախարար պ. Դեֆրանսին

Հ. թիվ 249:

Փարիզ, 17-ը սեպտեմբերի 1917 թ., ժ. 21.55-ին:

Ես պատասխանում եմ ձեր թիվ 607 հեռագրին¹:

Բարեհաճեք տեղեկացնել հայ գաղթականներին, որ ես զգացված եմ նրանց երախտագիտությունից, և որ Ֆրանսիան չի մոռանա այն հատուցումների մասին, որոնք հաշիվների կարգավորման ժամանակ հարկ է վճարել նրանց ժողովրդին:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 889, f. 88).

390

Հայ կամավորների կենտրոնական կոմիտեի նախագահ պ. Սևաջյանը՝ Արտաքին գործերի նախարար պ. Ռիբոյին

Ն:

¹ Տե՛ս վերը թիվ 388 փաստաթուղթը:

Քորդո, 17-ը սեպտեմբերի 1917 թ.:

Անցումի այս պահին լինելով Բուրբուրյում՝ մասնակցելու համար հայ կամավորների ժամանմանը, ես նրանց թվում տեսա Վաղարշակ անունով մի հայ քահանայի, որը եղել է Ջեյթունի քահանան, այն քաջարի լեռնականների կրոնական առաջնորդը, որոնք միշտ պայքարել են թուրքերի դեմ, դարեր ի վեր մարտնչելով նրանց հետ:

Ես ձեզ խնդրում եմ, պ. նախարար, բարեհաճել միջնորդելու Ռազմական նախարարին, որպեսզի քահանա Վաղարշակը նշանակվի Արևելյան լեզեոնի հայկական կորպուսի խոստովանահայրը:

(A.M.A.E., Guerre 1914-1918, Turquie, tome 892, f. 175).

391

Խորհրդի նախագահը, Ռազմական նախարարը՝

Եգիպտոսում ֆրանսիական զորքերի գլխավոր տեսուչ, գեներալ Բելուին

Ճ. թիվ 7083-9/11:

Փարիզ, 23-ը սեպտեմբերի 1917 թ.:

Առաջին. Պ. Վահան Թեքեյանը ներկայանում է իմ Դեպարտամենտին, հայտարարելով, որ ինքը Եգիպտոսի հայկական կոմիտեի հանձնարարությամբ Փարիզ է ուղարկվել ձեր նախաձեռնությամբ, որպեսզի կառավարության հետ պայմանավորվածություն կայացնի Արևելյան լեզեոնի օգտագործման պայմանների շուրջ: Նա իրեն լիազորող որևէ փաստաթուղթ չունի, հայտարարում է, որ հաղորդելու ոչինչ չունի և որ Կահիրեից եկել է միայն այն բանի համար, որ հրահանգներ ստանա:

Երկրորդ. Խնդրվում է շտապ և հեռագրային կապով տեղեկություններ հաղորդել պ. Վահան Թեքեյանի սնձնավորության և այն առաքելության բնույթի վերաբերյալ, որը դուք նրան եք վստահել:

(A.M.A.E., Guerre 1914-1918, Turquie, tome 892, f. 181).

392

Խորհրդի նախագահը, Ռազմական նախարարը՝

Արտաքին գործերի նախարար պ. Ռիբոյին

Թիվ 684-2/11:

Փարիզ, 24-ը սեպտեմբերի 1917 թ.:

(Առաջին է Քաղ. վարչ. սեպտեմբերի 25-ին):

Տեղեկություններ Թուրքիայի վերաբերյալ:

1 Ստորագրել է գեներալ Վիդալը:
2 Ստորագրել է գեներալ Վալանտինը:

ՀԱՎԵԼՎԱԾ

Պ. Կլարենս Կ. Սթեփանը՝ տիկին Էդուարդ Սթեփանին

Ն: Թարգմանություն:

Պատճենը:

Ժնև, 26-ը օգոստոսի 1917 թ.:

Երեկ ես նախաճաշի էի հրավիրել իմ բարեկամներից մի քանիսին, որոնց ներկայությունն ինձ համար միշտ շատ հաճելի է եղել: Նախաճաշը նախատեսված էր 6 անձանց համար: Ներկա էին պ{արոն} և տիկին Իրվինները: Վերջինս այստեղ «Մաթյուրդեյ իվնինգ փոսթի» թղթակիցն է, իսկ նրա կինը, իր հերթին, գյուղ է ամերիկյան մի քանի այլ հանդեսների համար: Ներկա էին նաև պ{արոն} և տիկին Էդուարդսները բրիտանական հյուպատոսությունից և վերջապես, սեղանին համաչափություն տալու համար, մի հմայիչ անգլուհի՝ տիկին Ֆորսթերը, որը հենց տիկին Մազրուդեյի մեծ բարեկամուհին է:

Այս նախաճաշի պատմությունն ամբողջացնելու համար, ես իհարկե պետք է նկարագրեի իմ զգեստը: Հակառակ դեպքում, սա հուշերի հավաստի գրառում չէր լինի, բայց այդ մասին ես չեմ խոսի, քանզի դա հետաքրքրություն չի ներկայացնում: Այդուհանդերձ, ես ձեզ կասեմ, որ նախաճաշն անցավ շատ ուրախ և հետաքրքիր, որովհետև պ{արոն} և տիկին Իրվինները՝ երկուսն էլ հմայիչ պատմողներ են: Հատկապես պարոնը, պատերազմի հայտարարումից ի վեր շատ հետաքրքիր բաներ է տեսել: Նա գտնվել է Լուվենում, երբ այդ քաղաքը թշնամուն է հանձնվել և գերմանացիների կողմից այդտեղ ձերբակալվել է: Սկսած այդ պահից, նա շատ է վայրից վայր տեղափոխվել և եղել է Անտանտի բոլոր ռազմաճակատներում:

Հետաքրքրությունից զուրկ չէր նաև հանդիպել այն մարդկանց հետ, ովքեր թողել էին Թուրքիան այն պահից ի վեր, ինչ Միացյալ Նահանգները խզել էին հարաբերությունները նրա հետ: Նրանք մեզ ասացին այն սարսափելի բռնությունների մասին, որոնց ենթարկվել էին հայերը: Դրանք, հավանաբար, պատերազմի սկզբից ի վեր, ի հայտ եկած ամենատուկալի բռնություններն են: Այդ դժբախտներից ավելի քան մեկ միլիոնին սպանել են թուրքերը: Հնարավոր չէ պատկերացում կազմել տեղի ունեցած խոշտանգումների և կոտորածների մասին: Ակներևաբար թուրքերը վճռել էին ոչնչացնել հայ ժողովրդին և հետևողականորեն իրագործում էին իրենց ծրագիրը:

Ձինվորական տարիքի երիտասարդները զորակոչվել են զորակոչի ենթակա թուրքերի հետ մեկտեղ: Նրանց օգտագործել են ռազմական աշխատանքների, ճանապարհների կառուցման և համանման այլ գործերի համար: Թուրքերը սովորաբար նրանց համախմբում էին ջոկատներում կամ խմբերում: Սրբնթաց երթով նրանց տանում էին դեպի լեռները և այնտեղ հրացանով սառնասրտորեն սպանում: Կանանց, երեխաներին, ջահել տղաներին և ծերունիներին, որոնք շատ տարեց էին որևէ բան արտադրելու կամ կովելու համար, վտարել են երկրից և ոտքով ուղարկել դեպի հարավ, որի ծայրագույն նշանակետն Արաբիան էր: Ճանապարհորդության ընթացքում այս դժբախտներին վիճակված էին ծանր պահեր, հատկապես երիտասարդ և գեղեցիկ կանանց, որոնցից ոմանք բարձր դասին էին պատկանում, ինչպես օրինակ, Կոստանդնուպոլսի ամերիկյան քոլեջի այդ երիտասարդ ուսուցչուհին:

Ձինվորների փոքրաթիվ պահակախմբերի հսկողությամբ, երկար շարասյուներով նրանց տանում էին դեպի հարավ: Երբեմն որոշ քաղաքներում նրանք հանդիպում էին կարեկցանքով համակված թուրք սպաների, բայց վերջիններս՝ իրենց աշխատատեղը կորցնելու երկյուղից դրոպած, նրանց ուղարկում էին ուրիշների մոտ: Շատ ավելի հաճախ, քա-

դարձերի այդ սպաները դաժան էին լինում: Նրանք այս թշվառ ժողովրդին գիշերը նետում էին վանդակապատ սենյակների մեջ. այստեղ իրար գլխի կիտված սնում էին մինչ առավոտ՝ այլ քաղաքներ մեկնելու համար, որտեղ միևնույն վերաբերմունքին էին արժանանում նրանք, ովքեր կյանքին հրաժեշտ չէին տվել:

Այդ բանտախցերը, ինչպես մեզ են հայտնում, ներկայացնում են դժնդակ տեսարան. որովհետև գիշերվա ընթացքում շատերը մահանում էին ուժասպառության, ճանապարհորդությանից հյուծվելու հետևանքով, իսկ դիակներն այդտեղ մնում էին մինչ հաջորդ օրը, երբ սայլակներով դրանք տանում, և ինչպես շների, թաղում էին փոսերում. Ամբողջ գիշերվա ընթացքում ողջերը խառնված էին մնում մեռածների հետ: Այդ դժբախտների մեծ մասը զուրկ էր հագուստներից:

Քաղաքից դեպի քաղաք կատարվող ճանապարհորդության ընթացքում նրանք տառապում էին սարսափելի բռնություններից, որովհետև քարավանը ենթարկվում էր վայրի ցեղերի, քրդերի և կոպտերի [sic] հարձակումներին, որոնք լեռներից ցած էին իջնում վնաս պատճառելու, սպանելու կամ իրենց ճաշակին համապատասխանող ցանկացած կնոջ գեղեվարելու համար:

Կարճ ժամանակ անց, կանայք զրկվել են իրենց բոլոր հագուստներից և հարկադրված եղել կիզիչ արևի տակ 300 միլ քայլելու բացարձակապես մերկ վիճակում: Գանապարհի ողջ երկայնքով, որտեղ վայրի ցեղերից բացի վիստում էին շնագայլերը, նրանք մահանում էին, ինչպես ճանճերն են սատկում: Շնագայլերն, իջնելով լեռներից, շատ շուտով դարձել էին այնքան ձեռնասուն, որ հնարավոր էր նույնիսկ շոշափել նրանց, ինչպես շներին:

Անցնելով այն ճանապարհների երկայնքով, որոնցով այս դժբախտ գաղթականներն էին գնացել, հաճախ կարելի էր այստեղ կամ այնտեղ հանդիպել զանազան դիպքերում գտնվող մահացած կանանց մարմինների, որովհետև դժբախտները վերջին շունչը փչել էին այն ժամանակ, երբ նստել էին, որպեսզի հանգստանան: Եթե որևէ մեկն այդ վայրով անցնելի միևնույն օրը, բայց մի քանի ժամ ավելի ուշ, մարմինների փոխարեն կգտնեք ոսկորների որոշ մնացորդներ: Այսպիսին էր շնագայլերի աշխատանքի հետևանքը:

Թուրքերը, հավանաբար, կարծում էին, որ արաբները կսպանեին մարդկային այս ամբոխից նրանց, ովքեր կենդանի էին մնացել: Բայց նրանք սխալ հաշվարկ էին կատարել, որովհետև արաբները նրանց հանդեպ դրսևորեցին մեծ կարեկցանք:

Թուրքերն այս հանցագործությունների մեծ պատասխանատուներն են: Գերմանական միսիոներներն աշխատեցին մեզ հետ մինչ այն պահը, երբ հարաբերությունները խզվեցին և զեկուցագիր զեկուցագրի ետևից Գերմանիա ուղարկեցին՝ դրանցում նկարագրելով այս հանցագործություններն ու օգնություն խնդրելով: Այդ նկարագրությունները տպագրվեցին գերմանական լրագրերում, բայց դրանք զրաքննության ենթարկվելուց հետո այնպիսի տեսք էին ստացել, որ կորցրել էին ողջ ազդեցությունը: Հենց այս առումով է, որ գերմանացիները, իրենք ևս կարող են դիտվել իբրև պատասխանատուներ:

Խեղճ ուսուցչուհին, որի՝ իբրև Ռոբերտ քոլեջում կամ ամերիկյան այլ հաստատությունում հայ երիտասարդների դաստիարակի մասին, ես խոսեցի վերը, անցել է սարսափելի փորձությունների միջով: Նա իր քրոջ՝ մի երիտասարդ աղջկա հետ քայլելիս է եղել ճանապարհի երկայնքով, երբ քրդերը հարձակում են ձեռնարկել: Քանի որ քուրդ հեծյալներից մեկի ընտրությունը կանգ է առել այս երիտասարդ աղջկա վրա, նա նրան ճանկել է, երկայնքով մեկ դրել իր թամբին և ճողոպրել: Ուսուցչուհին, ցանկանալով փրկել իր քրոջը, դիմադրել է քրդին, որն իր մտրակով հարվածել է նրա գլխին: Դժբախտն ընկել է անշնչացած: Երբ նա ուշքի է եկել, տեսել է, որ ճանապարհի եզրին միայնակ է, հագուստները կոտրապտ-

ված են, իսկ քարավանը գտնվել է շատ հեռվում: Նրան հաջողվել է գտնել դեպի մեր միսիոներներից մեկը տունող ճանապարհը, որը նրան ապաստան է հատկացրել: Նա եկել է այդ մարյու մոտ, ունենալով ամենաառաջնահերթ հագուստները: Նրան ընդունող միսիոներն անցյալում նրա հետ ծանոթացած է եղել Կոստանդնուպոլսի ընկերությունում: Այսպիսին էր մեկն այն տեղեկություններից, որոնց թիվը հազարի է հասնում:

Անհնար կլիներ հավատ ընծայել խիստ աներևակայելի պատմություններին, եթե դրանք մեզ հաղորդած չլինեին ակնմատեսները, և պաշտոնական դիրք զբաղեցնող անձինք: Ամերիկյան ժողովուրդը սիրում է ճշմարտությունը: Մենք կարող ենք իբրև ճշմարտացի ընդունել այն, ինչը նա ասում է և դրան հավատալ: Այսպիսի հանցագործություններից հետո, թուրքի համար կա միայն մեկ վայր՝ անէության երկիրը: Քաղաքակիրթ աշխարհում նա տեղ չունի:

Ես ձեզ կոչում եմ այս նամակը մեր երկրում ընթերցանության նյութ դարձնել նրանց համար, որոնց մտահոգում է հայերի փրկությունը, չնայած, որ խնդրին վերաբերող տեղեկություններն արդեն կարող են հայտնի լինել:

Ես ավարտում եմ թանկագին մայր: Ես հույս ունեմ, որ իմ նամակը ձեզ կհետաքրքրի, ձեզ և ուրիշների, որքան էլ, որ սարսափելի լինեն իմ պատմությունները: Կարո՞ղ ենք մենք արդյոք կարճ ժամանակից ազատագրվել այս գարշելի տեսիլքներից և մեկ անգամ ևս ապրել քաղաքակիրթ ժողովուրդների ճակատագրին վայել ձևով, որը մեր եղբայրների և նրանց դաշնակիցների մղած մարտերի գերագույն նպատակն է:

Ձեր սիրելի որդի,

Ստորագրված է՝ Կլարենս Կ. Սթեքսոն:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 978, ff. 80-84).

Եգիպտոսում ֆրանսիական զորքերի գլխավոր տեսուչ, գեներալ Բելուն՝ Խորհրդի նախագահ, Ռ-ազմական նախարար պ. Պենկևեին

Հ: Չհամարակալված: Գաղտնի:

Չամազուստա, 26-ը սեպտեմբերի 1917 թ.:

(*Ստացել է* ԲԸ-ի Առաջապահ խումբը սեպտեմբերի 26-ին):

Պատասխան սեպտեմբերի 23-ի ձեռ 25 և 26 հեռագրերին¹.

1/ Ես հարաբերությունների մեջ չեմ պ. Վահան Թեբեյանի հետ, որը դատապաշտպան է Ալեքսանդրիայում, Պողոս փաշայի լրագրի տնօրենն է Եգիպտոսում և կարող է ստույգ տեղեկություններ տրամադրել: Նա եգիպտական ազգային կոմիտեի² նախագահի² կողմից Փարիզ է ուղարկվել ամերիկյան լիազոր ներկայացուցիչների հետ՝ պիտանի չճանաչված կամավորներին հայրենիք վերադարձնելու հարցը քննարկելու և մեր նպատակներին վերաբերող թյուր կարծիքները հողմացրիվ անելու համար:

Կամավորները, թվում է, թե հակված են խնայելու իրենց ուժերը միայն հայկական տարածքում մարտնչելու համար, այն դեպքում, երբ պայմանագրում վերապահություն է ար-

1 Տես վերը թիվ 391 փաստաթուղթը:

2 Դոկտոր Ներուզը:

վում Ասիական Թուրքիայում որևէ ձևով նրանց օգտագործելու մասին:

2/ Ես ավարտին եմ հասցրել տեսչական քննությունը Կիպրոսում, որտեղ համաճարակի մտավախություններն ի չիք են դարձել: Ամառային ճամբարը հիանալի վիճակում է:

Հրամանատար Ռոմիոն հետևողականորեն հետամուտ է նոր կազմավորմանը: Առաջին արդյունքները գոհացուցիչ են:

Ես վերադառնում եմ Պորտ-Սալո, որտեղից կմեկնեմ առաջին նավով, բերելով մանրամասն տեղեկություններ:

(A.M.G., 16 N 3200).

394

**Նյու Յորքում Ֆրանսիայի հյուպատոս պ. Լիեբերը՝
Արտաքին գործերի նախարար պ. Ռիբոյին**

Հ. թիվ 1054:

Նյու Յորք, 2-ը հոկտեմբերի 1917 թ.*:

(*Մտացվել է* 3-ին, ժ. 14.30-ին):

Պատասխան ձեր 518 և 566 հեռագրերին¹:

Ես համաձայնության եմ հանգել (Անդրատլանտյան ընկերության) հետ՝ կամավոր հիմունքներով Արևելյան լեգեոնին զինվորագրված որոշ թվով հայ կամավորների ցանկացած նավ տեղափոխելու հարցում: Անդրատլանտյան ընկերությունը Հայկական կոմիտեի տրամադրության ներքո կղնի իր ունեցած ազատ տեղերն առավելագույն չափով: Այս ուղևորները մեկնում են, այսպիսով, փոքրաթիվ խմբերով, որը համապատասխանում է Պողոս փաշայի խնդրանքին: Մեր ռազմական առաքելության հաղորդակցության ծառայության հետ համատեղ, ես քննարկել եմ նրանց բեռնանավերով տեղափոխելու հնարավորությունը: Բայց Անդրատլանտյան ընկերությունը տեղեկացրել է, որ այդ նավերն ուղևորներին որևէ ապաստան սովորաբար չեն հատկացնում: Ի դեպ, անհրաժեշտ կլինի, որ բեռնատար նավ վարձելու պայմանագիրը բույլատրի ուղևորների տեղափոխումը:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 892, f. 189).

395

**Եգիպտոսում Ֆրանսիական զորքերի գլխավոր տեսուչ, գեներալ Բելուն՝
Եգիպտոսում բրիտանական զինված ուժերի հրամանատարություն
գործուղված, կապիտան Դոյնել դը Սեն-Քուենտինին**

Ն²: Անձնական:

3-ը հոկտեմբերի 1917 թ.:

* Նախարարի ձեռագիր ծանոթագրությունը. «Տեղեկացրեք Պողոս փ(աշային) և հայտնեք ինձ այդ մասին»:
1 Համապատասխանաբար՝ օգոստոսի 21-ի, որը վերն արտատպված է թիվ 386 փաստաթղթում և սեպտեմբերի 18-ի, որն արտատպված չէ:
2 Ամբողջությամբ արտատպված չէ:

.....
Փարիզում ես կզբաղվեմ Մակեդոնիայի ռազմաճակատի հայազգի զերինների հարցով: Ես գտնում եմ, որ դյուրին կլինի դրան լուծում տալն այս մասնավոր ասպարեզում: Սակայն, ընդհանուր առմամբ, ինձ թվում է, որ Հայկական հարցը թևակոխել է մի նոր փուլ: Այն իհարկե զարգացում է ապրել խաղի մեջ Ամերիկայի ընդգրկվելուց հետո և կարող է մեզ որոշ անակնկալներ մատուցել:

Ինչ վերաբերում է պ. Թեքեյանին, ապա դոկտոր Ներուզի՝ նրան վստահաժ առաքելությունը (այն գրույցի լույսի ներքո, որի ընթացքում ես նրան հաղորդեցի Ամերիկայից եկող հայերի կողմից դրսևորվող մտավախությունները կապված Հայաստանից դուրս գործողությունների որևէ այլ թատերաբեմ իրենց ուղարկելու հետ) պարզապես հետևյալն է. պ. Թեքեյանը պետք է խնդրեր Փարիզ եկած ամերիկյան լիազոր ներկայացուցիչներին համառորեն դիմելու Ամերիկայում հայերին զինվորագրող կոմիտեներին, որպեսզի նրանք կամավորներին չհրապուրեն Հայաստանի տարածքում ընթացող կամպանիայի հեռանկարով՝ բացառելով մյուս բոլորը:

Նա պետք է նաև կարգավորեր կամավոր հիմունքներով այն զինվորագրվածներին հայրենիք վերադարձնելու հարցը, որոնք պիտանի չեն ճանաչվել Եգիպտոս ժամանելու պահից ի վեր: Հմնտ. իմ թղթակցությունը հատուկ այդ առթիվ: Այս պահին պ. դոկտոր Ներուզը միայն հեռագրել է պ. Թեքեյանին, որ նա կատանա իր՝ դոկտոր Ներուզի բացատրական մամակը, օրինակ, հոկտեմբերի 14-ի կամ 15-ի փոստով: Ժամանելուն ևեթ, ես կգնամ տեսնելու Պողոս փաշային: Միայն նա է իրավասու քննարկել հարցը Ռազմական նախարարի հետ:
(A.M.G., 17 N 495).

396

**Փարիզի հայկական կոմիտեի քարտուղար պ. Արշակ Չոպանյանը՝
Արտաքին գործերի նախարարությունում
Ասիայի փոխտնօրեն պ. Ժան Գուլին**

Ն:

Փարիզ, 5-ը հոկտեմբերի 1917 թ.:

Ես ձեզ եմ ուղարկում մի բաց նամակի թարգմանությունը¹, որը Ռուսաստանի մահմեդական կոմիտեն վերջերս հրապարակել է Պետրոգրադի թերթերում: Այս միտումները սկսում են արդեն կենսագործվել գործողությունների միջոցով՝ Արիմի թաթարների ապստամբությունը, շարժումը Տաշքենդում: Այդպիսին է պանիսլամական փտանգի զարթոնքը, որի օջախն այժմ գտնվում է Կովկասում: Թիֆլիսի մահմեդական կոմիտեի նախագահ պ. Բարաթովը, կառավարության անունից բողոքել է իբրև գրավված հայկական տարածքների ռուս նահանգապետի օգնական մի հայ մարդու՝ դ(ոկտոր) Զավրիևի նշանակման առթիվ և պահանջել, որ իբրև օգնական նշանակվի մի թուրք ևս: Կովկասում մահմեդականներն ամրապնդվում են, առաջին իսկ առիթով նրանք կհարձակվեն հայերի և ռուսների վրա, ձեռք կմեկնեն թուրքերին և կփորձեն իրենց հետ համախմբել պարսիկներին: Իրավիճակը խիստ վտանգավոր է հայերի համար, որոնք գործում են շատ խելամիտ ձևով և շրջահայացորեն ու ջանում տարբեր ազգությունների հետ պահպանել համերաշխություն

1 Արտատպված չէ:

և լավ հարաբերություններ: Լավ կլինի, որ հայերին թույլատրվի Կովկասի բանակում կենտրոնացնել հայազգի բոլոր զինվորներին, որոնք կամրապնդեն գրավված հայկական տարածքների պաշտպանությունը: Ես ձեզ խնդրում եմ բարեհաճել հրավիրելու կառավարության ուշադրությունն այս փաստերի վրա:

Հ. Գ. - Ես ձեզ եմ ուղարկում նաև պանիսլամական շարժմանը վերաբերող մի գերմաներեն հոդվածի թարգմանությունը, որը լույս է տեսել մի քանի օր առաջ «Էկլերում»:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 894, ff. 1-2 v).

397

Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշան՝ Արտաքին գործերի նախարարությունում Ասիայի փոխտնօրեն պ. Ժան Գուին

Ն:

Փարիզ, 6-ը հոկտեմբերի 1917 թ.:

Ես ձեզ եմ ուղարկում, ինչպես մենք այդ մասին պայմանավորվել ենք, իմ նամակը՝ որով պ. Ռիբոյից ընդունելություն եմ հայցում:

Ես դեռևս չեմ պատասխանել Ամերիկայի ազգային միության նախագահի հեռագրերին, որովհետև սպասում եմ, որ դուք որոշում կայացնեք կամավորների տեղափոխության վերաբերյալ: Դուք բարեհաճել եք թույլատրել ինձ տեսնելու այս առթիվ, հենց այսօր, ձեր գործակալներից մեկին, որին հանձնարարված է այս ծառայությունը, քննարկելու համար նավ վարձելու հնարավորությունը: Կարող եմ արդյո՞ք խնդրել ձեզ, բարեհաճել ինձ տեղեկացնելու այն հրահանգներին, որոնք դուք կվճռեք որդեգրել, որպեսզի ես ի վիճակի լինեմ հեռագրել արդեն երկու շաբաթից ի վեր իմ ճեպագրին սպասող պ. Սևասիին:

Խուսափելու համար ինձ պատասխանելու դժվարությունից, բավական կլինի, որ դուք զանգահարեք պ. Վիետի միջոցով (Պասսի 39-85):

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 889, ff. 92-92 v).

398

Հայ կամավորների կենտրոնական կոմիտեի նախագահ պ. Սևաջյանը՝ Արտաքին գործերի նախագահ պ. Ռիբոյին

Ն:

Փարիզ, 6-ը հոկտեմբերի 1917 թ.:

Ես ձեզ խնդրում եմ բարեհաճել Բորդոյի քաղաքացիական և ռազմական իշխանություններին լիազորել ներքոիշյալ երկու ներկայացուցիչներին, որոնք այդ քաղաքում են հաստատվել և զբաղվում են Ամերիկայից ժամանող մեր կամավորների ընդունելությամբ.

Պ. Քերթիսյան,
17, Շան-դը-Մարսի փողոց, Բորդո, և

1 Չի հայտնաբերվել:

պ. Դիրասու,
28, Շարտրոնների փողոց, Բորդո:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 892, f. 191).

399

Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշան՝ Արտաքին գործերի նախարարությունում Ասիայի փոխտնօրեն պ. Ժան Գուին

Ն:

Փարիզ, 9-ը հոկտեմբերի 1917 թ.:

Ես պատիվ ունեմ ձեզ տեղեկացնել, որ Ամերիկայի Հայկական ազգային կոմիտեն Ռազմական նախարարությանն է ներկայացրել Ֆրանսիա տեղափոխված հնչ կամավորների ճանապարհածախսերին վերաբերող մի հաշիվ, որը հասնում է 20798.50 դոլլարի՝ ըստ կայացված համաձայնությունների դրա մարումն ապահովելու նպատակով:

Թեպետ դրանից անցել է ավելի քան մեկ ամիս, որևէ պատասխան մինչ այժմ Ռազմական նախարարությունից չի հետևել, և դուք հասկանում եք, պ. նախարար, որ քանզի Ամերիկայի ազգային կոմիտեն իր տնօրինության ներքո ունի խիստ սահմանափակ դրամական միջոցներ, նրա համար շատ դժվարին կլինի հոգավ նոր մարդկանց նավ բարձրացնելու հետ կապված ծախսերը, եթե նրա առաջին իսկ ծախսերը հապճեպորեն չմարվեն: Ես ձեզ, այսպիսով, խիստ երախտապարտ կլինեմ, եթե դուք այս կապակցությամբ բարեհաճեք դիմել Ռազմական նախարարությանը:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 892, f. 192).

400

Ծանուցագիր հայ կամավորների մասին՝

Գաղտնի:

Կահիրե, 9-ը հոկտեմբերի 1917 թ.:

Արևելյան լեգեոնին կամավոր հիմունքներով զինվորագրվելու համար Ամերիկայից եկած բազմաթիվ հայ կամավորների ժամանումը Եգիպտոս առաջադրել է նոր խնդիրներ, որոնց լուծմանը ֆրանսիական ռազմական իշխանությունները հասել են հայկական կոմիտեների հետ համաձայնեցված ձևով: Գլխավորներն են. մի կողմից, Ֆրանսիայում բժշկական մանրագնին ստուգման անցկացման սահմանումը՝ խոչընդոտելու համար ոչ պիտանի մարդկանց ճանապարհորդության շարունակումը Եգիպտոս, մյուս կողմից, ծառայության համար ավելորդ դարձած մարդկանց՝ դեպի հայրենիք (Ֆրանսիա և Ամերիկա) վերադարձի կազմակերպումը:

Գեներալ Բելուի խորհրդով, դու կտոր Եգիպտոսի կողմից գլխավորվող Եգիպտոսի հայկական կոմիտեն Ալեքսանդրիայից Ֆրանսիա է ուղարկել պ. Վահան Թեքեյանին՝ այդ հար-

1 Պատրաստել են կապիտան Դոյնել դը Սեն-Բուենտիցի ծառայությունները:

ցերը Ն {որին} գ {ելրագանցություն} Պողոս փաշա Նուբարի կողմից ղեկավարվող Փարիզի հայկական կոմիտեի հետ համատեղ ուսումնասիրելու և դրանք ֆրանսիական Ռ-ազմական նախարարության հետ քննարկելու համար: Կապիտան դը Սեն-Քուենտինն այդ մասին կտեղեկացնի գնդապետ Դենդեսին:

Հասնելով Փարիզ, պ. Թեքեյանը հավաստել է, որ այն ֆրանսիական իշխանությունները, որոնց նա դիմում էր, տեղեկացված չէին իր առաքելության վերաբերյալ: Նա հեռագրել է դոկտոր Նևրուզին՝ նրան զգուշացնելու և նրանից խորհուրդ հարցնելու համար (սեպտեմբերի 24-ին):

Այդժամ, գեներալ Բելուն իրազեկ դարձրեց Ռ-ազմական նախարարությանը: Այրուհանդերձ, քանի որ նա պատրաստվում էր Փարիզ մեկնել, ցանկություն հայտնեց, որ հայ լիագոր ներկայացուցիչները որևէ պաշտոնական քայլ չձեռնարկեն մինչ իր ժամանումը, այն է՝ մինչ հոկտեմբերի 15-ը: Դոկտոր Նևրուզը պ. Թեքեյանին պատասխանել է այս ոգով:

(A.M.G., 17 N 495).

401

Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշան՝ Արտաքին գործերի նախարարությունում Ասիայի փոխտնօրեն պ. Ժան Գուին

Ն:

Փարիզ, 10-ը հոկտեմբերի 1917 թ.:

Ես պատիվ ունեմ ձեզ տեղեկացնել, որ վերջերս թուրքական և բուլղարական բանակների որոշ թվով հայ դասալիքներ, որոնք ներկայվել էին Ազուտնում (Կրոզ) և որոնց անվանական ցուցակը կցվում է¹, ինձ են հղել մի աղերսագիր, Ռ-ազմական նախարարության միջոցով իրենց վիճակը բախտավելու նպատակով:

Ինձ հասած տեղեկություններից հետևում է, որ նրանք արժանի են հետաքրքրության: Այս դժբախտներն, իրոք որ, խառնված են շատ ավելի բազմաքանակ բուլղարացի և թուրք գերիների, որոնցից մի քանիսը լինելով աստիճանավորներ, հանձնարարություն են ստացել հսկել ներկայվածներին և որոնք ամենքը՝ հայերի հանդեպ ատելությամբ համակված՝ նրանց ծաղր ու ծանակի են ենթարկում և կոպիտ վերաբերվում:

Նյանք, այսպիսով, խնդրում են ընդհանուր հիմունքներով տարանջատվել և այս կերպ ազատագրվել մի շփումից, որն իրենց համար զարշելի է: Մյուս կողմից, նրանցից վեցը, ինչպես դուք այդ կտեսնեք սրան կից ցուցակում, խնդրում են թույլտվություն Արևելյան լեզուներում ընդգրկվելու համար:

Ես պատիվ ունեմ, հետևաբար, պարոն նախարար, խնդրել ձեզ բարեհաճել Ռ-ազմական նախարարության ուշադրությունը իրավիճակի վրա և, հնարավորության սահմաններում, հասնել ներկայված հայերի խնդրանքը բավարարելուն:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 889, ff. 94-94 v).

1 Արտատպված չէ:

402

Նյու Յորքում Ֆրանսիայի հյուպատոս պ. Լիեբերը՝ Արտաքին գործերի նախարար պ. Ռ-իբոյին

Հ. թիվ 1084:

Նյու Յորք, [անթվակիր]:

(Ստացվել է 1917 թ. հոկտեմբերի 11-ին, ժ. 16-ին):

Ես պատասխանում եմ ձեր թիվ 602 հեռագրին¹:

Միայն Նյու Յորքում կան 150 հայ կամավորներ, որոնք պատրաստ են մեկնելու: Անդրատլանտյան ընկերության գործակալությունը, որը գտնվում է իմ նստավայրի հարևանությամբ, կարող է նրանցից միայն 100-ին տեղավորել «Չիկագոյի» վրա, որը Նյու Յորքը թողնելու է այս ամսի (13-ի) շրջանում:

Որոշմանն, իրոք որ, հետևել է ...² դեպի Բորդո մեկնումների չորս շաբաթ, ուղևորների ահեղի կուտակում, որոնցից շատերին ուղարկել էր ամերիկյան կառավարությունը:

Ինչ վերաբերում է միևնույն (նավին), ընկերությունը կարող է այս կամավորներին, որոնց ուղարկում է Ամերիկայի հայկական ազգային միությունը, հատկացնել միայն 50 տեղ «Ռոշամբոյի» վրա, որը թողնելու է Նյու Յորքը հոկտեմբերի 20-ի շրջանում:

Միության նախագահի³ միջոցով ես գիտեմ, որ երկու ամսվա կտրվածքով՝ յուրաքանչյուր շաբաթ կարող են մեկնել 100-ից 150 կամավոր, բայց եթե նույնիսկ մենք ի վիճակի լինենք ապահովել նրանց տեղավորությունը, մի բան, որը, դժբախտաբար, ամենար է, ներկա իրավիճակում, տեղերը ...⁴ 4 նավերում, որոնք դժվարությամբ է ապահովում մեր ընկերության ծառայությունը, բոլոր ուղղություններով վաղուց ի վեր նախօրոք զբաղված են: Այս և բազմաթիվ այլ առումներով անախորժ կացությունից դուրս ելնելու միակ միջոցը հանգում է պետության կողմից ընկերությանն արագընթաց և բավարար տարողությամբ մեկ կամ երկու շոգենավ տրամադրելուն:

Չնայած, որ ամերիկյան զորքերում՝ կամ իբրև կամավորներ, կամ իբրև զինակոչիկներ, ընդգրկված են զրեթե 5-ից 6000 հայ, միությունն առայժմ կկարողանա մեր տրամադրության ներքո դնել նրանցից մոտավորապես 4000-ին:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 892, f. 196).

403

Խորհրդի նախագահը, Ռ-ազմական նախարարը⁵ Արտաքին գործերի նախարար պ. Ռ-իբոյին

Ճ. թիվ 7576-9/11:

1 Հոկտեմբերի 6-ի. արտատպված չէ:

2 Վերձանման բացթողում:

3 Պ. Սևալին:

4 Վերձանման բացթողում:

5 Ստորագրել է գեներալ Դյուպորը:

Փարիզ, 15-ը հոկտեմբերի 1917 թ.:
(Ստացել են Կար. հոկտեմբերի 16-ին,
Քաղ. վարչ. հոկտեմբերի 18-ին):

Ես պատիվ ունեմ ձեզ տեղեկացնել, որ նկատի ունենալով այն ցանկությունը, որը դուք բարեհաճել եք ինձ հայտնել վերջին սեպտեմբերի 13-ի ձեր թիվ 3403 ճեպագրով¹, ես ընթացիկ ամսի հոկտեմբերի 8-ին որոշում եմ կայացրել (դրա 20 օրինակ դուք կգտնեք սրան կից), որը փոփոխության է ենթարկում նախկինում ուժի մեջ եղած՝ Ամերիկայում Արևելյան լեգեոնին զինվորագրված կամավորներին Ֆրանսիա տեղափոխելուն վերաբերող կարգադրությունները:

Հետևաբար, ես պատիվ ունեմ խնդրելու բարեհաճել.

1/ Ամերիկայում գտնվող մեր հյուպատոսական գործակալներին հրահանգներ տալ նոր կարգադրությունները կիրառելու վերաբերյալ, նրանց ուշադրությունը, մասնավորապես, հրավիրելով միայն այն կամավորներին նավով Ֆրանսիա ուղարկելու վրա, ովքեր նախապես «պիտանի» են ճանաչվել զինծառայության համար: Բժշկական ստուգումը պետք է անցկացնեն գլխավորապես ֆրանսիացի բժիշկները, որոնք կարող են բնակություն հաստատած լինել շահագրգիռ հյուպատոսական գործակալության մոտակայքում:

2/ Փարիզի հայկական և սիրիական կոմիտեներին կոչել անմիջապես համաձայնվել իրենց տրված յուրաքանչյուր հրամանի, որը կվերաբերվի զինծառայության համար իբրև «ոչ պիտանի» ճանաչված կամավորների ճանապարհածախսերի կրկնակի հատուցմանը՝ նրանց Ֆրանսիա ժամանելուց հետո:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 892, ff. 209-209 v).

ՀԱՎԵԼՎԱԾ

1917 թ. նոյեմբերի 8-ի՝ Արևելյան լեգեոնի համար կամավորներին Ֆրանսիա տեղափոխելուն վերաբերող նախարարական որոշում

Համաձայն Արևելյան լեգեոնը կազմավորող 1916 թ. նոյեմբերի 5-ի նախարարական որոշման² VIII պարագրաֆի հրահանգների փոփոխության, Ամերիկայում զինվորագրված կամավորները մայր երկիր ուղևորվող ֆրանսիական շոգենավեր կտեղափոխվեն ծանուցումների հիման վրա, որոնք նրանց կտան այն նավահանգստի մեր հյուպատոսական գործակալությունները, որտեղ պետք է նավ բարձրանան՝ ֆրանսիական հյուպատոսությունում շատ խիստ ստուգման ենթարկվելուց հետո, որը նրանց «պիտանի» կճանաչի զինծառայության համար:

Փարիզի հայկական և սիրիական կոմիտեներին կոչ կարվի անմիջապես համաձայնվել իրենց տրվող՝ այն կամավորների ճանապարհածախսերը կրկնակի հատուցելուն վերաբերող հրամաններին, որոնք, չնայած այդ ստուգմանը, Ֆրանսիա ժամանելուց հետո «պի-

¹ Արտատպված չէ: Այդ ճեպագիրը բացահայտում է այն միջոցառումները, որոնք հարկ է որդեգրել Ամերիկայի հայ և սիրիացի կամավորների զինվորագրմանը նպաստելու և նրանց նավ տեղափոխելուն խոչընդոտող դժվարությունները վերացնելու համար:

² Այդ նախարարական որոշման մասին տես վերը թիվ 296 փաստաթուղթը (հավելվածը):

տանի» չեն ճանաչվի զինծառայության համար:

Ռազմական նախարարի փոխարեն }
և հաջորդաբար,
պետական փոխարտուղար:
Ստորագրված է՝ Լուի Մուրիե

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 892, f. 210).

404

Պ. Մկրտչյանը՝ Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշային

Խիստ գաղտնի:
[Պատճենը]:

Ալեքսանդրիա, 18-ը հոկտեմբերի 1917 թ.:

Եզիպտոսի հայկական ազգային միության լիազոր ներկայացուցիչ պ. Թեքեյանը պետք է, որ ձեզ տեղեկացրած լինի այն փոփոխություններին, որոնք ռազմավարական պատճառներով գեներալ Բելուն մտցրել է Ասիական Թուրքիայում ֆրանսիական գործողությունների նախնական ծրագրում, մասնավորապես, դեսանտի ափ հանման վայրին առնչվող հարցում, որը գեներալը ծանուցել է մեր կոմիտեի նախագահ, պ. դ'ոկրո}ր Նևրուզին՝ հավատ ընծայելով նրա ելոմանը: Վերջինս, անկասկած, չէր կարող հրապարակել այն, առանց արատավորելու իր պատիվը, սակայն մեզ հասկացրեց, որ գեներալի բացատրություններից հետևում է, թե արդյունքում միևնույն նպատակին կհասնեն անուղղակի ճանապարհով:

Մենք, այսպիսով, հանձնարարել էինք պ. Թեքեյանին ներկայացնել այս փոփոխությունները պատվիրակությանը և նրա, ինչպես նաև Ամերիկայի լիազոր ներկայացուցիչների հետ միասին քննարկել և ուսումնասիրել այն բոլոր անպատեհությունները, որոնք դրանից կարող են բխել ու այն միջոցները, որոնց հնարավոր կլինի դիմել, երբ մեզ համար ամենար դառնա իշխանություններին հարկադրել անդրադառնալու իրենց որոշմանը: Բայց մենք հենց նոր իրազեկ դարձանք մի նոր փաստի, որի դժնդակությունը չի խուսափի պատվիրակության ուշադրությունից: Չանագան սկզբնաղբյուրներից՝ Կիպրոսից վերջերս արձակուրդ եկածներից, մեր կամավորներին պատկանող որոշ քրթակցություններից և Պորտ-Սաիդի հավաքակալայանին կցված մի հայ սերժանտի բանավոր հաղորդումից մենք տեղեկացել ենք, որ Արևելյան լեգեոնի ռազմական իշխանությունները վճռել են մոտալուտ ապագայում հայկական զինված ամճնակազմերն ուղարկել Գազայի ռազմաճակատ (Պաղեստին):

Սակայն հրամանատար Ռոմիոյի հետ մեր փոխհարաբերություններում հստակորեն սահմանվել էր, որ կամավորները կզինվորագրվեն մարտնչելու բացառապես հայկական ռազմաճակատում և այս ոգով է, որ մենք քարոզչություն ենք իրականացրել այն բոլոր վայրերում, որտեղ նրանց զինվորագրել ենք: Եիչտ է, որ կամավոր զինծառայության ընդունման թերթիկները կրում են «Ասիական Թուրքիա» անորոշ ձևակերպումը, բայց ըստ հրա-

մանատարի հետ կայացված լույսայն համաձայնության՝ այդ անորոշությունը ցանկալի էր և կանխամտածված:

Այս պայմաններում, մեզ թվաց, որ հրամանատար Ռոմիոն պետք է, որ նախապես խորհրդակցած լիներ այսչափ արձատարական փոփոխության հնարավոր հետևանքների շուրջ, այնպես, ինչպես վարվել է գեներալ Բելուն, երբ խոսքը վերաբերում էր նվազ էական փոփոխության:

Սակայն, եթե այս լուրը դժբախտաբար հաստատվի, այն կարող է հանգեցնել սարսափելի հետևանքների:

Նախ՝ մեր զինվորները կարող են ի նպաստ իրենց օգտագործել մեր կոմիտեների խոստումները, որպեսզի հրաժարվեն կռվելուց որևէ այլ վայրում, բացի հայկական ռազմաճակատից:

Երկրորդ՝ մեր կոմիտեների անդամները կհայտնվեն շատ վատ վիճակում ոչ միայն կամավորների և նրանց հարազատների ու դաշնակիցների, այլև հանրության առջև:

Երրորդ՝ հենց այն պահից, երբ այս լուրը տարածվի, կամավորական շարժումն Ամերիկայում և այլ վայրերում մեկ հարվածով կարող է ընդհատվել: Նույնիսկ կարող է առաջանալ՝ ինչպես պատվիրակության, այնպես էլ Հայկական ազգային միության կոմիտեների դեմ ուղղված ուժգին հակազդեցություն, որը մեր ժողովրդի շրջանում կսերմանի երկպառակություն, կասկածամտություն և ընկճվածություն, և ազգային հանգամանակությունները, դրանք ևս, որոնց ամենուր տուրք են տվել հայրենասիրական այդչափ գեղեցիկ պոռթկումով, կընդհատվեն կես ճանապարհին: Այս պայմաններում, վերջին կիրակի օրը, ընթացիկ ամսի 14-ին, փոքրաթիվ խմբով մենք հավաքվեցինք Կահիրեում և որոշեցինք պ. Առաքել բեյ Նուբարին ուղարկել հրամանատար Ռոմիոյի մոտ, խնդրելու նրանից բարեհաճել մի քանի օրով տեղափոխվել Կահիրե, որպեսզի կարողանանք նրան ներկայացնել (այն պարագայում, եթե նա լուրը հաստատի) այն սարսափելի հետևանքները, որոնց կհանգեցնի մեր կամավորներին Գազայի ռազմաճակատ ուղարկելը և նրանից խնդրել, եթե դա դեռևս հնարավոր է, համոզել ռազմական իշխանություններին հրաժարվել այդ նախագծից:

Հետաքրքրություն ներկայացնող մի մանրամասն մեզ բավական անհանգստացրեց, ահա այն:

Ինչպես ես պատիվ ունեցա վերը ձեզ հայտնել, գեներալ Բելուն, որը հարգանքով է վերաբերվում ռազմաճակատի ընտրության հարցում մեր միջև գոյություն ունեցող համաձայնությանը, իր մոտ է կանչել դ(ոկտո)ր Ներուզին և նրան ներկայացրել է այն դրդապատճառները, որոնց հետևանքով շտաբը հարկադրված է եղել փոխել նախնական ծրագիրն ու նրան համոզել է հավանություն տալ այդ փոփոխությանը, քանզի ավելի կատարյալը գոյություն չունի:

Դոկտորը նրան իրավամբ պատասխանել է, որ Եզիպտոսի կոմիտեն միակը չէ, որն այս հարցում ձայնի իրավունք ունի, որ հարկ է այդ կապակցությամբ նախ՝ հաշվի առնել Ազգային պատվիրակության կարծիքը, որը 1916 թ. առաջինն է Քե դ'Օրսեի հետ բանակցություններ վարել կամավոր հիմունքներով ծառայության հարցի շուրջ, որ հարկ է, բացի դրանից, այդ առթիվ հաշվի առնել՝ առավելագույն չափով կամավորներ տրամադրած Միացյալ Նահանգների կոմիտեի լիազոր ներկայացուցիչների կարծիքը:

Գեներալն ընդունել է այս դիտողությունների իրավացիությունը և այս ձևով է, որ նա մեզ հետ համաձայնության է հանգել մի առաքելությամբ լիազոր ներկայացուցիչ Փարիզ ուղարկելու հարցում, որի նպատակն էր խորհրդատու լինել (երկրորդական բնույթի մի շարք այլ հարցերից բացի) այն միջոցների շուրջ, որոնք պետք է վերացնեին ծրագրի փոփոխությունից բխող բարդությունները:

փոխությունից բխող բարդությունները:

Սակայն, երբ պ. Թեքեյանը մեզ հեռագրեց այն մասին, որ Ռազմական նախարարությունն իր առաքելության հետ կապված որևէ տեղեկություն չունի, մենք դրան յուրաքանչյուր դարձրինք գեներալ Բելունին, խնդրանքով՝ իր կառավարությանը հեռագրով հայտնել անհրաժեշտ տեղեկություններ, և գեներալը մեզ խոստացավ այդ անել:

Որոշ ժամանակ անց, գեներալի հանձնարարությամբ, Ֆրանսիայի գործակալության ռազմական կցույ՝ կապիտան դը Մեն-Քունտինը մեզ գրում էր, որ պ. Թեքեյանի առաքելության նպատակը նախ՝ զինձառայության համար պիտանի չճանաչված՝ Միացյալ Նահանգների կամավորների վերադարձը հայրենիք կարգավորելն է և այնուհետև՝ Ամերիկայի կամավորների շրջանում այն գաղափարի ներշնչումը, որ *նրանք բացառապես հայկական ռազմաճակատում չէ, որ պետք է կռվեն, այլ անհրաժեշտության պարագայում՝ նաև ուրիշ ռազմաճակատներում:*

Մի քանի օր անց, Ֆրանսիայի գործակալությունից մեզ հանձնարարում էին հեռագրել ձեզ, որպեսզի դուք Ռազմական նախարարության հետ այս առթիվ որևիցե բանակցությունների մեջ ներգրավվեիք ը (մթացի) կ {ամսի} 15-ից հետո միայն, որովհետև, ինչպես ասում էին, այդ ամսաթվի շրջանում էր, որ նախարարությանն էր հասնելու այդ նույն հարցին վերաբերող գեներալ Բելունի գեկուցագիրը: Եվ այդպես էլ վարվեցինք:

Մյուս կողմից, մենք իմացանք, որ անձամբ գեներալը մեկնել է Ֆրանսիա, ուր, ամենայն հավանականությամբ, կժամանի միևնույն ժամանակ, երբ տեղ կհասնի իր գեկուցագիրը:

Այս ամենը մեզ հիմք տվեց երկյուղելու, որ գեներալի չնախատեսված մեկնումի և մեր կամավորներին առաջիկայում Պաղեստինի ռազմաճակատ ուղարկելու միջև, հավանաբար, գոյություն ունի ինչ-որ փոխադարձ կապ: Իրականում, ասում են, որ նրանց ուղարկելը նախատեսված է ավելի ուշ ժամանակաշրջանում՝ գալիք նոյեմբերի վերջերին:

Այս պայմաններում, հաշվի առնելով, որ պատվիրակությունը տեղյակ չէ բոլոր այս մանրամասներին, և որպեսզի նա որևէ անակնկալի առջև չհայտնվի, մենք ձեզ հեռագրել էինք, որ նախքան որևէ վերջնական որոշում կայացնելը սպասելիք մեր նամակին:

Մենք չենք զլանա ձեզ տեղյակ պահել, եթե այդ հնարավոր լինի՝ հեռագրով, հակառակ դեպքում՝ նամակով, հրամանատար Ռոմիոյի հետ մեր բանակցությունների արդյունքին:

Ներկայումս չի բացառվում, որ նրանց ցանկության հետ կապ չունեցող պատճառներով, շտաբը հարկադրված լինի վերջնականապես կամ ժամանակավորապես հրաժարվել ցանկացած գործողությունից Սիրիայում և Կիլիկիայում: Եթե դա այդպես լինի, ապա նրա որոշման բեկանումն, անտարակույս, մեր ազգային նկատառումների օգտին չի լինի: Այս պարագայում, մենք կհայտնվեինք երկու այլընտրանքի առջև. կամ խնդրել Արևելյան լեգեոնի լուծարումը, որը կնշանակի մեր շահերին չհամապատասխանող խզում, կամ, որոշ պայմաններով, հարմարվել նոր իրավիճակին:

Բայց նախատեսելով այս երկրորդ հնարավորությունը, մենք կանխատեսում ենք բարոյական և քաղաքական բնույթի բարդություններ, որոնք հարկ կլինի հարթել՝ ելնելով կողմերի շահերից:

Բարդություններից մեկը բխում է, ինչպես մենք պատիվ ունեցանք վերը ներկայացնել, այն ստույգ պարտավորվածությունից, որը մեր կոմիտեները ստանձնել են թե՛ կամավորների, նրանց հարազատների ու դաշնակիցների և թե՛ հանրության առջև՝ հայազգի զինակույրիկներին միայն Հայաստանի ռազմաճակատում մարտնչելու թույլտվություն ընձեռելու նպատակով:

Հաջորդ բարդությունը, որը նվազագույններից չէ, քաղաքական բնույթի է: Ես բացատ-

րում են.

Պատվիրակությունում, ինչպես նաև մեր կոմիտեում ինձ բացատրել են, որ Արևելյան լեզեոնի կազմավորումը հետապնդել է միայն փոքրաթիվ հայկական բանակի ստեղծման նպատակ, որը պետք է իր արյունը հեղել Կիլիկիայի հողի վրա՝ Կովկասում ձևավորված կամավորական զինված անձնակազմերի նմանակմամբ, որոնք կռվել են Մեծ Հայքի հողի վրա և այդ արվում է հարկադրելու համար՝ հաշիվների կարգավորման օրը Մեծ ու Փոքր Հայքերի նկատմամբ մեր ազգային պահանջների հարցում հարգալից վերաբերմունքի արժանանալու մտադրությամբ:

Սակայն նույնիսկ ընդունելով, որ ռազմական իշխանությունները կարող են հայկական հողի վրա գործողությունների հեռահար նախագիծ ունենալ, դժվար կլինի ընդունել, որ այն կամպանիայից հետո, որը Պաղեստինում և Սիրիայում կարող է բազմաթիվ ամիսներ տևել, բավականաչափ հայկական զորքեր մնան հայրենի հողի վրա, հանուն մեր ազգային պահանջների սատարման՝ իրենց արյունը հեղելու համար: Չնախատեսված իրադարձությունների հետևանքով չի բացառվում, որ հաշտություն կնքվի՝ մինչ դաշնակից զորքերի մուտքը հայկական տարածք: Ինչպիսին կլինի այս պարագայում Կիլիկիայի ճակատագիրը: Կբարեհաճե՞ն արդյոք դաշնակիցներն այժմվանից իսկ պաշտոնապես և իրապարակայնորեն ընդունել, անկախ այն բանից, թե ինչպես կծավալվեն իրադարձությունները և կարևոր չէ, թե որ ռազմաճակատում կօգտագործվեն հայկական զորքերը, որ Մեծ Հայքն ու Կիլիկիան, հասկանալի է՝ դաշնակիցների հաղթանակի պարագայում, պետք է լինեն ինքնավար: Կբարեհաճե՞ն արդյոք նրանք, Սալոնիկում պ. Վենիզելոսի կառավարության օրինակով, ճանաչել նմանապես, այն պահին և այնտեղ, երբ հանգամանքները նրանց այդ թույլատրեն, հանձնել Ազգային պատվիրակության՝ հայկական ժամանակավոր կառավարությունը:

Այս երկու պարտավորվածությունները լուծում կտան ոչ միայն քաղաքական բնույթի, այլև մյուս բոլոր բարդություններին, հետամուտ կլինեն մեր բարոյական պարտավորությունների կենսագործմանը, որովհետև մեր ազգային ապագայի հանդեպ հարգանքով լի, մենք առանց դժվարության կարող ենք մեր կամավորներին համոզել մարտի նետվելու բուրքերի դեմ՝ կարևոր չէ, թե որ ռազմաճակատում, և կկարողանանք մեր ժողովրդի շրջանում ստեղծել ոգևորություն առաջ քերող մի նոր մթնոլորտ, որն ի գործու կլինի հնարավորություն ընձեռել նոր և շատ փայլուն զոհաբերությունների՝ եթե կարողանանք ազդել նրա հայրենասիրական լարերի վրա:

Մենք կցանկանայինք նաև նշել, որ ներկա իրավիճակում սխալ կլինեն քերականատել դաշնակիցների՝ հայերին հատկացրած նյութական աջակցության նշանակությունը: Այդ աջակցությունը, որն սկզբում նշանակալից չէր թվում, ժամանակի ընթացքում ընդլայնվել է և ներկայումս այն այլևս հնարավոր չէ արհամարհել:

Հավանաբար, տեղին կլինի դաշնակիցներին առնչվող պատճառներով հիշեցնել, որ իրենք, թվում է, թե ցանկանում են միջդաշնակցային զորքերն օգտագործել Ասիական Թուրքիայի մի մասը գրավելու համար և կարիք չկա ասել, որ այս պահին Ֆրանսիան անհրաժեշտ չափով զորքեր իր տրամադրության տակ չունի: Սակայն Ֆրանսիական գույների ներքո կռվող հայերը կկարողանան լավագույն ձևով վերացնել այդ խոչընդոտը:

Որքա՞ն կլինի, կհարցնեք դուք մեզ, Արևելյան լեզեոնի կամավորների ընդհանուր թիվը:

Դե ինչ, եթե Ամերիկայում հայկական կամավորական շարժմանը ծավալվելու հնարավորություն տրվի (իսկ այդ ընդհատելը սխալ կլինի), մենք կկարողանանք առանց դժվարության Ֆրանսիային տրամադրել մի ամբողջ դիվիզիա:

Եվ այս թիվն աստիճանաբար կաճի, եթե դաշնակիցներն առաջ ընթանան թշնամու տարածքում, որովհետև (հրաշալի փաստ է նշելու համար) Միջագետքում և Պաղեստինում քրիտանական բանակների՝ մինչ այժմ գերեվարած բոլոր հայերը, ովքեր պիտանի են ճանաչվել զինծառայության համար, տարելայնորեն զինվորագրվել են Արևելյան լեզեոնին և ինչպես իրամանատար Ռոմիոն, այնպես էլ գեներալ Բելուս, չեն դադարում գովեստներ շռայլել նրանց կարգապահության և մարտական արժանիքների հասցեին:

Մենք հույս ունենք, այսպիսով, որ պատվիրակությունը կբարեհաճի համակարծիք լինել մեզ հետ՝ հայկական ռազմական օգնության արդյունավետության շուրջ և այն կարժևորի իրավասու անձանց առջև:

Ես կարծում եմ, որ արդեն դիմել եմ բոլոր ղեկավարներին:

Վերջին խոսքը: Հայկական ազգային միությունը՝ անգաղտնապահության մտավախությունից դրոշմած, չի կարողացել պաշտոնապես գրել պատվիրակությանը՝ և գումարվել է կոմիտեի փոքրաթիվ կազմով: Այս է պատճառը, որ ինձ հանձնարարվել է գրել անձամբ Ձերդ գերազանցությանը, սպասելով, որ միությունն, իր հերթին, կարողանա ձեզ գրել նշանակված պահին:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 879, ff. 102-110).

Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշան՝ Արտաքին գործերի նախարարությունում Ասիայի փոխտնօրեն պ. Ժան Գուլին

Ն:

Փարիզ, 19-ը հոկտեմբերի 1917 թ.:

Ես պատիվ ունեմ ձեզ տեղեկացնել, որ իմ ուշադրությունը հառվել է թե՛ Եգիպտոս ուղարկելու նպատակով Մարսելում նավ տեղափոխվող հայ կամավորների հանդեպ դրսևորվող վերաբերմունքին և թե՛ դրանից բխող էական խոչընդոտներին: Պորտ-Սաիդ մեկնող շուգենավերի վրա տեղերի սղության պատճառով, ամեն անգամ Մարսելում նավ տեղափոխվող կամավորների թիվը շարունակում է մեծապես զիջել այս քաղաք ժամանողների թվին, այնպես, որ հավաքակայանում առաջանում է բոլոր առումներով (մասնավորապես, հիգիենայի և կարգապահության) պարսավանքի արժանի խճողում:

Հնարավոր չի լինի արդյո՞ք մնան իրավիճակը բարելավելու համար ձեռնարկել Ամերիկայից Ֆրանսիա եկող կամավորների համար նախատեսված միջոցառումներին համանման միջոցառումներ՝ նրանց տեղափոխելով Եգիպտոս կամ Կիպրոս մեկնող՝ ռազմաթերքներ փոխադրող նավեր:

Ես ձեզ խիստ երախտապարտ կլինեմ, եթե դուք բարեհաճեք Ռազմական նախարարի ուշադրությունը հրավիրել այս հարցի վրա և խնդրում եմ ձեզ ընդունել, պարոն նախարար, իմ խորին հարգանքի նոր հավաստիքը:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 892, f. 220).

Արտաքին գործերի նախարարը՝ Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշային

Ն՝:

Փարիզ, 20-ը հոկտեմբերի 1917 թ.:

Ես պատիվ ունեմ ձեզ փոխանցել սրան կից Ռազմական նախարարի հոկտեմբերի 11-ի թվակիր հրահանգի՝ մի օրինակ, որը վերաբերում է Արևելյան լեզոնի հայ և սիրիացի օժանդակ ռազմական ուժերին և նրանց ընտանիքներին նպաստների հատկացմանն ու նրանց բազմանդամ ընտանիքների համար նպաստների սահմանմանը:

Դուք կգտնեք նաև սրան կից Ռազմական նախարարության հոկտեմբերի 8-ի թվակիր որոշումը՝ որը փոփոխության է ենթարկում Արևելյան լեզոնի համար Ամերիկայում զինվորագրված կամավորներին Ֆրանսիա տեղափոխելուն վերաբերող՝ նախկինում ուժի մեջ գտնվող հրահանգները: Ըստ այդ որոշման՝ կամավորները դեպի մայր երկիր ուղղություն վերցնող ֆրանսիական նավեր կտեղափոխվեն այն ծանուցագրերի հիման վրա, որոնք նրանց կտան դիվանագիտական և հյուպատոսական մեր գործակալները: Հաշվի առնելով այն նյութական դժվարությունները, որոնք կարող են ծառանալ Ամերիկայում գտնվող արևելյան կոմիտեների առջև Արևելյան բանակում կամավոր հիմունքներով զինծառայության շուրջ պայմանավորվածություն կայացնելու ցանկություն ունեցող սիրիացիներին և հայերին՝ Ամերիկայից Ֆրանսիա տեղափոխելու ծախսերի աճի հետևանքով, պարոն Ռազմական նախարարն իր համաձայնությունն է տվել իմ առաջարկությանը, որը միտում ունի այս կամավորներին տեղափոխել ծանուցագրերի հիման վրա: Իբրև փոխառություն նրանց տրված ճանապարհաձախսերի վճարումը Ֆրանսիայում կիրականացվի ընթացիկ կարգով, Ռազմական նախարարությանը կից շահագրգիռ ընկերությունների հոգածությանը: Փարիզում գտնվող Հայկական ազգային պատվիրակությունը և Սիրիական կենտրոնական կոմիտեն այնուհետև՝ կհատուցեն այս նախարարությանն այն կամավորների ճանապարհաձախսերը, որոնք Ֆրանսիա ժամանման պահից ի վեր «պիտանի» չեն ճանաչվել զինծառայության համար: Ըստ Ռազմական նախարարության և իմ Դեպարտամենտի միջև այս առթիվ ձեռք բերված պայմանավորվածության՝ որոշվել է, որ այս երկու ընկերությունները պետք է ամմիջապես ենթարկվեն ճանապարհաձախսերին առնչվող ցանկացած բնույթի կրկնակի հատուցում կատարելուն վերաբերող կարգադրության, որը նրանց կհղվի: Հետևաբար, ես կարող եմ միայն ձեզ տեղյակ պահել այս որոշմանը, խնդրելով բարեհաճել հետևել այս առթիվ ընդունված հրահանգներին՝ ձեր ղեկավարած ընկերությանը վերաբերող հարցերում: Բնականաբար, ձեր պարտականությունների մեջ է մտնում Ամերիկայում գտնվող արևելյան կոմիտեների հետ ուղղակիորեն պայմանավորվածության կայացումը՝ այս կարգադրության հիման վրա ձեր ընկերության իրականացրած ծախսերի կարգավորման համար:

Մյուս կողմից, պարոն Ռազմական նախարարն իմ ուշադրությունը, մասնավորապես,

1 Ստորագրել է պ. Գուն:

2 Համանման բնույթի մի նամակ ուղարկվել է պ. Շեքրի Գանեթին:

3 Արտատպված չէ:

4 Տե՛ս վերը թիվ 403 փաստաթուղթը և հավելվածը:

հրավիրել է միայն այն կամավորներին Ֆրանսիա ուղարկելու անհրաժեշտության վրա, որոնք նախապես պիտանի են ճանաչվել զինծառայության համար: Բժշկական ստուգումը պետք է իրականացնեն գլխավորապես ֆրանսիացի բժիշկները, որոնք կարող են բնակություն հաստատած լինել շահագրգիռ հյուպատոսությունների շրջակայքում: Ես կոչ եմ արել Ամերիկայում գտնվող մեր դիվանագիտական և հյուպատոսական գործակալներին ձեռնարկել բոլոր միջոցները՝ ապահովելու համար այս կարգադրության կենսագործումը, որը նպատակ ունի, հնարավորության սահմաններում, կրճատել այն գումարների քանակը, որոնք Ռազմական նախարարությունը պետք է այստեղ վճարի նավագնացության ընկերություններին և որոնք չպետք է, ի վերջո, գրանցվեն այդ Դեպարտամենտի հաշվին:

Ես կարիք չունեմ ձեզ հայտնել, թե որքան պատեհ կլինի, եթե ձեր ջանքերով արևելյան կոմիտեների ուշադրությունը հրավիրվի այն քաջալերանքների վրա, որոնք կարող են պարունակել, ըստ նրանց, զինվորագրմանը խթանող՝ Ռազմական պարոն նախարարի ընդունած երկու որոշումները:

(A.M.A.E., Guerre 1914-1918, Turquie, tome 892, ff. 221-221 bis).

Միջազետքում Ֆրանսիայի հյուպատոսության կառավարիչ պ. Ռուն Արտաքին գործերի նախարար պ. Ռիբոյին

Ճ. թիվ 24:

Բասսորահ, 20-ը հոկտեմբերի 1917 թ.:

(Ստացել են Կար. դեկտեմբերի 1-ին, Բաղ. վարչ. դեկտեմբերի 2-ին):

Ես հենց նոր առաջա վերջին հուլիսի 19-ի թվակիր նամակը, որի պատճենն այս ծրարում պատիվ ունեմ հղել Ձերո գերազանցությանը:

Հայկական ազգային միության Եգիպտոսի կոմիտեն ինձ խնդրում է, սահմանված պայմաններով, «հովանավորել կամավորների զինվորագրման կոմիտեի ստեղծումը Բաղդադում»:

Մինչ Կահիրեից իմ մեկնելը, հրամանատար Ռոմիոն և կապիտան դը Սեն-Զուենտինը, որոնց հայտնի է այն ամբողջ հետաքրքրությունը, որը ես տածում եմ Արևելյան լեզոնի նկատմամբ և այն օժանդակությունը, որը ցուցաբերել եմ այդ կորպուսին, մասնավորապես, Պորտ-Սաիդում գտնվող ֆրանսիական հյուպատոսության աշխատանքների ղեկավարման ընթացքում, ինձ արդեն հայտնել էին իրենց տեսակետներն այս առթիվ, և ես անկեղծորեն կարծում էի, որ կարող էի դրանով զբաղվել առանց բարդությունների ու առանց բրիտանական իշխանության կասկածները հարուցելու:

Թողնելով Եգիպտոսը, ես գիտեի, որ Արևելյան լեզոնի համար նախատեսված որոշ թվով հայ կամավորներ այստեղ սպասում էին, որ իշխանություններն իրենց միջոցներ հատկացնեն նավով Բոմբեյ մեկնելու, իսկ այնտեղից՝ Սուեզ կամ Պորտ-Սաիդ գնալու համար:

Սակայն Բասսորահ ժամանելուց մի փոքր անց, մինչ այն դժվարությունների շուրջ

կասկածներ տածելը, որոնք պատրաստվում էին համել այս փաստի հիման վրա, մի մասնավոր, խիստ անձնական գրույցի ընթացքում, հայերի մասին խոսելու առիթը ներկայացավ ինքնաբերաբար: Հարցնելով, թե այդպեք այդ կամավորները կարողացե՞լ են միավորվել իրենց կորպուսին, ես կարծեցի, որ կարող եմ սկսել այդ հարցի քննարկումը, պարզապես անկեղծորեն հայտնելով այդ ուղղությամբ բրիտանական կառավարության արածի, Եգիպտոսում, Կիպրոսում՝ Արևելյան լեզոնին նրա ընձեռած արտոնյալ պայմանների, ձեռք բերված նվաճումների և դրանցից սպասվող ծառայությունների և այլնի մասին... Ես այդ արեցի ամենաբնական ձևով և առանց որևէ հետին մտքի:

Ինձ թվաց, որ այդ խոսակցության թեման իմ գրուցակցի համար, որը Բաստորահի վիլլայի ամենահայտնի հեղինակություններից էր, հետաքրքրություն չի ներկայացնում, որովհետև նա դրանից խուսափեց (հավանաբար, ոչ այնքան ճարակորեն) հետևյալ համառոտ դիտողություններով, որոնք ես վերարտադրում եմ գրեթե բառացիորեն. «Արտասահմանյան լեզոնի համար այստեղ հայեր չկան...»: «Արևելյան»,- ճշգրտեցի ես: - «Նրանցից միայն մի քանիսը կային, որոնք բոլորը կամ գրեթե բոլորը ռազմագերիներ էին: Մենք նրանց ուղարկեցինք: Ցաքուցրիվ տեղաբնակները չեն ցանկանում զինվորական լինել: Նրանք, ի դեպ, չեն կարողանա օգտակար լինել Արևելյան լեզոնի համար: Նրանք, ովքեր կարող են որոշ չափով օգտակար լինել, արդեն ծառայության են ընդունվել մեզ մոտ... Սըր Պ. Քոքսն այս բոլոր տեղեկություններն ուղարկել է սըր Ռեզինալդ Վինգեյթին՝ պ. Դեֆրանսի համար, որը դրանք պահանջել էր...»:

Ակամայից սայթաքելով, ես սկսեցի քայլել արահետով և առանց կասկած տածելու այն անվստահության շուրջ, որն այս հարցի պատճառով կարող էր խորանալ, բայց, ի վերջո, քանի որ դա քննարկելու որևէ իրավասություն չունեի և այն անբարեհաճ ընդունելությանն էի տես, որին այն արժանացավ, փոքր-իսկ ակնարկ այլևս այդ մասին երբևէ չարեցի: Եվ ես նույնիսկ չդիմեցի Բաստորահում համակենտրոնացված թուրք գերիներին տեսակցելու հարցով: Այսօր Հայկական միությունն ուղղակիորեն դիմում է ինձ: Հաշվի առնելով մեր դաշնակիցների տրամադրվածությունը, իհարկե, տեղական կտրվածքով, որի իմաստն ինձ մեկնաբանում են և հավաստում Դեպարտամենտի վերջին հեռագրերը, ես կերկյուղեմ՝ Կահիրեի կոմիտեի արտահայտած ցանկությունը հայ եպիսկոպոսին՝ փոխանցելով, կրկին կյանքի կոչել բրիտանական այն կանխակալությունները, որոնք Չերո գերագանցությունը բարեհաճել է ցրել: Բայց եթե նա գտնում է, որ հայկական զինվորագրումների հարցը կարող է ներկայացվել Բաղդադի իշխանություններին, ես նրան խիստ երախտապարտ կլինեմ, եթե հաշվի առնելով փոստային հաղորդակցությունների ծայրահեղ դանդաղ կոտորությունը և անապահովությունը, նա բարեհաճի հեռագրով ինձ հայտնել իր ցուցումները:

Այս երկրում գտնվող այն հայերը, որոնք ներկայումս ի վիճակի են կամավոր հիմունքներով զինվորագրվելու Արևելյան լեզոնին և այդ քայլին դիմելու, եթե փոքր-ինչ քաջալերվեն, իհարկե շատ ավելին են, քան իշխանությունները մեզ այդ մասին նախապես հայտնել են:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 892, ff. 233-234).

ՀԱՎԵԼՎԱԾ

Հայկական ազգային կոմիտեի նախագահ դոկտոր Նևրուզը՝ Միջազգետրում Ֆրանսիայի հյուպատոսության կառավարիչ պ. Ռուին

[Պատճենը]:

Կահիրե, 19-ը հուլիսի 1917 թ.:

Քաջալերված մեր ազգային գործի նկատմամբ ձեր կարեկցական զգացմունքներով և Արևելյան լեզոնի համար կամավորների զինվորագրման հարցում ձեր հանդես բերած շահագրգռվածությամբ, մենք մեզ թույլատրում ենք հանդգնել ձեզ դիմել խնդրանքով, այն է՝ բարեհաճել հովանավորել կամավորների զինվորագրման կոմիտեի ձևավորմանը Բաղդադում այն անձանցից, որոնց մատնացույց կանի նշված քաղաքի թեմը, որին, կամավորների զինվորագրմանը վերաբերող բոլոր հարցերով, կոմիտեն պետք է հաղորդակցվի Եգիպտոսի ազգային միության հետ:

Այն պայմանները, որոնք կամավորների զինվորագրման համար որդեգրել է Հայկական ազգային միությունը՝ Արևելյան լեզոնի գորքերի հրամանատարության հետ կայացված ընդհանուր համաձայնությամբ, հանգում են հետևյալին.

- 1/ Կամավորները պետք է զինվորագրման կոմիտեին անհրաժեշտ երաշխիքներ ներկայացնեն իրենց բարոյական նկարագրի վերաբերյալ:
 - 2/ Բժշկական ստուգումը պետք է կատարի ֆրանսիական հյուպատոսության մատնանշած բժիշկը:
 - 3/ Բժշկական բարեհաջող ստուգումից հետո, յուրաքանչյուր կամավոր պետք է ստորագրի իր լուսանկարն ունեցող զինվորագրման քարտի ներքո: Յուրաքանչյուր քարտի ներքո կոմիտեն պետք է ավելացնի հետևյալ ձևակերպումը:
«Զինվորագրված ..., որին ներկայացրել է Բաղդադի զինվորագրման կոմիտեն: Կոմիտեի կնիքը կամ ստորագրությունը»:
 - 4/ Այն կամավորները, որոնց կամավոր հիմունքներով զինծառայության ընդունումը վերջնականապես հաստատվել է, ճանապարհորդում են ֆրանսիական կառավարության հոգածությամբ և ծախսերով:
- Հույս տաձեղով, որ մեր նամակը կարժանանա ձեր բարեհաճ ուշադրությանը, մենք պատիվ ունենք, պարոն հյուպատոս, ձեզ ներկայացնել և այլն:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 892, f. 235).

1 Ն (որին սրբակնություն) թողում Ջուշադանը:

**Եգիպտոսում բրիտանական զինված ուժերի հրամանատարություն
գործուղված կապիտան Դոյնել դը Սեն-Քուենտինը՝
Եգիպտոս և Կիպրոս գործուղված հրամանատար Ռոմիոյին**

Ն:

Կահիրե, 20-ը հոկտեմբերի 1917 թ.:

Ես պատիվ ունեմ ձեզ հղել սրան կից մի նամակի պատճենը¹, որն ինձ է ուղարկվել գեներալ Բելուի միջոցով, մինչ նրա մեկնելը և մեկ այլ նամակի պատճենը, որը Թեքեյանի գործի կապակցությամբ գրել եմ դուկտոր Նևրուզին: Փարիզ ժամանելուց անմիջապես հետո, գեներալը հաղորդակցություն կհաստատի Պոդոս փաշայի հետ:

Կիպրոսից արձակուրդ եկածները լուր են բերել այն մասին, որ քիչ անց Արևելյան լեզեոնը պետք է օգտագործվի Գազայի ռազմաճակատում: Դրանով են պայմանավորված կոմիտեի մեծ հուզումները, Առաքել բեյի և դուկտոր Նևրուզի այցը Ֆրանսիայի նախարարին՝ խնդրելու նրանից՝ պայքարել այդ նախագծի դեմ Արտաքին գործերի նախարարությունում: Պ. Դեֆրանսը նրանց դուրս է հրավիրել, ասելով, որ ինքն այդ ծրագրի մասին երբևէ չի լսել:

Առաքել բեյը չի մնացել նոր սուլթանի մոտ: Ես կարծում եմ, այսպիսով, որ նա պատրաստվում է ավելի ակտիվ մասնակցություն ունենալ հայկական շարժմանը և դա ինձ ամենևին չի ուրախացնում:

(A.M.G., 17 N 495).

**Ստոկհոլմում Ֆրանսիայի նախարար պ. Տիերոն
Արտաքին գործերի նախարար պ. Բարտուլին**

Ճ. թիվ 184:

Ստոկհոլմ, 24-ը հոկտեմբերի 1917 թ.:
(Ստացել է Կաթինետը նոյեմբերի 8-ին):

Ես պատիվ ունեմ սրան կից ձեզ հղել այն հուշագիրը², որը Հայ հեղափոխական դաշնակցության ներկայացուցիչ պ. Չորյանը հենց նոր հանձնել է Հոլանդա-սկանդինավյան կոմիտեին:

Այս ծավալուն փաստաթղթի գերակշռող մասը կազմում է բուրքական տարբեր վարչակարգերի օրոք Հայկական հարցին վերաբերող պատմական ակնարկը և ապստամբելու

1 Արտատպված չէ:
2 Արտատպված չէ:

հարցում, որով Թուրքիան փորձել է բացատրել կատարածները, Հայաստանին ուղղված հանդիմանության հերքումը:

Միջազգային տեսակետից, որոշ հետաքրքրություն են ներկայացնում միայն փաստաթղթի առաջին էջերը: Միևնույն հանդուգն պարզամտությամբ, ինչպես և տարբեր ժողովուրդների այլ պատվիրակությունները, որոնք փոքրիշատե անկեղծ ձևով ներկայացված են Ստոկհոլմում, սույն հրովարտակի հեղինակը լուծում է քննարկման կարիք ունեցող բոլոր հարցերը, ներառյալ Էլզաս-Լոթարինգիայի հարցը: Ինչ վերաբերում է Օսմանյան կայսրությանը, նա տնօրինում է ոչ միայն Հայաստանի, ինչը կարող էր օրինական լինել, այլև կայսրության տարբեր նահանգների ճակատագիրը (հոդված 4), թեպետ նրանց հատկացվելիք կարգավիճակին վերաբերող մանրուքը հետաձգում է մինչ ռազմական գործողությունների ավարտը:

«Ոչ մի անեքսիա» սկզբունքի մեկնաբանումը թվում է միանգամայն ողջախոհ:

Ստորև, հիշատակության արժանի է հետևյալ պարագրաֆը.

«Հաշտության կնքումը նախապատրաստողի դերը պետք է ստանձնեն չեզոք երկրները: Բայց, քանի որ իրադարձություններին համընթաց՝ չեզոքների թիվը նվազում է, անհրաժեշտ է, որ չեզոքների ներկայացուցիչներն իրենց հնարավորությունների սահմաններում անեն ամեն ինչ, խանգարելու իրենց երկրներին՝ իրենց հերթին, ներկա պտտերագմի մեջ ներգրավվելու»:

Ի վերջո, այս փաստաթուղթը, որը Հայաստանին վերաբերող հարցում արտահայտում է օրինական և ընդունելի գաղափարներ, ինձ թվում է, որ միաժամանակ իր նպաստն է բերում (որը մեզ բարեբախտաբար թույլատրված է անուշադրության մատնել) որոշ չեզոքների և գերմանացիների հրահրած որոշ ազգային խմբերի ջանքերին՝ հանուն ուտոպիական և վաղաժամ հաշտության հաստատման:

Այդուհանդերձ, ես չեմ կարծում, որ կարող եմ չընդունել հրովարտակը պ. Չորյանից (որն անձամբ ինքը, ինչպես ինձ թվում է, անկեղծ է) և հրաժարվել այն ձեզ փոխանցելուց:

Պ. Չորյանի խնդրանքով, երկու այլ օրինակներ սույն փոստով կուղարկվեն՝ Նուբար փաշային և պ. Դեսֆոյին. վերջինս, քանի որ հայերեն է ուսումնասիրել, հետաքրքրվում է Հայաստանի հարցով և օժանդակել է Շվեդիայում դրան հանրաճանաչություն տալուն: Չերդ գերագանցությունը կբարեհաճի հայտնել իր կարծիքը, թե արդյո՞ք այս առաքումների փոխանցումն իրենց հասցեատերերին որևէ անպատեհություն չի ներկայացնում:

(A.M.A.E., Guerre 1914-1918, Turquie, tome 889, ff. 113-113 v).

**Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պոդոս Նուբար
փաշան՝ Արտաքին գործերի նախարարությունում
Ասիայի փոխտնօրեն պ. Ժան Գուին**

Ն:

Փարիզ, 25-ը հոկտեմբերի 1917 թ.:

Ես պատիվ ունեմ ձեզ հայտնել ընթացիկ ամսի 20-ի ձեր նամակի՝ ստացման մասին,

1 Տե՛ս վերը թիվ 406 փաստաթուղթը:

որով դուք բարեհաճել եք ինձ փոխանցել Ռազմական նախարարության՝ հոկտեմբերի 11-ի թվակիր հրահանգի՝ մեկ օրինակ, որը վերաբերում է Արևելյան լեզեռնի հայկական օժանդակ ռազմական ուժերի և նրանց բազմանդամ ընտանիքների համար նախատեսվող օգնության նպաստներին:

Ես այդտեղ գտա մնամապես այդ նույն նախարարության հոկտեմբերի 8-ի թվակիր որոշումը¹, որը փոփոխության է ենթարկում նախկինում ուժի մեջ եղած՝ Ամերիկայում զինվորագրված կամավորներին Ֆրանսիա տեղափոխելուն վերաբերող հրահանգները:

Այդ փաստաթղթում ձևակերպված տարբեր հրահանգները ես ընդունեցի ի զիտություն և ձեզ խիստ երախտապարտ կլինեմ, եթե բարեհաճեք Հանրապետության կառավարությանը հաղորդել իմ խորին երախտագիտությունն այն ամբողջ բարյացակամության առթիվ, որով հազեցված են ընդունված որոշումները: Իմ հայրենակիցները և ես բարձր ենք գնահատում հատկապես կամավորներին նաև տեղափոխելուն վերաբերող միջոցը, որն այսուհետև տեղի կունենա ծանուցագրի հիման վրա, ինչպես նաև բժշկական ստուգմանը վերաբերող միջոցը, որը, վերջերս սահմանված պայմաններով, կխոչընդոտի զինծառայության համար ոչ պիտանի երիտասարդների տեղափոխմանը Ֆրանսիա և ահռելի չափերով կնվազեցնի այն ծախսերը, որոնք մենք ապարդյունորեն պետք է կրեինք բոլոր նրանց վերադարձն իրենց հայրենիք կազմակերպելու համար, ովքեր Ֆրանսիա ժամանելուց հետո, Ֆիզիկապես պիտանի չէին ճանաչվի գորքերում ընդգրկվելու համար:

Ինչ վերաբերում է ինձ, ես չեմ զլանա անհրաժեշտ հրահանգներ տալ ում որ հարկն է և պատիվ կունենամ հետագայում, եթե հարկ լինի, ձեզ կրկին գրելու, գլխավորապես կամավորների հարցով զբաղվող իմ հայրենակիցների հետ մեկտեղ քննության առնելուց հետո այն փաստաթղթերը, որոնք դուք բարեհաճել եք ինձ փոխանցել:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 892, ff. 241-241 v).

411

Եգիպտոս և Կիպրոս գործուղված հրամանատար Ռոմիոն՝ Եգիպտոսում բրիտանական զինված ուժերի հրամանատարություն գործուղված կապիտան Դոյնել դը Սեն-Քուենտինին

Թիվ 1166:

26-ը հոկտեմբերի 1917 թ.:

Ես ստացա հոկտեմբերի 20-ի ձեր նամակը¹, որով դուք ինձ տեղյակ եք պահում այն բանին, ինչն անվանում եք Հորնբլոուերի հակահարձակում:

Բազմաթիվ ամերիկյան զինված անձնակազմերի ժամանումն ինձ հարկադրում է ընտրություն կատարել նախկինում կամավոր հիմունքներով զինծառայության ընդունվածների շրջանում: Ես վճռել եմ վերադարձնել բոլոր նրանց, ովքեր լեզեռնի համար կլինեն միայն

1 Արտատպված չէ:
2 Վերը հրապարակված է թիվ 403 փաստաթղթի հավելվածում:
3 Տե՛ս վերը թիվ 408 փաստաթուղթը:

ավելորդ բեռ: Այս նամակը բերող նավը, կրեթի Մուսա լեռան վեց երիտասարդների, որոնք ո՛չ հիվանդ են և ո՛չ էլ վատ ստորադասներ (նրանք ունեն պահանջվող վկայականներ), բայց զինվորական կյանքի դժվարությունները կրելու համար շատ երիտասարդ են կամ շատ բույակազմ:

Ես նախագուշացնում եմ փոքր հավաքակալանի հրամանատարին, որպեսզի այս երիտասարդների վերադարձը որևէ բարդություն չհարուցի ճամբարում: Հարկ կլինի, որ վարչությունը վճիռ կայացնի նրանց՝ իբրև բանվորների օգտագործելու մասին՝ այն բանվորների փոխարեն, որոնց, ինչպես նա հավաստում է, մենք նրանից խլել ենք: Սակայն, մեր մեջ ասած, ես կասկածում եմ, թե արդյոք նա նրանց, ավելի շուտ, չի դիտի ինչպես այն լավ զարգացած և ամրակազմ տղաներին, որոնց անցանկալի է համարում և որոնցից կցանկանար ազատվել՝ նրանց մեզ տրամադրելու միջոցով:

Ես ստացա մնամապես նույն օրվա ձեր նամակը՝ նվիրված Թեքեյանի գործին և այն ավելորդ աղմուկին, որը բարձրացրել էին արձակուրդ եկածները: Ես չգիտեմ, թե ինչը կարող էր դրան ծնունդ տալ, քանզի հետագայում Գազայի ռազմաճակատում լեզեռնի օգտագործման վերաբերյալ և ոչ մի ազդարարում չէր արվել: Դա միայն արևելյան երևակայության պտուղն է, որը պատրաստ է կյանքի կոչել հիպոթեզներ, հատկապես, երբ այն կրում է դրանց որոշ հույզերի ազդեցությունը:

(A.M.G., 17 N 495).

412

Խորհրդի նախագահ, Ռազմական նախարար պ. Պենկենի Արտաքին գործերի նախարար պ. Բարտուլին

Ճ. թիվ 7872-9/11:

Փարիզ, 27-ը հոկտեմբերի 1917 թ.:
(Մտացել է Քաղ. վարչ. հոկտեմբերի 28-ին):

Ի պատասխան ընթացիկ հոկտեմբերի 20-ի ձեր 3813 ճեպագրի¹, ես պատիվ ունեմ ձեզ տեղեկացնել, որ 18-րդ օկրուգի հրամանատար գեներալի² մոտ՝ իբրև Հայկական կոմիտեի լիազոր ներկայացուցիչների, Բորդյույոմ հավատարմագրում եմ պ(արոնայ)ք Քերթիոյանին և Դիրատսին՝ ընդունելու համար Արևելյան լեզեռնին զինվորագրվելու նպատակով Ամերիկայից ժամանող հայ կամավորներին:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 892, f. 242).

1 Արտատպված չէ:
2 Գեներալ Քուինբրուանդոնը:

Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշան՝ Արտաքին գործերի նախարարությունում Ասիայի փոխտնօրեն պ. Ժան Գուլին

Փարիզ, 29-ը հոկտեմբերի 1917 թ.:

Ես պատիվ ունեմ ձեզ հանձնել սրան կից այն ճեպագրի՝ պատճենը, որը հենց նոր ստացա Ամերիկայում Հայկական ազգային միության նախագահ պ. Մևալիից, ի պատասխան այն հեռագրի, որը ձեր համաձայնությամբ նրան էի ուղարկել տեղեկացնելու համար, որ կամավորների տեղափոխության նպատակով, հավանաբար, մեր կոմիտեի տրամադրության ներքո կդրվի մի հատուկ շոգենավ, այնպիսի մի ամսաթվի, որը պետք է ճշգրտվի նույնների վերջերին, եթե այդ պահին այն կարողանա հավաքագրել նվազագույնը 1200 կամավորի:

Պատասխանը, որը ես հենց նոր ստացա, ցույց է տալիս, որ դրանում նշված հանգամանքների հետևանքով, կոմիտեն ի վիճակի չէ հատուկ նավի համար իր տրամադրության ներքո ունենալ անհրաժեշտ թվով կամավորների:

Հետևաբար, ես շտապում եմ ձեզ տեղյակ պահել այս հեռագրին, որպեսզի դուք կյանքի չկոչեք այն առաջարկությունը, որը մեզ օգնության հասնելու մտայնությամբ, այդպիսի բարեհաճությամբ արել էիք, արագացնելու համար տեղափոխությունները:

Ես հենց այսօր պատասխանում եմ մեր կոմիտեին, կոչելով շարունակել տեղափոխությունները շարքային նավերով՝ արդեն տրված հրահանգներին համապատասխան և բոլոր հնարավոր նախագույշական միջոցների կիրառմամբ:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 889, ff. 149-149 v).

Խորհրդի նախագահը, Ռ-ազմական նախարարը՝ Արտաքին գործերի նախարար պ. Բարտուլին

Ձ. թիվ 7984-9/11: Գաղտնի:

Փարիզ, 31-ը հոկտեմբերի 1917 թ.:
(*Ստացել է Քաղ. վարչ. նոյեմբերի 1-ին*):

Ես պատիվ ունեմ ձեզ հղել սրան կից Արևելյան լեգեոնի՝ տեսչական քննությանը վերաբերող զեկուցագրի՝ օրինակը, որն անց է կացրել զեներալ Բելուն:

1 Հոկտեմբերի 26-ի. արտատպված չէ:

2 Ստորագրել է է զեներալ Ալբին:

3 Արտատպված չէ: Այս զեկուցագրում զեներալ Բելուն տեղեկացնում է, որ Ամերիկայից եկած հայ կամավորները հակված են նախապատվությունը տալ ամերիկյան, քան ֆրանսիական հովանավորությանը: Նա երկյուղում է, որ Մուսա լեռան հայ կամավորները կարող են համակվել այդ քարոզչությամբ և խորհուրդ է տալիս հրամանատար Ռոմբոյին զինվել համբերությամբ ու ցուցաբերել հմտություն: Մյուս կողմից, նա դրական է համարում սիրիացի զինվորներին հայերից առանձնացնելը:

Ես գտնում եմ, որ պետք է ձեր ուշադրությունը հրավիրեմ այն անջատողական միտումների վրա, որոնք դրսևորում են Ամերիկայում զինվորագրված հայ լեգեոնականները:

Ինչ վերաբերում է սիրիացի լեգեոնականներին, թվում է վերջնականապես հաստատված, որ նրանք որևէ ռազմական արժեք չեն ներկայացնում և որ կարելի է հույս տածել միայն մի քանի վաշտերի ձևավորման հետ:

Այդուհանդերձ, դուք, անկասկած, կընդունեք, որ Փոքր Ասիայի ափերի շրջանում ներխուժման պարագայում, արաբ սիրիացիների մասնակցությունը նպաստավոր կլինի՝ թուրքական գերիշխանության դեմ ուղղված ապստամբական շարժման տարածման համար:

Նախքան մահմեդական տարրերից Արևելյան լեգեոնը գտելը, ինչպես այդ առաջարկում է զեներալ Բելուն, ինձ նպատակահարմար է թվում քննարկել, թե արդյոք հնարավոր չի՞ լինի նպաստել նրանց զինվորագրմանը և համախմբմանը՝ նրանցից հատուկ նշանակության վաշտեր կազմավորելու միջոցով:

Ես խնդրում եմ հրամանատար Ռոմբոյին քննարկել այս հարցը և չեմ զլանա ձեզ տեղյակ պահել այս նախագծի կենսագործման հնարավորությանը:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 892, ff. 249-249 v).

Քուրդ առաջնորդ Քյամիլ բեյի՝ փոխգնդապետ Շարդինյիին հղած հուշագրի ամփոփումը

Ծանուցագիր Քրդստանի մասին

Ավաա՛:

Թուրքական Քրդստանը², որն ունի մոտավորապես 7 միլիոն բնակիչ, բազում տարիներ ի վեր Օսմանյան կայսրությանն է ենթարկվում միայն ուժի միջոցով: 1913 թ. տարածայնությունները միայն խորացան: Քրդերը մերժեցին վճարել հարկը և սկիզբ առավ բռնությունը՝ Մոսուլի գերմանացի հյուպատոսի՝ օգնությամբ:

Մարտին տեղի ունեցան Բիթլիսի մեծ խռովությունը և քրդական գլխավոր առաջնորդներին կախաղան բարձրացնելը: Ներկայումս, անկախության շարժմանը սատարում են Փարիզի և Ժնևի (որտեղ մի լրագիր արդեն լույս է տեսել) քրդական կոմիտեները:

Այնժամ, երբ հյուսիսի (Վանի, Էրզրումի վիլայեթներ) քրդերը մեծ մասամբ ենթարկվում են թուրքերին, հարավի (Մոսուլ, Դիարբեքիր, Բիթլիս) քրդերը պահպանել են իրենց ազգային ոգին և անկախության հանդեպ ունեցած իղձերը:

Մինչ այժմ ռուս-քրդական համաձայնության կենսագործմանը միշտ խոչընդոտել են հայկական կոմիտեների մեքենայությունները: Այնժամ, երբ քրդական ժողովուրդները են-

1 Այս փաստաթուղթը, որը չունի ո՛չ վարի, ո՛չ ամսաթվի որևէ հիշատակում, մենք այստեղ ենք դասակարգում, քանի որ ուղարկվել է զեներալ Նիեսեյի՝ 1917 թ. հոկտեմբերի 25-ի/նոյեմբերի 7-ի թվակիր զեկուցագրի թիվ 2 հավելվածին կից (Պետրոգրադ, թիվ 5480/3: Գաղտնի):

2 Փաստաթղթի ծանոթագրությունը. «Կիրկուկի, Մուլեյմանիեի, Մոսուլ (վիլայեթ) Հեքքարիի, Դերսիմի, Մաաթիիի [sic], Ուրֆայի սանջակներ, Էրզրումի, Բիթլիսի, Դիարբեքիրի վիլայեթներ»:

3 Պ. Հուշտեյնը:

քարկվում էին այն իշխանություններին, որոնց մեծ դուքս Նիկոլայը հանձնարարել էր նախապատրաստել համաձայնությունը, հայկական հրոսակախմբերը հարձակվում էին քրդական գյուղերի վրա և նրանց կոտորում: Այսպիսով, իշխան Շակոփսկոյի և Քյամիլ բեյի առաքելությունը մնաց անարդյունավետ: Ռուսական հեղափոխության ժամանակ հայերի շրջանում տեղ գտան միևնույն ծայրահեղ բնույթի գործողությունները: Այդուհանդերձ, հայերի և քրդերի միջև կատարյալ համաձայնությանը դիմակայող սկզբունքային և ոչ մի ընդդիմություն գոյություն չունեի: Հայկական կոմիտեները, որոնք այժմ համախմբվել են հարևան քրդական գյուղերի հետ կատարյալ ներդաշնակության մեջ ապրելու անհրաժեշտության գաղափարի շուրջ, բավական մեծ հեղինակություն են վայելում, որպեսզի կարողանան գրավված տարածքների ժողովուրդներին և հայկական գումարտակներին հարկադրել հետագայում ապրելու կատարյալ համաձայնության պայմաններում: Այդ հարցն այժմ քննարկվում է Հայկական ազգային վեհաժողովում, որը ներկայումս գումարվել է Թիֆլիսում և այդ ոգով միջոցառումներ կընդունվեն:

Քյամիլ բեյի հուշագիրն, այսպիսով, միայն հավաստում է այն, ինչը ներկայացվել էր ֆրանսիական ռազմական առաքելության վերջին զեկուցագրում, որը երկու շաբաթվա վաղեմություն ունի, այն է՝ Թիֆլիսում «Միջդաշնակցային հանձնաժողովի» կազմավորման հնարավորությունը, որն սկսած այս ձմռանից, ակտիվ քարոզչության միջոցով հարկ ունի նախապատրաստել քրդական ազգային շարժումը, որը պետք է ծավալվի գարնանը:

(A.M.G., 6 N 224).

416

Պետրոզդար, 9-ը նոյեմբերի 1917 թ.:

Ծանուցագիր ազգությունների մասին

1/ Կովկասում.

Կովկասում, ժողովուրդների և ազգությունների բազմության շրջանում, ուր հաշվվում են մոտավորապես 75 տարբեր լեզուներ, գտնվում են 4 հիմնական ազգություններ. վրացիները, հայերը, թաթարները, հյուսիսում՝ Կուբանի կազակները Թերեքի նրանց արյունակիցները:

Վրացիները զբաղեցնում են ճշգրիտ սահմանազատված մի տարածք, որն ընդգրկում է Թիֆլիսը և ձգվում դեպի Սև ծով՝ Բաթումից Նովորոսիյսկ, բայց չհասնելով դրան: Նրանք իրենց շուրջն են համախմբում բոլոր ցեղերին, որոնց կարող են հարել էթնիկապես՝ կազմավորելու համար 1500000 շնչից բաղկացած խմբավորում:

Հայերը տարածված են երեք պետություններում՝ Պարսկաստանում, Թուրքիայում և Ռուսաստանում: Միայն Ռուսաստանում նրանց թիվը մոտենում է 1500000-ի: Բայց նրանք համախմբված չեն, ինչպես վրացիները: Որքան վերջիններս ռազմատենչ են, ասպետա-

1 Մեծ արատապում ենք միայն մի հատված, որը վերաբերում է հայերին:

կան հակումների տեր, անգործունյա, փոքր-ինչ սնապարծ, նույնքան հայր ողջամիտ է, գործնական: Նա խառնվում է այլ ժողովուրդներին, նրանցից մեկուսանալու փոխարեն և դրանից օգուտ քաղում: Ուստի, Կովկասի հայերն ապրելով Երևանի և Սարիղամիշի հովիտներում, այդ նահանգի ամբողջ բնակչությունը չեն կազմում, վերջապես նրանք սփռված են բոլոր քաղաքներում. Թիֆլիսում նրանք մեծամասնություն էին կազմում քաղաքային խորհրդում, որից վրացիները նրանց զրկեցին միայն վերջին ընտրությունների ժամանակ:

Կարելի էր երկյուղել, որ խորին տարածայնությունները կարող էին վրացիներին տարանջատել հայերից, որոնք հաճախ հարստացել են նրանց հաշվին: Համաձայնության ջանքերը, որոնք այս պահին Թիֆլիսում ներդրվում են, ի հայտ չեն բերել անհաղթահարելի դիմադրություն: Ռուսահպատակ հայերը չեն խորհում, ի դեպ, Պարսկաստանի և Թուրքիայի իրենց եղբայրների հետ շուտափույթ և վերջնական միավորման մասին: Ապրելով Ռուսաստանում, նրանք իրենց առավելություններն ունեն, մյուսներն արտոնություններ ունեն Պարսկաստանում, որոնցից օգտվում են: Ո՛չ առաջինները, ո՛չ երկրորդները չեն խորհում իրավիճակը փոխելու մասին, որից օգուտ են քաղում:

Թաթարների դիրքորոշումը մահմանելը շատ ավելի դժվարին է: Նրանք, որոնց թիվը հասնում է շուրջ 2000000-ի, բնակվում են Բաքվի տարածաշրջանում և Կասպից ծովի ափին՝ մինչ Պարսկաստանի և Թուրքիայի սահմանները, ուր խառնվում են հայերին:

Այս տարածքում են ապրում նաև Ադրբեջանից եկած բազմաթիվ թաթարներ, ուր, մի քանի տարի աշխատելուց հետո, վերադառնում են՝ ունենալով խնայողություններ: Թաթարն աշխատասեր է և ազնիվ, նա սկսում է սևագործ աշխատանքից և այնուհետև՝ հաճախ դառնում մանր առևտրական:

Թաթարները ևս կցանկանան իրենք տնօրինել իրենց երկիրը և վրացիների ու հայերի հետ ընդհանուր համաձայնությամբ կընդունեն մի փոխզիջում, որն իրենց ինքնավար նահանգի կարգավիճակ կընձեռի:

Բոլոր երեքի համար՝ նրանք համայն Կովկասին վերաբերող մի օրենք կնշակեն, որը ցարքոցրիվ ցեղերին հնարավորություն չի ընձեռի հակադրվել իրենց ավելի հզոր հարևաններին:

Ռուսական, դաշնակցային և, մասնավորապես, ամերիկյան ազդեցությունների հրահրմամբ, վերջին ամսում Թիֆլիսում մի կոնֆերանս է գումարվել, որին՝ պահպանելով հավասարության սկզբունքը, մասնակցել են վրացիների, հայերի և թաթարների երևելի անձինք: Խոսքը վերաբերում էր ռուսական տարածքում վրացական, հայկական և թաթարական նահանգների սահմանների տարանջատման շուրջ պայմանավորվածության կայացմանը, այն ինքնավարության ճշգրտմանը, որը հնարավոր կլինի խնդրել կենտրոնական իշխանությունից, և ազգային բանակների կազմակերպման հիմունքների մշակմանը:

Քննարկումներն անհաղթահարելի դժվարություններ ի հայտ չեն բերել: Այդուհանդերձ, թաթարների դիրքորոշումը եղել է ավելի չափավոր, քան կոնֆերանսի այլ մասնակիցների: Նրանց կրոնը տարածման գազաթնակետին է հասնում Ռուսաստանից դուրս գտնվող վայրերում: Լինելով նախկին պարսկահպատակներ, նրանք սերտ կապեր են պահպանել Ադրբեջանի հետ, իսկ մյուս կողմից, նախապատրաստման ընթացքում գտնվող միասնական համաձայնության նպատակը հանգում է Կովկասում տիրապետություն հաստատելուն, այն է՝ բոլոր փոքրիշատե անկախ և ռազմատենչ ցեղերին սանձահարելուն: Սակայն նրանք նույնպիսի մահմեդականներ են, ինչպես և թաթարները: Վերջիններս, այսպիսով, հարկ է, որ շրջանցեն որոշ կանխակալություններ, նախքան այնպիսի մի համակցության մեջ ընդգրկվելը, որը կարող է մեկնաբանվել իբրև իրենց համակրոնակիցների նկատմամբ

թշնամական բնույթ ունեցող:

Կուրբանի և Թերեքի կազակները Կովկասում չեն ընդգրկվում. նրանք բնակվում են նրա հյուսիսային՝ հակադարձ կողմում և վրացիներից, հայերից ու թաթարներից տարանջատված են լեռնական ցեղերով: Բայց հենց այս տեսանկյունից, այն երեք ժողովուրդների, որոնց մասին մենք հենց նոր խոսեցինք, դաշինքը Կուրբանի և Թերեքի կազակների հետ, կարող է վերին աստիճանի շահեկան լինել ցեղերի նկատմամբ լուրջ հսկողություն սահմանելու համար: Այս նպատակին հետամուտ լինելը տեսադաշտից դուրս չի մնում, բայց թվում է, թե այս ոգով դեռևս շատ բան չի արվել:

Ինչ վերաբերում է ազգային բանակներին.

Հայկական բանակը բաղկացած է 2 գումարտակում ընդգրկված 6 գնդից. այն երկատետու մասին հարց է բարձրացվել, որը դեռևս չի իրագործվել:

Հայ զինվորը ռուսական բանակում լավ համբավ չունի: Այդուհանդերձ, այս ժողովրդից բաղկացած գումարտակի օգտագործումը Երզնկայի տարածաշրջանում, այնպիսի մի նշանավոր դեկավարի հրամանատարությամբ, ինչպիսին է Կովկասի 1-ին կորպուսի երամանատար, գեներալ Լիակիսովը, հանգեցրել է համերաշխ գործողության: Չնայած հայի նկատմամբ ունեցած բնագոյային հակակրանքին, որը նա չէր ժխտում, բայց որպես իր մասնագիտությանը լավ տիրապետող զինվոր, մարդկային արարածին լավ ճանաչող և նրան գործելու մղող դրդապատճառներին քաջատեղյակ, նա փորձագետի աչքով հետևել էր վարժեցման ընթացքին, որը գերազանցել էր նրա ակնկալությունները:

Վրացական բանակը բաղկացած է Կովկասում տեղակայված հետևակային մեկ գնդից և այժմ Պարսկաստանում գտնվող հեծելազորային մեկ գնդից:

Թաթարական բանակ գոյություն չունի: Եվ դրա մասին որևէ մեկը չի խոսում: Ոմանք գտնում են, որ այն բաղկացած է տեղաբնակների հեծելազորային դիվիզիայից, որն ավելի հայտնի է վայրի դիվիզիա անվամբ:

Դա ամենևին էլ այդպես չէ: Այդ դիվիզիային ուժեր են տրամադրել լեռնական ցեղերը և ընդունելով, որ այդտեղ գտնվող թաթարական գունդն արժանի է իր անվանը, հարկ է նշել, որ դա կարող է լինել թույլ ներդրում մի ժողովրդի կողմից, որը բաղկացած է 2000000 շնչից:

Հարց է ծագել այդ վայրի հեծելազորային դիվիզիան երկատետու վերաբերյալ: Նա մեղավոր է ճանաչվել ինչպես վերջին հուլիս ամսին Ցարսկոյե Սելոյում, այնպես էլ բոլորովին վերջերս Կովկասում տեղի ունեցած այնպիսի ծայրահեղ բնույթի գործողությունների համար, որ, ինչպես ասում են, մեկ ամսով լուծարվել է: Ամենայն հավանականությամբ այն չի կարող վերակազմավորվել:

Կուրբանի երեք առաջապահ գումարտակները հենց նոր Կովկասի ռազմաճակատից ետ են կանչվել և ուղարկվել իրենց երկիր:

Նրանք պատրաստվում են օժանդակել պաշտոնապես վճռված՝ կազակական բանակի կորպուսի ստեղծմանը, որը բաղկացած կլինի Կուրբանի կազակների 7 գնդից և Թերեքի կազակների մեկ գնդից: Այս տարրերից բաղկացած իրական արժեք ներկայացնող բանակային կորպուսի ձևավորմանը հասնելու համար, հարկ կլինի ունենալ ճարպիկ և եռանդուն հրամանատարություն: Ես կգարմանամ, եթե այս դիտարկումներն օգտագործված լինեն իբրև ուղղություն տվող սկզբունք այն ընտրության հարցում, որը կայացվել է:

2/ Ազգությունները Թուրքիայում.

Թուրքիայում ես հայտնաբերել եմ հունական գյուղեր, որոնք ձգվում են ավի երկայնքով մինչ 100 կիլոմետր տարածությամբ: Էթնիկական առումով Տրապիզոնի նախկին թա-

գավորությունը պահպանել է իր տիրույթը, որը եզրափակվում է մի վայրում, որին ընդունված է Փոքր Ասիայի բարձրավանդակ կոչել: Հայերն այս տարածաշրջանում փոքրաթիվ են, նրանք գտնվում են միայն քաղաքներում: Տրապիզոնն ունեցել է մոտավորապես 20000 շնչից բաղկացած հայկական նշանակալից գաղութ: Նրանք, գրեթե բոլորը, կոտորվել են նվաճման ժամանակ: Ըստ տարածված լուրերի՝ հարկ էր դա դիտել իբրև թուրքերի նկատմամբ հայերի գործադրած վայրագությունների դեմ ուղղված բռնություններ՝ երբ 1914 թ. ռուսներն առաջին անգամ ներթափանցել են Փոքր Ասիա: Այդուհանդերձ, այն վրեժխնդրությունը, որին այդ առթիվ 1916 թ. Տրապիզոնում դիմել է օսմանյան կառավարությունը¹, եղել է դաժան և կատարյալ: Քաղաքի երևելի հայերին կոչել են զինվորների ուղեկցությամբ՝ նրանց պաշտպանելու նպատակով, ճանապարհ ընկնել դեպի ներքին նահանգները: Նրանց խոստում է տրվել, որ նրանց կանանց, որոնք կլինեն հովանու ներքո և գույքի նկատմամբ կսահմանվի խիստ հսկողություն: Հայկական գաղութը մեկընդմիջտ գրկելով առաջնորդներից, դուրսին էր դառնում բոլոր տղամարդկանց ենթարկելու և նրանց ևս դեպի ներքին նահանգներն ուղարկելու գործը. վերջապես, հասել է կանանց և երեխաների հերթը:

Կազմակերպված այդ գումակները կանգնեցնում էին ճանապարհի որոշակի վայրերում և դիմում զանգվածային սպանությունների: Այժմ թուրքերն ասում են, որ ամեն ինչ գերմանացիների դեկավարությամբ է կատարվել. դուք լավ գիտեք, որ մենք ընդունակ ենք զայրանալու, բայց ոչ թե գիտակցաբար և անողորմաբար կազմակերպված այդպիսի արարքի, որը գերմանական դրոշմ է կրում:

Ներկայումս Տրապիզոնում և հարակից երկրամասում կան միայն մի քանի հայ: Հունական գաղութը, ընդհակառակը, մնացել է անձեռնմխելի և բարգավաճում է: Այն օգուտ է քաղում ռուսական գրավումից և դրա հետևանքով առաջ եկած խառնաշփոթ իրավիճակից: Հունական շրջանները մոտիկից հետևում են, թե ի՞նչ է ասվում և տպագրվում Հայաստանի մասին: Նրանք չեն թաքցնում, որ Տրապիզոնի թագավորության վերականգնումն անհավանական է և որ իրենք հույսեր չեն տածում Հունաստանին միավորվելու հետ: Եթե հարկ լինի վանելու այս երկու հիպոթեզները, ապա նրանք կգերադասեն մնալ Ռուսաստանի կազմում: Վերջապես, վերադարձը Թուրքիա նրանց նվազ վտանգավոր կթվա, քան նորաստեղծ Հայաստանի կազմում ընդգրկվելը:

Փոքր Ասիայի բարձրավանդակում՝ դեպի Կելիթ, Երզնկա, Էրզրում, ապրում են թուրքեր, քրդեր և հայեր: Հայերն այդտեղ, ինչպես նաև այլ վայրերում, կոտորվել են կամ գաղթել Ռուսաստան: Ծառերը դեռևս չեն վերադարձել, որը կարող էին անել: Այնպիսի մի տպավորություն է առաջացել, հավանաբար, անստույգ, ըստ որի բնակչության մեծամասնությունը պատկանում է թուրք-քրդական խմբավորմանը, բայց հավանական է, որ Հայաստանի կազմավորմանը կհաջորդի թուրք բնակչության գերակշռող մասի գաղթը:

Երկիրն աղքատ է: Տասնյակ կիլոմետրեր կարելի է անցնել առանց հանդիպելու գյուղերի. մի քանի բերրի հարթավայրեր, ինչպիսիք են Էրզրումի կամ Երզնկայի հարթավայրերը, հակադրվում են սովորական դարձած անապատին:

Ես չեմ այցելել Վանա լճի տարածաշրջանը, որը հայերի նախընտրած վայրն է:

Տեղեկացնում են, որ այստեղ կան մի քանի հարուստ համաժոներ, բավական համեստ ածուխի, որը ռուսները սկսել են շահագործել, տորֆի հանքավայրեր և նավթի հետքեր, որոնք ապագայի համար հույսեր են ներշնչում:

¹ Սա սխալ է: Ռուսական զորքերը գրավել են Տրապիզոնը միայն 1916 թ. ապրիլի կեսերին: Սակայն քաղաքում, ինչպես նաև Տրապիզոնի ամբողջ նահանգում, հայ բնակչությունը 1915 թ. հունիսից ի վեր ամբողջությամբ տեղահանվել է և կոտորվել:

Ամերիկայի հյուպատոսը Թիֆլիսում, պ. Վիլլուգիերի Սմիթը, գտնում է, որ հարկ կլինի հասնել այն բանին, որ Փոքր Ասիայում համախմբվի ռուսահայերի բանակ, որը կամրապ-նդվի թուրքահպատակ հայերի զինված անձնակազմերով, ասորի-քաղղեացիների ստորա-բաժանումով, ինչպես նաև կազակական զորքերով: Ինչ վերաբերում է վրացական զորքե-րին, ապա նրանք պետք է ետ ուղարկվեն Պարսկաստան:

Ես այս նախագիծը հիշատակում եմ ոչ թե այն պատճառով, որ այն ինձ թվում է բավա-կանաչափ ուսումնասիրված և կենսագործման ենթակա, այլ այն, որ Ամերիկայի հյուպա-տոսը գործունյա և ձեռներեց անձնավորություն է: Նա Փոքր Ասիայում ռուսական հար-ձակման համոզված կողմնակիցն է և այն պահին, երբ Ամերիկայի դեսպանությունը, տեղյակ պահվելուց հետո, չէր ընդունում նրա տեսակետները, նա, հավանաբար, ուղղա-կիտրեն հաղորդակցվել է պ. Վիլսոնի հետ, որը Հայաստանի գործերի նկատմամբ առանձ-նահատուկ հետաքրքրություն է դրսևորում:

Պ. Վիլլուգիերի Սմիթը հույսը չի կորցնում մի քանի ամերիկյան երկաթուղային ինժեներ-ների իր մտտ ուղարկելու հարցում, որոնք կգրադվեն Կովկասի ռազմաճակատի ցանցով, որը վերջերս ընդգրկում է Կուրանի գծերը: Սև ծովի փոխադրումներում կարգ ու կանոն սահմանելու համար, նա հասել է ռազմաժողովային ծառայության մի անգլիացի սպայի նշա-նակմանը: Նա հույս է տածում հասնելու այն բանին, որ անգլիական զրահապատ մեքենա-ների մի ստորաբաժանում փոխադրվի Թիֆլիս: Հայկական զորքերի համար ցանկալի կլի-նի ունենալ ֆրանսիական հրահանգիչներ:

Վերջապես, Ամերիկայի հյուպատոսը խոսում է Թիֆլիսում Կովկասի ռազմաճակատի հրամանատարի պաշտոնում գեներալ Պրժևալսկու փոխարեն գեներալ Բրուսիլովի հնա-րավոր և ցանկալի թեկնածության մասին: Միացյալ Նահանգների դեսպանությունը Պետ-րոզրադում գեներալ Բրուսիլովի ընդունակությունների մասին կարող էր բարձր կարծիք ունենալ: Պ. Ռուֆն անցումի պահին կարող էր նրան գնահատել:

(A.M.G., 16 N 3181).

417

Ռումինիայում Ֆրանսիայի նախարար պ. Բոպուալ դը Սենտ-Օլերը՝ Արտաքին գործերի նախարար պ. Բարտուլին

Ճ. թիվ 174:

Յասսի, 12-ը նոյեմբերի 1917 թ.:
(Ստացել են Կաբ. դեկտեմբերի 14-ին,
Քաղ. վարչ. դեկտեմբերի 15-ին):

Ես պատիվ ունեմ այս ծրարում Ձեր գերազանցությանն ուղարկել այն գրության պատ-ճենը¹, որն ինձ է հանձնել Օդեսայում գտնվող ձեր քարոզչական ծառայությունը: Այն շատ ամփոփ ներկայացնում է ռուսահպատակ հայերի ցանկությունները, որոնք ռուսական բա-նակների նահանջի դեպքում, երկյուղում են իրենց ընտանիքները՝ թուրքերի կողմից կո-տորված տեսնել: Նրանք հակված կլինեն զինվորագրվելու ֆրանսիական սպաների

¹ Արտաստված չէ:

վարժված և նրանց միջոցով համարված առանձին զնդերին և այն փաստը, որ անհաջո-ղության պարագայում այդ զինվորները պայքարելու են իրենց օջախները բացահայտ ոչնչացումից պաշտպանելու համար. կարող է լինել այդ ստորաբաժանումների մարտա-կան ոգու երաշխիքը:

Գեներալ Նիեսերյո քաջատեսչակ է այն իրավիճակին, որը ռուսահայերի համար ստեղծ-վել է կանոնավոր բանակի կազմալուծման և որոշակի ազդեցիկ խմբակցությունների բա-ցահայտ չկամության հետևանքով: Այս հարցի շուրջ նա հաղորդակցվել է գեներալ Բերտե-րոյի հետ, և նրանք երկուսն էլ նկատի են ունենում մեր ռազմական առաքելության ողջ թվով սպաների Հայաստան գործուղելու հնարավորությունը:

Ինձ թվում է, որ մենք շատ մեծ շահագրգռվածություն կունենալինք, եթե առաջ մղեինք հայկական կորպուսների կազմակերպումը, որոնք կարող էին սկզբից ևեթ դիմակայել թուր-քական զորքերին Կովկասի ռազմաճակատում, մի բան, որին, ինչպես ինձ ասում են, ռու-սական կանոնավոր բանակը ներկայումս անընդունակ է:

(A.M.A.E., Guerre 1914-1918, Turquie, tome 894, ff. 13-13 v).

418

Միջագետքում Ֆրանսիայի հյուպատոսության կառավարիչ պ. Ռուն՝ Արտաքին գործերի նախարար պ. Բարտուլին

Հ. թիվ 40:

Բասսորահ, 15-ը նոյեմբերի 1917 թ., ժ. 23.30-ին:
(Ստացել է Քաղ. վարչ. նոյեմբերի 16-ին):

Բաղդադ[ի] հայկական կոմիտեն խիստ զաղտնաբար ինձ տեղեկացրել է, որ հեռու է Հայկական լեզեռնի համար կամավորներ զինվորագրելու և ուղարկելու հնարավորություն-ները բաղձալի համարելուց և որ վերջիններից շատերը, այս կամ այն պատճառով, մեր դաշնակիցների դրամամբ նույնիսկ հրաժարվել են՝ կամավոր հիմունքներով զինվորագրվե-լու իրենց մտադրություններից:

Գաղտնի և կոնֆիդենցիալ. - Միջոցը լեռան վրա գոյություն ունի հայ տղամարդկանցից բաղկացած (մի) օջախ, ուր և կոմիտեն թույլտվություն է հայցում, իր պատասխանատվու-թյան ներքո, Բաղդադից մի բանազնաց ուղարկելու համար, որը կդրոյի փախուստի, ամե-նայն անվտանգությամբ կապահովի ավելի քան 350 մարտունակ տղամարդկանց անցումն արաբական ցեղերի միջով: Կոմիտեն տեղեկացվել է մինչ Մոսուլ գտնվող (այլ) կենտրոննե-րի մասին և: Նա կարող է նրանց հետ կապ հաստատել միևնույն ձևով: Դժբախտաբար նա բախվում է իշխանությունների ակնհայտ չկամությանը: Մյուս կողմից, հայերը խիստ դժգոհ են անգլիական օգնություններից, որոնք հատկացվում են այն հայ կանանց և երեխաներին ազատագրելու համար, որոնց թուրքերը հանձնել են երկրի արաբ շեյխերին: Այդ օգնու-թյունները, այսպես ասած, կարծեցյալ են և չեն հանգեցնում այն արդյունքների կեսին, որոնց հայերը կհասնեին, եթե իրենց միջոցներն օգտագործելու հարցում ազատ լինեին:

Ես փորձեցի մեղմացնել Բաղդադի կոմիտեի տազնապները, բայց վախենում եմ, որ ինձ չհաջողվեց նրան համոզել:

(A.M.A.E., Guerre 1914-1918, Turquie, tome 893, f. 15).

Ասիա-Օվկիանիայի փոխտնօրենի՝ ծանուցագիրը

Պողոս Նուրար փաշայի այցը

Ծ:

Փարիզ, 23-ը նոյեմբերի 1917 թ.:

Երեկ ինձ այցելեց Հայկական պատվիրակության նախագահ Պողոս Նուրար փաշան, որին ուղեկցում էր Եզիպտոսի հայկական կոմիտեների լիազոր ներկայացուցիչ պ. Թեքեյանը:

Այս ամսի սկզբին պ. Թեքեյանին ուղարկել են Ֆրանսիա՝ ֆրանսիական կառավարության հետ քննարկելու ներկայումս Կիպրոսում կազմակերպված Արևելյան լեզեոնի օգտագործման հարցն Ասիայի շրջանակներից դուրս գտնվող վայրերում, և մասնավորապես, Սիրիայում, ուր հայեր են գտնվում:

Այդ առաքելությունը պ. Թեքեյանին հանձնարարվել է գեներալ Բելուի Եզիպտոսում ունեցած ելույթներից հետո: Նույնիսկ առանց ֆրանսիական կառավարության հետ խորհրդակցելու, գեներալն իր խոսքում հայտարարել է, որ որևէ ռազմարշավ դեպի Սիրիայի հյուսիս այլևս չի կարող նախատեսվել և, հետևաբար, Արևելյան լեզեոնը պետք է ընդգրկվի ֆրանսիական ռազմարշավային կորպուսի կազմում, որը կգործի Պաղեստինում, անգլիական կորպուսի հարևանությամբ:

Այդ առաջարկը, որի հեղինակը՝ բանակի նախկին հրամանատարը, ներկայացրել է հրամայաբար, այնքան է հուզել հայերին, որ նույնիսկ Կիպրոսում, այդ մասին խոսվել է հայ կամավորների առջև: Վերջիններս, որոնք զինվորագրվել են իրենց համակրոնակիցների ազատագրմանն աջակցելու համար, խորապես դժգոհ են մնացել օգտագործման այնպիսի ձևից, որն իրենց կհեռացնի այն տարածաշրջաններից, որտեղ հաստատված իրենց յուրայինները շահախնդրություններ ունեն:

Ինձ համար համեմատաբար դյուրին էր պատասխանել պ. Թեքեյանին, որ գեներալ Բելուն, որին հանձնարարվել է ռազմական բնույթի առաքելություն, հարցին մոտեցել է զուտ ռազմական տեսակետից, որ կառավարությունը սակայն, ինչպես այդ հետևում է Դեպարտամենտի և Ռազմական նախարարության միջև փոխանակված թղթակցությունից, հավանության չի արժանացնում նրա առաջարկը և նախատեսում է Արևելյան լեզեոնն օգտագործել, ըստ էության, Սիրիայում, այն է՝ Պաղեստինի հյուսիսում, երբ այն կկարողանա շահավետորեն օժանդակել հայերով և սիրիացիներով բնակեցված տարածաշրջանների ազատագրմանը, որոնցից էլ բաղկացած է լեզեոնի կազմը:

Շահեկան կլինի, որ հրամանատար Ռոմիոն տեղյակ պահվի կառավարության տեսակետին, որը նրան կթույլատրի մեղմացնելու հայ կամավորների հուզմունքը:

Մյուս կողմից, Պողոս փաշան բազմիցս համառորեն պնդել է ֆրանսիական կառավարության կողմից՝ ի նպաստ հայերի հռչակագրով հանդես գալու հրատապ անհրաժեշտության և Հանրապետության կառավարության դրսևորած հաստատակամ կամքի մասին հանուն այն բանի, որ հետագայում նրանց ձերբազատի թուրքերի բռնություններից և բռնակալությունից և իր իսկ հովանու ներքո նրանց համար ինքնավարություն ապահովվի, որը նրանց կթույլատրի աստիճանաբար հաղորդակցվել քաղաքակրթության բարերարություններին: Պողոս փաշան մոտ ապագայում ընդունելություն կհայցի պ. Պիշոնից:

1 Պ. Գուն:

Այդ հռչակագրին, ինչպես հայտնի է, միևնույն անհամբերությամբ սպասում են սիրիացիները: Սիրիական կենտրոնական կոմիտեի նախագահ պ. Շեքրի Գանեմը, անկասկած, իր կողմից ընդունելություն կխնդրի նախարարից: Երուսաղեմի հյուսիսում անգլիացիների առաջխաղացման պատճառով, խիստ հրատապ է դառնում ֆրանսիական կառավարության կողմից հռչակագրի հրապարակումը, որը կհանդարտեցնի Սիրիայի մեր բարեկամներին և վերջ կդնի անգլո-եզիպտական կուսակցության բանասարկություններին, որի բոլոր ջանքերն ուղղված են Անգլիայի հետ 1916 թ. մեր համաձայնությունն անվավեր դարձնելուն:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 893, ff. 33-34).

Խորհրդի նախագահը, Ռազմական նախարարը՝ Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին

Ճ. թիվ 11345-3: Գաղտնի:

Փարիզ, 23-ը նոյեմբերի 1917 թ.:
(Ստացել է Զաղ. վարչ. նոյեմբերի 24-ին):

Ես պատիվ ունեմ ձեզ հղել սրան կից, անհրաժեշտության դեպքում օգտագործելու նպատակով, հոկտեմբերի 22-ի թվակիր, գեներալ Նիեսեյի ընդհանուր բնույթի թիվ 3 զեկուցագրից մի հատված²: Գեներալ Նիեսեյը գտնում է, որ Անտանտի տերությունների կողմից Զրյատանի ինքնավարության հռչակումն ի գոյու է արագացնել Օսմանյան կայսրության քաղաքական կազմալուծումը:

Հետևաբար, նա անհրաժեշտ է համարում, որ Անտանտի կառավարություններն անմիջապես համաձայնություն կայացնեն այս հարցի շուրջ և խնդրում է մի միջոցառման կամ հանձնաժողովի ստեղծում Վանում, որին կհանձնարարվի հարաբերություններ հաստատել քրդական ցեղերի հետ և նախապատրաստել կենսագործման կարիք ունեցող համաձայնագիրը:

Ինձ թվում է, անկասկած, որ գեներալ Նիեսեյի առաջարկը մեծ հետաքրքրություն է ներկայացնում, բայց Ռուսաստանում տիրող ներկա իրավիճակի պատճառով ես կարող եմ միայն ձեզ թույլ տալ դատել, այժմվանից իսկ, դրա իրագործմանը հետամուտ լինելու նպատակահարմարության շուրջ:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 894, f. 21).

1 Ստորագրել է գեներալ Գրաման:

2 Արտատպված չէ:

Պետրոգրադում Ֆրանսիայի դեսպան պ. Նուլենը՝ Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին

Հ. թիվ 1737:

Պետրոգրադ, 23-ը նոյեմբերի 1917 թ., ժ. 21.29-ին:
(Ստացել է Քաղ. վարչ. նոյեմբերի 25-ին):

Ինձ այցելեցին զեներալ Տիգրանովը, գեդապետ Մելիք Փարսադանովը և մայոր Չավրիկը՝ Պետրոգրադում գտնվող Հայկական ազգային կոմիտեի ներկայացուցիչները:

Նրանք ինձ հետ գրուցեցին զինված ուժի կազմավորմանը վերաբերող իրենց նախագծի շուրջ, որը մեծապես գերազանցում է Կովկասում կազմակերպման ընթացքում գտնվող հայկական 18 գումարտակները: Անհրաժեշտության դեպքում նրանք հույս են տածում դաշնակիցների ֆինանսական օգնության և իբրև հրահանգիչների՝ ֆրանսիացի սպաների ուղարկման հետ: Ես նրանց կոչել եմ մեզ հաղորդակից դարձնել համայն հայ ժողովրդին ներկայացնող իշխանության հետ, որպեսզի նրանց առաջարկությունը հնարավոր լինի արդյունավետորեն քննարկել: Ես հարաբերություններ հաստատեցի նրանց և զեներալ Նիեսեի միջև՝ նրանց զինվորական կազմավորումների տեխնիկական կողմն ապահովելու համար և զգուշացրի Թիֆլիսում գտնվող մեր հյուպատոսին¹, որ կապ պահպանի Ազգային կոմիտեի հետ: Այն պահին, երբ ուսները պատրաստվեն գործերը դուրս բերել իրենց գրաված Հայաստանից, հետաքրքիր կլինի նրանց փոխարինել այնպիսի զինվորներով, որոնք լինեն վճռականությամբ լի՝ իրենց երկիրը թուրքերի վերադարձից պաշտպանելու հարցում:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 894, f. 19).

Խորհրդի նախագահը, Ռազմական նախարարը²՝ Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին

Ճ. թիվ 8524-9/11: Գաղտնի:

Փարիզ, 26-ը նոյեմբերի 1917 թ.:
(Ստացել են Կաթ. նոյեմբեր 2-ի,
Քաղ. վարչ. նոյեմբերի 29-ին):

Վերջին հոկտեմբերի 27-ի թիվ 7872-9/11 ճեպագրով³, որը պատասխանում էր հոկտեմբերի 20-ի թիվ 3813 ձեռնարկի⁴ համար նյութ դարձած միջնորդությանը, ես պատիվ եմ ունեցել տեղեկացնել, որ 18-րդ օկրուգի հրամանատար զեներալի մոտ՝ իբրև Հայկական

1 Պ. Նիկոլան:
2 Ստորագրել է զեներալ Ալբին:
3 Տես վերը թիվ 412 փաստաթուղթը:
4 Արտատպված չէ:

կոմիտեի լիազոր ներկայացուցիչների, Բորդոյում հավատարմագրում եմ պատրանայ}ք Քերթիոյանին և Դիրատսին, ընդունելու համար Արևելյան լեգեոնին զինվորագրվելու նպատակով Ամերիկայից ժամանող հայ կամավորներին:

Սակայն ընթացիկ նոյեմբերի 16-ի թիվ 11509 նամակով, որի պատճենը կցվում է, 18-րդ օկրուգի հրամանատար զեներալն ինձ հայտնում է այն կասկածների մասին, որոնք ճնշում են գործադրում պ. Դիրատսի վրա և խնդրում վավերացնել իր կայացրած ժամանակավոր վճիռը, այդ լիազոր ներկայացուցչին այնպիսի հնարավորություններ չտրամադրելու վերաբերյալ, որոնք նա կարող է պահանջել համուն իր առաքելության իրականացման:

Նոյեմբերի 26-ի թիվ 8522-9/11 ճեպագրով¹, որի պատճենը դուք կբարեհաճեք գտնել սրան կից, ես զեներալ Քուինքրուանդոնին տեղեկացնում եմ, որ հավանություն եմ տալիս խնդրո առարկա միջոցին, և որ նա չպետք է այլևս պ. Դիրատսին համարի իբրև Հայկական կոմիտեի լիազոր ներկայացուցիչը Բորդոյում:

Ես ձեզ երախտապարտ կլինեմ, եթե դուք բարեհաճեք գաղտնաբար տեղեկացնել այս որոշման մասին Փարիզում գտնվող Հայկական կոմիտեի պ. նախագահին, եթե, այդուհանդերձ, դուք այդ նպատակահարմար եք գտնում:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 893, ff. 39-39 v).

ՀԱՎԵԼՎԱԾ

18-րդ օկրուգի հրամանատար, զեներալ Քուինքրուանդոնը՝ Խորհրդի նախագահ, Ռազմական նախարար, պ. Կլեմանտյին

Թիվ 11509: Խիստ գաղտնի:
[Պատճենը]:

Բարդո, 16-ը նոյեմբերի 1917 թ.:

Վերջին հոկտեմբերի 27-ի թվակիր ձեռ թիվ 7871-9/11 ճեպագրով², որը վերաբերում էր Բորդոյում գտնվող Փարիզի հայ կամավորների կոմիտեի լիազոր ներկայացուցիչներ պատրանայ}ք Քերթիոյանին և Ժ. Դիրատսին, դուք ինձ խնդրել էիք իմ հրամանատարության ներքո գտնվող իշխանություններին տալ ցանկացած շահեկան խորհուրդ՝ այն առաջարկանքի կատարումը դուրսից դարձնելու նպատակով, որը դրված էր այս լիազոր ներկայացուցիչների առջև:

Ես պատիվ ունեմ ձեզ հաշվետու լինել, որ այն տեղեկությունները, որոնք Բարդոյի հատուկ կոմիսարիատում, մույնիսկ մինչ ձեր վերոհիշյալ ճեպագրի ստացումն, ինձ էին հասել՝ ազգային տեսանկյունից պ. Ժ. Դիրատսի վարքագծի առթիվ, առաջադրել էին այս լիազոր ներկայացուցչին խիստ ուշիմ հսկողության ներքո պահելու անհրաժեշտությունը: Մասնավորապես հաղորդել էին նրա՝ իբրև լրտեսության մեջ կասկածվողի և պատերազմական գործողությունների շլջանում՝ Կոստանդնուպոլսի Ֆրեսկո եղբայրներ տանը պատկանելության մասին, որն այն խիստ մեծ գործարքների պատճառով, որոնց շուրջ

1 Արտատպված չէ:
2 Արտատպված չէ:

պայմանավորվածություններ է ունեցել և շարունակում է ունենալ թուրքական Ռազմական նախարարության հետ, առանձնապես կասկածյալների թվում է:

Ի դեպ, չնայած, որ նրա թրթակությունն առ այսօր և որևէ արտասովոր բան չի բացահայտել, պ. Դիրատսը կասկածելի է թվում բոլոր նրանց, ովքեր նրան ճանաչում են և արդեն մի քանի բավական լուրջ պատահարներ են տեղի ունեցել հայ կամավորների և այս լիազոր ներկայացուցչի միջև, որի ազգային պատկանելությունը բուռն կասկածների տեղիք է տվել: Բորդոյի հատուկ կոմիսարը, որը ձեր ճեպագրի ստացումից ի վեր կրկին խորհրդակցել է, հաստատել է վերախիշյալ տեղեկությունների բոլոր կետերը:

Այս պայմաններում, ես գտնում եմ, որ պարտավոր եմ ձեզ տեղյակ պահել ներկա իրավիճակին ոչ միայն այն բանի համար, որ ձեզ թույլատրեմ քննության առնել այն նոր միջոցները, որոնք հարկ կլինի որդեգրել, այլև հիմնավորելու այն պատճառները, որոնք ինձ հարկադրում են այս լիազոր ներկայացուցչին չընձեռել բարենպաստ պայմաններ, որոնք կարող են, առիթը ներկայանալու դեպքում, վնասակար լինել ազգային պաշտպանության համար:

Ի դեպ, պ. Դիրատսի օգնությունն ավելի նվազ անհրաժեշտ է թվում, քանզի Հայկական կոմիտեի առաջին լիազոր ներկայացուցիչ պ. Քերթիդյանի գործունեությունը, որոշակի սահմաններում, կարող է միահյուսվել, Սիրիական կենտրոնական կոմիտեի Բորդոյի ներկայացուցչի՝ պ. Դյուպիսի գործունեությանը, որի 1917 թ. հուլիսի 4-ի թիվ 5005-9/11 (ճեպագիրը), թվում է, թե նախատեսում է հայերին և սիրիացիներին վերաբերող գործունեություն:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 893, ff. 40-40 v).

423

**Բեռնում Ֆրանսիայի դեսպան պ. Բոն՝
Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին**

Վ. թիվ 2279:

Բեռն, 28-ը նոյեմբերի 1917 թ.:
(*Ստացել են* Կարինետը նոյեմբերի 30-ին,
Քաղ. վարչ. դեկտեմբերի 2-ին):

Ես պատիվ ունեմ Ձերը գերազանցությանը հղել սրան կից որոշ թվով քաղվածքներ թուրքական թերթերից:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 862, f. 38).

ՀԱՎԵԼՎԱԾ

Թալեաթ փաշայի արտասանած ճառը «Միություն և առաջադիմություն» կոմիտեի Համընդհանուր վեհաժողովում՝ (1917 թ. սեպտեմբերի 24-ին)

«Հայերն այն տարրերից են, որոնք դարեր ի վեր ապրում են կայսրության դրաշխ ներքո: Իբրև աշխատասեր և հանգիստ տալու, նրանք ամբողջությամբ օգտվում էին պետության հոգածությունից, քանի դեռ իրենց չէին թույլատրում տուրք տալ դրսից ներթափանցող անջատողական հովերին: Ռուսները, որոնք մեր երկրում իրենց նպատակին հասնելու համար որդեգրել էին քրիստոնյա տարրերին ապստամբության դրոշմ մի համակարգ, XIX դարի կեսերին սկսեցին հրահրել հայերին և մտերմացան նրանցից մի քանի խլեալիստների հետ, որոնց դիտում էին իբրև խոռվության և խառնակության գործիքների: Երբ 1877 թ. ռուսները Սան-Ստեֆանո եկան¹, հայ պատրիարքը՝ դիմեց մեծ դուքս Նիկոլային և հանուն հայկական անկախության նրան մի աղերսագիր ներկայացրեց:

Այն գործողությունները, որոնք հաջողվեցին, նպաստեցին Բեռլինի պայմանագրում 61-րդ հոդվածի գետեղմանը: Այնուհետև՝ «կոմիտեականները», որոնց շարունակում էին ծվատել իրենց պատրանքները, իբրև խոռվության խորհրդանշան որդեգրեցին միևնույն 61-րդ հոդվածը և այդ դրոշը ծածանեցին ներքին նահանգներում բնակչությանը խաբելու, իսկ դրսում իրենց վրա համընդհանուր ուշադրություն հրավիրելու համար: Ժամանակ առ ժամանակ իրենց իրականացրած խոռվություններով նրանք ոչ միայն բազմապատկեցին կառավարության կրած դժվարությունները, այլև իրենց սեփական ժողովրդին մղեցին մեկ արհավիրքից դեպի մյուսը: Բռնակալության օրոք, մենք՝ օսմանյան հայրենասերներս, սահմանադրության համար մեր մղած պայքարի ընթացքում հայերին դիտել ենք իբրև մեր ամենաանկեղծ ընկերակիցների, որոնք, ազատության պայքարի քողի ներքո, հետապնդում էին միայն իրենց համար հոգեհարազատ նպատակներ: Սատարելով նրանց, մենք նրանց համար ապահովել ենք քաղաքական իրավունքներից օգտվելու լիակատար արտոնություններ: Առանց հաշվի առնելու նրանց բնակչության խտությունը, մենք չենք զլացել նրանց տեղեր հատկացնել Սենատում, Պալատում, Պետական խորհրդում, ինչպես նաև կառավարության ամենակարևոր Դեպարտամենտներում:

1325 թ.¹ մարտի 31-ին, այն պահին, երբ հետադիմությունը, գլուխ բարձրացնելով Կոստանդնուպոլսում, տարածվում էր ամենուր՝ Ալբանիայում, Արաբիայում ու Անատոլիայի բազում վիլայեթներում, և երբ մենք զբաղված էինք ազատության դեմ ծրագրված շարժումը ճնշելով, բռնկվեցին և պետության գոյատևումը վտանգի տակ դրեցին Իտալիայի և Բալկանյան պատերազմները*։ Թեպետ հայ «կոմիտեականները» տեսնում էին, որ ներքին նահանգներից, ինչպես և արտաքին աշխարհից սկիզբ առնող հարձակումներն ունեին

1 Այն ամբողջությամբ տպագրվել է 1917 թ. սեպտեմբերի 25-ին թուրքական «Իրդամ» թերթում և գաղտնի գործակալ X-ի կողմից բարգմանվել է ու հանձնվել Ֆրանսիայի դեսպանությանը Բեռնում: Մենք այստեղ արտատպում ենք միայն Հայկական հարցին վերաբերող հատվածը:
2 Ռուսական բանակը Սան-Ստեֆանո է ժամանել 1878 թ. փետրվարի 24-ին:
3 Ն (որին սրբազնություն) և Ներսես Վարժապետյանը:
4 Ըստ գրիգորյան օրացույցի համապատասխանում է 1909 թ.:
* Փաստաթղթի հեղինակը բոլոր է տվել փաստական սխալ: Իտալո-թուրքական պատերազմը բռնկվել է 1911 թ. սեպտեմբերին, իսկ Բալկանյան առաջին պատերազմը՝ 1912 թ. հոկտեմբերին: - Մ. թ.:

միայն մեկ շարժառիթ, որը հանգում էր կառավարության տապալմանը, նրանք կրկին անձնատուր եղան իրենց պատրանքներին և նրանց ուղարկած առաքելությունները շրջեցին ամբողջ Եվրոպայում՝ հետամուտ լինելու անջատողական անիրագործելի հավակնություններին: Այնժամ, երբ Հայկական հարցը գտնվում էր այսպիսի վիճակում, բռնկվեց համընդհանուր պատերազմը: Այն պատճառների հետևանքով, որոնք ներկայացրի իմ ելույթի սկզբում, կառավարությունը հարկադրված եղավ անմիջապես համընդհանուր զորահավաքին վերաբերող հրաման արձակել, իսկ այնուհետև՝ մասնակցել պատերազմական գործողություններին: Պաշարողական դրությունը, որն անխուսափելիորեն ծագել էր պատերազմական իրավիճակի հետևանքով, կասեցրեց քաղաքական գործունեությունը և այն խիստ վերահսկողության ենթարկեց: Հայերը, որոնց հանդգությունը ոչ ոք չէր կարծում, թե այս համաշխարհային պատերազմի ընթացքում կարող էր ընդունակ լինել հասնելու մինչև հայրենիքի դեմ ուղղված դավաճանական արարքների, ինչպես և մեր մյուս հայրենակիցները, զինձառայության ընդունվեցին բանակի հրամանատարական կազմում և նրանց զենք բաժանվեց: «Կոմիտեականները», որոնք մինչև մեր պատերազմի մեջ ընդգրկվելը հանդարտ էին, հենց սր ուսներին հաջողվեց անցնել մեր սահմանը և գրավել մեր որոշ բնակավայրեր, անդրրիկց անցան հեղափոխության, հավատարմությունից՝ խռովության: Պատերազմի երրորդ ամսին, Վանի պատգամավոր Վոամյանն այդ վիլայեթի վալիին՝ մի հուշագիր ներկայացրեց, որտեղ շարադրված էին հայկական պահանջները և որը համանման էր նախօրոք Բարձր Դռանը հանձնված հուշագրին:

Հուշագիրը ներկայացնելուն հաջորդել են բանակում ընդգրկված հայ զինվորների դասարկությունը, որոնք զենքերով հանդերձ հեռացել են լեռները, և ժանդարմների ու մահմեդական բնակչության դեմ ուղղված գրոհները: Այս առիթով, կայսրական կառավարությունը Կոստանդնուպոլսում պատրիարքին և կոմիտեին անդամագրված պատգամավորներին ներկայացրել է իրադրության բարդությունը, խորհուրդ տալով ձեռնարկել նախազուշական միջոցառումներ: Դրանց արդյունքն իրեն սպասեցնել տվեց մեկ ու կես ամիս: Միայն Վանի ապստամբությունից հետո էր՝ բանակի առջև և Չեթունի ապստամբությունից հետո՝ թիկունքում, որ ամենուր խուզարկություններ սկսվեցին, այն անհրաժեշտության թելադրանքով, որն ընդգծվել էր բանակի հրամանատարության կողմից: Դիարբեքիում, Ուրֆայում, Կայսերիում, Իզմիրում, Ադա-Բազարում, Բաղչեջիկում, Ամասիայում, Սվազում, Մերզիֆոնում, Տրապիզոնում, Սամսունում, Արաբկիրում, Մալաթիայում, Դյուրք-Յոլում, Հաճնում, Բրուսայում, Էրզրումում, Երզնկայում և այլ վայրերում հայտնաբերվեցին զենքեր, ռումբեր, պայթուցիկ նյութեր: Երբ ակնհայտ դարձավ, որ բանակի թևերը և թիկունքն այսպիսի սպառնալիքի տակ էին գտնվում, հանուն գործերի փրկության դիմեցին տեղահանության՝ դեպի պատերազմական գոտուց դուրս գտնվող վայրեր: Չի կարելի պնդել, որ այս տեղահանությունը կանոնավոր ձևով է կատարվել, որովհետև ժանդարմների մեծ մասն ընդգրկված էր բանակում և չէր կարող ապահովել այն կարգ ու կանոնը, որը ցանկալի էր: Բայց կենտրոնական կառավարությունն ուղարկել է բազմաթիվ քննիչ հանձնաժողովներ, որոնք զինվորական դատարանի առջև են կանգնեցրել բոլոր նրանց, ովքեր նախահարձակ էին եղել: Նրանք, ովքեր մերկացվել են գործած հանցանքների համար, դատապարտվել են ամենախիստ պատիժների, ինչպիսիք են մահապատիժը և հարկադիր աշխատանքները: Կայսրական կառավարությունը չվարանեց մնան ձևով կատարել այն առաջադրանքը, որի իրականացումն իր պարտականությունների մեջ էր մտնում:

Յուրաքանչյուր կառավարություն իրավունք ունի պաշտպանվելու նրանցից, ովքեր

1 Չևդեր բեյը:

ապստամբում են զենքը ձեռքին: Այդ իրավունքը գոյություն ունի ոչ միայն մեզանում, այլև Անգլիայում և Ֆրանսիայում: Անգլիացիները, որոնք իռլանդացիների դեմ կիրառել են ցանկացած բնույթի դաժանություններ, նույնիսկ առանց մտահոգվելու երեխաների և կանանց կյանքի մասին, արդյոք նրանց չէ՞ին տեղահանի պատերազմական գոտուց դուրս, եթե այդտեղ հեղափոխություն բռնկվեր, որը ծավալվեր մինչև զերմանացիների դեմ մարտնչող բանակի թևերը և թիկունքը: Տրանսվաալի համակենտրոնացման ճամբարներում նրանց սովամահ արած երեխաները և կանայք*, մարդկային խիղճը ցնցող ահագուր դաժանությունները, որոնք կարգ ու կանոնի վերահաստատման պատրվակի տակ կիրառվել են Հնդկաստանում, անհերքելի ապացույցներ են և ակնբախորեն վկայում են, որ անգլիական քաղաքականությունն ամենևին էլ չի պարփակվում մարդասիրական խորհրդածությունների շրջանակում»:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 862, ff. 54-57).

424

Պաղեստինում և Սիրիայում Ֆրանսիայի Գերագույն կոմիսար պ. Ժորժ-Պիկոն՝ Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին

Հ. թիվ 82:

Կահիրե, 29-ը նոյեմբերի 1917 թ., ժ. 2.50-ին:
(*Ստացել է* Քաղ. վարչ. նոյեմբերի 29-ին):

Լորդ Ռոտշիլդին արած՝ պ. Բալֆուրի հայտարարությունները, որոնք վերաբերում են սիոնիզմին, այստեղ՝ մահմեդականների և քրիստոնյաների միջավայրերում, հարուցել են մեծ հուզմունք և Անգլիայի դեմ ուղղված խորին դառնության զգացողություն: Առանց թերազնահատելու այն մեծ առավելությունը, որը մենք ունեցանք վերջին ապրիլին, կոնցեսիաների միջոցով ապահովելով Ամերիկայի հրեաների ջերմ համակրանքը, թվում է, մենք առավելության կհասնենք, եթե հրապարակայնություն չտանք մեր գործունեությանը: Այն դեպքում, երբ Չեղո զերազանցությունը վճռի հրապարակայնություն տալ արաբների, հայերի և սիրիացիների ազատագրմանը վերաբերող հռչակագրին, որի օգտին ես միջնորդում եմ, կարծում եմ, որ նպատակահարմար կլինի, այսպիսով, շշուշիվ Պաղեստինի հարցը:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 880, f. 103).

* Նկատի ունի 1899-1902 թթ. անգլո-բուրական պատերազմի ընթացքում Տրանսվաալի (Հարավ-Աֆրիկյան հանրապետության) տեղաբնակների նկատմամբ անգլիացիների գործադրած բռնությունները: - Ծ. թ.:

Խորհրդի նախագահ, Ռ-ազմական նախարար պ. Կլեմանտն
Արևելյան լեզոնի հրամանատար, փոխգնդապետ Ռ-ոմիոյին

Հ. թիվ 8613-9/11: Գաղտնի:

Փարիզ, 30-ը նոյեմբերի 1917 թ.:

Փարիզի Հայկական կենտրոնական կոմիտեն տեղեկացնում է Արևելյան լեզոնի հայկական զինված անձնակազմին համակած հուզմունքի մասին, որը պայմանավորված է այդ կուրյուսը Պաղեստինում օգտագործելուն վերաբերող նախագծով, որի հասցեին գովեստներ է շոայել գեներալ Բելուն իր տեսչական քննության ընթացքում:

Քանի որ կառավարությունը նման բնույթի նախագիծ երբևէ չի նախատեսել, ես ձեզ խնդրում եմ մեղմացնել այն մտավախությունը, որը կարող է դեռևս գոյություն ունենալ, հիշեցնելով հայերին, որ նախորդված է անհրաժեշտության պարագայում նրանց աջակցությանն ապավինել այն տարածաշրջանների ազատագրման համար, որտեղ բնակվում են իրենց հայրենակիցները և, հետևաբար, նրանց օգտագործել Փոքր Ասիայի ափերին, բացառելով Պաղեստինը:

(A.M.G., 17 N 496).

Թիֆլիսում Ֆրանսիայի հյուպատոս պ. Նիկոլան
պ(արոնայ)ք Արտաքին գործերի նախարար Ստեֆան Պիշոնին,
Պետրոգրադում Ֆրանսիայի դեսպան Նուլենսին

Ճ. թիվ 69, 126:

Թիֆլիս, 30-ը նոյեմբերի 1917 թ.:
(Ստացել են Կաթ. դեկտեմբերի 25-ին,
Քաղ. վարչ. դեկտեմբերի 26-ին):

Երեկ, կեսօրից հետո, ինձ այցելեց Հայկական ազգային խորհրդի նախագահ պ. Ավետիս Ահարոնյանը, որն ինձ տեսնելու էր եկել Անգլիայի իմ գործընկերոջն՝ այցելելուց հետո:

Նա ինձ շատ ավելի նվազ կրակոտ թվաց, քան զնդապետ Թորգոմը և ասաց, որ Կենսակին թույլատրել է կազմավորել մեկ հայկական դիվիզիա, բայց որ ինքը ցանկանում է կազմավորել երկու դիվիզիա և այն նպատակով, որպեսզի ռուսների նահանջի խիստ հավանական պարագայում հնարավոր լինի ինքնապաշտպանվել: «Մենք ինչ-որ չափով պայմանավորվածություն ենք կայացրել վրացիների հետ, - ասաց նա ինձ, - և ես կարծում եմ, որ մի քիչ անց այդ համաձայնությունը կատարյալ կլինի: Մեր միջև գոյություն ունեցող տարածայնությունները կարող են ի չիք դառնալ: Շատ ավելի բարդ խնդիր է, թե ինչպիսին

1 Պ. Սթեննը:

կլինի թաթարների դիրքորոշումը: Կոստանդնուպոլսում աշխուժորեն քննարկվում է նոր գործերի կազմավորման հարցը, որոնք պետք է ուղարկվեն դեպի մեր սահմանը: Անգլիայի հյուպատոսը, որին ես տեսել եմ, ինձ բազմիցս ասել է, որ թվում է, թե այդ գործերն ամենայն հավանականությամբ կուղարկվեն Բաղդադում գտնվող անգլիացիների դեմ. մեծ հավանականություններ կան, որ թաթարները թուրքերի կողմը կանցնեն»:

«Դա վիճարկելի է, - ասացի ես նրան, - քանի որ թաթարները շիաներ են, իսկ շիաներն ամենևին չեն սիրում սուննիներին, որոնք, ի դեպ, նրանց նույն ձևով են վերաբերվում»:

«Ընդունենք, բայց նկատի ունենանք, վերջապես, գործերի վատթարագույն ընթացքը. եթե դրանք զարգանան ի նպաստ թուրքերի, մենք կքնաջնջվենք: Նրանց հետ պայմանավորվածության հանգելը դժվար է: Նրանք պահանջում են մահմեդական երկու կոմիսարի նշանակումը Հայաստանում, իսկ դրա հետ մենք և ոչ մի ակնթարթ չենք կայտոլ համաձայնվել: Դա անընդունելի պահանջ է: Այլուհանդերձ, ես պատրաստվում եմ գործադրել իմ բոլոր ջանքերը համաձայնության կայացման ոգով:

Այո: Մեզ մոտ կան երկու խմբեր: Թուրքահայերը և ռուսահայերը: Եվ պ. Թորգոմն առաջինների ջերմեռանդ կողմնակիցն է: Ես ամենևին չեմ բաժանում այն հույսերը, որոնք նա կապում է նրանց հետ: Ես կարծում եմ, որ նրանց շրջանում զինվորագրում անցկացնելը դժվարին կլինի: Դուք գիտեք, թե մեր եղբայրներն ինչպիսի կոտորածների զոհն են դարձել, նրանք զանգվածաբար սպանվել են և կենդանի են մնում միայն կանայք ու երեխաները: Կենդանի մնացած յուրաքանչյուր տղամարդ կրում է 20-ից 30 կանանց և երեխաների հոգածությունը: Ի՞նչպես է հնարավոր նրան դրդել զինվորագրվելու և լքելու այն էակներին, որոնք գտնվում են նրա հոգածության ներքո:

Ինչ վերաբերում է այդ կանանց և երեխաներին, - և ես այս առթիվ է, որ եկել եմ ձեզ տեսնելու, - նրանք բաժանվել են արաբական ցեղերին:

Հայկական ազգային խորհուրդը վճռել է հեռագրել պ. Պոդոս Նուբար փաշային, խնդրելու նրան ընտրել անհրաժեշտ լեզուների տիրապետող մի անգլիացու, մի ֆրանսիացու կամ մի հայի, որին կհատկացվի պատկառելի գումար և որը կզնա Բաղդադի ռազմաճակատ՝ մեր դժբախտ հայրենակիցներին ազատագրելու շուրջ բանակցելու համար:

Ես ձեզ խնդրում եմ այս խնդրանքի մասին հեռագրով իրազեկ դարձնել Հանրապետության Նորին գերագնացություն դեսպանին:

Հանուն մեր եղբայրների և քույրերի փրկության՝ մենք կանենք այն, ինչ կարողանանք: Հարկ է, որ առաջիկա զարմանը մեր երկու դիվիզիաները պատրաստ լինեն ճանապարհ ընկնելու: Մենք ունենք 100000 հայրենակից, որոնք սիրոված են ռուսական բոլոր բանակներում, իսկ նրանցից այստեղ են ետ ուղարկվել բավական փոքրաթիվ մարդիկ: Հայերը հիբավի ճարպիկ և կարգապահ զինվորներ են և մեծ ցանկություն է դրսևորվում նրանց ռուսական բանակի շարքերում պահելու համար»:

Պ. Ահարոնյանն ինձ մոտ մեծապես գովեց պ. դ(ոկտո)ր Չավրիսին:

(A.M.A.E. Gerre 1914-1918, Turquie, tome 894, ff. 26-27).

Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշան Սենի պատգամավոր պ. Ալբեր Տոմասին

Ն:

Փարիզ, 1-ը դեկտեմբերի 1917 թ.:

«Յումանիտեում» ես կարդացի, որ պ(արոնայ)ք Մուտեի և Կաշենի հետ մեկտեղ դուք պատրաստվում եք տեսնել պ. Պիշոնին, նրա հետ Ռուսաստանի իրավիճակի մասին գրուցելու համար:

Ես ինձ թույլ եմ տուլիս, ծայրահեղ հրատապության պատճառով, խնդրել ձեզ բարեհաճել նրա ուշադրությունը հրավիրել Կովկասի և Հայաստանի ռազմաճակատի վրա, որտեղ մեծ վտանգ կա, քանի որ ռուսական զորքերը, որոնք սկսել են արդեն եղբայրանալ թուրքերի հետ, կարող են նրանց հանձնել արդեն գրավված հայկական տարածքները (հայկական վեց նահանգներից երեքը), որն ի վնաս դաշնակիցների՝ փոփոխության կենթարկի պատերազմի քարտեզը և նույնիսկ թուրքերին կտրամադրի այսօր ամբողջությամբ հակաբոլշևիկյան դարձած Կովկասը, որն, ըստ էության, Ռուսաստանի այն եզակի շրջաններից է, որի վրա կարելի է հենվել խոչընդոտելու համար կատարյալ կազմալուծմանը:

Այս հնարավոր դիպվածներին խոչընդոտելու միակ միջոցը հայերին՝ իրենց հողը պաշտպանելու հնարավորություն ընձեռելն է և հանուն դրա՝ տարբեր ռազմաճակատներում սփռված ռուսական բանակի 150000 հայ զինվորներին Կովկասում համախմբելուն աջակցելը:

Կերենսկու կառավարությունը պատասխանելով մեր խնդրանքին, արդեն հրամաններ է արձակել այդ համախմբման համար և այսօր տեղում են գտնվում 35000 հայ զինվորներ, որոնց կարող են միանալ նշանավոր առաջնորդ Անդրանիկի հրամանատարության ներքո գտնվող հայ կամավորները, եթե նրան օգնության կարգով հատկացվեն զենք, ռազմամթերքներ և դրամ, որովհետև մենք գիտենք, որ ռուս զինվորները վաճառում են իրենց զենքերը, իսկ թաքարները դրանք գնում են մեծ քանակությամբ, որը մեծ վտանգ է ներկայացնում: Թաքարները, որոնց թիվը Կովկասում հասնում է վեցից յոթ միլիոնի, սպասում են միայն թուրքերի ժամանմանը՝ հայերին ոչնչացնելու և Կովկասը Ռուսաստանից անջատելու համար:

Եթե հայերի տրամադրության ներքո դրվեն անհրաժեշտ դրամական միջոցներ՝ 30-ից 50000 կամավոր անմիջապես և առանց այլևայլության կարճազանքեն Անդրանիկի և ռուսական բանակի հայ զեներայների կոչին ու կանոնավոր բանակի այդքան համախմբված 35000 զինվորի և նրանց հետ, ովքեր այսուհետև ևս նրանց կմիանան, կկազմավորեն մի ուժ, որը բավարար կլինի ոչ միայն թուրքերին դիմակայելու և ազատագրված նահանգները փրկելու, այլև նույնիսկ Դիարբեքիլով դեպի Միջագետք առաջանալու ու դեպի Մոսուլ շարժվող Բաղդադի բանակի հետ միավորվելու համար:

Ես այս ոգով քայլեր եմ կատարում Ֆորին Օֆիսին և հույս եմ տածում, որ դուք ձեր կողմից կբարեհաճեք սատարել այս ծրագրիլը պ. Պիշոնի մոտ, դուք, որ Ռուսաստանի իրավիճակին քաջատեղյակ եք, քանի որ եղել եք տեղում:

Ես խնդրում եմ ներել ինձ մեկ անգամ ևս ձեր սիրալիրությունը հայցելու համար, քայց այն հարցը, որը ձեր դատին եմ հանձնում, միայն հայերին և ռուսներին չէ, որ հետաքրքրում է: Հայաստանի ռազմաճակատը հետաքրքրում է բոլոր դաշնակիցներին:

(A.M.G., 16 N 3205).

Լոնդոնում Ֆրանսիայի գործերի հավատարմատար պ. դը Ֆլորիոն Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին

Հ. թիվ 1822:

Լոնդոն, 2-ը դեկտեմբերի 1917 թ., ժ. 17.30-ին:
(*Unaught* է Քաղ. վարչ. դեկտեմբերի 3-ին):

Երեկ իմ ռուս գործընկերը՝ մի հեռագիր է ստացել Թեհրանից և փոխանցել պ. Մակլակովին, որը հավաստում է, որ Կովկասի շտաբը և իշխանությունները հանդես են եկել ծայրահեղականների դեմ և պատերազմը շարունակելու օգտին: Հավանաբար, կազմավորվելու է թուրքերի դեմ մարտնչելու վճռականությամբ լի հայերից և վրացիներից բաղկացած մի կորպուս: Նրանց կազմակերպելու համար Կովկասի ռուսները խնդրում են դաշնակիցների աջակցությունը և, մասնավորապես, նրանց ֆինանսական օգնությունը՝ կանխավճարի ձևով մոտավորապես 60 միլիոն ռուբլի հատկացնելու հարցում: Թեհրանում գտնվող ամերիկյան գործակալը՝ պետք է այս նախագիծը ներկայացնեք Վաշինգտոնում:

Իմ ռուս գործընկերն այդ առթիվ արդեն գործ է հարուցել Ֆորին Օֆիսին և պետք է այդ մասին խոսի Ֆինանսների նախարարի՝ հետ:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 894, f. 28).

ՀԱՎԵԼՎԱԾ

Ռուսաստանի գործերի հավատարմատարի՝ 1917 թ. դեկտեմբերի 2-ի թվակիր հեռագիրը Լոնդոնից (հաղորդվել է պ. Մակլակովի միջոցով)

Թեհրանում Ռուսաստանի նախարարը՝ հեռագրում է, որ Կովկասի ռուսական բանակի գլխավոր հրամանատարի լիազոր ներկայացուցիչն այս քաղաք է ժամանել նոյեմբերի 30-ին:

Կովկասի վարչությունը, որն անմնացորդ նվիրված է ժամանակավոր կառավարությանը, գործադրում է բոլոր ջանքերը, որպեսզի վերականգնի և պահպանի բանակի մարտունակությունը: Կառավարական կազմակերպություններն արդեն ձեռնամուխ են եղել վրացիներից, հայերից և թաքարներից բաղկացած ազգային բանակի մի կորպուսի ձևավորմանը, որոնք համակված են Թուրքիայի դեմ պատերազմը՝ հանուն իրենց սեփական շահերի շարունակելու ցանկությամբ: Միակ դժվարությունը, որը հառնում է, փողի սղությունն է, քանի որ Պետրոգրադը կասեցրել է բոլոր փողերի առաքումը:

Գլխավոր հրամանատարի պատվիրակությանը հանձնարարվել է Թեհրանում Ռուսաստանի նախարարի և պ. Մարկինգի միջնորդությամբ հետամուտ լինել բրիտանական

- 1 Պ. Նաբոկովը:
- 2 Պ. Քալոուելը:
- 3 Պ. Բոնար Լոուն:
- 4 Պ. Նաբոկովը:
- 5 Պ. Էտտերը:

կառավարությունից 300 միլիոն ուրբու հասնող մի փոխառության ստացմանը, որը կհատկացվի մաս-մաս և կհավելվի Անգլիայում ուսական պարտքի ընդհանուր գումարին: Պ. Մարլինգը գիտակցում է այս նախագծի կարևորությունը թե՛ ռազմական և թե՛ բարոյական տեսակետներից, ինչպես նաև հանդես է գալիս նման գործարքի օգտին: Ռազմական կցորդ գեներալ Շորը համամիտ է Պրժևալսկու հետ և գորավիզ է լինում ֆինանսական օգնությանը վերաբերող նրա խնդրանքին: Ֆինանսական լիազոր ներկայացուցիչները քննարկում են անգլիական բանկի ներկայացուցչի հետ այս հարցի գործնական կողմը: Կովկասի ռազմաճակատի կազմալուծումը կանխելու համար անհրաժեշտ գումարը հասնում է 70000000 ուրբու, որը պետք է անմիջապես հատկացվի: Կովկասի հավատարմությունը դաշնակիցների հանդեպ ստանձնած պարտավորություններին, բարոյական և քաղաքական տեսակետից կարող է Ռուսաստանի այլ տարածաշրջանների վրա բարենպաստ ազդեցություն ունենալ:

Լոնդոնում Ռուսաստանի գործերի հավատարմատարին տեղեկացնելով այն ամենին, ինչը նախորդում է, Թեհրանում Ռուսաստանի նախարարն ավելացնում է, որ ըստ իր կարծիքի՝ խիստ ցանկալի կլինի սատարել Կովկասի վարչության և գլխավոր հրամանատարի՝ քրիտանական կառավարությանը ներկայացրած խնդրանքը:

Համաձայն լիազոր ներկայացուցիչների՝ Թիֆլիսում Մյացյալ Նահանգների հյուպատոսը՝ պետք է հեռագրած լինի Վաշինգտոնում իր անմիջական ղեկավարին՝ նշելով այն շահագրգռվածության մասին, որը պայմանավորված է Կովկասի ռազմաճակատին անհապաղ ֆինանսական աջակցության հատկացմամբ:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 894, ff. 29-29 v).

429

Լոնդոնում Ֆրանսիայի գործերի հավատարմատար պ. դը Ֆլորինոն՝ Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին

Հ. թիվ 1829:

Լոնդոն, [անթվակիր]:

(Ստացվել է 1917 թ. դեկտեմբերի 3-ին, ժ. 20.35-ին):

Իմ թիվ 1822 հեռագրի՝ շարունակությունը:

Թեհրանում Անգլիայի նախարարն՝ ընդունել է Կովկասի ուսական լիազոր ներկայացուցիչներին, որոնք ջանում են ձեռք բերել դաշնակիցների ֆինանսական օգնությունը՝ Թուրքիայի դեմ պատերազմը շարունակելու և ծայրահեղականներից կախում չունեցող ժամանակավոր կառավարություն ստեղծելու համար: Ֆորին Օֆիսը պ. Մարլինգին թույլատրել է խոստումներ տալ հայցված օգնության շուրջ:

Քրիտանական կառավարությունը հակված է իր ֆինանսական օգնությունը ցուցաբերել գեներալ Կալեդինին և Ուկրաինայի ինքնավար կառավարությանը:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 894, f. 30).

1 Պ. Վիլյուգիի Սմիթը:
2 Տես վերը թիվ 428 փաստաթուղթը:
3 Սըր Շառլ Մարլինգը:

430

Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշան՝ Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին

Ն:

Փարիզ, 4-ը դեկտեմբերի 1917 թ.:

Ես խիստ երախտապարտ կլինեմ Ձերդ գերազանցությանը, եթե նա բարեհաճի ինձ հատկացնել կարճատև ընդունելություն, որն ինձ՝ իբրև Հայկական ազգային պատվիրակության նախագահի, թույլ կտա նրա հետ գրուցել Հայաստանի ռազմաճակատում հայկական ուժերի կազմավորման մասին, որը Կովկասում տիրող ներկա իրավիճակի պատճառով այսօր ներկայացնում է միանգամայն առանձնահատուկ հետաքրքրություն:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 894, f. 34).

431

Ասիա-Օվկիանիայի փոխտնօրենի՝ ծանուցագիրը

Ծ:

Փարիզ, 4-ը դեկտեմբերի 1917 թ.:

Պողոս Նուբար փաշան, որն արդեն գրուցել է սըր Ջորջ Բլարկի և լորդ Միլնրի հետ, ցանկանում է շտապ խոսել նախարարի հետ, որպեսզի առաջարկի հայերի և վրացիների գործնական օգնությունը թուրքական ռազմաճակատում: Հարկ է նրան շտապ ընդունել:

Պողոս փաշայի հեռախոսի համարն է՝ Պասսի-39-85:

(A.M.A.E., Guerre 1914-1918 *Turquie*, tome 894, f. 35).

432

Ասիա-Օվկիանիայի փոխտնօրենի՝ ծանուցագիրը

Ծ:

Փարիզ, 4-ը դեկտեմբերի 1917 թ.:

Ես հավատ չեմ ընծայում ինքնավար Քրդստանի ստեղծման հնարավորությանը: Քրդստանն ընդարձակ տարածաշրջան է՝ բնակեցված քրդերով, հայերով, նեստորական-

1 Պ. Գուն:
2 Հղված է նախարարին:
3 Պ. Գուն:
4 Նախատեսված է պ. դը Մարտերիի համար:

ներով, բուրբերով, չերքեզներով, վրացիներով և այլն: Բայց ես շատ հավանական եմ համարում, համապատասխան գումար հատկացնելու ցանկության պարագայում, քրդական ցեղերին մեր կողմը գրավելը: Դա փողի և հմտության հարց է: Հավանաբար, զնդապետ Շարդինյին, ուր տեղում է, կկայողանա գտնել այդ առևտրական գործարքները կայացնելու համար պիտանի միջնորդներ:

Հարկ է ձեռնպահ մնալ քրդերին բացահայտորեն հովանավորելուց. մենք կվանենք հայերին և վրացիներին, որոնք կանցնեն քոչևիկների կողմը: Մակայն մենք կայտղ ենք գրավել քրիստոնյաներին և մեզ հետ պահել փոքրաբանակ ծախսերով, այն դեպքում, երբ քրդերը շատ քանակ կարծենան և մեզ կլքեն, հենց որ նրանց ավելին առաջարկեն:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 894, ff. 37-37 v).

433

Պետրոգրադում Ֆրանսիայի դեսպան պ. Նուլենը՝ Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին

Հ. թիվ 1797:

Պետրոգրադ, 4-ը դեկտեմբերի 1917 թ., ժ. 22.30-ին:
(Ստացվել է 6-ին, ժ. 9-ին,
Քաղ. վարչ. կողմից դեկտեմբերի 6-ին):

Թիֆլիսի մեր հյուպատոսից ես ստանում եմ հետևյալ հեռագիրը.

«Հայկական ազգային կոմիտեի նախագահը խնդրում է ձեզ հեռագրել Պողոս Նուբար փաշային՝ խնդրելու համար նրանից ընտրել մի անձնավորության, որին կհանձնարարվի զնալ Բաղդադի ռազմաճակատ՝ արաբների մոտ գտնվող հայերին ազատագրելու շուրջ բանակցելու համար»:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 889, f. 165).

434

Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնը՝ Թիֆլիսում Ֆրանսիայի հյուպատոս պ. Նիկոլային

Հ. թիվ 13:

Փարիզ, 5-ը դեկտեմբերի 1917 թ., ժ. 23.15-ին:

Ես ձեզ երախտապարտ կլինեմ, եթե դուք Հայկական ազգային պատվիրակության նախագահ Նուբար փաշայի՝ կից ուղարկվող հեռագիրը սրընթաց և վստահելի ուղիով հասցնեք դրա չորս հասցեատերերին: Դուք ինձ կփոխանցեք այն պատասխանները, որոնք ձեզ կհանձնվեն:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 894, f. 40).

ՀԱՎԵԼՎԱԾ

Հ:

Հեռագիրն ուղարկվել է, որպեսզի հաղորդվի՝

- 1/ Էջմիածին՝ հայերի Նորին սրբություն կաթողիկոսին,
- 2/ Թիֆլիս՝ Հայկական կենտրոնական բյուրոյին,
- 3/ Թուրքիայի հայ գաղթականների կոմիտեին,
- 4/ ղ(նկտո)ր Չավրիսին:

Չկարողանալով այլևս հայկական երեք ազատագրված նահանգները պաշտպանելու հարցում հույս տաձել ռուսական զորքերի հետ, Ազգային պատվիրակությունն անհրաժեշտ է համարում հավելել Կովկասի կանոնավոր բանակի հայ զինվորների քանակն ու կոչել Անդրանիկին և մյուս հայ առաջնորդներին՝ ուղքի հանել աշխարհագրայիններին ու հայ կամավորների կուրպուսները, որպեսզի դիմակայեն վերագրված նպատակ հետապնդող բուրբերի հարձակմանը և նույնիսկ ջանան միանալ Միջագետքի անգլիական բանակին: Վրացիների հետ համաձայնությունն անհրաժեշտ է պաշտպանելու համար Կովկասի բոլոր տարածքները: Ազգային պատվիրակությունն այդ նպատակին հասնելու համար ձեռք է բերել դաշնակից կառավարությունների՝ Ֆրանսիայի ու Անգլիայի ֆինանսական և այլ բնույթի լիակատար օգնությունը, որոնք հեռագրել են Թիֆլիսում իրենց քաղաքացիական և ռազմական ներկայացուցիչներին ձեզ հետ պայմանավորվածություն կայացնելու և հրատապ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու համար:

[Ստորագրված է] Նուբար:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 894, f. 42).

435

Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնը՝ Թիֆլիսում Ֆրանսիայի հյուպատոս պ. Նիկոլային

Հ. թիվ 14:

Փարիզ, 5-ը դեկտեմբերի 1917 թ., ժ. 23.15-ին:

Արդեն բազմաթիվ օրեր ի վեր, ձեր ամերիկացի և անգլիացի գործընկերները՝ տեղեկացրել են, որ Կովկասում վրացիների և հայերի շրջանում ի հայտ են գալիս շարժումներ՝ Պետրոգրադի ծայրահեղականների կողմից Ռուսաստանում կառավարությունը զավթելու փորձերին դիմակայող ուժեր կազմակերպելու նպատակով: Ծայրահեղականների հանցավոր մեքենայություններին ի տես, դաշնակից երկրների համար կարևոր է փնտրել Ռուսաստանի նահանգներում կազմակերպվող բոլոր դիմադիր ուժերին և դրանց գորավիզ լինել: Բարեհաճեք, այսպիսով, հրատապ և խիստ կանոնավոր ինձ տեղեկացնել Կովկասում ձեր հայտնաբերած շարժումների առաջնորդների մտադրությունների և նրանց օգտագործելու,

1 Հանապատասխանաբար՝ պ(արոնայ)ր Վիլուզիբի Սմիթը և Սթեննը:

քաջալերելու ու աջակցելու հնարավորության մասին: Բարեհաճեք ինձ հայտնել, թե արդո՞ք դուք հաղորդակցվում եք գնդապետ Շարդինյիի հետ և ներկա հանգամանքներում ջանացե՞ք բոլոր միջոցներով համակցել ձեր գործունեությունը նրա և ձեր անգլիացի ու ամերիկացի գործընկերների գործունեության հետ:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 894, f. 43).

436

**Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնը՝
Խորհրդի նախագահ, Ռ-ազմական նախարար պ. Կլեմանտյին**

Ճ. թիվ 4422:

Փարիզ, 5-ը դեկտեմբերի 1917 թ.:

Այս ծրարում ես ձեզ եմ փոխանցում մի ծանուցագիր, որն իմ ծառայությունները պատրաստել են Կովկասի հարցի և այն օգնության վերաբերյալ, որը դաշնակիցները կարող են ակնկալել այս նահանգների հայ և վրացի տարրերի սրընթաց գործողության արդյունքում:

Ես ձեզ խիստ երախտապարտ կլինեմ, եթե դուք, որքան հնարավոր է արագ, ինձ տեղյակ պահեք, թե ինչպես եք նախատեսում կենսագործել այն միջոցները, որոնք ի գործու են քաջալերել և աջակցել կովկասյան նահանգների բնակչության խելահաս տարրերին:

Ի դեպ, ես ձեզ երախտապարտ կլինեմ, եթե ինձ հաղորդեք այն բոլոր տեղեկությունները, որոնք այս առթիվ կարող եք ստանալ փոխգնդապետ Շարդինյից:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 894, f. 46).

ՀԱՎԵԼՎԱԾ

Ասիա-Օվկիանիայի փոխվարչության ծանուցագիրը՝

Փարիզ, 5-ը դեկտեմբերի 1917 թ.:

Այն նույն ժամանակ, երբ Թիֆլիսում գտնվող անգլիացի և ամերիկացի հյուպատոսների միջոցով մենք տեղեկանում էինք Կովկասում հայկական և վրացական խմբավորումների կողմից այս նահանգում՝ Պետրոգրադի ծայրահեղական ղեկավարների անիշխանական և անճանադարական քաղաքականությանը դիմակայող դիմադրական կենտրոն կազմակերպելու նպատակով գործադրվող ջանքերին, Փարիզում Հայկական ազգային պատվիրակությունը մեզ հավաստում էր Թուրքիայի գաղթականների և Վան, Բիթլիս ու Էրզրում թուրքական նահանգների հայերի հետ միավորված Կովկասի հայերի բուռն ցանկությունն այն հարցում, որ Հայաստանի ռազմաճակատում ուժասպառ եղող ռուսական զորքերը փոխարինվեն:

1 Նախատեսված է նախարարի համար:

1/ Հայկական կանոնավոր զորքերով, որոնք բաղկացած են ռուսական բանակից իրենց օջախները վերադարձած կամ հայկական կամիտեի կողմից ետ կանչված զինվորներից.

2/ Կովկասի ամբողջ տարածաշրջանում զանգվածաբար ոտքի հանված հայ աշխարհագորայիններով: Նուրար փաշան համոզված է, որ եթե դաշնակից տերությունները կարողանան անհապաղ ֆինանսական օգնություն ցուցաբերել հայկական կամիտեին և Էջմիածնի կաթոլիկոսին, հնարավոր կլինի ձեռք բերել հրացաններ և ռազմամթերքներ, որոնք ռուս դասակից զինվորները վաճառում են արդեն չնչին գներով և շատ հաճախ գնում են թուրքական զորքերին աջակցելու ցանկությամբ ամբողջովին տոգորված Կովկասի թաթարներն ու բազմաթիվ մոլեռանդ մահմեդականներ: Երբ Նուրար փաշան եկել էր Դեպարտամենտ, նրա ուշադրությունը հրավիրվեց հայկական և վրացական խմբավորումների միջև լիակատար համաձայնություն հաստատելու անհրաժեշտության վրա: Այս երկու ժողովուրդները, հիրավի, միակն են, որոնք մեծ շահագրգռվածություն ունեն շարունակելու պայքարը, որպեսզի խուսափեն թաթարների, քրդերի և թուրքերի զազրելի լծի տակ կրկին հայտնվելուց:

Դաշնակից երկրների համար այս վայրում կա դիմադրող մի տարր, որին հարկ է քաջալերել և անհապաղ օգտագործել: Այսպիսով, հարկ կլինի այժմվանից իսկ վճիռ կայացնել և որքան հնարավոր է արագ հրահանգներ ուղարկել ֆրանսիական ռազմական կցորդ, գնդապետ Շարդինյիին, այնժամ, երբ համանման հրահանգներ կհղվեն Լոնդոն, Կովկասի բանակների և անգլիական ռազմական կցորդի՝ համար: Այս երկու սպաներին պետք է թույլատրվի դաշնակից երկրների գանձարանի հաշվին Թիֆլիսի բանկերից դրամ ստանալ՝ հայկական և վրացական զորքերի արագ զինումը և կազմակերպումը դյուրին դարձնելու նպատակով: Միաժամանակ կարելի կլինի հրահանգներ ուղարկել գեներալ Նիեսեյին, որպեսզի նա, որքան հնարավոր է արագ, սպաների մի խումբ ուղարկի Կովկաս, որը կդրվի հայկական և վրացական խմբավորումների տրամադրության ներքո՝ նրանց օգնելու և այդ ժողովուրդներին՝ ներկայումս ռուսական բանակում ծառայող սպաների հետ մեկտեղ, այս կերպ համախմբված զինված անձնակազմերը կազմակերպելու և հրամանատարական կազմով ապահովելու համար:

Եթե, միևնույն ժամանակ, ճապոնական և ամերիկյան հաժամավերի գործողություններն ապահովեն Անդրսիբիրյան գծի մատչելիությունը, ռազմամթերքները մինչ կովկասյան նահանգները հասցնելն անհնար չի թվա: Այս կերպ, Կովկասի ռազմաճակատը կարող է պաշտպանվել այնպիսի զորքերով, որոնց՝ իրենց օջախները պաշտպանելու վճռականությամբ դաշնակիցներին կներշնչի խորին վստահություն: Հայկական ազգային պատվիրակության նախագահը, համակված հայրենասիրական զգացումով, ընդունում է նույնիսկ այն հնարավորությունը, որ հայ-վրացական այս բանակը կարող է անել ավելին, քան ռազմաճակատի պաշտպանությունն ապահովելը և գրոհ ձեռնարկել հայկական տարածաշրջանում մնացած որոշ թուրքական տարրերի դեմ: Եթե անգամ դա սոսկ ազնվաբար պատրանք է, կացությունը ստիպում է, որ դաշնակիցները քաջալերեն, որպեսզի Պետրոգրադի անճանադրությունից պաշտպանվի նվազագույնը Ռուսաստանի հարավային տարածաշրջանը:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 894, ff. 44-45).

1 Գեներալ Շորը:

Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշան՝ պ. Անատոլ Ֆրանսին

Ն:

Փարիզ, 6-ը դեկտեմբերի 1917 թ.:

Ես շատ մեծ հաճույքով եմ ձեզ փոխանցում սրան կից այն կոնդակի՝ եպիսկոպոսական հրովարտակի թարգմանությունը, որն իմ խնդրանքով, Ն {որին} ս {բրություն} կաթողիկոս Գևորգ V-ը ձեզ է հղել և որի բնագիրը ձեզ հանձնելու պատիվը կունենամ այն օրը, որը դուք կբարեհաճեք մատնանշել, երբ լինեք Փարիզում:

Այդ հրովարտակով Նորին սրբությունը ցանկացել է իր և իր ժողովրդի անունից ձեզ մատուցել հայերի անասան երախտագիտության հանդիսավոր հավաստիքը, որոնց պաշտպանության գործը, առաջին իսկ ժամից և այնպիսի մի դարաշրջանում, երբ որևէ մեկը նրանցով դեռևս չէր հետաքրքրվում, դուք ստանձնեցիք ի սրտե և այն հեղինակությամբ, որը վայելում եք աշխարհում:

Թույլ տվեք ինձ, քանկագին Վարպետ, օգտվելով այս առիթից, մեկ անգամ ևս ապավինել մեր հանդեպ տածվող ձեր համակրանքին: Ազգային պատվիրակությունն ինքնաբերական և հայկական գործի պաշտպանության համար պատրաստվում է շատ շուտով հրատարակել «Լա վուա դը Լ'Արմենի» երկշաբաթյա հանդեսը՝ պ. Աննե Պիմոնի քաղաքական ղեկավարությամբ, որի քանիմացությունն Արևելքի հարցերում ձեզ քաջ հայտնի է: Այն դրվել է քաղաքական և մտավոր աշխարհին պատկանող անձանցից բաղկացած մի կոմիտեի պատվավոր ենթակայության ներքո, որոնք ներկայացնում են բոլոր կուսակցություններն ու հասարակական կարծիքները: Ես ձեզ եմ հանձնում սրան կից դրա ցուցակը: Արդյոք ես կարիք ունեմ ձեզ ասելու, թե մեզ համար ինչպիսի պատիվ կլինի ձեր ազգանունն այդտեղ տեսնելը: Եվ քանի որ խոսքը վերաբերում է ձեզ որևէ անհանգստություն չպատճառելուն, այլ միայն ձեզ ցուցակում ընդգրկելուն՝ ի շարս այն անձանց, ովքեր մեզ տվել են իրենց համաձայնությունը, ես հույս եմ տածում, որ դուք չեք զլանա ի հայտ բերել մեր գործի հանդեպ ձեր դրսևորած հետաքրքրության նոր վկայությունը*:

Այդ հույսով և նախապես ձեզ հայտնելով իմ երախտագիտությունը, ես ձեզ խնդրում եմ ընդունել, քանկագին Վարպետ, իմ անհուն նվիրվածության զգացումների և խորին հարգանքի նոր հավաստիքը:

(B.N., Mss., N.a. Fr. 15436, ff. 492-492 v).

* Անատոլ Ֆրանսն ընդունել է առաջարկը և ընդգրկվել Փարիզում լույս ընծայվող այս հրատարակության ղեկավար մարմնի կազմում: - Ծ. ք.:

ՀԱՎԵԼՎԱԾ

Ամենայն հայոց կաթողիկոս և ծայրագույն պատրիարք Նորին սրբություն Գևորգ V-ի Ֆրանսիական ակադեմիայի անդամ Անատոլ Ֆրանսին հղած հրովարտակը

Թարգմանություն:

Գևորգ, Հիսուս Քրիստոսի ծառան և Աստծո անհասանելի կամքով եպիսկոպոսապետ և Ամենայն հայոց կաթողիկոս, Սուրբ Էջմիածնում Արարատյան առաքելական ողորպիստ եկեղեցու ազգային աթոռի ծայրագույն պատրիարք:

Շատ հարգարժան Անատոլ Ֆրանսին՝ ողջույն Սուրբ Էջմիածնի եպիսկոպոսանիստ աթոռից:

Մենք ձեզ ճանաչել ենք, ձեզ՝ մուսաների որդուն և ֆրանսիական մեծ ազգի բանաստեղծին, իբրև մի մարդու, որն իր մեջ մարմնավորել է մշտնջենական բառը և երկնքի կողմից իրեն պարզեցրած քնարի հնչյունների մեղքը մարդկանց սրտում այրել է մաքուր հույր, որպեսզի նրանք դառնան լույսի զավակները և ունենալով օրում սավառնող արծվի նման ուրընթաց ու ազատաստենչ ոգի, կարողանան ապրել երկրի վրա և օգտվել Ամենագործի բարիքներից:

Չեր ինչին տոգորող ազատության մշտական սերը՝ որպես ժողովների մեղմ բուրմունք, մենք չնչել ենք ձեր երկերում, ձեր աշխատանքի արգասիքում, բոլոր ազգերի գեղարվեստական գրականության ասպարեզներում: Այն բավականությունը, որը մենք դրանից ստացել ենք մեզ ոգու և ճաշակի համար, մեզ համակել է ձեր հուզու և ձեր հանճարի, ձեր իմացության և ձեր արվեստի մեծությանը հրապարակայնորեն արժանի հատուցելու ցանկությամբ, որոնք յուր յ սպաս եք դրել համայն աշխարհում՝ Ֆրանսիայի նման հիասքանչ երկրից մինչ աշխարհի ծայրու սփռված մարդու զավակներին, նրանց բոլորին՝ իրենց հասարակական կյանքում միավորելով բոլոր ազգերի ազատության, եղբայրության, սիրու և հավասարության շղթաներով: Դա մի ուսմունք է, որը մենք բոլորս սերտել ենք և ընդունել իբրև մեր տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի անառարկելի ժառանգություն:

Մենք ձեզ ճանաչել ենք իբրև ձեր մեծ հայրենիքի նշանավոր զավակների, ինչպիսիք են Պրեսանսեն* և այլք, ազնվաբարտ ավանդների և սկզբունքների շարունակողի և անդով պահապանի: Չեր, ինչպես և նրանց լուսավոր միտքը, կայծակի նման հրավառել է երկինքը և իր պայծառ լույսը տարածել մինչ Արարատի գագաթները: Մեր տառապալից օրերին, դուք երբևէ չեք զրացել մեր վերքերի վրա սպեղանի դնել: Չեր խոսքերով և ձեր երկերով դուք ճանաչարի եք հարթել դեպի արդարացի հատուցումները, որոնք պետք է մեզ տրվեն աշխարհի տակնուվրա արած այս պատերազմի ավարտին, որպեսզի իրենց հայրենիքի սահմաններում Հայկի ցեղի բոլոր զավակներն ազատագրվեն իրենց տառապանքներից, դառնան հալածանքների ավարտի ականատեսը և ձերբազատվեն կեղեքիչների լծից, որպեսզի մենք կարողանանք, մենք ևս, վերսկսել աշխատանքը մեր ավերված հայրենիքը վերակառուցելու և այլ ժողովուրդների հետ խաղաղ ապրելու համար ազատության, եղբայրության և

1 Ազգային գրադարանում պահվում է միայն այս փաստաթղթի թարգմանությունը:
* Պրեսանսեն Ֆրանսիս դը (1853-1914) - ֆրանսիացի քաղաքական գործիչ, սոցիալիստ, Մարդու իրավունքների լիգայի նախագահ: 1900-1914 թթ. Ժ. Ժորեսի, Ա. Ֆրանսի և Ժ. Կլեմանսոյի հետ մեկտեղ ընդգրկվել է Փարիզում լույս ընծայվող «Պրո Արմենիա» երկշաբաթաթերթի ղեկավար մարմնի կազմում: - Ծ. ք.:

հավասարության դարաշրջանում և լինելով ստրուկների բարեկոնյան գետերի ափերին, վերջ տանք մեր ողբալի սաղմոսներին ու ձեր և իմ ժողովրդի բոլոր բարեկամների հետ միասին ներբողներ և օրհնանքներ հղենք Տիրաջը:

Այսպիսի մաղթանքներով և բաղձանքներով է, որ մենք ձեզ ենք հղում մեր երախտագիտության հավաստիքն այն ծառայությունների և ազնվաբարտ իողաժության համար, որոնք դուք և ձեր մեծ ազգը ցուցաբերել եք հայ ազգի նկատմամբ և աղաչում ենք Ամենազոր Աստծուն պահպանել ձեր կյանքը, որպեսզի դուք ձեր սեփական աչքերով տեսնեք ձեր պաշտելի հայրենիքի և թշնամիների լծի տակ հեծող բոլոր երկրների կատարյալ ազատագրումը:

Թող որ Ամենազորի ձեռքն օգնության հասնի Ֆրանսիայի դաշնակից տերություններին և հաջողություն պարգևի նրանց զենքերին:

Թող Տերն օրհնի ձեզ, և խաղաղությունը ձեզ հետ լինի: Զրիստոնեական ողջույն: Թող որ մեր օրհնանքը տարածվի ձեր վրա: Ամեն:

Գևորգ V,
Ամենայն հայոց կաթողիկոս:

Գրված է 1917 թ. հունիսի 7/20-ին,
հայոց թվարկության 1366-րդ տարում,
մեր եպիսկոպոսության 6-րդ տարում,
Էջմիածնի Արարատյան նախամեծար աթոռում,
Վաղարշապատ,
Թիվ 1018:

(B.N., Mss., N.a. Fr. 15436, ff. 493-494 bis):

438

**Արտաքին գործերի նախարար, պ. Ստեֆան Պիշոնը՝
Պետրոգրադում Ֆրանսիայի դեսպան պ. Նուկենսին**

Հ. թիվ 2285:

Փարիզ, 7-ը դեկտեմբերի 1917 թ., ժ. 16.20-ին:

Ես պատասխանում եմ ձեր թիվ 1797 հեռագրին¹:

Կամենքը Թիֆլիս փոխանցել ստորև ներկայացվող՝ Նուբար փաշայի պատասխանը.

«Ստացա ձեր ճեպագիրը: Զանի որ կաթողիկոսը Բաղդադում պրեյատ է նշանակել Մուշեղ արքեպիսկոպոսին, իմ ընտրությունը կանգ է առել հենց նրա վրա, իբրև այն անձնավորության, որին հարկ է համձնարարել զբաղվելու նաև արաբների մոտ գտնվող հայերին ազատագրելու հարցով: Մուշեղը Փարիզում է, նա կմեկնի առաջին նավով: Ես ձեզ կարևոր հեռագիր եմ հղել Թիֆլիսում Ֆրանսիայի հյուպատոսի միջնորդությամբ»:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 889, f. 167).

¹ Դեկտեմբերի 4-ի վերն արտաստված է թիվ 433 փաստաթղթում:

439

Ասիա-Օվկիանիայի փոխտնօրենի՝ ծանուցագիրը

Ծ:

Փարիզ, 7-ը դեկտեմբերի 1917 թ.:

Ես տեղեկացնում եմ, որ Կովկասում հայերի և վրացիների լիմապրոթյանը քաջալերելու նպատակով, փոխգնդապետ Շարլինյիին փող հատկացնելու համար «Պարսկաստանի կայսրական բանկը» (անգլիական) գործակալություն ունի Թիֆլիսում: Նուբար փաշան հույս է տածում, որ դաշնակիցները Կովկասում գտնվող իրենց ռազմական կցորդներին կառաջարկեն առաջին վարկը մեկ միլիոն {իրա} ս {տերլինգի} (25 միլիոն ֆրանկի) սահմանում:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 894, f. 56):

440

**Լոնդոնում Ֆրանսիայի ռազմական կցորդ, գեներալ դը Լա Պանուսը՝
Խորհրդի նախագահ, Ռ-ազմական նախարար պ. Կլեմանսոյին**

Հ. թիվ 1280, 1281: Գաղտնի:

Լոնդոն, 8-ը դեկտեմբերի 1917 թ., ժ. 16-ին:
(*Ստացվել է ժ. 20-ին*):

Կովկասի ռուսական բանակի գլխավոր հրամանատար գեներալը՝ Միջագետքում բրիտանական հրամանատար գեներալին⁴ է ուղարկել հետևյալ հեռագիրը.

«Նոյեմբերի 30-ին Կովկասի թուրքական բանակի հրամանատարից մի նամակ ստացա, որով առաջարկվում էր վինադադար: Նկատի ունենալով քաղաքական իրավիճակը և այն բանակցությունները, որոնց արդեն ձեռնամուխ եմ եղել ավստրո-գերմանական ռազմաճակատում, Կովկասի ժամանակավոր կառավարության համաձայնությամբ, ես նպատակահարմար գտա այս խնդրանքն ընդունել ի գիտություն և առաջարկեցի ռազմական գործողությունների ժամանակավոր դադարեցում, այն պարտադիր պայմանով, որ ի վնաս անգլիական բանակների՝ զորքերի որևէ տեղաշարժ տեղի չունենա, և զորքերը, մինչ զինադադարի ժամկետների հաստատումը, մնան իրենց ներկայիս տեղերում:

Կայացնելով այս վճիռը, ես լի եմ ձեր քաջարի գորքերի շահերը զինադադարի ժամկետների սահմաններում պաշտպանելու և նրանց դեմ թուրքական նոր ուժերի յուրաքանչյուր կենտրոնացմանը խանգարելու վճռականությամբ»:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 894, f. 57):

1 Պ. Գուն:
2 Պ. Պիշոնի համար է:
3 Գեներալ Պրժևալսկին:
4 Գեներալ Մարշալը:

**Թիֆլիսում Ֆրանսիայի հյուպատոս պ. Նիկոլան՝
պ(արոնայ)ք Արտաքին գործերի նախարար Ստեֆան Պիշոնին,
Պետրոգրադում Ֆրանսիայի դեսպան Նուլենսին**

Ճ. թիվ 72, 131:

Թիֆլիս, 8-ը դեկտեմբերի 1917 թ.:
(Ստացել են Կաթինետը 1918 թ. հունվարի 14-ին.
Քաղ. վարչ. հունվարի 15-ին):

Գաղտնի պայմանագրերի հրապարակումը թուրքերի հետ, զինադադարի ստորագրումը՝ հայկական գաղութում տեղիք են տվել հուզումների: Վերջիններս դառնորեն գանգատվում են, որ «դաշնակիցներն իրենց դավաճանել են, իսկ Հայաստանը կրկին օսմանյան նողկալի լծի տակ դնելուն պատրաստվող ռուսները՝ լքել»:

Հայաստանի ռազմական պաշտպանության կոմիտեն ինձ մամակ է գրել, որի պատճենը Չերո գերագնացությունը կբարեհաճի գտնել այս ծրարում:

Փոխզնդապետ Թորգոմը հուսալքված եկել էր ինձ տեսնելու: Նա վստահություն չունի իր երկրի ապագայի հանդեպ և հայտնեց, որ պատրաստվում է ինձ մի մամակ գրել, որով հայերը պահանջելու են անգլիացի և ֆրանսիացի հրահանգիչներ, դրամական օգնություն և դաշնակիցների կողմից Հայաստանի ինքնավարության երաշխիք:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 894, ff. 61-61 v).

ՀԱՎԵԼՎԱԾ

**Հայաստանի Ռազմական պաշտպանության կոմիտեն՝
Թիֆլիսում Ֆրանսիայի հյուպատոս պ. Նիկոլային**

Ն:
(Պատճենը):

Թիֆլիս, 23-ը (նոյեմբերի) /6-ը դեկտեմբերի 1917 թ.:

Ռուսական գործերի և թշնամու միջև կնքված զինադադարի Թուրքիայի հայերի համար ստեղծել է ամենավտանգալից իրավիճակը: Հայաստանը, որն այս համընդհանուր պատերազմի ընթացքում, դրա հետ որևէ կապ չունենալով, հրի և արյունահեղության է մատնվել, կրկին ենթակա է թուրքական զազրելի վարչակարգին հանձնվելու վտանգին:

Ահա թե ինչու, հանուն մարդասիրության և արդարության սկզբունքների՝ մենք պատիվ ունենք խնդրել ձեզ, պարոն հյուպատոս, ձեր կառավարությանը հրատապ տեղեկացնել այն մասին, ինչը հետևում է:

1 1917 թ. դեկտեմբերի 5-ին, Երզնկայում:

Թուրքահայաստանի հարցն ամենից առաջ միջդաշնակցային հարց է: Քանի որ մշակութային և առաջադիմության իր ավանդներին հավատարիմ մնալու պատճառով Հայաստանն այս պատերազմի ընթացքում արյունաքամ է եղել և սարսափելիորեն տառապել, դաշնակից երկրները (Ֆրանսիան, Ռուսաստանը, Անգլիան և Միացյալ Նահանգները) իրավասու են և պարտավոր անհապաղ միջոցներ ձեռնարկել՝ դաշնակից երկրների հովանու ներքո և նրանց օգնությամբ նրա ինքնավարությունը երաշխավորելու համար:

Մեր կոմիտեն, որը ձևավորվել է Թուրքիայի հայերի ներկայացուցիչներից, 1917 թ. նոյեմբերի 9-ի նիստում լիակատար իրավունքներ է շնորհել իր նախագահ, պարոն փոխզնդապետ Թորգոմին՝ խնդրելու ձեզ, ինչպես նաև ռուսական ռազմական և քաղաքացիական իշխանություններին դիմել բոլոր անհրաժեշտ քայլերով, Հայաստանի պաշտպանությունն ապահովելու համար:

(Ստորագրված է) Փոխզնդապետ Թորգոմ,
Կ. Ա. Մանուկյան,
Եզնիկ Քաջունի:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 894, f. 62).

**Արտաքին գործերի նախարարը՝ Թեհրանում
Ֆրանսիայի նախարար պ. Ռայմոն Լոկոնտին**

Հ. թիվ 29:

Փարիզ, 9-ը դեկտեմբերի 1917 թ., ժ. 15-ին:

Չեք ռուս գործընկերը՝ տեղեկացրել է Հոռոմու գտնվող Ռուսաստանի դեսպանին՝ որ Կովկասում կազմակերպվում է տեղական կառավարություն, որը լի է պայքարը շարունակելու և ծայրահեղականներին դիմակայելու վճռականությամբ: Չամացեք Թեհրանում կամ Թիֆլիսի հետ ունեցած հաղորդակցության միջոցով ճշգրիտ տեղեկություններ ի մի բերել այն մասին, թե ի՞նչ է կատարվում Կովկասում: Դուք, անկասկած, գիտակցում եք, թե դաշնակիցների համար որքան կարևոր է Ռուսաստանում դեռևս գոյություն ունեցող դիմադրական ուժերի մասին տեղեկություն ունենալը՝ դրանց քաջալերելու և աջակցելու համար:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 894, f. 63).

1 Ստորագրել է պ. դը Մարտերին:
2 Պ. Մակակովը:
3 Պ. դը Գիրսը:

Թիֆլիսում Ֆրանսիայի հյուպատոս պ. Նիկոլան՝ Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին

Հ. թիվ 12:

Թիֆլիս, 10-ը դեկտեմբերի 1917 թ., ժ. 4.50-ին:
(Ստացվել է ժ. 13.55-ին; Քաղ. վարչ. կողմից դեկտեմբերի 11-ին):

Միացյալ Նահանգների հյուպատոսը՝ պնդում է, որ երբևէ [չի] լսել Կովկասում առկա շարժումների մասին, որոնց նախատակը ռուսական կառավարության նկատմամբ ծայրահեղականների գործադրած ճնշմանը դիմակայելն է: Հայերը և վրացիները ձգտում են համախմբել իրենց զորքերը, որպեսզի՝

- 1/ ռուսների դավաճանության պարագայում պաշտպանեն իրենց երկիրը Թուրքիայից.
- 2/ պահպանեն կարգ ու կանոնը.
- 3/ հեռացնեն ռազմաճակատի այն զինվորներին, որոնք Կովկասի տարածքով վերադառնում են իրենց օջախները:

Ըստ Շարլիյիի հետ ունեցած հաղորդակցության: Նամակը հետևում է:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 894, f. 64):

Թիֆլիսում Ֆրանսիայի հյուպատոս պ. Նիկոլան՝ պլառոնայք Արտաքին գործերի նախարար Ստեֆան Պիշոնին, Պետրոգրադում Ֆրանսիայի դեսպան Նուլենսին

Ճ. թիվ 73, 132:

Թիֆլիս, 10-ը դեկտեմբերի 1917 թ.:
(Ստացվել են Կաբինետը 1918 թ. հունվարի 14-ին, Քաղ. վարչ. կունվարի 15-ին):

«Մշաք» [sic]² թերթի տնօրեն պ. Առաքելյանը դեկտեմբերի 10-ին եկել էր ինձ տեսության, ասելու համար, որ իր թերթի և «Հորիզոն» լրագրի միջև գոյություն ունի տարածայնություն:

Ըստ նրա՝ ազնիվ հայերը բողոքել են այն կապակցությամբ, որ զինադադարի նախագիծը ստորագրել են իշխանության մոտ գտնվող երկու դաշնաքրքաններ [sic]³: «Հորիզոնը» պատասխանում է, որ այս երկու պատվիրակներն այդպես են գործել, քանի որ հենց իրենք

1 Պ. Վիլյուգիի Սմիթը:

2 Իմա՝ «Մշակ»:

3 Իմա՝ դաշնակցականներ (Հ.Յ.Դ. կուսակցության անդամներ):

դաշնակիցներն են ընդունել այդ զինադադարը: Դրանք, հիրավի, ասեկոսեներ են. որոնք տարածում են գտել Կովկասում և հարատևում են, չնայած, տեղական մամուլի հրապարակած այն գրություններից մեկին, ըստ որի դաշնակիցների հյուպատոսներն այդ զինադադարի դեմ բողոք են ներկայացրել:

Պ. Առաքելյանը խոսելով, ինչպես ինքն է ասում, հայերի անունից, կրկին պնդում է, որ Հայաստանի ճակատագիրը գտնվում է դաշնակից տերությունների ձեռքում: Նա իր ճակատագիրը միահյուսել է մեր ճակատագրին և իր փրկությունն ակնկալում է մեզնից: Նա ինձ խնդրել է իր բողոքն ընդունել ի գիտություն ու ցանկություն հայտնել տեսներու. թե ինչպե՞ս են երկու դաշնաքրքանները [sic]¹ ստանձնում իրենց ստորագրությունների պատասխանատվությունը և ընդունում, որ դրանք չեն առնչվում հայկական ամբողջ կուսակցության հետ:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 894, ff. 67- 67 v).

Լոնդոնում Ֆրանսիայի ռազմական կցորդ, գեներալ դը Լա Պանուսը՝ Խորհրդի նախագահ, Ռ-ազմական նախարար պ. Կլեմանսոյին

Հ. թիվ 1287, 1288: Գաղտնի:

[Պատճենը]:

Լոնդոն, 11-ը դեկտեմբերի 1917 թ., ժ. 17.15-ին:
(Ստացվել է ժ. 23-ին):

Այնսի 9-ի հեռագրով գեներալ Շորը Կովկասից տեղեկացնում է այն մասին, որ համաձայն շտաբի պետի հայտարարության՝ տեղական կառավարության նախագահը, ինչպես նաև հայ և վրացի տարրերն իրականում չէին կարող Ռուսաստանից անջատվելու մտադրություն ունենալ և թվում է, թե միայն Ռուսիան է ցանկանում այդ անել:

Կազակների առաջնորդների և տեղական կառավարության ժողովը շուտով կկայանա: Բայց այս իսկ պահից, Թերեթի խմբապետը, կարծեք թե կարգադրել է իր մարտկանց լքել Կովկասի ռազմաճակատը: Թիֆլիսում անհամբերությամբ են սպասում թուրքերի պատասխանին այն պայմանների շուրջ, որոնք զինադադարի համար առաջադրել է տեղական կառավարությունը: Սակայն շտաբի պետը հավաստիացնում է, որ կառավարությունը չի ընդունի որևէ պայման, որը բրիտանական շահերին վնասելու հեռանկար ունենա:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 894, f. 68).

1 Իմա՝ դաշնակցություններ:

Թիֆլիսում Ֆրանսիայի հյուպատոս պ. Նիկոլան պ(արոնայ)ք Արտաքին գործերի նախարար Ստեֆան Պիշոնին, Պետրոգադում Ֆրանսիայի դեսպան Նուլենսին

Ճ. թիվ 75, 134:

Թիֆլիս, 11-րդ դեկտեմբերի 1917 թ.:
(Ստացել են Կաթ. 1918 թ. հունվարի 14-ին,
Քաղ. վարչ. հունվարի 15-ին):

Ես պատիվ ունեն այս ծրարով Ձերո գերազանցությանը փոխանցել «Ռեպուբլիկ» թերթից (թիվ 116, 26-րդ նայեմբերի/9-ը դեկտեմբերի) քաղված մի հոդված, որը վերաշարադրում է հայ մարտիկների դաշնունը.

«Որոշում.

Թուրքիայի հետ Ռուսաստանի սեպարատ զինադադարն սզղարարող Անդրկովկասի կոմիսարիատի հարյուրազուրյանն ու հայտարարւոթյանն իրազեկ դառնալուց հետո, համայն Ռուսաստանի հայ մարտիկների առաջին ժողովը որոշում կայացրեց. հայ ժողովուրդը, որը գտնվել է դարավոր ստրկության մեջ Թուրքիայում և բազմաթիվ առիթներով ջանացել իր արյամբ ձեռք բերել ազատ գոյության իրավունքը, մշտապես ճնշվել է Թուրքիայի կողմից, փաստորեն այն պատճառով, որ իմպերիալիստական ժողովուրդները, ինքնակալական Ռուսաստանի հետ համատեղ, լինելով ազատության հակառակորդներ, լքում էին նրան և հետևում, թե ինչպես է ազատագրման տենչացող ժողովուրդը խարխափում իր արյան մեջ: Հայ աշխատավոր ժողովրդի բազում միլիոնավոր լավագույն զավակներն ընկել են հանուն ռուսական մեծ հեղափոխության գաղափարի, որը համայն աշխարհում հռչակել է բոլոր ստրկացված ժողովուրդների իդեալի իրականացման և ժողովուրդների ինքնորոշման իրավունքի մասին: Հեղափոխության առաջին իսկ օրվանից, հայ աշխատավոր ժողովուրդը և նրա զինվորները գտնվում էին ռուսական հեղափոխության պաշտպանների առաջին շարքերում: Ներկայումս, իրազեկ դառնալով սեպարատ զինադադարին, ժողովը գտնում է, որ ազատ Ռուսաստանի հեղափոխական ժողովրդավարությունը, իր ձեռքում կենտրոնացնելով հաշտության հարցը, բռնակալական Թուրքիային չի հանձնի հայ ժողովրդի բեկորները, որի հարյուր հազարավոր լավագույն զավակները հարթել են ազատության տատակոտ ճանապարհը: Մենք հույս ենք տածում, որ հաշտության պայմաններից մեկը վերաբերվելու է Թուրքահայաստանի կատարյալ անկախությանը և նրա լիակատար ազատագրմանը թուրքական լծից: Հայ հեղափոխական ժողովուրդն իրավասու է այդ պահանջելու ռուսական հեղափոխական ժողովրդավարությունից և բոլոր միջոցներով կհամադի հանուն այդ պահանջի կենսագործման: Մինչ հաշտության կնքումը, մեր գործերը չպետք է դուրս բերվեն Հայաստանից, քանզի գրավված տարածքներից գործերի դուրս բերումը, իբրև հետևանք կհանգեցնի մեր ժողովրդի բեկորների ոչնչացմանը և վերջնականապես կհուղարկավորի ազատագրման հարցը»:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 894, ff. 70-70 v).

Ռումինիայում Ֆրանսիայի նախարար պ. Բոպուալ դը Սենտ-Օլերը՝ Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին

Հ. թիվ 747:

Յասսի, 12-ը դեկտեմբերի 1917 թ., ժ. 13.15-ին:
(Ստացվել է 15-ին, ժ. 7.40-ին):

Ես հիմնվում եմ իմ 174 ճեպագրի վրա՝:

Օդեսայի Հայկական հեղափոխական կոմիտեի մի լիազոր ներկայացուցիչ՝ իր համաքաղաքացիների անունից եկավ ինձնից խնդրելու դաշնակից տերությունների և մասնավորապես, Ֆրանսիայի օգնությունը: Վրացի և հայ կամավորների (վերջիններիս թիվը հասնում է 20000-ի) մի բանակ այս պահին միայնակ պաշտպանում է Կովկասի ռազմաճակատը: Ռուսները, ոլանք մինչ այժմ հոգում էին այդ բանակի ծախսերը, կորցրել են հետաքրքրությունը դրա հանդեպ: Ռուսաստանի հայկական զաղութների ֆինանսական միջոցները լիովին թուլատրում են դիմակայելու ներկա կացությանը, բայց անբավարար են այն պարագայում, եթե ցանկություն առաջանա ընթացք տալ ռուսական բանակներում սփռված՝ Կերենսկու թույլատրած հայկական տարրերի դուրս բերմանը և Կովկասում նրանց համախմբմանը վերաբերող նախագծին, որտեղ կձևավորվի ավելի քան 150000 մարդուց բաղկացած մի բանակ: Մեզնից սպաներ են խնդրում այդ զինակոչիկներին ուսուցանելու և, մասնավորապես, երկաթուղային, մատակարարումների, ռազմամթերքների ծառայությունների համակարգն առաջ մղելու համար: Վերջապես, մեզնից փող են խնդրում, որպեսզի նպաստեն ստորաբաժանումների ծախսերը հոգալուին:

Անիմաստ է ծավալվելն իսկ այն դերի շուրջ, որն այս տարիները կարող են ունենալ՝ դեպի Կովկաս ռումինական բանակի նահանջի պարագայում:

Գերմանացիները, կանխազգալով այն վտանգը, որը կարող է ներկայացնել մեր գործողությունը, այս պահին ահռելի ջանքեր են գործադրում այս տարածաշրջանում հայերի, վրացիների և թաթարների միջև վեճեր հարուցելու համար:

Մյուս կողմից, իմ անգլիացի գործընկերներն՝ ինձ հայտնում է անգլիական ռազմական առաքելության նախագծի մասին, որը նախատեսված է Կովկասի հայկական ռազմաճակատի համար: Հնարավոր կլինի դրան կցել ֆրանսիական մի առաքելություն, որը կգործի, մասնավորապես, թիկունքում, քանզի որ մեր սպաների մասին ռուսական տարածքում ավելի լավ կարծիք ունեն, քան անգլիացիների: Հարկ կլինի այս հարցի շուրջ հրատապ պայմանավորվածություն կայացնել բրիտանական կառավարության հետ:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 894, f. 72).

1 Նոյեմբերի 12-ի վերջ հրապարակվել է թիվ 417 փաստաթիղթում:
2 Սրբ Ջորջ Հեղ Բարբլայը:

**Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնը՝
Թիֆլիսում Ֆրանսիայի հյուպատոս պ. Նիկոլային**

Հ. թիվ 16:

Փարիզ, 13-ը դեկտեմբերի 1917 թ., ժ. 1.30-ին:

Ես պատասխանում եմ ձեր թիվ 12 հեռագրին¹:

Հայերի և վրացիների միջև արդյո՞ք գոյություն ունի համաձայնություն: Անհրաժեշտ է այդ քաջալերել: Արդյո՞ք այս խմբավորումներն ի վիճակի են կազմակերպել:

1/ Տեղական խմբավորում՝ երկիրը վարչական առումով դեկավարելու համար: 2/ Ի վիճակի են արդյո՞ք կազմակերպել զինված ուժ: 3/ Արդյո՞ք ունեն ֆինանսական օգնության կարիք: 4/ Ինչպիսի՞: 5/ Ռազմական օգնության: 6/ Ինչպիսի՞: Գնդապետ Շարլինյիսի հետ համաձայնեցված շտապ կոնկրետ առաջարկություններ արեք:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 894, f. 74).

**Խորհրդի նախագահը, Ռազմական նախարարը՝
Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին**

Ճ. թիվ 12.679-/3: Գաղտնի:

Փարիզ, 13-ը դեկտեմբերի 1917 թ.:

(*Unuget* է Քաղ. վարչ. դեկտեմբերի 15-ին):

Դեկտեմբերի 8-ին դուք ինձ հաղորդել էիք այն հրահանգները, որոնք Նուբար փաշայի խնդրանքով՝ հայկական ռազմական ուժի կազմակերպումը դյուրին դարձնելու նպատակով տրվել էին Թիֆլիսում գտնվող Ֆրանսիայի հյուպատոսին² և տեղեկացրել ինքնավար Քրդստանի ստեղծման հարցի շուրջ ձեր տեսակետին³:

Ես պատիվ ունեմ ձեզ հղել սրան կից այն հրահանգների պատճենը, որը պարտադիր են համարել հանձնել համապատասխանաբար՝ զենքերալ Նիեսելին և զենքերալ Բերտելոյին:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 894, f. 76).

1 Դեկտեմբերի 10-ի. տե՛ս վերը թիվ 443 փաստաթուղթը:

2 Ստորագրել է զենքերալ Ֆոշը:

3 Պ. Նիկոլան:

4 Դեկտեմբերի 8-ի թիվ 4478 այդ ճեպագրում, որն արտատպված չէ, Դեպարտամենտը իտրիտոր է տալիս գոյշ լինել քրդերի հետ բանակցությունների հարցում: Նա գտնում է, որ պետք չէ գրկվել քրիստոնյա ժողովուրդների՝ հայերի և վրացիների համակրանքից՝ առանց, այնուամենայնիվ, քրդերի հավասարությունը շահելու նույնիսկ մեծ ծախսերի գնով:

**Խորհրդի նախագահը, Ռազմական նախարարը՝ Պետրոգրադում
Ֆրանսիական ռազմական առաքելության ղեկավար, գեներալ Նիեսելին**

Հ. թիվ 12.649-/3: Գաղտնի:

Փարիզ, 13-ը դեկտեմբերի 1917 թ.:

Առաջին. Փարիզում գտնվող Հայկական ազգային պատվիրակության նախագահ Նուբար փաշայի խնդրանքով, ֆրանսիական կառավարությունը հանձնարարել է Թիֆլիսում գտնվող իր հյուպատոսին՝ հայազգյի երևելի անձանց փոխանցել Նուբարի կողք, որը վերաբերում է Կովկասի ռազմաճակատում ռուսական զորքերին փոխարինելու ունակ հայ կառավորների հավաքագրմանը:

Երկրորդ. կառավարությունը հույս է տածում, որ հնարավոր է փոքրաքանակ ծախսերով ապահովել հայերի և Կովկասի բոլոր քրիստոնյա ժողովուրդների կայուն օգնությունը:

Երրորդ. դրա փոխարեն, նա գտնում է, որ քրդական ցեղերի հանդեպ համակրանքի դրսևորումն ի զորու կլինի մեզինքն վանել այդ քրիստոնյա ժողովուրդների զգացմունքները: Նա նպատակահարմար չի համարում, հետևաբար, բացահայտորեն նպաստել ինքնավար Քրդստանի ստեղծմանն ըստ այն նախագծի, որը ներկայացվել է հոկտեմբերի 22-ի ձեր թիվ 3 զեկուցագրում:

Չորրորդ. կառավարությունն, այդուհանդերձ, նախատեսում է դրամի միջոցով քրդական ցեղերի ռազմական օգնությունը ձեռք բերելու հնարավորությունը և այդ առաջարկությունը ներկայացնում քրիստոնյական կառավարությանը: Եթե վերջինս դրան հավանություն տա, կարելի կլինի հանձնարարել փոխգնդապետ Շարլինյիսին փնտրելու միջնորդ՝ քրդական առաջնորդների հետ բանակցելու համար:

Հինգերորդ. զենքերալ Բերտելոյի հետ մեկտեղ քննարկեք այն պայմանները, որոնցով կարող է կարգավորվել հայերի նկատմամբ գործողության ծրագիրը և, անհրաժեշտության դեպքում, հարաբերություններ հաստատեք Նուբարի հիշատակած անձանց և հայկական կազմակերպությունների հետ, որոնք են՝ Էջմիածնի կաթողիկոսը, Կենտրոնական բյուրոն, Թուրքիայի հայ գաղթականների կոմիտեն, դոկտոր Չավրիկը, հայ առաջնորդ Անդրանիկը:

Վեցերորդ. հայեր այս առթիվ յուրաքանչյուր շահավետ առաջարկություն: Նույն հեռագիրը հղեք զենքերալ Բերտելոյին:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 894, ff. 77-78).

1 Ստորագրել է զենքերալ Ֆոշը:

**Լոնդոնում Ֆրանսիայի դեսպան պ. Պոլ Կամբրոնը՝
Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին**

Ճ. թիվ 1249:

Լոնդոն, 13-րդ դեկտեմբերի 1917 թ.:
(Ստացել են Կաթ. դեկտեմբերի 16-ին,
Քաղ. վարչ. դեկտեմբերի 17-ին):

Ձերդ գերագանցությունը բարեհաճել է այս ամսի 8-ի թիվ 3908 իր ճեպագրով՝ ինձ փոխանցել Արտաքին գործերի դեսպարտամենտի և Ռազմական նախարարության միջև փոխանակված երկու նամակների պատճենները, որոնք վերաբերում են հնարավոր գործողությանը Զրդստանում: Միևնույն ժամանակ նա ինձ խնդրում էր այս առիթով գործ հարուցել բրիտանական կառավարությանը:

Լորդ Հարդինգը, որի հետ ես գրուցել եմ այս հարցի շուրջ, այս կողմից որևէ փարձ անգուտ է համարում այն նույն պատճառներով, որոնք նշված են Ռազմական պ. նախարարին հղած՝ այս ամսի 8-ի ձեռ նամակում:

Այս կարծիքն առավել ևս կարևորություն է ստանում, քանզի լորդ Հարդինգը, որն իր դիվանագիտական կարիերայի ընթացքում եղել է Կոստանդնուպոլսում և Թեհրանում, անգլիացի այն քաղաքական գործիչներից է, որոնք լավագույնս իրազեկ են Փոքր Ասիայի գործերին:

(A.M.A.E., Guerre 1914-1918, Turquie, tome 894, f. 79).

**Ռումինիայում Ֆրանսիայի նախարար պ. Բոպուալ դը Սենտ-Օլերը՝
Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին**

Ճ. թիվ 192:

Յասսի, 13-րդ դեկտեմբերի 1917 թ.:
(Ստացել են Կաթ. 1918 թ. հունվարի 14-ին,
Քաղ. վարչ. հունվարի 19-ին):

Ես հիմնվում եմ վերջին նույնների 12-ի թիվ 174 իմ ճեպագրի՝ և այս ամսի 12-ի թիվ 747 իմ հեռագրի՝ վրա:

Համալրելու համար այն հրահանգները, որոնք ներկայացված են իմ վերոհիշյալ հա-

1 Արտատպված չէ: Այս հարցի մասին տես վերը թիվ 449 փաստաթղթի ծանոթագրությունները:
2 Տես վերը թիվ 417 փաստաթուղթը:
3 Տես վերը թիվ 447 փաստաթուղթը:

ղորդագրություններում, ես պատիվ ունեմ այս ծրարում Ձերդ գերագանցությանն ուղարկել մի գեկուցագիր, որը ելնում է տեղեկատվական ծառայությունից:

(A.M.A.E., Guerre 1914-1918, Turquie, tome 894, f. 80).

ՀԱՎԵԼՎԱԾ

**Յասսիում ֆրանսիական տեղեկատվական
ծառայության ծանուցագիրը**

Յասսի, 29-րդ (նոյեմբերի)/11-ը դեկտեմբերի 1917 թ.:

Հայկական հարցը

«Գերմանական քարոզչական բոլոր խմբերը մեկնել են կամ մեկնում են Կովկաս, որն ամբողջական մնացած գրեթե միակ տարածաշրջանն է և որտեղ հարուստ մթերային պաշարներ կան:

Մինչ Կերենսկու անհետացումը, Կովկասի տարբեր տարրեր շարունակում էին մնալ համախմբված: Այդ պահից ի վեր, վրացիները և հայերը բացահայտ պայքարի մեջ են մտնում Թիֆլիսի տարածաշրջանում տիրապետություն հաստատելու համար, որը պահանջում են երկու ժողովուրդները: Վրացիները վկայակոչում են Թիֆլիսի իրենց մայրաքաղաքի ունեցած պատմական դերը, հայերը հիմնավորում են, որ տարածաշրջանի բնակչության 70 %-ը բաղկացած է հայերից: Կազակները հայերի կողմում կլինեն, բայց Վրիմի բարարները, որոնք հենց նոր են հռչակել իրենց անկախությունը, անկասկած, բացահայտորեն կազակների դեմ են: Նրանք բազմաքանակ, կարգապահ և քաջարի մահմեդականներ են, որոնց հրահրել են թուրքերը:

Հարկ է նշել, որ վերջերս կայացված համաձայնությունից հետո, վրացիները և հայերն այնուամենայնիվ համաձայնության են հանգել ռազմաճակատը թուրքերից պաշտպանելու հարցում, բայց նրանք ֆրանսիացիներից և, մասնավորապես, բարձր հրամանատարությունից օգնություն են հայցում...»:

Օդեսայում մեր գործակալներից մեկից դեկտեմբերի 5-ին ստացված հեռագիրն ամփոփում է այն կացությունը, որում գտնվում են հայերը:

Այս նշումներին հարկ է ավելացնել.

Այն, ինչը հայերը խնդրում են ֆրանսիացիներին (և անգլիացիներին) իրենց մոտ ի կատար ածել՝ միանգամայն բարոյական է: Նրանք զգում են ռուսներին համակող սարսափը, որը ելնում է համեմատաբար կազմակերպված ու հանգամանքների բերումով խիզախ դարձած ազգությունից և երկյուղում են հետապնդումներից:

Դաշնակիցների սպանելի ներկայությունը նրանց համար երաշխիք է: Եթե նրանք նրանց շարքերում գտնվեն, հնարավոր չի լինի, օրինակ, նրանց անվերապահորեն մեղադրել Ռուսաստանի դեմ զենք բարձրացնելու հարցում և թաթարներին նրանց դեմ դուրս բերել: Ենթադրությունը թվում է հրեշավոր, սակայն պետք չէ մոռացության տալ, որ հայերին հովանավորելու պատրվակի ներքո, ռուսները նրանց նույնքան են ճնշել, ուրքան և թուրքերը:

Առճակատման հիմնական պատճառը պայմանավորված է այն փաստով, որ հայերը միայն Ռուսաստանում ունեն Սուրբ սինոդի ինքնավար և անկախ պաշտամունք:

Այս փաստը, ինչպես և նրանց անհագորթունը գործառնություններում, նրանց նկատմամբ հարուցել են ծուլ և շահագործվող վրացիների ու ռուս աստիճանավորների, որոնք ամենքն էլ պանսլավոնականության կողմնակիցներն են, ատելությունը:

Ամեն դեպքում, ռուսական հետապնդումներն անժխտելի են: 1906 թ. (կամ 1907 թ.) ռուսները, դժգոհ՝ հայկական եկեղեցին պաշտոնական կրոնական իշխանությունների ենթակայության ներքո դնելուն առնչվող իրենց պահանջին հետևած հայ պատրիարքի՝ կտրուկ մերժումից, հայերի դեմ էին հրահրել Ղլիմի մահմեդական թաքարներին: Այդ ժամանակ տեղի են ունեցել այնպիսի արյունոտ կոտորածներ, ինչպիսիք էին այն կոտորածները, որոնց ամոթը կրում է Թուրքիան:

Այս երեք տարիներին (հայերին, վրացիներին և թաթարներին) է, որ գերմանացիները ձգտում են սյսուհետև կրկին գծտեցնել:

Ռուսները խիստ վարկաբեկված են իրենց նախող գործողությունների պատճառով, որպեսզի կարողանան կարգ ու կանոն ապահովել: Միայն դաշնակիցները կարող են լինել այն տարրը, որն ի վիճակի է հաշտեցնել վրացիներին և հայերին ու ջլատել թաթարների գործողությունը:

Նմանապես հարկ է նշել, որ եթե բոլոր հայերը ներկայումս համախմբված են՝ թուրքերից ազատագրվելու կամ նրանցից պաշտպանվելու համար, ապա բոլորը չէ, որ համամիտ են Հայաստանի ապագա ճակատագրի հարցում: Թուրքիայի հայերը ցանկանում են այն տեսնել կատարելապես անկախ, Ռուսաստանի հայերը, ինքնակալության անկումից ի վեր, ցանկանում են այն ընդգրկել Ռուսական դաշնային հանրապետության կազմում:

Օղեսայի հեղափոխական կոմիտեից մենք պահանջել ենք Ֆրանսիայի նախարարին պաշտոնապես տեղյակ պահել իրենց հայրենակիցների պահանջներին: Այդ նպատակով մենք Յասսի ենք կանչել մի լիազոր ներկայացուցչի, որին հանձնարարված է իրավիճակը ներկայացնել Ֆրանսիայի սլաշտոնական ներկայացուցիչներին:

Արժանանալով Ռուսիայում Ֆրանսիայի նախարարի ընդունելությանը, նա նրան ներկայացրել է այն, ինչը հետևում է.

Օղեսայի հայկական հեղափոխական կոմիտեն հայցում է Ֆրանսիայի օգնությունը: Միայն վրացի և հայ կամավորներն են (վերջիններին քիվը հասնում է 20000-ի), որ այս պահին սեփական ուժերով արդյունավետորեն կպաշտպանեն Կովկասի ռազմաճակատը:

Ռուսները, որոնք մինչ այժմ հոգում էին այս կորսույթների ծախսերը, կորցրել են հետաքրքրությունը դրանց հանդեպ: Հայերի ֆինանսական միջոցները թույլատրում են դիմակայել ներկա կացությանը, բայց դրանք անբավարար են այն պարագայում, եթե ցանկություն առաջանա ընթացք տալ Կերենսկու թույլատրած՝ ռուսական բանակներում սփռված հայկական տարրերի դուրս բերմանը և Կովկասում նրանց համախմբմանը վերաբերող նախագծին: Այս կերպ հնարավոր կլինի ունենալ ավելի քան 150000 մարդուց բաղկացած մի բանակ, որոնք առավել ևս լի են վճռակամությամբ մարտնչելու թուրքերի դեմ, քանի որ թե՛ իրենք և թե՛ իրենց ընտանիքների անդամները, պարտության դեպքում դատապարտված են հատուցելու կյանքի գնով: Մեզնից սպաներ են խնդրում զինակոչիկներին ուսուցանելու և, մասնավորապես, երկաթուղային, մատակարարումների, ռազմամթերքների և այլ ծառայությունները կազմակերպելու համար:

Նորերս ստեղծված ստորաբաժանումները նյութապես ապահովելու համար ևս անհրա-

1 Ն (որին սրբազնություն) և Երիմյանը:

ծեշտ կլինի դրամ:

Այս գործերն ամենանշանակալից դերը կունենան այն դեպքում, երբ ռուսիական բանակը նահանջի դեպի Կովկաս:

Անգլիացիները հենց նոր մի առաքելություն են ուղարկել հայերի մոտ:

(Ստորագրված է)՝ Վլոտներ:

(A.M.A.E., Guerre 1914-1918, Turquie, tome 894, ff. 81-83).

452

**Թիֆլիսում Ֆրանսիայի հյուպատոս պ. Նիկոլան՝
պ(արոնայ)ք Արտաքին գործերի նախարար Ստեֆան Պիշոնին,
Պետրոգրադում Ֆրանսիայի դեսպան Նուլենսին**

Ճ. թիվ 77, 136:

Թիֆլիս, 13-ը դեկտեմբերի 1917 թ.:
(Ստացել են Կար. 1918 թ. հունվարի 14-ին,
Քաղ. վարչ. կունվարի 15-ին):

Երեկ երեկոյան պ. Շարդինյիի հետ ես տեսակցության էի գնացել դ(ոկտո)ր Չավրիկին: Պ. Ահալունյանը նրան տեղյակ էր պահել այն հեռագրին, որը ես առավոտյան ստացել էի մեր դեսպանից: Այս առթիվ նա մեզ ասաց, որ ռուսահայերը, ինչպես և գնդապետ Թորգոմը, չեն կարծում, թե հայերը կարող են Մեծ Հայքի գաղափարն ընդունել մեծ ուրախությամբ: Դա կնճամբվի ռուսական նվաճման և գերմանացիներն այդ չեն թույլատրի: Վրացիները և թաթարները կսարսափեին այն ծավալներից, որոնք կընդունեն Հայաստանը և բացի դրանից, այդ կազմավորումն անհարկ կլինեն հաշտության ռուսական ծրագրի հետ, որն ասում է՝ «ո՛չ անեքսիաներ, ո՛չ ռազմատուգանքներ»: Ավելի ուշ, դա ակնհայտորեն երազ կլինի, բայց այս պահին նպատակահարմար կլինի չափավորել հավակնությունները: Ես բառացիաբար կրկնում եմ այն, ինչ մեզ ասաց դ(ոկտո)ր Չավրիկը:

(A.M.A.E., Guerre 1914-1918, Turquie, tome 894, f. 84).

453

**Բանակի շտաբի 3-րդ բաժանմունքի ծանուցագիրը՝
Հայկական հարցի մասին**

Գաղտնի:

Փարիզ, 14-ը դեկտեմբերի 1917 թ.:

Ռուսական կենտրոնական իշխանությունը, հեղափոխությունից ի վեր, ծնունդ է տվել Կովկասի բնիկների (թաթարների, քրդերի, վրացիների, հայերի և այլոց) հոգում անկախու-

թյան գաղափարների, որոնք այստեստատվում են, մասնավորապես, այս խմբավորումներից յուրաքանչյուրի՝ սեփական բանակը կազմավորելու ցանկությամբ, որը ռուսների դավաճանության դեպքում ի վիճակի լինի պաշտպանել երկիրը թուրքերից:

Թվում է, թե անկախության այս գաղափարներն ավելի շեշտակիորեն են արմատավորվել հայերի շրջանում, որոնց՝ դաշնակիցների հանդեպ տաժաժ գագառումներին կարելի է վերաբերվել որոշակի վստահությամբ, քանի որ թուրքերի հանդեպ ատելությունը, թվում է, թե նրանց պետք է մեր կողմում գամի:

Վաղուց ի վեր, դաշնակիցների ուշադրությունը, մասնավորապես, փոխգնդապետ Շարդինյին՝ և զեներալ Նիեսելը՝ հրավիրել են այն շահագրգռվածության վրա, որն Անտանտը կունենա հայկական բանակի ստեղծմանը նպաստելու հարցում:

Պ. Նուլենը գիտակցում է նաև այն, որ եթե ռուսները Հայաստանից գործերը դուրս բերեն, ապա՝ այդ դեպքում, հետաքրքրությունից զուրկ չի լինի նրանց փոխաբինումը հայերով: Հայկական ազգային կոմիտեի երեք անդամներ նրան են դիմել՝ դաշնակիցների ֆինանսական աջակցությամբ հայկական բանակ կազմավորելու նպատակ հետապնդող մի քայլով, որի անձնակազմը գերազանցի ներկայումս գոյություն ունեցող 6 գ (նոթ) թը (18 գումարտակները):

Պ. Նուլենն այս լիազոր ներկայացուցիչներին հստակացրել է զեննրալ Նիեսելի հետ՝ նախատեսվող ռազմական կազմավորումների ստեղծման հարցը տեխնիկական տեսանկյունից ուսումնասիրելու համար:

Մյուս կողմից, Թիֆլիսում մեր հյուպատոսին նա կոչել է կապ պահպանել այդ քաղաքում Հայկական ազգային կոմիտեի հետ, ուր վերջերս գումարվել էր հայկական ազգային վեհաժողովը:

Ռուսաստանում կամ Անտանտի հետ հարաբերությունների մեջ ընդգրկված երկրներում գտնվող հայ բնակչության թիվը կարող է հասնել մոտավորապես 4500000-ի, որը բաշխված է հետևյալ կերպ՝

Ռուսաստանում.....	2000000
Կովկասում.....	1800000
Թուրքիայից Կովկաս և ազատագրված մահանգներ գաղթածներ	300000
Ռուսական բանակում գտնվող զինվորներ.....	125000
Միացյալ Նահանգներում	մոտավորապես 300000:

Անհրաժեշտ է, այդուհանդերձ, նշել, որ կանայք կազմում են այս բնակչության գերակշռող մասը, որը թուրքերի իրականացրած կոտորածների հետևանքն է, որոնք մեծապես նվազեցրել են արական բնակչության թիվը: Այնուամենայնիվ, Նուրբար փաշան գտնում է⁷, որ հնարավոր կլինի ստեղծել բավական նշանակալից մի բանակ:

1 Փաստաթղթի ծանոթագրությունը. «Փոխգնդապետ Շարդինյիի օգոստոսի 18-ի թիվ 36 և 37 գեկուցագրերը»: Տե՛ս ստորև թիվ 385 փաստաթուղթը:

2 Փաստաթղթի ծանոթագրությունը. «Գեներալ Նիեսելի թիվ 2 և 3 ընդհանրական գեկուցագրերը»:

3 Փաստաթղթի ծանոթագրությունը. «Պ. Նուլենի 1917 թ. նոյեմբերի 23-ի թիվ 1737 հեռագիրը»: Տե՛ս վերը թիվ 421 փաստաթուղթը:

4 Փաստաթղթի ծանոթագրությունը. «Արտասահմանյան մամուլի բյուլետեն, 7-ը հոկտեմբերի 1917 թ.»:

5 Փաստաթղթի ծանոթագրությունը. «Գեներալ Սարդեյի թիվ 4 ընդհանրական գեկուցագիրը»:

6 Փաստաթղթի ծանոթագրությունը. «Տեղեկությունները տրամադրել է Փարիզում Հայկական պատվիրակության նախագահ Պոլոս Նուրբար փաշան, Տրոյկադերոյի պողոտա, 12»:

7 Փաստաթղթի ծանոթագրությունը. «Արտաքին գործերի նախարարության՝ դեկտեմբերի 5-ի թիվ 4424 նամակը»:

1/ Հայկական կանոնավոր զորքերի միջոցով, որոնք բաղկացած են ռուսական բանակից իրենց օջախները վերադարձած կամ Հայկական ազգային կոմիտեի կողմից ետ կանչված զինվորներից:

2/ Կովկասում զանգվածաբար ոտքի հանված հայ աշխարհագրաբանների միջոցով: Թվում է, թե հնարավոր կլինի հենվել նվազագույնը 30000 կամավորի վրա:

Բայց հայերին հարկ է հենց այժմ ֆինանսական օգնություն հատկացնել՝ գնելու համար զենքեր և ռազմամթերքներ, որոնք ռուս զինվորները վաճառում են էժան գնով: Այս առումով, Արտաքին գործերի նախարարը ցանկալի էր համարում, որ փոխգնդապետ Շարդինյին և Կովկասի բանակներին կցված անգլիացի ռազմական կցորդը, Թիֆլիսի բանակից՝ դաշնակից երկրների գանձարանի հաշվին դրամ վերցնելու թույլատրություն ունենային:

Այդուհանդերձ, Արտաքին գործերի նախարարությունն անհրաժեշտ կհամարի հայերի և վրացիների միջև մի նախնական համաձայնություն կայացնել և այդ ոգով դիմել է Նուրբար փաշային: Վերջինս, հենց նոր Կովկասի հայ առաջնորդներին և, մասնավորապես, խմբապետ Անդրանիկին մի կոչ է հղել՝ հայ աշխարհագրաբաններին զանգվածաբար ոտքի հանելու² և կենտրոնական կազմակերպություն ձևավորելու համար, որն ի վիճակի լինի պաշտպանել ազատագրված հայկական մահանգները և հայերով բնակեցված Կովկասի տարածքների անձեռնմխելիությունն ապահովելու նպատակով համախմբել Կովկասի դիմադրական բոլոր ուժերը:

Իրականում Կովկասում արդեն գոյություն ունի «Հարավային Կովկասի ժամանակավոր կառավարություն» անունը կրող մի ղեկավար կենտրոնական կազմակերպություն³, որն ընդգրկում է տարբեր ժողովուրդների և քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչների: Այս կառավարությունը, որի գաղափարները, ըստ էության, հստակորեն հակադրվում են ծայրահեղական կուսակցության գաղափարներին, այդուհանդերձ, հարկադրված է բանակցել այդ կուսակցության հետ և թվում է, թե ներկայումս հակված չէ անջատվելու Ռուսաստանից⁴:

Կովկասի բանակներում դաշնակիցների ռազմական ներկայացուցիչները սակայն, Հարավային Կովկասի ժամանակավոր կառավարության հետ հաստատուն հարաբերություններ են պահպանում: Կարևոր վարկերով աջակցվող նրանց գործողությամբ, հնարավոր կլինի, հավանաբար, եթե նկատի ունենանք ծայրահեղականների դեմ Կովկասում աճող ընդդիմությունը, հասնել այն բանին, որ Կովկասում վերակառուցվի բավական հզոր դիմադրական կենտրոն:

(A.M.G., 16 N 3060).

1 Փաստաթղթի ծանոթագրությունը. «Թիվը տրամադրել է Նուրբար փաշան»:

2 Փաստաթղթի ծանոթագրությունը. «Ա (րտաքին) գ (ործերի) ն (ախարարության) դեկտեմբերի 8-ի թիվ 4477 նամակը»:

3 Փաստաթղթի ծանոթագրությունը. «Գեներալ Նիեսելի նոյեմբերի 2-ի թիվ 6092 հեռագիրը»:

4 Փաստաթղթի ծանոթագրությունը. «Գեներալ դը Լա Պանուսի դեկտեմբերի 11-ի թիվ 1287 հեռագիրը»:

Թիֆլիսում Ֆրանսիայի հյուպատոս պ. Նիկոլան պ(արոնայ)ք Արտաքին գործերի նախարար Ստեֆան Պիշոնին, Պետրոգրադում Ֆրանսիայի դեսպան Նուլենսին

Ճ. թիվ 79, 138:

Թիֆլիս, 16-ը դեկտեմբերի 1917 թ.:
(Ստացել են Կար. 1918 թ. փետրվարի 5-ին,
Զաղ. վարչ. փետրվարի 6-ին):

Շաբաթ օրը, դեկտեմբերի 15-ին, ժողովի ժամանակ, որի մասին արդեն տեղեկացրել են Ձերդ գերագանցությանը, ես բավականաչափ զարմացա, տեսնելով, թե իրադարձություններն ինչպես են ընկալում իմ գործընկերները կամ, հավանաբար, պետք է ասեմ, Ամերիկայի իմ գործընկերը¹:

Գնդապետ Թորգոմն ինձ մի նամակ է գրել, օգնելու համար պատասխանելու Ձերդ գերագանցության դեկտեմբերի 13-ի թվակիր հեռագրին²: Երբ ես ցանկացա տեղեկացնել այս նամակի բովանդակությանը, դա իմ դեմ համընդհանուր վրդովմունք առաջ բերեց: Ինձ հայտնեցին, որ ցանկություն չունեն ունկնդրելու Թորգոմից ստացված որևէ տեղեկություն:

Այդուհանդերձ, ես գտնում եմ, որ Հայաստանի գործերին քաջատեղյակ լինելու համար, հարկ է հարցաքննել հայ առաջնորդներին: Այսպես, ես հարցաքննել եմ գնդապետ Թորգոմին և Հայկական ազգային խորհրդի նախագահ պ. Ահարոնյանին: Թվում է, թե ես անիրավացի էի: Ձերդ գերագանցությունը կգտնի այս ծրարում գնդապետ Թորգոմի նամակի պատճենը³: Ինչ վերաբերում է պ. Ահարոնյանին, ես պետք է Շարդինյիի հետ այսօր նրան տեսակցության գնամ, ստանալու համար այն պատասխանը, որը նա ինձ խոստացել է: Բայց ես պետք է ասեմ, որ նա ևս ինձ ասել է, թե համաձայնություն, համենայն դեպս, այս պահին, գոյություն չունի: Պ. Շարդինյին ասում է, որ, հավանաբար, տարածայնություններ կան որոշ մանրուքներում, բայց այդ տարածայնությունները չպետք է հասնեն Ձերդ գերագանցությանը:

Ես ցանկանում եմ ասել, որ այս պարոնների՝ Թորգոմի և պ. Ահարոնյանի կարծիքներն իմ գործընկերներին ավելորդ են թվացել և այդ նրանց կարծիքն է, պարոն նախարար, որը հեռագրով ձեզ եմ հաղորդել: Դա իմ կարծիքը չէ, որովհետև ճիշտն ասած, ես դեռևս զարմացած եմ այն ամենից, ինչ լսել եմ: Հավանաբար, Ամերիկայի պ. հյուպատոսն իրավացի է, հավանաբար, անիրավացի, ամեն դեպքում, նա հստակորեն, որոշակիորեն, համառորեն պնդել է, որ իր կարծիքով, Հայաստանի համար արևմտյան աջակցությունն ապահովելու առաջին պայմանն այն է, որ վրացիները և հայերն ամբողջությամբ լքեն գործերի կառավարումը և հյուանդանոց ենթարկվեն հյուպատոսներին: «Ես վստահություն չեմ տածում, - հայտարարել է նա, - ո՛չ ռուս զինվորականների, ո՛չ շտաբի, ո՛չ կառավարության հանդեպ»: Անձամբ պ. դր Շարդինյին դրանից ցնցվեց, այսօր առավոտյան նա չթաքցրեց ինձին, որ ռազմական կցորդի կարգավիճակով չի կարող թույլատրել պ. Վիլյուզիի Սմիթին դառնալ

1 Պ. Վիլյուզիի Սմիթը:
2 Տես վերը թիվ 448 փաստաթուղթը:
3 Արտատպված չէ:

հայերի միահեծան զլխավոր հրամանատարը: Այդուհանդերձ, նա ընդունում է, որ այդ նույն անձնավորությունը կարող է լինել Ամերիկայի ռազմական կցորդը: Այն պայմանները, որոնցով այս պարոնայք ընդունում են, որ հայերին կարելի է ֆինանսական օգնություն հատկացնել, հնարվել են, ես դրան հավատում եմ, իրենց իսկ կողմից և այս պահին անտեղյակ եմ այն բանին, թե այդ պայմաններն ի՞նչ տպավորության են գործել: Ինձ չհաջողվեց որոշակիորեն իմանալ, թե ի՞նչի էին ուզում հանգել և կամ թե արդյո՞ք այդ Հարավ-արևելյան դաշնությունն իրականում առաջարկում էր ամուր հող, թե ոչ: Դա վերածվում է միանգամայն պարտադիր պայմանի, և քանի որ այս պարոնայք այս հարցում ունենին միասնական դիրքորոշում, ինձ մնում էր միայն խոնարհվել: Այնուհետև՝ բավականին երկարատև և ըստ իս՝ բավականին անիմաստ վիճաբանություն ծայր առավ գեներալ Շորի և Շարդինյիի միջև այն հարցի պարզաբանման շուրջ, թե թուրքահայերից ինչպի՞սի գորքեր է պետք կազմակերպել՝ կանոնավոր, թե՞ անկանոն: Պ. Շորն առաջինների կողմնակիցն էր, մի բան, որը պ. Շարդինյին համարում էր անընդունելի: Ողջամտություն ունեցան հարցը հետաձգելու մինչ այն պահը, երբ Անդրանիկը Թիֆլիսում լինի: Ֆինանսական փոխառության հարցը տեղիք տվեց բավական խճճված վիճաբանության, որը համառոտակի ամփոփված է իմ հեռագրում: Ամերիկայի իմ գործընկերն առաջադրեց հետևյալ թվերը. 60 միլիոն ռուբլի՝ անհապաղ: Մինչ ռուսական հունվարի 1-ը՝ 250 միլիոն ռուբլի, իսկ այնուհետև՝ քաղաքացիական բյուջեի համար ամսական՝ 40 միլիոն ռուբլի: Այս պահին ռազմական բյուջեն չի կարող սահմանվել, բայց այն կլինի ավելի նվազ, քան քաղաքացիական բյուջեն, «եթե հնարավոր լինի ձեռքբառալով ռուսական 600000 զինվորից, որոնք գտնվում են Սմիթի ռազմաճակատում»: Ինչ վերաբերում է թուրքերին¹, 30 օրվա ընթացքում հնարավոր կլինի ձեռքի տակ կազմ ու պատրաստ ունենալ կանոնավոր գորքերում ընդգրկված 10000 մարդու: Վիճաբանությունը հենց այստեղ է ծագել:

Պ. Շարդինյին հիշատակեց, որ անգլիական կառավարությունը խոստացել է ամսական 12 միլիոն ռուբլու հասնող փոխառություն, բայց որ այդ փոխառությունը հետաձգվել է բոլշևիկյան իրադարձությունների պատճառով: Իմ գործընկերները հայտարարեցին, որ այդ լուրն իրենց հայտնի չէ:

Նիստի ավարտին գեներալ Շորը շրջվելով դեպի ինձ, ասաց. «Իմ թանկագին բարեկամ, մասնավորապես, վրացիների նկատմամբ մի տաժեք որևէ վստահություն, իսկ հայերի հանդեպ տաժեք խիստ անորոշ վստահություն»: Ինչպես Ձերդ գերագանցությունը կարող է տեսնել, այս պատմության մեջ ոչ մի հստակություն չկա*:

Հ. Գ. - 17-ը դեկտեմբերի 1917 թ.: Այն ժողովի ժամանակ, որը երեկ կայացավ Հայկական ազգային խորհրդում, այս պարոնայք մեզ՝ Շարդինյին և ինձ ասացին, որ վրացիների հետ համաձայնությունը հիյրավի կատարյալ չէ, բայց շատ կայուն ուղու վրա է: Այն պահանջը, որը նրանց Հարավ-արևելյան դաշնությանը կցված տեսնելու հարցում ձևակերպում էր պ. Շարդինյին (և այս առթիվ ես ստացել եմ բոլոր հնարավոր բացատրությունները)՝ Ֆրանսիայից փոխառություններ ստանալու համար, լավ ընդունելության չի արժանացել: Հայերը շատ են վախենում թաթարներից և դրդված այն երկյուղից, որ թաթարները կարող են գալ և հարցին վերջնական լուծում տալ, չեն ցանկանում անել որևէ բան, որը կարող է նմանվել իրենց ուժերի բազմապատկմանը:

Նմանապես խոսք է եղել այն տպավորության մասին, որն առաջ է եկել գաղտնի պայմանագրերի հրապարակման պատճառով, որոնք վկայում են, որ դաշնակից տեղություն-

1 Մխալ է. հավանաբար՝ թուրքահայեր:
* Նախարարի ձեռագիր ծանոթագրությունը. «Հատկապես այն ձևով, ինչպես այն ներկայացված է»:

ները միմյանց միջև բաժան-բաժան են անում Հայաստանի հողը Յրանց [sic] անկախությունը հռչակելու փոխարեն: Նրանք նույնիսկ ասում են, որ Ֆրանսիան և Անգլիան հարկադրաբար են գործել, բայց շատ են ձգտում, որ երկու տերությունները մի հայտարարությամբ հանդես գան, որը նախատեսի Հայաստանի ինքնավարությունը: Որոշվել է այս հարցն ուսումնասիրելու համար մեզ ուղարկել մի նոր հրավեր:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 894, ff. 87-88 v).

455

Լոնդոնում Ֆրանսիայի դեսպան պ. Պոլ Կամբոնը՝ Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին

Հ. թիվ 1886: Գաղտնի:

Լոնդոն, 18-ը դեկտեմբերի 1917 թ., ժ. 21-ին:
(*Ստացել է* Զաղ. վարչ. դեկտեմբերի 18-ին):

Պատասխան ձեր թիվ 5201 հեռագրին¹:

Օդեսայի և Թիֆլիսի հայկական կոմիտեները դիմել են բրիտանական կառավարությանը, ինչպես նաև ֆրանսիական կառավարությանը: Միջազգային կորպուսներից շուտով Կովկաս կուղարկվեն մի անգլիացի զեներալ և սպաներ, հրաման ունենալով ռուս զինվորների վաճառած բոլոր ռազմամթերքները գնելու և վրացիներից ու հայերից մի կորպուս ձևավորելու մասին: Հուզ է տարվում նաև Բարաթովի ռուսական կորպուսը պահպանելու մասին, որն օժանդակում է Միջազգային բանակի աջ թևին: Ռումինիա գործողված մեր սպաներին կարելի կլինի հանձնարարել կազմակերպելու Ուկրաինայի ուժերը:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Balkans*, tome 357, f. 33).

456

Խորհրդի նախագահը, Ռազմական նախարարը՝ Ռումինիայում ֆրանսիական ռազմական առաքելության ղեկավար, գեներալ Բերտելոյին

Հ. թիվ 13082/3: Գաղտնի:

Փարիզ, 19-ը դեկտեմբերի 1917 թ.:

Դեկտեմբերի 13-ի 12560 հեռագրի՝ շարունակությունը:

1 Արտատպված չէ:
2 Ստորագրել է գեներալ Ֆոշը:
3 Չի հայտնաբերվել:

Առաջին. – Լոնդոնում Ֆրանսիայի դեսպանը՝ տեղեկացնում է Միջազգային կորպուսից անջատված, գեներալներից մեկի հրամանատարության ներքո դրված մի անգլիական առաքելություն մոտ ապագայում Կովկաս ուղարկելու մասին՝ ռուս զինվորների կողմից այդտեղ վաճառվող զենքերը և հանդերձանքները գնելու և վրացիներից ու հայերից մի կորպուս ձևավորելու համար²:

Երկրորդ. – Համաձայն Յասսիում Ֆրանսիայի նախարարի առաջարկության³, ես գտնում եմ, որ իմաստ ունի Կովկասում մեր գործողությունը համակցել բրիտանական գործողությանը, հետամուտ լինելով երկակի նպատակի, այն է՝ գորավիզ լինել վերջինիս և պահպանել Ֆրանսիայի վարկը Կովկասի բրիտանոնյանների շրջանում:

Երրորդ. – Գեներալ Նիեսելի հետ մեկտեղ շտապ քննարկեք այս հարցը և ճշգրտեք, թե արդյո՞ք շահավետ կլինի բրիտանական առաքելությանը հավելել՝ վերջինիս հետ սերտ համաձայնությամբ գործող ֆրանսիական մի առաքելություն, որի ղեկավարը կալադ է լինել գնդապետ Շարլինյին:

(Հեռագիրը փոխանցվել է գեներալ Նիեսելին):

(A.M.G., 4 N 62).

457

Լոնդոնում Ֆրանսիայի ռազմական կցորդ, գեներալ դը Լա Պանուսը՝ Խորհրդի նախագահ, Ռազմական նախարար պ. Կլեմանսոյին

Ճ. թիվ 8501:

Լոնդոն, 19-ը դեկտեմբերի 1917 թ.:

Թուրքահայերը կկարողանան մեկ ամսում ոտքի հանել 10000 մարդու Սալմասի և Ուրմիայի շրջաններում և հակված կլինեն հանգանակելու 5-ից 10 միլիոն ռուբլի:

Հայ առաջնորդ Անդրովիկը [sic]⁴ գեներալ Շորին հայտնել է, որ կարող է ոտքի հանել 20000 անկանոն զինվորների՝ 100000 ռուբլով և 3 ամիս կերակրել 40000-ի՝ 300000 ռուբլով: Նա խնդրում է 40 անգլիացի սալաների, ինչպես նաև հանդերձանքներ, զենքեր և այլն:

Ձևավորման ընթացքում գտնվող գեներալ Նազարբեկովի հայկական կորպուսը կհամաձայնվի Պարսկաստանում կռվել անգլիացիների հետ կապի մեջ գտնվելով, բայց կգերադասի, որ իրեն ուղարկեն Վանի կողմերը:

Գեներալ Ավերիանովը, նախկին գլխավոր բնակարանապետը, հավանաբար, հայտարարել է, որ ինքը ոտքի կհանի թուրք-հայկական աշխարհագոր, որը Վան-Տրապիզոնի ռազմաճակատում կկարողանա ջոկատաշրջայի մնան ինչ-որ մի բան ստեղծել, եթե իրեն տրվեն 20000000 ռուբլի, որի վերահսկումն ինքը կհամաձայնվի իրականացնել դաշնակիցների նախարարների հետ մեկտեղ:

Հիշեցվել է, որ Կովկասի ռուսական ռազմաճակատի երթագուցակում տեղ են զբաղեց-

1 Պ. Պոլ Կամբոնը:
2 Այս հարցի մասին տե՛ս թիվ 455 փաստաթուղթը:
3 Պ. Բուպուալ դը Սենտ-Օլերը: Այդ առաջարկության մասին տե՛ս վերը թիվ 447 փաստաթուղթը:
4 Իմա՝ Անդրանիկ:

նում 6 հայկական և 4 վրացական զուսարտակներ:

Հայերը կարգապահ են, բայց վրացիները մասնատված են ներքին թշնամություններով: Ըստ զեներալ Շորի՝ ասորիները (որոնց թիվը ներկայումս հասնում է 2700 մարդու) խնդրում են, որ իրենց անձնակազմը, անգլիացի սպաների հետ մեկտեղ, հասցվի 6000 մարդու: Բրիտանական շտաբը վճռել է Կովկաս ուղարկել 1 զեներալի և 20 սայայի:

(A.M.G., 4 N 62).

Լոնդոնում Ֆրանսիայի ռազմական կցորդ, զեներալ դը Լա Պանուսը՝ Խորհրդի նախագահ, Ռազմական նախարար պ. Կլեմանսոյին

Հ. թիվ 1313, 1314:

Լոնդոն, 21-ը դեկտեմբերի 1917 թ.:

Դեկտեմբերի 5-ից ի վեր Կովկասի ամբողջ ռազմաճակատում կնքված զինադադարը պետք է հարատևի մինչև հաշտության ստորագրումը, այն պայմանով, որ խզման մասին նախապես հայտարարվի 14 օր առաջ:

Դեկտեմբերի 2/15-ից ի վեր, համակենտրոնացման նպատակ հետապնդող շարժումները դադարել են: Ձինադադարը կիրառվում է նաև Սև ծովի նավատորմում: Ռուսական 1-ին և 2-րդ կորպուսները թողնում են իրենց դիրքերն առանց հրամանի: Նրանց փոխարինելու համար, Շ-ը ջանում է կազմավորել կամավորական կորպուսներ:

(A.M.G., 4 N 62).

Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնը՝ Պետրոգրադում Ֆրանսիայի դեսպան պ. Նուլենսին

Հ. թիվ 2408:

Փարիզ, 21-ը դեկտեմբերի 1917 թ., ժ. 22-ին:

Ռազմական կոմիտեն որոշել է առանձնացնել 20 միլիոն ռուբլու հասնող մի զուսար՝ հայկական ռազմական ուժ կազմակերպելու համար: Այդ զուսարը կդրվի Կովկասի բանակի ղեկավարի տրամադրության ներքո, որն այն կօգտագործի փոխզնդապետ Շարդինյիի հսկողությամբ:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 894, f. 105).

Պետրոգրադում Ֆրանսիայի դեսպան պ. Նուլենսը՝ Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին

Հ. թիվ 1903:

Պետրոգրադ, 21-ը դեկտեմբերի 1917 թ., ժ. 21.30-ին:
(Ստացվել է դեկտեմբերի 23-ին, ժ. 6.20-ին):

21-ը դեկտեմբերի: Ես պատասխանում եմ ձեր 3366 հեռագրին¹:

Քայլը, որով Օլեսայի հայերը դիմել են Ռուսինիայում մեր նախարարին², ինչպես դուք հարկ եք ունեցել հավաստել՝ նույնպիսին է, որով ինձ դիմել են Հայկական ազգային կոմիտեի ներկայացուցիչները՝ սկսած նոյեմբերի 22-ից: 1737 իմ հեռագրի³ օգնությամբ դուք իրագրել եք այն շարունակությանը, որը դրան տվել եմ թե՛ Թիֆլիսում՝ մեր հյուպատոսին եղած հրահանգով և թե՛ Պետրոգրադում՝ մեր ռազմական առաքելության միջոցով: Այդ պահից ի վեր, պ. Նիկոլան և գնդապետ Շարդինյին հարցն անդադար քննարկել են տեղում: Բազում առիթներով զեներալ Նիեսելը, ամբողջությամբ հաշվի առնելով այն հատուկ դերը, որը Միջազգետքի բանակի հետ ունեցած կապի հետևանքով բաժին է ընկնում Կովկասում անգլիական առաքելությանը, նամակագրական կապ է պահպանել զեներալ Բերտելյի հետ այն ֆրանսիացի սպաների առիթով, որոնք իբրև հրահանգիչներ պիտանի են այնտեղ գործողվելու: Վերջապես, զեներալ Լավերնյը, որը դեռևս նոյեմբեր ամսին Հայաստանում էր, ինձ տեղեկացրել է, թե Սիլայայ Նահանգների հյուպատոսը Թիֆլիսում⁴ ինչպիսի համակրանքով է տոգորված Հայաստանի հանդեպ և, մասնավորապես, հայկական բանակը կյանքի կոչելու առիթով: Այսպիսով, թե՛ ես և թե՛ զեներալ Նիեսելը, Պետրոգրադում հետևել ենք այս գործերին անսպառ հետաքրքրությամբ:

Ձերը զերազանցությունը, հավանաբար, նպատակահարմար կզտնի այս առիթով հանգստացնելու պ. դը Սենտ-Օլեդին, որն իր մտախոգությունները և միջամտությունը հիմնավորում է «դեպի Կովկաս ռուսինական բանակի նահանջի» վարկածներով:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Balkans*, tome 357, f. 96).

Ինպարտամենտի ծանուցագիրը⁵

Դաշնակիցների գործողությունը Կովկասում

Փարիզ, 22-ը դեկտեմբերի 1917 թ.:

1 Արտաստված չէ:

2 Տես վերը թիվ 447 փաստաթուղթը:

3 Տես վերը թիվ 421 փաստաթուղթը:

4 Պ. Վիլլուգիի Սմիթը:

5 Նախարարի համար է:

Բազմաթիվ ամիսներ ի վեր, Փոքր Ասիայի ռուսական ռազմաճակատի արդյունավետ պաշտպանությունն ապահովվել է միայն վրացական և հայկական զինորով, որոնք ցանկանում են պաշտպանել ազատագրված տարածքների անկախությունը: Նոյեմբեր ամսից ի վեր, Ռուսաստանի Հայկական կենտրոնական կոմիտեն խնդրում է ազգային բանակ ստեղծել՝ փոխառությունների և դաշնակիցների հրահանգիչների միջոցով: Նոյեմբերի 23-ին, Պետրոգրադի կոմիտեի ներկայացուցիչները համանման քայլով դիմում են պ. Նուլենսին¹: Ամսվա վերջին օրերին, Կովկասի իշխանություններն ու շտաբն արտահայտվում են ծայրահեղականների դեմ և Թեհրանում Անգլիայի նախարարի՝ միջնորդությամբ, համառորեն հայցում բրիտանական կառավարության աջակցությունը: Գեներալ Շորն անմիջապես հարաբերություններ է հաստատում հայկական կոմիտեների հետ, այն դեպքում, երբ Միջագետքի բանակում նախատեսվում է կազմակերպել անգլիական ռազմական առաքելություն: Թեպետ բուլղարների առաջադիմությունների ազդեցության ներքո, գեներալ Պրժևալսկին դեկտեմբերի 10-ի սահմաններում Թուրքիայի հետ զինադադար է կնքել², Օդեսայի հայերը պ. դր Սենտ-Օլերին են դիմում ազգային բանակի կազմավորմանն առնչվող հարցով³: Դեկտեմբերի 13-ին պ. Կլեմանտո կարգադրում է գեներալ Նիեսելին գործել այդ ոգով⁴ և 17-ին գնդապետ Շարդինյիին 20 միլիոն ռուբլու սահմաններում մի վարկ է հատկացվում⁵:

Քրոստանում գործողություն ծավալելու հնարավորությունը մերժվում է: Փարիզի հայկական ազգային պատվիրակությունը մշտապես աշխատել է ի նպաստ դաշնակիցների:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 894, ff. 109-109 v).

Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշան՝ Ռազմական նախարարության Գերագույն խորհրդի մշտական զինվորական ներկայացուցիչներին

Ն:

Փարիզ, 22-ը դեկտեմբերի 1917 թ.:
(Ստացել է ՁՆԳԽ-ը դեկտեմբերի 23-ին):

Հենց որ Պետրոգրադից ես ստացա հայերի ազատագրած՝ Կովկասի և Թուրքիայի նահանգների պաշտպանության կազմակերպման վերաբերյալ այնպիսի կարևորություն ունեցող տեղեկություններ, որ շտապում եմ ձեզ հաղորդել, հաշվի առնելով այն հետաքրքրությունը, որը դրանք ներկայացնում են դաշնակիցների համար:

Վերջին նոյեմբերի 30-ին ինձ փոխանցված ծանուցագրերից հետևում է, որ հայերը, գու-

1 Այդ քայլի մասին տե՛ս վերը թիվ 421 փաստաթուղթը:
2 Սըր Չարլզ Մարլինգը:
3 Չինադադարի մասին տե՛ս վերը թիվ 420, 441, 458 փաստաթղթերը:
4 Այդ քայլի մասին տե՛ս վերը թիվ 447 փաստաթուղթը:
5 Պ. Կլեմանտոյի հրահանգների մասին տե՛ս վերը թիվ 449 փաստաթղթի հավելվածը:
6 Փոխգնդապետ Շարդինյիին հատկացված այս վարկի մասին տե՛ս 459 փաստաթուղթը:

մարելով ազգային կոնֆերանս, միասնաբար որոշում են կայացրել, ի դեպ, «բոլոր մատչելի միջոցներով, Կովկասի հայկական սահմանը թշնամուց պաշտպանելու և ամրապնդելու» վերաբերյալ: «Քանի որ այս հարցը Կովկասի հայերի համար ծայրաստիճան խրթին է, այն պետք է դիտվի իբրև պետության ռազմական խնդիր»:

Իբրև այս որոշման շարունակություն, ժողովն ընտրել է տասնհինգ անդամներից բաղկացած, մշտապես Թիֆլիսում գտնվող Ազգային խորհուրդ, որը ստանձնում է պաշտպանության կազմակերպման արդյունավետ ղեկավարումը:

Հետևաբար, խորհուրդը խորամուխ լինելով իրավիճակի բարդության մեջ, ստացել է հայ ազգի բոլոր կուսակցությունների օգնությունը՝ բացառապես ազգային զինված ուժ հրատապ կազմակերպելու համար: Ներկայումս նրա տրամադրության ներքո կան հայկական կանոնավոր զորքերի շարքում դասվող բազմաթիվ զնդեր: Միջոցներ են ձեռնարկվել, որպեսզի այն բոլոր հայ զինվորները, որոնք այժմ գտնվում են այլ ռազմաճակատներում կամ քիկունքում, Ռուսաստանի ներքին նահանգներում, որքան հնարավոր է արագ, ուղարկվեն դեպի Կովկաս, կազմավորելու հայկական զինված կորպուս, որը կմարտնչի բուրբակյան ռազմաճակատում: Ռուսական իրավասու ռազմական իշխանություններն արդեն տվել են իրենց համաձայնությունը: Մեծ տաղանդի տեր մի հայ գեներալի¹, որը պարզևատրվել է Ս(ուր)բ Գեորգի երկու խաչով և ներկայումս գերմանական ռազմաճակատում է, նախատեսում են նշանակել այդ կորպուսի հրամանատար:

Վճռվել է, որ հայկական զնդերը կհարունակեն մնալ ռուսական բանակի կազմում, սակայն կպաշտպանեն միայն ներկա ռազմաճակատի երկու կողմերում ձգվող հայկական առաձիգները:

Հայկական ազգային խորհուրդը Ռազմական նախարարությանը կցելու համար ընտրել է մի ներկայացուցիչ և այդ առթիվ մատնանշել Պետրոգրադի բանակի շտաբի պետ, գեներալ Բագրատունուն: Բայց վերջինս ձեռքակալվել է հոկտեմբերի 25-ի բուլղարական հեղափոխության ժամանակ և ժամանակավոր կառավարության անդամների հետ մեկտեղ ներկայվել բերդում:

Ի պատասխան այս գեներալին ազատ արձակելու խնդրանքին, որով Պետրոգրադի հայկական զաղուքը դիմել է իրավիճակը տնօրինող գերագույն մարմնին՝ ռազմահեղափոխական կոմիտեին, վերջինս համաձայնվել է նրան ազատություն շնորհել, եթե գեներալը համաձայնվի ստորագրել բուլղարական կառավարությունը ճանաչող մի հռչակագրի ներքո: Գեներալ Բագրատունուն, որը մերժել է, պահվել է բանտում:

Հայկական ռազմական կոմիտեի կարգավիճակով՝ նրան ժամանակավորապես փոխարինել է հայ գեներալ Տիգրանովը, որը Պետրոգրադում շտաբ և գրասենյակ ունի և որը նաև հաղորդակցվում է Ռազմական նախարարության ու դաշնակիցների ռազմական առաքելությունների հետ:

Ես նպատակահարմար եմ գտնում այստեղ նշել, հաշվի առնելով դրա կարևորությունը, մի հայտարարության մասին, որը հայ լիազոր ներկայացուցիչներին է արել անձամբ Լենինը: Նա նրանց հայտնել է, որ «իր կուսակցությունը բացարձակապես որևէ առարկություն չի ունենա ռազմակալված Հայաստանի լիակատար անկախության առթիվ»:

Զինվորական ուժերի կազմակերպելու և դրանք ռազմամթերքներով ապահովելու կարիքն ունեցող Հայկական ռազմական մշտական խորհուրդը չկարողանալով ապավինել բուլղարների ֆինանսական օգնությանը, դաշնակիցների ռազմական առաքելությունների հետ խորհրդակցելու համար մի պատվիրակություն է ուղարկել:

124 Գեներալ Նազարբեկովը:

Այս պատվիրակությունն արժանացել է Ֆրանսիայի դեսպան պ. Նուլենսի ընդունելության պատվին, որը նրա համար ամենաբարեհաճ ընդունելությունն է կազմակերպել և հայտնել, որ «Ֆրանսիան միշտ պատրաստ է աջակցելու հայերին և բարոյապես ու նյութապես օգնելու նրանց՝ հանուն անկախ Հայաստանի ստեղծման: Բայց դրա համար հարկ է, որ հայերն ունենան ազգային մարմին, լիազոր իշխանություն, որը կարողանա օգտվել ժողովրդի վստահությունից և լինի ազգային կառավարության նման մի բան»: Բանի որ լիազոր ներկայացուցիչները նրան պատասխանել են, որ «ռուսահայերի համար այդ մարմինը՝ Հայկական ազգային խորհրդի տեսքով հենց նոր է ստեղծվել Թիֆլիսում, իսկ մյուս կողմից, համայն հայության ճանաչված առաջնորդը Եվրոպայի համար Պողոս Նուրբար փաշան է, պ. Նուլենսը, որն անձամբ է ճանաչում Նուրբար փաշային, դրանք ընդունել է ի գիտություն, համառելով, որ այդ մարմինները պահպանվեն»:

Նրա խորհուրդներով, Ռազմական խորհրդի պատվիրակությունը հանդիպումներ է ունեցել ֆրանսիական, անգլիական, ամերիկյան ռազմական առաքելությունների ղեկավարների հետ, որոնք նույնպես նրան լավագույն ընդունելության են արժանացրել և նրանց ռազմական գործողությանն աջակցելու հարցում ամբողջությամբ երաշխավորելով իրենց կառավարությունների ցանկությունը, հայտնել են գործնականում զենքեր և ռազմամթերքներ հատկացնելու անհնարինության մասին՝ հաղորդակցության միջոցների կատարյալ բացակայության հետևանքով:

Այսպիսին է այն տեղեկությունների ամփոփումը, որոնք պաշտոնապես ինձ են հղել Ռուսաստանի իմ հայրենակիցները: Ինչպես դուք տեսնում եք, պարոնայք, Կովկասի հայերը բուշևիկյան շարժմանը չեն հարում և կարողացել են համաձայնության հանգել վրացիների, ինչպես նաև, ի դեպ, կազակների հետ, որոնք այսօր ծայրահեղականների դեմ ուղղված դիմադրության միջուկն են կազմում: Այսպիսին է այն արդյունքը, որի հետ մենք չէինք կարող հույսեր տածել և անհրաժեշտ է դրանից օգտվել՝ անմիջականորեն հայերին հնարավորություն ընձեռելու շտապ կազմակերպել զինված ուժ, որն այսօր, երբ զինադադար է կնքվել և օրեցօր կարող է հաշտություն կնքվել, որը չնայած Լենինի հայտարարությանը, կհանգեցնի հայկական ռազմաճակատից ռուսական զորքերի նահանջին, հնարավորություն կտա նրանց ունենալ կանոնավոր զորքերի գնդերից և կամավորական կորպուսներից բաղկացած՝ ուժասպառ եղող ռուսական զորքերին փոխարինելու ունակ ազգային բանակ: Նշանավոր Անդրանիկի և մեր այլ առաջնորդների կոչով, բոլոր կողմերից կամավորները կհորդան և կկազմավորեն ավելի քան 30-ից 50000 մարդուց բաղկացած նշանակալից մի օգնական ուժ, իենց որ նրանց զինելու հնարավորություններ լինեն: Բնականաբար, հարկ չկա մտածել ո՛չ զենքեր և ո՛չ ռազմամթերքներ նրանց ուղարկելու մասին, սակայն ըստ իմ տեղեկությունների՝ ռուս զինվորները վաճառում են իրենց զենքերն էժան գնով և հայերին օգնության հասնելու ու դիմադրական ուժերի ձևավորմանը նպաստելու միակ միջոցը կհանգի դրամական միջոցներ ուղարկելուն, որը նրանց կթույլատրի տեղում զենքեր գնել:

Մենք գտնում ենք, որ ունենալով դրամական նշանակալից միջոցներ, հնարավոր կլինի ոչ միայն մեր գործի կողմը գրավել մեծ թվով ռուս զինվորների, որոնք Հայաստանի տնտեսական երերուն կացության պատճառով վառ են խնամվում ու վատ կերակրվում և կրելով այսօր շատ ծանր տառապանքներ, ի հայտ են բերում շատ մեծ դժգոհություն, այլև արդյունավետ գործողություն իրականացնել հենց թուրքական բանակի դեմ, եթե տեղում՝ թուրքերի հետ գործարքներ վարելու հմտություն ունեցող, ճարպիկ բանակցություններ վարող ունենանք: Այն անելանելի պայմաններում, որոնցում նման բանակցություններ վարողի

ուղարկելու հարցում գտնվում են դաշնակիցները, Կովկասի ռազմական առաքելությունների ղեկավարները կկարողանան հայերի շլջանում, որոնց մեծ մասը թուրքերի հետ է գործ ունեցել, գործակալներ գտնել, որոնք նրանց ղեկավարության ներքո կկարողանան, հաջողության որոշակի գրավականներով, իբրև միջնորդներ նրանց ծառայել:

Թշնամու դեմ արդյունավետ գործողության նպատակով բոլոր ջանքերն ավելի համակցելու համար, ես կարծում եմ, որ հրատապ է այլտեղ ռազմական առաքելություն ուղարկելը, որը բաղկացած լինի այդ կազմակերպությանն օժանդակելու ունակ սպաներից:

Ի վերջո, այն օգնությունը, որը հանուն ընդհանուր շահի, դաշնակիցները կկարողանան հատկացնել Կովկասի ամբողջ տարածաշրջանին, քանզի հայերը գործում են իրենց հարևան վրացիների հետ համաձայնեցված, հանգում է նրանց տրամադրության ներքո անհապաղ դրամական միջոցներ դնելուն, որպեսզի նրանք կարողանան կազմակերպել իրենց գործողությունները և առանց ժամանակ կորցնելու գործել պաշտպանվելու համար և, եթե հնարավոր է, ռազմական առաքելություններ ուղարկելուն:

Հրավիրելով Ռազմական նախարարության Գերագույն կոմիտեի ուշադրությունն այն փաստերի վրա, որոնք հենց նոր շարադրեցի, ես չեմ կարող, այսպիսով, շատ համառել այն միջոցները հրատապ ձեռնարկելու շուրջ, որոնք պատիվ ունեցա ներկայացնել նրա հավանությանը:

(A.M.G., 4 N 62).

463

Խորհրդի նախագահը, Ռազմական նախարարը՝ Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին

Ձ. թիվ 13505/3: Գաղտնի:

Փարիզ, 24-ը դեկտեմբերի 1917 թ.:
(Ստացել են Կաթ. դեկտեմբերի 26-ին,
Քաղ. վարչ. դեկտեմբերի 31-ին):

Դեկտեմբերի 21-ի թվակիր մամակով¹, դուք ինձ փոխանցել էիք պ. դը Սենտ-Օլերի հարողագրությունը. դա վերաբերում էր այն օգնությանը, որը կարելի է հուսալ Կովկասի ժողովուրդներից²:

Համաձայն դեկտեմբերի 23-ի ֆրանս-անգլիական պայմանագրի, որի պատճենը ձեզ է հղվել³ և որը հենց նոր է սահմանել ֆրանսիական և անգլիական ազդեցության գոտիները Հարավային Ռուսաստանում, Կովկասի հայկական զորքերի կազմակերպման հարցի

1 Ստորագրել է գեներալ Գրաման:
2 Չի հայտնաբերվել:
3 Այդ օգնության մասին տե՛ս վերը թիվ 447 փաստաթուղթը:
4 Արտատպված չէ: 1917 թ. դեկտեմբերի 23-ի ֆրանս-բրիտանական պայմանագիրը ճշգրտում է երկու տերությունների ազդեցության գոտիները հետևյալ կերպ.
Անգլիական գոտի. կազակական տարածքներ, Կովկասի տարածքներ, Հայաստան, Վրաստան, Զրդստան:
Ֆրանսիական գոտի. Բեսարաբիա, Ուկրաինա, Ղրիմ:

կարգավորումը ներկայումս մտնում է բրիտանական կառավարության պարտականությունների մեջ:

Ես պատիվ ունեմ ձեզ տեղեկացնել, որ Ուոր Օֆիսին եմ հայտնում այն տեղեկությունները, որոնք Յասսիում գտնվող մեր նախարարի զեկուցագրի նյութն են դարձել:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 894, f. 122).

Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշան Գեպարտամենտին

Փարիզ, 24-ը դեկտեմբերի 1917 թ.:

Խնդրվում է այս հեռագիրը հղել՝

- 1/ Էջմիածին՝ Նորին սրբություն կաթողիկոսին,
- 2/ Թիֆլիս՝ Հայկական մշտական ազգային խորհրդին,
- 3/ Թիֆլիս՝ կամավորների առաջնորդ Անդրանիկին,
- 4/ Թիֆլիս՝ ազատագրված վիլայեթների գլխավոր կառավարչի տեղակալ դոկտոր Զավրիկին:

Ստացա Սարուխանովի զեկուցագրերը նոյեմբերի 30-ին: Ի սրտե շնորհավորում ենք ձեզ բոլոր կուսակցությունների միջև համաձայնություն հաստատելու և Ազգային մշտական խորհուրդ ստեղծելու առթիվ: Ազգային պատվիրակությունը ստացել է դաշնակիցների օգնությունը՝ Կովկասի և ազատագրված վիլայեթների պաշտպանությունը կազմակերպելու համար: Բայց դաշնակիցները համառոտ են հայերի ու վրացիների միջև համաձայնության կայացման և թաթարներին զգույշ վերաբերվելու անհրաժեշտության շուրջ: Ամեն գնով հարկ է խանգարել, որ վիլայեթները վերագրավվեն թուրքերի կողմից և գործադրել բոլոր ջանքերը, որպեսզի հայկական ազգային զեկուրի թիվն աճի և կամավորական կորպուսներն առավելագույն չափով վերականգնվեն: Դաշնակիցներն անհապաղ անհրաժեշտ դրամական միջոցներ և, առաջին իսկ հնարավորության դեպքում, ռազմական առաքելություններ կուղարկեն Թիֆլիս: Քանի որ ազատագրված նահանգները պահպանելու համար անհրաժեշտ է ունենալ մեր բոլոր ուժերի կատարյալ միաբանությունը, ռազմական գործողությունների իրականացման համար Ազգային պատվիրակությունը հույս է տալիս, որ հենվել ոչ միայն Կովկասի հայերի միջև, այլև գաղթականների ներկայացուցիչների հետ առկա կատարյալ համաձայնության և միասնական դեկլարության ներքո՝ ընդհանուր սերտ գործողության վրա: Միևնույն ուղիով հեռագրեք, թե ներկայումս որքա՞ն է Կովկասում արդեն համախմբված հայ զինվորների քանակը, իսկ ինչ վերաբերում է կանոնավոր զինվորներին ու կամավորներին, որքա՞նի եք ակնկալում հասնել՝ նկատի ունենալով, որ կստանաք բոլոր անհրաժեշտ դրամական միջոցները:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 894, f. 123).

Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշան՝ Սենի պատգամավոր պ. Ալբեր Տոմասին

Ն: Փարիզ, 25-ը դեկտեմբերի 1917 թ.:

Միայն այսօր կարողացա կարդալ ձեր հոդվածն ամսի 22-ի «Էնֆորմասիոնում»: Ես ցանկանում եմ դրա համար ոչ միայն ձեզ շնորհակալ լինել, այլև իմ ամբողջ երախտագիտությունը հայտնել, որ գրել եք, թե «նրանք, ովքեր ըստ էության առաջադրում են Թուրքիայի ամբողջականության հարցը, սխալվում են, և որ Անտանտի կառավարությունները պետք է ձեռնամուխ լինեն հասարակական կարծիքի առջև այդ ապացուցելու առաջադրանքի կատարմանը»:

Ինձ համար ոչ մի բան չէր կարող ավելի թանկարժեք լինել, քան այն հավանությունը, որը ես այստեղ գտնում եմ վերջին երեկոներից մեկի ժամանակ իմ ներկայացրած ծրագրին՝ ի պատասխան հակասություններով լի այն թեզի, որը սատարում են Օստրոքոպը և Բեյարը: Հավաստիացած ձեր հավանության և ազնվաբար աջակցության հարցում, ես այժմ մեծ հույսեր եմ տալիս:

Թույլ տվեք ինձ, օգտվելով այս առիթից, շատ սրտանց շնորհավորել ձեզ այսօր առավոտյան լույս ընծայված՝ Ազգերի լիգային նվիրված ձեր վառ հոդվածի առիթով:

Ձեր ապացույցը՝ խնդրի լուծված լինելու վարկածի եղանակով, ինչպես մաթեմատիկայում, գյուտ է, որն ավելի լավ, քան այդ կարող էին անել հատորները, բացահայտում է, թե որքան արդյունավետ կարող էր լինել Ազգերի լիգայի գործողությունը, եթե այն գոյություն ունենար նախքան այս պատերազմը և միաժամանակ ի հայտ է բերում, թե ինչպես է հնարավոր, այսօրվանից իսկ, հաջողությամբ ձեռնամուխ լինել դրա հիմնադրմանը:

Ես համոզված եմ, որ ձեր հոդվածը կհամոզի մեծ թվով մարդկանց, որոնք դեռևս չեն ըմբռնել գաղափարի մեծությունը և ոչ էլ այն անհամար հետևանքները, որոնք Ազգերի լիգան կարող է ունենալ վերջնական հաշտության համար:

(A.N., 94 AP 408).

Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնը՝ Վաշինգտոնում Ֆրանսիայի դեսպան պ. Ժյուսսերանին

Հ. թիվ 2378: Փարիզ, 26-ը դեկտեմբերի 1917 թ., ժ. 17-ին:

Ֆրանսիական և անգլիական նախարարների խորհուրդների տարբեր անդամների միջև այս ամսի 23-ին Փարիզում կայացած ժողովի արդյունքում որոշվել է, որ Ուկրաինայում դաշնակիցների գործունեությունը ղեկավարելու հոգսն այսուհետև վստահվելու է

Ֆրանսիային: Անգլիացիների գործողությունը կծավալվի Կովկասում: Ֆրանսիական ռազմական առաքելությունը, որը վաղուց ի վեր գտնվում է այս վերջին տարածաշրջանում և որի ղեկավարը փոխգնդապետ Շարլինյին է, կմնա, այդուհանդերձ, գեներալ Շորի առաքելության հետ կողք-կողքի, որը բրիտանական կառավարության ներկայացուցիչն է Կովկասի ռուսական բանակի շտաբում և կշարունակի մասնակցել նրա աշխատանքներին:

Վերջին ժամանակների իմ հաղորդագրությունները, ի միջի այլոց թիվ 2276, 2277 և 2278 իմ հեռագրերը, ձեզ տեղյակ են պահել այն հանգամանքներին, որոնք դեկտեմբերի 23-ին նախորդած շրջանում իրենց կնիքն են թողել դաշնակիցների գործողության վրա Ռուսաստանում: Ինչ վերաբերում է ռուսական ռազմաճակատին Փոքր Ասիայում, ապա բազում ամիսներ ի վեր այս ռազմաճակատի արդյունավետ պաշտպանությունը երաշխավորվում է միմիայն հայկական և վրացական ստորաբաժանումների միջոցով, որոնք ցանկանում են պաշտպանել ազատագրված տարածքների անկախությունը: Ռուսաստանի Հայկական կենտրոնական կոմիտեն և Պետրոգրադի Հայկական կոմիտեն սկսած նույնքան ամսի կեսերից խնդրել են դաշնակիցներին, շտապ իրենց ուղարկել փոխառություններ և հրահանգիչներ, որոնք հնարավորություն կտան կազմավորելու հայկական ազգային բանակը: Կովկասի իշխանությունները և շտաբը մի քանի օր ավելի ուշ արտահայտվեցին ծայրահեղականների դեմ, Թեհրանում Անգլիայի նախարարի՝ միջնորդությամբ համառորեն հայցելով բրիտանական կառավարության աջակցությունը: Նույն պահին Ռուսաստանում Ֆրանսիայի նախարարին² միջնորդությամբ հանդես եկան Օդեսայի հայերը, համառելով Ռուսաստանի հայկական կոմիտեի պահանջած փոխառությունների առաքումը չհետաձգելու անհրաժեշտության շուրջ: Ռազմական նախարարության կոմիտեն, որն իրագել էր պարծել նախորդած ցուցումներին, դեկտեմբերի 17-ի նիստում վճռել է գնդապետ Շարլինյի միջոցով 20 միլիոն ռուբլի դնել Կովկասի հայկական կոմիտեների տրամադրության ներքո՝ Այն համաձայնությունը, որը հենց նոր է կայացվել Ֆրանսիայի և Անգլիայի միջև երկու տերությունների գործողության գոտիների սահմանազատման շուրջ Ռուսաստանում⁴, որևէ փոփոխության չի ենթարկում այս որոշումը, որի կենսագործման համար արդեն անհրաժեշտ հրահանգներ են տրվել:

Ծայրահեղականների առաջադիմությունների ազդեցության ներքո, Կովկասի բանակի շտաբը դեկտեմբերի 10-ին զինադադար է կնքել թուրքերի հետ³: Այդուհանդերձ, նա շարունակում է բարեհաճ վերաբերվել հայկական և վրացական մարտական ստորաբաժանումների կազմավորմանը և զինմանը:

Նախատեսվել է Զրդստանի ինքնավարության հռչակման հնարավորությունը: Այս առիթով շտաբի ներկայացրած նախագծից հրաժարվել են Զրդստանում բնակվող ժուրվուրդների միջև առկա շատ մեծ զանազանության և այն վտանգի պատճառով, որը քաղաքական տեսանկյունից կծագի, եթե շատ բացահայտ ձևով բարեհաճ վերաբերմունք ցուցաբերվի քրդերի՝ հայերի և վրացիների թշնամիների հանդեպ: Անհնարին չէ, որ քրդական որս զեղերի ռազմական օգնությանն, այդուհանդերձ, հետամուտ լինեն և դրան հասնեն դրամի շնորհիվ:

(A.M.A.E., Guerre 1914-1918, Turquie, tome 894, ff. 138-138 v).

1 Սրբ Զարկ Մարինյան:
2 Պ. Բուպուալ դը Սենտ-Օլերը:
3 Այդ գործի մասին տես վերը թիվ 459 և 461 փաստաթղթերը:
4 Այդ համաձայնության մասին տես վերը թիվ 463 փաստաթուղթը:
5 Միսալ է. զինադադարը կնքվել է 1917 թ. դեկտեմբերի 5/18-ին:

Թիֆլիսում Հայկական ազգային մշտական կոմիտեն՝ Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշային

Հ՝:
[Պատճենը]:

Թիֆլիս, 26-ը դեկտեմբերի 1917 թ.:

Ձեր երկյուղները դժբախտաբար հիմնավորված են, Կովկասի ռազմաճակատը գրեթե ամբողջությամբ լքված է.

Չունենալով ռեսուրսներ, խորհուրդը շտապ ձեռնարկում է երեք նահանգները և Կովկասը պաշտպանելու անհրաժեշտ բոլոր միջոցները: Նա արագորեն զարկ է տալիս ազգային զինված կորպուսի կազմավորմանը Նազարբեկովի միջոցով: Հայ զարթականները կկազմավորեն հատուկ գումարտակ և աշխարհագոր: Վրացիների հետ համաձայնությունը վերջնական չէ, բայց որոշակի է: Ֆինանսական և ռազմական օգնություններն ավելի քան անհրաժեշտ են:

Հայաստանը Ռուսաստանին հանձնող գաղտնի դիվանագիտական փաստաթղթի չեղյալ հայտարարումը նույնքան արժեքավոր՝ մեկ այլ բարոյական օգնություն է: Անհրաժեշտ է թվում դաշնակից տերությունների կողմից Թուրքահայաստանի ինքնավարության անհապաղ ճանաչումը ստույգ փաստաթղթով, քանի որ Ռուսաստանը ճանաչել է ժողովուրդների՝ իրենց ճակատագիրը տնօրինելու իրավունքը:

Բարեհաճեք ինձ տեղեկացնել բանակցությունների ընթացքին:

(A.M.G., 4 N 62).

Արտաքին գործերի նախարարը՝ Խորհրդի նախագահ, Ռազմական նախարար պ. Կլեմանսոյին

Ճ. թիվ 4790: Խիստ հրատապ:

Փարիզ, 27-ը դեկտեմբերի 1917 թ.:
(Ստացել է Կաբինետը դեկտեմբերի 30-ին):

Հիմնվելով երեկվա թիվ 9259-9/11 ձեռ նամակում¹ տեղ գտած ցուցումների վրա, ես պատիվ ունեմ տեղեկացնել, որ Հայկական ազգային պատվիրակությունը Հանրապետության կառավարության ճանաչմանն արժանացած կազմակերպություն է, որն իր նախագահ Պո-

1 Փոխանցվել է պ. Նիկոլայի միջոցով:
2 Ստորագրել է պ. դը Մարտեռին:
3 Դեկտեմբերի 26-ի. արտատպված չէ:

դոս Նուբար փաշայի հետ զբաղվում է Հայաստանի համար հետաքրքրություն ներկայացնող հարցերով: Այս կազմակերպությունը ճանաչել են նաև հայկական կոմիտեները, ինչպես նաև բրիտանական կառավարությունը:

Ես գտնում եմ, որ այս պայմաններում նպատակահարմար կլինի Պողոս փաշայի անունով ձևակերպել վճարման մի հանձնարարագիր, որն արտացոլի Ամերիկայի Հայկական ազգային կոմիտեի՝ 1917 թ. հունիսի 9-ից մինչև օգոստոսի 2-ն ընկած ժամանակաշրջանում հայ կամավորների տեղափոխման համար կանխավճարի ձևով հատկացրած գումարները:

Տեղեկացնելով ձեզ այն ցուցումին, որը նախորդում է, ես պարտք եմ համարում ավելացնել, որ պատրաստել եմ տվել Պողոս փաշայի կարգավիճակը հավաստող վկայական, որը ներկայացնելու դեպքում, հայկական պատվիրակության նախագահը հնարավորություն կունենա ստանալ այս հանձնարարագրում նշված գումարը:

(A.M.G., Levant 5 L.O.)

Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշան՝ Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին

Ն:

Փարիզ, 28-ը դեկտեմբերի 1917 թ.:
(Ստացել են Կար. դեկտեմբերի 29-ին,
Քաղ. վարչ. դեկտեմբեր 30-ին):

Ձերդ գերազանցության թույլտվությամբ ցանկանում եմ Հայկական ազգային պատվիրակության նախագահի իմ կարգավիճակով ասել, թե բոլոր հայերի հետ մեկտեղ, որքան երախտապարտ եմ նրան՝ Հայաստանին վերաբերող այն հայտարարության համար, որով նա երեկ հանդես է եկել Դեպուտատների պալատում ունեցած իր ելույթում:

Եթե Հանրապետության կառավարությունը մեր հանդեպ արդեն ի հայտ է բերել իր ազնվաբարտ համակրանքի ապացույցներն ու մեր ազգային ձգտումների իրագործման հարցում իր աջակցության երաշխիքը, այդուհանդերձ, առաջին անգամ է, որ քաղաքական լայնածավալ քննարկման ընթացքում, խորհրդարանի շրջանակներում, նրա ամենալիազորված անդամներից մեկը պաշտոնապես ընդգրկել է Հայաստանն այն ժողովուրդների թվում, որոնց ազատագրումը Ֆրանսիայի ու նրա դաշնակիցների վարած պատերազմի նպատակների մասն է կազմում:

Այդ հայտարարությունը, որը համընկնում է բրիտանական կառավարության անունից՝ պաշտոնապես Լյուդ Ջորջի և Բալֆուրի արդեն արած հայտարարություններին, ամրապնդում է մեր հավատն առ այն, որ դաշնակիցների վերջնական հաղթանակից հետո, հայերի համեստ և օրինական ձգտումները կիրականանան, և Ֆրանսիայի ու նրա դաշնակիցների հովանու ներքո, ազատագրված թուրքական լծից, նրանք կկարողանան վերակառուցել իրենց ազգային կյանքը:

(A.M.A.E., Guerre 1914-1918, Turquie, tome 889, ff. 173-173 v).

Թիֆլիսում Ֆրանսիայի հյուպատոս պ. Նիկոլան՝ պաշտոնապես Արտաքին գործերի նախարար Ստեֆան Պիշոնին, Պետրոգրադում Ֆրանսիայի դեսպան Նուլենսին

Վ. թիվ 83, 145:

Թիֆլիս, 28-ը դեկտեմբերի 1917 թ.:
(Ստացել են Կար. 1918 թ. մարտի 27-ին,
Քաղ. վարչ. մարտի 28-ին):

Ես Ձերդ գերազանցությանն եմ հղել այն հեռագիրը (թիվ 21)՝ որը պ. Շարդինյին ինձնից պահանջում էր ձեզ ուղարկել:

Բայց կա մի հարց, որն ինձ թվում է, թե անհրաժեշտ չափով չի քննարկվել. դա այն է, թե ինչ ձևով է կարելի իրականացնել վրաց-հայկական գործողությունն՝ ի նպաստ հայկական երեք նահանգների վերջնական ազատագրման:

Հասկանալի է, որ այս ժողովուրդները կջանան պաշտպանել ոչ միայն Կովկասը, այլև ազատագրված հայկական երեք նահանգները (??): Դա հասկանալի է, բայց այն օրը, երբ ռուսները թուրքերի հետ հաշտություն կնքեն, որին նրանք ձգտում են իրենց բոլոր ուժերով և բոլոր ռազմաճակատներում, մեծ հավանականություններ կան, որ «ոչ անքսիաներ, ոչ ռազմատուգանքներ» կարգախոսի հիման վրա, նրանք թուրքերին կվերադարձնեն այն նահանգները, որոնք գրավել են:

Իհարկե կա այնպիսի մի հուշակագիր, համաձայն որի ժողովուրդներն ազատ են իրենց ճակատագիրը տնօրինելու հարցում, բայց չի թվում, թե Ռուսաստանն ի վիճակի է այն պաշտպանել ուժով:

Այսպիսով, գուցե ես սխալվում եմ, բայց կամ բազմաթիվ հավանականություններ, որ պեսզի նրանք զիջեն:

Ակնհայտ է, որ այդ պահին կմիջամտեն Վրաստանը և Հայաստանը: Ես ցանկանում եմ ասել, որ նրանք չեն համաձայնվի իրենց լուրջությամբ վավերացնել գրավված նահանգների վերադարձը: Արդյո՞ք նրանք այդ հիման վրա, այդ իսկ պահին չեն ընդդիմանա ռուսներին: Վերջիններս արդյո՞ք կընդունեն սման բնույթի ըմբոստությունը: Ի՞նչ կասեն թուրքերը Ռուսական կայսրության մի հատվածի դեմ ուղղված զինված պայքարի վերսկսման մասին, որը չի վավերացնի կառավարության ընդունած համաձայնագիրը: Կովկասի ռազմաճակատը միայն հայերի միջոցով չի կարող պաշտպանվել: Ես այդ շատ եմ ցանկանում, բայց արդյո՞ք կարելի է կարծել, որ ռուսներն առաջ կշարժվեն, երբ իրենց կառավարությունը, ինչպիսին էլ որ այն լինի, հաշտություն կնքի: Ըստ որոշ անձանց կարծիքի՝ վրացիների և հայերի միջև տիրում է կատարյալ համաձայնություն (ինչ վերաբերում է ինձ, ես դրան չեմ հավատում), բայց եթե դաշնակից տերությունների պարզունակ հայտարարությունը Թուրքահայաստանի ինքնավարության մասին բավական է այդ համաձայնությունը ջլատելու համար, հարկ է խոստովանել, որ այն խիստ երեքուն է:

1 Դեկտեմբերի 26-ի արտատպված չէ: Խոսքը վերաբերում է այն քննարկին, որը ստորև տեղ է գտել թիվ 473 փաստաթղթում արտատպված հեռագրում:

Ինչ կասեն ռուսները, ...՝ մահմեդականները մի երկրի դեմ ուղղված պատերազմին աջակցություն ցուցաբերելու մասին, որի հետ պատրաստվում են հաշտություն կնքել և հետևաբար ինքնավարության հասնելու հայերի հստակ ձգտման մասին, եթե նրանց դյուրագոյությունն այնքան է ուժգին, որ միայն դաշնակից տերությունների հայտարարությունը կարող է ն[րան]ց համբերությունից դուրս բերել և հասցնել հայերի դեմ նետվելու աստիճանի:

(A.M.A.E., Guerre 1914-1918, Turquie, tome 894, ff. 140-141).

Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշան՝ կապիտան Ամերիին

Ն:
[Պատճենը]:

Փարիզ, 29-ը դեկտեմբերի 1917 թ.:
(Մտացել է ՉՆԳԽ-ը դեկտեմբերի 31-ին):

Ես շտապում եմ ձեզ փոխանցել սրան կից այն ճեպագրի՝ պատճենը, որ հենց նոր ստացա Թիֆլիսի հայկական ազգային մշտական կոմիտեից՝ ի պատասխան այն հեռագրի, որը Ֆրանսիայի հյուպատոսության միջոցով նրան էի հղել այս ամսի 6-ին՝ և որի պատճենը ձեզ եմ հանձնել: Այսպիսով, դա իմ առաջին հեռագրի պատասխանն է, բայց ոչ այն հեռագրի, որը ես ձեզ էի փոխանցել վերջին երկուշաբթի օրը:

Այս հաղորդագրությունը կարող է հետաքրքրել պ[արոնայ]ք Ռազմական նախարարության Գերագույն խորհրդի ներկայացուցիչներին և ես ձեզ երախտապարտ կլինեմ, եթե նրանց իրազեկ դարձնեք այլ մասին: Ես նմանապես ձեզ եմ ուղարկում այն պատասխանի պատճենը, որն այդ առթիվ գրել եմ և որը Զեղ՝ Օրսեն պարտավորվել է փոխանցել Թիֆլիսում գտնվող հյուպատոսության միջոցով՝

Ինչ վերաբերում է ֆինանսական օգնության խնդրանքին, նս գիտեմ, որ ձեր կառավարությունը, ինչպես նաև ֆրանսիական կառավարությունը, արել են այդ իսկ պահից անհրաժեշտը, որպեսզի դրամական միջոցները շտապ առաքվեն: Սակայն մեր հայրենակիցներին քաջալերելու և նրանց համոզելու համար, որ իրենք կարող են ամբողջությամբ հույս տաձել դաշնակիցների ռազմական և ֆինանսական անհրաժեշտ օգնությանը՝ իրենց գործողություններն անկաշկանդ կազմակերպելու համար, ես կարծում եմ, որ շահավետ կլինի հեռագրել Թիֆլիսում ձեր ներկայացուցիչներին, որպեսզի այդ մասին անհապաղ հաղորդեն Հայկական ազգային խորհրդին:

(A.M.G., 4 N 62).

1 Անընթեռնելի մեքենագրված բառ. հավանաբար՝ վրացիները:
2 1917 թ. դեկտեմբերի 26-ի. տես վերը թիվ 467 փաստաթուղթը:
3 Խաչքը, հավանաբար, վերաբերում է վերը թիվ 434 փաստաթղթի հավելվածում արտատպված հեռագրին:
4 Տես ստորև թիվ 474 փաստաթղթի հավելվածը:

Ռումինիայում Ֆրանսիայի նախարար պ. Բոպուալ դը Սենտ-Օլերը՝ Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին

Ճ. թիվ 204:

Յասսի, 31-ը դեկտեմբերի 1917 թ.:
(Մտացել են Կաբինետը և Զաղ. վարչ. 1918 թ. փետրվարի 6-ին):

Ես պատիվ ունեմ այս ծրարում Ձերդ գերազանցությանն ուղարկել Հայաստանին վերաբերող տեղեկություններ, որոնք պ. ինտենդանտ Ֆարժոնին է տրամադրել Օդեսայում բնակվող մի երևելի հայ:

Ես Դեպարտամենտի ուշադրությունը հրավիրում եմ, մասնավորապես, այն մարդկային ռեսուրսների վրա, որոնք Հայաստանը կարող է տրամադրել դաշնակիցների գործին: Այս առթիվ ես կարող եմ միայն հիմնվել վերջին նոյեմբերի 12-ի թվակիր թիվ 174 իմ ճեպագրի՝ և այս ամսի 13-ի թվակիր 192 {ճեպագրի}՝ վրա:

(A.M.A.E., Guerre 1914-1918, Turquie, tome 894, f. 142).

ՀԱՎԵԼՎԱԾ

Տեղեկություններ, որոնք տրամադրել է պ. Հովադյանը՝

Ինչպիսի՞ն է ներկայումս Հայաստանի ազգագրական վիճակը.

Տրապիզոնը նախկինում ուներ 60000 բնակիչ: Նրանցից մնացել են 19000-ը, որոնցից 15000-ը հույն են և 4000-ը՝ հայ:

Էրզրումն ուներ 80000 բնակիչ: Նրանցից մնացել են 26000-ը, որոնցից 20000 թուրք են, 6000-ը՝ հայ:

Վանն ուներ 60000 բնակիչ: Նրանցից մնացել են 20000-ը, որոնք բոլորը հայեր են:

Բիթլիսն ուներ 40000 բնակիչ: Նրանցից մնացել են 15000-ը, որոնք բոլորը հայեր են:

Մուշն ուներ 35000 բնակիչ: Նրանցից մնացել են 10-ից 15000-ը, որոնք բոլորը հայեր են:

Երզնկան ուներ 35000 բնակիչ: Նրանցից մնացել են 12000-ը, որոնցից 2000-ը թուրք են և 10000-ը՝ հայ:

Գյուղերում և փոքր քաղաքներում մնում են բացառապես հայեր և մի քանի քոչվոր քրդեր, որոնք, ընդհանուր առմամբ, բարեհաճ են տրամադրված հայերի նկատմամբ: Բնակչության ընդհանուր թիվը հասնում է մոտավորապես 1000000-ի:

Ինչպիսի՞ն է ներկա քաղաքական իրավիճակը:

Ռուսների ռազմակալած ամբողջ հատվածում վարչությունը վստահվել է հայերին: Մի

1 Տես վերը թիվ 417 փաստաթուղթը:
2 Տես վերը թիվ 451 փաստաթուղթը:
3 Մի հայ գործակալ, որը հաստատվել է Օդեսայում, Եկատերինսկայա 24 հասցեով:

հայ կառավարիչ հաստատվել է Էրզրումում, մեկ ուրիշը՝ Վանում:

Էջմիածնում գրիգորյան հայերն ունեն իրենց կաթողիկոսը, որն ազգի առաջնորդն է:

Ներկայիս ձգտումները միտում ունեն ազգարարելու թուրքահայաստանի ինքնավարությունը, որը կկազմավորվի հանրապետության տեսքով, առանց միավորվելու Ռուսահայաստանին: Այս վերջինը կընդգրկվի Ռուսական համադաշնության կազմում:

Հարկ է հիշատակել, որ դեպի Թավրիզ և Ուրմիա կան երկու միլիոն ռուսահայ և 500000 պարսկահայ:

Ի՞նչ տեղեկություններ կարող եք հաղորդել հաղորդակցության միջոցների մասին:

Ռուսները երկարաձգել են Կարսից Կարա-Ուրկան ձգվող երկաթգիծը մինչ Էրզրում: Դա միասնական ուղի է: Նրանք կառուցել են մի գիծ, որը ձգվում է Ղարաքիլիսայից Բալազն: Նրանք սկսել են շարունակություն տալ Բաթում-Տրապիզոն առափնյա գծին, բայց հազիվ են հասցրել դրանք նախագծել, երբ աշխատանքները դադարեցվել են:

Ճանապարհը, որը ձգվում է ափով, բարեկարգ է: Ընդհանուր առմամբ, մեծ կենտրոնները միակցող ճանապարհները գործածելի են ավտոմեքենաների համար:

Որո՞նք են տարածաշրջանի հիմնական ռեսուրսները:

Սա գլխավորապես ագրարային տարածաշրջան է: Էրզրումում մշակում են եգիպտացորեն և ճակնդեղ, Վանում՝ ցորեն, գարի և վարսակ, գրեթե ամենուր՝ կարտոֆիլ, հովիտներում՝ խոտ: Այդուհանդերձ, ռեսուրսները հազիվ են բավականացնում կարիքները հոգալու համար: Հարավ-արևելքում կարելի է գտնել մեծ թվով ձիեր, Էրզրումում՝ եզներ ու կովեր, Վանում և Բիթլիսում՝ այծեր: Գոյություն չունի որևէ շահագործվող արդյունաբերական ձեռնարկություն: Բայց Տրապիզոնի վիլայեթը հարուստ է պղնձով և արծաթաբեր արճիճով: Ձեռնվազիններն այն շահագործել են մի քանի հարյուր տարի առաջ: Էրզրումի վիլայեթը հարուստ է նավթով և պղնձով, Վանի վիլայեթը՝ մմանապես:

Ինչպիսի՞ն են զենք կրելու ունակ տղամարդկանց ռեսուրսները:

Ներկայումս, անկախ Կովկասի այն 150000 ռուսահայից, որոնք Կերեմսկու համաձայնությամբ գալիս են պաշտպանելու ռազմաճակատը թուրքերից, երկրում կա գրեթե 30000 կամավոր: Նրանք ենթարկվում են վոյեվոդներին, այն է՝ ըստ էության Թիֆլիսում գտնվող Հեղափոխական կոմիտեին:

ԳՀՇ, 5/18-ը դեկտեմբերի 1917 թ.:

Գլխավոր ինտենդանտ

Ֆարժեմ:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 894, ff. 143-144).

**Ռուսաստանում ֆրանսիական ռազմական առաքելության
ղեկավար, գեներալ Նիեսելը՝ Խորհրդի նախագահ,
Ռազմական նախարար պ. Կլեմանտոյին**

Հ. թիվ 3128: Գաղտնի:

[Պատճենը]:

Պետրոգրադ, 1-ը հունվարի 1918 թ., ժ. 18.17-ին:

Հայկական ազգային խորհուրդը Նուբար փաշայի համար նախատեսված հեռագրում, որը Թիֆլիսում մեր հյուպատոսի՝ միջոցով հղվել է Արտաքին գործերի նախարարին, դաշնակից տերություններից խնդրում է թուրքահայաստանի ինքնավարության անհասպող հռչակումը՝ զարկ տալու համար բնակչության եռանդին, որը մարել է գաղտնի պայմանագրի հրապարակումով: Գնդապետ Շարդինյին անհրաժեշտ է համարել տեղեկացնել կառավարությանը՝ հյուպատոսի միջոցով ԱԳՆ-ը՝ հղելով հետևյալ հեռագիրը.

«Ես ...՝ համաձայն եմ իմ գործընկերների հետ. որ նման հռչակումը ներկայումս ապաքաղաքական կլինի: Կովկասի ռազմաճակատի պաշտպանությունը չի կարող ապահովվել միայն հայերի միջոցով: Հռչակումը տեղիք կտա վրացիների, ռուսների, հույների, որոնց ռազմական օգնությունն անհրաժեշտ է, և մահմեդականների դժգոհությանը կամ թշնամանքին»:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 894, f. 146).

**Արտաքին գործերի նախարարը՝ Թիֆլիսում
Ֆրանսիայի հյուպատոս պ. Նիկոլային**

Հ. թիվ 1:

Փարիզ, 2-ը հունվարի 1918 թ., ժ. 17.45-ին:

Ես ձեզ ելախուսապարտ կլինեմ, եթե Նուբար փաշայի հեռագիրը, որը հետևում է, շտապ ուղարկեք՝ 1/ կաթողիկոսին, 2/ Թիֆլիսում Հայկական ազգային մշտական խորհրդին, 3/ պ. Անդրանիկին, 4/ դիվանին: Չավրիկին:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 894, f. 147).

ՀԱՎԵԼՎԱԾ

**Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար
փաշան՝ Թիֆլիսում Ֆրանսիայի հյուպատոս պ. Նիկոլային**

Հ:

Փարիզ, 29-ը դեկտեմբերի 1917 թ.:

Հեռագիրն ուղարկվել է, որպեսզի հաղորդվի՝

- 1 Պ. Նիկոլային: Տես վերը թիվ 467 փաստաթուղթը:
- 2 Հարկ է կարդալ՝ Արտաքին գործերի նախարարություն:
- 3 Բացթողված բառ:
- 4 Ստորագրել է պ. դը Մարտերին:
- 5 Բռնրեյով:

- 1/ Էջմիածին՝ հայերի Նորին սրբություն կաթողիկոսին,
- 2/ Թիֆլիս՝ Հայկական ազգային մշտական խորհրդին,
- 3/ Թիֆլիս՝ պ. Անդրանիկին,
- 4/ դ {ոկտո}ր Ջավրիկին:

Ստացա ձեր հեռագիրը¹: Ազգային պատվիրակությունը երջանիկ է իրագեկ դառնալու, որ դուք իրատապ միջոցներ եք ձեռնարկում պաշտպանելու երեք նահանգներն ու Կովկասը և վրացիների հետ կայացված համաձայնությունն ստույգ է:

Անկեղծորեն շնորհավորում ենք ձեզ, բայց երեք նահանգների պաշտպանության համար խորհուրդ ենք տալիս դեռևս որևէ տարբերակում չդնել Ռուսաստանի և Թուրքիայի հայերի միջև: Միասնությունը և սերտ համագործակցությունն անհրաժեշտ են: Ես հաստատում եմ դեկտեմբերի 24-ի իմ հեռագիրը², որով ձեզ հայտնում էի դաշնակիցների ռազմական և ֆինանսական օգնության և պաշտպանության կազմակերպման համար անհրաժեշտ բոլոր դրամական միջոցների անհապաղ առաքման մասին: Ներկա հանգամանքներում Ազգային պատվիրակությունն ապաքաղաքական է համարում դաշնակիցների կողմից ինքնավարության հռչակումը, որը կվարկաբեկի ձեր համաձայնությունը վրացիների հետ և տեղիք կտա մահմեդական բնակչության ընդդիմությանը, առավել ևս, որ անգլիական կառավարության անունից Բալֆուրը և Լյույդ Ջորջը, իսկ ֆրանսիական կառավարության անունից Պիչոնը խորհրդարաններում վերջերս պաշտոնական հայտարարություններ են արել այն մասին, թե թուրքական լծից Հայաստանի ազատագրումը դաշնակիցների կողմից մղվող պատերազմի նպատակների մասն է կազմում: Այնժամ, երբ բավարար քանակություն ունեցող հայկական ռազմական ուժերը կգրավեն ազատագրված հայկական վիլայեթները՝ ապահովելու համար դրանց պաշտպանությունը, Ազգային պատվիրակությունն այլևս առարկումներ չի ունենա այն հարցում, որ դրանց ինքնավարությունը հռչակվի այդ տարածքի տեր ու տնօրեն հայերի կողմից:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 894, f. 148).

475

**Խորհրդի նախագահը, Ռազմական նախարարը³
Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիչոնին**

Ճ. թիվ 90/3; Հրատապ:
Փարիզ, 2-ը հունվարի 1918 թ.:

Դեկտեմբերի 17-ին ֆրանսիական կառավարությունը Կովկասում դաշնակցամետ գործողության համար փոխգնդապետ Շարդինյի տրամադրության ներքո է դրել 20 միլիոն ռուբլու սահմանում մի վարկ⁴:

1 Տես վերը թիվ 467 փաստաթուղթը:
2 Վերն արտատպված է 464 փաստաթղթում:
3 Ստորագրել է գեներալ Ֆոշը:
4 Այս գործի մասին տես վերը թիվ 459 և 461 փաստաթղթերը:

Քանի որ դեկտեմբերի 23-ի համաձայնագիրը¹ Կովկասն ընդգրկել է բրիտանական ազդեցության գոտում, այս բարձրաստիճան սպան, ինչպես ինձ թվում է. պարտավոր է իր վարկի միջոցով աջակցել այս տարածաշրջանում անգլիական ներկայացուցչին կամ նվազագույնը ստանալ նրա իրահանգներն այդ վարկի օգտագործման համար՝ այն իսկ պահից, երբ վերջինս կստանձնի իր պարտականությունների կատարումը, քանի որ ծախսերը հետագայում բաշխելու է միջդաշնակցային համակարգող մարմինը:

Հեռագիրը, որի պատճենը ներկայացվում է սրան կից, ցույց է տալիս, որ անգլիական շտաբը համամիտ է մեր տեսակետին:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 894, f. 149).

ՀԱՎԵԼՎԱԾ

Ռազմական հետախուզության տնօրենը² բրիտանական ռազմական առաքելության ղեկավար, փոխգնդապետ Սփիարսին

Հ. թիվ 49115: Գաղտնի:
1-ը հունվարի 1918 թ., ժ. 21.20-ին:

Խնդրվում է գեներալ Մակ Դոնոգիի կողմից գեներալ Ֆոշին հաղորդել այն, ինչը հետևում է.

«Գեներալ Շոլը դեկտեմբերի 29-ին հեռագրում է Թիֆլիսից, որ ռազմաճակատի համար նախատեսված ազգային զորքերի ծախսերը հոգալու նպատակով (դրանց մի մասը կորվի դաշնակիցների հսկողության ներքո), գնդապետ Շարդինյին քսան միլիոն ռուբլի է դրել Ավերիանովի տրամադրության ներքո:

Ես ձեր քննությանն եմ ներկայացնում Շարդինյիի և մեր ներկայացուցիչների միջև սերտ համագործակցության հնարավորությունը և այն, որ դրամական միջոցների կանխավճարները, քանզի Կովկասը դիտվում է իբրև անգլիական ազդեցության գոտի, կատարվեն բրիտանական ռազմական ներկայացուցչի միջնորդությամբ»:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 894, f. 150).

476

Ռուսաստանում ֆրանսիական ռազմական առաքելության ղեկավար, գեներալ Նիեսելը՝ Խորհրդի նախագահ, Ռազմական նախարար պ. Կլեմանսոյին

Հ. թիվ 3153, 3154: Գաղտնի:

1 Այդ համաձայնագրի մասին տես վերը թիվ 463 փաստաթղթի ծանոթագրությունը:
2 Գեներալ Մակ Դոնոգիը:

3153: – Իբրև Փարիզի համար նախատեսված իմ 7381 և գեներալ Բերտելյայի համար նախատեսված 7384 հեռագրերի շարունակություն:

Գնդապետ Շարդինյին գտնում է, որ Կովկասի ռուս հրամանատարը շարունակում է գործել ըստ պահանջված կարգի և միակն է, որն ունակ է կազմակերպել ազգային զորքեր ու ապահովել ռազմաճակատի պաշտպանությունը, չնայած տեղական բնույթի քաղաքական դժվարություններին և զինվորների ... ընդդիմությանը: Ֆրանսիացի սպաները հակված են պահպանելու այդ ազդեցությունը: Վարկեր են պահանջվել աշխարհագոր, իսկ հետագայում՝ ռազմակալված տարածքներում բնակվող թուրքահայերից զորքեր կազմակերպելու համար:

3154: – Զանի որ ռուսական ԳՀԸ-ը թույլատրել է կազմավորել կանոնավոր զորքերի դիվիզիա, վարկերը ժամանակավորապես մնում են գնդապետ Շարդինյի տրամադրության ներքո, որը դրանք կօգտագործի ռուս հրամանատարի միջոցով հայկական ազգային զորքերի արդարացված և հրատապ պահանջների համար: Ազգային կոմիտեն հրամանագրում է:

Փարիզից ուղարկված հեռագիրը հաղայովել է գեներալ Բերտելյային:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 894, f. 151).

477

Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնը՝ Արևելքում Ֆրանսիայի նախարար պ. Ռոբեր դը Բիլլիին

Ճ: Չհամարակալված:

Փարիզ, 7-ը հունվարի 1918 թ.:

Վերջին նոյեմբերի 19-ի ձեռք թիվ 183 զեկուցագրով¹, դուք ինձ տեղեկացրել եք, որ վերջին ամիսների ընթացքում հունական մամուլի տարբեր օրգաններ հողվածներ են նվիրել Պոնտոսի հունական հանրապետության ստեղծմանը վերաբերող նախագծին:

Այն հավակնությունները, որոնք հույները դրսևորում են, այսպիսով, Տրապիզոնի հունական նախկին թագավորության նկատմամբ, թվում է, թե արժանի են ուշադրության:

Հույները, ինչպես դուք իրազեկ եք, այս տարածաշրջանում փոքրամասնություն են կազմում, ուր գերակշռող ժողովուրդը լազերն են և որտեղ առափնյա քաղաքների առևտրական բուրժուազիան բաղկացած է բացառապես հույներից:

Այդուհանդերձ, ես գտնում եմ, որ հարկ կլինի առիթը ներկայանալու դեպքում ապրիորի ձևով չվանել հունական թերթերի շրջանառության մեջ դրած այս գաղափարը: Հարկ է, հիշել, տեսադաշտից բաց չթողնել, որ մենք կոչված ենք Սվազի տարածաշրջանում դառնալու Տրապիզոնի վիլայեթի սահմանակիցը և որ այն երկիրը, որտեղ հայերը կկարողա-

157 Անընթեռնելի բառ:
158 Արտատպված չէ:

նան կազմակերպել իրենց ինքնավարությունը, նույնպես գտնվում է դրա հարևանությամբ: Մյուս կողմից, նկատի ունենալով, որ Ռուսաստանը, թվում է, թե այլևս հույներ չի ներշնչում իր գերիշխանությունը Սև ծովի հարավային ափում պահպանելու հարցում, անկասկած, նպատակահարմար կլինի, եթե հանգամանքները թույլատրեն, Պոնտոսի նախկին թագավորությունում կազմավորել փոքր ինքնավար պետություն, որը կգտնվի գլխավորապես մեր ազդեցության ներքո և հայկական, ինչպես նաև Առաջավոր Ասիայի տարածաշրջանների համար կապահովի ելք դեպի ծով: Հետագայում հնարավոր կլինի հասնել այդ նպատակին պոնտական ժողովուրդներին ճանաչելու միջոցով:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 894, ff. 157-157 v).

478

Կովկասում ֆրանսիական ռազմական առաքելության ղեկավար, փոխգնդապետ Շարդինյին՝ Խորհրդի նախագահ, Ռազմական նախարար պ. Կլեմանսոյին

Հ. թիվ 1:

Թիֆլիս, 8-ը հունվարի 1918 թ.:

Ազգային զորքերի կազմավորումն ընթանում է դանդաղ, իսկ հայերին զսպում է երկյուղը մահմեդականներից: Փաստորեն, մահմեդականների հարձակման պարագայում, մահմեդականների՝ գերմանական դրամով սատարվող քարոզչությունն ի վիճակի կլինի հանգեցնել Կովկասի մահմեդական ցեղերի հանրնդհանուր ապստամբությանը և հայերին մատնել նոր կոտորածի: Այս շարժման դեմ պայքարելու համար կա երկու միջոց.

1/ անգլիական հարձակումը Միջագետքում և Մոսուլի ռազմակալումը.

2/ մի կորպուսի և ռուսական անհրաժեշտ իշխանությունների պահպանումը Կովկասում:

(A.M.G., 4 N 62).

479

Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնը՝ Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշային

Ն:

Փարիզ, 8-ը հունվարի 1918 թ.:

Վերջին ղեկտեմբերի 28-ի նամակով¹, Ձերդ գերազանցությունը բարեհաճել է ինձ շնոր-

1 Տես վերը թիվ 469 փոստաթուղթը:

հակադրություն հայտնել այն հայտարարության համար, որով նույն ամսի 27-ին Պատգամավորների պալատի նիստում ես հանդես էի եկել Հայաստանի կապակցությամբ:

Չեղյ գերագանցությանը հայտնելով այդ մամակի ստացման մասին, ես շատ հմ ցանկանում նրան կրկին հավաստիացնել, որ Հանրապետության կառավարությունը երջանիկ կլինի. եթե կոտորածների վերականգնումը խանգարելու մտադրությամբ, որոնց գոհր դարձել է հայ բնակչությունը, այսուհետև ես մյամ ցուցարների իր աջակցությունը և հնարավորություն ընձեռի վերջնականապես ազատագրվելու օսմանյան լծից:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 889, f. 178).

**Ֆրանսիայում բրիտանական ռազմական առաքելության
ղեկավար փոխգնդապետ Միխարսի ծանուցագիրը՝**

Ձ. 1714: Չարանի:

Փարիզ, 8-ը հունվարի 1918 թ.:

Չհանրալ Նիսեսից², հունվարի 6-ին, պը ներկայացնում է հաշտության բարրության առաջարկություններն այնպես, ինչպես պոստը հասկանում են.

- 1/ Նախապատերազմական սահմանի վերահաստատում:
- 2/ Պարսկական անկախության ճանաչում ու պարսկական առաքելության անձնակազմի կազմակերպության և Պարսկաստանում ազդեցության գոտիների վերացում:
- 3/ Ռուսական զորքերի նահանգ դեպի նախապատերազմական սահմանի ետին շրջան (սահմանը պահպանելու նպատակով՝ 150 կիլոմետրի համար մեկ դիվիզիան կարող է թույլատրելի լինել): Այն ռուսական զորքերը, պոստը գերագանցում են մեկ դիվիզիան, չեն կարող կենտրոնանալ այս սահմանում, ինչպես նաև Անդրկովկասում, նույնիսկ գաղաշարժերի համար: Մյուս կողմից՝ Թուրքիան իր բանակը պահում է մարտական պատրաստության վիճակում, քանի որ հարկադրված է շարունակել կռիվը:
- 4/ Ներկայումս Ռուսաստանում զանվոդ բարրահայերի և ռուսահայերի ջոկատների զբաղման:
- 5/ Դպրակները պետք է բաց լինի ռուսական առևտրական նավերի իրանար այն լույս պահից, երբ առաջադրվի առևտրական ու նավագնացության պայմանագիրը: Նույն ձևով Ռուսաստանը բարրական նավերին ազատ անցումի իրավունք է հաստատում Արաքսի մեղուցով դեպի Ազովի ծով:
- 6/ Ռուսական սեծուկան նավատարը պետք է զբաղվի: Ան ծովը պետք է ստանազվորվի:

(A.M.G., 7-N 1286).

1 Լոնդոնում Ֆրանսիայի ռազմական կցորդի օգնական, փոխգնդապետ Ֆրանսուա Կամարո:
2 Ռուսաստանում Ֆրանսիական ռազմական առաքելության ղեկավարը:

**Գնդապետ Բրենոնի ծանուցագիրը՝ Պորտ-Սաիդի
հայկական ճամբարի առիթով՝**

9-ը հունվարի 1918 թ.²:

Պորտ-Սաիդի հանդիպակաց կողմում, Սուեզի ջրանցքի ասիական ափին կա հայ գաղթականների մի ճամբար:

Այն բաղկացած է ծերունիներից, կանանցից, երեխաներից, տկարներից. մեծ մասը եկել է Մուսա լեռից, որոնց բերել են Սիրիայի ռազմածովային դիվիզիայի նավերը. դաշնակիցների գորքերի առաջխաղացմանը զուգընթաց, նրանց թիվն այստեղ աճեմ օր աճում է այլ գաղթականների հաշվին: 80-ը եկել են Պետրայից՝ Ակաբայով, ընդհանուր առմամբ կա գրեթե 4000 մարդ:

Պորտ-Սաիդի վարչական հրամանատար, գնդապետ Էլզուդն այս ճամբարի ամսական ծախսն ինձ համար հաշվարկել է 30000 ֆրանկի սահմանում: Ես կարծում եմ, որ թիվը բավական չափազանցված է: Հարկ կլինի դրանից առանձնացնել այս բնակչության աշխատանքի սակագինը, որն այդ ծախսը, հավանաբար, կհասցնի նվազագույնի, եթե նույնիսկ այդ գումարը չվերածի շահույթի:

Ճամբարի հրամանատարը մի անգլիացի լեյտենանտ է, առանց որի հրամանի ոչինչ չի արվում: Հայկական տարբեր ընկերություններ այստեղ կազմակերպել են անգլիացի կամ ամերիկացի ուսուցիչներ ունեցող դպրոցներ: Այս ճամբարով զբաղվում են նաև անգլիախոս տարբեր կրոնական ընկերություններ: Այսպիսով, այստեղ աճեմ ինչ կատարվում է անգլերեն լեզվով և երբեք չեն խոսում Ֆրանսիայի մասին: Սակայն կասկածից վեր է, որ մենք հարկ կունենանք վճարել անգլիացիների ամսական ծախսը 30000 ֆրանկի սահմանում, բայց նրանք կպահպանեն աշխատանքի արտադրանքի շահույթները: Պատերազմի ավարտին մենք գործ կունենանք ուրեմն, անգլերեն լեզվով կրթված, մեզ աքեանաբնաղ մի բնակչության հետ, որը համոզված կլինի, որ միայն Անգլիան է զբաղվել իրենով և, այդուհանդերձ, ամեն ինչի համար մենք պետք է վճարենք:

Զանի որ այդ ծախսը մեզ իսմար անխոսափելի է, խեղացի և տրամաբանական է այն նյութական և բարոյական շահույթները մեզ համար ապահովելը, որոնք ենթադրվում են:

Այսպիսով, ես առաջարկում եմ բրիտանական կառավարությանը պաշտոնապես հայտնել, որ մենք լի ենք վճարակնությունը զբաղվելու բացառապես հայերով՝ այն նույն հիմունքներով, ինչ և ավիդիաներով ու թունիսցիներով, որ այժմվանից իսկ մեր կազմածության ներքո ենք վերցնում նրանց պահելու ծախսերը. հարկ է պատերազմի ավարտին, երբ տեղի կունենա վերջնական կարգավորումը, վճարել այն ծախսերը, որոնց շուրջ նախօրոք պարտավորություն էք առանձնվել, և ճամբարը ղեկավարելու համար մատնանշել մի որակյալ սպայի (լեյտենանտի կամ կապիտանի), ով կըլի գումարտակի ղեկավարի՝ Պորտ-Սաիդի բազայի երամանատարի ենթակայության ներքո: Այդ սպային կօգնեն մի ֆրանսիացի ուսուցիչ և մի աշխատանքի խառնչուկ: Բժշկական ծառայությունը կապահովվի Պորտ-Սաիդի բազան: Ոչքան մենք սպասենք այս պզով այս հարցին լուծում տալու հու-

1 Նախատեսված է նախարարի համար:
2 Փաստաբարոքը վայրի որևէ նշան չի պարունակում:

մար, այնքան մենք մեր ծախսերով անգլիականացված և հատկապես ամերիկականացված հայեր կգտնենք: Մենք պետք է, այսպիսով, ավելին անենք, մեր փողերով՝ մեր դեմ ուղղված կամ նվազագույնը մեզ շրջանցած երբեք իրավիճակը վերականգնելու համար:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 889, ff. 179-180).

**Քեռնում Ֆրանսիայի դեսպան պ. Բոն՝
Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին**

Ճ. թիվ 35:

Քեռն, 10-ը հունվարի 1918 թ.*:
(Ստացել են Կաթինետը հունվարի 12-ին,
Քաղ. վարչ. հունվարի 14-ին):

Վերջին դեկտեմբերի 27-ի թիվ 2419 իմ նամակով, ես պատիվ եմ ունեցել Ձերդ գերազանցությանը հաղորդել այն առաջին տեղեկությունները, որոնք ի մի էի բերել Քեռնալ Միդհաթ բեյի նախաձեռնությանը ձևավորված «Հաշտություն և ազատագրում» օսմանյան նոր խմբավորման մասին:

Այս հաղորդագրությանը շարունակություն տալու համար, ես պատիվ ունեմ Ձերդ գերազանցությանը հղել սրան կից այդ դեսպանության՝ օսմանների վրա հսկողություն իրականացնող գաղտնի գործակալի գեկուցագրի պատճենը, որը նոր ցուցումներ է տալիս այդ նույն հարցի շուրջ: Բացառապես այդ գործակալին թողնելով իր տեղեկությունների ամբողջ պատասխանատվությունը, որոնց արժանահավատությունն ի վիճակի չեմ ստուգելու, ես կարծեցի, որ անխնայ չէ այդ մասին իրագրել դարձնել Գեպարտամենտին՝ դրանց ճշգրիտ լինելու պատճառով, մասնավորապես, այն հարցում, որը վերաբերում է այս գործում որոշ անգլիացի պաշտոնյաներին վերագրվող դերին:

Քեռնալ Միդհաթ բեյի կոմիտեի կազմավորման առթիվ մամուլում տպագրված հաղորդագրությանը հետևել է հայերին ուղղված նրա կոչը: Նշավակելով այն հալածանքները, որոնց զոհը վերջիններս դարձել են, նա նրանց կոչում է համախմբվել իր շուրջը՝ «չեզոքաբար և անկեղծորեն նրանց պարզելով իր ձեռքը»: Այդ կոչը տեղիք է տվել հայերի բազմաթիվ բողոքների, որոնք «Գազետ դը Լոզանը»¹ և «Տրիբյուն դը ժնևում»² արտատպել են: Քեռնալ Միդհաթի ջանադրությունն այստեղ մեկնաբանվել է իբրև ծուղակ, որը նպատակ ունի Անտանտի տերությունների համար պատրանք ստեղծել մի այնպիսի պահի, երբ խոսքն, այնուամենայնիվ, վերաբերում է հաշտության պայմաններին: Արամջյան ազգանունով մի

* Պ. Գուի նախնական ձեռագիր ծանոթագրությունը. «Գաղտնի գործակալների միջև առկա այս թշնամաբեղ ծիծաղելի է: Գրել պ. Բոնն, որ սպասարկող կիսի, եթե նա այդ մասին խոսի բրիտանական նախարարի [սըր Օրաս Ռոմբոլտի] հետ այնպիսի ձևով, որ երկու գործակալները, մեկը մյուսին խանգարելու փոխարեն, միմյանց աջակցեն»:

1 Հմնտ. Un Arménien, Réponse à l'appel de la Ligue ottomane "Paix et Libération" // "Gazette de Lausanne", 3-1-1918.

2 Տն'ու L. Baronian, La Turquie libérale et les Arméniens // "Tribune de Genève", 6-1-1918.

հայ «Գազետ դը Լոզանում»՝ գրում է, որ ինքը հրաժարվում է իր սեփական խեղված ձեռքով անբռնազրուսիկ ձևով սեղմելու այն ձեռքը, որն իրեն է պարզում Քեռնալ Միդհաթը: Նոր կոմիտեի ձևավորման լուրը որոշ վերապահությամբ ընդունելուց հետո, ամենաչափավոր բողոքարկումները բավարարվում են հայտարարելով, որ նրա մասին պատկերացում կազմելու համար, իրենք սպասում են նրա գործողություններին:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 978, ff. 240-240 v).

ՀԱՎԵԼՎԱԾ

1918 թ. հունվարի 1-ին «Ժուրնալ դը ժնևում» լույս ընծայված հոդված¹

Լիբերալ Թուրքիան
մեր հայ հայրենակիցներին

Քառասուն տարուց ի վեր մի խելահեղ քամի է սուրում Թուրքիայի վրայով, կուրացնելով երիտասարդ ու տարեց կառավարիչներին, նրանց մղելով չլաված և աննկարագրելի ավերիչ մոլուցքի: Խաղաղության և համաձայնության դարաշրջանին, որում դուք՝ հայերդ և մենք՝ մայրենականներս, ավելի քան 600 տարի ապրում էինք փոխադարձ եղբայրացման պայմաններում, փոխարինել են կոտորածները և տարաբնույթ կողոպուտները:

Ձեզ՝ հայերիդ, կայսրության հավատարիմ, նվիրված և օգտակար քաղաքացիներիդ, Թուրքիան պարտական է այն նշանավոր ծառայությունների համար, որոնք դուք նրան մատուցել եք՝ ինչպես նրա տնտեսական և առևտրական, այնպես էլ մտավոր ու արվեստի զարգացման գործում:

Ներկայումս, «Երիտթուրքեր» կոչվող քախտախնդիրների մի խառնամաղխ ձեռքից բաց չի թողնում իշխանությունը Կոստանդնուպոլսում և այն պահելու համար, նրանք ամեն օր դիմել են ամենաարյունալի միջոցների, որոնք երբևէ ի հայտ չէին եկել՝ նույնիսկ Արդուլ Համիդի իշխանության օրոք:

Եվ մենք եղել ենք մեր հայ եղբայրների այդ ստոր բնաջնջման անգոր ականատեսները, որոնց այդ ավազակները տեղահանել են ու կոտորել հարյուր հազարներով:

Արդարացնելու համար այդ հանցանքը, Թուրքիայի ներկայիս կառավարությունը տպագրել է հայերի դեմ ուղղված լկտի, ստահող, բազմաթիվ գրքույկներ: Կանանց և երեխաներին մորթելուց հետո, անհրաժեշտ էր հնարել դժբախտ հայ ժողովրդի դեմ ուղղված ցանկացած բնույթի մեղադրանք:

Եթե հայերի շրջանում կային մի քանի սաղրիչներ, ապա կառավարությունը պարտավոր էր փնտրել նրանց և պատժել համաձայն երկրի օրենքների, բայց մի քանի հեղափոխականների պատճառով, եթե այնուամենայնիվ այդպիսիք այնտեղ կային, ավելի քան մեկ միլիոն խաղաղասեր քաղաքացիների, որոնք համոզված էին իրենց անմեղության մեջ, տեղահանելը, կոտորելը, կողոպուտելը, մորթելը՝ չլաված մի գործողություն է, որը մենք, լիբերալներս և իսկական թուրք հայրենասերներս, դատապարտում ենք մեր ամբողջ ուժով և

1 Հմնտ. Aramdjian, Autre réponse d'un Arménien à Kémal Midhat Bey // "Gazette de Lausanne", 4-1-1918.
2 Ստորագրել է Քեռնալ Միդհաթ բեյը:

որը մեր կրոնը վճռականորեն դատապարտում է:

Հայեր:

Դուք հալածվել եք և կոտորվել, որովհետև պահանջել եք արդարություն, որովհետև պահանջել եք անվտանգության պայմաններում ապրելու և ձեր ունեցվածքի ապահովության իրավունք: Եվ մենք՝ թուրք լիբերալներս, արդյո՞ք միևնույն գաղափարի համար չենք արժանացել, որքան էլ նվազ չափերով, ձեր ճակատագրին:

Մենք կարծում ենք, այսպիսով, որ քաղաքակիրթ աշխարհին այսօր հայտարարելով, թե դուք՝ հայերդ, մշտապես եղել եք Օսմանյան կայսրության հավատարիմ և նվիրված հպատակները, մարում ենք սուրբ պարտքը:

Հայեր:

Դուք մինչ այժմ անարդարացիորեն նահատակվել եք. մենք պարտավորվում ենք ապագայում ձեզ համար երաշխավորել այն ազատությունը, որին հավակնելու իրավունքը դուք ունեք, ինչպես և մենք այդ իրավունքն ունենք, մենք՝ մահմեդական թուրքերս, ինչպես նաև, առանց բացառության, բոլոր օսմանները: Եվ քանի որ մենք հալածվել ենք միևնույն պատճառով, մենք պետք է միասնական լինենք միևնույն հիման վրա, որպեսզի մախ և առաջ՝ տապալենք մեր կեղեքիչների բռնապետությունը:

Այսպիսով, մենք չեզոքաբար և անկեղծորեն ձեզ ենք պարզում մեր ձեռքը, որն արատավորված չէ որևէ բծով: Անվարան ու աներկյուղ ընդունեք այդ ձեռքը, միանալու համար մեզ ընդհանուր ջանքեր գործադրելու նպատակով, որպեսզի շուտափույթ հասնենք մեր գաղափարի՝ «Մեր ազատության և մեր ազգային բարգավաճման» կենսագործմանը:

(A.M.A.E., Guerre 1914-1918, Turquie, tome 978, ff. 249-250).

Տրապիզոնում գտնվող պատվելի կապուցին հայրերի Մև ծովի առաքելության ղեկավար հայր Լորենզոն կորվետի նավապետ, «Ալդերարանի» հրամանատար Ռ-որուեպոլոյին

Հուշագիր Տրապիզոնում և նրա արվարձաններում 1916 թ. տեղի ունեցած հայերի կոտորածի մասին՝

Տրապիզոն, 11-ը հունվարի 1918 թ.²:

Քանի որ ժամանակը բացարձակապես չի բավականացնում, որպեսզի կարողանամ ձեզ ներկայացնել այն բոլոր իրադարձությունների ճշգրիտ նկարագրությունը, որոնց մի մասի ականատեսը եղել եմ, ես կրավարարվեմ ձեզ համար ուրվագծելով դրանց հիմնական

1 Տրապիզոնի հայերի կոտորածը և տեղահանությունը սկսվել են 1915 թ. հունիսի վերջերին: Այստեղ, անկասկած, տեղ է գտել թվագրման սխալ:

2 Ըստ հուշագրի առաջին պարագրաֆի՝ թվում է, թե պատումը թրքին է հանձնվել 1919 թ. հունվարին: Քանի որ այն թվագրված է, այնուամենայնիվ, 1918 թ., մենք այն չենք շրջանցել դրա պատմական կարևորության պատճառով և դասակարգել ենք այստեղ:

ուղղությունները և խոստանում են փոքր անց համալրել ու փաստաթղթերով հիմնավորել այս հենքը, Կոստանդնուպոլսով անցնելիս, Ն {որին} գ {երազանցություն} ֆրանսիացի ժողովակալին այն հանձնելու համար:

Ավելի մեծ պարզություն մտցնելու համար, մախ՝ քննարկենք կոտորածի նախապատրաստությունը, այնուհետև՝ կխոսենք դրա իրականացման մասին:

Հայերի բնաջնջումը նախապատրաստվել է համաձայն Կոստանդնուպոլսում գտնվող «Միություն և առաջադիմություն» կոմիտեի խնամքով և մանրակրկիտ ձևով նախօրոք նախագծած ծրագրի:

Ես կասեմ միայն այն մասին, թե ինչ է տեղի ունեցել գրեթե իմ աչքերի առջև:

Վիլայեթի գերագույն կառավարչի պաշտոնն այդ պահին զբաղեցնում էր Ն {որին} գ {երազանցություն} Ջեմալ Ազմին, որը պաշտոնական պատասխանատուն էր, բայց այդուհանդերձ, պետք է հաշվի նստեր «Մ {իություն} և ա {ռաջադիմություն}» կոմիտեի լիազոր ներկայացուցիչ Նայիլ բեյի հետ, որն ուներ մույնքան վճռորոշ, որքան և պատասխանատվությունից զերծ ազդեցություն:

Հայերի անհաջող գործողությունները Վանում հմտորեն օգտագործվեցին, չափազանցվեցին, ներկայացվեցին ամենամոռյալ գույներով: Դրանք ծառայեցին իբրև հրահրիչ միջոց կրոնական մոլեռանդությունը և ազգային վաղեմի ատելությունն արթնացնելու նպատակով: Թափահարում էին հայկական վտանգի խրտվիլակը, հանգամանորեն տնտղում Ռուսաստանին հարակից նահանգում տեղի ունեցած՝ որքան կարեկցանքի արժանի, մույնքան և մասնավոր փաստերը, որպեսզի ամբողջ հայ ժողովրդի նկատմամբ ատելություն սերմանեն և թուրք ժողովրդին մղեն վրեժխնդրության: Նրանց մտադրությունը հանգում էր ոչ թե կոտորածի իրականացմանը հենց ժողովրդի կողմից, որը կրավարարվեր Լինչի դատաստանով (հավանաբար, դաժան, բայց փոքրածավալ), այլ այն բանին, որ նրան տրամադրեն բարեհամբույր և հավանության արժանացնող կեցվածքով ներկա գտնվելու հայ ժողովրդի խիստ հետևողականորեն իրականացվող ոչնչացմանը: Այդ նրանց փայլուն ձևով հաջողվեց. ձեռնամուխ եղան վերջին հրահանգների կայացմանը: Հարկ էր, որ գաղտնիքին իրազեկ լինեին մեծ թվով անձինք: Կոմիտեի անդամների միջև գաղտնի հավաքները բազմապատկվեցին, իրենց հերթին՝ ժողովրդից ելած ցածր ծագում ունեցող, մութ անցյալի տեր բազմաթիվ մարդիկ գործին տեղյակ պահվեցին: Այդուհանդերձ, որպեսզի այս հանցավոր մտադրություններին անզգուշորեն հրապարակայնություն չտրվեր, յուրաքանչյուր մահմեդականի արգելվեց այցելել ակոնիոլային խմիչքների կրպակները. ոստիկանությունը երբևէ ավելի մեծ ջանադրությամբ հսկողություն չի սահմանել մահմեդականների զինեսթափության վրա: Շատախոսություն, հիրավի, չի արձանագրվել: Ուստի, յուրաքանչյուրն զբաղվում էր իր գործերով, առանց նվազագույն տազնապի:

Այնինչ, հունիսի 26-ի առավոտյան քաղաքի բոլոր անկյուններում փակցված տեսան պաշտոնական մի հայտարարություն, որն ազդարարում էր, թե քանզի իրենց հայ եղբայրները, օտարերկրյա մեքենայությունների հետևանքով, որոնք նրանց դրքում են այս պահին ձգտելու անիրագործելի անկախության, մոլորության մեջ են ընկել, կառավարությունն անհրաժեշտ է համարում նրանց տեղափոխել այլ վայրեր, և, հետևաբար, ստանձնում է նրանց տեղափոխելու, տեղավորելու և կերակրելու պարտականությունները, թե ... նրանց տրվում է հնգօրյա ժամկետ, մեկնելուց առաջ իրենց գործերը կարգավորելու համար, թե բոլորը պետք է տեսնեն, որ այս խիստ, բայց անհրաժեշտ միջոցառումը կառավարության բառի կամքի ապացույցն է, որն ուղղված է հետագայում նրանց ավելի մեծ չարիքներից զերծ պահելուն:

Դա տեղիք տվեց իրարանցման: Կողմնորոշվելով գործի էության մեջ, ոմանք ցնցված էին, մյուսները՝ չկարողանալով պատկերացնել նման բարբարոսություն, հավատ էին ընծայում հայտարարության անկեղծությանը: Ամենքը դիմեցին մեր առաքելությանը, որը համանման այլ հանգամանքներում արդյունավետորեն օգնել էր դժբախտներին: Մենք ինքներս գտնվելով վտարման սպառնալիքի ներքո և արժանանալով վատ ընդունելության, լինելով Ֆյանսիայի հովանավորյալներ, չկարողանալով իբրև միջնորդ դիմել իշխանություններին, այնժամ ձեռնամուխ եղանք մեր դեգերումներին դեպի քաղաքում մնացած հյուպատոսությունները, այն է՝ Ամերիկայի, Իտալիայի, Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի: Ավադ: Այդ դեգերումները, որոնք նկարագրելը շատ երկար կտևի, բայց մեծ հետաքրքրություն չի ներկայացնում, մնացին ապառյույուն: Երբ ժամկետի հինգերորդ օրը լրացավ, չարաբաստիկ նախագիծն ուժի մեջ մտավ:

Առաջին զոհը դարձավ հայ գլխգորյան եպիսկոպոսը: Էրզրումի ռազմական դատարան ուղարկվելու պատրվակի ներքո, քանզի նրան մեղադրել էլ իր իսկ փոխերեցը, նրան ճանապարհի դրին կառքով և նա, առանց դատ ու դատաստանի, կախվեց Գյուրուշ-Խամեի արվարձաններում: Նույն օրը ձերբակալվեցին քաղաքի և Պլատանայի գլխավոր երևելի անձինք: Նրանց նստեցրին իբրև թե դեպի Սամաուն ուղղություն վերցնող մի նավ, որին ուղեկցում էր ժանդարմների նավակը: Հասնելով Երեսին, ժանդարմներն սկսեցին կրակել իրենց զոհերի վրա, այնուհետև՝ մահացածներին և մեռնողներին մետեցին ծովը: Նրանցից մեկին հրաշքով հաջողվեց ափ հասնել. նա սողոսկելով հասավ Իտալիայի հյուպատոսություն, պատմեց անցքերի մասին, օգնություն աղերսեց, իրեն վստահեց թուրքական հիվանդանոցին, որտեղից նրան դուրս տարան մեռած, ինչը և կանխատեսելի էր:

Քանի որ ժողովուրդը գլխատված էր՝ ղեկավարներ այլևս չկային, կարելի էր գործել հանդարտորեն և համաչափորեն, թաղամաս առ թաղամաս. ամեն առավուտ կարելի էր ներկա գտնվել այդ տեսարանին: Ամբողջ քաղաքը կարծեք թե ռազմակալված էր, թաղամասերի կենտրոններում տեղադրվել էին զինվորական ուղեկալներ, իսկ այն թաղամասերի կենտրոնը, որը պետք է, ինչպես իրենք էին ինքնագոհությամբ ասում՝ մաքրագարդվեր, անչեղորեն պարփակված էր այնպիսի ձևով, որ ոչ մեկը չէր կարող ո՛չ ներս մտնել, ո՛չ դուրս գալ, քանի դեռ մաքրագարդման գործողությունն ընթացքի մեջ էր: Եվ ինչպիսի աշխատանք էր դա: Կարելի էր տեսնել, թե ինչպես են իրարանցման մեջ դուրս գալիս խղճալի վիճակում գտնվող գումակները, լաց եղող, օգնություն աղերսող ծերունիները, հաշմանդամները, որոնք առաջ էին հրվում հրացանի կոթի հարվածներով: Դիտորդներ հազվադեպ էին լինում, ոլովիետև դատապարտվածներին օգնելու հակում դրսևորելը լավ չէր դիտվում: Այս տեսարանները կրկնվում էին մի փոքր ավելի կամ մի փոքր նվազ դաժանությամբ բոլոր օրերին՝ մինչ քաղաքից հայերի լիակատար դուրս բերումը:

Այս ամենը տեղի էր ունենում քաղաքում, որտեղ հյուպատոսների և օտարերկրացիների ներկայությունը պարտադրամ էր որոշ չափավորություն: Բայց գտնվելով քաղաքից դուրս, ձերբագատված յուրաքանչյուր հսկողությունից, թուրքերը դիմել են սարսափելի բարբարոսական արարքների:

Քաղաքի դարպասների մոտ հաստատվեց վերահսկողության բյուրոյի նման մի բան: Այդտեղ կոմիտեին անդամագրված մի քանի քաղաքացիական անձինք, որոնց օգնում էին զինվորները և ժանդարմները, խուզարկում էին և կողոպտում տղամարդկանց ու կանանց ամբողջ ունեցվածքը, հետապնդելով, մասնավորապես, քանկարժեք իրեր հայթայթելու նպատակ: Այնուհետև, մի քանի ժանդարմների վստահված փոքրաթիվ խմբերով նրանց ուղարկում էին անհայտ ուղղությամբ: Տղամարդկանց բաժանում էին կանանցից, իսկ երե-

խաներին առանձնացնում: Յուրաքանչյուր խմբի, տղամարդկանց, կանանց, երեխաների ճակատագիրը կանխորոշված էր: Առաջին հերթին՝ առջևում, արագացված երթի պայմաններում, սվինների հարվածներով սպանվել են դանդաղաշարժները, ետ մնացողները, անկախ այն բանից, թե որոնք էին դրա պատճառները՝ ծերությունը, հաշմանդամությունը կամ հիվանդությունը: Հարկադրական կանգառների մի քանի ժամերը, գիշերվա ընթացքում, հատկապես կանանց համար ավելի սարսափելի էին, քան երթը: Տղամարդիկ արագ են դարձրել տառապելուց: Ճանապարհի երկայնքով, մեկուսի կիրճերում տեղաբաշխված էին կաշառված ավազակները, որոնք պետք է սպասեին հայերի ժամանմանը, նրանց սպանելու համար: Փորել էին ընդարձակ փոսեր, որոնք նախատեսված էին սարսափելի խառնաշփոթի պայմաններում մահացածներին և հուգարքի մեջ գտնվողներին հյուրընկալելու համար: Չույգ-գույգ, ձնոքերն իրար կապկպած, նրանց ուղղում էին դեպի որոշակի վայրեր: Կացիններով, դազանակներով զինված, իսկ երբեմն անզեն՝ դահիճներն այնտեղ ի կատար էին ածում իրենց զագրելի գործը: Ցանկացած հետաքննության հետքը կորցնելու և հավատ ներշնչելու համար առ այն, որ տեղահանվածները ինչ-որ տեղ էին ժամանում, իրոք որ թույլատրում էին այս կամ այն վայր ժամանել մի քանի ճանաչված հայերի և նրանց հարկադրում իրենց ժամանման մասին տեղեկություններ հաղորդել քաղաքում մնացած բարեկամներին: Այդ տեղեկությունները ոչ մեկի չէին մխիթարում, բայց կասկածներ էին սերմանում այլոց իրական ճակատագրի հարցում: Կանայք և երիտասարդ աղջիկներն այլ վերաբերմունքի արժանացան: Լինելով մարդասեր և նրբակիրթ, թուրքերը նրանց խնայեցին՝ ունեցավ պատճառ: Հարկ է նշել, որ շատ սպաներ և քաղաքացիական անձինք հերթականությամբ ուսումնասիրում էին կանանց ու երիտասարդ աղջիկներին և նրանք, ովքեր նրանց դուր էին գալիս, դառնում էին նրանց զոհը, ասենք, որ շատ հաճախ դյուրին ձևով, եթե նկատի ունենանք, որ մարդկության այդ հատվածը գտնվում էր գրեթե աներկբայելի մահվան դեմ հանդիման: Այդ ընտրությունն անելուց հետո, մյուս մասին ուղարկում էին դեպի ներքին մահանգները: Դրանց թվում կային այնպիսիք, որոնք ժամանել են Մալաթիա, Խարբերդ և Հալեպ. քանի որ ճանապարհի ընթացքում կարևոր չէ, թե ինչպիսի օգնության ցուցաբերումը նրանց կտրականապես արգելվել էր, կարելի է պատկերացնել, թե ինչպիսի վիճակում էին այդ իղճուկներն այդտեղ ժամանել:

Մնում էին երկու սեռին պատկանող երեխաները: Կառավարությունը որբանոցներ հիմնադրեց, բայց որտեղից էր հնարավոր գտնել այնպիսի անձանց, որոնք իրենց նվիրաբերին մշտապես հոգածություն պահանջող այս խեղճ փոքրիկ եակներին: Պետական միջոցների անտնտես վատնումը, որը Թուրքիայում մեծ չափերի է հասնում և ահռելի է մույնիսկ լավ կազմակերպված վարչություններում, անթիվ-անհամար էր նման բնույթի ձեռնարկություններում, որտեղ վերահսկողությունը գրեթե անհնար է: Ուստի, այս որբանոցները չկարողացան գոյատևել: Թուրքերի ուղեղում ծիլեր արձակեց իրենց արժանի մեկ այլ գաղափար՝ Վճռեցին այս փոքրիկներին հանձնել նրանց, ովքեր կկամենային նրանց վերցնել իրենց մոտ պահելու համար և դարձնել այնպիսի, ինչպիսին կցանկանային՝ պայմանով, որ նրանք մահմեդականներ լինեն: Փոքրիշատե ունևոր ընտանիքներն ընտրեցին առողջներին, ամրակազմներին, մի խոսքով՝ հրաշալի երեխաներին, իսկ ինչ վերաբերում է մյուսներին՝ առաքելությունը հանդես եկավ նրանցից մի քանի հարյուրին վերցնելու առաջարկությամբ: Առաջարկը կտրականապես և գայլույթով մերժվեց: Գտան մեկ այլ միջոց: Նրանց բարձրացրին լաստանավերի վրա. մեր հարթ տանիքներից մենք տեսանք, թե ինչպես են մեկնում այդ փոքրահասակների բազմությամբ լի լաստանավերը, որին ուղեկցում էին մի քանի ժանդարմ և մի քանի կին, իսկ մի քանի ժամ անց այս լաստանավերը վերա-

դարձան՝ իրենց տախտակամածի վրա բերելով միայն ժանդարմներին: Ի՞նչ էր պատահել կանանց և երեխաներին: Անողոք ալիքները պարտավորվեցին մեզ մասամբ սլատասխանել մի քանի օր անց, միայն մեր տան շրջանում, փոթորիկն ափ նետեց 18 փոքրահասակների դիակներ, ոլոնցից մի քանիսը հուղարկավորվեցին մեր աչքի առջև: Այս ընթացքում, հարկ է արժանին հատուցել, ի շարս այս դահիճների, գտնվեցին մի քանի գթասիրտ անձինք, որոնք արտաքսվածներից ոմանց հնարավորություն ընձեռեցին հասնել նշանակման վայր, հովանավորեցին մի քանի կանանց, փրկեցին մի քանի երեխաների: Նրանք բազմաքանակ չէին, բայց այդպիսիք կային: Նրանցից ոմանց մենք ճանաչում ենք, սակայն նրանց անունները չենք նշում, որովհետև չգիտենք այլոց անունները:

Վերջապես մի քանի հատկանշական ծանոթություններ անելու հարկը կա, իսկ այդ առանձնահատկությունները բնորոշող անթիվ դրվագները ես թողնում եմ իմ առաջիկա գեկուցագրի համար: Ես միայն կավելացնեմ այն, ինչը վերաբերում է, մասնավորապես, կաթոլիկ հայերին և մեր առաքելությանը:

Քաղաքի բոլոր ելքերը հսկում էին զինված ուժերը, ճողոպրելն անհնար էր: Լինելով բազմաքանակ, նրանք վազում էին մեզ մոտ, եկեղեցի և տուն, որոնք հետապնդվողների ավանդական ապաստարանն են: Ցավալի էր նրանց տեսնել և ի վիճակի չլինել օգնելու: Նախկինում դրան վրա ծածանվող Ֆրանսիայի դրոշմ արգելում էր օսմանյան իշխանության մուտքը: Կապիտուլյացիաների վերացումը մեզնից խլեց այդ գեները. որևէ դրոշ չէր խանգարում ոստիկանության շուրջկալին և մեր տան բոլոր անկյունների խուզարկմանը: Ուստի, ժանդարմները թուլատրեցին, որ նրանք գան մեզ մոտ, անգամ նրանց այդտեղ էին ուղարկում՝ համակենտրոնացնելու և այնուհետև՝ առանց դժվարության մեծ քանակությամբ նույն վայրում գտնելու համար: Ես վազում էի հյուպատոսների մոտ, որոնք, իրենց հերթին, գալիս էին, անձամբ լալիս այդ հավաքված թշվառներին ի տես, բայց անգոր լինելով բարեկամելու իրավիճակը՝ բավարարվում էին նրանց հղելով բարի խոսքեր, խոստումներ և ամեն ինչ սահմանափակվում էր դրանով, որովհետև կամ նրանց ճեպագրերը չէին առաքվում, կամ նրանց դեսպանները չէին աջակցում. մնում էր միայն թողնել դժբախտներին իրենց կործանարար ճակատագրի ճիրաններում:

Եվս երկու խոսք մեր հայ կաթոլիկների առանձնահատուկ պարագայի մասին: Ռուսների՝ քաղաքի հաճախակի ոմբակոծումների պատճառով, նրանք, գրեթե բոլորը, բնակվում էին տաս կիլոմետր հեռավորությամբ մի գյուղում (Տոսս): Հենց որ մոռալ շշմջյունները նրանց հասան, նրանք շտապեցին իջնել քաղաք: Նրանք հույս էին տածում, որ իրենց նկատմամբ հատուկ հարգանք կարող է դրսևորվել, ինչպես այդ արվել էր նախկինում, քանի որ կաթոլիկների կարգավիճակը նրանց մասամբ դնում էր Ֆրանսիայի հովանու ներքո: Արված բոլոր քայլերը ոչնչի չհանգեցրին: Խնդրեցին հյուպատոսներին, որոնք գործեցին այդ ոգով, առանց որևէ արդյունքի հասնելու: Այդ ժամանակ, ես խորհուրդ էի տալիս երևելի անձանց գնալ անձամբ տեսնելու իրենց թուրք բարեկամներին և նրանց միջնորդությամբ որոշ զիջումներ ստանալ Նայիլ բեյից: Նայիլ բեյը որոշ առարկություններ արեց, վկայակոչեց, որ այսօրվա հայերը հեղափոխական շարժմանն անմասնակից չեն, ինչպես նախկինում, ապա զիջեց կամ պատրանք ստեղծեց, թե զիջում է, նրանց հանգստացրեց և գոհ ետ ուղարկեց: Ֆրանսիայի հյուպատոսության քարգմանիչ, խղճուկ Ապիկ Միսսիրը, որն, այդուհանդերձ, լավ էր ճանաչում թուրքերին, ասում էր, որ ինքը համոզված է խոստումների անկեղծության հարցում: Նրանք գյուղ վերադարձան հուսադրված: Մի քանի օր անց, կիրակի երեկոյան, նրանք արդյոք չտեսա՞ն, երբ բոլորը համախմբված էին տներից մեկում, թե ժանդարմներն ինչպե՞ս են իրենց շրջափակում և լուսամուտներից կրակ բաց

անում իրենց վրա: Այս գործողությունը տևեց ամբողջ զիջերվա ընթացքում: Լուսաբացին տղամարդկանց բաժանում են կանանցից և մոտակա փոքր հովիտներում կտտորում: Նրանց թվում էր Տրապիզոնի Ֆրանսիայի հյուպատոսության քարգմանիչ Ապիկ Միսսիրը: Բոլոր նրանք, ովքեր մնացել էին քաղաքում, արժանացան միևնույն ճակատագրին: Դրանից մի քանի օր անց, կանանց և աղջիկներին ցուցադրեցին, վաճառեցին կամ ցլորուցան արին, ինչպես այդ մասին վերն ասվել է մյուսների առիթով:

Ահա թե ինչպիսին էին Տրապիզոնում տեղի ունեցած՝ հայերի տեղահանություն կոչվող սարսափելի իրադարձության ակնբախ առանձնահատկությունները, հիմնական ուղղությունները: Կարելի էր ավելացնել անհամար սարսափագրու մանրամասներ, բայց ես պլանցից մի քանիսը թողնում եմ իմ հաջորդ գեկուցագրի համար:

(A.C.M., SS E a 200).

484

Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշան՝ Արտաքին գործերի նախարարությունում Ասիայի փոխտնօրեն պ. Ժան Գուին

Ն:

Փարիզ, 12-ը հունվարի 1918 թ.:

Տասն օրից ի վեր սուր գրիպի պատճառով անկողնում գամված, ես չկարողացա, ցավոք սրտի, գալ ձեզ տեսնելու, թեպետ կարիք ունեի ձեզ տեղեկացնելու որոշ կարևոր հարցերի: Ես ինձ թույլ եմ տալիս գրել այս նամակը, որը թելադրում եմ իմ մահճակալից, հրավիրելու համար ձեր ուշադրությունն այն բանի վրա, որ խիստ շահավետ կլինի, եթե ներկայումս Ստոկհոլմում գտնվող Ռուսաստանի իմ հայրենակիցներից մեկը՝ պ. Չորյանը (որը հայտնի է նաև Ռոստոմ Ինուրով) իրագեկ դառնա Կովկասի ռազմաճակատում հայերի դիմադրությունը կազմակերպելուն վերաբերող, ձեր համաձայնությամբ՝ մեր հրդեհրած հրահանգներին: Պ. Չորյանն առաջինն է Սահմանադիր ժողովում ընտրվել իբրև պատգամավոր, այնժամ, երբ պ. Վարանդյանը՝ երկրորդը:

Արդյո՞ք հնարավոր կլինի, որ դուք գրեիք կամ հեռագրեիք Ստոկհոլմում ձեր դիվանագիտական առաքելությանը՝ հանձնարարելով նրան իրագեկ դարձնել պ. Չորյանին՝ որդեգրված բոլոր միջոցներին և այն հեռագրերի բովանդակությանը, որոնք Ազգային պատվիրակությունն Արտաքին գործերի նախարարության միջոցով ուղարկել է Թիֆլիս և Պետրոպոլս:

Ազգային պատվիրակությունը գտնում է նաև, որ խիստ շահեկան կլինի, եթե պ. Չորյանը, որը գործունյա է և պատերազմի սկզբնական շրջանում գլխավորել է կամավորական կորպուսների կազմավորումը, որքան հնարավոր է արագ վերադառնա Կովկաս, որտեղ նրա ներկայությունը, եթե նկատի ունենանք նրա պաշտոնը և այն հեղինակությունը, որը վայելում է մերոնց շրջանում, խիստ արդյունավետ կլինի:

(A.M.A.E., Guerre 1914-1918, Turquie, tome 894, ff. 176-176 v).

**Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնը՝
Ստոկհոլմում Ֆրանսիայի նախարար պ. Տիերոյին**

Հ. թիվ 19:

Փարիզ, 14-ը հունվարի 1918 թ., ժ. 16-ին:

Ես հիմնվում եմ վերջին նույնքերի 29-ի ձեռք բերված 650 հեռագրի վրա¹:

Հայկական ազգային պատվիրակության նախագահ Նուբար փաշան ձեռք բերված արտաքին կյանի, եթե ռուսական Սահմանադիր ժողովի պատգամավոր պ. Ջորյանին տեղեկացնեք, որ պատվիրակությունը գտնում է, թե նրա ներկայությունը Կովկասում անհրաժեշտ է, որտեղ անկարգությանը դիմակայելու, դաշնակիցների կողմից նյութապես և բարոյապես աջակցվող գործողությամբ ազատագրված երեք վիլայեթների լքմանը և Կովկասի նահանգներում բուրքական ասպատակմանը խաչընդոտելու նպատակով կազմակերպվում է բնակչության տարբեր տարրերի միջև համաձայնություն հաստատող վարչակարգ: Իրագեցվել է լինելով պ. Ջորյանի գործունեությանը և այն հեղինակությանը, որը նա վայելում է իր հայրենակիցների շրջանում, Հայկական պատվիրակությունը նրա հետ հույսեր է տածում Կովկասի բանակի և հայկական զորքերի կազմավորումն ակտիվացնելու և այս տարածաշրջանում հասարակական փրկության գործի իրականացմանն աջակցելու հարցում:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 894, ff. 178-178 v).

**Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար
փաշան՝ Արտաքին գործերի նախարարությունում
Ասիայի փոխտնօրեն պ. Ժան Գուլին**

Ն:

Փարիզ, 14-ը հունվարի 1918 թ.:

Ձեր հեռագրի նախագիծը հրաշալի է: Ես շտապում եմ այն ձեռք ուղարկել իմ ստորագրությամբ²:

Ինչ վերաբերում է Անդրանիկի ճեպագրին³, որը դուք բարեհաճել եք ինձ փոխանցել,

1 Չի հայտնաբերվել:
2 Տես ստորև թիվ 490 փաստաթղթի հավելվածը:
3 1918 թ. հունվարի 10-ի: Ահա Անդրանիկի այդ հեռագրի բնագիրը՝ վերծանման բացթողումներով հանդերձ. «Չեղմանուխ ենք եղել աշխատանքի: Երկու խորհուրդները մեծապես հավանություն են տվել 20000 մարդու բաղկացած (երեք) դիվիզիաների օգտագործմանը Թուրքիայում: Բարեհաճեք աջակցել և ապահովել դաշնակիցների (նյութական) ... բարոյական օգնությունը ... ձեռք բերվող ներկայացուցիչ անհրաժեշտ է ... միջև... և ... ձեռք բերվող կործանի»:

խիստ ցավալի է, որ այն աղճատվի կամ բաց թողնված բառերով, կամ այլ դժվարամատչելիություններով: Արդյոք հնարավոր չի լինի մեծ կարևորության պատճառով, խնդրել դրա պատճենը: Անդրանիկն ակնհայտորեն ինձ խնդրում է նշանակել մի լիազոր ներկայացուցիչ, բայց հասկանալի չէ, թե ի՞նչ նպատակով:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 894, ff. 179-179 v).

**Թիֆլիսում Ֆրանսիայի հյուպատոս պ. Նիկոլան՝
պ(արոնայ)ք Արտաքին գործերի նախարար Ստեֆան Պիշոնին,
Պետրոգրադում Ֆրանսիայի դեսպան Նուլենսին**

Ճ. թիվ 3, 3:

Թիֆլիս, 14-ը հունվարի 1918 թ.:
(*Ստացել են* Կար. մարտի 1-ին,
Բաղ. վարչ. մարտի 4-ին):

Այս գիշեր անկարգությունները Թիֆլիսում հասել են գագաթնակետին: Արդեն երեք շաբաթից ի վեր, բազմաթիվ սպանությունների, ունեցվածքների և անձանց դեմ իրականացված հարձակումների համար լաց լինելու առիթն ունեցել են, բայց ռուսական նոր տարվա այս լույս գիշերը սարսափելի էր: Բաղաքի բոլոր կետերում և մասնավորապես, իմ լուսամուտների առջև մարտեր տեղի ունեցան: Այդ խանդավառությունը նվազեց միայն ցերեկը և այստեղից ու այնտեղից դեռևս լսելի է որոշ համառ հրաձգություն:

Այս անկարգությունները պատիվ չեն բերում Անդրկովկասի կոմիսարիատին, որն անգործ է ճնշելու այն ամենն, ինչ տեղի է ունենում:

Բնակչությունը չափից ավելի հուզված է թե՛ գիշերային անընդմեջ կրակոցներից և թե՛ ճիշտ ու սուտ այն լուրերից, որոնք անընդմեջ տեղ են հասնում: Գյանջայում կամ Ելիզավետպոլում տեղ են գտել նշանակալից հուզումներ, առկա են բուրքերի սպառնալիքները, որոնք շրջափակվել են Ակմալսիքում, խելահեղ դարձած հայերը փախչում են արվարձաններից Թիֆլիս, որտեղ իրենց հառաչանքներով հեղեղում են վարչությունները:

Այն բույլավորությունը, որը կոմիսարիատը տվել է թաթարներին՝ մահմեդականների զինված կորպուս կազմավորելու առիթով, ցնցել է հայերին: Նրանք իրենց արդեն կոտորված են համարում: Եվ, այդուհանդերձ, կասկածից վեր է, որ թաթարները, ինչպես նաև Կովկասի մյուս ժողովուրդները կարող են իրավունք ունենալ զինվելու և, առնվազն այս պահին, թվում է, թե ոչինչ չի կարող արդարացնել հայերի երկյուղները: Ինչո՞ւ չեն կարող թաթարները չեզոք լինել:

Մյուս կողմից՝ Կովկասի հայերի համախմբումը, ինչ էլ որ այդ մասին կարողանա ասել Անդրանիկը, տեղի է ունենում բավական դանդաղ և ինչպես թվում է, շատ անաշխույժ: Ես չգիտեմ, թե արդյո՞ք երկու ամիս անց գործընթացը ավարտին կմտնենա:

Փոստատարը, որը Ձերդ գերազանցությանը կբերի այս նամակը, մեկնելու է վաղը: Այսօր հունվարի մեկն է և վարչությունները փակ են: Ես չեմ կարող, այսպիսով, շտաբից ետ

վերցնել այն թղթակցությունը, որը նրան եմ փտահել դեսպանության համար, և որը նա պահում է, թվում է, թե երեք շաբաթից ի վեր:

Ես չեմ կարող ինձ թույլ չտալ Չերդ գերագնացությանը տեղեկացնելու, որ ծայրահեղ դեպքում ներկայումս, ֆրանսիացիների համար անհնար կլինի դուրս գալ երկրից, քանի որ ճանապարհները փակ են և Ռուսաստանի վրայով այդ անելը միշտ վտանգավոր կլինի: Միայն Պարսկաստանն է, որը կկարողանա մեզ ապաստան հատկացնել:

Հավանաբար, իրավիճակը հետագայում փոփոխություն կկրի:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 894, ff. 180-180 v).

488

Կովկասում ֆրանսիական ռազմական առաքելության ղեկավար, փոխգնդապետ Շարդինյին՝ Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին

Հ. թիվ 4:

Թիֆլիս, 15-ը հունվարի 1918 թ., ժ. 18-ին:
(*Ստացել է* Զադ. վարչ. հունվարի 16-ին):

«Հայաստանը հուզված է այն թույլտվությամբ, որը տրվել է մահմեդականներին՝ կորպուս կազմավորելու համար:

[*Ստորագրված է*] Նիկոլա»:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 894, f. 181).

489

Խորհրդի նախագահը, Ռազմական նախարարը՝ Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին

Ճ. թիվ 893/3: Գաղտնի:

Փարիզ, 15-ը հունվարի 1918 թ.:
(*Ստացել է* Կաբինետը հունվարի 16-ին):

Հունվարի 9-ի թիվ 60 նամակով¹, դուք ինձ հաղորդել եք այն ուղերձը, որը ձեր միջնորդությամբ Պողոս Նուբար փաշան հենց նոր է իղել Հայկական ազգային խորհրդին²:

1 Ստորագրել է գեներալ Գրաման:
2 Չի հայտնաբերվել:
3 Վերն արտատպված է թիվ 474 փաստաթղթի հավելվածում:

Իմ կողմից, ես նկատի ունեմ Պետրոգրադում գտնվող մեր ռազմական առաքելության ղեկավարին ուղարկել այն հեռագիրը, որի մախնական բնագիրը կից ներկայացվում է¹:

Ես պատիվ ունեմ ձեզ խնդրել քարեհաճելու, որքան հնարավոր է արագ, ինձ տեղեկացնել, թե արդյո՞ք այս հեռագրի բովանդակությունը համապատասխանում են ձեր Ղեկավար տանձնտի դիրքորոշմանը:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 894, f. 185).

490

Արտաքին գործերի նախարարը՝ Թիֆլիսում Ֆրանսիայի հյուպատոս պ. Նիկոլային

Հ. թիվ 1:

Փարիզ, 16-ը հունվարի 1918 թ.:

Ես ձեզ երախտապարտ կլինեմ, եթե դուք Պողոս Նուբար փաշայի ստորև ներկայացվող հեռագիրն ուղարկեք Էջմիածնի կաթողիկոսին և Հայկական ազգային մշտական կոմիտեին:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 894, f. 196).

ՀԱՎԵԼՎԱԾ

Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշան՝ Թիֆլիսում Ֆրանսիայի հյուպատոս պ. Նիկոլային

Հ:

Փարիզ, [անթվակիր]:

Հեռագիրն ուղարկվել է, որպեսզի հաղորդվի՝

- 1/ Էջմիածին՝ հայերի Նորին սյրություն կաթողիկոսին,
- 2/ Թիֆլիս՝ Հայկական ազգային մշտական կոմիտեին:

Ֆրանսիայի և Անգլիայի դաշնակից կառավարությունները, ինչպես դուք գիտեք, ժամանակավոր կառավարությանը և Կովկասի իշխանություններին օգնելու նպատակով վարկեր են բաց արել իրենց ներկայացուցիչների համար, տեղում դիմադրություն կազմակերպելու և, մասնավորապես, մեր հայրենակիցներին՝ թուրքերի բռնություններից ապահովագրելու համար: Ֆրանսիացի և անգլիացի ներկայացուցիչների առաջադրանքը դյուրին

1 Այս հեռագրի մասին, որն ուղարկվել է առանց որևէ փոփոխության պ. Պիշոնի հավանությանն արժանալուց հետո, տե՛ս ստորև թիվ 496 փաստաթուղթը:
2 Ստորագրել պ. դը Մարծերին:
3 Բոմբեյով:

դարձնելու համար, անհրաժեշտ է և հրատապ, որ մեր այն բոլոր հայրենակիցները, որոնք դրամական որս միջոցներ ունեն, դրանք նրանց հատկացնեն այն վարկերի դիմաց, որոնք նրանց համար կբացվեն Ֆրանսիայում: Ֆրանսիական կառավարությունը հիրավի վճռել է, որ այն մասնավոր անհատները և կազմակերպությունները, որոնք հյուպատոսությանը ռուբլիներ կհատկացնեն, հեռավորային փոխանցման միջոցով կվարկավորվեն դրանց համարժեք ֆրանկներով մեկ օրվա ընթացքում: Մուրհակների գեղջման սագային բանկում, որն իր հուսալիությանը քաջ հայտնի հաստատություն է, հաշիվներ կբացվեն նպաստառուների անունով:

Ազգային պատվիրակությունը չի կասկածում, որ մեր հայրենակիցները պատրաստակամորեն կօգտվեն այս առիթից, իրենց սեփականությունը վստահելի տեղում պահելու և միաժամանակ այն դրամարկղի մատակարարմանը մասնակցելու համար, որը նախատեսված է մեր երկրի պաշտպանությունը երաշխավորելու և հայերին ազատագրելու համար: Ես հույսեր եմ տածում, որ դուք մեր հայրենակիցներին կդռոքեք թողովելու, հնարավորության սահմաններում, ամենամեծ գումարները:

Ֆրանսիայի հյուպատոսը Թիֆլիսում կստանա ռուբլիներ և կհանձնի փոխանցման հանձնարարագրեր կամ Մուրհակների գեղջման բանկի ստացագրեր, եթե նպաստառուներն այդ գերադասեն:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 894, ff. 197-197 v).

Պաղեստինում և Սիրիայում Ֆրանսիայի Գերագույն կոմիսար պ. Ժորժ-Պիլոն Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին

Հ. թիվ 23:

Կահիրե, 16-ը հունվարի 1918 թ., ժ. 19.15-ին:
(Ստացել է Քաղ. վարչ. հունվարի 17-ին):

Կիլիկիայի հայ եպիսկոպոս Ն (որին սրբազնություն) և Զուղ Մխիթարյանը, որը կաթողիկոսի՝ վստահելի անձն է, համառորեն խնդրում է թույլատրել իրեն մեկնելու Ֆրանսիա՝ Թուրքիայի իր դժբախտ հայրենակիցների համար օգնության առաքմանը հետամուտ լինելու մտադրությամբ և նկարագրելու նրանց կացությունը, որին քաջածանոթ է: Մյնչ բրիտանական իշխանություններին դիմելը, ես կցանկանայի այս ուղևորության նպատակահարմարության շուրջ շտապ տեղեկանալ Պողոս Նուբար փառչայի կարծիքին:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 894, f. 195).

1 Ն (որին սրբազնություն) և Զարայանը:

Միջազգետրում Ֆրանսիայի հյուպատոսության կառավարիչ պ. Ռուն Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին

Ճ. թիվ 16:

Բաստրահ, 16-ը հունվարի 1918 թ.:
(Ստացել է՝ Կար. մարտի 13-ին,
Քաղ. վարչ. մարտի 14-ին):

Մի հեղինակավոր հոգևորականի կազմած ծանուցագրի միջոցով կարողացել եմ տեղեկություն ստանալ հայկական կոտորածների և թուրքական վայրագությունների զոհը դարձած քաղղեացիների մասին:

Ես պատիվ ունեմ այս ծրարում Ձերդ գերազանցությանը հղել դյա պատճենը: Չնայած որոշ անճշտություններին և, հավանաբար, նաև որոշ փոքր չափազանցություններին, ինձ չի թվում, թե այս փաստաթուղթը Դեպարտամենտի համար հետաքրքրությունից զուրկ է:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 889, f. 185).

ՀԱՎԵԼՎԱԾ

Քաղղեական հոգևորականի հղած ծանուցագիրը՝ Միջազգետրում Ֆրանսիայի հյուպատոսությանը

Ծ:

Ավաա:

Հայաստանի կոտորածների ընթացքում քաղղեական ազգի տված զոհերը

Վան. Անկեղծորեն ասած, Վանում կոտորածներ տեղի չեն ունեցել: Ավելի ստույգ, դա կատաղի պայքար էր թուրքերի և հայերի միջև, որն ավարտվեց վերջիններիս օգտին, մեծ վնաս պատճառելով հարակից շրջաններին: Թուրքերը հայերին մեղադրել են դավաճանության համար և սկսել նրանց հալածել: Արդյո՞ք հիմնավոր էր այդ մեղադրանքը, թե ոչ, այդ մասին, հավանաբար, օրերից մի օր կտեղեկացնի պատմությունը: Ամեն դեպքում, հավաստի էր, որ Վանի հայերը վաղուց ի վեր և զաղտմաբար նախապատրաստվում էին պայքարի, որը պետք է շուտով տեղի ունենար: Նրանց բոլոր զորակոչիկները զենքը ձեռքներին դառնում էին թուրքական բանակի դասալիքներ և գնում միանալու *ֆիդայիներին*¹ Չատաքի [sic]² գավառում, որտեղ նրանք հիմնադրել էին զինավարժությունների կետ: Նրանք, ով-

1 Ֆեդային:
2 Իմա՝ Շատախ:

քեր մնացել են բանակում, մեծ մասամբ դարձել են Կովկասում բուրքերի ջախջախման պատճառով: Այն օրը, երբ բուրքական կառավարությունը սկսել է մոլեգնել և ձեռքարկել դաշնակների գլխավոր առաջնորդներից մեկին՝ ու կարգադրել ի կատար ածել զանգվածային սպանություններ, հայկական գնդերից՝ Վանի գնդերն իրենց կանանց և երեխաներին Կովկաս ուղարկելուց հետո, բացահայտորեն գլուխ են քաղաքն ու եռօրյա մարտից հետո այնտեղից դուրս վտնդել բուրքերին: Երկու կամ երեք ամսվա ընթացքում բուրքերը երեք անգամ վերագրավել են քաղաքը: Ի վերջո, այն մնացել է հայերի ձեռքում, որոնք այդտեղ, ինչպես պատմում են, մահմեդականների դեմ ուղղված վայրագություններ են գործել: Նորին սրբազնություն Մանան, Վանի քաղաքացի եպիսկոպոսը, ժամանակ է ունեցել իր կողքին գտնվող՝ հարյուրի հասնող անձանցից բաղկացած մի քանի քաղաքական ընտանիքների հետ մեկտեղ ճողուպրելու: Նրանք ապաստան են որոնել Թիֆլիսի արվարձաններում: Անհայտ է շրջակայքում գտնվող նեստորական գյուղերի ճակատագիրը, որտեղ կային կաթոլիկությունն ընդունած մեծ թվով մարդիկ: Ես միայն գիտեմ, որ մոտավորապես երկու հարյուր հայ և նեստորական կանայք ու երեխաներ տարվել են Մոսուլ (նրանք գալիս էին Բաշ-Կալեի և Ջուլամերկի արվարձաններից): Նրանց տեղավորել են Դ-Դ. ՀՀ.² իջևանատանը, որտեղ գրեթե բոլորը թշվառությունից և հիվանդությունից կնքել են իրենց մահկանացուն:

Վանի իրադարձություններից հետո, և բուրքական ու գերմանական զինվորական դեկավարների դրոմամբ, մի պաշտոնական հրաման է ուղարկվել Կոստանդնուպոլսից՝ հայերին մարտական գոտուց հեռացնելու վերաբերյալ: Այդ հրամանը տարածվում էր հայկական վեց վիլայեթների վրա: Իշխանությունները, ինչպես ասվել է, վատ են ըմբռնել «հեռացնել» բառի իմաստը. նրանք դա մեկնաբանել են «կոտորել» իմաստով և այն չարաշահել են միմյանցից առաջ անցնելով:

Էրզրում, Խարբերդ, Կոնիա և այլն...

Կարելի է ասել, որ այս վիլայեթներում, հեռացմանը վերաբերող հրամանը պաշտոնապես ճշգրտորեն կատարվել է: Տեղում կոտորածներ չեն արձանագրվել: Գործի մասնակիցներին պարզապես հայտնել են, որ նրանց երկիրը լքելու հրաման է տրվել: Նրանց նույնիսկ ժամանակ է տրվել, որպեսզի իրենց իրերը վաճառեն, դրանք բանկերին հանձնեն և ուղևորության համար պաշարներ վերցնեն: Հենց որ բազում հազարավոր մարդիկ պատրաստ էին լինում, նրանց վստահում էին ժանդարմների պահակախմբերի և ճանապարհի դնում դեպի անհայտ տարածաշրջան: Ինքնին հասկանալի է, որ այս խեղճ մարդիկ ամբողջությամբ հանձնված էին ժանդարմների ողորմածությանը, որոնց հանձնարարված էր նրանցից աստիճանաբար ձեռքազատվել: Իրենց սեփական վիլայեթների [sic] սահմաններից դուրս գալուն ևեթ, տղամարդիկ անջատվում էին կանանցից, տարվում ձորակները կամ շրջափակվում ժանդարմական ստորաբաժանման կողմից և գնդակահարվում: Մնում էին կանայք և երեխաները (վերջիններս խիստ փոքրաթիվ էին): Նրանց ճանապարհում էին դեպի Դ-եր Չոր [sic]՝ կամ Մոսուլ: Ճանապարհին պահակախմբի զինվորներին հանձնարարվում էր նրանց կողոպտել, խոշտանգել, վաճառել, հրացանի կոթի հարվածներով նույնիսկ սպանել և այլն, և այլն... Այսպես, օրինակ, բազմաթիվ անգամներ Մոսուլում մեզ հայտնում էին

1 Վանի հայ պատգամավոր պ. Վամյանը:
 2 Դոմինիկյան հայերը:
 3 Իմա՝ Դ-եր-Էզ-Չոր:

10 կամ 20 հազար կանանց մոտալուտ ժամանման մասին, իսկ ժամանում էին, ըստ էության, չորսից հինգ հազարը: Այդ հեռավոր տարածաշրջաններից Մոսուլի վիլայեթ [sic] ժամանած հայերի՝ կանանց և երեխաների թիվը, ես գտնում եմ, որ հասնում է մոտավորապես երեսուն հազարի: Մեծ թվով մարդիկ ցրվել էին Մոսուլի շրջակայքում գտնվող քրիստոնեական և մահմեդական գյուղերում: Քաղաք բերվեց մոտավորապես տասը հազարը: Սկզբնական շրջանում, քաղաքի քրիստոնյա և մահմեդական բնակիչներն այս դժբախտների նկատմամբ գթությանբ լի, նրանց մեծահոգաբար օգնության ձեռք էին մեկնում: Շաբաթներ շարունակ նրանց համար բերում էին հագուստներ, ուտելիք և այլն... Կառավարությունն սկզբում մտահոգված էր թվում նրանց կազմակերպելու և ամեն օր հացի բաժիններ բաշխելու հարցում: Այնուհետև՝ յուրաքանչյուր անձի հատկացրեց օրական մեկ պիստոլ, նրանցից որոշ թվով մարդկանց տեղավորեց Նաբի-Յունեսում գտնվող իջևանատներում, Մուրթ-Միքայելի և Սուրբ-Եղիայի քաղղեական վանքերում և Մոսուլից դեպի արևմուտք գտնվող Նոտր-Դամի եկեղեցիներում (քաղղեական և հակոբիկյան): Բայց մի փոքր անց, նա նրանց հանդեպ հետաքրքրությունը կորցրեց: Նրանց մնում էր դռնեդուռ ընկած թափառելի փողոցներում, կերակրվել ողորմությամբ կամ տեղավորվել, ով ինչպես կարող էր, բնակչության մոտ: Երբ երեկոն վրա էր հասնում, կարելի էր տեսնել, թե քաղաքի որոշ հրապարակներ, հատկապես նրանք, որոնք գտնվում են եկեղեցիների առջև, ինչպես են ծածկվում ցնցոտիածածկ մարդկային մարմիններով, իսկ անցորդները պետք է զգույշ լինեին, որպեսզի նրանց չտորոթեին: Շուտով կարելի էր տեսնել, թե նրանց ներկայությունը քաղաքում ինչպես է բազմաթիվ հիվանդությունների պատճառ դառնում, ինչպիսիք են տիֆը, որովայնային տիֆը, խոլերան, ճահճատենդը: Չինվորներն իրենք ևս նպաստել էին այդ արհավիրքների բռնկմանը: Բայց ամեն անգամ մեղքը բարբարոս էին հայերի վրա, որպեսզի նրանց ձեռքակալեն և սփռեն անապատներում կամ ուղարկեն Սուլահիե, կամ այնպիսի տարածա- շրջաններ, որտեղ նրանք դառնում էին թշվառության և այլնի գուր... Այստեղ հարկ է արժանին հատուցել Նորին շնորհություն, Նորին սրբազնություն պատրիարք Էմմանուելի մեծահոգությանը, որը դարձել էր հանրահայտ: Սկզբնական շրջանում նա չէր կարող մխիթարվել իր հոտին օգնության ձեռք մեկնելու իրողությամբ, քանզի այն վերջինների թվում էր ժամանել, բայց անխոնջ եռանդ դրսևորեց խեղճ հայերի վշտերն ամոքելու հարցում: Նա բառացիորեն բաց արեց իր քսակը, պատրիարքության դռան առջև անընդմեջ և ամեն օր ողորմություններ բաժանեց, դիմեց իր հետևորդների մեծահոգությանը, բազմաթիվ քահանաների հանձնարարեց բարեհաճել տեղավորել ու կերակրել, հնարավորության սահմաններում, մեծ թվով դժբախտների (մասնավորապես, կաթոլիկների), հատուկ տներ վարձեց նրանց տեղավորելու, որպեսզի նրանք չգնան ապաստան որոնելու մահմեդականների մոտ, որտեղ նրանց այլասերում էր սպասում, հասավ նույնիսկ նրան, որ հիմնադրեց գորգագործության ֆաբրիկա, որոշ ճարպիկ աղջիկների այս արհեստով զբաղեցնելու համար և այլն... և այլն...

Էրզրումի տարածաշրջաններից բերված այդ երեսուն հազար շնչից (թիվը նվազագույնն է), Մոսուլում ներկայումս կարող են լինել միայն երկու կամ երեք հազարը և նույնքան էլ շրջակա գյուղերում: Մյուսները զոհվել են:

Բիթլիս, Սղերտ, Դիարբեքիր, Մարդին, Ջիզրե:

Այս տարածաշրջանները կրել են ամենամեծ վնասներն ու ավերածությունները, որովհետև այստեղ մեծ թվով ներկա են գտնվում կոտորածների, որոնք ի կատար են ածվել պար-

բերաբար և տեղում: Վանի իրադարձություններն անհապաղ արձագանք են գտել սահմանամերձ Բիթլիսի վիլայեթում [sic]: Մահմեդական գաղթականները նահանջում էին դեպի այդ տարածաշրջանները և իրենց թշվառ տեսքով ու իրենց հանդեպ Վանի հայերի կիրառած նոդկալի արարքների չափազանցված պատումով՝ առանց դժվարության առաջ բերում իրենց համակրոնակիցների խղճահարությունը: Թուրքական իշխանություններին քաջություն հաղորդելու համար՝ դրա հարկն այդչափ չկար, քանզի նրանք երկրի բոլոր քրիստոնյաներին անհետացնելը միանգամայն բնական էին համարում՝ նրանց սեփականությունները և ունեցվածքը Վանից գաղթածներին հանձնելու համար: Հեռացնելու մասին խոսք չեղավ, կառավարությունը կազմակերպեց ջարդարարների մի ամբողջ բանակ, որը կոչվում էր «չաթալ» (այս բառը թուրքերենում համարժեք է «Ֆիդայի» բառին) և բաղկացած էր ամենակատաղիներից: Փախչողներին խանգարելու համար, նրանց կանգնեցրել են բոլոր ճանապարհներին, զինել և հանձնարարել հաշվեհարդար տեսնել բոլոր քրիստոնյաների հետ: Բիթլիս քաղաքում երեք անգամ գործնոցը լցվել է համապատասխանաբար՝ 1500 մարդկանցով, որոնց մերկացրել են, կապկպել, այնուհետև՝ տարել քաղաքից որոշ տարածությունը հեռու մի վայր և գնդակահարել: Ընդհանուր առմամբ՝ 4500 մարդու: Ես նշում եմ սոսկ պաշտոնական թվերը, որոնց իրազեկ եմ հավաստի սկզբնաղբյուրից, որովհետև հնարավոր չէ ճշգրտել փողոցներում սպանվածների քանակը և այլն... Այնուհետև՝ անխմաստ են համարել իրենց նեղություն պատճառել կանանց և երեխաներին, որոնց Ղուրանն արգելում է սպանել, այլ վայր տանելու համար: Վաղ առավոտյան նրանց համախմբել են քաղաքի պարիսպներից դուրս գտնվող մի վայրում: Այդտեղ, եղանակի փոփոխության պայմաններում, բազմաթիվ օլեր շարունակ նրանց ցուցադրել են անմարդկային և անառակ զինվորների հսկողության ներքո: Նրանք, ովքեր սովամահ չեն եղել, այնուհետև՝ գնդակահարվել են: Նույնը կարելի է ասել Մուշի հարթավայրի քրիստոնյաների մասին, որոնց վերաբերող շատ մանրամասներ ինձ հայտնի չեն: Ես միայն գիտեմ, որ նրանցից բավական մեծ քանակությամբ մարդիկ հասնելով Վանի տարածաշրջան, կարողացել են ապահովել իրենց անվտանգությունը: Մոսուլում ես հանդիպել եմ այդ տարածաշրջանից հազիվ մեկ տասնյակ անձանց: Բայց ես տեղյակ եմ, որ այդ կողմերից բազում հարյուրավորներ գտնվում էին Դեր Չորում [sic], որտեղ բազում տասնյակ հազարներ, բերված տարբեր տարածաշրջաններից (գլխավորապես Չախթանից [sic] և Մարաշից), դառնում են համանման չարիքների զոհը, որոնց արժանացել են Մոսուլ բերվածները: Հրաշքով կամ ավելի ստույգ՝ Սուրբ Աստվածածնի հրաշքների շղթայով, Բիթլիսից եկած միայն մի մարդ է փրկվել և հասել Մոսուլ: Դա մի երիտասարդ կաթոլիկ հայ է, այդ քաղաքի Օսմանյան բանկի գլխավոր հաշվապահը, որից ես քաղում եմ իմ տեղեկությունների մեծ մասը:

Սղերտի կոտորածները տեղի են ունեցել երեք օր ավելի վաղ, քան Բիթլիսի կոտորածները և եղել են առավել դաժան: Այդ կոտորածների վերաբերյալ ինձ հայտնի են խիստ սրտառուչ մանրամասներ, որոնք ինձ շատ ավելի են հուզում, քան այս հակիրճ պատումում դրանք նկարագրելն ինձ համար անհնար է: Ընդհանուր առմամբ, կարելի է Սղերտի մեր թեմն ամբողջությամբ ոչնչացված համարել: Իրականում, կառավարության տեղեկագրերում նշված է միայն 767 մարդու անուն, բայց դրանցում ընդգրկված են միայն նրանց անունները, որոնք մեկ ամսում գնդակահարվել են քաղաքի հյուսիսում՝ այն բլրի լանջին, որին հասնելու համար պահանջվում է մեկ ժամ: Շատ ավելին է նրանց թիվը, ովքեր սպանվել են տներում և փողոցներում: Կոտորածները տևել են ավելի քան մեկ ամիս: Դրանք սկիզբ են առել 1915 թ. մայիսի կեսերի շրջանում և ավարտվել միայն հունիս ամսին: Ոչ մեկը չի խնայվել: «Չաթալներն» իրենց հազածության ներքո են վերցրել քաղաքի, իսկ քրդե-

րը՝ գյուղերի քրիստոնյաներին: Սղերտի հայ կանայք առաջիններն են ժամանել Մոսուլ: Մեկնելու պահին եղած 1700-ից հազիվ վեց կամ յոթ հարյուրն են տեղ հասել աղետալի վիճակում՝ ութօրյա արագացված երթից հետո: Գրեթե բոլոր տեղ հասնողները տարեց կանայք էին: Երիտասարդներին ճանապարհին առևանգել էին քրդերը կամ վաճառել էին ու սպանել ժանդարմները: Նրանք տեղավորվեցին առաքելական պատգամավորի՝ տանը, կրելով նոր հագուստներ, որոնք գերմանական հյուպատոսն՝ էր տվել: Այնուհետև՝ նրանք արժա- մացան մյուսների՝ ճակատագրին: Սղերտի քաղղեացի կանայք արժանացան ավելի դժբախտ ճակատագրի, քան դրա հետ մեկտեղ ցուցաբերեցին հեղուսական և հիացմունքի արժանի վարքագիծ: Գրեթե մեկ ամիս թուրք սպաների և նրանց զինվորների անառակ, համառ խնդրանքներին ցուցաբերած դիմադրությունից հետո, նրանց նկատմամբ՝ անվե- հերության պատճառով, վարվեցին անգութ ձևով: Նրանց ամուսինների և երեխաների անհետանալուց հետո, նրանց խոստացել էին բողոքել իրենց օջախներում: Պատասպարվելու համար այն վտանգներից, որոնց ենթակա էին, նրանք հավաքվել էին քաղղեական քաղա- մասի հինգ կամ վեց մեծ տներում: Ի վերջո, նրանց դուրս վտարեցին իրենց ապաստարաններից և տարան անհայտ ուղղությամբ: Նրանք քաղաքից դուրս եկան թափոքով, ամենքը սևագգետ և արցունքների մեջ: Նրանց առջևից գնում էին Դոմինիկյան միաբանության թիով տասնվեց անդամ և երգում էին աստվածահաճո հիմներ:

Նրանց առաջնորդը, մի ծեր կյան, սպանվեց հրացանի կոթի հարվածներից, որովհետև այդև չէր կարողանում շարժվել: Ասում են, որ նրանցից որոշ թվով կանայք, բազմաթիվ այլ երիտասարդ աղջիկների ևետ մեկտեղ, իրենց դահիճների հետապնդումներից խուսափելու համար, նետվել են գետը և այս ձևով կործանվել: Այլոց տարել են քրդերը: Ամենամեծ թիվ կազմողները հյուծվել են ճանապարհին կամ դարձել ժանդարմների հարվածների զոհը, որոնք նրանց աճապարեցնում էին քայլելու մեկ այս, մեկ այն ուղղությամբ: Նրանց թվում ես տեսել եմ իմ հարազատներից իննիս (5 կնոջ և 4 աղջնակի), որոնք Մոսուլ էին ժամանում խղճահարություն առաջ բերող վիճակում: Իմ մեկնելուց հետո, ես իմացա, որ երկու ազգականուհի և ազգականներին երկու թունդեր եկել էին միանալու իմ բարեկամներին Մոսուլում: Հարկ է նրանց ավելացնել ևս չորս զարմուխների և ևս մեկ զարմիկի, որոնք դեռևս Մոսուլում են, Մարդինից՝ տասնհինգ աղջիկների, Հալեպում գտնվող մեկ տասնյակ անձանց, քառասունի հասնող կանանց, որոնց քրդերն էին պահում Սղերտից դեպի արևելք մեկ ժամվա հեռավորությամբ գտնվող Թեյլո գյուղում, հավանաբար, քան այլոց բուն Սղերտում և այլ վայրերում: Ընդհանուր առմամբ, հազիվ կային հարյուրի հասնող անձինք. ահա այն ամենն, ինչ մնում է Սղերտի քաղղեական թեմից, որը բաղկացած էր յոթից ութ հազար շնչից: Մյուս մասը, եպիսկոպոսը, քաղաքի և երեսուն փոքր գյուղերի հոգևորականությունը, որոնցից կազմված էր թեմը, ամբողջությամբ անհետացել է:

Դիարբեքիլի քաղղեական թեմից մնում են միայն եպիսկոպոսը՝ Նորին սրբազնություն Սողոմոնը, երեք քահանա և բուն քաղաքի քառասունի հասնող ընտանիքներ: Այս թեմի գյուղերի քաղղեական բնակչությունն արժանացել է ամբողջ վիլայեթի [sic] հայերի ճակատագրին, որի վալին Ռեշիպ էր, հավանաբար, ամենանողկալին այն խիստ բազմաքանակ դահիճներից, որոնց Երիտասարդ Թուրքիան ոլորեցրել է:

Մարդինում ևս փրկվել են քաղղեացի և սիրիացի երկու արքեպիսկոպոսներ՝ իրենց հոգևորականության մի մասի և քաղաքի բնակչության հետ մեկտեղ: Շուրջ հիսուն ընտանիք (տղամարդիկ և կանայք, կաթոլիկ հայեր և սիրիացիներ) գտնվում են Մոսուլում: Շուրջ

1 Ն (որին սրբազնություն) Դրուրը:

2 Պ. Հուլտեյնը:

500 տղամարդ գաղթել են Սինջարի լեռները:

Ջիզրեի թեմերը (քաղղեական և քրիստոնյա) իրենց այրեպախկոպոսների, հոգևորակա-
նության և բնակչության հետ մեկտեղ ամբողջությամբ բնաջնջվել են: Միայն երկու՝ Պես-
հարուրի և Գյուերքի քահանաներին է հաջողվել չորս կամ հինգ հարյուր անձանց հետ ճո-
ղապրել ու վերջինների բվում հասնել Մոսուլ: Նորին սրբազնություն պատրիարքը նրանց
համակել է իր հայրական աշխուրջ հոգածությամբ:

Քաղղեական Ջախո թեմից, որը գտնվում է Ջիզրեի թեմի սահմաններում, վնասներ են
կրել միայն Սրբոց-Հակոբյանց և Քլաս գյուղերը: Գրուհելով այս երկու գյուղերը, քրդերը
ցանկացել են խախտել Մոսուլի վիլայեթի [sic] ամբողջականությունը, բայց կառավարու-
թյունը գործել է ժամանակին և արդյունավետորեն ու խանգարել շարժման ծավալմանը:
Այս երկու գյուղերում, որոնք ամբողջությամբ բալանվել են, և որոնց բնակիչներն ապրում
են ամենամեծ թշվառության մեջ, սպանվել է միայն մեկ մարդ:

Ամաղիա թեմի գյուղերը տառապել են և առավել շատ են տառապում քրդերի ու Վանի
վիլայեթից [sic] գաղթածների կոլոպատից և կապիտ վերաբերմունքից: Մասնավոր սպա-
նությունների դեպքերն այստեղ հազվադեպ չեն: Դեռ ավելին, այս թեմը մեկուկես տարուց
ի վեր զրկվել է իր հովվից: Անարդարացիորեն կասկածի ենթարկվելով ռուսների հետ հա-
րաբերություններ ունենալու համար, որոնք նրա թեմից գտնվում էին երկու օրվա
հեռավորությամբ, նա հանձնվել է Մոսուլի ռազմական դատարանին, տասնհինգ օր շարու-
նակ պահվել բանտում, այնուհետև՝ այսպարացվել ու ազատ արձակվել՝ ստանալով իր թեմ
այլևս չվերադառնալու հրաման:

Հարկ է վերջապես նշել այն անհամար կորստների մասին, որ մեր քաղղեական եկե-
ղեցին է կրել նեստորականների լեռներում: Ավա՛ղ, այս երկրներում գտնվող բոլոր կաթո-
լիկ կազմակերպությունները (երկրներ, որոնք այդչափ վշտերի պատճառ են դարձել, ինչ-
պես նաև միսլաներներից և Պրապագանյայից այդքան միլիոններ կորեղել), բացարձակա-
պես ավերված են: Նեստորականների լեռներն ամբողջովին դատարկված են իրենց բնա-
կիչներից: Այն պատրվակի ներքո, որ այս լեռները դարձել էին նեստորականների հետ հա-
մաձայնության մեջ գտնվող հայ դասալիքների և ռուս զինվորների բույնը, թուրքական կա-
ռավարությունը, Մոսուլի վիլայեթի [sic] վրա հարձակվելու համար, իր գործերն ու բնաջ-
նջումներն է սուղել այս դժբախտների վրա, ավերել է այրել նրանց գյուղերն ու բնակիչներին
հարկադրել զբաղեցնել մանկեպականների տեղը Վանի վիլայեթում [sic]:

Մոսուլը, Դեր Ջորը [sic] և Ռաս-էլենը [sic]՝ այն հիմնական կենտրոններն են, որտեղ
գտնվում են հայրենիքից արտաքսված հայերի նշանակալից խմբավորումները:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 889, ff. 186-194).

**Արտաքին գործերի նախարար պ. Ստեփան Պիշոնը՝
Խորհրդի նախագահ, Ռազմական նախարար պ. Կլեմանսոյին**

Հ. թիվ 158:

1 Իմա՝ Ռաս էլ-Այն:

Փարիզ, 17-րդ հունվարի 1918 թ.:

Ի պատասխան այս ամսի 15-ի թիվ 893-/3 ձեռ նամակի¹, ես շտապում եմ տեղեկացնել,
որ որևէ առարկություն չունեմ Պետրոգրադում գտնվող ֆրանսիական ռազմական առաքե-
լության ղեկավարին² այն հեռագիրն առաքելու հարցում, որով խորհուրդ է արվում ձեռն-
պահ մնալ Հայաստանի ինքնավարության հռչակումից³:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 894, f. 202).

**Հայկական սօզգոյին պատվիրակության նախագահ Պողոս Լուրսը
փաշան՝ Արտաքին գործերի նախարար պ. Մաեֆան Պիշոնին**

17-րդ հունվարի 1918 թ.:

Հրատապ ուղարկում եմ այն ճեպագրի պատճենը, որը ես ստացել եմ պ. Մարտիանո-
վից, Պետրոգրադից և որի մասին իսկույն ևեթ հետախուսով գրուցել եմ ձեզ հետ:

ՀԵՎԵԼՎԵՏ

Պ. Մարտիանովը՝ Հայկական սօզգոյին պատվիրակությանը

Պետրոգրադ, 13-րդ հունվարի [1918 թ.]:

[Պատճենը]:

Այսօր երասպարակվել է ինտելյալ պաշտոնական ղեկրետը, Ժողովրդական կոմիսարնե-
րի խորհուրդը՝ հայտարարում է՝ հայ ժողովրդին, որ Ռուսաստանի բանվորական և գյուղա-
ցիական կառավարությունը պաշտպանում է Ռուսաստանի ռազմակալած Թուրքահայաս-
տանի հռչիերի ազատ ինքնորոշման իրավունքը՝ ընդհուպ մինչև նրանց անկախությունը:
Կոմիսարների խորհուրդը գտնում է, որ այդ իրավունքի կենսագործումը հնարավոր է
միայն մի շարք նախնական երաշխիքների պայմաններում, որոնք բացարձակապես անհ-
րաժեշտ են հայ ժողովրդի հանրաքվեի համար: Կոմիսարների խորհուրդը իբրև ժասնավոր
երաշխիքներ է համարում՝ հետևյալները.

Հայված 1-ին: Ռուսական գույքերի դուրս բերում Թուրքահայաստանից և հայկական
սօզգային աշխարհագրային բանակի անհապաղ կազմափորում՝ Թուրքահայաստանի
բնակիչների անմնական և գույքային անվտանգությունն ապահովելու նպատակով:

1 Վերն տրտատովում է թիվ 489 փաստաթղթում:

2 Պեներալ Նիեսելը:

3 Այս հեռագրի մասին տեխստորե թիվ 496 փաստաթուղթը:

Հողված 2-րդ: Տարրերի երկրանկարի գրված պատկերները, որոնք իրենց մասնավորապես հայերի անարգելի վերաբերմամբ արտահայտված են:

Հողված 3-րդ: Պատգամաբանական քաղաքական իշխանությունների հիմնական ձևով թուրքիայի ներքին մտահանգիստ արտաքին քաղաքականության հիմնական գծերի և նպատակների արտահայտությունները: Կոնկրետների խաղաղության պայքար է. նպատակային քաղաքականության վաղուց ներկայացուցիչների հետ կապերի իր հաջողության: Քաղաքականությունների մասնակցությունը:

Հողված 4-րդ: Թուրքական աստիճանական քաղաքականության կազմավորումը՝ ժողովրդավարական հիմունքներով քննարկում: իսկ - ճակատագիր: արտաքին փորձերի խորքային ձևով:

Կովկասի գործերի արտաքին քաղաքականության մասնակցությունը: Ստանդարտ Շախիմյանին: Գանկազադ ընտրյալ օգնությունը ցարական թուրքական արտաքին քաղաքականության կիզմանին՝ հանուն 2-րդ և 3-րդ հարկերի վերաբերյալ, ինչպես նաև մասնավորապես հանձնաժողով՝ առաջին գործերի քաղաքականության մասնակցությունը: աստիճանական համար (տես առաջին հոդվածը): Թուրքական աստիճանական արտաքին քաղաքականության աստիճանական կոչված ժողովրդավարական ճանապարհով դեմքով: իսկ: ժողովրդական կոնկրետների վիճակի ու սահմանափակ նախնական և այդ քննարկումները: Ստանդարտ Շախիմյանի համաձայնությամբ: Հարկերի վերաբերյալ:

(A.M.A.E., Guerre 1914-1918, Turquie, tome 894, f. 204).

1495

Թիֆլիսում Թրանսկասի կառավարության պատերազմի և Կովկասի պայքարի և Կովկասի գործերի նախարար Մանթանի Թիֆլիսին, Թուրքական Թրանսկասի դեսպան Եսպենսին

Ճ. թիվ 5. 5:

Թիֆլիս, 17-րդ հունվարի 1918 թ.:
(Յուրաքանչյուր և Կովկասի նախարարի 27-ին):

Թիֆլիսում անմիջապես տարածում գտած՝ Էնզեր փառալուծական ինքնապաշտպանության շարժի լայն, մեծապես տեղիք տվեց հայերի գայրույթին: Նույն երեկոյան, Էնզերի օրը, երբ լայն երապարակայնություն ստացավ, Ազգային խորհրդի ժողովում հարցը կրթությանը քննարկվել է և քննարկումը պետք է վճարվի հի կայացվել, արտաքին քաղաքականության և Կովկասի կարգավորման մեթոդով կհակադրվեն այն առաջարկություններին, որոնք կարող էին երկարատևապես:

Նրանք, կավանարար, մի փոքր ավելի են մոռանում, ըստ այնպիսի, որ իրենք միայն չեն, որ կայսր կն դատել կամ վճարել: Կան վրացիներ, թաթարներ, որոնք ևս, ինչպես և հայերը, խանդավառ իրավունք ունեն և եթե հաշտությունը պետք է կնքվի «տրամաբանական» կերպով, ինչպես այդ մասին ասում է բուրբու, ես չեմ գտնում, որ Էնզերի կողմից մոռանա:

1 Անցնողների քան

քանակները պետք է երկարաժամկետ հարկեր կանգնեն, մասնավորապես, (կյանքի) ունենալով ամենուրեք ժամ իրավիճակը: Անընդհատաբար և անկասկածաբար ընդհատ, գրանցարանի կատարողական կացում նման կարգադրման արտահանում ինչ որչափիս ըստի կարելի է հանգիստ:

Պ. Ըարդինին երկար ժամանակ եղավ և աստիճանական գործերի մի քանիսը հիմնով առաջ ձայն: Այս անձնավորությունը սերտ է Ազգային քաղաքականության, որը երկար տարիներ իշխել է թուրքիայի երկրում: Այս անհատը քաղաքական է, նրա լիցենզիայի գրվել է գանդի և նախապետական կերպով, մասնավորապես, Արշակ Համիդի օրոք: Զյալիլը մոլոր աստիճանական է համակցված օգնականների նկատմամբ և արտաքինության ի վեր գալիս է Կովկաս: Նա ընծայել օգնել է իշխան Շախիմյանի քաղաքական իրավունքները որովհետև փորձերին, որոնք փայտան կողմնակցությամբ չեն պատկեր, պատկերակ, Կովկասում (Մասնավորապես) նախկին կյանքային իշխան Շախիմյանը ձեռքարկվել է, բանտ նստվել և արգելափակվել:

Սակայն, ինձ անհայտ պատճառներով, բանտացությունները Շարդինյի հետ ևս հարցաքննությամբ չեն արտաքին: Ամեն պետքում, ես այս քաղաքական իշխան կարողանալու եմ, Հայկական ազգային խորհրդի տնօրեն պ. Ա. Կարանյանի հետ, որը կցանկանա հետևել համաձայնության հանգել: Ես գտնում եմ, որ հայերի աստիճանական իրավունքները և այն արդյունքները, պիտի թուրքիայի քաղաքականության համակցում է Զյալիլի թեկը, կարելի կլինի ինչ-որ բան ձեռնարկել: Ինչ կարող լինեք, կատարելով իրենց, կատարելով հայերի պետք է զանազան անել ամեն ինչ, այնպես, ինչպես նրանց համաձայնություններն են կրանց, դեմ գործադրանքները թողք ջանքերը:

Ըստ այն նախնական, որը ես ասացել եմ և որի արտահանը Չերի գերագնացությունը կարող է գտնել այս օրոքում, (ես կնշմարի, որ կարող եմ թե իրենց արտաքինային մոտեցում են լրջաբանությամբ: Բայց ես վախենում եմ, որ մի փոքր ուշ լինի): Ամեն դեպքում, իրենք կան երկարաժամկետ, որ «եղծաբանություն» երբեմն այն աստիճանի է կրանց կարգադրում, որ նրանք կարգադրում են իրենց աստիճանական նախնական կատարողական:

(A.M.A.E., Guerre 1914-1918, Turquie, tome 894, ff. 205-205 v).

ՀԵԿԵԿԵ

Ե. թիվ 28:
(Գրանցել):

Թիֆլիս, 27/15-ը: Կովկասի, 1918 թ.:

1917 թ. դեկտեմբերի 18-ին Թիֆլիսում գործարկված Թուրքիայի հայերի ժողովում լիարժեք է ճի կատարող կրթություն, որն առաջին հերթին կատանման Հայաստանի պաշտպանության, ինչպես նաև Թուրքիայի հայերին վերաբերող բոլոր գործերը դեկավարելու արտաքինային: Այս կրթությունն «Հայաստանի պաշտպանության կրթություն», արդեն սկսել է գործել:

Չեզ անջալ պատկերով, կրթություն ձեռք խնդրում է և այլն, և այլն:
Կովկասի նախարարը
Զարտուղար
Փախապան:
Թերակրայան:

(A.M.A.E., Guerre 1914-1918, Turquie, tome 894, f. 206).

1 Վերջինից քանակներն արտահանվել է:

**Խորհրդի նախագահ, Ռ-ազմական նախարար պ. Կլեմանսոն՝
Պետրոգրադում Ֆրանսիայի ռազմական առաքելության
ղեկավար, գեներալ Նիեսեյին**

Հ. թիվ 1168-/3:

Փարիզ, 18-ը հունվարի 1918 թ., ժ. 22-ին:

Պատասխան հունվարի 1-ի 3128 հեռագրին¹:

Առաջին. Գնդապետ Շարլինյի կարծիքին համապատասխան, որը դուք ինձ եք հաղորդել², կառավարությունը գտնում է, որ ներկա հանգամանքներում, Հայաստանի ինքնավարության հռչակումը կլինի ապաքաղաքական, կվարկարեկի վրացիների հետ կայացված համաձայնությունը և առաջ կրերի մահմեդականների ընդդիմությունը:

Երկրորդ. Փարիզի Հայկական ազգային պատվիրակությունը բաժանում է այս տեսակետը, և նրա ղեկավար Պոլոս Նուբար փաշան հենց նոր այս ոգով հեռագրել է Հայկական ազգային խորհրդին³:

(A.M.G., 16 N 3022).

**Խորհրդի նախագահը, Ռ-ազմական նախարարը՝
Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիչոնին**

Ճ. թիվ 1155-2/11:

Փարիզ, 18-ը հունվարի 1918 թ.:
(*Ստացել են* Կար. հունվարի 19-ին,
Քաղ. վարչ. հունվարի 22-ին):

Լոնդոնում ռազմական կցորդ, գեներալ դը Լա Պանուսի՝ Կովկասում անգլիական զորությանը վերաբերող 1918 թ. հունվարի 14-ի թիվ 252 զեկուցագրի առաքումը:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 894, f. 207).

1 Տե՛ս վերը թիվ 473 փաստաթուղթը:

2 Այս հեռագրի մասին տե՛ս վերը թիվ 470 փաստաթղթի ծանոթագրությունը և թիվ 473 փաստաթուղթը:

3 Վերև արտատպված է թիվ 474 փաստաթղթի հավելվածում:

**Լոնդոնում Ֆրանսիայի ռազմական կցորդ, գեներալ դը Լա Պանուսը՝
Խորհրդի նախագահ, Ռ-ազմական նախարար պ. Կլեմանսոյին**

Ճ. թիվ 252: Գաղտնի:

Լոնդոն, 14-ը հունվարի 1918 թ.:

Հունվարի 9-ին պ. Սթեննը տեղեկացվել է, որ բրիտանական կառավարությունը հակված է աջակցելու Կովկասի ժամանակավոր կառավարությանը և նրան ֆինանսական օգնություն տրամադրելու, որի կարիքը նա կունենա:

Բրիտանական կառավարությունը Թիֆլիսում կազմավորել է ֆինանսական խորհուրդ, որի պաշտոնական ներկայացուցիչը պ. Սթեննն է:

Այս խորհուրդը կարող է վճիռներ կայացնել այն հարցերի շուրջ, որոնք նրա բնությանն են հանձնվում: Այն ստացազրեյր, որոնք նա շրջանառության մեջ կդնի, պետք է ստորագրի պ. Սթեննսը՝ իբրև բրիտանական կառավարության ներկայացուցիչ:

Պայմանավորվածություն է կայացվել, որ Կովկասի կառավարությունը կդադարեցնի վճարումները սեպարատ հաշտության դեպքում կամ այնպիսի իրադրության պարագայում, որը կարողարացնի մեծ քայլը:

Անգլիան մտադիր է փող տրամադրել ռուսական կամավորական նոր բանակ և ազգային զորքեր կազմակերպելու, ինչպես նաև ռազմաճակատի գծում գտնվող ստորաբաժանումների և հաղորդակցության գծի պահպանման համար: Եթե խնդրո առարկա զորքերը չկատարեն ստացված հրամանները, վճարումները կդադարեցվեն:

Բրիտանական կառավարությունը մտադրություն ունի մայս և առաջ՝ բավարարել այն խնդրանքները, որոնք բանակ կազմակերպելու համար ձևակերպել է գեներալ Ավերիանովը: Նա զորավիզ կլինի մեծապես այն խնդրանքներին, որոնք հայ կամավորների հանդերձավորմանը վերաբերող հարցում կներկայացնի Անդրանիկը:

Նպատակը, որին հարկ է հասնել, հանգում է ռազմաճակատում, ինչպես և հաղորդակցության գծերում պարտաբույժներից ձեռքազատվելուն:

Ընդհանուր առմամբ, ազգային և կամավորական զորքերի կազմավորումը դանդաղ է ընթանում:

Կովկասի հարավում իրադրությունը մնում է լուրջ, հուզումներ են տեղի ունեցել անդրկովկասյան երկաթուղու երկայնքով՝ իրենց երկիր վերադարձող ռուս զինվորների և մահմեդական զորքերի միջև: Հուզումներ են տեղի ունեցել նաև Քուբայիսում, Երևանում, Սարիդամիչում և այլուր...

Հայտնում են, որ գերմանական զործակալները շատ ակտիվ են, իսկ օսմանյան սպաների ներկայությունը Բաքվում. Ստավրոպոլում, Պետրովսկում և այլուր հանրահայտ է:

Ի վերջո, այն զորքերը, որոնք բրիտանական կառավարությունը հույս ունի ժողովել Կովկասի հարավում և Հայաստանում, կարող են ունենալ բացառապես պաշտպանողական դեր:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 894, ff. 208-209).

**Խորհրդի նախագահ, Ռազմական նախարար պ. Կլեմանսոն
Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին**

Վ. թիվ 538-9/11:

Փարիզ, 19-ը հունվարի 1918 թ.:
(Ստացել է Զաղ. վարչ. հունվարի 20-ին):

Ընթացիկ հունվարի 4-ի թվակիր թիվ 20 ճեպագրով¹ դուք բարեհաճել եք ինձ տեղեկացնել, որ Նորին սրբազնություն Դ. Ակոբյանը, ներկայումս Երուսաղեմ գաղթած գրիգորյան հայերի արքեպիսկոպոսը, ձեզ հայտնել է Արևելյան լեզեռնում իբրև քահանա ընդգրկվելու իր ցանկության մասին:

Ամբողջությամբ հակված ձեր ճեպագրում ներկայացված քաղաքական բնույթի պատճառներին և բարոյական շահախնդրությանը բավարարում տալուն, ես, այդուհանդերձ, հարկ եմ համարել տեղեկանալ Արևելյան լեզեռնի հրամանատարի կարծիքին:

Հունվարի 15-ի թվակիր հեռագրով², որի պատճենը կցվում է, փոխզնդապետ Ռոմիոն ինձ հաշվետվություն է ներկայացնում այն մասին, որ Ն {որին սրբազնություն} ն Ակոբյանի (Հակոբյանի) իբրև հայ պաշտոնական քահանայի նշանակման հարցում որևէ առարկություն չունի և դեռ ավելին, հայկական որոշ քաղաքացիական միջավայրերում կկարողանա ունենալ բարեհաճ ազդեցություն:

Փոխզնդապետ Ռոմիոն միայն նշում է, որ հարկ է գիտենալ, թե արդյոք «հայ կաթողիկոսը» բավարարել է Ն {որին սրբազնություն} ն Ակոբյանի խնդրանքը: Հետևաբար, ես պատիվ ունեմ ձեզ տեղեկացնել, որ հակված եմ ամբողջությամբ բավարարելու արքեպիսկոպոս Դ. Ակոբյանի խնդրանքը:

Այս քահանան պետք է նախապես պայմանավորվածությամբ կայացնի պատերազմի հարատևության շրջանում Արևելյան լեզեռնում Պորոտ-Սաիդում կամ Կիպրոսում իբրև «օժանդակ լեզեռնական» աշխատանքի անցնելու վերաբերյալ, և իմ հոգածությամբ նրան անմիջապես կհատկացվի «օժանդակ լեզեռնականի» աստիճան, որը կապահովի ամսական 301.50 ֆրանկի սահմանում աշխատավարձ, բացառելով որևէ այլ [փոխհատու]ցում: Նա կբնակվի Կիպրոսում, այն վայրում, որը նրան մատնացույց կանի Արևելյան լեզեռնի հրամանատարը: Ես ձեզ խնդրում եմ, այսպիսով, դրդել, եթե դուք այդ անհրաժեշտ կզտնեք, «հայ կաթողիկոսին» տալու իր համաձայնությունը և ինձ տեղեկացնել, թե արդյո՞ք Ն {որին սրբազնություն} ն Ակոբյանը [sic] համաձայն է ծառայելու վերոհիշյալ պայմաններով: Չեր պատասխանը ստանալուն ևեթ, ես հրահանգներ կտամ, եթե դրա հարկը լինի, վերջինիս՝ իբրև քահանայի Արևելյան լեզեռնում ընդգրկվելու համար:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 893, ff. 91-91 v).

1 Արտատպված չէ:
2 Արտատպված չէ:

**Թիֆլիսում Ֆրանսիայի հյուպատոս պ. Նիկոլան
պ(արոնայ)ք Արտաքին գործերի նախարար Ստեֆան Պիշոնին,
Պետրոգրադում Ֆրանսիայի դեսպան Նուլենսին**

Վ. թիվ 8, 8:

Թիֆլիս, 22-ը հունվարի 1918 թ.:
(Ստացել են Կաթ. մարտի 26-ին,
Զաղ. վարչ. մարտի 27-ին):

Ես պատիվ ունեմ Չերդ գերագանցությանը փոխանցել պատճ կից այն նամակի բարգձմանությունը, որը վրացիների պատրիարքը՝ հզում է Նորին սրբություն ամենայն հայոց կաթողիկոսին:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 894, f. 234):

ՀԱՎԵԼՎԱԾ

Ն:

Թարգմանություն:

Ավառ:

Շատ Սուրբ Հայր.

Աստուծո ողորմածությամբ, վրացական պատրիարքական եկեղեցին, անցած այն ճանապարհից հետո, որը տևել է ավելի քան մեկ դար, կրկին վերակառուցվում է: Մեր անկատարության գիտակցությամբ է, որ մենք խոյացել ենք մինչ այդ եկեղեցու դեկավարի բարձրագույն աստիճանը:

Այսպիսով, ստանձնելով համայն Վրաստանի բնակիչների հսկողություն և գերագույն եպիսկոպոսական ղեկավարության պարտավորությունը, մենք չենք կարող աչքաթող անել Հայաստանի աստվածահաճ ժողովրդին:

Վրացիների և հայերի միջև եղբայրական դաշինքի գոյությունն իր հաստատումն է գտել դարերի ընթացքում: Դրա փառապանծ ծագումը սկիզբ է առել Երուսաղեմի քրիստոնեական մկրտության ավագանում և մեր առնական եղբայրները, Աստուծո խոսքին հետամուտ, սովորաբար նպաստել են կրոնի և բարեպաշտության պայծառափայլ շողերը դեպի Արևելքի խավարները տանելուն:

Սակայն չար սատանայի խորամանկությամբ, որը համակրոնակից եղբայրների միջև երկպառակություն սերմանեց, VII դարի սկզբում մենք ականատես դարձանք, թե ինչպե՞ս է տեղի ունենում պառակտումը, որն այդ պահից ի վեր մեզ տաբանջատել է: Միասնության այդ խախտումը մեզ համար դարձել է թուլության պատճառ և դաժան բշտամին, մեզ վրա իր տիրապետության լուծն ամրապնդելու համար, կարողացել է դրանից օգտվել:

1 Ն {որին սրբազնություն} ն Կիրիոն II-ը:

Գտնվելով այսօր մեր սուրբ նախորդների եկեղեցու դեկի մոտ, մենք գտնում ենք, որ հարկ է Չերո սրբությանը ներկայացնել մեր հարգանքի տուրքը և խնդրում ենք տիրոջից բարեհաճել մեզ շնորհել անհրաժեշտ եռանդ և ուժ ունենալու ուղորմածությունը՝ միասնություն հաստատելու համար այն մարդկանց միջև, որոնց ոգիների պահպանությունը հանձնարարված է մեզ: Մենք խոսում ենք ոչ թե կրոնական դրամատիկ միասնության, այլ առողջ հարաբերությունների փոխանակման մասին, սրտաբուխ դաշինքի մասին, որը մեզ կբույստի ապրել եղբայրության և կայուն համաձայնության պայմաններում, որպեսզի Աստծո յշխանությունը հաստատվի մեր հայրենիքներում: Թող, որ մեր տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի ողորմածությունը, Հայր Աստծո գթասրտությունը և Սուրբ Հոգու միասնությունը մեզ հետ լինեն:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 894, ff. 235-235 v).

500

Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշան՝ Արտաքին գործերի նախարարությունում Ասիայի փոխտնօրեն պ. Ժան Գուլին

Ն:

Փարիզ, 24-ը հունվարի 1918 թ.:

Ես պատիվ ունեմ ձեզ հայտնել ընթացիկ 22-ի ձեր նամակի՝ ստացման մասին, որով դուք բարեհաճել եք ինձ տեղեկացնել Արևելյան լեզուներում իբրև քահանա ընդգրկվելու շուրջ Ն {որին սրբազնություն} և Դանիել Ակոբյանի խնդրանքին և միաժամանակ այն բարեհաճ ընդունելությանը, որին այդ խնդրանքն, ըստ էության, արժանացրել է Խորհրդի պ. նախագահը, Ռ-ազմական նախարարը:

Ես ձեզ խիստ երախտապարտ կլինեմ, եթե դուք բարեհաճեք պ. Կլեմանսոյին հայտնել իմ ամբողջ շնորհապարտությունը՝ հայերի հանդեպ նրա բարյացակամության այս նոր վկայության առիթով: Ինչ վերաբերում է Ն {որին սրբազնություն} Ակոբյանի խնդրանքին, ապա դրան ընթացք տալու համար Նորին սրբություն կաթողիկոսի հետ խորհրդակցելու անհրաժեշտությունն ամենևին չկա, առավել ևս, որ Ն {որին սրբազնություն} Ակոբյանն այժմ որևէ թեմի նկատմամբ պարտավորվածություն չունի:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 893, f. 97).

501

Արտաքին գործերի նախարարը՝ Թիֆլիսում Ֆրանսիայի հյուպատոս պ. Նիկոլային

Հ. թիվ 3:

1 Արտատպված չէ:
2 Ստորագրել է պ. դը Մարտերին:

Փարիզ, 24-ը հունվարի 1918 թ., ժ. 23.55-ին:

Ես ձեզ երախտապարտ կլինեմ, եթե Նուբար փաշայի ստորև ներկայացվող հեռագիրը հաղորդեք հասցեատերերին.

- 1/ Էջմիածին՝ հայերի Նորին սրբություն կաթողիկոսին,
- 2/ Թիֆլիս՝ Հայկական ազգային մշտական կոմիտեին,
- 3/ Թիֆլիս՝ Անդրանիկին,
- 4/ Թիֆլիս՝ փոխգնդապետ Թորգոմին:

«Այն պահին, երբ ռուսական հեղափոխությունը դեկրետ է ընդունել առ այն, որ գորավիզ կլինի Թուրքիայի հայերի՝ ինքնորոշման իրավունքի հռչակմանը, պատմական այս պահին, երբ ռուսական հեղափոխական կառավարության և դաշնակիցների ազնվաբար օգնությունների միջոցով մեզ կոչում են կազմավորել մեր ժամանակավոր կառավարությունը և պաշտպանել մեր օջախները, մենք պետք է նախ և առաջ՝ պաշտպանենք ազատագրված վիլայեթները՝ վերագրված նպատակ հետապնդող թուրքերի հարձակումից և այդ առթիվ դուշինք կայացնենք Կովկասի այլ ազգությունների հետ: Պետք է նաև ցույց տանք ամբողջ աշխարհին, որ հասունացել ենք մեր ազատության համար և ունակ ենք ինքնակառավարվելու: Առաջադրվում է երկու բան: Առանց որևէ խտրականության բոլոր հայերի կատարյալ միասնությունը և երկրորդ՝ Հայաստանում ապրող թուրքերի և քրդերի հետ ունեցած փոխհարաբերություններում զսպվածության ու արդարության դրսևորում: Ազգային պատվիրակությունն առաջարկում է, որ հայկական ժամանակավոր նոր կառավարությունը հրապարակի մի հայտարարություն, ըստ որի կողոպտչական և խռովարարական բնույթի գործողությունները՝ անկախ այն բանից, թե ովքեր են դրանց հեղինակները, խստորեն կճնշվեն, և որ հայերը՝ Հայաստանում բնակվող խաղաղասեր օտար ժողովուրդների նկատմամբ չեն հղաճա վրիժառության որևէ գաղափար՝ այն պայմանով, սակայն, որ նրանք ենթարկվեն նոր իրավիճակին, այն է՝ հարգալից վերաբերվեն օրենքին: Այս կերպ, մենք նոր իրավասություններ ձեռք կբերենք մեր պատմական տարածքի մյուս մասի ազատագրման համար: Մեր շահը, ինչպես նաև մեր քաղաքակրթությունը մեզ թելադրում են այսպիսի վարքագիծ:

(Ստորագրված է) Պողոս Նուբար»:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 894, f. 222).

502

Լոնդոնում Ֆրանսիայի ռազմական կցորդ, գեներալ դը Լա Պանուսը՝ Խորհրդի նախագահ, Ռ-ազմական նախարար պ. Կլեմանսոյին

Վ. թիվ 406: Գաղտնի:

Լոնդոն, 24-ը հունվարի 1918 թ.:

(Ստացել է Կաբինետը հունվարի 26-ին):

Մեր դեսպանությանը հաղորդել են Թիֆլիսում գտնվող Ֆրանսիայի հյուպատոսի հե-

ռագրի մասին, որը վերաբերում է Կովկասում ու Հայաստանում տիրող իրավիճակին, և նա այդ մասին տեղեկացրել է Ֆորին Օֆիսին:

Ես այս հարցի շուրջ զրուցելու առիթն եմ ունեցել Կովկասով և Պարսկաստանով զբաղվող Ռազմական հետախուզության բյուրոյի հետ, և ինձ հայտնել են, որ մեր հյուպատոսի հարողով լուրերը դիտվում են իբրև հուշետեսական:

Ուրի Օֆիսն, իրոք, բավարարված է այս տարածաշրջաններում իրադարձությունների ընդունած շրջադարձից: Հայ կամավորների զինվորագրումն ընթանում է շատ ավելի լավ, որի մասին մեր հյուպատոսը, թվում է, թե չի կիշատակում: Ռազմաճակատում արդեն կա ավելի քան 5000 զինված բանակային. դրանց հարկ է ավելացնել ռուսական զինված անձնակազմերը, որոնց թիվն անհայտ է, բայց հույս են տածում, որ անհրաժեշտ մթերային պաշարներ և փող տրամադրելու միջոցով նրանց կարելի է պահել ռազմաճակատում:

Գնդապետ Փայքը, բրիտանացի այն սպան, որն զբաղվում է զինվորագրմամբ, ինչպես ինձ ասել են, փոխզննողապետ Շարդինյիի հետ աշխատում է սերտ համագործակցությամբ, և այդ նա է, որը մինչ Միջագետքում գտնվող գեներալ Դյունսթերվիլի ժամանումը, դեկավարում է անգլիական քաղաքականությունը:

Բրիտանական շտաբը մեծ հավատով է լի Հայաստանի կացության հանդեպ և հույս է տածում, որ այն գորքերի միջոցով, որոնք նա ի վիճակի է կազմավորել, կկարողանա պահպանել ռազմաճակատը: Նա, ի դեպ, չի հավատում, որ բուրքերը կարող են որևէ հարձակում ձեռնարկել, որովհետև այն բոլոր տեղեկությունները, որոնք նրան են հասնում, ցույց են տալիս, որ հայկական ռազմաճակատի թուրքական դիվիզիաները՝ իբրև անձնակազմեր խիստ թույլ են և բարոյալքված:

Ներկայումս Սև ծովի և Վանա լճի միջև կարող է լինել առավելագույնը թուրքական 8 դիվիզիա: Նույնիսկ կարծում են, որ դրանցից մեկը, 12-րդը, այլևս այդտեղ չի գտնվում, քանզի 1917 թ. հոկտեմբերի սմսից ի վեր այդ մասին այլևս չի խոսվել:

Այս դիվիզիաների ամբողջ անձնակազմը չի կարող, ամեն դեպքում, ունենալ ավելի քան 40000 հրաձիգ և հավանական է, որ կան միայն 30000-ը, որովհետև դիվիզիաները հենու են ամբողջական լինելուց:

Այս պայմաններում, բուրքերի որևէ հարձակում հավանական չէ և բրիտանական շտաբը հավատ է տածում, որ այն գորքերի միջոցով, որոնք կարող է կազմակերպել կամ պահել, ի վիճակի կլինի խանգարել յուրաքանչյուր ներխուժման Հայաստան:

Նա չի կարծում, որ մահմեդական տարրերը գրոհում են հայերին և փորձում է նրանց հետ պահպանել լավ փոխհարաբերություններ՝ խուսափելու համար, որ նրանք տրվեն գերմանական ազդեցությանը և կոտորածներ հրահրեն:

(A.M.G., 7 N 1255).

Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշան՝ Արտաքին գործերի նախարարությունում Ասիայի փոխտնօրեն պ. Ժան Գուին

Ն:

Փարիզ, 24-ը հունվարի 1918 թ.:

Ես պատիվ ունեմ ձեզ հայտնել իմ ամենախորին շնորհակալություններն այն առիթով, որ դուք բարեհաճել եք ինձ ուղարկել այն վեց մամակների պատճենները, որոնք ձեր Դեպարտամենտը ստացել է Թիֆլիսում Ֆրանսիայի պ. հյուպատոսից:

Այն տեղեկությունները, որոնք դրանք պարունակում են, Հայկական ազգային պատվիրակության համար խիստ արժեքավոր են, քանզի նման ամբողջական և ճշգրիտ ձևով այն չէր կարող դրանք ստանալ որևէ այլ սկզբնաղբյուրից: Ուստի, նա ձեզ խորապես երախտապարտ է այն գաղափարի համար, որը դուք հղացել եք՝ դրանք նրան փոխանցելու համար:

(A.M.A.E., Guerre 1914-1918, Turquie, tome 894, f. 225).

Բեռնում Ֆրանսիայի դեսպանության խորհրդական պ. Շոմբրսին՝ Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին

Ձ. թիվ 130:

Բեռն, 25-ը հունվարի 1918 թ.*:
(Ստացել են Կարիսենտը հունվարի 31-ին, Բաղ. վարչ. փետրվարի 5-ին):

Ըստ Եվեյցարիայի հայկական շրջաններում շրջող տեղեկությունների՝ Ռուսաստանի և Ամատոլիայի հայերը կազմավորել են «Ժողովրդական կոմիսարների» մի ժամանակավոր կառավարություն, որի՝ ներկայումս Թիֆլիսում գտնվող նստավայրը, պետք է տեղափոխվի Տրապիզոն: Այս կառավարության անդամների թվում է Արտաքին գործերի նախարարության մի կոմիսար, ում կարող է ճանաչված լինել Լեմինը:

Հարց է ծագել Արևմուտքում նոր կառավարության ներկայացուցիչ նշանակելու մասին: Նախ՝ այդ առիթով աղմուկ է բարձրացել՝ Պողոս Նուբար փաշային նշանակելու շուրջ, որի գործակալը Եվեյցարիայում, հավանաբար, Աղաթոնն է: Բայց այդ լուրն առաջ է բերել որոշ հուզմունք հայկական գաղութի ազգայնամոլական և պահպանողական կուսակցությունների շրջանում, որոնք հրապարակայնորեն մեծ անվստահություն են տածում այդ երկու անձանց նկատմամբ: Աղաթոնի մտերմությունը Զեմալ Միդհաթի և Հաքքի Հալիդի հետ, որոնք «Հաշտություն և ազատագրում» օսմանյան լիգայի հիմնադիրներն են, որի մասին ես Ձերդ գերազանցությանը պատիվ եմ ունեցել տեղեկացնելու վերջին դեկտեմբերի 27-ի՝ և այս ան-

* Պ. Գուի նախնական ձեռագիր ծանոթագրությունը. «Բեռնը գործերի վիճակին տեղեկացված չէ, սրանք գաղտնի գործակալների ասեկոսներն են: Կովկասի ժամանակավոր կառավարությունը ոչ միայն հայկական է, այլև վրացական: Նուբարը միայն կաթողիկոսի և հայկական տարբեր քաղաքական կազմակերպությունների ներկայացուցիչն է. ինչ վերաբերում է Աղաթոնին, պ. Ֆոյեն (?) նրան չի ներում Զեմալ Միդհաթի և Հաքքի Հալիդի հետ ունեցած նրա հարաբերությունների համար, որոնք զնացել են անգլիական գաղտնի գործակալների խնդրելու իրենց [անընթեռնելի բառ]:
1 Արտատպված չէ:

սի 10-ի՝ իմ նամակներով, մեծապես հուպաստել է այդ անվստահության խորացմանը:
Համաձայն միևնույն տեղեկությունների, Կովկասի ռազմաճակատում հայերը պետք է ունենան 140000 մարտից բաղկացած բանակ, որից 100000-ը ռուսահայերի կամոնավոր զորքերն են, իսկ 40000-ը՝ օսմանյան հայ կամավորները:

Այս ամբողջ տեղեկությունների հավառությունը կարող է հաստատված լինել Բեռնում Թուրքիայի նախարարը՝ Վերջինս, փոխարենը, կարող է կտրականապես հերքած լինել բուրքերի՝ Տրապիզոնում դեսանտ ափ հանելուն առնչվող լուրը:

(A.M.A.E., Guerre 1914-1918, Turquie, tome 889, ff. 196-196 v).

505

Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշան՝ Արտաքին գործերի նախարարությունում Ասիայի փոխտնօրեն պ. Ժան Գուլեն

Ն:

Փարիզ, 26-ը հունվարի 1918 թ.*:

Մալոնիկի հայկական համայնքն ինձ գրում է, որ 1916 թ. վերջերին մի բանագնաց կայող էր բուլղարական բանակ զորակոչված բազում հարյուրավոր հայ զինվորների տեղեկացնել, որ եթե նրանք լքեն գորաշարքերը և անձնատուր լինեն դաշնակիցների զորքերին, ապա նրանց նկատմամբ կցուցաբերվի առանձնահատուկ վերաբերմունք և նրանք չեն դիտվի իբրև ռազմագերիներ: Նրանք շտապել են զիջել այդ կոչին և նրանց մեծ մասին, որը գտնվում էր սերբական գոտում դեմ հանդիման, ընդունել են սերբական զորքերը, մինչդեռ ավելի փոքրաքանակ մասը միացել է ֆրանսիական զորքերին:

Թվում է, թե այս բոլոր դասալիքներին, չնայած նրանց տրված հավաստիացմանը, վերաբերվել են իբրև ռազմագերիների և հարկադրել շատ ծանր աշխատանքներ կատարել, թեպետ նրանց թվում գտնվում էին մեծ թվով մարտիկ, որոնք նախքան զորակոչվելը, եղել են ազատ զբաղմունքների տեր:

Հետևաբար, ինձ խնդրել են ֆրանսիական կառավարությանը ներկայացնել այս իրավիճակը, որպեսզի հասնենք՝ կամովին և պատրաստակամությամբ դաշնակիցների զորքերին անձնատուր եղած այս հայերի նկատմամբ ավելի մեղմ վերաբերմունքի պրակտիկան:

Նույն առիթով, ես ձեզ կխնդրեի բարեհաճել քննության առնելու այն, թե արդյոք ինձ արավո՞ր չէ բուլղարի Արևելյան լեզունում կամավոր հիմունքներով զինձատալության անցնելու այս դասալիքներից նրանց, ովքեր այդ կցանկանան: Ես ունեմ բոլոր կիսքերը

1 Տես վերը թիվ 482 փաստաթուղթը:
2 Ֆուադ Սեյիմ բեյը:

* Պ. Գուլենի նախնական ձեռագիր ծանոթագրությունը. «Հարկ է հազմական նախարարությունում տեղեկանալ այս հայերի՝ նրանց բանակի, նրանց ներկայիս աշխատանքների, մեր նկատմամբ նրանց դիրքորոշման մասին»:

կարծելու, որ այս ձևով կարելի կլինի նշանակալից օգնություն ցուցաբերել Կիպրոսի մեր կամավորներին:

Ես իույս եմ տածում, այսպիսով, որ դուք կբարեհաճեք սերբական կառավարությանն այնպիսի քայլեր անել, որոնք նպատակահարմար կգտնեք, և խնդրում եմ ձեզ ընդունել, պարոն նախարար, իմ խորին հարգանքի նոր հավաստիքները:

(A.M.A.E., Guerre 1914-1918, Turquie, tome 889, ff. 197-197 v).

506

Կովկասում ֆրանսիական ռազմական առաքելության ղեկավար, փոխգնդապետ Շարդիյնյին՝ Ռուսիայում ֆրանսիական ռազմական առաքելության ղեկավար, գեներալ Բերտելոյին

Ճ. թիվ 81:

Թիֆլիս, 15/28-ը հունվարի 1918 թ.:

Այսօր առավոտյան, հունվարի 15/28-ին, իմ նախածեղությունը, Ֆրանսիայի հյուպատոսի, հրամանատար դը Բուասֆլորի և իմ ներկայությամբ, մի համդիպում կայացավ քրդական առաջնորդ Զյամիլ բեյի և Հայկական կոմիտեի նախագահ պ. Ահարոնյանի միջև՝ երկու կողմերի ընդհանուր շահերի հարցում համաձայնության հանգելու և բուրդ ու հայ ժողովուրդների միջև գալիք օրերի համար դաշինք կնքելու նպատակով:

Պ. Ահարոնյանը, որին ես նախապես տեսել էի, մի քանի խոսքով, շատ հստակորեն ներկայացրեց թե՛ ներկայումս Հարավային Կովկասում տիրող իրավիճակը և թե՛, մասնավորապես, հայերի ու քրդերի կացությունը, որոնք սերտորեն կապված են միմյանց հետ:

Մինչ այսօր այս երկու ժողովուրդներն ապրել են ռուսական և թուրքական տիրապետության ներքո: Այս երկու մեծ ազգությունների քաղաքականությունը հանգել է նրանց միմյանց դեմ զինելուն, մի բան, ուր բացատրում է այն կոտորածները, որի համար նրանք կարող են փոխադարձաբար միմյանց հանդիմանել: Այսօր ռուսներն անհետանում են, նրանք դուրս են գալիս երկրից, թուրքերն ի վիճակի չեն գործելու, դրության տերը մնում են հայերն ու քրդերը. նրանք պետք է պայմանավորվեն, որը խիստ անհրաժեշտ է. եթե նրանք չկարողանան դրան հանգել, բազմիցս կդառնան թուրքերի զոհը:

Կրոնական հարցը պետք է մի կողմ նետվի, որովհետև ներկա համաշխարհային պատերազմի ընթացքում, բազմաթիվ վայրերում, հանուն իրենց անկախության՝ մահմեդականներն արդեն կռվում են դաշնակիցների կողքին: Արաբները դաշնակիցների հետ են և թուրքերի դեմ:

Պ. Վիլսոնի հայտարարությունները կտրական են: Թուրքիան պետք է սահմանափակվի համախմբելով թուրքական ազգություններին: Թուրքիայի մյուս ժողովուրդները դառնալու են ինքնավար: Հայերը և քրդերն ունեն միևնույն շահերը, այն է՝ թոթափել թուրքական լուծը. նրանց տեղը դաշնակիցների կողքին է:

1 Փաստաթղթի ծանոթագրությունը. «Տես սեպտեմբերի 22-ի/հոկտեմբերի 5-ի թիվ 45 և հոկտեմբերի 11/24-ի թիվ 52 իմ գեկուցագրերը»:

Այդուհանդերձ, պ. Ահարոնյանը քյոյեքից չի պահանջում կովել թուրքերի դեմ: Նա նրանց միայն թախսնճում է յխանգարել հայերին՝ կազմակերպելու իրենց գոյածերը ռազմական տեսանկյունից, մի խոսքով նրանց հանդեպ թշնամություն չցուցաբերել:

Քյամիլ բեյը պ. Ահարոնյանի հետ կատարելապես համամիտ է այն հարցում, որ համաձայն պ. Վիլսոնի հայտարարությունների, դաշնակիցների գործը՝ քուրդ և հայ ժողովուրդների գործն է, որոնք երկուսն էլ ձգտում են ինքնավարության: Այսպիսով, քրդերը պետք է անմիջապես պայմանավորվածություն կայացնեն իրենց հայ հարևանների հետ և նախկինում ռուսական ռազմաճակատի տարածքը գրավելու համար՝ նրանց ցուցաբերեն անգամ իրենց հրաձիգների օգնությունը: Քյամիլ բեյը ցանկանում է, որ քրդերը մնան զինված և պայքարեն ընդհանուր գործի համար:

Քանի որ կողմերի երկու դեկավարների միջև համաձայնությունը կատարյալ էր, մինչ բաժանվելը վճռել են անհապաղ ձեռնամուխ լինել քարոզական գործունեության: Քյամիլ բեյը ջանք ու եռանդ չի խնայի, առանց մեկ բուպե կորցնելու, քուրդ առաջնորդներին դեպի ընդհանուր թշնամու՝ թուրքի դեմ ուղղված դաշինքը և համաձայնության այս քաղաքականությունը կողմնորոշելու համար: Նա չի թաքցնում, որ կհանդիպի մեծ դժվարությունների՝ որովհետև հայերի և քրդերի միջև արյուն է հոսել, շատ արյուն: Այդուհանդերձ, նա լի է հավատով և հույս է տածում բավական արագ հասնելու արդյունքների:

Քանի որ Դերսիսի քրդերի հարևանությամբ գտնվող Երզնկայի տարածաշրջանը հայերի համար համարվում է ամենասպառնալիցը, Քյամիլ բեյի ուշադրությունը կգամվի այս կողմի վրա, նա նույնիսկ մի քանի օր անց կողոտրվի այդ վայրերը՝ քուրդ առաջնորդներին տեսնելու և նրանց հետ իրավիճակի մասին զրուցելու:

Դերսիսի առաջնորդների հետ այդ հանդիպումից հետո, նա իր գործունեության ծանրությունը կտեղափոխի Բայազետի տարածաշրջան:

Ես խոստանում եմ, իմ անգլիացի գործընկերոջ համաձայնությամբ, իբրև ուղեկցողներ ռազմաճակատում նրան տրամադրել ֆրանսիացի և անգլիացի մեկական սպա, այնպես որ քացահայտվի համաձայնության այդ քաղաքականության՝ դաշնակից տերությունների հովանու ներքո իրականացվող բնույթը:

(A.M.G., 7 N 2178).

507

Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշան՝ Ամերիկայի Հայկական ազգային կոմիտեի նախագահ պ. Միքիան Սևալիին

Հ. թիվ 47734:
[Պատճենը]:

Փարիզ, 30-ը հունվարի [1918 թ.]:

1 Փաստաթղթի ծանոթագրությունը. «Քյամիլ բեյն ազդեցություն ունի հատկապես Բոխանի տարածաշրջանում, որը գտնվում է Վանա լճից դեպի հարավ, բայց նրա անունը հայտնի է քրդական ցեղերի բոլոր այն առաջնորդներին, որոնք այժմ ապրում են ռազմակալված տարածքներում»:

Եթե բուլղարական դեկրետը կենսագործվի Թուրքիայի բոլոր նահանգներում, ներառյալ Սիլիկիան [sic]¹, այն կըրքոտությամբ կպատասխանի մեր ազգային ձգտումներին, պատվիրակության ծրագրի այն դրույթը չշրջանցելու պարագայում, որը վերաբերում է տերությունների համատեղ հովանու ներքո Հայաստանի չեզոքության հռչակմանը՝ երկիրը վարչական առումով կազմակերպելու և վերակառուցելու նպատակով նրանցից մեկին տրվող ժամանակավոր մանդատի միջոցով: Բայց բուլղարական [sic] կառավարության անկայուն վիճակի պատճառով, սարսելով իրադարձությունների լնթացքին, պատվիրակության դիրքորոշումը հանգում է, տրված խոստումների հիման վրա հույսեր տածելուն և մեր հանդեպ բուլղարների բարեհաճ տրամադրվածությունից օգուտ քաղելուն՝ անհստաղ հայկական զինված ուժեր կազմակերպելու համար, որպեսզի փոխարինեն ռազմաճակատից նահանջող ռուսական զորքերին և խանգարեն թուրքերին վերանվաճելու ազատագրված նահանգները: Չեզ նախօրոք գաղտնաբար հայտնում ենք, որ այս առթիվ արդեն ստացել ենք Անգլիայի և Ֆրանսիայի ֆինանսական օգնությունը: Հույս ենք տածում, որ Վաշինգտոնի կառավարությունը ևս կաջակցի այս ծրագրի կենսագործմանը:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 889, f. 198).

508

Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնը՝ պ(արոնայ)ք Խորհրդի նախագահ, Ռուսական նախարար Կլեմանսոյին, Լոնդոնում Ֆրանսիայի դեսպան Պոլ Կամբոնին

Ն:

[31-ը հունվարի 1918 թ.]:

Հիմնվելով, մասնավորապես, վերջին դեկտեմբերի 15-ի և 21-ի իմ հաղորդագրությունների վրա², ես պատիվ ունեմ ձեզ ուղարկել սրան կից այն ծանուցագրի պատճենը, որը հենց նոր ինձ է փոխանցել Ֆրանսիայի նախարարը Ռուսիայում³:

Այդ ծանուցագիրը պարունակում է Հայաստանում տիրող իրավիճակին և թշնամական կառավարությունների գործակալների՝ ներկայումս Կովկասում հյուսած մեքենայություններին առնչվող որաշ տեղեկություններ:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 894, f. 248).

ՀԱՎԵԼՎԱԾ

Ծ:

[Պատճենը]:

Ավաա:

1 Իմա՝ Կիլիկիա:
2 Արտատպված չեն:
3 Պ. Բոպուալ դը Սենտ-Օլերը:

Օդեսայի հեղափոխական կոմիտեն հանդես է գալիս իբրև Ռուսաստանի հայերի կենտրոնական կոմիտեի (Թիֆլիս) միջնորդ՝ խնդրելու համար հարաբերություններ հաստատել ֆրանսիացիների հետ: Նրանք ցանկանում են ներկայացնել խիստ կարևոր հարցեր, որոնք վերաբերում են Կովկասի ռուսական և Միջագետքի անգլիական ռազմաճակատներին: Նրանք չեն ցանկանում որևէ բան ասել ռուսներին, որոնց համարում են անընդունակ կամ ծախու:

Ի շարս այլ հարցերի, նրանք հիշատակում են Պարսկաստանի վրայով մթերային ապրանքների, ոսկու և զենքերի նշանակալից մաքսանենգության, իրենց երկիր վերադարձող թշնամու քաղաքացիական փախստականների, սպաների և զինվորների անցումի մասին: Նրանք ասում են, որ Թիֆլիսում և Կովկասի ռազմաճակատում ունեն հայկական կամավորական կորպուսներ, որոնք այդտեղ կռվում են պատերազմի սկզբից ի վեր: Այս տարրերին, որոնք, հավանաբար, պահպանել են՝ անկարգությունների կազմակերպիչների համար սպառնալից մարտունակ ոզին, բոլոր միջոցներով փորձում են ցրել, դիմելով անգամ մատակարարումների դադարեցմանը:

Իրենց հաստատությունները և հիվանդանոցները կերակրելու պատրվակի ներքո, նրանք փող են հավաքում: Օդեսայի կոմիտեն, որի գանձապահին մենք ճանաչում ենք, մեկ շաբաթում հարուստ և բազմաբանակ գաղութում ձեռք էր բերել 200000 ռուբլի: Այդ գումարները նախատեսված են բանակի համար: Ռուսաստանի հայերի ղեկավարն Էմտրանիկն [sic]՝ է, որը Թիֆլիսում գտնվող նրանց կամավորական կորպուսների հրամանատարն է: Նա առաջարկում է գալ Օդեսա, որպեսզի ֆրանսիացի կամ անգլիացի սպաներից մեկին ներկայացնի իրավիճակը:

Զինուժ և տեղեկատվություն տրամադրելուն առնչվող հարցերում, նրանք մեր տրամադրության ներքո են դնում իրենց կոմիտեներն ու ռեսուրսները և նույնիսկ օգնում են մատակարարմանը:

Նրանք խնդրում են, որ իրենց ղեկավար Էմտրանիկին [sic] նվազագույնը հնարավորություն ընձեռվի գաղտնաբար հաղորդակցվելու ֆրանսիացի այն սպայի հետ, որը գտնվում է Կովկասի բանակի գլխավոր հրամանատարի կայանում:

Գնդապետ Փ[այքի] հանձնարարությամբ, Օդեսայի կոմիտեի մատնանշած երկու բանազնացներ մեկնել են Թիֆլիս:

Հարկ է նշել, որ հնարավոր է այս ռազմաճակատում կազմավորել և զինել քրդական խմբեր, մի հարց, որը որոշ ժամանակից ի վեր արդեն ուսումնասիրել է Ռուսաստանում գտնվող ֆրանսիական ռազմական առաքելությունը:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 894, ff. 249-249 v).

1 Իմա՝ Անդրանիկ:

Լոնդոնում Ֆրանսիայի դեսպան պ. Պոլ Կամբոնը՝ Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին

Ճ. թիվ 70:

Լոնդոն, 31-ը հունվարի 1918 թ.:
(Ստացել են Կաթ. փետրվարի 2-ին,
Քաղ. վարչ. փետրվարի 3-ին):

Հունվարի 30-ին ես լորդ Հարլինգին հաղորդեցի Հայաստանի կացությանը վերաբերող այն տեղեկությունները, որոնք Ձեր գերազանցությունը բարեհաճել է հայտնել այս ամսի 27-ի թիվ 162 նամակով¹:

Պետական մշտական փոխարտուղարն ինձ պատասխանեց, որ անգլիացի սպաներն այսօր Թիֆլիսում հաղորդակցության մեջ են Անդրանիկի հետ, որ բրիտանական կառավարությունը գեներալ և ռազմամրերըքներ է գնել տալիս հայկական ու վրացական լիգայի համար և որ այդ կորպուսի կազմակերպումը, թվում է, թե առաջ է ընթանում գոհացուցիչ ձևով:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 894, f. 250).

Միջագետքում Ֆրանսիայի հյուպատոսության կառավարիչ պ. Ռուն՝ Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին

Ճ. թիվ 25:

Բասսարահ, 1-ը փետրվարի 1918 թ.*:
(Ստացել են Կաթ. ապրիլի 19-ին,
Քաղ. վարչ. ապրիլի 20-ին):

Հայ բնակչության կրամ բարոյական ու՝ ֆիզիկական տառապանքները, որին թուրք-գերմանական բարբարոսությունը դուրս է մղել իր օջախներից և նրա տեղահանությունները Միջագետք, քաջ հայտնի են Ձեր գերազանցությանը:

Միջագետքում հայ գաղթականներին հովանավորող կոմիտեն կարողացել է բրիտանական իշխանությունների ընդունած արտոնյալ պայմաններով ստեղծել ու կազմակերպել, հենց Բաղդադում, երիտասարդ աղջիկների ուրբանոց: Բանի որ Բաղդադ կատարած իմ շատ կարճատև ու հապճեպ այցելության ընթացքում ժամանակ չունեցա, այնտեղ այցելել, կոմիտեն հենց նոր ինձ է ուղարկել դրա երեք լուսանկարները, որոնք ես պատիվ ունեմ այս

¹ Արտատպված չէ:
* Նախարարի նախնական ձեռագիր ծանոթագրությունը. «Ես կասկածում եմ, որ սա կարող է տպագրվել «Պանորամայում»: Ամեն դեպքում, ուղարկեք Նուբյուր փաշային»:

ծրարում փոխանցել Ձերոյ գերազանցությանը, խնդրելով նրան, եթե նա այդ նպատակահարմար է գտնում, բարեհաճել դրանք տպագրել «Պանորամայի» համարներից մեկում:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 889, f. 199).

511

**Փարիզի հայկական կոմիտեի քարտուղար պ. Արշակ Չոպանյանը՝
Սենի պատգամավոր պ. Ալբեր Տոմասին**

Ն:

Փարիզ, 5-ը փետրվարի 1918 թ.:
(Ստացվել է փետրվարի 11-ին):

Այս տարվա գալուստով, որն ինչպես ես հույս եմ տածում, կլինի իրավունքի հաղթանակի տարի, խնդրել եմ նահատակված ժողովուրդների գործի մեծ քարեկամներից ոմանց քարեհաճել հուսալքող համակրանքի խոսք հղել դժբախտություններից ընկճված, բայց համատորեն հուսալու և պայքարելու ձգտող Հայաստանին: Մեր «Վերածնունդ» հանդեսում ես տպագրել եմ այն մի քանի ուղերձները, որոնք արդեն ստացվել են: Ես դրանցից արդեն ստացել եմ և կատանամ ուրիշները, որոնք կտպագրեն հաջորդ համարներում: Շատ երջանիկ կլինեն, եթե ունենամ ձեր գրած մի քանի տողերը: Ես շատ եմ ցանկանում, որ ձեր ազգանունը, որն այդքան քանկ է հայերի համար, լինի քարեկամական վկայությունների այս շարքում, որոնք մեր ազգի նկատմամբ ցուցաբերվել են այնպիսի մի ժամի, երբ նա գտնվում էր ամենախորին ճգնաժամի պայմաններում: Իմ հայրենակիցները և ես ձեզ խիստ երախտապարտ կլինենք մեր գործի նկատմամբ ի հայտ բերված այդ նոր համակրանքի արտահայտման առիթով:

(A.N., 94 AP 225).

512

**Ռազմական գործողությունների վարչության ծանուցագիրը՝
Կովկասի իրավիճակի շուրջ**

7-ը փետրվարի [1918 թ.]:

Ազգային նոր քանակների հավաքագրումը գոհացուցիչ առաջընթաց ունի:

Կովկասից ռուսական բանակի դուրս բերումից հետո, կառավարությունը մտադիր է ավելի սերտ հարաբերություններ հաստատել Հարավ-արևելյան դաշնության հետ:

Երկրի տարբեր շրջաններում բռնկվել են նշանակալից հուզումներ, որոնց պատճառ են դարձել մահմեդական տարրերը: Բաքվում թաթարները դարձել են դրության տերը և կառավարությունը քաղաքում իրական իշխանություն չունի: Այս հուզումները պայմանավորված են մասամբ՝ հայերի հանդեպ թաթարների նախանձով և մասամբ՝ թուրքական ու գեր-

1 Ուր Ծֆիսց կնոդ:

մանական քարոզչությամբ (այս շարժումը էնվեր փաշայի ղեկավարած «պան-թուրանական» շարժման մի մասն է, որը նպատակ ունի դրդել թուրքերին ու թաթարներին զավթելու Կովկասը):

Ռազմաճակատում գտնվող հայկական զորքերը հսկողություն իրականացնող զիժ, են կազմում, որը Երզնկայով և Մալազգիրտով ձգվում է Կելկիթից մինչև Վանա լիճ. քիկունքում ունենալով պահեստային ուժեր:

(A.M.G., 4 N 62).

513

Պ. Նորատունկյանի հուշագիրը՝

Ավասա՝

(Ստացվել է Զաղ. վարչ. 1918 թ. փետրվարի 7-ին):

Հայկական հարցի կարգավորման համար, ընդհանուր առմամբ, ի հայտ են գալիս երեք լուծումներ:

1/ Առաջինը կարող է հանգել ռուսական բանակի նվաճած և գրաված Թուրքահայաստանի շրջանների միացմանը Ռուսահայաստանին (Երևանի նահանգ և Կարսի ու Ելիզավետպոլի որոշ մարզեր): Այս տարածքներն այնժամ, բոլորը միասին, կկազմավորեն 3-ից 4 միլիոն բնակչություն ունեցող ինքնավար Հայաստանը, որը կղեկավարվի հատուկ կարգավիճակով և կկազմի նոր Ռուսաստանի նախագծած Դաշնային հանրապետության մի մասը:

Հարկ է նշել, որ այս լուծումն առնչվում է Ռուսաստանի այժմյան ղեկավարների հուշակած «ո՛չ մի աներսիա» սկզբունքին և պետք է անհրաժեշտաբար կախման մեջ լինի համայն Ռուսաստանի հաճար՝ ռուսական առաջիկա սահմանադիր ժողովի կողմից ընդունման ենթակա դաշնային համակարգից, ինչպես նաև այն տեղական ինքնավար վարչակարգերից, որոնք արդեն պահանջել են այս երկրամասերից մի քանիսը, այդ թվում Ռուսահայաստանի անմիջական հարևաններ Վրաստանը և մահմեդական Դաղստանը:

2/ Երկրորդ լուծումը կարող է հանգել ռուսական բանակների ռազմակալած տարածքների զիջմանը թուրքերին, այն միանշանակ պայմանով, որ Էրզրումի, Վանի, Բլթլիսի, Խարբերդի, Սվազի և Դիարբեքլիի հայկական վեց վիլայեթները, որոնք 1914 թ. փետրվարի 8-ի ռուս-թուրքական պայմանագրի կենտրոնում են, կույեկտիվ ձևով դրվեն Անտանտի տերությունների նշանակած եվրոպացի գերագույն կառավարչի վարչության ներքո և օգտվեն այնպիսի վարչակարգից, որը համանման լինի Արևելյան Ռումելիայի* նախկին ար-

1 Դեպարտամենտին է փոխանցել պ. Էտիեն Ֆլանդինը:
2 Հուշագիրը չունի ո՛չ վայրի և ո՛չ ամսաթվի որևէ հիշատակություն: Այդուհանդերձ, պ. Ֆլանդինի ուղեկցող ճամբարից, որը չի արտատպվում, հետևում է, որ գտնվելով Ըվեյցարիայում, պ. Նորատունկյանն այս հուշագիրն իր ցանկությունները հանձնել է «Ռեյոու էրոմադերի» գլխավոր խմբագիր պ. Ռենն Մուլենին:
* Նկատի ունի 1878 թ. Բեռլինի վեհաժողովի կողմից Հարավային Բուլղարիայում ստեղծված նահանգը: Ընդունված պայմանագրի 13-րդ հոդվածով Բալկաններից հարավ, սուլթանի քաղաքական և ռազմական տիրապետության ներքո ստեղծվում էր վարչական ինքնուրույնություն ունեցող մի նահանգ, որը միայն 1885 թ. սեպտեմբերին միացավ Բեռլինի պայմանագրի 2-րդ հոդվածով ստեղծված Բուլղարական իշխանությանը: - Շ. ք.:

տոնյալ վիլայեթի վարչակարգին:

Արևելքում նման բնույթի լուծումները միշտ չէ, որ բարեհաջող ավարտ են ունեցել: Ծայրահեղ դեպքում դրա օգտին, հավանաբար, կարելի էր հանդես գալ նախքան պատերազմը: Սակայն կոտորածներից և զանգվածային տեղահանություններից հետո, ինչպես կարելի է ընդունել, որ Կովկաս և արտասահման գաղթած 2-ից 300000 հայերը գան վերաբնակվելու թուրքերի և քրդերի կողքին, որոնք եղել են նրանց դասիճներն ու կողոպտիչները և դեռևս իրենց մոտ են պահում բռնությամբ իսլամն ընդունած նրանց բազմաթիվ կանանց ու երեխաներին: Հաշվի չառնենք այն, որ բնաջնջումների փաստի հիման վրա հայերն այդտեղ կկազմեն միայն փոքրամասնություն և չեն կարողանա ձգտել քաղաքացիական որևէ դիրքի, նկատի ունենանք, որ այս լիբերալ վարչակարգը չի հապաղի հրապուրել սահմանակից նահանգների մահմեդականներին, որոնք, ամենայն հավանականությամբ, այդտեղ կհորդան զանգվածաբար:

3/ Հայկական հարցի երրորդ լուծումը, որը նվազ բարդ է և ավելի գործնական ու դյուրին իրականացվող, կարող է հանգել Թուրքահայաստանն Ամերիկայի Միացյալ Նահանգների անմիջական և բացառիկ պրոտեկտորատի ներքո դնելուն, որոնք հարկ կունենան բավականաչափ ուժեր ուղարկել՝ ռուսական բանակների ռազմակալած տարածքներում դրության տեղ ու տնօրենը դառնալու և Տրապիզոնի վիլայեթի փոխարեն, որը նրանք կարող են զիջել թուրքերին, մինչև հայկական Կիլիկիա (Չեյթուն, Միս, Ալանա) ծավալվելու համար, որպեսզի ելք ունենան դեպի Միջերկրական ծով:

Միացյալ Նահանգները, այս պարագայում, հարկ կունենան կազմակերպելու նոր պետություն, մաքրագարդելու երկիրը ոչ պիտանի տարրերից, վերջ տալու քոչվոր ցեղերի կողոպուտներին և հաստատելու տեղական ինքնավար վարչակարգ, որը հայերին կթույլատրի իրենց սեփական հայրենիքում այսուհետև՝ ապրել ու զարգանալ հոգեկան որոշակի անդորրի պայմաններում:

Բոլոր բանիմաց հայերն անառարկելիորեն կհամախմբվեն այս երրորդ լուծման շուրջ, որը մյուս բոլորից նախընտրելի է:

(A.M.A.E., Guerre 1914-1918, Turquie, tome 863, ff. 172-174).

514

Արևելյան լեզեռնի հրամանատար, փոխգնդապետ Ռ-ոմիոն Եգիպտոսում բրիտանական զինված ուժերի հրամանատարություն գործուղված կապիտան Դոյնել դը Սեն-Քուենտինին

Ճ. թիվ 225:

Ավաա:

Ես ձեզ եմ ուղարկում սրան կից մի գաղտնի հեռագրի պատճենը, որը ձեզ ավելի, քան ինձ, հետաքրքրող դեկավար հրահանգ է: Ես պատասխանում եմ, որ հսկողության ներքո չեմ պահում Ամերիկայում զինծառայության ընդգրկված այն անձանց, որոնց ընդունել են Մարսելում կամ Բորդոյում: Հենց Ամերիկայից է, որ կարող են գալ անհանգստություն պատճառող և չարաբաստիկ անձինք: Դրանցից երեքը վերջերս արդեն ինձ մոտ են եկել՝

իմստ ռազմատենչ մի երիտասարդ քահանա և «շատ հեղափոխական» երկու հրապարակախոս: Դա շատ վտանգավոր է:

Եգիպտոսի գաղութն ավելի հանդարտ է: Դա տեղական բնավորության լավ զծերից է: Բայց երբ իմացվի, որ Արևելյան [լեզեռնում] օժանդակ սպաների աստիճանների միջև տարբերություններ կան, դա կարող է ամբողջովին փոխվել:

Ես հույս եմ կապում հայ ժողովրդի լրջախոհության հետ, որը հաստատվում է երկարատև դիտարկումով: Քանի որ համաձայնությունը և կարգը հավուր պատշաճի իրականացնողը մեյ իշխանությունն է, ես հույս ունեմ, որ բոլոր ազդեցությունները կշրջանցվեն:

(A.M.G., 17 N 496).

ՀԱՎԵԼՎԱԾ

Խորհրդի նախագահ, Ռ-ազմական նախարար պ. Կլեմանսոն՝ Արևելյան լեզեռնի հրամանատար, փոխգնդապետ Ռ-ոմիոյին

Հ. թիվ 1007-9/11: Գաղտնի:

Փարիզ, 9-ը փետվարի 1918 թ.:

Խնդրվում է առանց նախապես իմ հավանությունը ստանալու, չհամաձայնվել այսուհետև՝ Արևելյան լեզեռնում զինծառայության ընդունելու և ոչ մի հայի կամ սիրիացու, որը քաղաքացիական կյանքում զբաղեցրել է շատ բարձր դիրք: Հրահանգները հետևում են փոստով:

(A.M.G., 17 N 496).

515

Հայկական ազգային պատվիրակությանը հղված հեռագրի պատճենը՝

Պետրոգրադ, 9-ը փետրվարի 1918 թ.:

Իշխանությունները հայտարարում են, որ որևէ ձևով չեն խոչընդոտում հայերի վերադարձին: Քայլեր ենք ձեռնարկում հյուպատոսություններին հրահանգներ տալու համար: Բրեստ-Լիտովսկում թուրքական լիազոր ներկայացուցիչների հետ տեղի է ունեցել առաջին միատը, որոնք հերքել են Թիֆլիսից ստացված այն ստույգ լուրը, համաձայն որի թուրքերը տեղական կառավարությանն առաջարկել են ներգրավվել սեպարատ բանակցությունների մեջ: Քանի որ հայկական և վրացական զորքերն արդեն մասամբ ռազմակալել են ռուսական զորքերի կամովին լքած վայրերը, թուրք լիազոր ներկայացուցիչները նրանց մեղադրում են մահմեդական բնակչության հանդեպ գործած վայրագությունների համար, պա-

1 Ըն դ'Օրսեին է հանձնել Պոդոս Նուրար փաշան փետրվարի 22-ին:

հանջում նրանց հեռացումը և սպառնում հետևանքների համար պատասխանատվությունը բարդել ուսական կառավարության վրա: Ռուսական պատվիրակությունը մերժել է: Թուրքերի ներկայացրած հաշտության պայմանները չափ ու սահման չունեն և ստորագուցիչ են: Նրանք պահանջում են 1880 թ. նախանշված նախկին սահմանների վերականգնում, հաշտության ստորագրմանը հաջորդած տասը շաբաթվա ընթացքում գորքերի դուրս բերում Հայաստանից, Թուրքիայի և սահմանամերձ նահանգների միջև փոխհարաբերությունների արտոնյալ պայմաններ, տնտեսական բնույթի տարբեր առավելություններ ունեցող բոլոր նախկին պայմանագրերի չեղյալ հայտարարում: Հիբրահիմ Հաքքի փաշան [sic]¹ համակրանքով խոսելով հայերի մասին, զոջանքներ է հայտնել վայրագությունների կապակցությամբ, բայց համառել է, որ նրանց ճակատագրի բարելավումը պետք է լինի ներքին հարց: Ռուսական պատվիրակության ղեկավար Տյոցկին պնդել է տեղաբնակ հայերի իրենց ճակատագիրն ազատորեն տնօրինելու իրավունքի շուրջ: Բրեստ-Լիտովսկում իբրև խորհրդական ունեցել ենք հայազգի Վահան Տելյանին: Տասնհինգ օրից ի վեր, յուրաքանչյուր հարաբերություն Թիֆլիսի հետ ընդհատված է՝ Ռուսաստանի հարավում և Կովկասի հյուսիսում քաղաքացիական պատերազմի պատճառով: Ուղարկել ենք հատուկ նշանակության զննարկ:

Ստորագրված է՝ Սարուխանով:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 895, f. 32).

516

Լոնդոնում Ֆրանսիայի ռազմական կցորդ, գեներալ դը Լա Պանուսը՝ Խորհրդի նախագահ, Ռազմական նախարար պ. Կլեմանսոյին

Հ. թիվ 681:

Լոնդոն, 10-ը փետրվարի 1918 թ.:

Գեներալ Դյունսթրիլը և նրա առաքելությունը Կովկաս կծամանեն երեք շաբաթ անց: Հայաստանում, Վրաստանում և Պարսկաստանում ձևավորման ընթացքի մեջ գտնվող կամավորական կորպուսների մասին Ուոր Օֆիսն ունի խիստ աղոտ տեղեկություններ:

Կովկասում հայերի, վրացիների և ուսմերի զինվորագրումը ղեկավարել է գնդապետ Փայքը: Նրան աջակցել է կովկասյան կառավարությունը: Որևէ պատրանքներ կապված այս գորքերի քաջության հետ Լոնդոնում չունեն:

Միջազգետի անգլիական բանակի աջ թևը պատասպարելու համար՝ Պարսկաստանում ուսական կամավորական գորքերի հավաքագրման հարցով, գեներալ Բարթոլի հետ մեկտեղ, զբաղվում է գնդապետ Ռոուլանդսոնը:

(A.M.G., 4 N 62).

¹ Իմա՝ Իբրահիմ Հաքքի փաշա:

517

Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշան՝ Քաղաքական գործերի տնօրեն պ. դը Մարժերիին

Ն:

Փարիզ, 12-ը փետրվարի 1918 թ.:
(Ստացել է Քաղ. վարչ. փետրվարի 13-ին:

Ես պատիվ ունեմ ձեզ հայտնել այն նամակի ստացման մասին, որով դուք բարեհաճել եք ինձ տեղեկացնել Հանրապետության կառավարության ընդունած՝ բուլղարական զնդեր գորակոչված և դաշնակիցների բանակներին անձնատուր եղած հայերին վերաբերող հրահանգներին:

Ձեզ հայտնելով իմ ամենախորին շնորհակալությունները ձեր միջամտության առթիվ, որի շնորհիվ այս հայերի նկատմամբ վերաբերմունքը բարելավվել է, ես ձեզ նաև խիստ երախտապարտ կլինեմ, եթե դուք բարեհաճեք հանձն առնել Խորհրդի պ. նախագահին, Ռազմական նախարարին փոխանցել իմ երախտագիտությունն այն միջոցառումների համար, որոնք նա կարգադրել է իրականացնել նրանց օգտին և որի բարյալացական ջանքերը կրկնապատկում է դրանց արժեքը մեր աչքում:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 889, f. 204).

518

Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշան՝ Արտաքին գործերի նախարարությունում Ասիայի փոխտնօրեն պ. Ժան Գուին

Ն:

Փարիզ, 12-ը փետրվարի 1918 թ.:

Ներեցեք ինձ հիշեցնելու համար, որ մոտավորապես 118000 ֆրանկի հասնող այն գումարը, որը կամավորների ուղևորության համար նախապես հատկացրել է Ամերիկայի մեր ազգային միությունը, Ռազմական նախարարությունը մեզ դեռևս չի վճարել:

Վերջին անգամ, երբ մենք այդ մասին ձեզ հետ գրուցել ենք, դուք ինձ հուսադրել էիք, որ կարող էիք իմ՝ իբրև Ազգային պատվիրակության նախագահի լիազորությունները հավաստող Արտաքին գործերի նախարարության հայտարարությունն ինձ հանձնելու միջոցով հասնել, որ այդ գումարն ինձ հատկացվի: Ես հույս եմ տածում, որ վարչական դժվարությունները կարող են, այսպիսով, վերանալ և ինձ համար հնարավոր կլինի պարտքը վերադարձնել Ամերիկայի ազգային միությանը:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 893, f. 123).

Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշան՝ Արտաքին գործերի նախարարությունում Ասիայի փոխտնօրեն պ. Ժան Գուին

Ն:

Փարիզ, 14-ը փետրվարի 1918 թ.:

Ես պատիվ ունեմ ձեզ փոխանցել սրան կից Ն (որին սրբազնություն) Ն Մուշեղ Սեյրաբյանից՝ այն նամակի կապակցությամբ ստացված պատասխանը, որը նրան էի հղել ձեր հաղորդագրության ստացումից անմիջապես հետո: Դուք բարեհաճել էիք այդ ինձ ուղարկել Արևելյան լեզուներում նրա ապօրինի զինվորագրման առիթով:

Ինչպես դուք այդ կտեսներք, անշուշտ, տեղի է ունեցել քյուրդիմացություն կամ ազգանունների խառնաշփոթ և Ռազմական նախարարության տեղեկությունները հավաստի չեն եղել:

Ես, ի դեպ, այդ առթիվ շատ երջանիկ եմ, ուրվհետև խիստ վշտացած կլինեի, եթե Ն (որին սրբազնություն) Ն Մուշեղն իրականում բույլ տված լիներ այնպիսի կոպիտ խախտում, որի համար նրան մեղադրում եմ:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 893, f. 128).

ՀԱՎԵԼՎԱԾ

Ն (որին սրբազնություն) Ն Մուշեղ Սեյրաբյանը՝ Ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշային

Ն:

[Պատճենը]:

Մարսել, 11-ը փետրվարի 1918 թ.:

Գերազանցություն,

Պ. Հ. Սահառայանը հենց նոր ինձ փոխանցեց ընթացիկ ամսի 9-ի ձեր նամակը, որը հարուցեց իմ մեծ զարմանքը, եթե չասեմ, որ ինձ վիշտ պատճառեց: Դուք ասում եք, որ Ռազմական նախարարության խնդրանքով, Արտաքին գործերի նախարարությունը ձեզ տեղեկացրել է, թե թաքցնելով իմ ինքնությունը և եպիսկոպոսի կարգավիճակը, ես՝ իբրև հասարակ զինվոր, կամավոր հիմունքներով զինձառայության եմ ընդունվել Արևելյան լեզուներում: Եվ Ձեր գերազանցությունը, հավատ ընծայելով նախարարության պաշտոնապես հաղորդած այդ տեղեկությանը, խիստ հուզված է թվում:

Սակայն դա միանգամայն սխալ տեղեկություն է: Այն պահից ի վեր, ինչ Ձեր գերազանցությունն իր ճեպագրով. իսկ այնուհետև՝ հունվարի 22-ի նամակով ինձ ասում էր, որ «մենք հարկ ունենք միայն սպասելու Ֆորին Օֆիսի պատասխանին, որը ես ձեզ կուղարկեմ անմիջապես այն ստանալուց հետո», իբրև կարգապահ մարդ՝ ինձ ոչինչ չէր մնում

անել, քան սպասել ձեր վերջնական հրահանգներին: Եվ ես սպասեցի ու դեռևս սպասում եմ: Քանի որ այսպիսին է իրականությունը, ես ցանկանում եմ, որ Ձեր գերազանցությունը ոչ միայն փութաջանորեն բողոքի այդ թյուր հավաստման առիթով, այլև դրա հեղինակին հայտնաբերելու համար՝ Արտաքին գործերի կամ Ռազմական նախարարությունների միջոցով հետաքննություն սկսի:

Ես ցանկանում եմ, որ Ձեր գերազանցությունը կատարելապես համոզված լինի, որ համբերությամբ կսպասեմ, հստակ իմ առաքելության և Բաղդադ կատարվելիք ճանապարհորդության հաջողության, Ֆորին Օֆիսին արված քայլերի արդյունքին, որը, ինչպես հույս եմ տածում, մեզ համար բարեհաճ կլինի: Հակառակ դեպքում, ես դա կրկնում եմ, ոչինչ չեմ անի առանց Ձեր գերազանցության հետ խորհրդակցելու: Ես հույս ունեմ, որ Ձեր գերազանցությունը բավականաչափ փստախոթություն կդրսևորի իմ հանդեպ և բավական խորաթափանց կլինի կռահելու, թե որքան կարգապահ եմ ես, որպեսզի հերքի այդ կեղծ տեղեկությունը, նույնիսկ առանց բացատրություններ պահանջելու: Բոլոր դեպքերում, ես հույս ունեմ, որ դուք կբարեհաճեք անել անհրաժեշտը, նախ՝ այդ մեղադրանքի հեղինակներին բացահայտելու, իսկ այնուհետև՝ եթե դա անհրաժեշտ համարեք, Լոնդոնում ձեր քայլերը կրկնելու համար, որպեսզի, որքան հնարավոր է արագ, ճանապարհորդությունը շարունակելու թույլտվություն ձեռք բերեք ինձ համար:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 893, ff. 129-130).

Լոնդոնում Ֆրանսիայի ռազմական կցորդ, գեներալ դը Լա Պանուսը՝ Խորհրդի նախագահ, Ռազմական նախարար պ. Կլեմանսոյին

Ճ. թիվ 763: Գաղտնի:

Լոնդոն, 14-ը փետրվարի 1918 թ.:
(Ստացվել է փետրվարի 17-ին):

Համաձայն Ուոր Օֆիսից ստացված տեղեկությունների՝ թվում է, թե օսմանյան և ռուսական հպատակություն ունեցող հայերի զինվորագրումը շարունակվում է գոհացուցիչ պայմաններում:

Կարծում եմ, որ այժմ ռազմաճակատի գծում, Երզնկայի և Վանա լճի միջև, կա մոտավորապես 9000 հայ զինվորական (ռուսահայեր և օսմանյան հայեր):

Բացի դրանից, ժամանում են նոր կամավորներ, որոնք պարբերաբար ամրապնդում են ռազմաճակատի անձնակազմերը:

Ուոր Օֆիսը տեղեկություններ չունի այն անձնակազմերի մասին, որոնք զբաղեցնում են Երզնկայից մինչև Սև ծով ձգվող ռազմաճակատը:

Ինչ վերաբերում է վրացական զորքերի զինվորագրմանը, այն առաջ է ընթանում խիստ դանդաղ և թվում է, թե ստացված արդյունքները չեն կարող դեռևս անհրաժեշտ չափով գոհացուցիչ լինել:

Ինչպես ես այդ մասին ասել եմ նախորդ ճեպագրում, իրական բարելավման հետ կառնելի կլինի հույսեր տածել միայն այն ժամանակ, երբ քրիտանական սպաները և ենթաս-

պաները, որոնք ճանապարհ են ընկել և կամ պատրաստվում են մեկնել, տեղ հասնեն:

(A.M.G., 4 N 62).

521

**Նոթին սրբազնություն) և Մուշեղ Սերոբյանը
Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին**

Ն:

Մարտի, 14-ը փետրվարի 1918 թ.:
(Ստացել է Կաբինետը փետրվարի 18-ին):

Հայկական ազգային պատվիրակության ղեկավար, Նոթին գերագանցություն Պողոս Նուբար փաշան ինձ է հաղորդում Չերդ գերագանցության նամակի բովանդակությունը, որը վերաբերում է այն կարծեցյալ զինվորագրմանը, որի շուրջ ես պետք է պայմանագիր կնքած լինեի Արևելյան լեզոնի հետ:

Ես օգտվում եմ առիթից, որպեսզի ամենակտրուկ ձևով հերքեմ նման հիմնադրվ պնդումը, առավել ևս, որ համաձայն պատվիրակության ղեկավարի նամակի, ինձ է վերազրվում ռազմական իշխանությունների բարեհաճ վերաբերմունքը չարդարացնելու մեղքը, այն է՝ հանուն այդ զինվորագրման շուրջ պայմանագրի կնքումը հաջողությամբ պսակելու՝ ես նրանցից թաքցրել եմ արքեպիսկոպոսի իմ կարգավիճակը: Չեզ համար, ի դեպ, շատ դյուրին է, պարոն նախարար, այս կապակցությամբ, մանրակրկիտ հետաքննության անցկացման շուրջ կարգադրություն անելը և տեղեկանալը, որ այս ամենն անհավանական հերյուրանք է: Եթե ես անհրաժեշտ եմ համարել զինվորագրվել իմ հայրենիքի և Ֆրանսիայի գործին ծառայելու համար, որոնց դիտում եմ միմյանց հետ մեծապես կապված, ապա երջանիկ կլինեի, եթե մարտնչեի Ֆրանսիական դրոշմների ներքո, հանուն արդարության և մարդկության, առանց դրա համար ջանալու թաքցնել հայ արքեպիսկոպոսի իմ կարգավիճակը:

Ես մեծ ցանկություն ունեմ ձեզ տեղեկացնել, պարոն նախարար, որ իմ արժանապատվությունը և սկզբունքները երբեք ինձ չեն թույլատրի դիմելու նման խաբեության:

(A.M.A.E., Guerre 1914-1918, Turquie, tome 893, ff. 131-132).

522

**Պաղեստինում և Սիրիայում Ֆրանսիայի Գերագույն կոմիսար
պ. Ժորժ-Պիկոն՝ Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին**

Հ. թիվ 99:

Կահիրե, 17-ը փետրվարի 1918 թ., ժ. 17.35-ին:

(Ստացել է Քաղ. վարչ. փետրվարի 18-ին):

Ֆրանսիացի և անգլիացի տարբեր սպաներ, որոնք հենց նոր են անցել ջրանցքը՝ մեկնելով Կովկաս և Հայաստան, հավաստում են, որ մի անգլիական առաքելության հանձնարարվելու է վերակազմավորել հայկական կորպուսները, և որ երկու տարածաշրջանները ժամանակավորապես վստահվելու են մեր դաշնակիցներին: Նման որոշումն իբրև հետևանք կարող է հանգեցնել այն խիստ աշխույժ շարժման կասեցմանը, որն ի նպաստ մեզ ներկայումս երևան է եկել հայերի շրջանում: Բացի դրանից, այն կհակասի Առաջավոր Ասիային վերաբերող համաձայնագրերի ոգուն: Այսպիսով, ես ցանկանում եմ հույս ունենալ, որ տեղեկությունը ստույգ չէ: Այն պարագայում, երբ ներկա հանգամանքները Ռումինիային պարտադրեն գործարքի մեջ մտնել թշնամական տերությունների հետ, Ռումինիայում գտնվող մեր ռազմական առաքելությունների համար Հայաստանում, հավանաբար, զբաղմունք կլինի, որի վրա ես ինձ պարտավոր եմ համարում հրավիրել Չերդ գերագանցության ամբողջ ուշադրությունը:

(A.M.A.E., Guerre 1914-1918, Turquie, tome 895, f. 31).

523

**Բանակի շտաբի 3-րդ բաժանմունքի ծանուցագիրը
Կովկասի իրադրության վերաբերյալ**

Գաղտնի:

19-ը փետրվարի 1918 թ.:

Ազգային բանակների զինվորագրումը.

Հայեր. արդյունքները գոհացուցիչ են (9000 մ {արդ} Երզնկայի և Վանա լճի միջև):

Վրացիներ. արդյունքները նվազ գոհացուցիչ են:

Պարսկաստանի ռուսներ. արդյունքները նվազ գոհացուցիչ են (5000 մ {արդ})՝ 10000-ի փոխարեն):

Դյունսթերվիլի առաքելությանը պարտադրվող հապաղումը չի կարող բարելավել իրավիճակը:

Թիկունքում.

Իրավիճակը ծանր է, բուլշևիզմը ծավալվում է: Սովյե սպառնալից է, վախենում են կողոպուտներից (հատկապես թաթարների):

Որևէ իշխանություն ի վիճակի չէ պահպանելու կարգը:

Հետևություն.

Կովկասում Անտանտի ռազմաճակատը կարող է դիտվել իբրև գոյություն չունեցող: Թուրքերն ունեն տեղաշարժի ազատություն: Բայց նրանք երկփեղկված են երկու միտումների միջև:

- կամ հիմնավորապես թուլացնել այս ռազմաճակատը՝ ի նպաստ Պաղեստինի և Միջագետքի ռազմաճակատների (սա ռազմական նպատակն է).

- կամ կարգի վերահաստատման պատրվակի ներքո առաջ ընթանալ, գորավիզ լինելու մահմեդական ժողովուրդներին, ձեռք պարզելու քաթարներին և նրանց հետ մեկտեղ գրավելու Կովկասը (սա քաղաքական նպատակն է. Էնվեր փաշայի պանթուրանական շարժումը):

(A.M.G., 16 N 3060).

524

**Կովկասում ֆրանսիական ռազմական առաքելության ղեկավար,
փոխգնդապետ Շարդինյին՝ Խորհրդի նախագահ,
Ռազմական նախարար պ. Կլեմանտյին**

Հ. թիվ 16:

Թիֆլիս, 19-ը փետրվարի 1918 թ.:

Վրացական և (ռուսական ?) բանակի կազմակերպումն ամբողջությամբ տապալվել է: Ռազմաճակատում գտնվող 10000 հայ ունակ չեն դիմադրության՝ թիկունքում մահմեդականների ներկայության պատճառով, որոնք Հարավային Կովկասում ապստամբություն են նախապատրաստում ի նպաստ թուրքերի:

Անգլիացի զենեակը (զենեակ Դյունսթրիլը) չի ժամանել: Թուրք հրամանատարը՝ հայտնել է, որ ինքը հարկադրված է եղել մի ստորաբաժանում ուղարկել սահմանազատման գծից այն կողմ՝ օսմաններին թուրքերից՝ պաշտպանելու համար: Այսպիսին են այն կեղծ պատրվակները, որոնք վկայակոչվում են Երզնկայում հայերի և քրդերի միջև տեղի ունեցած մարտերից հետո:

Շշնամին ռազմակալել է Երզնկան, Կելկիթը, Արդասան և Պլատանան:

(A.M.G., 4 N 62).

525

**Անգլիական տեղեկատվական ծառայության հղած զեկուցագիրը՝
Ռազմական նախարարությանը**

Թիվ 43: Գաղտնի:

19-ը փետրվարի 1918 թ.:

(Մտացել է ԲԸ-ի 2-րդ բաժանմունքը փետրվարի 25-ին):

1 Վեհիբ փաշան:
2 Մխալ է. իմա՝ հայեր:

**Թուրքիա
Հայաստան**

Կովկասի ռազմաճակատում թուրքական բանակի հրամանատար Վեհիբ փաշան վերջերս հանդես է եկել մի հայտարարությամբ, որն ազդարարում էր. եթե գրավված տարածքում մահմեդական բնակչության նկատմամբ գործադրվույ հայերի վայրագությունները չլաղարեն, զինադադարը կխախտվի և Երզնկայի ռազմաճակատում գրոհ կձեռնարկվի: Կարծում են, որ թուրքական մի փոքր զրոհ կձեռնարկվի ռուսների մթերային պաշարները գրավելու նպատակով: Այս առթիվ հատկանշական է, որ փետրվարի 4-ին, Կոստանդնուպոլսում կիսապաշտոնական մի երկարաշունչ հաղորդագրություն է հրապարակվել: Այս հաղորդագրությունը, որը բացի «Ֆուրվեթսից»՝ գերմանական մյուս թերթերը լռության են մատնել, մոլեզմորեն գրոհում է բոլշևիկներին այն պատճառով, որ նրանք իրենց զորքերին թույլատրել են լքել ռազմաճակատը: Այն հայտարարում է, որ օգտվելով ռուսական զորքերը դուրս բերելուց, տեղաբնակ, ինչպես նաև ռուսական ստորաբաժանումներում ընդգրկված հայերը, պահպանելով իրենց զենքերը, տրոհվել են և մնացել ռազմակալված տարածքներում: Նրանք սկսում են հետապնդել օսմանյան բնակչությանը և, մասնավորապես, մահմեդականներին: Այս փաստերը վերջնականապես հաստատել են փախած թուրք ռազմագեղինները և նմանապես տեղաբնակ գեղինները, որոնց հաջողվել է դուրս պրծնել հայերի ձեռքից: Դրանք հաստատել է նաև մի պատգամավորություն, որը Կոստանդնուպոլիս էր ուղարկվել հայցելու նրանց օգնությունը, ովքեր հայեր չեն: Հաղորդագրությունը եզրափակվում է հայտարարությամբ, ըստ որի ռուսական ռազմական իշխանություններին հղված դիտողությունները որևէ արդյունքի չեն հանգեցրել:

Այս հաղորդագրությանը հետևել է փետրվարի 14-ի թվակիր մի ճեպագիր Կոստանդնուպոլսից, որն ազդարարում է, թե հայկական հրոսակախմբերը դուրս են մղվել Երզնկայից, Ալդասայի ճանապարհից, արևմտյան տարածաշրջաններից և ծովափնյա Գոերեյե գյուղից (Տիրեբոլից 16 կիլոմետր դեպի արևելք գտնվող): Մեկ այլ՝ ամսի 15-ի թվակիր ճեպագիր, հայտնում է, որ զինված հրոսակախմբերի դիմադրությունը Հայաստանում ջախջախվել է Երզնկայից դեպի արևմուտք գտնվող Պարիստեկի (?), Էգրակ (Էկրեկ ?), Թալնիզբաշ քրդական գյուղերում, բուն Երզնկայում, ինչպես նաև հյուսիսում: Նույն ամսաթվի թուրքական մի հաղորդագրություն ազդարարում է, որ չնայած վատ եղանակին, թուրքերը հասել են Կելկիթ Չիֆթլիքից մոտավորապես 30 կիլոմետր դեպի արևելք գտնվող Էսհմեդ, իրենց առջևից բշտելով բազմաթիվ անկանոն հրոսակախմբերի: «Հրոսակախմբերը» ճողոպրել են Երզնկայից և արվարձաններից Մամախաթունի ուղղությամբ:

Ամսի 15-ին, Հաազայում գտնվող Հայկական բյուրոն վճռական հերքումով հակադրվել է հայերի դեմ ուղղված մեղադրանքներին և առաջ քաշել թուրքերի ու քրդերի դեմ ուղղված հակամեղադրանքներ: Բյուրոն պնդում է, որ խոռվարարները, համաձայն Կոստանդնուպոլսում հյուսված ծրագրի, ջանում են ստեղծել պանթուրքական շարժում:

(A.M.G., 7 N 2178).

1 1918 թ. փետրվարի 7-ի. թիվ 38:

**Կովկասում ֆրանսիական ռազմական առաքելության ղեկավար,
փոխգնդապետ Շարդինյին՝ Խորհրդի նախագահ,
Ռ-ազմական նախարար պ. Կլեմանտյին**

Հ. թիվ 17: Գաղտնի:

Թիֆլիս, 19-ը փետրվարի 1918 թ.:

Անդրանիկը հեռագրում է Պողոս Նուբար փաշային.

«Թշնամին սկսում է գրոհել: Մենք ունենք 12000 մարդ: Եթե Ֆրանսիան մատակարարի այն, ինչն անհրաժեշտ է, մենք հույս ենք տաժում մարտի 15-ին ունենալ 24000 [մարդ]: Պետք չէ հույս կապել Կովկասի հայերի հետ: Ներկայումս նրանց թիվը հասնում է 8000-ի, սակայն ամեն ինչ կազմալուծված է և սպասվում են տհաճ լուրեր:

Կացությունը փրկելու միակ միջոցը դաշնակիցների դեսանտի ափ դուրս բերումն է Կիլիկիայում, որպեսզի գիծը հատվի և անգլիացիների բավարար ուժերի ուղարկումը Պարսկաստան»:

(A.M.G., 4 N 62).

**Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնը՝
Ն-որին սրբազնություն}ն Մուշեղ Սերոբյանին**

Ն:

Փարիզ, 20-ը փետրվարի 1918 թ.:

Նամակը, որը Չերդ մեծությունը բարեհաճել է ինձ հղել փետրվարի 14-ին¹, հաստատում է այն թյուրիմացությունը, որն առաջ է եկել նրա երկու հայրենակիցների իշխանությունների արած հայտարարությունների հետևանքով՝ մինչ նրանց մեկնելը Եգիպտոս: Մինչ ձեր հաղորդագրության ստացումը, որի համար ես շտապում եմ ձեզ շնորհակալություն հայտնել, թույլ տրված սխալն արդեն շակվել էր: Ես հիրավի երջանիկ էի դրանում գտնելով այն զգացումների նոր վկայությունը, որը Չերդ մեծությունը տաժում է Ֆրանսիայի հանդեպ: Նա կարող է վստահ լինել հայկական խնդրին Հանրապետության կառավարության ունեցած հավատարիմ նվիրվածության հարցում, և ես նրան խնդրում եմ ընդունել այն ցանկությունները, որոնք տաժում են նրա առաքելության իրականացման առիթով:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 893, ff. 153-153 v).

¹ Տե՛ս վերը թիվ 521 փաստաթուղթը:

**Արտաքին գործերի նախարարը՝ Հայկական ազգային
պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշային**

Ն:

Փարիզ, 21-ը փետրվարի 1918 թ.:

Այս ամսի 14-ին, Չերդ գերագնացությունը բարեհաճել է ինձ փոխանցել մի նամակ², որը նա հենց նոր էր ստացել Ն-որին սրբազնություն}ն Մուշեղ Սերոբյանից և համաձայն որի, այդ քահանան ջանում էր ապացուցել, որ չնայած տարածված լուրերին, ինքը և ոչ մի պահ չի փորձել կամավոր հիմունքներով զինվորագրվել Արևելյան լեգեոնին՝ թաքցնելով իր ինքնությունը:

Ես երջանիկ եմ Չերդ գերագնացությանն ուղղված պատասխանում տեղեկացնել, որ Ռազմական նախարարության հոգածությամբ անցկացված հետաքննությունն ապացուցել է Ն-որին սրբազնություն}ն Մուշեղ Սերոբյանի ներկայացրած հավաստիացումների հիմնավորվածությունը: Թյուրիմացությունը, որն այս պարագայում տեղի է ունեցել, պայմանավորված է բազմաթիվ հայերի շատախոսությամբ, որոնց անստույգ լուրերը հաղորդվել են ռազմական իշխանությանը:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 893, f. 154).

**Անգլիական տեղեկատվական ծառայության հղած զեկուցագիրը՝
Ռ-ազմական նախարարությանը**

Թիվ 45:

21-ը փետրվարի 1918 թ.:

(*Ստացել է* ԲԸ-ի 2-րդ բաժանմունքը փետրվարի 28-ին):

Հայաստան

Իբրև հաղորդված տեղեկությունների շարունակություն, փետրվարի 19-ի թուրքական պաշտոնական հաղորդագրությունն ազդարարում է, որ թուրքական ստորաբաժանումները Երզնկա-Մամախաթուն ճանապարհին հանկարծակիի են բերել դաժանություններ գործած հրոսակախմբերին: Նրանք որոշ դիմադրություն են ցուցաբերել, բայց կորցրել են 200 մարդու, 3 թնդանոթ ու ռազմամթերքներով լի 8 սայլ և ճողոպրել արևելյան ուղղությամբ: Թուրքական հրամանատարը ծանուցում է, որ Չարդախլի կիրճից Երզնկա ձգվող ճանա-

¹ Ստորագրել է պ. Գուն:

² Տե՛ս վերը թիվ 519 փաստաթղթի հավելվածը:

պարհին գտնվող բոլոր գյուղերը հրկիզվել են և բոլոր բնակիչները սպանվել:

Ծանոթագրություն. – Չարդախլի կիրճի և Երզնկայի միջև կան մոտավորապես 8 հայկական գյուղեր. գրեթե 15 գյուղ կա դեպի ավելի հարավ-արևելք ընկած տարածաշրջանում և Երզնկայի մոտակայքում:

(A.M.G., 7 N 2178).

**Բեռնում Ֆրանսիայի դեսպան պ. Բոն
Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին**

Ճ. քիվ 233:

Բեռն, 21-ը փետրվարի 1918 թ.:
(Ստացել են Կար. փետրվարի 27-ին,
Քաղ. վարչ. փետրվարի 28-ին):

«Ժուրնալ դը Ժնևը» հենց նոր, այսօրվա իր համարում, «Թուրքական դիվանագիտությունը և հեղափոխական Ռուսաստանը»¹ խորագրով մի հոդված է տպագրել, որն ինչպես ինձ թվում է, մի քանի հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում ծայրահեղական շարժման հետևանքով Կովկասում ստեղծված իրադրության վերաբերյալ: Հեղինակը, որի գաղտնի պահվող անվան ներքո կարող է թաքնված լինել մի հայ մարդ, ծանուցում է ազատության ընդհանուր տենչանքի հիման վրա հայերի և վրացիների հաշտեցման մասին և նշում, որ Թիֆլիս ուղարկված բոլոր լիազոր ներկայացուցիչները կփորձեն Կովկասի հետ բանակցել սեպարատ հաշտության շուրջ:

Ես պատիվ ունեմ Ձերդ գերազանցությանն ուղարկել սրան կից այդ հոդվածի ամենահետաքրքիր մասը²:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 895, f. 42).

1 1918 թ. փետրվարի 21-ին «Ժուրնալ դը Ժնևում» լույս տեսած հոդվածը:
2 Արտատպված չէ:

**Լևանտում Ռ-ազմածովային նախարարության տեղեկատվական
ծառայության զեկուցագիրը՝ Ռ-ազմածովային նախարարությանը¹**

Թիվ 12: Գաղտնի²:

Պոքոտ-Սաիդ, 21-ը փետրվարի 1918 թ.:
(Ստացվել է մարտի 7-ին):

*Գաղթականների հետ մեկուկես տարի
դեզերած մի հայի վկայություն*

Արտաքսված հայերի գողգոթան (1915-1917 թթ.)

[I.] Թրակիայի (Անդրինուպոլիս, Ռոդոսթո, Մալգարա), Բուքարեստի (Բաղչեջիկ, Ադա-Բազար, Չենգյուլիե, Օվաջիկ և այլն) ու Բրուսայի (Բանդիրմա, Բալիքեսիր) հայերը՝ Իզմիդ, Էսգյուի Շեհիր [sic], Կոնիա, Բոզանտի գծով արտաքսվում են դեպի Հալեպ:

Բացառապես տղամարդկանցից բաղկացած Անգորայի և Կաստամունիի խմբերը և Կոնիայի ու Կեսարիայի բնակչությունը միանում են այդ քարավանին: Առաջին արտաքսումը տեղի է ունեցել 1915 թ. հուլիսին, անհատական կարգով կատարված արտաքսումներից չորս ամիս անց:

Փոքր Ասիայի այս շրջանում, Չմյուռնիան ևս՝ ինչպես Քոթահիան, մնում է տեղահանության չարիքներից զերծ: Մինչ 1915 թ. դեկտեմբերի վերջը, վերոհիշյալ գծով տեղաշարժման մեջ են գտնվում 150000 հայ: Այդ ժամանակաշրջանում ընտանիքներ այլևս չեն ուղարկվում և դրանց բավական փոքրաքանակ մասը, ինչպիսիք էին արհեստավորների, ուխտադրուժների կամ զինվորների ընտանիքները, մնում են իրենց տանիքի ներքո: Այդ գծի վրա ժողովուրդը ենթարկվում է խոշտանգումների, կորցնում ունեցվածքը, բայց մեծաթիվ մահացության դեպքեր, կողոպուտներ և ոտնձգություններ պատվի նկատմամբ չեն արձանագրվում: Չարիքի մեծության մասին դեռևս պատկերացում չունենին:

Տառապանքները, որոնց ենթարկվում էին, կարելի է ասել, աճում էին թվաքանական պրոգրեսիայով: Կոնիայից մարդկանց դուրս բերումն իր չափերով զիջում է Էրեզլիից տեղի ունեցած արտաքսմանը: Իրավիճակն Էրեզլիում ավելի հանդուրժելի է, քան Ուլու-Քիշլայում: Գուվլեկից [sic]³ հետո, մահացություններն աճում են և Օսմանիեում սկսվում է սվիհների հարվածներով, հալածանքով ուղեկցվող բուն արտաքսումը: Մամուրեհում⁴ կարելի էր հաշվել մեծ թվով մահացածների: Իսլահիեում այդ թիվը կրկնապատկվում է: Ինթիլիում հալածվում և կոտորվում են բանվորները: Իսլահիեից այն կողմ՝ Կատման, Աջուզը

1 Փոխանցել է պ(ատվելի) հ(այր) ժոսսենը:
2 Այս գրության պատճեններից մեկը Ռ-ազմածովային նախարարությունն ուղարկել է Արտաքին գործերի նախարարությանը: Այն պահպանվել է հետևյալ ֆոնդում՝ Guerre 1914-1918, sous-série *Turquie*, tome 895, ff. 37-40: Այրուհանդերձ, պատճենը պարունակում է մի քանի սխալներ, որոնք վերաբերում են քաղաքների անուններին, իսկ որոշ բառեր և արտահայտություններ նույնիսկ բացակայում են:
3 Իմա՝ Գյուլեք:
4 Իմա՝ Մամուրեք-ուլ Ազիզ:

ճաշակում են ձմռան դաժանությունների, հիվանդությունների սարսավելի աճի, սովի սարսափների հետևանքները:

Ժողովուրդը հասկացավ, որ գնում է մակաման ընդարաջ:

II. Կիլիկիան, բացառությամբ Չեթունի, մեծաթիվ բշկառությունների թիրախ չդարձավ: Ադանայի, Մերսինի, Ֆարսուսի [sic]¹, Սսի, Հաննի, Մարաշի, Դյուր-Յուլի, Հասան-Բեյլի և այլնի բնակչությունը ... բողոմ է իր տները համեմատաբար լավ վիճակում և որոշ չափով հանգիստ առնում Հալեպի վիլայեթում՝ առանց անտանելի ուղևորության տառապանքները կրելու:

Կիլիկիացիների մի մասը հատուտվում է Սիրիայում, մեծ մասը բշկում Հալեպից այն կողմ՝ Փոքր Ասիայի բնակչության հետ մեկտեղ Միջագետքի անապատներում կործանվելու համար:

III. Հայաստանի բնակչությունը, բացառությամբ Վասպուրականի² բնակչության, Հալեպի ճանապարհով շարժվում է դեպի Միջագետք:

Սիրիայի և Միջագետքի սահմաններում կուտակված հայերի շրջանում անհնար էր գտնել մարդիկ Բիթլիսից, Մուշից, Էրզինգյուանից [sic]³, Քղդից, Բաբերդից և Բալուից: Թվում է, թե նրանք, առանց բացառության, կործանվել են բուն Հայաստանում:

Բարձր Հայքում գտնվող Բասենի, Էրզրումի, Քղդի, Երզնկայի, Բաբերդի, Սև ծովի ափերին գտնվող Տրապիզոնի, Սամսունի և այլ վայրերի, Երկրորդ Հայքում գտնվող Անասիայի, Թոխաթի, Սվազի, Նիկոպոլիսի, Եփրատի ավազանում գտնվող Բալուի, Արգյունեի [sic]⁴, Չնքուշի, Դիարբեքլիի բնակիչները՝ Հալեպի ճանապարհով շարժվում են դեպի Միջագետք:

Այս տարածաշրջաններում ոչ միայն տեղաշարժվել են ավելի քան 600000 մարդ, այլև այդտեղ է, որ արտաքսվածները իարկաղոված են եղել ենթարկվելու աճեմաառարկու և ամենամանրակայելի բարբարոսությունների: Այնտեղից եկող քարավաններն ընդհանուր առմամբ բաղկացած էին բացառապես կանանցից և երեխաներից: Եթե նրանք, սվքեր դեզերում էին Փոքր Ասիայի գծի վրա, կորցրել են իրենց ունեցվածքները, ապա Հայաստանի գծի վրա գտնվողները՝ զուհաբերել են, բացի դրանից, իրենց կյանքն ու պատիվը: Եթե հետապնդումներն ու տառապանքներն այնտեղ առաջ էին ընթանում թվաբանական պրոզեսիայով, ապա՝ այստեղ դրանք աճում էին երկրաչափական պրոզեսիայով:

Հալեպը հայի դժբախտությունների կենտրոնն է և ականատեսը:

IV. Սիրիայի գիծը. Համան, Հոնսը, Դամասկոսը, Դերաան, Ամմանը, Սալոն, Կերեկը և Մաանն այն կենտրոններն են, ուր իսլամն ընդունած հայ վտարանդիները, որոնք թեպետ մինչև վերջին ժամանակները շարժման մեջ էին գտնվում, այդուհանդերձ, ապրում են համեմատաբար հանգիստ և շատ մեծ կորուստներ չեն կրում: Ընդհանուր առմամբ, այդ վայրերում հաստատվել են կիլիկիացիները: Երուսաղեմը փոքրաթիվ և ամենաերջանիկ վտարանդիների ապաստարանն է:

1 Իմա՝ Տարսուս:
2 Վանի նահանգի հայերեն անվանումը:
3 Իմա՝ Երզնկա:
4 Իմա՝ Արղանա:

V. Միջագետքի գիծը. Հայաստանից և Փոքր Ասիայից եկող արտաքսվածները՝ առաջինները Սուրուջում, իսկ վերջինները Կատանայում, ամենամեծ թվով զոհեր տալուց հետո, փոքր անց դիակներով էին ծածկելու Բաբը (80000 մահացած): Մեսքենն, Աբու-Հարրարը, Համանը, Ռաքքան. Սեբբան, Դեր Չոլը [sic]¹, իսկական գերեզմանատներ են: Միայն Մեսքենում 100000 հայ կնքել են իրենց մահկանացուն:

Հալեպի, Ռաս էլ-Այնի, Թալաշիլիթի և Մոսուլի տարածքները սփռված են դիակներով: Միայն Ռաս էլ-Այնը դարձել է այնպիսի մի կոտորածի ականատեսը, որի ընթացքում, չերքեզների ձեռքով, 1916 թ. կեսերին, կործանվել են 35000 հայ: Մինչ 1916 թ. գարունը, Դեր Չոլը [sic] ապաստանում էր մեծ թվով արտաքսվածների: Մի նոր ու սարսափելի վտարում և աներևակայելի դաժանություններ մարդկանց այդ կուտակմանը հասցրել են վերջին հզոր հարվածը: Համաձայն ամենաստույգ սկզբնաղբյուրներից քաղված տեղեկությունների՝ 1916 թ. հուլիս ամսին Դեր Չոլում [sic] կոտորվել են 120000 հայ:

Արտաքսվածների անծայրասժիր գերեզմանը ձգվում է Հալեպից մինչև Միջագետք:

*
**

1/ Թուրքական «Միություն և առաջադիմություն» կոմիտեի որոշմամբ, Գերմանիայի համաձայնությամբ, այս կապակցությամբ մենք լուրջ ապացույցներ ունենք, կառավարությունը վճռել է տեղահանել հայերին:

2/ Անգորայի վիլայեթի մի մասի, Սվազի վիլայեթի մի մասի հայ բնակչությունը, որի վրա բարենորոգումը չի տարածվում, ինչպես նաև ամբողջ Պոնտոսի հայ բնակչությունը, մասնավորապես, բարենորոգմանը ենթակա յոթ վիլայեթների հայ բնակչությունը՝ կառավարության կազմակերպած հյուսակախմբերի կողմից բազմաթիվ անգամներ կողոպտվելուց հետո, վայրագորեն մոլորվել է. 15 տարեկանից մեծ արական սեռի ներկայացուցիչներին սպանել են, զեղեցիկ երիտասարդ կանանց և կույսերին առևանգել, 7-ից 14 տարեկան երեխաներին բռնությամբ տարել են և դարձրել մահմեդական:

3/ Թեպետ Կիլիկիայի, Բրուսայի վիլայեթի, Բութանիայի, Թրակիայի բնակչությանը պարբերաբար չեն ենթարկել կոտորածի, այդուհանդերձ, կողոպտել են և հետապնդել:

4/ Հայաստանից արտաքսված հայերի մյուս մասին և III պարագրաֆում նշված բնակչությանն ուղղածիվ ճանապարհով չեն տարել Սիրիայի անապատները, այլ տարել են անմատչելի լեռներով, դժվարանցանելի հովիտներով, անանցանելի գետերով ձգվող ծուռուժուռ ուղիներով. մեծ մասը մահացել է, խեղդվել գետերում կամ դարձել սովի և վարակիչ հիվանդությունների զոհը:

5/ Մեկուկես տարվա ընթացքում, արտաքսված հայերը չեն ունեցել որևէ կիկանգա՝ նույնիսկ Սիրիայի անապատներում: Մտրակը ձեռքներին, դահիճները նրանց սեթկ, հիվանդ, սովահար վիճակում հետապնդում էին մի տեղից մյուսը:

Շարունակաբար ընթացքի մեջ գտնվող այս տեղափոխությունը հայ ժողովրդի բնաջնջմանը խթանող հանգամանքներից է:

6/ Հայ կանանց մերկությունը, սովահար մայրերի կողմից ծիծաղելի գնով երեխաների վաճառքը, հյուծված ծնողների կողմից ճանապարհներին նրանց լքելը, դեռևս ծծկեր մանուկներին գետերը նետող՝ կարծեք խելահեղության մոլուցքի մեջ գտնվող մայրերը, ամենաբրիտ բնագոյներին հագուրդ տալու նպատակով հայ կանանց պատվազրկումը քրդերի

1 Իմա՝ Դեր-եզ-Չոլ:

և արաբների կողմից՝ այս ողբերգության ամենասարսափելի տեսարաններից էին:

7/ 1915 թ. սկզբին, հայ զինվորներից վերցրին գեներալ և նրանց ուղարկեցին բանվորական ջոկատներ: Նրանց կյանքը, որն անցնում էր ճանապարհների շինարարության և քայլերի աշխատանքներում, արդեն վերածվել էր կենդանի նահատակության: Մարդկանց համընդհանուր դուրս բերման ժամանակ, նրանց գերակշռող մասը սպանվեց, իսկ մյուս մասը դարձավ սովի, մերկության, հիվանդության գոլի: այս կերպ ոչնչացվեցին գրեթե բոլորը:

Ոչ լեզուն և ոչ գրիչը չեն կարող ներկայացնել Թուրքիայի հայերի նահատակության պատկերը: Ժողովուրդների տարեգրության մեջ և ոչ մի ողբերգություն չի կարող մերժենալ այս աղետին: Այն բնութագրելու համար ժողովուրդների լեզուներում բացակայում են բառերը:

Ինչ վերաբերում է արտաքսված հայերի բեկորների ներկա վիճակին, ապա ահաբեկչության օրերի համեմատությամբ՝ նրանց կյանքն այժմ դարձել է հանդուրժելի: Բայց ավելի քան կեսը, որոնք թշվառներ են, հաշմանդամներ, հյուծվածներ, դատապարտված է մեռնելու, որովհետև գուրկ է հանապազօրյա հացը վաստակելու հնարավորությունից, իսկ կառավարությունը մնում է իբրև նրա հուզարթի ջղաճգությունների անտարբեր դիտորդ:

Հայերի կուտակման կենտրոններն են Դամասկոսը, Հալեպը, Կոնիան՝ իրենց արվարձաններով: Կոնիայի և հատկապես Դամասկոսի վտարանդիներից նրանք, ովքեր փոքրիշատե մեծ կապիտալ ունեն կամ ոյրևե արհեստի են տիրապետում, սկսել են զբաղվել մանր գործերով: Հալեպում դեռևս իշխում է ահաբեկչության մթնոլորտը:

Ներկայումս դժվար է ճշգրտել աղետից հետո կենդանի մնացողների քանակը: Բայց ես ջանում եմ սահմանել նրանց թիվն ըստ իրենց իսկ իրազեկ թուրքերի վկայության, որոնք ապրում են նրանց հետ.

Կոնիան և նրա արվարձանները	20000
Հալեպը և նրա արվարձանները	25000
Դամասկոսը և նրա արվարձանները.....	40000:
Դրայի [sic] ¹ , Սալտի, Կերեկի, Ամ[մ]անի և այլ վայրերի հայերին հարկադրել են ընդունել իսլամը: Նույն հարկադրանքն է գործադրվել Հալեպի արվարձաններում:	
Կիլիկիա (Ադանա, Լիս [sic] ² , Մալաշ, Հան և այլն)	10000
Քոթահիա, Աֆիոն-Գարահիսար, Էսգյուի Շեքիր [sic] և այլն	6000
Կեսարիա, Խարբերդ, Արաբգյուլի [sic] և այլն	7000:

Հայաստանում մնացած հայերի մեծ մասը բողոքականներ են կամ կաթոլիկներ: Գերմանիայի և Ավստրիայի միջամտությունից հետո, օսմանյան կառավարությունը կարգադրել է 1915 թ. օգոստոս ամսին վերադարձնել դուրս քշված բողոքականներին և կաթոլիկներին: Կոտորածներից խուսափած կանանց և երեխաների մեծ մասին հարկադրել են ընդունել իսլամը:

Ասում են, որ Մոսուլում կան բավական մեծ թվով հայեր, բայց ինչ վերաբերում է նրանց քանակին, ճշգրիտ տեղեկությունները բացակայում են:

Ըստ բարենորոգման առիթով կազմված ցուցակների՝ Թուրքիայի հայերի ընդհանուր թիվը հասնում էր մոտավորապես 2000000-ի: Մի կողմ բողոքներով Կոստանդնուպոլսի և Չմյուռնիայի, ինչպես նաև Հայաստանի ռազմակալված մասի հայ բնակչությանը, հայ ազգի բեկորների քանակը չի գերազանցում 100000-ը, ինչպես վստահեցնում են այն անձինք, ովքեր նրանցից բաժանվել են մի փոքր առաջ: Չցանականալով հավատ ընծայել այս սարսափելի պնդումներին, ես այդ թիվը կրկնապատկում եմ և ստանում քրիստոնյա հայերի

1 Իմա՝ Դերաս:
2 Իմա՝ Միս:

կամ իսլամին հարած հայերի՝ 200000-ին հասնող թիվ:

Հնարավոր է այս թվին ավելացնել հարեմներում հալումաշ եղող 30-ից 40000 երիտասարդ կանանց և թուրքական որբանոցներում գտնվող 20-ից 25000 երկու սեռի պատկանող որբերին:

Եթե այս դառնաշունչ իրողություններում կա մի սլայծառ ճշմարտություն, ինչպիսին օրվա լույսն է, ապա այդ հենց այն է, որ աղետից հետո կենդանի մնացածների թվում հարյուրից ութսունը տարեց կանայք են և երեխաներ, որոնց մեծ մասը դեռևս դատապարտված է կործանման. տղամարդիկ ոչնչացվել են: Եվ նրանք, ովքեր երիտասարդ կամ տարեց, գտնվելով ծայրահեղ դժբախտ կացության մեջ, այստեղ կամ այնտեղ ի հայտ են գալիս ալքոոլի քառույլներում, դեռևս կանչվում են զինծառայության:

Մյուս կողմից, պատերազմի՝ այն տարածաշրջանների մերձեցմանը զուգընթաց, որտեղ արքայալներն են բնակություն հաստատել, նրանք պետք է կրկին հեռացվեն: Այս առիթով, ի դեպ, հայ վտարանդիներին իրենց հայրենիք վերադարձնելու պատրվակի ներքո, Ներքին գործերի նախարարն՝ արդեն հրահանգել է: Միայն հրաշքով է, որ շնորհիվ անգլիացիների ճարպիկ և ջախջախիչ հարձակման, տեղաբնակ հայերն ու Երուսաղեմի վտարանդիները, որոնց թիվը հասնում է գրեթե հազարի, փրկվել են:

(A.C.M., SS A 166).

532

Շվեյցարիայի հայկական գաղութը՝ Իսպանիայի թագավոր, Նորին մեծություն Ալֆոնս XIII-ին

Հ. թիվ 4617:

[Պատճենը]:

21-ը փետրվարի 1918 թ.:

Չերդ մեծությանը հայտնելով Երզնկայի, Տրապիզոնի, Էրզրումի և Վանի տարածաշրջաններից տեղ հասնող տագնապալից լուրերի հետևանքով քրիստոնեական և հայկական միջավայրերում ծնունդ առած սարսափի մասին, որոնք հարկադրում են երկյուղել հայ բնակչության նոր կոտորածներից, համառ կոչով դիմելով Իսպանիայի թագավորական կառավարությանը, որը բազմաթիվ հանգամանքներում չի երկյուղել բարձրացնելու իր ձայնն ի նպաստ այս պատերազմի անմեղ զոհերի, և հավատով լի, որ նա կբարեհաճի իր ձեռքում կենտրոնացնել մի քրիստոնյա ժողովրդի դժբախտ մնացորդների գործը, որի մեծ մասն արդեն անհետացել է, մենք համառորեն խնդրում ենք Չերդ մեծությանը գործի դնել իր մեծ ազդեցությունը փրկելու համար հայ բնակչության կյանքը, որը ներկայումս այս տարածաշրջաններում տեղի ունեցած օսմանյան գործերի տեղաշարժերի հորձանուտում գտնվում է սպառնալիքի տակ:

(A.M.A.E., Guerre 1914-1918, Turquie, tome 889, f. 207).

1 Թաղեթ բեյը:

Լոնդոնում Ֆրանսիայի ռազմական կցորդ, գեներալ դը Լա Պանուզ՝ Խորհրդի նախագահ, Ռ-ազմական նախարար պ. Կլեմանտյին

Ճ. թիվ 915: Գաղտնի:

Լոնդոն, 22-ը փետրվարի 1918 թ.:
(Ստացել է Կաթինետը փետրվարի 24-ին):

Պետրոգրադում բրիտանական ռազմական կցորդը՝ հեռագրել է ամսի 19-ին, որ լեյտենանտ Իթքինը, այն կոմիսարը, որին հանձնարարվել է Կովկասում կամավորական բանակ կազմավորել և միաժամանակ Թիֆլիսում Ազգային խորհրդի անդամը, ժամանել է Պետրոգրադ՝ բուլղարի կառավարությունից փող խնդրելու համար: Նա ասել է, որ տարբեր ազգությունների միջև գոյություն ունեցող նախանձի պատճառով, անհրաժեշտ կլինի կազմավորել այնպիսի կորպուսներ, որոնք բաղկացած լինեն միայն մեկ ազգությունից:

Կամավորական բանակը բաղկացած կլինի 4 կորպուսից, այն է՝ մեկ հայկական, մեկ ռուսական, մեկ վրացական և թաթարների, ասորիների ու հույների մեկ միացյալ:

Պետրոգրադում Իթքինը տեսել է ժողովրդական կոմիսարներին և Կրիլենկոյին: Նրանք հակված են ֆինանսական աջակցություն ցուցաբերել հետևյալ պայմաններով. Կովկասի ժամանակավոր խորհուրդը կճանաչի բուլղարի կառավարությանը, կամավորական բանակը կկազմակերպվի ժողովրդավարական սկզբունքով, այն է՝ խորհուրդներով:

Քանի որ Իթքինը մերժել է այս երկու պայմանները, բուլղարի կառավարությունը նրան փող, այսպիսով, չի տրամադրի:

Իթքինն ասել է մայր Թորնհիլին, որ շատ կարճ ժամկետում ինքն ի վիճակի կլինի հավաքագրել 2500 մարդու և երեք ամսում՝ 6-ից 8 գումարտակ: Նա համառել է Թիֆլիսում որոշ քանակությամբ վստահելի զինվորներ ունենալու անհրաժեշտության շուրջ, որպեսզի նրանք դասալիք դարձող ռուսական ստորաբաժանումների ունեցվածքը և զենքերն իրենց պատասխանատվության ներքո վերցնեն և հսկեն նրանց անվտանգությունը: Նա միայն խնդրում է 50000 ռուբլի՝ 2 գումարտակ հավաքագրելու համար, որոնք կունենան ընդհանուր առմամբ՝ 800 մարդ:

Ըստ նրա խոսքերի՝ այս 800 մարդկանց դուրսին կլինի հավաքագրել Թիֆլիսի արվարձաններում և ինքը հաճույքով այդ գործը հանձն կառնի, եթե անհրաժեշտ փողն իրեն տրվի:

(A.M.G., 7 N 1255).

Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնը՝ Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշային

Ն:

1 Մայր Թորնհիլլը:

Անդրանիկը խնդրել է գնդապետ Շարդինյին ձեռնարկել փետրվարի 19-ի թվակիր հետևյալ հեռագիրը՝.

«Թշնամին սկսում է գրոհել: Մենք ունենք տասներկու հազար զինվոր: Եթե Ֆրանսիան մատակարարի այն, ինչն անհրաժեշտ է, մարտի 15-ին կունենանք քսանչորս հազար: Կովկասի հայերի հետ հույներ չենք տաժում. նրանց թիվը ներկայումս հասնում է ութ հազարի, սակայն ռազմաճակատը չեն պահել: Ամեն ինչ կազմալուծված է, սպասում ենք տիպիկների: Անհրաժեշտ է, որ անգլիացիները բավարար ուժեր ուղարկեն Պարսկաստան, և դաշնակիցները Կիլիկիայում ափ ելնեն ռազմակալելու համար արևելյան գիծը: Փրկությունը դրանում է»:

(A.M.A.E., Guerre 1914-1918, Turquie, tome 895, f. 47).

Արտաքին գործերի նախարարը՝ Թիֆլիսում Ֆրանսիայի հյուպատոս պ. Նիկոլային

Հ՝ թիվ 16:

Փարիզ, 24-ը փետրվարի 1918 թ., ժ. 22.30-ին:

Խնդրվում է փոխանցել Հայկական ազգային մշտական խորհրդին.

«Թուրքերը կամպանիա են մղում մամուլում՝, հավակնելով այն բանին, որ վայրագություններն իրագործել են հայ զինվորները և ուղղված են եղել ազատագրված նահանգների մահմեդական բնակչության դեմ: Այս կամպանիան մղվում է եվրոպական հասարակական կարծիքը՝ Հայաստանը թուրքական տիրապետության տակ պահելու օգտին հակելու համար: Քանի որ այս մեղադրանքների դեմ անհրաժեշտ է պայքարել, խնդրում ենք ձեռք հեռագրով մեզ հայտնել բոլոր անհրաժեշտ մանրամասները, որը մեզ կթույլատրի հերքել այդ զրպարտչական արշավը և խոչընդոտել դրա մտադրությունների իրականացմանը: Հեռագրեր պաշտպանության վիճակին առնչվող տեղեկություններ: Խիստ անհանգիստ ենք:

(Ստորագրված է) Պողոս Նուբար»:

(A.M.A.E., Guerre 1914-1918, Turquie, tome 889, f. 208).

1 Այս հեռագրի բնագրային տարբերակի մասին տես վերը թիվ 526 փաստաթուղթը:
2 Ստորագրել է պ. Գուն:
3 Բռնբեյով:
4 Տես վերը թիվ 525, 529 փաստաթղթերը:

Լոնդոնում Ֆրանսիայի ռազմական կցորդ, գեներալ դը Լա Պանուսը՝ Խորհրդի նախագահ, Ռ-ազմական նախարար պ. Կլեմանսոյին

Հ. թիվ 940: Գաղտնի:

24-ը փետրվարի 1918 թ.:
(Ստացել է ՉՆԳԽ-ը փետրվարի 26-ին):

Այն տեղեկությունները, որոնք Ուոր Օֆիսը ստացել է Կովկասից, այնքան հոռետեսական չեն, որքան նրանք, որոնք մեր ռազմական կցորդի՝ թիվ 19 հեռագրում՝ հիշատակված լուրերը:

Թուրքերը հաջողությամբ գրավել են Տրապիզոնը, Բաբերդը և Երզնկան, բայց որևէ մեկին հայտնի չէ, որ նրանք գրաված լինեն Արդասան, Կելկիթը և Պլատաման:

Ներկայումս հայկական զորքերը զբաղեցնում են Բաբերդից հարավ ընկած գիծը և բացի դրանից, իրենց հսկողության ներքո են պահում Երզնկայի, Վանա և Ուրմիա լճերի միջև ընկած տարածաշրջանի հաղորդակցության բոլոր կարևոր հանգույցները. բացի դրանից, այս գծի թիկունքում գտնվող կարևոր կետերում կան հայկական խմբեր:

(A.M.G., 4 N 62).

Լոնդոնում Ֆրանսիայի ռազմական կցորդ, գեներալ դը Լա Պանուսը՝ Խորհրդի նախագահ, Ռ-ազմական նախարար պ. Կլեմանսոյին

Ա. թիվ 941: Գաղտնի:

Լոնդոն, 24-ը փետրվարի 1918 թ.:
(Ստացել է Կաթինետը փետրվարի 26-ին):

Վաշինգտոնում քրիտանական դեսպան, լորդ Ռ-իդինգը ամսի 21-ի հեռագրում հաշվետվություն է ներկայացրել այն տեղեկությունների մասին, որոնք Վաշինգտոն է ուղարկել ամերիկյան հյուպատոսը Թիֆլիսում¹:

Ահա դրանց ամփոփումը: Ռուսական զորքերը հիրավի լքել են ռազմաճակատը: Թուրքերն առաջ են ընթանում, մահմեդական հրոսակախմբերը վխտում են Կովկասի հարավում և երկաթուղային գծերը տարբեր կետերում հատվել են: Փողի բացակայության պատճառով, Կովկասի ազգային ուժերի կազմավորումն ու կազմակերպումը շատ դանդաղ են առաջ ընթանում: 500000 ռուբլի նախապես հատկացրել են դաշնակիցները. բացի դրանից, Պարսկաստանում ձեռք բերված 2000000 ռուբլին ներկայումս դրվել է քրիտանական առա-

¹ Տե՛ս վերը թիվ 524 փաստաթուղթը:
² Պ. Վիլյուպիի Սմիթը:

քելության տրամադրության ներքո՝ երկաթուղային գծերը փրկելու ուղղությամբ ջանքեր գործադրելու նպատակով:

Երկրում գործերը դոփում են տեղում, և փողի բացակայության պատճառով կառավարությունն անկարող է բավարարել հրատապ կարիքները:

Կառավարական իշխանությունները պնդում են, որ իրենք սեպարատ հաշտության չեն դիմի, բայց արդյոք կարո՞ղ են դիմակայել մահմեդական բնակչության ճնշմանն ի նպաստ հաշտության:

Թվում է, թե հայ ղեկավարները միտում ունեն համաձայնության եզրեր փնտրելու ծայրահեղականների հետ՝ մահմեդականներից պաշտպանվելու նպատակով:

Բնակչության շրջանում տարածվում են ծայրահեղական տեսությունները: Կուրբանում և Թերեքում ընթանում է քաղաքացիական պատերազմ:

Փողի բացակայությունը խանգարում է հարավ-արևելյան միությանը զարգացում ապրելու:

(A.M.G., 7 N 1255).

Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնը՝ Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշային

Ն:

Փարիզ, 25-ը փետրվարի 1918 թ.:

Ռ-ազմական նախարարությունը ձեր անուցով հենց նոր ինձ ուղարկեց 118106,85 ֆրանկի վճարման մի հանձնարարագիր, որը 1917 թ. հունիսի 9-ից մինչ օգոստոսի 2-ն ընկած ժամանակահատվածում Ամերիկայի Հայկական ազգային կոմիտեի՝ հայ կամավորների տեղափոխության համար նախապես հատկացրած գումարների արժեքն է:

Ես պատիվ ունեմ ձեզ փոխանցել սրան կից այդ հանձնարարագիրը, որն ուղեկցվում է ձեր՝ իբրև Հայկական ազգային պատվիրակության նախագահի կարգավիճակը հավաստող պաշտոնական հայտարարությամբ:

Դուք կբարեհաճեք ինձ հայտնել սույն առաքման ստացման մասին:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 893, f. 160).

ՀԱՎԵԼՎԱԾ

Փարիզ, 27-ը դեկտեմբերի 1917 թ.:

Արտաքին գործերի նախարարը հավաստիացնում է, որ Փարիզում, Տրոկադերոյի պո-

դոտա 12 հասցեում բնակվող Նորին գերագանցություն Պողոս Նուբար փաշային Էջմիածնի կաթողիկոսը՝ բոլոր երկրների գրիգորյան հայերի հուգևոր առաջնորդը, լիագործել է դաշնակիցների կառավարություններում և, մասնավորապես, Ֆրանսիայի կառավարությունում՝ իբրև Հայկական ազգային պատվիրակության նախագահի: Դա քաղաքական կազմակերպություն է, որին հանձնարարված է ներկայացնել Թուրքիայի և Կովկասի հայերի ցանկությունները և պաշտպանել նրանց շահերը:

(A.M.A.E., Guerre 1914-1918, Turquie, tome 893, f. 161).

539

Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշան Արտաքին գործերի նախարարությունում Ասիայի փոխտնօրեն պ. Ժան Գուին

Ն:

Փարիզ, 25-ը փետրվարի 1918 թ.:

Իմ բոլոր շնորհակալություններն Անդրանիկի՝ դժբախտաբար ոչ այնքան մխիթարական ճեպագրի՝ համար, որը դուք ինձ եք փոխանցել: Ես շտապում եմ այդ մասին իրազեկ դարձնել բրիտանական իշխանություններին, հասնելու համար այն բանին, որ, հնարավորության սահմաններում, հաշվի առնվեն Անդրանիկի տված ցուցումները:

Ես դժբախտաբար տեղեկացա, որ անգլիական առաքելության ղեկավարը՝ չի կարողացել շարունակել իր ուղևորությունը դեպի Կովկաս և հարկադրված է եղել ետ վերադառնալ Համադան: Բնականաբար, նա շուտով կփորձի մեկ այլ ճանապարհով, բայց ես շատ եմ վախենում, որ դա շատ ուշ լինի: Թուրքերն, ըստ երեկվա ճեպագրերի, արդեն վերագրավել են Բաքերդը և ռուսների հանձնվելուց հետո, այլևս ոչինչ չկա, որը կարողանա նրանց կասեցնել մինչև Էրզրում և, հավանաբար, դրանից այն կողմ:

(A.M.A.E., Guerre 1914-1918, Turquie, tome 895, f. 53).

540

Ռուսինիայում ֆրանսիական ռազմական առաքելության ղեկավար, գեներալ Բերտելոն՝ Խորհրդի նախագահ, Ռազմական նախարար պ. Կլեմանսոյին

Հ. թիվ 1893: Գաղտնի:

ԳՀԸ, Ռուսներ, 27-ը փետրվարի 1918 թ., ժ. 7-ին:

1 Այդ ճեպագրի մասին տե՛ս վերը թիվ 526 և 534 փաստաթղթերը:
2 Գեներալ Դյունոսթերվիլը:

(Ստացել է ՉՆԳԽ-ը մարտի 1-ին):

Տեղեկություններ Թիֆլիսից.

Իրավիճակը Կովկասում խիստ տագնապալից է: Վրացիները, թաթարները և հայերը բացարձակապես ի վիճակի չեն համերաշխ ապրել: Ռուսներն ընկճված են: Հեղափոխական կոմիտեները ցուցաբերում են անտարբերության հասնող երկչոտություն: Բոլշևիկյան տեսությունները տարածում են գտնում, կարգ ու կանոնն աստիճանաբար դրվում է սպառնալիքի տակ, Ելիզավետպոլում և Բաքվում տեղի են ունեցել հուզումներ և կոտորածներ:

Տնտեսական տեսանկյունից՝ բանկերում և առևտրի ասպարեզում փողը բացարձակապես չի բավարարում: Չեն բավարարում նաև մթերային պաշարները:

Հունվարի սկզբին բանակցություններ են տեղի ունեցել վրացիների ու Հարավ-արևելյան դաշնության միջև և ավարտվել բանավոր սկզբունքային համաձայնությամբ, բայց ոչինչ ավելին չի արվել:

Մտադիր էին կազմավորել ռուս-հայկական մեկ բանակ և հայ-թուրքական մեկ դիվիզիա, վրացական մեկ բանակ, թաթարական մեկ բանակ, ռուս կամավորների մեկ բանակ, հունական անկախ մեկ դիվիզիա և լեհական մեկ դիվիզիա: Սակայն այս ամենը կազմավորվում է խիստ դանդաղ: Հունվարի 19-ին, այն օրը, երբ այս տեղեկություններն առաքվել են, այս գործմասերի մեկ տասնեյուրը մասը կազմավորման ընթացքում չի եղել: Այս պայմաններում, ինձ դժվարին է թվում, բավարարել գնդապետ Շարդինյիին՝ նրա մոտ ուղարկելով հրահանգիչ սպաների: Ես, ի դեպ, չեմ կարող խմանալ, թե ինչպե՞ս է հնարավոր նրանց կանչել: Նա խնդրում է հատկապես այնպիսի սպաների, որոնք ծառայել են աֆրիկյան զորքերում:

Խնդրվում է այս տեղեկությունները հաղորդել գեներալ Նիեսեյին:

(A.M.G., 4 N 62).

541

Արտաքին գործերի նախարարը՝ Թեհրանում Ֆրանսիայի նախարար պ. Ռայմոն Լոկոնտին

Հ. թիվ 19:

Փարիզ, 1-ը մարտի 1918 թ., ժ. 22.30-ին:

Ես հիմնվում եմ ձեր թիվ 3 և 8 հեռագրերի վրա՞:

Ես դեռևս մանրակրկիտ ցուցումներ չունեմ այն գործողության շուրջ, որն Ռւրմիայի տարածաշրջանում պետք է իրականացվի այն սպաների միջոցով, որոնք գնդապետ Շարդինյիի առաքելության մասն են կազմում:

Այդուհանդերձ, թվում է, որ այս սպաների գործադրությունները մինչ այժմ պետք է սահմանափակված լինեն ինչպես հայկական մի քանի կամավորական զինված անձնակազմների հա-

1 Ստորագրել է պ. դը Մարտերին:
2 Չեն հայտնաբերվել:

վաքագրման շրջանակում:

Ես հեռագրում եմ պ. Նիկոլային, որ նա կոչի գնդապետ Շարդինյիին՝ այսուհետև ձեզ տեղյակ պահել պարսկական տարածք գործողված իր առաքելության անդամներին ուղարկվող հրահանգներին:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 895, f. 59).

542

Քանակի շտաբի 3-րդ բաժանմունքի ծանուցագիրը

Իրադրությունը ռազմաճակատներում

1-ը մարտի 1918 թ.:

Պաղեստինի ռազմաճակատ. առանց փոփոխության

Միջագետքի ռազմաճակատ. » »

Կովկասի ռազմաճակատ. ազգային բանակների կազմավորումը չի հանգեցնում այն արդյունքներին, որոնք սպասվում էին: Գեներալ Դյունսթերվիլի առաքելությունը, որին էնգելիում կանգնեցրել է ժեներալիս ցեղը (որին հրահրել են ծայրահեղականներն ու գերմանական գործակալները), չի կարողացել հասնել Կովկաս և հարկադրված նահանջել է դեպի Բաղդադ:

Հայկական կորպուս.

Սև ծովի և Արևմտյան Եփրատի միջև. ճշգրիտ տեղեկություններ չկան:

Արևմտյան Եփրատի և Վանա լճի միջև. 9000 թուրքահայ զորավիճ են ռազմաճակատին, բայց քիկունքի կազմալուծման պատճառով, որն ասպատակում են մահմեդական կողպտիչների հրոսակախմբերը, վիճակն անկայուն է:

Վանա լճի և Միջագետքի ռազմաճակատի միջև. անգլիացիները հրաժարվել են ռազմաճակատ կազմավորելուց: Նրանք միայն ջանում են իրենց համար ապահովել Քերմանշահ-Համադան-Ղազվին-Ռեշտ ճանապարհը: Պարսկաստանի դիրքորոշումը կասկածելի է:

Վրացական կորպուս. կատարյալ անհաջողություն:

Ռուսական կորպուս. կատարյալ անհաջողություն:

(A.M.G., 4 N 62).

543

Արտաքին գործերի նախարարը՝ Միջագետքում Ֆրանսիայի հյուպատոսության հավատարմատար պ. Ռուին

Հ. քիվ 18: Գաղտնի:

1 Ստորագրել է պ. դը Մարտին:

Փարիզ, 2-ը մարտի 1918 թ., ժ. 17-ին:

Ես պատասխանում եմ քիվ 35 ձեր հեռագրին¹:

Ես զարմանում եմ, որ Կովկասում ֆրանսիացի գնդապետ Շարդինյիի հետ համագործակցող Անդրանիկը կարող է գտնվել Խանիքիմում: Ճշգրտեք ձեր տեղեկությունը: Եթե անգլիական բանակի քներում հայերն են շարվում, նրանք պետք է ունենան այլ ղեկավար: Փորձեք նաև ճշգրտել դեպի Եփրատ առաջխաղացման նախագիծը:

Ինչ վերաբերում է Արևելյան լեգեոնին, ապա նրա օգտագործումն արդեն նախատեսված է Միլիայի ռազմաճակատում:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 895, f. 60):

544

Հաշտության պայմանագիր, ստորագրված 1918 թ. մարտի 3-ին Բրեստ-Լիտովսկում, մի կողմից՝ Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Բուլղարիայի ու Թուրքիայի և մյուս կողմից՝ Ռուսաստանի միջև²

Հոդ. 1/ Գերմանիան, Ավստրո-Հունգարիան, Բուլղարիան ու Թուրքիան մի կողմից և Ռուսաստանը՝ մյուս կողմից, հայտարարում են, որ իրենց միջև պատերազմական իրադրությանը վերջ է տրվել: Այսուհետև՝ նրանք լի են վճռականությամբ ապրել հաշտ ու հաներաշխ:

Հոդ. 2/ Պայմանավորվող կողմերը հրաժարվում են մյուս կողմի կառավարական և ռազմական մարմինների դեմ ուղղված ցանկացած ագիտացիայից և քարոզչությունից: Քանի որ այս պարտավորությունը վերաբերում է Ռուսաստանին, այն կիրառվում է նաև Քառյակ դաշինքի տերությունների գրաված տարածքների վրա:

Հոդ. 3/ Պայմանավորվող կողմերի ընդունած ու սահմանած գծից դեպի արևմուտք գտնվող և Ռուսաստանին պատկանած տարածքներն այլևս չեն ենթարկվի ռուսական պետության իշխանությանը: Սահմանված գիծը կցված քարտեզի վրա նշվում է իբրև հաշտության պայմանագրի հիմնական բաղկացուցիչ մաս: Այդ գծի ճշգրիտ սահմանումը կկատարվի գերմանա-ռուսական հանձնաժողովի ջանքերով: Խնդրո առարկա տարածքների համար Ռուսաստանի նկատմամբ որևէ պարտավորություն չի բխի այն հանգամանքից, որ դրանք նախկինում պատկանել են ռուսական պետությանը: Ռուսաստանը հրաժարվում է ցանկացած միջամտությունից այդ տարածքների ներքին գործերին: Գերմանիան և Ավստրո-Հունգարիան մտադիր են այս մարզերի ապագա ճակատագիրը վճռել նրանց բնակչության համաձայնությամբ:

Հոդ. 4/ Համընդհանուր հաշտության կնքումից և ռուսական լիակատար զորացրման իրականացումից անմիջապես հետո, Գերմանիան պատրաստ է գործերը դուրս բերել այն տարածքից, որը գտնվում է 3-րդ հոդվածում (պարագրաֆ I) նշված գծից դեպի արևելք, եթե միայն 6-րդ հոդվածն այլ վճիռ չկայացնի: Ռուսաստանը կանի այն ամենն, ինչ կախված

1 Արտատրված չէ:
2 Արտատրված է «Հիլալից». 7-ը մայիսի 1918 թ., քիվ 997:

կլինի իր իշխանությունից, որպեսզի ապահովի զորքերի՝ որքան շուտափույթ, նույնքան և հնարավոր դուրս բերումն Արևելյան Անատոլիայի նահանգներից և դրանց կանոնավոր վերադարձը թուրքիային: Ռուսական զորքերն անհապաղ դուրս կբերվեն նաև Արդահանի, Կարսի և Բարսի մարզերից: Վարչական և միջազգային իրավունքի տեսանկյունից Ռուսաստանը չի միջամտի այդ մարզերի պետական նոր կառուցվածքին: Նա այդ մարզերի բնակչությանն է թողնում նրանց պետական նոր օրենսդրության մշակումը՝ հարևան պետությունների, մասնավորապես, թուրքիայի համաձայնությամբ:

Հայ. 5/ Ռուսաստանն անհապաղ կանցկացնի իր բանակի, ներառյալ ներկա կառավարության վերջերս կազմավորած զինված անձնակազմերի լիակատար զորացրում: Բացի դրանից, Ռուսաստանն իր ռազմանավերը կտեղափոխի ռուսական նավահանգիստներ մինչև համընդհանուր հաշտության կնքումը դրանք այնտեղ թողնելու համար կամ անմիջապես կզինաբարձի իր ռազմանավերը: Այն ռազմանավերի նկատմամբ, որոնք պատկանում են Քառյակ դաշինքի հետ պատերազմական իրավիճակում գտնվող տերություններին և այսինքն գտնվում են ռուսական տիրապետության ոլորտում, կցուցաբերվի այնպիսի վերաբերմունք, ինչպիսին ռուսական ռազմանավերի: Հյուսիսային Սառուցյալ օվկիանոսի շրջափակված գոտին կպահպանվի մինչև համընդհանուր հաշտության կնքումը: Բարձր ծովում և այնտեղ, արտել իշխում է ռուսական տիրապետությունը, ու Սև ծովում, անհապաղ ձեռնամուխ կլինեն ականաղաշտերի ականագերծմանը: Ծովային այս գոտիներում ասևայակնան նավագնացությունն ազատ է և անհապաղ կվերսկսվի: Մաքրամասները ճշգրտելու, մասնավորապես, առևտրական նավերի համար անվտանգ ուղիներ նշելու համար կստեղծվեն խառը համձնաժողովներ: Առևտրական ուղիները պետք է մշտապես ակնարկվեն լարացող սկզբներին:

Հայ. 6/ Ռուսաստանը պարտավորվում է անմիջապես հաշտություն կնքել Ռեկոնստրուկցիայի ժողովրդական հանրապետության հետ և ճանաչել այդ պետության ու Քառյակ դաշինքի միջև կնքված հաշտության պայմանագիրը: Ռուսական զորքերը և ռուսական կարմիր գվարդիաներն անհապաղ դուրս կբերվեն Ռեկոնստրուկցիայի տարածքից: Ռուսաստանը դադարեցնում է ցանկացած ազիտացիա և քարոզչություն ուղղված Ռեկոնստրուկցիայի ժողովրդական հանրապետության կառավարության կամ հասարակական մարմինների դեմ: Ռուսական զորքերը և կարմիր գվարդիաներն անհապաղ դուրս կբերվեն նաև Էստլանդիայից և Լիթվանիայից: Էստլանդիայի արևելյան սահմանը, ընդհանուր առմամբ, ձգվում է Եստլա գետի ելակետից: Լիթվանիայի արևելյան սահմանը, ընդհանուր առմամբ, ձգվում է Զաու և Պուկուկայեյ լճերի վրայով մինչև այս վերջին լճի հարավ-արևմտյան անկյունը, այնտեղ նաև այդ սահմանն անցնում է Լյուբանսկոյե լճի վրայով՝ Բվինայի վրա գտնվող Լիթվանիայի սահմանը: Էստլանդիան և Լիթվանիան կդրվեն գերմանական ոստիկանության հսկողության ներքո այնքան ժամանակ, քանի դեռ այդ երկրների սեփական կազմակերպությունները չապահովեն անվտանգությունը և այդտեղ չհաստատվի պետական կառույց: Ռուսաստանն անմիջապես սզված կարծակի Էստլանդիայի և Լիթվանիայի բոլոր բնակիչներին, որանք ձերբակալվել են կամ արտաքսվել: Նա ապահովում է պետական վերջնական բարդ Էստլանդիայի և Լիթվանիայի անարգել վերադարձը: Ֆինլանդիայից և Ալանդյան կղզիներից ևս, որքան հնարավոր է արագ, ռուսական զորքերը և կարմիր գվարդիաները դուրս կբերվեն: Ֆինլանդյան նավահանգիստներից ևս դուրս կբերվեն ռուսական նավատարներ և ռազմածովային այլ ուժերը: Զանի դեռ աստույգ անձնաքննարկումը ռազմանավերի տեղափոխումը ռուսական նավահանգիստներ, այդ նավերի տարապատկանները վրա կնեն միայն սակավաթիվ ստորաբաժանումներ: Ռուսաստանը զորքա-

րեցնում է ցանկացած ազիտացիա և քարոզչություն Ֆինլանդիայի կառավարության և հասարակական մարմինների դեմ: Ալանդյան կղզիների ամրությունները, որքան հնարավոր է արագ, ենթակա են ավերման: Ինչ վերաբերում է այս կղզիներում ամրություններ կառուցելու երկարատև արգելքին, ինչպես նաև ռազմական ու ծովագնացության առումներով նրանց նկատմամբ ցուցաբերվելիք վերաբերմունքին, ապա Գերմանիայի, Ֆինլանդիայի, Ռուսաստանի և Եվելիայի միջև պետք է հատուկ համաձայնագիր կնքվի: Գերմանիան իրավասու է այս համաձայնագրին մասնակցի դարձնելու կամ չդարձնելու արևելյան սահմաններում գտնվող այլ պետությունների:

Հոդ. 7/ Ելնելով այն իրողությունից, որ Պարսկաստանը և Աֆղանստանն ազատ ու անկախ պետություններ են, պայմանավորվող կողմերը պարտավորվում են հարգել այդ պետությունների քաղաքական, տնտեսական անկախությունը և տարածքային ամբողջականությունը:

Հոդ. 8/ Երկու կողմերի ռազմագերիները կվերադառնան հայրենիք: Դրա հետ առնչվող հարցերի կարգավորումը տեղի կունենա 12-րդ հոդ(վածով) նախատեսված լրացուցիչ պայմանագրերով:

Հոդ. 9/ Պայմանավորվող կողմերը փոխադարձաբար հրաժարվում են պատերազմական հատուցումներից, այն է՝ պետական ծախսերից, պատերազմելու հետ կապված ծախսերից և այն վնասների փոխհատուցումներից, որոնք պայմանավորվող կողմերին և նրանց հպատակներին են պատճառվել պատերազմական գոտիներում ռազմական միջոցառումների, այդ թվում թշնամական տարածքներում կատարված բոլոր բռնագրավումների հետևանքով:

Հոդ. 10/ Պայմանավորվող կողմերի միջև դիվանագիտական և հյուպատոսական հարաբերությունները կհաստատվեն հաշտության պայմանագրի վավերացումից անմիջապես հետո: Ինչ վերաբերում է հյուպատոսների փոխադարձ ընդունելությանը, ապա վերապահվում են հատուկ պայմանագրեր:

Հոդ. 11/ Քառյակ դաշինքի տերությունների և Ռուսաստանի միջև տնտեսական հարաբերությունների համար վճռորոշ են այն որոշումները, որոնք անփոփոխ են 2-րդից 5-րդ հավելվածներում. ընդ որում, 2-րդ հավելվածը վերաբերում է գերմանական և ռուսական հարաբերություններին, 3-րդ հավելվածը՝ ավստրո-հունգարական և ռուսական հարաբերություններին, 5-րդ հավելվածը՝ թուրքական և ռուսական հարաբերություններին:

Հոդ. 12/ Հանրային և մասնավոր բնույթի իրավական հարաբերությունների հաստատումը, ռազմագերիների և քաղաքացիական ներկայվածների փոխանակումը, ներման հարցը, ինչպես նաև հակառակորդի ձեռքն ընկած առևտրական նավերին վերաբերող հարցը, կկարգավորվեն Ռուսաստանի հետ հատուկ պայմանագրերի միջոցով, որոնք կկազմեն հաշտության սույն պայմանագրի էական մասը և ուժի մեջ կմտնեն, հնարավորության սահմաններում, այս պայմանագրի հետ միաժամանակ:

Հոդ. 13/ Այս պայմանագրի մեկնաբանման ժամանակ, վավերական կլինեն. Ավստրո-Հունգարիայի և Ռուսաստանի միջև առկա հարաբերությունների համար՝ գերմաներեն, հունգարերեն և ռուսերեն բնագրերը, Բուլղարիայի և Ռուսաստանի միջև առկա հարաբերությունների համար՝ բուլղարերեն և ռուսերեն բնագրերը, Թուրքիայի և Ռուսաստանի միջև առկա հարաբերությունների համար՝ թուրքերեն և ռուսերեն բնագրերը:

Հոդ. 14/ Հաշտության սույն պայմանագիրը կվավերացվի: Վավերագրերի փոխանակումը պետք է, որքան հնարավոր է արագ, տեղի ունենա Բեռլինում: Ռուսական կառավարությունը պարտավորվում է Քառյակ դաշինքի տերություններից մեկի խնդրանքով իրա-

կանացնել վավերագրերի փոխանակումը երկշաբաթյա ժամկետում: Հաշտության պայմանագիրն ուժի մեջ է վավերացման պահից, եթե իհարկե դրա հոդվածները, դրա հավելվածները կամ լրացուցիչ պայմանագրերը դրա համար որևէ այլ եղանակ չեն նախատեսում [sic]:

545

Լևանտում Ռազմածովային նախարարության տեղեկատվական ծառայության գեկուցագիրը՝ Ռազմածովային նախարարությանը՝

Թուրքերի արարքները Հայաստանում

Ծ. թիվ 16:

Պորտ-Սաիդ, 3-ը մարտի 1918 թ.:
(Ստացվել է մարտի 18-ին):

Համայն մարդկության համար կործանարար այս համընդհանուր պատերազմը, մասնավորապես, ավելի ճակատագրական եղավ հայերի համար: 1915 թ. ընթացքում մեր հայրենակիցների բնակեցրած ամբողջ մարզեր ամայացան և կողոպտվեցին: Հազարավոր այրիներ ու որբեր վտարվեցին և ուղարկվեցին դեպի Միջագետք ու Սիրիայի անապատները:

Կիլիկիայի հայերը ևս արժանացան միևնույն ցավալի ճակատագրին, որին Մեծ Հայքի իրենց հայրենակիցները, այն միակ տարբերությամբ, որ թեպետ նրանք ևս հեռացվել են իրենց օջախներից, կողոպտվել ու թալանվել, սնանկացել (եւ կասեի ամբողջովին), համեմայն դեպս փրկվել են համընդհանուր կոտորածից: Բայց, դժբախտաբար, այն չինչ կոտորածը չի կարողացել ի կատար ածել, ավարտին են հասցրել սովը, մերկությունը և արտասովոր կլիմայի պատճառած համաճարակներն ու հյուծվածությունը:

Կիլիկիայի պատրիարքության բարձրաստիճան անձինք՝ եպիսկոպոսներ, քահանաներ, արժանացան միևնույն ճակատագրին, որին և ժողովուրդը: Նրանց վտարեցին և ուղարկեցին Հալեպ և նրանց պատմական վանքը՝ կիլիկյան հարստության այդչափ վեհությունների ականատեսը, բռնագրավեց թուրքական կառավարությունը, իսկ այնտեղ եղած արվեստի բոլոր գործերը կողոպտվեցին:

Ահա մի քանի արժանահավատ փաստեր այն մասին, թե ի՞նչ է պատահել կիլիկիացիներին իրենց գյուղերում, քաղաքներում և ճանապարհին:

1/ Չենքեր հավաքելու պատրվակով գործադրվող ամոթալի պատիժները և բռնությունները հասնում էին այն աստիճանի, որ բնակչությունը, ծանդարմների անգութ մտրակի ներքո շաբաթներ շարունակ գտնվելուց և չկարողանալով տալ այն, ինչը չուներ, հարկադրված էր լինում հարևան թուրքերից և չերքեզ[ներից] քառապատիկ գներով գնել ցանկացած զենքեր՝ կառավարությանը հանձնելու համար:

2/ Քանի որ ուղևորության նախապատրաստության և տնային այլ անհրաժեշտ կարիքների համար խնդրված միջոցները կտրականապես մերժվել էին, բնակչության գերակշռող մասը հարկադրված եղավ ճանապարհ ընկնել՝ փոխադրամիջոցների վճարման և նույնիսկ

1 Տեղեկությունները փոխանցել է պ(ատվելի) հ(այր) Ժոսսենը՝ ըստ Կիլիկիայի եպիսկոպոսամիստ արքեպիստի ավագ սարկավագ, հ(այր) Հովհաննես Մարկոսյանի վկայության:

ազուստ գնելու համար չունենալով ոչինչ:

3/ Որոշ վայրերում այն կանանց, ովքեր լվացք էին անում, հարկադրեցին ճանապարհ ընկնել գլխաբաց, բոկոտն և առանց հագնելու իրենց շորերը:

4/ Բոլոր նրանց, ովքեր քաջություն ունեցան նախապատրաստվելու համար որոշ ժամանակ խնդրել, դաժանորեն ծեծեցին և հարկադրեցին անմիջապես մեկնել: Ուստի՝ բազմաթիվ ծնողներ ստիպված եղան բաժանվել իրենց երեխաներից, իսկ կանայք՝ ամուսիններից:

5/ Ծերունիներ, մահամերձներ, հղի կանայք, այրիներ և որևէ աջակցություն չունեցող որբեր, ընտանիքներ, որոնց որդին կամ ամուսինը զինծառայության մեջ էր գտնվում, առանց բացառության բոլորը, հարկադրված եղան թողնելու հայրենիքը և իբրև այս բոլոր փաստերի տհաճ հետևանք՝ երաշտահար դաշտերը ծածկվեցին դիակներով: Գանապարհին տեղի ունեցան ծննդաբերություններ, ծնողները բռնի ուժով լքեցին նորածիններին:

6/ Գանապարհորդության ընթացքում, քանի որ փոխադրամիջոցներն անբավարար էին, իսկ կառապաններն ու ջորեպանները գիշերը ճողոպրում էին իրենց սայլերով և ջորիներով, ծերունիները, երիտասարդ կանայք և փոքրահասակ երեխաները հարկադրված էին լինում օրեր շարունակ ոտքով քայլել: Վերջապես հոգնած ծանր բեռներից և ձերբազատվելու համար իրենց ծանրություններից, ծնողներն իրենց երեխաներին լքեցին գետերի ափերի մացառուտներում կամ նրանց վաճառեցին մի քանի պիաստրի հասնող գումարով:

7/ Անասունների, ճանապարհի համար նախատեսված պարենամթերքի և արժեքավոր իրերի գողության առիթով թուրքական կառավարությանը հղված բողոքները մնացին անհետևանք: Հաճախ բողոքողները ևս խստորեն պատժվեցին:

8/ Գանապարհին, նրանց համար սնունդ պատրաստելու պատրվակով, արտաքսվածներին կիզիչ արևի ներքո շրջափակել են, զրկելով նույնիսկ մի կտոր ստվերով պատասխարվելու հնարավորությունից և շաբաթներ շարունակ արգելել որևէ հարաբերություն ունենալ: Նրանց նույնիսկ չի թույլատրվել զնալ հարևան աղբյուրներից խմելու ջուր բերել:

9/ Այս դժբախտ վտարանդիներին ուղեկցող ժանդարմներն ու զինվորները և բարբարոս ժողովուրդն այնքան ամոթալի արարքների են դիմել և այնքան բռնաբարություններ կատարել, տուրք տվել պոռնկության, կարճ ասած՝ այնչափ դաժանություններ են ի կատար ածել, որ նույնիսկ ամենափայլուն երևակայության տեր մարդկանց համար անհնար է նկարագրել դրանց փոքրագույն իսկ մասը:

Այս փաստերը վերաբերում են միայն Կիլիկիային: Տասնապատկեր դրանք բազում անգամներ և դուք որոշ պատկերացում կունենաք Փոքր Ասիայի հայերի տառապանքների մասին: Հայրուրապատկեր այդ, եթե ցանկանում եք փոքրիշատե մոտավոր պատկերացում կազմել այն իրադարձությունների մասին, որոնց թատերաբեմն է դարձել Մեծ Հայքը: Այնտեղ մարդիկ ամբողջությամբ ոչնչացվել են, կոտորվել կամ հազարներով նետվել Եփրատը: Ինչ վերաբերում է կանանց, երիտասարդ աղջիկներին և երիտասարդ տղաներին, ապա անասելի պայմաններում նրանց տարել են դեպի Հալեպ: Վերջիններիս մեծ մասը ճանապարհին մահացել է սովից և ուժասպառությունից, վերապրածներն ուղղություն են վերցրել դեպի Դեր Չոր [sic]¹, Մեսքենե, Ռասս ու Աին [sic]², Ջերաբլուս, Մոսուլ և այլն, որտեղ հեղձուցիչ կլիմայի պայմաններում, համաճարակների գոհը դարձած, դաժան հոգևարքից հետո նրանք կնքել են իրենց մահկանացուն: Ելքէ մահը չի եղել ավելի դժնի, րակ գոյության պահպանումն ավելի դժնդակ:

Կենդանի մնացածները կարողացել են մեզ պատմել, որ անծայրածիր անապատները

1 Իմա՝ Դեր-էզ-Չոր:
2 Իմա՝ Ռաս էլ-Այն:

ծածկված են եղել մարդկային կմախքներով: Մեսքենեում, ամբողջ հարթավայրում, սփռված էին 60000 գերեզման: Քերեքում [sic]¹, Սալտում, Ամմանում, Իրբիտում, Աջլունում և հարակից գյուղերում հազարավոր մարդիկ դարձել են սովի, մերկության, տիֆի զոհը:

Պատահել են դեպքեր, երբ նույն ընտանիքի անդամները մահացել են միևնույն հիվանդությունից:

Բայց մարդկային ցանկացած երևակայություն գերազանցող ամենասարսափելիին՝ 1916 թ. կեսերին տեղի ունեցած Դեր Չոքի [sic] կոտորածն է, որն ընթերցողին հուզելու մտավախությունից՝ ես չեմ ցանկանում նկարագրել:

Պատմությունն, անշուշտ, կարճանագրի այս կոտորածի մանրամասները՝ իբրև մարդկության համար խայտառակ երևույթ և թուրքական բարբարոսության ակնառու ապացույց:

Միրիայի վիլայեթում, հայերին բռնությամբ հարկադրել են ընդունել իսլամը՝ սպառնալով ուղարկել Դեր Չոք [sic] և քանի որ այս անունն արտաքսվածների շրջանում համահունչ է գազրելի սպանդի գաղափարին, դժբախտները՝ կամա-ակամա ստիպված զիջել են:

Ամենամեծ ոճիրներն են գործել՝ ընդարձակ անապատներում կործանելով կրթված և փայլուն երիտասարդությանը, որտեղ նրանք, իբրև հասարակ բանվորներ, ճանապարհների և խրամատների կառուցման ժամանակ ուժասպառ են եղել անասելի ծանր աշխատանքից, առանց սննդի, առանց ապաստանի:

Ահա մի քանի խոսքով այն ամոթալի ճակատագրի նկարագրությունը, որին հայերը ենթակա են եղել դարեր ի վեր:

(A.C.M., SS A 166).

546

Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշան՝ Արտաքին գործերի նախարարությունում Ասիայի փոխտնօրեն պ. Ժան Գուին

Ն:

Փարիզ, 4-ը մարտի 1918 թ.:

Երուսաղեմից մենք ստացել ենք տազնապալից լուրեր: Քանի որ թուրքերը տարել են արքեպիսկոպոս Օրմանյանին և Սսի կաթողիկոսին², որոնք այդտեղ էին գտնվում, մեր վանքն ու հոգևորականությունն այդ պահից ի վեր հայտնվել են կատարյալ կազմալուծման և խառնաշփոթի եզրին և անհրաժեշտ է դարձել կարգ ու կանոն հաստատելու համար այդտեղ ուղարկել մի լիազոր ներկայացուցչի:

Այն պատահարը, որի մասին ձեզ տեղեկացրել են, հավանաբար, տեղի չէր ունենա, եթե մեր հոգևորականությունը ճանաչված առաջնորդ ունենար:

Այդ լիազոր ներկայացուցչին միաժամանակ կհանձնարարվի օգնություններ բաշխել

1 Իմա՝ Կերեկ:
2 Ն-ի որին սրբազնություն Սահակ Քարայանը:

գաղթականներին, որոնք ներկայումս բազմաքանակ են Երուսաղեմում: Բայց անհրաժեշտ է, որ նրա նշանակումը կատարի Ն-ի {որին} ս {րբություն} կաթողիկոսը, և ես ձեզ խիստ երախտապարտ կլինեմ, եթե դուք ցանկանալիք նրան փոխանցել այն հեռագիրը, որը ես ինձ թույլ եմ տալիս կցել այս նամակին:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 889, f. 216).

547

Արտաքին գործերի նախարարը՝ Պաղեստինում և Սիրիայում Ֆրանսիայի Գերագույն կոմիսար պ. Ժորժ-Պիկոյին

Հ: թիվ 90:

Փարիզ, 5-ը մարտի 1918 թ., ժ. 17-ին:

Ազգային պատվիրակության միջոցով ես տեղեկանում եմ, որ Երուսաղեմի հայկական վանքը կատարյալ կազմալուծման և անհիշխանության եզրին է: Կարգ ու կանոն հաստատելու և տեղաբնակ հայերին օգնություններ բաշխելու համար, պատվիրակությունը կցանկանար այնտեղ ուղարկել պ. Թերեյանին: Ես ձեզ զգուշացնում եմ, որ խոսքը կարող է վերաբերել մի համեստ գործողության իրականացման, որից մենք կկարողանանք օգուտ քաղել առհասարակ հայերի համար:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 889, f. 217).

548

Արտաքին գործերի նախարար պ. Մտեֆան Պիչոնը՝ Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշային

Ն:

Փարիզ, 6-ը մարտի 1918 թ.:

Վերջին փետրվարի 19-ի օսմանյան հաղորդագրությունն¹ ազդարարում է, որ թուրքական զորքերը կարող էին հանկարծակիի բերած լինել «հայկական հրոսակախմբերին, որոնք պատասխանատու են Երզնկայի և Մահամաթունի [sic]² միջև ի կատար անված դաժանությունների համար»: Հայերը պետք է որոշ դիմադրություն ցուցաբերած լինեն, այնուհետև՝ «ճողոպրած» արևելյան ուղղությամբ՝ 200 մարդ, 3 թնդանոթ և ռազմամթերքով լի 8 սայլ կորցնելուց հետո:

1 Ստորագրել է պ. դը Մարտերին:
2 Վերն արտատպված է թիվ 525 փաստաթղթում:
3 Իմա՝ Մամախարուն:

Հրապարակելով միտումնավոր այս տեղեկությունները, օսմանյան շտաբն ավելացնում է, որ այն բոլոր գյուղերը, որոնք տեղադրված են Շարդախի [sic]՝ կիրճից Երզնկա ձգվող ճանապարհին, հրդեհվել են, իսկ նրանց բնակիչները կոտորվել:

(A.M.A.E., Guerre 1914-1918, Turquie, tome 889, f. 218).

549

**Լոնդոնում Ֆրանսիայի ռազմական կցորդ, գեներալ դը Լա Պանուա՝
Խորհրդի նախագահ, Ռազմական նախարար պ. Կլեմանտյին**

Ճ. թիվ 1129: Գաղտնի:

Լոնդոն, 7-ը մարտի 1918 թ.:
(Ստացել է Կաբինետը մարտի 9-ին):

Հեռագրային հաղորդակցությունները Միացյալ քաղաքության և Կովկասի միջև շարունակվում են մնալ ընդհատված: Կարծում են, որ գիծը հատվել է Երևանի շրջանում:

Բրիտանական շտաբը շուտով կփորձի Թեհրանից մի բանագնաց ուղարկել, որը կջանա Թիֆլիս հասնել Թավրիզով, այն է՝ առանց անցնելու Ռեշտով և այն տարածաշրջանով, որը ռազմակալել են ժանգալիսները:

Չի թվում, թե այս կողմում հուզումները տարածում են գտնում, բայց գերմանական գործակալները, որոնք Էնզելիում և Ռեշտում են, կարող են ավելի ակտիվ լինել: Այդ նրանք են, որ ոտքի են հանել ժանգալիսներին և որոնց զենքեր են մատակարարում բուլշևիկների օգնությամբ:

Հայաստանում և Պարսկաստանի հյուսիսում անգլիացի գործակալների հրահրմամբ կազմակերպվել են հայկական խմբավորումներ: Այդ խմբավորումները զբաղեցնում է զվխավոր կետերը՝ Թավրիզ, Ուրմիա, Ջուլֆա, Վան, Բայազետ, Ղարաքիլիսա, Էրզրում Սարիղամիշ, Կարս և Երևան քաղաքները: Բայց թուրքական զրոհի դեպքում, ամենևին հնարավոր չի լինի հույս կապել հայկական այս տարրերի դիմադրության հետ:

(A.M.G., 7 N 1255).

550

**Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար
փաշան՝ Պապական աթոռանիստի պետական քարտուղար,
կարդինալ Գասպարրիին**

Հ. թիվ 31834:
[Պատճենը]:

1 Ինա՝ Չարդախի:

Փարիզ, 7-ը մարտի 1918 թ.:

Քաջալերված կարեկցական այն զգացումներից, որոնք Շատ Սուրբ Հայրը՝ հանդես է բերում հայերի նկատմամբ, Հայկական ազգային պատվիրակությունը ևս մեկ անգամ շատ հարգալից կոչով դիմում է նրա հովանավորությանը և նրա օգոստափառ միջամտությանը, որպեսզի ռուսների լքած նահանգների վերագրվումը թուրքերի կողմից չհանգեցնի այն հանցագործությունների ու վայրագությունների վերսկսմանը, որոնք արյունաներկ են արել Հայաստանը և չհասցնի նրան վերջին ճակատագրական հարվածը:

Օսմանյան պաշտոնական հաղորդագրությունները խոստովանում են արդեն իրագործված արյունալի վայրագությունները և անհրաժեշտ է, որ Նորին սրբությունն իր հովանավորող ձեռքը պարզի դեպի անպաշտպան, դժբախտ բնակչությունն ու խանգարի նրա ոչնչացմանը:

(A.M.A.E., Guerre 1914-1918, Turquie, tome 895, f. 68).

551

**Արտաքին գործերի նախարարը՝
Ռազմածովային նախարար պ. Ժորժ Լեյգյուին**

Ճ. թիվ 193:

Փարիզ, 8-ը մարտի 1918 թ.:
(Ստացել է Կաբինետը մարտի 11-ին):

Հայկական ազգային պատվիրակության նախագահ, Նորին գերագանցություն Նուբար փաշան հարցով դիմել է իմ Դեպարտամենտին՝ պ {արոնայ} ք Թեքեյանի (Վահան) և Ա. Հանենյանի համար Տարեմտում ֆրանսիական նավերից մեկը բարձրանալու թույլտվություն ստանալու նպատակով, որն այս նավահանգստից մեկնում է ուղղակիորեն Եգիպտոս:

Պ {արոնայ} ք Թեքեյանին և Հանենյանին, որոնք բնակվում էին Եգիպտոսում, վերջին տարում Եգիպտոսի հայկական ազգային կոմիտեն առաջադրել էր իբրև լիազոր ներկայացուցիչներ, որոնց հանձնարարվել էր մեկնել Ամերիկայի Միացյալ Նահանգներ՝ այն կամպանիայի հաջողությանն այնտեղ նպաստելու նպատակով, որը պետք է ձեռնարկվեր Արևելյան լեզեոնում կամավոր հիմունքներով զինծառայության անցնելու ցանկություն ունեցող հայերի զինվորագրման համար: Պ {արոնայ} ք Թեքեյանը և Հանենյանն այդ առաքելությունն ի կատար են ածել մեծ նվիրվածությամբ և ճարակությամբ, որի արգասավոր արդյունքները ես հաճույքով եմ ընդունում: Ներկայումս նրանք վերադառնում են Եգիպտոս, այնուհետև՝ Երուսաղեմ մեկնելու նպատակով, ուր Էջմիածնի կաթողիկոսը նրանց պետք է հանձնարարի մի նոր առաքելություն:

Հաշվի առնելով այն ծառայությունները, որոնք այս երկու հայերը մատուցել են և այն

1 Ինունա XV-ը:
2 Ստորագրել է պ. Գուն:

ծառայությունները, որոնց նրանք դեռևս կոչված են մատուցելու Հայ դատին. ես երջանիկ կլինեմ, եթե ձեզ համար հնարավոր լինի նրանց թույլատրել Տարեմտում տեղ գրավել արձակուրդ գնացողներին Եգիպտոս տանող նավերից մեկում: Պ {այրոնայ}ք Թեքեյանը և Հանենյանը, որոնք այժմ Փարիզում են, երջանիկ կլինեն նման հնարավորության պարագայում անհրաժեշտ հյախանգներ ստանալու՝ Իտալիայով իրենց ետ դարձի ճանապարհորդությունը կատարելուց առաջ համոզված լինելու համար, որ ի վիճակի կլինեն իրենց ճանապարհորդությունը Եգիպտոս կատարել այն պայմաններով, որոնք նախանշել է Հայկական ազգային պատվիրակության նախագահը:

(A.C.M., SS E a 200).

552

Պաղեստինում և Սիրիայում Ֆրանսիայի Գերագույն կոմիսար պ. Ժորժ-Պիլոն Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին

Հ. թիվ 142:

Կահիրե, 9-ը մարտի 1918 թ., ժ. 19.05-ին:
(Ստացել է Քաղ. վարչ. մարտի 10-ին):

Արևելյան լեգեոնի զինված անձնակազմերը հավելելուն առնչվող շահախնդրության պատճառով, հավանաբար, հնարավոր կլինի հասնել այն բանին, որ Միացյալ Նահանգների կառավարությունը համաձայնվի թույլատրել այն 4000 հայերին, որոնք փոխադրամիջոցների բացակայության հետևանքով, երկարատև սպասումից հետո հարկադրված են եղել զինվորագրվելու նրա դրոշների ներքո, վերամիավորվեն իրենց հայրենակիցների հետ Կիպրոսում: Հիրավի, կասկածից վեր է, որ հանուն ազգային հողի նրանց արդյունավետության գործակիցը կլինի շատ ...¹ այն բանի ...² կոչված էին լինելու Եվրոպայում:

Եգիպտոսի կոմիտեները պատրաստվում են գործել միևնույն ոգով և միաժամանակ ջանալ աշխուժացնելու զինվորագրման կամպանիան Ամերիկայում: Սակայն նրանք եռանդագին համառում են այն բանի շուրջ, որ կամավորներն այսուհետև՝ փոխադրամիջոցների վրա բարձրացվեն և այլևս հապաղումներ չունենան, որոնք վիատեցրել են ամենամեծ պատրաստակամությունն ունեցողներին:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 893, f. 184).

1 Վերձանման բացրողում:
2 Վերձանման բացրողում:

553

Հոռնում Ֆրանսիայի դեսպան պ. Կամիլ Բարրերը՝ Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին

Ճ. թիվ 520: Գաղտնի:

Հոռն, 10-ը մարտի 1918 թ.:

Ես ձեզ եմ հաղորդում գաղտնի և հավաստի սկզբնաղբյուրից ստացված հետևյալ տեղեկությունները.

1/ Գերմանական կառավարությունը պատասխանել է Պալի աթոռանիստին, թե ինքը որևէ առարկություն չունի այն հարցում, որ Վաշինգտոնը պաշտոնական ներկայացուցիչ ուղարկի Լեհաստան:

2/ Պապը գրել է սուլթանին¹, խնդրելով նրանից հանդուրժողականություն դրսևորել Ռուսաստանի հայերի հանդեպ:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 895, f. 73).

554

Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուրար փաշան Պալի աթոռանիստի պետական քարտուղար, կարդինալ Գասպարիին

Պ. թիվ 22434:
Պատճենը]:

Փարիզ, 11-ը մարտի 1918 թ.:

Հայկական ազգային պատվիրակությունն իր ջերմ շնորհակալություններն է հայտնում Ձերդ բարձր սրբազնությանը՝ նրա հեռագրի համար, և խնդրում է բարեհաճել շատ Սուրբ հորը հաղորդելու խորին երախտագիտության շատ հարգալից հավաստիքները՝ նրա օգուտափառ միջամտության համար, որը փրկության վերջին հույսն է:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 895, f. 75).

1 Մեհմեդ V-ը:

**Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնը՝ Պաղեստինում
և Սիրիայում Ֆրանսիայի Գերագույն կոմիսար պ. Ժորժ-Պիկոյին**

Հ. թիվ 97:

Փարիզ, 12-ը մարտի 1918 թ., ժ. 3.20-ին:

Ես պատասխանում եմ թիվ 141 ձեր հեռագրին¹:

Կովկասի իրավիճակին վերաբերող տեղեկությունները սակավաթիվ են և անորոշ: Թվում է, թե ռուսահայերն ու զաղթականները ջանում են գնդապետ Շարդինյի և անգլիացի սպաների օգնությամբ դիմակայել թուրքերի առաջխաղացմանը, որոնք վերագրավել են Երզնկան, Բաբերդը և Տրապիզոնը: Անգլիական ռազմական մի առաքելություն, որը Բաղդադից ուղարկվել է Պարսկաստանով, չի կարողացել շարունակել իր ճանապարհը Ռեշտից և վերադարձել է Համադան: Պարսկաստանի հյուսիսը գտնվում է ժանգալիս ավազակների հսկողության տակ, որոնց զորավիճ են ռուս ծայրահեղականները:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 895, f. 78).

**Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնը՝
Վաշինգտոնում Ֆրանսիայի դեսպան պ. Ժյուսսերանին**

Հ. թիվ 665:

Փարիզ, 14-ը մարտի 1918 թ., ժ. 23.50-ին:

Ֆրանսիային այն գործողություններին մասնակից դարձնելու նպատակով, որոնք մտապագայում կարող են ծավալվել Սիրիայի տարածաշրջաններում, սրտեղ մենք՝ մեր դաշնակիցների կողմից ճանաչված շահախնդրություններ ունենք, և որի ժողովուրդները դարեր ի վեր մեզ դիտում են իբրև իրենց մշտական հովանավորների, կառավարությունը որոշել է զգալիորեն ավելացնել ներկայումս Պաղեստինում գտնվող ֆրանսիական զինված անձնակազմը: Կիպրոսում համախմբված հայ կամավորների կորպուսը կկազմի այդ զինված անձնակազմի մի մասը: Այսպիսով, հարկ է դրուրին դարձնել հայ կամավորների մեկնումը Միացյալ Նահանգներից: Եգիպտոսի հայկական կոմիտեները խնդրում են, որ այն հայերին, որոնք, Կիպրոս մեկնելուն սպասելուց ձանձրացած, զինվորագրվել են դաշնակիցների բանակին, թույլատրվի վերամիավորվել իրենց հայրենակիցների հետ Կիպրոսում՝ Թուրքիայի իրենց համակրոնակիցների ազատագրման համար պայքարելու նպատակով:

Ես ձեզ երախտապարտ կլինեմ՝ ամերիկյան իշխանությունների մոտ այս ոգով գործելու համար: Այն փստախոսությունը, որը հայերը դրսևորում են մեր հանդեպ, պետք է մեզ դրդի

¹ Արտատպված չէ:

նպատելու՝ հանուն իրենց եղբայրների ազատագրման մարտնչելու նրանց մտադրությամբ:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 893, f. 179).

**Լոնդոնում Ֆրանսիայի ռազմական կցորդ, գեներալ դը Լա Պանուսը՝
Խորհրդի նախագահ, Ռ-ազմական նախարար պ. Կլեմանտյին**

Ն. թիվ 1288: Գ-ալտնի:

Լոնդոն, 14-ը մարտի 1918 թ.:

(*Ստացել է* Կաբինետը մարտի 16-ին):

Բրիտանական շտաբը մի անթել հեռագրային հաղորդագրություն է հափշտակել, որով թուրքական շտաբը պահանջում է ռուսական գեներալից՝ Թիֆլիսում գլխավոր հրամանատարից, անհապաղ Թուրքիային վերադարձնել Կարսի և Արդահանի նահանգները, որոնք Ռուսաստանը զրավել էր 1877-1878 թթ. պատերազմի հետևանքով:

Համաձայն այն տեղեկությունների, որոնք հայտնի են Լոնդոնում, չի թվում, թե ներկայումս բուլշևիկները Վազվիսից այն կողմ են առաջ ընթանում:

Մյուս կողմից, Միջագետքի բրիտանական շտաբն ակտիվորեն նախապատրաստում է արագաշարժ ստորաբաժանումների ուղարկումը Խանիքից Քերմանշահ և Համադան, սպասելով, որ ձմեռային թույլատրի ավելի կարևոր ստորաբաժանումներ ուղարկել, որոնք ապահովված են ավտոմոբիլային փոխադրամիջոցներով:

Ավելի բարձր տեղեկություններից բխում է, որ ժանգալիսների գործողությունն այժմ տարածվում է Ռեշտից հյուսիս-արևմուտք՝ մինչև Արդաբիլ:

(A.M.G., 7 N 1255).

**Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար
փաշան՝ Արտաքին գործերի նախարարությունում
Ասիայի փոխտնօրեն պ. Ժան Գուին**

Ն:

Փարիզ, 15-ը մարտի 1918 թ.*:

Ամերիկայից ինձ գրում են, թե շատ հավանական է, որ Արևելյան լեգեոնի համար մենք կարողանանք բավական նշանակալից աջակցություն գտնել հանձնիս ամերիկյան բանա-

* Պ. Գուի նախնական ձեռագիր ծանոթագրությունը. «Ես պատասխանել եմ Նուբար փ[աշային], որ մենք արդեն հրահանգներ ենք հղել Վաշինգտոն»:

կում ընդգրկված հայերի: Իմ հայրենակիցները ճիշտ են վարվում կարծելով, որ Վաշինգտոնի կառավարությունը դրան չի հակադրվի, և ահա թե ինչու, ես պատիվ ունեմ ձեզ հանձնել սրան կից մի նամակ, որը հղում եմ Նորին գերագանցություն Արտաքին գործերի պ. նախարարին: Ես ձեզ շատ երախտապարտ կլինեմ, եթե դուք բարեհաճեք մեր խնդրանքին գորավիզ լինել:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 893, f. 181).

ՀԱՎԵԼՎԱԾ

Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշան՝ Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին

Ն:

Փարիզ, 15-ը մարտի 1918 թ.:

Ես պատիվ ունեմ Ձերո գերագանցությանը հայտնել, որ Միացյալ Նահանգների հայկական գաղութը, որն ինչպես Ձերո գերագանցությանը հայտնի է՝ շատ ազդեցիկ է, ամկախ արդեն Արևելյան լեզեոնին կցված կամավորներից, տրամադրել է բավական մեծ թվով հայ զինվորների, որոնք ներկայումս ընդգրկված են ամերիկյան զնդերում:

Ըստ ինձ հասած տեղեկությունների՝ այս բոլոր երիտասարդները կցանկանային, որ իրենց ուղարկեն Արևելքում գործող դաշնակիցների բանակները, որպեսզի իրենց հայրենիքի ազատագրմանն ավելի անմիջական ձևով նպաստելու հաճույքն ունենան:

Բոլոր տեսանկյուններից դա շատ զնահատելի աջակցություն կլինի, որը կտրամադրվի Արևելյան լեզեոնին, և ես խիստ երախտապարտ կլինեմ Ձերո գերագանցությանը, եթե նա բարեհաճի տեղեկանալ, թե արդյո՞ք Հանրապետության կառավարությունը բարեհաճորեն կընդունի նման միջոցառումը և դրան շարունակություն տալու համար հակված կլինի՞՞ գործ հարուցել Վաշինգտոնի կառավարությանը:

Դրական պատասխանի դեպքում, ես կկախողանամ միևնույն նպատակով գործի դնել իմ հայրենակիցներին Միացյալ Նահանգներում:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 893, ff. 182-182 v).

559

«Ժաննա դ'Արկ-Աններսի» հրամանատար, ֆրեզատի կապիտան Տրաբոն՝ Սիրիայի ռազմածովային դիվիզիայի հրամանատար, դերժովակալ Վարնեյին

Ճ. թիվ 321:

Ռուադ, 15-ը մարտի 1918 թ.:

Ես պատիվ ունեմ ձեզ հաշվետվություն ներկայացնել Ռուադում գտնվող հայկական ստորաբաժանման կացության մասին:

1918 թ. հունվարի 7-ին Ռուադի սիրիական կայազորը փոխարինվել է հայկական դասակով: Այդ պահին, փոխգնդապետ Ռոմիոն ամսի 6-ի իր նամակում ինձ գրում էր, որ ինքը կղզում զինձառայության է ընդունում միայն կարգապահ և ամրակազմ լեզեոնականների:

Հայկական զինված անձնակազմը բաղկացած է միայն երիտասարդ զինվորներից, որոնք հավաքագրվել են մեկ ամիս կամ ընդամենը մի քանի օր առաջ՝ մինչ իրենց ժամանումը Ռուադ (1917 թ. նոյեմբերին և դեկտեմբերին): Հետևաբար, չէր կարող խուսք լինել նրանց ռազմական պատրաստվածության և կարգապահությանը ենթարկվելու մասին, որոնց պատասխանատվությունը դրվում էր մեզ վրա: Սկզբում ես հարկադրված եղա եռանդորեն պայքարել վատթար քմահաճույքների և ծառայությունից կտրականապես հրաժարվելու դեմ. հունվարի 7-ից մինչ փետրվարի 26-ը այս շարժառիթներով պատիժներ են կիրառել 143 բանտային օրվա սահմանում, ինչպես նաև ամեն ջանք գործադրել են Բեյրանժեի օրենքի* կիրառումով նվազ մեղավորներին ետ բերելու համար:

Քանի որ ի հայտ էին եկել երեք առաջնորդ, ես նրանց ուղարկեցի Մոնարգա, փետրվարի 26-ի նամակով փոխգնդապետ Ռոմիոյին տեղեկացնելով, որ ռազմական պատրաստվածության լիակատար բացակայության հետևանքով, Ռուադի ստորաբաժանումը հեռու է կատարյալ լինելուց և նրա համար մատմանշելով, որ Ռուադի ծառայության պահանջները, ինչպես նաև բուն կղզում տիրող տրամադրվածություններն ինձ թույլ չեն տալիս արդյունավետորեն վարժելու զորակոչիկներին:

Մի քանի օրից հայերն իմացան այս տարածաշրջանում տեղի ունեցած նոր կոտորածների մասին, որտեղից ուսմները դուրս էին բերել գորքերը. բացի դրանից, նրանք գիտեն, որ Մոնարգայի լեզեոնականներին շուտով հանձնարարվելու է գործուն դեր:

Այդ տպավորություններից առաջինի ներքո արդեն, նրանք պատճառ դարձան մահմեդական բնակչության հետ տեղի ունեցած թեթև դիպվածների, որն իր հերթին անհանգստություն է պատճառում:

Բացի դրանից, երկյուղելով կղզում պահվելուց, նրանք ամեն օր պահանջում են ծառայողական կարգավիճակի փոփոխություն, բողոքներ են ներկայացնում հանձնարարված աշխատանքի համար և ոգևորություն դրսևորում:

Լեյտենանտ Պապին և ես ինքս, պետք է գրեթե ամեն օր միջամտենք:

Ես ինձ թույլ եմ տալիս, ծովակալ, խնդրել ձեզ՝ ետ կանչել այս մարդկանց իրենց կորպուսները: Կղզին կարող է հարցերը շատ լավ լուծել առանց լրացուցիչ կայազորի, որին առնչվող նախնական խնդրանքն արվել է հոգուտ սիրիացիների: Նրանց փոխարինող հայերը կարող են դառնալ շատ ավելի անհանգստություն պատճառող, քան օգտակար՝ իրենց տրամադրվածության պատճառով, որի հետևանքով ինձ երկյուղ է պատճառում ուսողիների հետ ծանր պատահարների հեռանկարը: Քանի որ վերջիններս մահմեդականներ են, նրանք հիլավի նրանց դիտում են իբրև թուրքերի:

Այս առթիվ ես շատ եմ ցանկանում արժանին հատուցել լեյտենանտ Պապիի ջանքերին և չափի կշռադատված զգացողությանը, ով ինձ նվիրված համագործակից է և բազում անգամներ կարողացել է հապճեպորեն սահմանափակել խմբակային ցույցերը, որոնք կարող էին վերաճել անհնազանդության:

* Խոսքը վերաբերում է ֆրանսիացի քաղաքական գործիչ Ռենե Բերանժեի (1830-1915) մշակած և 1891 թ. մարտի 26-ին ուժի մեջ մտած օրենքին, որը դատավորներին թույլատրում էր հետաձգել բանտարկությունների իրատար ամուրը: - Ծ. թ.:

Ծառայության մեջ միշտ իրեն զգալ է տվել հայերի և մեր ծովայինների նկատմամբ ցուցաբերվող վերաբերմունքի կատարյալ համանմանությունը: Բոլոր կարգախմբերը խառն են, իսկ վարժությունները տեղի են ունենում միաժամանակ:

(A.C.M., SS S a 41).

**Ռազմական նախարարի ժպ-ն¹
Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին**

Ճ. թիվ 2001-9/11: Գաղտնի: Հրատապ:

Փարիզ, 17-ը մարտի 1918 թ.:

Դուք բարեհաճել եք ինձ փոխանցել պ. Ժորժ-Պիկայի ընթացիկ մարտի 9-ի թվակիր թիվ 142 հեռագիրը², որի պատճենը կցվում է սույն ճեպագրին:

Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշայի՝ իմ Դեպարտամենտին տրամադրած տեղեկություններից բխում է, ի դեպ, որ «Արևելյան լեզոնում» կամավոր հիմունքներով զինձառայության անցնելու հակված՝ Ամերիկայի շատ մեծ թվով հայեր, ամերիկյան նավահանգիստներում շատ երկար նավ բարձրանալուն սպասելուց հետո, հուսալքվել են և միջոցների բացակայության պատճառով հարկադրված եղել կամ վերադառնալ իրենց օջախները, կամ զինվորագրվել ամերիկյան բանակին: Դրա արդյունքում գրեթե կատարելապես ընդհատվել է հայերի զինվորագրումը վերջին երեք ամսվա ընթացքում:

Սակայն այն պահին, երբ «Արևելյան լեզոնը» կոչված է մասնակցելու Լևանտի գործողություններին, ասենամեծ շահախնդրությունը կա, որ ավելի ու ավելի բազմաքանակ զինվորագրումները թույլատրեն կազմավորելու պահեստագոր, որը նախատեսված կլինի սատարելու կովող անձնակազմերին, և եթե հնարավոր է, ստեղծելու նոր ստորաբաժանումներ:

Ես, այսպիսով, պատիվ ունեմ ամբողջությամբ համաձայնվել Պաղեստինում գտնվող մեր Գերագույն կոմիսարի տեսակետներին և քայլին՝ խնդրելու համար ձեզ բարեհաճել, եթե դուք կիսում եք իմ տեսակետը, հրատապ դիմելու ամերիկյան կառավարությանն անհրաժեշտ համառ խնդրանքներով, հասնելու այն բանին, որ «հայ» կամավորներն այսուհետև՝ Ամերիկայի նավահանգիստներում տեղափոխվեն Ֆրանսիա ուղևորվող բոլոր տրանսպորտային միջոցների վրա:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 893, ff. 183-183 v).

1 Ստորագրել է գեներալ Ալբին:
2 Տե՛ս վերը թիվ 552 փաստաթուղթը:

Միջազգետրում Ֆրանսիայի հյուպատոսության հավատարմատար պ. Ռուն՝ Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին

Ճ. թիվ 60: Գաղտնի:

Բասսարահ, 17-ը մարտի 1918 թ.*:
(*Ստացել են* Կաթ. մայիսի 14-ին,
Քաղ. վարչ. մայիսի 16-ին):

Մի երիտասարդ հայուհի, որը տրամադրել է կից ներկայացվող տեղեկությունների պատճենը, ցանկանում է, որ իր անունը չհաղորդվի մամուլին: Նա պատկանում է, ինչպես ինձ են ասում, Էրզրումի հարգարժան ընտանիքներից մեկին: Այն պատումը, որի հիմքում ընկել են նրա տխուր հուշերը, ինչպես ինձ է թվացել, այնպիսին է, որ կարող է հետաքրքրել Դեպարտամենտին:

Երկրորդ հավելվածում՝ զետեղված բացատրությունները ստացվել են փոխլեյտենանտ Պուադեբարից՝ մի երկար զրույցից հետո, որի ընթացքում նա նրան անաչառորեն հարցաքննել է հայերի հանդեպ գերմանացի սպաների վարքագծի շուրջ:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, *Arménie*, tome 1, f. 2).

ՀԱՎԵԼՎԱԾ

Մի հայուհու՝ պատում, որն Էրզրումից տեղահանվել է մինչև Մոսուլ, Բաղդադ և Բասսորահ

Գաղտնի:

1915 թ. ապրիլի 18-ին մուլաները՝ մզկիթում խորհրդակցություն գումարեցին և հավաստիացրին թուրք ժողովրդին, որ եթե հայերն Էրզրումից չվտարվեն, ռուսները քաղաք կմտնեն: Երբ այս լուրերը հայերին հայտնի դարձան, նրանք գնացին քաղաքի կառավարիչ Քյամիլ փաշայի մոտ, որը նրանց պատասխանեց. «Ես չեմ կարող որևէ բան անել, եթե դուք փախուստի դիմեք՝ կհանգեք միևնույն արդյունքին»: Այդտեղից հայերը գնացին Գերմանիայի հյուպատոսություն, որտեղ նրանց չլսեցին և մահմեդականներին դրդեցին իրականացնել իրենց մտադրությունը:

Նույն տարվա հուլիսի 17-ին, մեզ՝ այդ պահից սկսած ութ օրվա ընթացքում մեկնելու գրավոր հրաման տրվեց: Իմ ընտանիքի թվում էին իմ հոր՝ Ժոզեֆ Աբրահամյանի եղբայր-

* Նախարարի նախնական ձեռագիր ծանոթագրությունը. «Ձեզեղով անունը, պատճենը հանձնել Նուբար փաշային և հաղորդել Պիշոնին»:

1 Այս ճեպագրի առաջին հավելվածն արտատպելը նպատակահարմար չի թվացել:
2 Օ (րիոր) դ Գ-այանն Աբրահամյանը:
3 Մահմեդական հոգևորականությանը տրված տիտղոս:

ները, նրա եղբայր Անտուանն իր կնոջ հետ և ես, քահանան և իր զարմուհի Կյուիանո [sic] Հակոբը: Այդտեղ էին նաև իմ հորեղբայր Ֆրանսուան¹ իր կնոջ և երկու երեխաների (մի տղա և մի աղջիկ) հետ, իմ հորաքույր Սերպուլինեն [sic]² իր 25 տարեկան տղայի հետ, այդտեղ էր նաև իմ մյուս հորաքրոջ աղջիկն իր չորս երեխայի և Գրիգոր անունով ամուսնու հետ: Բոլորս միասին յոթ կառքով դուրս եկանք երկրից: Հուլիսի 22-ին մենք ժամանեցինք Իլիջա, 15 օր անց ժամանեցինք Էրզնզան [sic]³: մենք զբաղեցնում էինք երկու կառք, մյուս հինգ կառքում գտնվում էին մեր ճանապարհորդական իրերը: Այդ քաղաքում մնացինք 8 օր: Չկարողանալով ճանապարհը շարունակել կառքով, մենք հարկադրված եղանք մինչև Խարբերդ ուղևորությունը շարունակել ձիերով: Մի քանի օր անց մենք ժամանեցինք Խեմար, որտեղ բոլոր տղամարդկանց բռնեցին: Էրզրումից սկսած մեզ ուղեկցում էին 150 ժանդարն և մի թուրք գեներալ: Այս վայրում երիտասարդներին տարան դեպի մի սար, և հանկարծ հրաձգություններ լսեցինք. մենք երբեք չիմացանք, թե ինչ էր պատահել, լալիս էինք սրտաճմլիկ ճիչերով: Տարեց տղամարդիկ մեզ հետ էին: Գրիգորը, իմ հորաքրոջ ամուսինը, կոտորվածների թվում էր:

Հենց որ այս առաջին կոտորածն իրականացվեց, մեզ հրաման արձակվեց ճանապարհը մինչև Ալան³ շարունակելու մասին, և այնտեղ հանդիպեցինք Տրապիզոնից արտաքսվածների, որոնք ճանապարհը շարունակելու համար միացան մեզ: Երեք օր Ալանում մնալուց հետո, մեր քարավանը կրկին ճանապարհ ընկավ մինչև Արաբկիր, որտեղ հարկադրված եղանք կտրել-անցնելու գետը՝ կարողանալու համար շարունակել մեր ճանապարհը: Բայց այս վայրում, ժանդարմները տակնուվրա արին մեր ճամպուրակները, գտնելու համար դրանցում ատաղձագործական գործիքներ, որոնցով մենք զինվել էինք նախքան հայրենի քաղաքը թողնելը: Չինված այս գործիքներով, նրանք բռնեցին իրենց ենթակայության տակ գտնվող բոլոր տղամարդկանց, պարանով մեկի ձեռքը մյուսի ձեռքին կապեցին և այդպես քարշ տվին դեպի մի բարձր սար, որտեղ այս խեղճ մարդկանց նահատակեցին՝ սողցելով մեկի ձեռքերը, ոտքերը և այլև ու նետելով ոսկորներն ու մարմնի մասերը մեր գլխների վրա: Այն ճիչերը, որոնք այս նահատակներն էին արձակում, մեզ բոլորիս հարկադրում էին ճչալ, դա սարսափելի էր: Ոմանք կանչում էին իրենց հորը, մյուսներն՝ ամուսնուն, եղբորը, հարազատներին: Այդ մարդկանց թվում էին քահանա Շողոյանը, քահանա Չոհրապը և քահանա Արշակը:

Այս կոտորածներից հետո ժանդարմները հարկադրեցին մեզ շարունակել մեր ճանապարհը: Ուր օր անց մենք ժամանեցինք Խարբերդ, ուր ստիպված եղանք թողնելու մեր մթերային պաշարները և այն ամենը, ինչ մեզ հետ էինք բերել, որովհետև որոշում էր կայացվել, որ ճանապարհը պետք է ոտքով շարունակենք: Յուրաքանչյուրը տարավ այն, ինչ կարողացավ: Բայց հենց որ մենք հեռացանք, ժանդարմները մեզ թողեցին ճանապարհի կեսին և նրանցից ոմանք վերադարձան Խարբերդ՝ փակի տակ դնելու համար այն մթերային պաշարները, որոնք հարկադրաբար մենք ստիպված թողել էինք: Մի փոքր ավելի հեռվում, ցանկանալով իմանալ, թե արդյո՞ք մենք փող ունենք, թուրք գեներալը մեզ՝ բոլորիս հրամայեց նստել և շրջապատված իր զինվորներով, մեզ կանչեց իր մոտ՝ խուզարկելու համար նույնիսկ մեր ներքնաշապիկները: Տեսնելով այս, մեզնից շատերը կուլ էին տալիս իրենց փողերը, չիմանալով, թե ինչպիսի միջոց ընտրեն՝ մեր փողերին տիրանալու բավականությունից նրան զրկելու համար:

1 Իմա՝ Սրբուհի:
2 Իմա՝ Երզնկա:
3 Եղինի հայերեն անվանումը:

Մեզ խուզարկելուց հետո, հրաման արձակվեց ճանապարհ ընկնելու մասին, բայց քարավանի մի մասին շրջապատեցին և կողոպտեցին անապատի արաբները: Շուրջապատեցին և հարկադրեցին մեզ մեր կանաչք պատմեցին, որ այդ մարդիկ, իրենց զոհերին ամբողջությամբ մերկացնելուց և հարկադրելուց հետո այն ամենն, ինչ նրանք ունենին, նրանց անգթաբար կոտորել են:

Մի քանի օր անց մենք ժամանեցինք Դիարբեքի, որտեղ բացարձակապես չտառապեցինք մինչև Մարդին հասնելը, բայց այդտեղ, ընկճված, հրաժարվեցինք քայլել՝ նախընտրելով ավելի շուտ մահմեդական դառնալ: Սակայն թուրք գեներալը հավատ չընծայեց մեր խոսքին և մեզ հարկադրեց շարունակել ճանապարհը: Չնայած դրան, շատ կանաչք ապաստանեցին մահմեդականների մոտ:

Մարդիկից դուրս ելնելով, ժանդարմներն իրենց թույլ տվին փոքր գումարներով արաբներին վաճառել կանանց ու երեխաներին, իսկ նրանք, ովքեր չէին կարողանում նրանց վճարել, անխնա կողոպտվում էին: Երբ մի ժանդարն իմանում էր, որ մեզնից որևէ մեկը փող ունի, առանց որևէ թույլտվության, իրենց գեներալից ծածուկ, նրան սպանում էր. հենց այդ պատահեց իմ հորեղբոր՝ քահանա Ժոզեֆի հետ, որից ամեն օր ժանդարմները փող էին պահանջում: Քանի դեռ նա փող ուներ, այն նրանց էր տալիս, բայց այդ օրը նա ստիպված էր մերժել, որովհետև այլևս չուներ. այդ ժամանակ, այն պահին, երբ նա ծնկաչոք աղոթում էր, նրա գլուխը կտրեցին: Հասարակության մեջ մի երիտասարդ հայ աղջիկ ժանդարմներին մատնեց այն անձանց, ովքեր փող ունեին. այդ ժամանակ, իմ հորաքրոջը բռնեցին, խուզարկեցին և սպանեցին: Եվ նրա որդին հարկադրված եղավ շարունակել ճանապարհն առանց որևէ միջոցի. նույն օրն իմ փոքրահասակ զարմիկին, իմ հորեղբայր Ֆրանսուայի որդուն, խլեցին մոր ձեռքից, քանի որ մահմեդական մի երեխա ցանկանում էր նրան՝ նրա հետ խաղալու համար, և քանի որ մայրը նրան մերժել էր, նրան խլեցին նրա ձեռքից և տվին այդ մահմեդականին:

Հաջորդ օրն իմ հորեղբայր Անտուանը հոգնած էր: Նա ջերմություն ուներ և այլևս չէր կարողանում քայլել: Ժանդարմները նրան հարցրին, թե ինչու՞ է հանգստանում. «Ես այլևս չեմ կարող, - պատասխանեց նա, - ես հոգնած եմ, ջերմություն ունեմ, ինձ մի փոքր ջուր տվեք»: Ժանդարմը, կարևոր չէ, թե ինչպիսի պատասխանի համար, վերցրեց սուտերը և կտրեց նրա գլուխը: Անիմաստ է ասելն իսկ մեր վշտի մասին, երբ ես տեսա, որ իմ ամբողջ ընտանիքը կոտորվել է, որ Էրզրումից մեկնելու պահին եղած 16 մարդուց մնացել էինք ոչ ավելի քան 9-ը: Իմ հորեղբայր Անտուանի կինը տեսնելով, որ ամուսինը սպանվել է, հրաժարվեց շարունակել ճանապարհը և նրան այնտեղ էլ թողեցին: Մենք ստիպված եղանք լքել իմ հորաքրոջ երեխային, որն այլևս կաթ չուներ և մահանում էր: Այս տեսարանի առջև, իմ հորաքրոջ աղջիկը՝ Գրիգորի կինը, խելագարվեց և խելահեղության մոլուցքի մեջ իր երեխաներից մեկին գետը նետեց, ամենափոքրը մահացավ հյուծվածությունից, իսկ անձանք ինքը, խելահեղ վիճակում, փորեց գետինը՝ նրան թաղելու համար: Այդպիսի դժբախտություններին ի տես, նա երկար չապրեց՝ վախճանվեց ճանապարհին: Մենք հարկադրված էինք նրանց բոլորին լքել ճանապարհին: Նրա որդին չկարողանալով հետևել քարավանին, ընկավ հոգնածությունից և մահացավ. նրա աղջիկը շարունակեց ճանապարհը, բայց Մոսուլում սովամահ եղավ:

Մարդիկը թողնելուց մի քանի օր անց, տղամարդկանց, այս անգամ բոլորին, բաժանեցին կանանցից և տարան. մի փոքր հեռու ու մեր աչքերի առջև կոտորեցին: Այսպիսի տեսարանի առջև մենք ծնկաչոք եղանք, խնդրելով Աստծուց միևնույն ճակատագիրը, բայց ժանդարմները մեզ ստիպեցին վեր կենալ՝ ասելով. «Քայլեք այնքան, որ այլևս չկարողանաք քայլել և ընկեք»: Էրզրումից դուրս եկած բոլոր տղամարդկանցից մնում էին միայն

2-ը, որովհետև նրանք աղջկա շորեր էին հագել: Դրանից հետո, մենք վերսկսեցինք մեր ուղևորությունը մինչև Ջախո և Ջիզրե: Այնտեղ մենք գտանք մի քաղաքապետի, որին պատմեցինք մեզ հետ պատահած բոլոր դժբախտությունների մասին: Նա մեզ հավաստիացրեց, որ այդտեղից Մոսուլ, վախենալու ոչինչ չենք ունենա: Մենք նրան ասացինք, որ ուտելու ոչինչ չունենք: Այդժամ, նա կարգադրեց, որ մեզ օրական 3 հաց բաժանվի:

Էրզրումը բողոքելու պահին եղած 8000 մարդուց, մեր թիվը՝ Ջիզրե ժամանելու պահին ոչ ավելի էր, քան 300-ը:

Դեկտեմբեր ամսին մենք ժամանեցինք Մոսուլ: Կառավարիչ Ալի բեյի եղբոր որդին մեզ դիմավորելու եկավ մի հայազգի բժշկի ուղեկցությամբ: Նրանք մեզ տեղավորեցին Տիգրիսի ափին գտնվող դոմինիկյանների կառուցած մի բնակավայրում: Մենք այնտեղ մնացինք մեկ ամիս: Այնուհետև՝ մեզ հրաման տրվեց դուրս գալու և զնալու մասին այնտեղ, ուր կցանկանայինք, եական չէ՝ մահմեդականների, թե քրիստոնյաների մոտ:

Ինչ վերաբերում է ինձ, Ալի փաշան ստիպեց զնալ փոխստիկանապետի մոտ՝ նրա աղջիկներին ֆրանսերենի դասեր տալու համար: Քանի որ ես հրաժարվում էի, նա 2 ոստիկանի կարգադրեց առաջնորդել ինձ: Ես այնտեղ մնացի մեկ ամիս, բայց երեխաներին 3 օր դաս տալուց հետո հիվանդացա որովայնային տիֆով, սակայն ինձ շատ լավ խնամեց այդ կինը, որը վախենում էր իր ամուսնուց: Իմ ապաքինման ընթացքում, պատշգամբում նստած, ես տեսա Էրզրեցուցանում [sic] Գերմանիայի հյուպատոսին՝ 2 գերմանացի սպաների հետ, նույնիսկ այն սպայի, որը մեզ նկարել էր, երբ մենք գտնվում էինք Էրզրեցուցանում [sic]:

Հենց որ ես ինձ ամուր զգացի, մի օր առավոտյան ճողոպրեցի այդ տնից և փախա մի քրիստոնյայի տուն՝ հյուրընկալություն խնդրելու: Բայց 15 օր անց նրանց տղան մահացավ և կարծելով, որ ես երջանկություն չեմ բերել, ինձ ետ ուղարկեցին: Դրանից հետո, ես տեսության գնացի կաթոլիկ քահանաների, որոնք ինձ վստահեցին մի քրիստոնյա ընտանիքի, որտեղ ես մնացի 6 ամիս:

Հենց որ ես իմացա, որ Ալի փաշան գալիս է կոտորելու այն հայերին, որոնք դեռևս կենդանի էին, մի կաթոլիկ քահանայի հետ զնացի խնդրելու Գերմանիայի հյուպատոսի՝ օժանդակությունը, որը մի սենյակ հատկացրեց, որտեղ մենք 3 օր փակված մնացինք:

Այն բոլոր հայերին, որոնք Ալի փաշան հանդիպել է՝ ուղարկել է Քիրքուք, և ասում են, որ ճանապարհին նրանց Տիգրիսում ջրահեղձ են արել:

Ինձ փնտրելուն վերաբերող հրամաններ են արձակվել. լսելով այդ մասին, ես, իբրև պարզամիտ երեխա, ծառայության անցա մի կնոջ մոտ, որը պետք է մեկնեք Բաղդադ: Այդ գթասիրտ կինը խորամանկության դիմեց, որպեսզի ինձ համար անձնագիր ձեռք բերեր և այս կերպ ես ազատվեցի: Այդ հայ կինը, որն ամուսնացած էր մի անգլիահպատակ մարդու հետ, արտաքսվել էր Մերսին: Ես չցանկացա նրան հետևել, քանի որ շարունակում էի փախենալ թուրքերից: որոնք ինձ փնտրում էին և ինձ փնտրել էին տալիս ու նույնիսկ ասել էին այդ կնոջը. «Դուք մի երիտասարդ հայ աղջիկ ունեք. որտե՞ղ է նա»:

Այդ կնոջ մեկնելուց 15 օր անց, անգլիացիները մտան Բաղդադ և քանի որ ճանապարհները բացվել էին, ես եկա Բասսորահ, որտեղ կարծում էի, թե կգտնեմ Մոսուլում ինձ փրկած կնոջ հորը՝ նրան իր աղջկա մասին տեղեկություններ հաղորդելու համար: Բայց երջանիկ հանգամանքներն ինձ տարան Բասսորահի քույրերի՝ Սուրբ Աստվածածնի ընծայման դոմինիկյան քույրերի վանքը, որտեղ գտնվում են 1917 թ. սեպտեմբերի 15-ից ի վեր:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, *Arménie*, tome 1, ff. 4-6 v).

1 Պ. Հուշանյան. Մոսուլում Գերմանիայի փոխհյուպատոսը:

Գաղտնի գործակալ X-ի զեկուցագիրը՝ Բեռնում Ֆրանսիայի դեսպանությանը՝

18-ը մարտի 1918 թ.:

Պայքարը Հայաստանում

Քրդական հրոսակախմբերին, որոնք Կովկասի ռազմաճակատում հետապնդում են հայկական հրոսակախմբերի դեմ պայքարելու նպատակ, պետք է ղեկավարի Ջեմիլ փաշան, որը ևս քուրդ է:

Չորքերի և նրանց ղեկավարի ազդությունն ունակ է բացահայտելու անխնա ոչնչացման և կողոպուտների նպատակը, որը հետապնդում է Կոստանդնուպոլսի կառավարությունը:

Այս առիթով կարելի է հիշատակել Բեռնում Թուրքիայի նախարարի՝ բերանից թռած սրամիտ կատակը. երբ այս վերջին օրերին նրան են ներկայացրել Փոքր Ասիայի քարտեզը («Ռ-կյու դը Թուրքիի» 8-րդ համարում), տեսնելով «Հայաստան» բառը, նա բողոքել է՝ առարկության կարգով դրան հակադրելով այն վատ տպավորությունը, որն այն կարող է բողոքել Կոստանդնուպոլսում և ավելացրել է, որ, ի դեպ, հարկը չկա այս անունը տալ մի տարածքի, որն այլևս հայեր չի ընդգրկում:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 895, f. 160).

Լոնդոնում Ֆրանսիայի ռազմական կցորդ, գեներալ դը Լա Պանուալ՝ Խորհրդի նախագահ, Ռ-ազմական նախարար պ. Կլեմանսոյին

Հ. թիվ 1478: Գաղտնի:

Լոնդոն, 19-ը մարտի 1918 թ., ժ. 18.15-ին:

(*Մուսգվել է ժ. 23.50-ին*):

Ըստ Թեհրանում ստացված մի հեռագրի՝ մի ռուս, որը զգեստափոխված մեկնել է Թիֆլիսից և կարողացել հասնել Պարսկաստան, տեղեկացրել է, որ վրացիները և բաթարները համաձայնության են հանգել թուրքերի հետ հաշտություն կայացնելու հարցում, որը ստորագրելու համար կառավարությունը Տրապիզոն է ուղարկել լիազոր ներկայացուցիչների: Հայերն այժմ կատարելապես մեկուսացված են և չեն կարող խանգարել թուրքերին Բաթումի, Կարսի և Արդահանի տարածքները հեշտությամբ գրավելու հարցում:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 895, f. 158).

1 Պ. Դյուտասատայի Դեպարտամենտին հղած ճեպագրի հավելվածը (Բեռն, 20-ը մարտի 1918 թ., թիվ 335): Տե՛ս A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 864, f. 263:

2 Ֆուադ Սելիմ բեյը:

**Փարիզի հայկական կոմիտեի քարտուղար պ. Արշակ Չոպանյանը՝
Խորհրդի նախագահ, Ռ-ազմական նախարար պ. Կլեմանտյին**

Ն:

Փարիզ, 19-ը մարտի 1918 թ.:
(Ստացել են Կար. մարտի 28-ին,
Քաղ. վարչ. մարտի 29-ին):

Լոնդոնի ժողովում դաշնակիցների ձևակերպած ազնվաբարո և վճռական բողոքը մի հիասքանչ պատասխան է, որի շնորհիվ կարելի է տեսնել ձեր իբրև մեծ գլուղի և Բրեստ-Լիտովսկի ստորագուցիչ պայմանագրի դեմ սուրբ պայքարի հզոր դեկավարի ոճի դաշմը: Մենք ամբողջ սրտով ցանկանում ենք, որ դաշնակիցների հաղթանակը հաստատուն դարձնի սույն բողոքը՝ վերացնելով այդ պայմանագրի կործանարար հետևանքները: Մենք՝ հայերս, հավատում ենք այդ հաղթանակին ավելի, քան երբևէ և այդ հավատը մեր գերագույն սփոփանքն է այն ճգնաժամի ընթացքում, որի մեջ մեր ժողովրդին նետել է ծայրահեղականների ստորությունը: Այդ պայմանագրի ամենահիշելի հոդվածը Հայաստանի հանձնումն է բուրբ մարդասպաններին, որոնք չեն հապաղել դրանից օգտվելու՝ մահվան և ավերածության իրենց գործը վերսկսելու համար: Որքան մենք երջանիկ կլինեինք, եթե այդ հիասքանչ բողոքում տեսնեինք Հայաստանի հանդեպ կատարված գերագույն ստորության մասին հիշատակող մեկ տող:

Մենք վստահ ենք, որ այդ բացթողուն ամենևին չի նշանակում, թե Հայաստանի ժողովրդի նկատմամբ հանդես է բերվել անտարբերություն, ժողովուրդ, որն այժմ հասել է իր նահատակության գերագույն աստիճանին, որին լքել և դավաճանել են ռուսները, որի վրա են հարձակվում բուրքերը, գերմանացիներն ու քրդերը, որի փկուճքում են գտնվում նրա վրա հարձակվելու պատրաստ քաթարները և որն, այրուհանդերձ, շարունակում է պայքարել մինչև վերջ. մինչև անդունդի եզրը, հավատարիմ մնալով իր ազգային գաղափարին և նվիրվածությանը:

Սա Հայաստանի ամբողջ պատմության ամենածանր ժամն է: Մեր ժողովուրդը, որն այս պատերազմի ընթացքում դաշնակիցների հանդեպ ցուցաբերած բացահայտ ու ջերմեռանդ համակրանքի պատճառով կորցրել է իր զավակների ավելի քան մեկ քառորդին, դեռևս ահռելի չափերով կնվազի, բայց հավաստիացած եղեք, պարոն նախագահ, որ հայ ազգը և հայկական մշակույթը կվերապրեն այս նոր ու ահռելի արհավիրքը: Վերջապես, մենք վստահ ենք, որ Ֆրանսիան և նրա դաշնակիցներն անում են այն, ինչ կարող են, այնտեղ բարբարոսության դեմ ուղղված մեր եղբայրների հուսաբեկ և անհավասար պայքարում նրանց օգնելու համար: Մենք վստահ ենք, որ նույնիսկ այն պարագայում, երբ հաղթանակի ժամին մեր հինավուրց ազգից մնան, ավա՜ղ, միայն բեկորներ, Ֆրանսիան և նրա դաշնակիցները կհամախմբեն այդ բեկորները (որոնց մոտ հայկական ազգային կյանքը կմնան անբեկանելի) և մեր հինավուրց հայրենիքի՝ ծայրահեղ դեպքում՝ մի հատվածում նրանց կտրամադրեն ծածկ, որպեսզի մեր ազգի ոչնչացման հարցում բուրբ-գերմանական հանցակցությունը չհասնի իր նպատակին, որպեսզի պանթուրանական նողկալի ու անհեթեթ ծրագիրը, որը խիստ կործանարար է դաշնակիցների և քաղաքակրթության համար, տա-

պավի, որպեսզի արդարության գործի իրականացումն ամբողջական լինի:
Մենք դրանում համոզված ենք, որովհետև մեզ հայտնի են Ֆրանսիայի և նրա դաշնակիցների արդարամիտ և ասպետական ոգին: Սակայն մենք ձեռն անչափ երախտապարտ կլինենք, պարոն նախագահ, եթե բարեհաճեք մեկ խոսքով հիշատակել, երբ առիթը ներկայանա, Հայաստանի այս էպիկական ուրբերգության մասին, այն Հայաստանի, որն իր խորիմաստ և սրտաշուտ հմայքն ունի և որն իր նշանակությամբ գտնվում է այս համընդհանուր հեղակործանման կենտրոնում:

Ձեր մի խոսքը կհավելի այնտեղ կովողների քաջությունը, կամոքի աշխարհի չորս անկյուններում սփռված՝ մեր հայրենիքի ծայրահեղության հասնող նահատակությանը՝ վերջնական հաղթանակի անասան հավատով, բայց և սարսափելի ցավով (այն չափազանց մեծ տանջանքների պատճառով, որոնք կրում է մեր ժողովուրդը) հետևող մեր բոլոր եղբայրների տառապանքները:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 895, ff. 175-177 v).

Ասիա-Օվկիանիայի փոխտնօրենի՝ ծանուցագիրը

Ծ:

Փարիզ, 23-ը մարտի 1918 թ.:

Գնդապետ Ժորժն ինձ հավաստիացնում է, որ բրիտանական և ֆրանսիական 2 Շ-երը պայմանավորվածության են հանգել մեր նոր զինված անձնակազմի հիմնական տարրերը՝ հեծելազորը և հայկական զուճարտակները Պորտ-Սալուում կենտրոնացնելու շուրջ: Նրանք այդտեղ կսպասեն մյուս տարրերին, որոնք կուղարկվեն, հենց որ երկաթուղային աշխատանքները թույլ տան առանց մատակարարմանը վնաս պատճառելու առաջ ընթանալ դեպի ռազմաճակատ:

Գնդապետ Ժորժը հույս է տաժում, որ այս պահին, երբ Ֆրանսիայի ռազմաճակատում անզլիացիները մեր աջակցության կարիքն են զգում, մենք բարենպաստ իրավիճակում ենք՝ պահանջելու համար, որ նրանք չամտեսեն մեր իրավունքներն ու շահախնդրությունները Սիրիայում:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 885, ff. 168-168 v).

Քանակի շտաբի 3-րդ բաժանմունքի ծանուցագիրը

Կովկասի իրադրության վերլուծություն՝

Գաղտնի:

[23-մարտի 1918 թ.]:

Համընդհանուր իրավիճակը: Թուրքական «Միություն և առաջադիմություն» կոմիտեն, Գերմանիայի հետ համաձայնեցված, երազում է Կովկասում ստեղծել մահմեդական մի պետություն, որը տարածվի մինչև՝ ներառյալ Ղրիմը:

Թուրքերը, հավանաբար, մտադրություն կունենան մահմեդականներին այդ տարածաշրջան մղելու, հռչակելու նրանց անկախությունը և պահանջելու Թուրքիայի հովանավորությունը, որն առիթ կձառայի ռուսական տարրերին երկրից արտաքսելու համար: Այս կերպ Կովկասը կդառնա թուրքական կայսրության անքակտելի մասը:

Մարտի 10-ին, զենեղալ Լեբեդինսկին՝ Անդրկովկասի գլխավոր իրամանատարը, թուրքական գլխավոր իրամանատարից՝ իրաման է ստացել Բաթումի, Կարսի, Արդահանի մարզերից գործերի դուրս բերումն անհասկալ իրականացնելու մասին՝ համաձայն հաշտության այն պայմանագրի, որը Պետրոգրադի կառավարությունը ստորագրել է Բրեստ-Լիտովսկում:

Անդրկովկասյան կառավարությունը պատասխանել է, որ մարտի 2-ին մի հռչակագիր է հրապարակել, որով տեղեկացրել է, թե Անդրկովկասը չի ճանաչում Պետրոգրադի կառավարությանը և որ, հետևաբար, հաշտության պայմանագրի՝ Անդրկովկասին վերաբերող հոդվածն անվավեր է: Բայց անդրկովկասյան կառավարությունը բացի դրանից նշում էր, որ արդեն մի պատվիրակություն է ուղարկվել Տրապիզոն՝ Թուրքիայի հետ հաշտության բանակցությունների ձեռնամուխ լինելու համար:

Թուրքիայի և Անդրկովկասի միջև հաշտությունը, հավանաբար, կստորագրվի: Հավանական է, որ Բաթումի և Կարսի զիջումը Թուրքիային չի հանդիպի լուրջ ընդդիմության:

Անդրկովկասյան սեյմը գումարվելու է ապրիլի 2-ին (Շեյդզի [sic]³ նախագահությամբ):

Ազգությունները: Թաթարներն ու վրացիները համախմբվել են և մինչ Սեյմի գումարումը (ապրիլի 2-ին), Գեգեչկորին հռչակվել է տիրակալ:

Կովկասի մահմեդականները (ամենայն հավանականությամբ՝ քրդերը) դիմադրություն են ցուցաբերել թուրքերի առաջխաղացմանը:

Ռազմական իրավիճակը: Թուրքերը գրավել են Բաթումը (մարտի 14-ին), Թուրքումը (Էրզրումից 100 կ {իլոմետր} դեպի հ {յուսիս} ա {րևելք}), Խովփթոյը [sic]⁴ (Էրզրումից 50 կ {իլոմետր} դեպի արևելք, մարտի 19-ին):

Հայերն ի վիճակի չեն դիմադրել թշնամու առաջխաղացմանը:

Քրդերը, հայերը և թաթարները կովում են միմյանց հետ Երևանի և Բաշ-Նորաշենի միջև՝ հատելով ցանկացած հաղորդակցություն Թիֆլիսի և Թորիսի միջև ձգվող այս ճանապարհով:

1 Ելնում է 1918 թ. մարտի 16-ի և 23-ի թիվ 10 և 11 անգլիական տեղեկատվական տեղեկագրերից:
2 Վեհիբ փաշան:
3 Իմա՝ Չխեիճե:
4 Իմա՝ Քյոփրի-Քոյ:

Հայերի, վրացիների և թաթարների ռազմական կազմակերպվածությանը վերաբերող որևէ տեղեկություն չկա:

(A.M.G., 4 N 62).

Պաղեստինում և Սիրիայում Ֆրանսիայի Գերագույն կոմիսար պ. Ժորժ-Պիկոն՝ Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին

Ճ. թիվ 19:

Երուսաղեմ, 23-ը մարտի 1918 թ.:
(Ստացել են Կար. մայիսի 3-ին,
Զաղ. վարչ. մայիսի 4-ին):

Սաի գրիգորյան արքեպիսկոպոս, Ն {որին սրբազնություն} Ակոբյանից հետո, որի՝ Արևելյան լեգեոնին զինվորագրվելու մասին ես հեռագրով տեղյակ եմ պահել Չերո գերագնությունը, երեսունվեց հայ կամավորներ, որոնց թվում Սրբոց-Հակոբյանց վանքի բազմաթիվ քահանաներ, երեկ թողել են Երուսաղեմը՝ ուղղություն վերցնելով դեպի Կիպրոս:

Նրանց մեկնումն առաջ է բերել շատ մեծ խանդավառություն այդ քաղաքի հայկական փոքր գաղութում, որն ամբողջությամբ ներկա էր դրան նախորդած ժողովին, որը ես էի նախագահում:

Այստեղ, ինչպես և Եգիպտոսում, իբրև ազգություն՝ հայերն այն հավատն են ներշնչում, որ հանուն ապրելու իրավունքի ձեռք բերման և ոչ մի զոհաբերության առջև չեն ընկրկի: Միևնույն համերաշխությունն է ի հայտ գալիս գործի անցնելու, ինչպես նաև միևնույն միաբանությունն է տիրում այդ եռանդուն գործունեությունը Ֆրանսիային մատուցելու և նրա հովանու ներքո անցնելու հարցում:

Ես իմ ծառայությունն եմ առաջադրել շատ մոտ ապագայում Սաիլ և Անդրհորդանանի տարածաշրջան զնալու հարցում, որը բրիտանական գործերը ռազմակալել են վերջին երկուշաբթի օրը, և որտեղ հայ զաղթականների բավական կարևոր մի խումբ է գտնվում: Ես կջանամ այդտեղ ապահովել նրանցից այն անձանց զինվորագրումը, ովքեր ցանկանում են կամավոր հիմունքներով զինծառայության անցնել Արևելյան լեգեոնում և հասնել այդ բնակչության դուրս բերմանը, որին թուրքական ուժերի հնարավոր վերադարձը կտորկվելու վտանգի առջև կկանգնեցնի:

(A.M.A.E., Guerre 1914-1918, Turquie, tome 893, ff. 190-190 v).

**Լոնդոնում Ֆրանսիայի ռազմական կցորդ, գեներալ դը Լա Պանուսը՝
Խորհրդի նախագահ, Ռ-ազմական նախարար պ. Կլեմանսոյին**

Ճ. թիվ 1437: Գաղտնի:

Լոնդոն, 26-ը մարտի 1918 թ.:
(Ստացել է Կաբլինետը մարտի 30-ին):

Ուր Օֆիսը հենց նոր Թիֆլիսից որոշ թվով հեռագրեր ստացավ, որոնք ուղարկել է գնդապետ Փայքը և որոնք թվագրված են մարտի առաջին օրերով, մինչ 14-ը:

Այդ հեռագրերից բխում է, որ օսմանահպատակ հայերի վերաբերմունքը բայրյացական է, և նրանցից ձևավորված գործերը լավ են կռվել թուրքերի դեմ:

Մյուս գրուհի հետևանքով, որն իրականացրել է թուրքական ստորաբաժանումներից մեկը, հայկական զորքերը մեծ անվեհերությամբ հակահարձակման են անցել և վերագրավել 10 գյուղ: Բայց, այդուհանդերձ, լուրջ դիմադրություն ցուցաբերելու համար նրանք ոչ բավարար չափով բազմաքանակ են, ոչ բավարար չափով կազմակերպված:

Վրացական տարրերը բավականաչափ օժանդակել են հայերին և որոշ դեպքերում նույնիսկ համագործակցել նրանց հետ:

Դրա փոխարեն, թաթարները, որոնք մահմեդական կրոնի հետևորդներն են և որոնց գլխավոր կայանը Բաքվում է, միանգամայն թշնամաբար են տրամադրված հայերի հանդեպ և տարբեր կետերում հարձակվել են նրանց վրա:

Գնդապետ Փայքի տրամադրած տեղեկությունները շատ են վաղեմի, որպեսզի թուրքական զորքերի առաջխաղացման տեսանկյունից որևէ արժեք ներկայացնեն: Բայց, ընդհանուր առմամբ, դրանք ցույց են տալիս, որ Կովկասում տիրում է շատ ավելի լավ իրավիճակ, քան կարծում էին:

Խնդրո առարկա հեռագրերը Թիֆլիսից բերել է մի ամերիկացի, որը կարողացել է հասնել Թեհրան:

(A.M.G., 7 N 1255).

**Քաղաքական գործերի տնօրեն պ. դը Մարտերին՝
Թիֆլիսում Ֆրանսիայի հյուպատոս պ. Նիկոլային**

Հ. թիվ 25:

Փարիզ, 30-ը մարտի 1918 թ., ժ. 17-ին:

Ես ձեզ երախտապարտ կլինեմ, եթե Նուրար փաշայի ստորև ուղարկվող հեռագիրը փոխանցեք դրա հասցեատերերին:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 895, f. 179).

Փարիզ, 27-ը մարտի 1918 թ.:

Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պոռոս Նուրար փաշան՝

- 1/ Էջմիածին՝ հայերի կաթողիկոս Գևորգ V-ին,
- 2/ Թիֆլիս՝ Հայկական ազգային մշտական խորհրդին,
- 3/ Թիֆլիս՝ Անդրանիկին,
- 4/ Թիֆլիս՝ դոկտոր Չավրիսին,
- 5/ Թիֆլիս՝ գնդապետ Թորգոմին:

Թուրքերը լայնածավալ քարոզչություն են իրականացնում, հավակնելով այն բանին, որ ապացուցեն, թե իբր հայերն են կոտորել մահմեդական բնակչությանը, որպեսզի հաշտության կնքումից առաջ այս ձևով հասարակական կարծիքը նախապատրաստեն իրենց օգտին¹: Թեպետ մենք համոզված ենք այս մեղադրանքների ստահողության հարցում, դրանք հերքելու համար խնդրում ենք ձեզ մեզ տեղեկություններ հաղորդել: Եթե կան բռնությունների որոշ անհատական դեպքեր՝ ուղղված նախորդ հանցագործությունների հեղինակների դեմ, տեղեկացրեք մեզ, թե ինչպիսի հանգամանքներում են դրանք իրականացվել: Դաշնակից տերությունները հարցաքննություն են անցկացնում, մեզ հերքման հարցում օգնելու համար, բայց Ազգային պատվիրակությունը խնդրում է ձեզ իրեն ուղարկել նաև տեղեկություններ ու վկայություններ, որոնք ի գործու լինեն հակազդելու թուրքական քարոզչությանը և նրանց մեղադրանքներն ի չիք դարձնեն: Վրիժառության կամ բռնության յուրաքանչյուր գործողություն հայերի համար կարող է ստեղծել անբարենպաստ հասարակական կարծիք և ազդել հարցի վերջնական լուծման վրա: Ոչ մի տեղեկություն չունենք և անհանգիստ ենք: Ըստ որոշ ասեկոսների՝ վրացիները միացել են թաթարներին՝ ընդդեմ հայերի: Հեռագրային կապով ճշգրիտ տեղեկություններ հաղորդեք:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 895, f. 180).

**Թիֆլիսում Ֆրանսիայի հյուպատոս պ. Նիկոլան՝
պ{արոնայ}ք Արտաքին գործերի նախարար Ստեֆան Պիշոնին,
Պետրոգրադում Ֆրանսիայի դեսպան Նուլենսին**

Ճ. թիվ 33, 37:

Թիֆլիս, 30-ը մարտի 1918 թ.:
(Ստացել են Կաբ. հուլիսի 15-ին,
Քաղ. վարչ. հուլիսի 16-ին):

Դիտավորյալ Չերո գերագանցությանն են ուղարկում որոշ հողվածների բարգանու-
թյունը «Ռեսպուբլիկայից»²: Ես մեծապես կարծում եմ, որ այդ հողվածների հրապարակու-

1 Այս նույն գործի մասին տե՛ս վերը թիվ 525 և 529 փաստաթղթերը:
2 Արտատպված չեն:

մը պայմանավորված է գերմանական ոսկով, բայց նաև գտնում են, որ նույնիսկ առանց կաշառված լինելու, այս թերթը կարող էր նման բնույթի հուվածներ տպագրել:

Այստեղ գալու իմ առաջին իսկ օրվանից, ես Չերչի գերազանցությանն են հարույդել այն տանջալից զգացողության մասին, որ Կովկասն ինձ հարկադրել է ճաշակել: Այստեղ իրենց զգալ էին տալիս չափից ավելի մեծ համակրանքը գերմանացիների հանդեպ և գերմանական նկրտումները: Վերջիններս բոլոր հնարավոր առիթներով ի հայտ էին գալիս, և իրենք՝ հայերը, մասնավորապես, բժիշկները, բարձրաձայն իրենց հիացումնքն էին հայտնում գերմանական բժշկական գիտության մասին:

Տեղի ունեցած վերջին իրադարձությունները, այն վտանգը, որում այս պահին գտնվում է Կովկասը, միայն ամրապնդել են այդտեղ առկա տրամադրությունները: Տանջալից է հավաստելն իսկ այն փոքր ազդեցությունը, որն այս երկրամասում մենք ունենք, բայց դա փաստ է:

(A.M.A.E., Guerre 1914-1918, Turquie, tome 895, ff. 185-185 v).

571

Քանակի շտաբի 3-րդ բաժանմունքի ծանուցագիրը

Իրավիճակն Ուրմիայում

Գաղտնի:

Փարիզ, 2-ը ապրիլի 1918 թ.:

Ռուսական 66-րդ դիվիզիայի մեկնելուց հետո, հայկական և ասորական ստորաբաժանումներն ուղարկվեցին ամենակարևոր կետերը՝ ապահովելու լքված գույքի հսկողությունը:

Կովկասի ասորական ազգային կոմիտեն ծրագրել է կազմավորել մի գերազանց դիվիզիա (բաղկացած 3 գումարտակ ունեցող 4 զնդից՝ 3 ասորական և 1 հայկական), որի հրամանատարությունը ցանկանում է հանձնել գեներալ Պոլտավցևին՝ 66-րդ դիվիզիայի հրամանատարին: Այժմ կան միայն 4 գումարտակ (3 ասորական և 1 հայկական), որոնք գտնվում են ժամանակավոր շտաբի պետի (Ֆրանսիացի լեյտենանտ Գասֆիլդի) հրամանատարության ներքո:

Այն թշնամիները, որոնցից, որքան ասորիների, նույնքան էլ հայերի համար հարկ է Կովկասում շատ ավելի երկյուղել՝ քրդերն են: Ուրմիայի տարածաշրջանում նրանք կազմավորում են երկու հիմնական խմբավորում: Մեկը գտնվում է Վանա և Ուրմիա լճերի միջև, մյուսը՝ Ուրմիա լճից հարավ:

Անհրաժեշտ կլինի այս երկու ժողովուրդների միջև դաշինք կայացնել, բայց նրանց միջև գոյություն ունի ատելություն, որը ռուս հրամանատարը երբևէ չի փորձել մարել:

Սպասելով անգլիացի սպաների ժամանմանը, ֆրանսիական և ամերիկյան առաքելություններն անում են հնարավոր ամեն ինչ, նախապատրաստելու եթե ոչ հաշտեցումը, ապա ծայրահեղ դեպքում՝ դաշինքը, որը խիստ անհրաժեշտ է:

Հունվարի 15/28-ին գնդապետ Շարդինյի ճախածռնությանը քրդական առաջնորդ Քյամիլ բեյի և Հայկական կոմիտեների նախագահ պ. Ահարոնյանի միջև մի հանդիպում

տեղի ունեցավ՝ 2 կողմերի ընդհանուր շահերի շուրջ համաձայնություն կայացնելու և քուրդ ու հայ ժողովուրդների միջև դաշինք ստորագրելու նպատակով՝:

Համաձայնությունը կայացվել է, քանի որ հայերի և քրդերի ընդհանուր շահը հանգում է բուրքական լծի թոթափմանը: Նրանց տեղը դաշնակիցների կողքին է:

Պ. Ահարոնյանը պահանջել է քրդերից ոչ թե կռվել բուրքերի դեմ, այլ միայն չխոչընդոտել ռազմական տեսակետից հայերի կազմակերպմանը:

Քյամիլ բեյը հայտարարել է, որ քրդերը պետք է անհապաղ համաձայնության հանգեն իրենց հարևան հայերի հետ և նրանց ցուցաբերեն նույնիսկ ռազմական օգնություն՝ գրավելու համար այն, ինչը նախկինում ռուսական ռազմաճակատն էր: Քանի որ համաձայնությունը կատարյալ էր, կողմերի երկու ղեկավարները վճռել են անմիջապես զարկ տալ քաղաքական գործունեությանը:

Քյամիլ բեյը նախատեսում էր իր քարոզչությունը սկսել Երզնկայի հարևանությանը գտնվող քրդական Դերսիմ տարածաշրջանից, քանի որ վերջինս գտնվում էր ամենամեծ սպառնալիքի տակ: Այնուհետև՝ նա նկատի ուներ տեղափոխվել Արարատ լեռան հարավում գտնվող տարածաշրջանը (Բայազետ):

(A.M.G., 4 N 62).

572

Ռուսաստանի դեպարտության հաղորդագրությունը Դեպարտամենտին

Փարիզ, 2-ը ապրիլի 1918 թ.:

Թեհրանում Ռուսաստանի նախարարը՝ հաղորդում է հետևյալ տեղեկությունները, որոնք վերաբերում են վերջին մարտ ամսի առաջին կեսին:

Թուրքիայի և Անդրկովկասի միջև հաշտությունը նախատեսվում էր նախկին սահմանների պահպանման և ժողովուրդների ազատ ինքնորոշման սկզբունքի հիման վրա, առանց օսմանյան գերիշխանության հանդեպ որևէ ոտնձգության: Թուրքերը պահանջել են Բրեստ-Լիտովսկի պայմանների կենսագործումը: Անդրկովկասը պատասխանել է, որ դրանք չի ընդունում: Այդ ժամանակ, ոչինչ չի որոշվել պատվիրակություններին Տրապիզոնում համախմբելու շուրջ: Անդրկովկասյան պատվիրակությունը հիմնականում ընդգրկում է մահմեդականների, այնտեղ չկան ռուսներ, նրա նախագահը Չխենկելին է: Թուրքիայի և մահմեդականների միջև՝ Անդրկովկասի անկախությանն առնչվող համաձայնությունն ակնհայտ է դառնում: Կովկասից ժամանող անձինք հաղորդում են, որ ազատ արձակված գերմանա-բուրքական գերիները լայնածավալ քարոզչություն են իրականացրել: Այդ նույն տարրը գործում է Պարսկաստանի հյուսիսում: Կովկասի հյուսիսը և Բաքուն բոլշևիկների ձեռքում են: Թաթարների և հայերի միջև Երևանում մոլեզմում է քաղաքացիական պատերազմ: Թուրքերը կգրավեն Էրզրումը: Թուրքական զորքերը կգտնվեն Տրապիզոնում: Միայն հայերն են ի հայտ բերում որոշ եռանդ: Նրանք հապճեպ զինվորագրում են ու Էրզ-

1 Այդ հանդիպման մասին տես վերը թիվ 506 փաստաթուղթը:
2 Պ. Էտտերը:

րումի կողմերն ուղարկում օժանդակ ուժեր: Պ. Գեգեչկորին նշանակավել է Անդրկովկասի խորհրդի նախագահ:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 895, ff. 190-191 v).

573

Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշան Արտաքին գործերի նախարարությունում Ասիայի փոխտնօրեն պ. Ժան Գուին

Ն:

Փարիզ, 2-ը ապրիլի 1918 թ.:

Քանի որ որոշ ժամանակով պետք է Փարիզից բացակայեմ՝ տ {իկի} ն Նուբարին, որը հիվանդ է, Տուրուզի արվարձաններում տեղավորելու համար, ես ձեզ երախտապարտ կլինեմ, եթե բարեհաճեք մինչև իմ վերադարձը՝ իբրև ինձ փոխարինող նշանակել Ն {որին} գ {երազանցություն} Հովհաննես խան Մասսեհյանին, որը Հայկական ազգային պատվիրակությունում իմ գործընկերն է և «Վերնե» հյուրանոց, Վերնե փողոց հասցեով նրան ուղարկեք պատվիրակության համար հետաքրքրություն ներկայացնող բոլոր փաստաթղթերը և թղթակցությունը:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 895, f. 192).

574

Լոնդոնում Ֆրանսիայի դեսպան պ. Պոլ Կամբոնը՝ Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին

Ճ. թիվ 233:

Լոնդոն, 2-ը ապրիլի 1918 թ.:
(Ստացել են Կար. ապրիլի 6-ին,
Քաղ. վարչ. ապրիլի 7-ին):

Մարտի 31-ի թիվ 644 նամակով՝ ինձ փոխանցելով Թիֆլիսում մեր հյուպատոսի² վերջին հունվարի 7-ի թվակիր զեկուցագիրը, Ձերդ գերազանցությունը խնդրում է քրիտանական կառավարության միջոցով հանձնարարել Թիֆլիսում գտնվող նրա գործակալին³ ջանքեր գործադրել դաշնակից երկրների իր գործընկերների հետ ունեցած փոխհարաբե-

1 Արտատպված չէ:
2 Պ. Նիկոլան:
3 Պ. Սրեննալ:

րություններում վսահությունը չկորցնելու համար:

Ես այս ոգով կխոսեմ պ. Բալֆորի հետ, թեպետ Թիֆլիսում գտնվող մեր հյուպատոսի զեկուցագիրը որևէ հիշատակություն չի պարունակում Անգլիայի հյուպատոսի մասին: Բայց միևնույն պաշտոնը զբաղեցնող գործակալների միջև համաձայնություն հաստատելու լավագույն միջոցն այս գործակալներին, եթե ոչ համանման, ապա ծայրահեղ դեպքում՝ կառավարությունների միջև համաձայնեցված հրահանգներ ուղարկելն է: Գործողությունը Կովկասում, ըստ վերջին դեկտեմբերի 23-ին Փարիզում ընդունված որոշումների, պետք է ղեկավարելին քրիտանական գործակալները, այնպես, ինչպես գործողությունն Ուկրաինայում պետք է ղեկավարելին ֆրանսիական գործակալները¹: Ինձ համար կարող է օգտակար լինել վերջին դեկտեմբերին կամ այդ ժամանակից ի վեր՝ Կովկասում գտնվող մեր հյուպատոսին և ռազմական գործակալներին տրված հրահանգներին յրազեկ լինելը և գիտենալը, թե այդ հրահանգները դաշնակցային որ կառավարություններին են փոխանցվել:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 895, ff. 193-194).

575

Բեռնում Ֆրանսիայի ռազմական կցորդին՝ գաղտնի գործակալ X-ի հանձնած զեկուցագիրը պ. Աղաթոնի մասին

4-ը ապրիլի 1918 թ.:

Ըստ հայկական սկզբնաղբյուրներից մեկի՝ մեր հանձնարարությամբ Ժնևի երիտթուրքերի հետ հարաբերությունների մեջ գտնվող Շաքիր Մազհարը, որը թվում է, թե լիազոր նախարար Մուխթար բեյի կազմակերպած տեղեկատվական ծառայության ղեկավարն է, հայտարարել է, որ մի միջնորդի միջոցով Աղաթոնը Բեռնում Թուրքիայի դիվանագիտական առաքելությունից նյութական օժանդակություն է խնդրել, որի դիմաց ինքը կաշխատի թուրքերի հետ համատեղ:

Շաքիր Մազհարն ասել է, որ այս պահին Աղաթոնին քաղաքավարի մերժել են, քանզի թուրքական ծառայությունը կասկածում է, որ նա Անգլիայի գործակալն է, և թուրքերին մերժենալու ցանկության դրսևորումը պատճառաբանում է քրիտանական և դաշնակցային շահերին ծառայելու նպատակով: Նա ավելացրել է, որ Աղաթոնի, ինչպես նաև նրանց հանդեպ, ովքեր նրա հետ հարաբերությունների մեջ են գտնվում, կսահմանվի խիստ հսկողություն:

Այս առիթով, տեղին է նշել Աղաթոն-Քենալ Միդհաթ-Հաքքի Հալիդ համագործակցության շուրջ, իմ կողմից արդեն ընդգծված, հայերի տաժած կասկածների և առաջարկված հայ-թուրքական համագործակցության շուրջ՝ թուրքերի ունեցած կասկածների միջև գոյություն ունեցող հարաբերակցության մասին:

Համագործակցություն գոյություն ունի՝ բայց երկու կողմերը դրան տալիս են, ծայրահեղ դեպքում արտաքուստ, միանգամայն բևեռային նշանակություն, այնպես որ, Անգլիան երկու պարագաներում հավասարապես դարձել է դրա մասնակիցը:

(A.M.G., 7 N 1590).

1 Այդ գործի մասին տե՛ս վերը թիվ 463 փաստաթղթի ծանոթագրությունը:

Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշան Արտաքին գործերի նախարարությունում Ասիայի փոխտնօրեն սյ. ժան Գուին

Ն:

Տուլուզ, 6-ը ապրիլի 1918 թ

Տուլուզում է, որ ես ստանում եմ ապրիլի 6-ի ձեր նամակը, որն ինձ համեմատաբար բարձր և մի փոքր ավելի մխիթարական տեղեկություններ է հաղորդում Կովկասի մասին, նվազագույնն այն հարցում, որը վերաբերում է հայկական գործերին և վրացիների օգնությանը: Փոխարենը, բաթարների դիրքադաշտում միայն առավելապես հաստատում է այն երկյուղները, որոնք մենք միշտ տածել ենք նրանց նկատմամբ:

Տուլուզի «Տելեգրամ» թերթում ես գտնում եմ Լոնդոնից ստացված մի ճեպագիր, որը հայտնում է հայերի կողմից Էրզրումի վերագրավման մասին: Թող Աստված կամենա, որ դա ստույգ լինի, թեպետ ես դժվարությամբ եմ հավատում, որ նման գործողության համար մերոնք կարողանային համախմբել անհրաժեշտ ուժեր:

Ես հույս եմ տածում Փարիզ վերադառնալ՝ հենց որ կարողանամ դեռևս շատ էլիվանդ տխրիկներ Նուբարին տեղավորելու համար մի անառանց գտնել այստեղ:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 895, f. 204).

Արտաքին գործերի նախարար սյ. Ստեֆան Պիշոնը Թիֆլիսում Ֆրանսիայի հյուպատոս սյ. Նիկոլային

Հ. թիվ 29:

Փարիզ, 7-ը ապրիլի 1918 թ., ժ. 23-ին:

Ըստ գնդապետ Շարդինյիի՝ Բաթումից գեներալ Բերտելոյին հղած մարտի 23-ի թվա-կիր հեռագրի¹, ինձ թվում է, թե հայկական կազմակերպությունները ցանկանում են հավաստիացումներ ստանալ առ այն, որ ցարի բանակների ազատագրած և բուշլիկներ² թուրքե-րին հանձնած նահանգները, վերջնական հաշտության կոնֆերանսներում նոր բանավեճե-րի տեղիք կտան: Ես ձեզ խնդրում եմ տեղեկացնել ոչ միայն հայկական կոմիտեներին, այլև տեղական ազգությունների բոլոր մարմիններին, որ դաշնակիցները չեն ընդունում Բրեստ-Լիտովսկի հաշտությունը, որ Ֆրանսիան վերջնական կարգավորման ժամանակ չի մոռանա ճնշված ազգություններին և կոնֆերանսում կբարձրացնի, մասնավորապես, հայկական նահանգների հարցը: Դաշնակիցները չեն ցանկանում կասկածել, որ Կովկասի

¹ Չի հայտնաբերվել:

աջարի ժողովուրդները՝ ընդհանուր վտանգին ի տես և իրենց ապագան ապահովելու հա-ար, վերջ կտան իրենց թշնամություններին և կգործադրեն միասնական եռանդ, մինչ մո-տալուտ պահի, երբ Պարսկաստանի ճանապարհը բացվելուց հետո, հնարավոր կլինի ար-դյունավետորեն նրանց օգնության հասնել:

Ձեր վերջին հեռագիրը, որն ստացվել է, հունվարի 11-ի թիվ 19 հեռագիրն է՝:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 895, ff. 207-207 v).

Բանակի շտաբի 3-րդ բաժանմունքի ծանուցագիրը Կովկասի մասին

[7-ը ապրիլի 1918 թ.]:

Անդրկովկասը Ռուսաստանից անկախ հռչակելուց հետո, անդրկովկասյան ազգային ժողովը մարտի վերջին Թուրքիայի հետ մի հաշտություն է ստորագրել Տրապիզոնում՝ հետևյալ պայմաններով. 1914 թ. սահմանները կվերականգնվեն, կկազմավորվի ինքնա-վար Հայաստան:

Բայց Հայկական պաշտպանության կոմիտեն, որը հրաժարվել է մասնակցել այդ բա-նակցություններին, դրա փոխարեն հավաստել է պայքարը եռանդակն շարունակելու իր ցանկությունը և խնդրել բրիտանական կառավարությունից անհապաղ ու ամենաարյու-նավետ ձևով իրեն գորավիզ լինել:

Մյուս կողմից՝ Տրոցկին կարող է հայտարարած լինել, որ ինքը հակված է աջակցել հա-յերի՝ գործեր հավաքագրելու նպատակով գործադրած ջանքերին:

Այսպիսով, Կովկասում գոյություն ունի հակասություն հայերի և բաթարների միջև, որոնք լիազոր ներկայացուցիչներ են ուղարկել Տրապիզոն: Այս թշնամական տարրերը հա-ղորդակցվել են Ելիզավետպոլի տարածաշրջանում (որտեղ բաթարների շրջանում հիշա-տակվում են գերմանացի, ավստրիացի և թուրք սպաներ) և Երևանի հարավային ու արևմտյան տարածաշրջանում:

Հայերի բարոյական ոգին բավականաչափ բարձրացել է ազգային հերոս Անդրանիկի ներկայության պատճառով: Թուրքահայերը ռազմաճակատում խիստ կարգապահություն ան սահմանել, որը չի շրջանցում նույնիսկ մահապատիժը:

Բաթումը պաշտպանել են վրացական բնակչությունը, հայերը և լեռնական ցեղերը՝ Շեղզի [sic]² ղեկավարությամբ: Բերդամյոցը հարձակման են ենթարկել արևելքից՝ քրդերը և հարավից՝ թուրքերը:

Ռազմաճակատից հասած բոլոր տեղեկությունները հաստատում են, որ թուրքական ուժերը շատ թույլ են: Կանոնավոր զորքերի թիվը չի գերազանցում 3000-ը, զորքերի մեծա-մասնությունը կազմված է տեղական թուրք բնակչությունից և քրդերից:

Բաքվում իրավիճակը հանդարտ է: Հայերն այստեղ պահպանել են իրենց հեղինակու-թյունը և օղակնացության դպրոցն այստեղ գործում է բուշլիկներին կակողության ներքո:

¹ Չի հայտնաբերվել:

² Իմա՝ Չիսեիձե:

Փոխարենը, Բաքու-Թիֆլիս գիծը գրեթե ամբողջությամբ բաթարների հսկողության տակ է, որոնք այդտեղ արգելում են անգլիացիների, ֆրանսիացիների և ամերիկացիների տեղաշարժը:

Թիֆլիսը վրացիների ձեռքում է: Չի բացառվում և այն, որ վերջիններս հարկադրված լինեն միանալ բաթարներին:

(A.M.G., 4 N 62).

Հաագայում Ֆրանսիայի նախարար պ. Ալիզեն՝ Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին

Ճ. քիվ 288:

Հաագա, 7-ը ապրիլի 1918 թ.:
(Ստացել են Կար. մայիսի 1-ին,
Քաղ. վարչ. մայիսի 2-ին):

Ես պատիվ ունեմ այս ծրարում ձեզ հղել այն հուշագրի պատճենը, որը Հաագայի Հայկական կոմիտեն հանձնել է Տեղահանվածների հայերի օգնության միջերկրամասյան կոմիտեի նախագահ պ. Վան Գիմին [sic]¹ և պ. Թրոելսբրային այն հույսով, որ հուլանդական սոցիալ-դեմոկրատական կուսակցության ղեկավարը, որը Ստոկհոլմի կոնֆերանսի նախաձեռնողն է, անդրհռեցության իր ընկերների առջև եռանդորեն հանդես կգա իբրև միջնորդ: Մինչ այսօր պ. Թրոելսբրայի գործունեությունը սահմանափակվել է միայն այս հուշագրի գետեղումով սոցիալիստական «Հեթ ֆոլկ» թերթում:

Ինչ վերաբերում է պ. Վան Գիմին [sic], ապա Հայկական բյուրոյի ցուցմունքից հետևում է, որ նա նպատակահարմար է գտել այս հուշագրի մերկացուցիչ փաստերի հիման վրա գործ հարուցել Արտաքին գործերի նախարարին՝ Բեռլինում: Նա այս հաղորդագրությունը նրան է ուղարկել անձնական նամակով և հետաքրքիր կլինի տեղեկանալ պայմանագրի² շուրջ բանակցություններ վարող պ. դը Բյուլմանի պատասխանին, պայմանագիր, որը կրկին թուրքական լծի ներքո է դրել Կարսի և Բաթումի հայ բնակչությանը:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, Arménie, tome 1, ff. 27-27 v).

ՀԱՎԵԼՎԱԾ

Հայկական բյուրոյի հղած հուշագիրը՝ Հոլանդական սոցիալիստական կուսակցության առաջնորդ պ. Թրոելսբրային

Պատճենը:

1 Իմա՝ Անտոն Վան Գիմն:
2 Խոսքը վերաբերում է Բրեստ-Լիտովսկի պայմանագրին:

Միջազետք և Արաբիա տեղահանված հայերի կացությունը

Միջազետք և Արաբիայի անապատներ տեղահանված հայերի բեկորների դրությանը վերաբերող ամենավերջին զեկուցագրերը բավական սակավաթիվ են:

Մի քանի ամիս առաջ, գերմանական բանակի մի մայր, որի անունը մենք պետք է գաղտնի պահենք, Միջազետքից գրում էր Բեռլինում գտնվող իր բարեկամներից մեկին, որ տեղահանվածների վիճակը, որոնք մեծ մասամբ կանայք և երեխաներ են, անհուսալի է: Նրանց բոլորին պարտադրել էին ընդունել իսլամը, և այն, ինչն ավելի էական է՝ թուրքական կառավարությունը վերջերս որոշում էր կայացրել դեպի նշանակման այլ վայրեր նրանց տեղափոխելու մասին, պարտադրելով այս դժբախտ սովյալներին անժայրածիր երթեր, որոնց հետևանքով ամենատկարները մահանում էին: Այս թղթակիցը զգացվել էր այն բանից, որ Գերմանիայում թերթերը լռություն էին պահպանում կամ փաստերը ներկայացնում բոլորովին այլ ձևով, և որ իր կառավարությունը չէր խանգարում այդ գործողություններին:

Ուրֆայում շվեյցարա-գերմանական մի որբանոց կա, միակ կարևորը, որտեղ համախմբվել են 4-ից 10 տարեկան շուրջ 2700 որբ: Ամենքին հարկադրել են ընդունել իսլամը: Բոլորովին վերջերս 1000 որբի՝ ամենամեծահասակներին, իշխանությունները վերցրել են, նրանց՝ այսպես ասած աշխատանք տալու համար. նրանք բոլորը նետվել են Եփրատ գետը:

Եգիպտոսի «Արև» թերթը, 1918 թ. հունվարի համարում տպագրում է, որ արաբական զորքերն իրենց առաջխաղացման ընթացքում փրկել են կործանումից խույս տված 23 հայի: Նրանք ծագումով Էվերեկից են, Կեսարիայից և Փոքր Ասիայի այլ վայրերից: Նրանք՝ շուրջ 3036 կանայք, երեխաներ և ծերունիներ, քշվել են դեպի հարավային անապատները, այս դժբախտների շրջանում մոլեգնել է համաճարակը և նրանցից միայն 300-ն են հասել Արաբիայի անապատներ՝ բեդուինների մոտ: Այդ 300-ից փրկվել են 23-ը:

Շատ երկար կտևի այն բոլոր նամակների հիշատակումը, որոնք մեր հայրենակիցներն են ստանում իրենց հարազատներից և տեղահանվածների ծանոթներից: Դրանք հոգեմաշ նամակներ են, որտեղ խոսվում է կենդանի կմախքների մասին: Կանայք և երեխաներ, նախկինում հարուստ և ունևոր, կորցնելով ամեն ինչ՝ իրենց ամուսնուն, հորը, երեխաներին, իրենց օջախը, ունեցվածքը, հողերը, այժմ ողորմություն են խնդրում անապատներում, հասնելով այնպիսի վիճակի, որ հացահատիկներ են փնտրում թափոնների մեջ կամ ուտում կենդանիների լեշերը. համաճարակն ամեն օր կլանում է նրանցից մեծ թվով մարդկանց. թուրքերի մոտ իբրև ստրուկներ ապրող երիտասարդ կանանց վաճառում են մեկը մյուսին. հայտնաբերվում էին երեխաներ, որոնք մոռացել էին անգամ իրենց ծնողների և իրենց հարազատ քաղաքների անունները: Այսպիսին է այն կյանքը, որով մեր խեղճ հայրենակիցներն են ապրում երեք տարուց ի վեր՝ քսաներորդ դարում: Նրանք, ովքեր Եվրոպայում հարազատներ ունեն և կարող են գաղտնաբար օգնություններ ստանալ (որովհետև ծանր պատիժների կիրառման սպառնալիքի ներքո արգելված է օգնել տեղահանվածներին), դեռևս կարող են ապրել, բայց մեծ մասը և ոչ մեկը չունի. նրանք պետք է սպասեն մահվան: Եթե որևէ կառավարիչ նրանց հանդես հանդես է բերում փոքր-խկ գթասրտություն, նրան շտապ ետ են կանչում և փոխարինում այնպիսի մեկ ուրիշով, որն անգթորեն արունակում է բնաջնջման նախագծի իրականացումը:

Հայերի կացությունը Կովկասում

Երբ ռուսները գործերը դուրս բերեցին Հայաստանից, Կովկասի հայերը տեսնելով այդ տարածքների վերագրավման սպառնալիքի հետևանքարը, լեզեռններ կազմավորեցին՝ պաշտպանելու համար իրենց հողը և այդ տարածքներում ապրող իրենց եղբայրներին, որոնք սկսել էին կրկին կառուցել, ցանել, մշակել և ոտքի կանգնել: Քանի որ թուրքերը նրանց դիտում են իբրև հրոսակախմբերի՝ վերագրելով բազմաթիվ կարծեցյալ չարագործություններ, ցանկալի կլինի, որ չեզոք երկրների մի հանձնաժողով զար պատահարի վայրում հարցուփորձ անելու համար:

Իրենց հողը պաշտպանող այս զինվորներին իբրև հրոսակախմբեր դիտելու և նրանց ցանկացած բնույթի հանցանքներ վերագրելու փաստից մենք երկյուղեցինք, որ Հայաստանի վերագրավման ընթացքում մեր բոլոր դժբախտ հայրենակիցները կհատուցեն իրենց կյանքի զոհով, և մեր զինվորները ռազմագերիներ չեն դառնա, այլ կկոտորվեն (թուրքերը դեռևս չեն ազդարարել գերիների գոյության մասին Կովկասում):

Հաղորդակցությունների բացակայության հետևանքով, Կովկասից տեղեկությունները ստացվում են շնտ ուշացումով. տեղ հասնող առաջին տեղեկությունները մեծապես արդարացնում են մեր երկյուղները: Հայաստանի վերասպատակմանը զուգընթաց՝ վերսկսվել են կոտորածները և վայրագությունները: Սև ծովի ափին գտնվող Մամսուն նավահանգստում դեռևս գտնվում էին 400 հայ՝ տեղահանությունից խույս տված այրիներ ու որբեր՝ նախքան պատերազմը եղած 8000 բնակչության փոխարեն: Նրանք բոլորը կոտորվել են:

Հենց որ թուրքերը Տրապիզոն վերադարձան, ամբողջ հայ բնակչությունը, որը ժամանակին չէր կարողացել ճողոպրել, ենթարկվեց անասելի խոշտանգումների: Ծով նետվեցին երեխաներով լի պայուսակներ, ծեր կանայք և խաչված կամ խեղված տղամարդիկ, բոլոր երիտասարդ աղջիկներն ու կանայք (մինչև 10-ից 12 տարեկան աղջիկները ներառյալ) հանձնվեցին թուրքերին:

Շուտով մենք տեղեկություններ կունենանք ռազմակալված այլ շրջաններից. մեր խեղճ հայրենակիցներից նրանք, ովքեր չեն կարողանա ժամանակին փախչել, ամենուր արժանանալու են միևնույն ճակատագրին, որովհետև այս եղանակի պայմաններում, մեծաքանակ ձյան ու փոխադրամիջոցների բացակայության պատճառով, փախչելը դյուրին չէ:

Ներկայումս Կովկասի հայերի կացությունը նույնիսկ ցավալի է: Նրանք գտնվում են Թուրքիայի իրենց եղբայրների միևնույն ճակատագրին արժանանալու սպառնալիքի տակ, որովհետև առկա է մեր ժողովրդին ոչնչացնելու ցանկությունը: Թուրքերը չեն բավարարվի Թուրքահայաստանի վերագրավումով. նրանք կգան Կարս, Արդահան, Բաթում, որոնք՝ Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը նրանց է զիջում: Կարսի նահանգում բնակվում է 115000 հայ, Բաթումի նահանգում կարելի է հաշվել 57000 հայի՝ առանց հաշվի առնելու Թուրքիայի հայ գաղթականներին, որոնց թիվը Կովկասում հասնում է 300000-ի:

Կարելի է ենթադրել, որ հենց թուրքերը գրավեն Կարսը, այդտեղ կանգ չեն առնի. նրանք կասպատակեն նաև հարևան տարածաշրջանները՝ Ալեքսանդրապոլը, Երևանը, Արարատի և Շուշիի երկրամասերը, նահանգներ, որոնք գրեթե բացառապես բնակեցված են հայերով և որոնք մեր ազգի միջուկն են կազմում: Արդեն մեզ լուրեր էին հասնում, որ Պարսկաստանի քրդերն ասպատակել են Կովկասի հարավ-արևելյան՝ դեպի Բաթու ընկած տարածաշրջանները, հետևելով թուրքերի նախապատրաստած նախագծին: Պետրոգրադից ստացված ճեպագիրն ազդարարում է Բաթվի ռազմակալումը թուրքերի կողմից: Զար-

տեղի վրա նետած հայացքն ի հայտ է բերում, որ Կովկասի հայկական տարածաշրջաններն արևմուտքից, հարավից և արևելքից գտնվում են սպառնալիքի տակ:

Նկատի ունեցեք, որ այստեղ, ի տարբերություն Եվրոպայի, խուսքը գրավման մասին չէ: Հենց որ մեր նահանգները ռազմակալվեն, թուրքերը գործի կանցնեն. դա կլինի այն նույն համակարգի շարունակությունը, որն ուժի մեջ է եղել Թուրքիայում: Նրանց ծրագիրը հանգում է հայ ազգության ոչնչացմանը՝ 1/ մեկընդմիջտ վերացնելու համար Հայկական հարցը. 2/ վերացնելու համար այն պատնեշը, որը նրանց բաժանում է թաթարներից և Թուրքեստանի* մահմեդականներից: Միաժամանակ, թուրքական կառավարությունը Եվրոպայում եռանդուն քարոզչություն է վարում, որի նպատակը հայերին նողկալիորեն գրպարտելն է՝ նրանց վարկարեկելու և իր հեղինակությունը վերականգնելու համար: Մեր խնդիրն ամենացավոտն է այն բոլոր խնդիրներից, որոնք եվրոպական պատերազմը մարդկային խղճի դատին է հանձնել:

Գերմանիան, թույլատրելով Թուրքիային վերառազմակալելու Հայաստանը և գրավելու երեք նոր նահանգներ, քաղաքակիրթ աշխարհի առջև դրա պատասխանատվությունն իր վրա է վերցրել: Մենք չենք կարծում, որ Գերմանիան կարող էր որևէ բան շահել հայ ժողովրդի բնաջնջումից: Մեր կարծիքով Հայաստանի գրավումը Գերմանիայի կողմից, մեզ կապահովեր թուրքական հետապնդումներից:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, *Arménie*, tome 1, ff. 28-33).

580

Արտաքին գործերի նախարարը՝ Թիֆլիսում
Ֆրանսիայի հյուպատոս պ. Նիկոլային

Հ. թիվ 31:

Փարիզ, 8-ը ապրիլի 1918 թ., ժ. 23.15-ին:

Պ. Գեգեչկորու համար՝ պ. Մակկակովից.

«Համոզված այն բանում, որ դուք չեք ընդունի Բրեստ-Լիտովսկի հաշտությունը, և որ ձեր կառավարությունը վճռել է դիմադրել Գերմանիային ու պայքարել թուրքական ներխուժման դեմ, ես ձեզ եմ հայտնում իմ ջերմագին համակրանքն այն ամենի համար, ինչը կարվի այս ոգով և երջանիկ կլինեն, եթե այս առումով ձեզ օգտակար լինեն»:

(A.M.A.E., *Guerre 1914-1918, Turquie*, tome 895, f. 209).

* Ռուսական կայսրության վարչական մարզերից մեկի անվանումը, որն ընդգրկում էր ներկայիս միջինասիական երկրների տարածքը: - Շ. ք.:

1 Ստորագրել է պ. դը Մարտերին:

**Խորհրդի նախագահ, Ռազմական նախարար պ. Կլեմանսոն՝
Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին**

Վ. թիվ 2584-9/11: Գաղտնի:

Փարիզ, 8-ը ապրիլի 1918 թ.:

Վերջին մարտի 17-ի թիվ 2001-9/11 ճեպագրով¹, ես պատիվ եմ ունեցել ձեր ուշադրու-
թյունը հրավիրել վերջին ամիսների ընթացքում Ամերիկայում Արևելյան լեզեռնի համար
«հայկական» զինվորագրումների գրեթե կատարյալ դադարեցման և այն շահավետության
վրա, որն իրենից կարող է ներկայացնել այդպիսի ծագում ունեցող հայատակների զինվո-
րագրումների նոր ալիքի կազմակերպումն այնպիսի ձևով, որ հնարավոր լինի Կիպրոսում
կազմավորել Պաղեստին ուղարկված համահավաք գնդի մարտնչող անձնակազմերին
աջակցելու համար նախատեսված պահեստագործ:

Ի պատասխան այդ ճեպագրի, դուք բարեհաճել եք մարտի 19-ին ինձ հաղորդել 1170
համարանիշը կրող այն հրահանգները², որոնք այդ ոգով հղել եք Վաշինգտոնում և Նյու
Յորքում մեր ներկայացուցիչներին:

Սակայն դուք կբարեհաճեք գտնել սրան կից Արևելյան լեզեռնի հրամանատար, փոխ-
գնդապետ Ռոմիոյի մարտի 1-ի թիվ 26 զեկուցագրից³ մի հատված, որը հավաստում է ներ-
կայումս Միացյալ Նահանգներում հայկական զինվորագրումների դադարեցման շարժա-
ռիթները: Հետևաբար, ես կարող եմ միայն կրկին համառորեն ձեզ դիմել, որ դուք, եթե այդ
շահավետ համարեք, ամերիկյան կառավարության առջև հարց բարձրացնեք, որպեսզի
Միացյալ Նահանգներում բնակվող «հայերին» նա բոլոր արտոնյալ պայմաններն ընձեռի
մեր դրոշմների ներքո զինվորագրվելու համար և համաձայնվի, եթե այդ հնարավոր է, ֆրան-
սիական փոխադրամիջոցների անբավարար լինելու պատճառով, տեղական կոմիտեների՝
այդ նպատակով զինվորագրած կամավորներին դեպի Ֆրանսիա ուղղություն վերցնող
ամերիկյան փոխադրամիջոցների վրա տեղավորել:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 893, ff. 202-202 v).

ՀԱՎԵԼՎԱԾ

**Հատված Արևելյան լեզեռնի հրամանատար,
փոխգնդապետ Ռոմիոյի զեկուցագրից**

Թիվ 26:

14-ը մարտի 1918 թ.:

1 Վերն արտատպված է թիվ 560 փաստաթղթում:

2 Արտատպված չեն:

3 Հավելվածում բերված զեկուցագիրը թվագրված է մարտի 14-ով:

**Անձնակազմի դրությունը: Հայկական զինվորագրումների
դադարեցումն Ամերիկայում:**

Ընդգրկումը փետրվարին.

Հավաքագրումները. 80 սիրիացի, որոնց գերակշռող մասը եկել է Հարավային Ամերի-
կայից. 20 հայ, որոնք եկել են Պաղեստինում ազատ արձակվածներից. 6 հայ, որոնց զին-
վորագրել են Եգիպտոսում:

Կալուստները. 13 հայ, որոնց պայմանագիրը չեղյալ է հայտարարվել. 2 հայ, որոնց դա-
տապարտել է ռազմական խորհուրդը:

Թվում է, թե Հյուսիսային Ամերիկայից եկած հայերի զինվորագրման շարժումը, երեք
ամսից ի վեր, ընդհատվել է: Ես դրա պատճառների մասին հարցրել եմ Ամերիկայից եկած
երեք երևելի զինվորագրվածների, որոնք հենց նոր են այստեղ ժամանել. նրանց մասին ձեզ
հայտնել եմ փետրվարի 1-ի թիվ 25 իմ զեկուցագրում¹ (պարագրաֆ VIII) և այդ զեկուցագ-
րի՝ փետրվարի 11-ի լրացումում: Երեքն էլ շատ ակտիվորեն են մասնակցել Ամերիկայի
իրենց հայրենակիցների զինվորագրման օգտին արվող քարոզչությանը. նրանց ցուցում-
ներն, այսպիսով, արժանի են վստահության: Նրանք պնդում են, որ Ամերիկայում դեռևս
կան ավելի քան երեք հազար հայ, որոնք պատրաստ են զինժառանգության անցնել Արևե-
լյան լեզեռնում: Նրանք նշել են, որ մինչ այժմ ժամանած բոլոր կամավորները ծագումով
արևելյան նահանգներից են և որ մնում են կենտրոնի, Հեռավոր-Արևմուտքի քաղաքների և,
մասնավորապես, «Նոր Հայաստանի» վերանվանված՝ Կալիֆոռնիայի հայկական կարևոր
գաղութի զինված անձնակազմերը, որտեղ ազգային ինքնագիտակցությունը խիստ բուռն է:
Նրանցից ուրոշ թվով անձինք, որոնք եկել են ներքին նահանգներից և կարգավորել իրենց
գործերը՝ ունենալով զինվորագրվելու մտադրություն, Նյու Յորքում սպասում են մեկնելու:

Ձինվորագրված Ռուբեն Հերյանը, որը թվում է, թե եկել է, մասնավորապես, կապ հաս-
տատելու Ամերիկայի, Եգիպտոսի և մույնիսկ Կովկասի գաղութների միջև, եթե անգլիացի-
ները նրան թույլատրեն Բաղդադ հասնել Պարսկաստանով, պնդեց, որ այժմ Փարիզի ազ-
գային պատվիրակությունն ամբողջությամբ տարված է այն ռազմական կազմակերպու-
թյամբ, որն այստեղ կյանքի է կոչվել և ձգտում է դրա ընդլայնմանը: Մեկ տարի առաջ պատ-
վիրակության նախագահ Պոլոս փաշայի հիմնական առարկությունը պայմանավորված էր
այն բռնությունների նկատմամբ ունեցած երկյուղով, որոնք կարող էին կիրառվել Թուրքիա-
յում: Այդ երկյուղը, որն իրադարձությունները հերքել են, թվում է, թե այժմ փարատված է:

Ձինվորագրման դադարեցումն, այսպիսով, պայմանավորված է բացառապես փոխադ-
րամիջոցների կատարյալ անբավարարությամբ, որոնք անհրաժեշտ են Արևելյան լեզեռնի
համար նախատեսված հայ կամավորներին Ամերիկայից Ֆրանսիա տեղափոխելու հա-
մար: Եթե այդ ընդհատումը հարատևի, փետրվարի 25-ի թիվ 1431-9/11 ձեր հեռագրում²
նախատեսված 3-րդ գումարտակը կարող է ձևավորվել միայն ոչ շարային վաշտերն ամ-
բողջությամբ դատարկելու միջոցով, իսկ ակտիվ գործող 3 գումարտակները կմնան առանց
համալրման համար նախատեսված տարրերի: Դրանցում ընդգրկված գործի վրա, դա
կգործի բարոյական տհաճ ազդեցություն, որն իրեն կզգա, կարծեք թե ազգի մյուս մասից
լրված ու մեկուսացված:

Ֆրանսիայի շահախնդրությունը և վարկն Արևելքում կարող են տուժել, եթե, ինչպես
այստեղ՝ մեր կամավորների շրջանում են ասում, Ամերիկայից հայերի մեկնելու առիթով

1 Արտատպված չէ:

2 Չի հայտնաբերվել:

խոչընդոտների հարուցումն ավարտվի՝ ամերիկյան դրոշի ներքո նրանց համախմբելով՝ Արևելքում նրանց օգտագործելու համար: Ըստ կամավոր Ռուբեն Հերյանի ցուցումների (որին Ամերիկայի կոմիտեները հանձնարարություն են տվել հետևելու, մասնավորապես, Նյու Յորքում հայերի նավ տեղափոխվելու ձևականություններին)՝ Անդրատլանտյան ընկերության շոգենավերի վրա գտնվող ազատ տեղերը, երեք ամսից ի վեր, կարող էին ամբողջովի բացառապես Ամերիկայի հույն և լեհ կամավորների համար: Գրանից հետևում է, որ կամավորները, սպասելուց հոգնատանջ, ծառայության կանցնեն ամերիկյան բանակում և հարց կծագի ամերիկյան Արևելյան լեգեոն կազմավորելու մասին:

Ես ձեզ եմ ներկայացնում այս ցուցումներն առանց երաշխավորելու դրանց արժանահավատությունը: Այդուհանդերձ, եթե դուք գտնում եք, որ հարկ է Արևելյան լեգեոնի համար քաջալերել և աշխուժացնել զինվորագրման շարժումն Ամերիկայում, ես ձեզ խնդրում եմ բարեհաճել միջամտելու այն հարցին, որ Ֆրանսիայում, հավաքագրված այդ զինված անձնակազմերի համար տեղ ամբողջովի ամերիկյան փոխադրամիջոցներում:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 893, ff. 203-204).

582

Բեռնում Ֆրանսիայի ռազմական կցորդ, գնդապետ Պաժեռն՝ Խորհրդի նախագահ, ռազմական նախարար պ. Կլեմանսոյին

Ճ. թիվ 96:

Բեռն, 9-ը ապրիլի 1918 թ.:
(Ստացել են Կար. ապրիլի 12-ին,
ԲԸ-ը, Կար. ապրիլի 13-ին):

Այս կամ այն կողմից ձեռնարկված՝ Եվեյցարիայում բնակվող հայազգի հպատակներին համախմբելու նպատակ հետապնդող փորձերն, ընդհանուր առմամբ, մինչ օրս մնացել են առանց շոշափելի արդյունքների:

Գերմանական կամ թուրքական քարոզչությունն անհաջողության է մատնվում՝ բախվելով հայազգի հպատակների մեծամասնության հայրենասիրությանը և այն ինքնուրույնությանը, որի համար նրանք պարտական են, ընդհանուր առմամբ, իրենց անկաշկանդ կացությանը: Միայն մի քանի ընչազուրկներ են դիմում շվեյցարական օգնության բաժանմունքներին, որտեղ, ի դեպ, համեստորեն, իրեն զգալ է տալիս գերմանական ազդեցությունը:

Ինքնուրույն հաստատություններն այլևս հաջողություն չեն ունենում: Այդուհանդերձ, Ժնևում հիշատակվում են հետևյալ երկուսը.

- Հայկական օգնության կոմիտեն, որն սկզբնական շրջանում հարկադրված է եղել պայքարել ռուսական և թուրքական ծագում ունեցող հայերի փոխադարձ անվստահության դեմ: Բացի դրանից, վերջիններս շարունակում են ի հայտ բերել որոշ խորշանք իրենց ազգամունդներին հրապարակայնություն տալուց, երկյուղելով, որ իրենց կարող են մատնել թուրք լրտեսները և իրենց կարծիքների ինքնուրույնության պատճառով՝ իրենց երկրում մնացած հարազատների նկատմամբ բռնությունների տեղիք կտան:

- Հայ մամուլի բաժանմունքը, որը ղեկավարում է պրոֆեսոր Միշայեյանը: Այստեղ եր-

կու միտումներ են գերիշխում.

1/ Երկար ժամանակ Ֆրանսիայում ապրած և իրեն ֆրանկոմետ անվանող ոմն Նազարբեքի [sic]՝ ներկայացրած հեղափոխական առիալիզմը: Նրան համարում են ուտոպիստ և նրա գաղափարները փոքրաթիվ հետևորդներ ունեն:

2/ Ազգայնամուլությունը և հայկական ինքնավարության սկզբունքը, որոնք դասավանդում է գերմանական կրթություն ունեցող ոմն Իսաքչյանը [sic]: Վերջինս ավելի մեծ ազդեցություն ունի, քան իր մրցակիցը: Նա ձևացնում է, թե տեղյակ չի հայկական շրջաններում գերմանական քարոզչության գոյությանը: Այդ դիրքորոշումն, անկասկած, քողարկում է որոշ հայերի չվարկաբեկելու մտահոգությունը, որոնք Գերմանիայի գործակալներն են:

(A.M.G., 7 N 1590).

583

Արտաքին գործերի նախարարը՝ Բուենոս Այրեսում Ֆրանսիայի նախարար պ. Գոսսենին

Հ. թիվ 133:

Փարիզ, 13-ը ապրիլի 1918 թ., ժ. 0.25-ին:

Հայկական ակումբը (Լեքմա փողոց 561), տեղեկացնում է, որ կամավորներ ունի, որոնք ցանկանում են միանալ Կիպրոսում գտնվող Արևելյան լեգեոնին: Հիմնվելով թիվ 109 (1916 թ.)՝ ինչպես նաև թիվ 100 և թիվ 108 (1917 թ.)՝ հրահանգների վրա, կամեցեք հարաբերություններ հաստատել այդ ակումբի հետ և նրա համար դյուրին դարձնել, հնարավորության սահմաններում, նրա այն կամավորների ուղարկումը, որոնք պիտանի են զինծառայության համար:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 893, f. 209).

584

Թորիսում Ֆրանսիայի հյուպատոս պ. Մորիս Սոզոնը՝ Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին

Հ. թիվ 6:

Թորիս, 13-ը ապրիլի 1918 թ., ժ. 21.35-ին:

- 1 Իմա՝ Նազարբեկ:
- 2 Իմա՝ Իսահակյան:
- 3 Ստորագրել է պ. դը Մարտերին:
- 4 1916 թ. դեկտեմբերի 13-ի տե՛ս վերը թիվ 308 փաստաթուղթը:
- 5 Արտատպված չեն:

(Ստացել է Քաղ. վարչ. ապրիլի 13-ին):

Նաքիջ Վանի [sic]¹ և Ար(ար)ատի տարածաշրջանների հայերի ու թաթարների միջև տեղի են ունեցել լուրջ հուզումներ: Սարիղամիշում և Վանում հայերի ու թուրքերի միջև տեղի են ունեցել մարտեր, որոնք կվերսկսեն առաջինները: Բաքվում [մարտեր են տեղի ունեցել] մահմեդականների [և] հայերի [միջև]: Ջուլֆայի և Երևանի միջև բազմաթիվ վայրերում երկաթուղին և (հեռագրային գիծը) հատված են:

Իրադրությունը թորիսում խիստ բարդ է գերմանական քարոզչությամբ հրահրված տեղաբնակների վերաբերմունքի և Սուջ Բուլաքի շրջանում առկա օսմանյան սպառնալիքի պատճառով: [Դրությունը] կարող է շտկվել միայն մի քանի անգլիական անձնակազմեր այս նահանգ ուղարկելու [միջոցով] և հակաքարոզչությամբ:

(A.M.A.E., N.S., Perse, tome 11, f. 229).

585

Բանակի շտաբի 3-րդ բաժանմունքի ծանուցագիրը²

Իրադրությունը Կովկասում

Գաղտնի:

[14-ը ապրիլի 1918 թ.]:

Հաշտության բանակցություններ: Հաշտության բանակցությունները Կովկասի կառավարության և Թուրքիայի միջև, ապրիլի առաջին օրերին, շատ երեքուն էին³: Թուրքիան ուղարկել է մի վերջնագիր, որով պահանջում է Բրեստ-Լիտովսկի պայմանագրի հողվածների իրագործումը: Այդ վերջնագրի ժամկետը լրացել է ապրիլի 9-ից 10-ի գիշերը:

Գործողություններ: Ապրիլի 10-ին թուրքերը զբաղեցնում էին հետևյալ կետերը. 10 միլ⁴ Բաթումից, Արդահանից, Քիշե Դաղից արևելք և հյուսիս-արևելք, 10 միլ⁴ Սարիղամիշ-Կաղզվան-Քաշան գծից արևելք:

Հետագայում ստացված մի լուր տեղեկացրեց, որ նրանք զբաղվել են Բաշ-Կալեն: Հայկական ազգային բանակը, թվում է, թե ավելի է համախմբվում. ըստ ապրիլի 11-ի թվակիր տեղեկությունների՝ հայերը պետք է վերառազմակալված լինեն Վանը և թուրքերին դուրս մղած Բաթումի ուղղությամբ:

Ներքին մարտեր: Մարտի վերջերին և ապրիլի սկզբներին Բաքուն դարձել է կատաղի մարտերի թատերաբեմ⁴ մի կողմից՝ թաթարների, մյուս կողմից՝ հայերի և բուլշևիկների միջև: Թաթարները նպատակ ունեն ստեղծել թաթարական պետություն, որը դրվի Թուրքիա-

1 Իմա՝ Նախիջևան:
2 Ուոր Օֆիսի (Ռ-ՀՄ) տեղեկատվական բյուրոնից բխող:
3 Փաստաթղթի ծանոթագրությունը. «Փոխարենը կան նախանշումներ, որ վրացիները բանակցում են գերմանացիների հետ»:
4 Փաստաթղթի ծանոթագրությունը. «Բնակեցված թաթարների գերակշռող մասն աչրվել է, բայց նավթահորերն անվնաս են»:

յի իսկանու ներքո և ընդգրկի Ադրբեջանն ու Գիլանից հյուսիս ընկած տարածքների մի մասը¹:

Բուլշևիկներն իրագեկ են դարձրել Անդրկովկասը գերմանացիներից և թուրքերից պաշտպանելու և այդ նպատակին հետամուտ բոլոր ազգություններին օժանդակելու իրենց մտադրությանը: Այդ է պատճառը, որ նրանք հայերին իրենց աջակցությունն են ցուցաբերում: Գնդապետ Փայքն այն կարծիքին է, որ լավագույն վճիռը, որը կարող է կայացնել բրիտանական կառավարությունը, կհանգի Բաքվում գտնվող բուլշևիկների և հայերի հետ բանակցելուն՝ նրանց Մուտտրիեզ²-էնգելի ռազմաճակատը պաշտպանելուն դրդելու նպատակով:

Բաքվի ճակատամարտը, թվում է, թե ավարտվել է հայերի և բուլշևիկների օգտին, բայց երկյուղ կա, որ վերջին իրադարձություններից խիստ զրգոված և գերմանական գործակալների հրահրմամբ՝ Ելիզավետպոլի և Դադստանի նահանգների մահմեդականները քաղաքի դեմ հարձակում կգործեն:

(A.M.G., 4 N 62).

586

Հաագայում Ֆրանսիայի նախարար պ. Ալլիզեն՝ Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին

Ճ. թիվ 301:

Հաագա, 15-ը ապրիլի 1918 թ.:
(Ստացել են Կար. մայիսի 1-ին,
Քաղ. վարչ. մայիսի 2-ին):

Այս ամսի 7-ին, թիվ 288 {ճեպագրով}², ես պատիվ եմ ունեցել ձեզ տեղյակ պահել Ֆրանսիայի նախկին նախարար, Տեղահանված հայերի օգնության նիդերլանդական կոմիտեի նախագահ պ. Վան Գիենի [sic]³ Բեռլինում, Արտաքին գործերի նախարարությանն արած քայլին՝ պ. դը Զյուլմանի ուշադրությունը Միջագետք և Արաքիա տեղահանված հայերի կացության վրա հրավիրելու մտադրությամբ:

Քանի որ Հաագայի հայկական բյուրոյին հարցրել էի, թե արդյո՞ք իմ վերոհիշյալ նամակին կցված՝ մարտի 15-ի հուշագրի ներկայացումն իբրև հետևանք չի հանգեցրել այն բանին, որ գերմանական կառավարությունը հստակ դիրքաբաշխում զբաղի Հայկական հարցում, այդ բյուրոյի տնօրենն ինձ տեղեկացրել է, որ ինքը որևէ ցուցում չի առացել, բացի այն ցուցումից, որը բխում է Ռայխստագում, հրապարակային նիստում, այն զեկուցողի արած հայտարարությունից, որին հանձնարարված էր ժողովին ներկայացնել Բրեստ-Լիտովսկի

1 Փաստաթղթի ծանոթագրությունը. «Պարսկական դեմոկրատական կոմիտեն, որն այս հարցով է զբաղվում, հրաժարվել է հաշվի առնել այս առաջարկությունը:
Քուշիք խանին՝ ժուճալիսների պարագլխին, թաթարները նախապատրաստել են այս ոգով: Նա իր օգնությունն է խստացել անգլիացիների դեմ, բայց հրաժարվել է համաձայնվել պարսկական տարածքի մասնատմանը»:
2 Տե՛ս վերը թիվ 579 փաստաթուղթը:
3 Իմա՝ պ. Վան Գիեն:

պայմանագիրը: Քանի որ Հայկական հարցը կապված է այդ պայմանագրի IV հոդվածի հետ, որը նախատեսում է Բաթումի, Արդահանի և Կարսի երեք մարզերի զիջումը Թուրքիային, հրապարակային նիստում զեկուցողը, ինչպես պիտի մասին հիշատակել է Դեպարտամենտը, հայտարարել էր, թե «Թուրքիան հավաստիացումներ է տվել առ այն, որ հայերին կվերաբերվեն քնքշությամբ, որ թուրքական զորքերը խստորեն կպահպանեն կարգ ու կանոնը, և որ բնակչությունը պատասխանատու չի ճանաչվի ոմանց ի կատար ածած իրավախախտումների համար»: Այս հայտարարության արտահայտությունները ճշգրտվել են Հայկական հարցի վերաբերյալ Ռայխստագում գումարված գաղտնի նիստից հետո: Այսպիսին է Բեռլինի նախարարների խորհրդի որդեգրած դիրքորոշումը: Ինձ հայտնի չէ, թե արդյոք պ. դը Բյուլմանն անձամբ պատասխանել է կրկին պ. Վան Գիմին [sic]:

Հաագայի հայկական բյուրոն որևէ նշանակություն չի տալիս այն հրապարակային հայտարարությանը, որով Ռայխստագում հանդես է եկել Բրեստ-Լիտովսկի պայմանագրի մասին զեկուցողը: Հայկական բյուրոյի հրապարակած բյուլետենն այս առիթով ամփոփել է մի հաղորդագրություն, որը Ռայխստագում արված հայտարարության մասին հիշեցնելուց հետո, իր գնահատականները ձևակերպել է հետևյալ կերպ.

«Անհնար է լրջորեն ընդունել թուրքական կառավարության այդ հավաստիացումները. հայ ժողովրդին անցյալի փորձից հայտնի է, որ այդ խոստումներն անվտանգության և ոչ մի երաշխիք իրեն չեն տալիս: Թուրքական կառավարությունը 1915 թ. հավաստիացրել էր նաև, որ ինքը մեկուկես միլիոն հայերի միայն կտեղահանի Հայաստանից, բայց փաստը մնում է փաստ՝ այդ տեղահանությունների ընթացքում, որոնք իրականացվել են համաձայն նախօրոք մշակված ծրագրի, նրանցից մեկ միլիոնը կնքել է իր մահկանացուն: Հարկ է նաև նշել, որ կոտորածները սովորաբար իրագործվել են այդ նպատակով կառավարության ջանքերով ազատ արձակված և հրոսակախմբերում համախմբված կրկնահանցագործների ու քրեական տարրերի կամ կողոպտիչ և արյունարբու ցեղերի միջոցով, որոնց ղեկավարել են իշխանությունները: Այս պայմաններում, զորքերի՝ կարգ ու կանոն հաստատելուն վերաբերող հավաստիացումները որևէ նշանակություն չունեն:

Ինչ վերաբերում է Կովկասի հայերի վիճակին, մեզ տեղեկացրել են, որ թուրքական կառավարությունն իր բանագնացների միջոցով Կովկասի մահմեդական տարրերին արդեն գրգռել է քրիստոնյաների և, մասնավորապես, հայերի դեմ ու հրահանգել, որ թուրքական զորքերի Կովկաս մուտք գործելուն ևեթ, այդ կործանարար նախագիծն իրագործվի: Բարձր մահանգի ասպատակումը հազարավոր քուրդ ավազակների կողմից, այդ ծրագրի իրականացման սկիզբն է:

Հավաստի է, որ առանց Ռուսաստանում գերմանացիների ունեցած հաջողությունների և առանց գերմանական սպաների ու քնդանոթների համագործակցության, Թուրքիան երբեք չէր կարողանա մտածել Կովկասի գրավման մասին, նա անգամ չէր կարողանա վերագրավել Հայաստանը: Հասկանալի է, այսպիսով, որ այն դժբախտությունների ամբողջ պատասխանատվությունը, որոնք շուտով կրկին տեղալու են Հայաստանի վրա, կրելու է Գերմանիան և թուրքական խոստումները չէ, որ կօգնեն դրանցից ձեռքազատվել: Գերմանական կառավարության պարտականությունների մեջ է մտնում այն իրադրության կործանարար հետևանքներին խոչընդոտելը, որն ինքն է ստեղծել Կովկասում՝ Բրեստ-Լիտովսկի պայմանագրի IV պարագրաֆով»:

Կասկածելի է, որ պանգերմանական ախորժակների այս զարթոնքի շրջանում, որը պայմանավորված է վերջին ռազմական հաջողություններով, գերմանական կառավարությունն այս պահին գիտակցի այն նոր պատասխանատվությունները, որոնք նրա վրա են

բարդվում թուրքական կառավարության հետ ունեցած նրա հանցակցության հետևանքով: (A.M.A.E., E-Levant 1918-1929, Arménie, tome 1, ff. 34-35 v).

Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշան Նիդերլանդների թագուհի Նորին մեծություն Վիլհելմինին

Հ. թիվ 32A34:

Փարիզ, 15-ը ապրիլի 1918 թ.:

Հայաստանն այսօր ապրում է իր պատմության ամենաողբերգական օրերը: Թուրքերը, որոնք արդեն կոտորել են Թուրքիայի գրեթե մեկ միլիոն հայերին, վերագրավում են ռուսների լքած հայկական մահաճգները և նույնիսկ ներխուժում Կովկաս՝ սպառնալով Ռուսաստանի երկու միլիոն հայերին: Հայերի դեմ ուղղված իրենց անողորմ ատելությունը նրանք կրկին ի հայտ են բերում ոչ միայն նոր հանցանքներով, այլև նեղ վարքագծով, որը որդեգրել են չեզոք երկրներում հայերի դեմ գրպարտություններ տարածելով, նրանց մեղադրելով մահմեդականների դեմ գործած վայրագությունների համար, այն նոր կոտորածների համար նախօրոք ներում փնտրելու միակ նպատակով, որոնք նրանք չեն զլանա որակել իբրև արդարացի բռնություններ: Ուստի, խուսափելու համար, քանի դեռ ուշ չի, վերջին ճակատագրական հարվածից, որը կոչնչացնի քրիստոնյա ազգությանը, Հայկական ազգային պատվիրակությունը խիստ հարգալից ձևով դիմում է Ձերդ մեծության արդարամիտ, մարդկային և գթասիրտ ամենամիլիարական զգացմունքներին: Ազգային պատվիրակությունը հույս է տածում, որ Ձերդ մեծությունը կբարեհաճի իր օգոստափառ միջամտությամբ խոչընդոտել մի ամբողջ ժողովրդի կատարյալ բնաջնջմանը, որն սկսած ամենավաղ հնագույն դարաշրջանից փառապանծ օրեր է ունեցել և որն իր աշխարհայացքով ու բնածին հակումներով եղել է քաղաքակրթության ամենահզոր գործոնն Արևելքում:

(A.M.A.E., Guerre 1914-1918, Turquie, tome 889, f. 226).

Թիֆլիսում Ֆրանսիայի հյուպատոս պ. Նիկոլան պ{արոնայ}ք Արտաքին գործերի նախարար Ստեֆան Պիշոնին, Ռուսաստանում Ֆրանսիայի դեսպան Նուլենսին

Ճ. թիվ 37, 42:

1 Համանման հետազոտել են հոլվե Դանիայի թագավոր Քրիստիան X-ին, Եվրոպայի թագավոր Գուստավ V-ին, Նորվեգիայի թագավոր Հասկոն VII-ին, Իսպանիայի թագավոր Ալֆոնս XIII-ին և Բեռլինում Եվրոպայի դաշնային խորհրդի նախագահին:

Թիֆլիս, 15-ը ապրիլի 1918 թ.:
(Ստացել են Կար. հուլիսի 15-ին,
Քաղ. վարչ. հուլիսի 16-ին):

Ի մեծ զարմանս Թիֆլիսի բնակիչների, Անդրկովկասյան սեյմն ապրիլի 13-ին, շաբաթ օրը կեսգիշերին, միաձայն քվեարկությամբ պատերազմ է հայտարարել Թուրքիային: Ես ասում եմ ի զարմանս ամենքի, որովհետև ծածուկ ասեկոսեներ էին տարածվում այն մասին, որ Տրապիզոնում հաշտության պատվիրակության նախագահ պ. Չխենկելին պետք է, որ հաշտություն ստորագրած լինեք թուրքական պայմաններով: Կառավարական հաղորդագրության մի երկինաստ արտահայտություն, որն այդ իսկ պահից հերքվել է, թույլ էր տալիս դրան հավատ ընծայել և այն քառասյին ու զրկանքներով լի իրավիճակի պայմաններում, որում գտնվում է Կովկասը, ամեն ինչ տեղիք էր տալիս խորհելու, որ հարկ է տեղի տալ ամենաուժգին ցանկությանը:

Սեյմն այդ մասին այլ որոշում է կայացրել: Հավանաբար, դա արկածախնդրություն է, որի մեջ նա ներգրավվել է: Բայց մի թաթար, Խոյկի [sic]¹ ազգանունով, ինձ ասում է, որ պահանջելով Բաթումը, թուրքերը քաղաքական զգացողություն հանդես չեն բերել, որն անհրաժեշտ է Կովկասի կյանքի համար: Սեյմի մահմեդականներն, ի դեպ, ասում են, որ իրենք զենք չեն բարձրացնի իրենց եղբայրների դեմ, բայց բարոյական ամբողջ ուժերով կաջակցեն Կովկասի հայրենակիցներին:

Երեք օրից ի վեր հասը կատարելապես բացակայում է Թիֆլիսում:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 895, ff. 228-228 v).

Բանակի շտաբի 2-րդ բաժանմունքի ծանուցագիրը

Թիվ 12963:

16-ը ապրիլի 1918 թ.:

Գերմանիան և Հայաստանը

Մարտի 19-ին, Ռայխստագում արտասանած ելույթի ընթացքում, սոցիալիստ, պարոն Լեդբերուն ակնարկելով Արդահանի, Կարսի և Բաթումի մարզերի զիջմանը Թուրքիային, հայտարարել է.

«Բնակչության զերակշռող մասը, որը հայկական է ու վրացական, ներկայումս գտնվում է թուրքերի կողմից բնաջնջման սպառնալիքի տակ, որոնք Թուրքահայաստանում արդեն ոչնչացրել են ավելի քան մեկ միլիոն քրիստոնյա հայերի: Գերմանական կառավարության համար նոր կոտորածներից խուսափելը պատվի խնդիր է»:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 895, f. 230).

¹ Իմա՝ Խոյսկի:

Թիֆլիսում Ֆրանսիայի հյուպատոս պ. Նիկոլան պ(արոնայ)ք Արտաքին գործերի նախարար Ստեֆան Պիշոնին, Ռուսաստանում Ֆրանսիայի դեսպան Նուլենսին

Ճ. թիվ 38, 43:

Թիֆլիս, 16-ը ապրիլի 1918 թ.:
(Ստացել են Կար. հուլիսի 15-ին,
Քաղ. վարչ. հուլիսի 16-ին):

Կովկասյան արկածախնդրությունը, որովհետև հարկ է հենց այսպես բնութագրել Թուրքիային հղված պատերազմի հայտարարությունը, չի հապաղի հանգեցնել այն արդյունքին, որը ես կանխատեսում էի: Այն բանից հետո, երբ շաբաթ օրը երեկոյան, կեսգիշերին, այն միաձայն ընդունվեց, կիրակի օրը կեսօրին տեղեկանում էինք, ինչպես ասում են, գրեթե առանց պաշտպանության՝ Բաթումի գրավմանը, բայց մամրամասները հայտնի չեն:

Այս կերպ են իրականացվում իմ կանխատեսումները, այս կերպ է Թիֆլիսի կառավարությունն ամբողջ Կովկասը ներքաշել Բաթումը պահպանելու իր անհրաժեշտի պատրանքի մեջ:

Չանք ու եռանդ չեն խնայվում փնտրելու այն պատճառները, որոնց ազդեցությամբ այս պարոնայք գործել են, բայց դրանք չեն գտնում: Եվ այդ ժամանակ, որոշ քրթմնջոցներ են ելնում դավաճանության մասին: Ես չեմ ցանկանում թափանցել ներկա հուսալքության պատճառների փնտրտուքի մեջ, այնպես, ինչպես չեմ փորձել ըմբռնել անցյալի խանդավառության պատճառները: Ես գտնում եմ, որ դասը խիստ բավարար է: Թուրքերը կնվաճեն ամբողջ Անդրկովկասն այն ժամանակ և այն ձևով, ինչպես ցանկանան: Ոչ մեկը դրան չի հակադրվի: Եվ ինչպիսի՞նի կլինի այժմ կառավարության դիրքորոշումը:

Բավական հատկանշական մի բան. մեր հիվանդանոցը պատրաստվում էր մեկնել առաջիկա հինգշաբթի օրը: Սակայն Գեգեչկորին՝ Անդրկովկասի կոմիսարիատի նախագահը, խնդրել է զնդապետ Շարդինյիին այն դեռևս Թիֆլիսում պահել: Վերջինս դրան համաձայնվել է մի քանի օրով: Նա ինձ ասաց, որ սպասում է Ռուսիայի խմբավորմանը, որպեսզի երկու խմբավորումները միասին ուղարկի:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 895, ff. 231-231 v).

Բեռնում Ֆրանսիայի դեսպան պ. Դյուտաստան՝ Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին

Ճ. թիվ 443:

Բեռն, 18-ը ապրիլի 1918 թ.:
(Մտացել են Կար. ապրիլի 20-ին,
Քաղ. վարչ. ապրիլի 21-ին):

Այս դեսպանությունն արդեն առիթ է ունեցել Դեսպարտամենտին իրազեկ դարձնել այն տեղեկություններին, որոնք կարողացել է ի մի բերել Ռուսաստանի փլուզման հետևանքով Օսմանյան կայսրությունում ծնունդ առած լայնահուն հույսերի և նախկինում ինքնակալական լծի ներքո ապրող թուրքական ժողովուրդներին Կոստանդնուպոլսում համախմբելու շուրջ ձեռնարկված ջանքերի մասին: «Ռուսաստանում գոյություն ունի, - գրում էր «Թերդ-ջուման-ի հաքիքաթը» փետրվարի 20-ին, - թուրքական աշխարհ, որը Կասպից ծովը եզերելուց հետո, տարածվել է մինչև Չինաստանի և Աֆղանստանի սահմանները և որի բնակչության 90 %-ը պատկանում է թուրքական ազգությանը»: Թվում է, թե այս պահին այդ ձգտումները շատ ավելի որոշակորեն հակվում են դեպի Կովկասն ու Դրիմը: Կարսի, Արդահանի և Բաթումի մարզերի վերազիջումը Թուրքիային՝ նրա ձգտումների իրականացման ճանապարհին առաջին քայլն է և այդ իրական հաջողությունը նրան միայն քաջալերել է՝ իր հավակնություններն ավելի ծավալելու հարցում: Այդ մարզերին պատկանող մի մահմեդական պատվիրակություն, հավանաբար, գալու է Կոստանդնուպոլիս՝ սուլթանին հայտնելու իր երախտագիտությունն այն հոգածության շուրջ, որը նա ցուցաբերել է Կովկասի ժողովուրդների հանդեպ:

Երկու ամսից ի վեր, թուրքական մամուլն ակտիվորեն զբաղվում է այս հարցով: Չերդ գերագանցությունն այս ծրարում կբարեհաճի գտնել որոշ թվով հողվածների՝ թարգմանությունը, որոնք, մասնավորապես, ինձ հետաքրքիր են թվացել: Այդուհանդերձ, դժվար է դրանցից փոքրիշատե ստույգ գաղափար կազմել Կովկասում տիրող ներկա իրավիճակի մասին: Բայց այս բոլոր հողվածները պարզորոշ մատնանշում են թուրքական կառավարության հստակորեն ընդունած որոշումը հանուն այն բանի հիմնավորման, որ Կովկասի բնակիչների մեծամասնությունը մահմեդական է, որ նրանք մեծ մասամբ թուրքական ազգությանն են պատկանում և որ այս պայմաններում, Օսմանյան կայսրությունն առավել մեծ հիմքեր ունի հավակնելու այս տարածաշրջանների գործերի միջամտությանը, քանզի քաղաքական և ռազմական տեսակետից հենց իրենք՝ կովկասյան ժողովուրդներն են ձգտում հենվել Թուրքիայի վրա, որն, ի դեպ, ակնհայտորեն համապատասխանում է նրանց շահին:

Այդուհանդերձ, հարկ է նշել, որ հայերի և հատկապես վրացիների անջատողականությունը չի կարող օսմանյան կառավարությանը լուրջ մտահոգություններ չպատճառել: Վերջին փետրվար ամսին, երբ կովկասյան մի պատվիրակություն էր եկել Տրապիզոն՝ առաջարկելու օսմանյան կառավարությանը ներգրավվել հաշտության բանակցություններում, որոշ պատգամավորներ, որոնց թվում պանթուրանիզմի ջատագով Աղաօղլու Ահմեդը, իսկույն հայտարարել են, որ Թուրքիան չի կարող հաշվի առնել՝ մեծ մասամբ վրացիներից

եկող այդ առաջարկությունը, քանզի այն չի արտացոլում ձգտումների հավաստի պատկերները: Այս միջադեպից անմիջապես անց, Կոստանդնուպոլսի լրագրերը աշխույժ բանավեճի մեջ են ընդգրկվել՝ ապացուցելու համար, որ վրացիները կազմում են Կովկասի բնակչության միայն աննշան փոքրամասնությունը, այն դեպքում, երբ թուրքերը և այլ մահմեդականներն ունեն յոթ միլիոն յուրային՝ տասնմեկ միլիոն բնակչի ընդհանուր թվից:

Լրագրերի այս տարբեր քաղվածքներին ես անհրաժեշտ եմ համարում հավելել նաև «Կովկասի հանրապետությունը» խորագրով մի հաղորդագրության թարգմանությունը, որը Կոստանդնուպոլսի «Թուրք յուրդուն» հղել է Լոզանի համաման կազմակերպությանը և ամփոփում է որոշ հետաքրքիր տեղեկություններ զանազան խմբավորումների մասին, որոնք, ինքնակալության անկումից ի վեր, փորձել են կառավարել Կովկասը: Ինձ թվում է, որ մեկ այլ ծանուցագիր, որն ամփոփում է օսմանյան բազմաթիվ ազդեցիկ անձանց հայտարարությունները միևնույն հարցի շուրջ, ի վիճակի է Չերդ գերագանցության համար շահավետորեն մատնանշել այն կովանները, որոնցով թուրքական կառավարությունը մտադիր է իրեն թույլատրել հավակնելու իր պահանջների օրինականացմանը:

Եզրափակելով, ինձ անհետաքրքիր չի թվում, Չերդ գերագանցությանը տեղյակ պահել այս առիթով Բեռնում Թուրքիայի նախարարի կարծիքներին այն ձևով, ինչպես դրանք ինձ է հաղորդել՝ սովորաբար ինձ տեղեկություններ հաղորդողը: Ըստ Ֆուադ Սելիմ բեյի՝ Օսմանյան կայսրությունը կցանականա տեսնել Կովկասն իբրև ռուսական երկրների հետ կապող բուֆերային պետություն, որը միաժամանակ կծառայի իբրև Դրիմի հետ միավորող գիծ: Թուրքական կառավարությունը չի խորշի Կովկասին լայնածավալ վարչական ինքնավարություն ընձեռնելու գաղափարից, բայց նրա բոլոր ջանքերն ուղղված կլինեն Դրիմի և Օսմանյան կայսրության հետ մեկտեղ՝ այնպիսի մի համադաշնության կազմավորմանը նպաստելուն, որը Սև ծովում ապահովի նրա գերակշռությունը, վերածելով վերջինս թուրանական լճի: Հիրավի, թուրքերը դրանում են տեսնում ներուցների հարցի կարգավորման միջոցը՝ վերջնական և, մասնավորապես, բարեհաճ ձևով: Մինչ այսօր ներուցներով անարգել անցումի օգտին վկայակոչվող հիմնական փաստարկը հանգում էր այն բանին, որ հսկայական տարածքում Սև ծովի տիրակալ Ռուսաստանի համար անհրաժեշտ էր ունենալ ելք: Սակայն այն իսկ պահից, երբ Թուրքիան ռուսական ափերը կհավելի արդեն իր տիրապետության ներքո գտնվող ափերին, նրա գերագանցությունն անառարկելի կլինի և ներուցներն իբրև իր սեփական տան դարպասները դիտելու համար նա կունենա կրկնակի իրավունք: Այնուհետև՝ դյուրին կլինի, գտնում է Ֆուադ Սելիմ բեյը, պայմանավորվածության հանգել Բուլղարիայի և Ռումինիայի հետ, որոնց հավակնությունները չեն կարող չափից ավելին լինել, եթե հաշվի առնենք նրանց տիրապետության տակ գտնվող ափերի նվազ կարևորությունը:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 895, ff. 234-235 v),

**Թիֆլիսում Ֆրանսիայի հյուպատոս պ. Նիկոլան՝
պ(արոնայ)ք Արտաքին գործերի նախարար Ստեֆան Պիշոնին,
Ռուսաստանում Ֆրանսիայի դեսպան Նուլենսին**

Ճ. քիվ 40, 45:

Թիֆլիս, 18-ը ապրիլի 1918 թ.:
(Ստացել են Կար. հուլիսի 15-ին,
Քաղ. վարչ. հուլիսի 16-ին):

Ես պատիվ ունեմ Ձերո գերագանցությանը փոխանցել սրան կից՝ ժողովուրդներին ուղղված այն կոչի թարգմանությունը, որը հրապարակել է Անդրկովկասյան սեյմը: Ամենահակասական ասեկոսեներն են շրջում և անհնար էր իմանալ, չնայած իմ ամբողջ ջանքերին, թե արդյո՞ք ռուսները վերագրավել են Բաթումը կամ արդյո՞ք թուրքերը շարունակում են այն իրենց տիրապետության տակ պահել:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 895, f. 258).

ՀԱՎԵԼՎԱԾ

Անդրկովկասյան սեյմը՝ Անդրկովկասի բոլոր ժողովուրդներին

Քաղաքացիներ:

Հնչել է այն ժամը, երբ վճռվելու է մեր ընդհանուր հայրենիքի ճակատագիրը: Դուք իրազեկ եք թուրքական կառավարության մեզ ներկայացրած պահանջներին:

Նա մեզնից պահանջում է առանց Կովկասի ժողովուրդների գիտության կնքված Բրեստ-Լիտովսկի պայմանագրի ճանաչումը, որը ներկա պահին Ռուսաստանում չեն ճանաչել բոլոր նրանք, որոնց համար թանկ են ազատությունը և հայրենիքի պատիվը:

Նա մեզնից պահանջել է հանձնել մեր լավագույն բերրը՝ Կարսը և մեր լավագույն նավահանգիստը՝ Բաթումը:

Նա մեզնից պահանջել է գորքերը դուրս բերել Կարսի, Արդահանի և Բաթումի երեք նահանգներից:

Մենք արել ենք ամեն ինչ, խաղաղ ճանապարհով, բանակցությունների ուղիով դրդելու թուրքական կառավարությանը հրաժարվել իր պահանջներից: Չգտելով պահպանել խաղաղությունը, մենք համաձայնել ենք մեծ զոհաբերությունների և մեծ զիջումների: Մենք Թուրքիային հայտնել ենք, որ պատրաստ ենք նրան զիջել գրեթե ամեն ինչ, բայց չենք կարող հրաժարվել Բաթումից, որը մեր միակ ելքն է դեպի ծով, եվրոպական մշակույթի հետ հաղորդակցվելու մեր միակ ուղին: Բայց առճակատման խաղաղ լուծմանը հասնելու մեր բոլոր ջանքերն ապարդյուն են անցել՝ բախվելով Թուրքիայի համառությանը: Թուրքիան պնդում է իր առաջին պահանջները: Նրա նպատակն է մեկուսացնել Անդրկովկասն արտաքին աշխարհից, այն շնչահեղձ անել և հպատակեցնել: Այդ նպատակով են թուրքական գորքերն առաջ ընթանում: Մենք կարող ենք նրանց կանգնեցնել միայն զենքի ուժով:

Մեր առջև հարց է ծառանում. շարունակել բանակցությունները Թուրքիայի հետ և այդ այն դեպքում, երբ նրա գորքերը մուտք են գործում մեր հայրենիքի ներքին նահանգները կամ դադարեցնել բանակցությունները և Անդրկովկասի ազատության պաշտպանությունը վստահել զենքին: Թուրքիայի հետ հաշտության բանակցությունների հենց սկզբում, մենք հայտարարել ենք. Անդրկովկասի ժողովուրդները ծարավ են խաղաղության, բայց չեն համաձայնվի դրա համար վճարել ստրկության և խայտառակության գնով: Այժմ մենք պետք է ընտրություն կատարենք. ամոթալի հաշտություն և ստրկություն կամ՝ պատերազմ:

Հայրենիքի և սպառնալիքի ներքո գտնվող սերունդների նկատմամբ ունեցած մեր հսկայական պատասխանատվության ամբողջ գիտակցությամբ, մենք, առանց այլևայլության, կատարել ենք ընտրությունը:

Մենք ամոթալի հաշտություն չենք ստորագրի:

Մեր բանակցությունները Թուրքիայի հետ դադարեցված են:

Այսուհետև՝ առճակատմանը լուծում կտրվի ճակատամարտերի դաշտերում՝ զենքի ուժով:

Մենք այս ժամին դիմում ենք ձեզ, հաշվի առնելով, որ ձեր քաջությունից, զրկանքների ու զոհաբերությունների դիմելու ձեր պատրաստակամությունից է կախված ձեր և ձեր երեխաների ապագան:

Քաղաքացիներ, արդյո՞ք դուք ամբողջ Ռուսաստանի հետ համատեղ տապալել եք ինքնակալական լուծը՝ թուրքապատակ նահանգ դառնալու համար: Գյուղացիներ, արդյո՞ք հեղափոխությունը հողը ձեզ է տվել, որպեսզի նվաճողն այդ հողի վրա տեղավորի նոր վարձակալների: Բանվորներ, արդյո՞ք դուք բարձրացրել եք խռովության դրոշը, որպեսզի նվաճողն այն աղբի մեջ ոտնահարի:

Ամոթանք, ստրկություն կամ՝ պատերազմ: Մեր առջև այլընտրանք չկա: Թո՛ղ, որ սպառնալից վտանգը, որն ուղղված է մեր երկրի բոլոր ժողովուրդների դեմ, մեղմացնի տարածաշրջանները, հանդարտեցնի թշնամանքը, որոնք մինչ այժմ տարանջատել են մեր շարքերը:

Հավերժական ստրկության լայրծուն օղակը նետվում է մեր տարածաշրջանի բոլոր ժողովուրդների պարանոցին: Թո՛ղ, որ թշնամու հանրակամը ջարդուփշուր լինի դիպչելով մինչև վերջ պայքարելուն վերաբերող մեր հաստատուն որոշմանը՝ հանուն այդքան սերունդների արյամբ շաղախված մեր հողի պաշտպանության: Ի զե՛ն: Բոլորս դեպի ռազմաճակատ: Բոլորս հանուն ազատության և հայրենիքի պաշտպանության:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 895, ff. 259-259 v).

**Լոնդոնում Ֆրանսիայի դեսպան պ. Պոլ Կամբոնը՝
Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին**

Ճ. քիվ 280:

Լոնդոն, 20-ը ապրիլի 1918 թ.:
(Ստացել են Կար. ապրիլի 23-ին,
Քաղ. վարչ. ապրիլի 24-ին):

Ըստ Ձերո մեծության հրահանգների՝, ապրիլի 12-ի քիվ 751 (ճեպագրով)՝, ես տե-

1 Այդ ճեպագիրը մենք շրջանցել ենք:

դեկացրի Ֆորին Օֆիսին Կովկասում տիրող իրադրությանը և Թիֆլիսում մեր հյուպատոսների ջանքերը համաձայնեցնելու անկառնելիությանը: Ես ասացի, որ Չերչ գերագնացությունը Ֆրանսիայի հյուպատոսին կարգադրել է համաձայնեցնել դիրքորոշումն իր բրիտանացի գործընկերոջ դիրքորոշման հետ և խնդրել է, որ ինձ տեղեկացնեն վերջինիս տրված հրահանգներին:

Սրբ Ռոնալդ Գրահամն ինձ պատասխանեց, որ ընդհանուր գծերով այդ հրահանգները հանգում են, բոլոր հնարավոր միջոցներով, վերջին դեկտեմբերին Թիֆլիսում հաստատված ժամանակավոր կառավարությանը և բուլղարներին ու թուրքերին դիմադրող տարրերին օգնություն ցուցաբերելուն: Քանի որ նախատեսված գործողությունը պետք է հիմնականում ռազմական բնույթ կրի, անգլիացի սպաները պետք է ստանձնեն բրիտանական բոլոր գործակալների, ներառյալ հյուպատոսների, ղեկավարությունը: Այդ ղեկավարությունը պետք է վստահվեր գեներալ Դյունսթրիֆին, որը չի կարողացել Թիֆլիս հասնել և այս պահին Համադանում է: Գեներալի բացակայության պայմաններում, Կովկասում բրիտանական գործակալի պարտականություններն իրականացնում է գնդապետ Փայքը և այդ նա է, որ Ուոր Օֆիսի միջոցով հաղորդակցվում է անգլիական կառավարության հետ:

Ֆորին Օֆիսի որդեգրած համակարգը վերին աստիճանի նվազեցնում է Անգլիայի հյուպատոսի դերը: Եվ գնդապետ Փայքի հետ է, որ մեր գործակալն ու մեր սպաները պետք է արդեն հարաբերության մեջ լինեն:

Այդուհանդերձ, Միացյալ Նահանգների հյուպատոսի միջամտությունը, որի մասին հիշատակվել է մեր հյուպատոսի՝ վերջին հունվարի 7-ի թվակիր գեկուցագրի հատվածներից մեկում, արդեն բացահայտել է Ֆորին Օֆիսը, որն այդ առիթով հաղորդակցության մեջ է մտել Լոնդոնում Միացյալ Նահանգների դեսպանության հետ: Պ. Փեյջն այդ ժամանակ գրեց Պետրոգրադ՝ իր գործընկերոջը՝ և այստեղ գտնում են, որ ամերիկյան դեսպանների կիսապաշտոնական հանդիմանությունները կարող են լինել ավելի արդյունավետ և ունենալ ավելի սրընթաց ազդեցություն, քան բավական հեռավոր և բավական բարդ գործերի ըննարկումը Վաշինգտոնում:

Ամեն դեպքում, Ֆորին Օֆիսը և բրիտանական կառավարությունն ընդհանրապես, շատ վատ են իրագրել Կովկասի իրադրություններին: Դրա համար մեղավոր են հաղորդակցությունները, որոնք երկու ամիս, փաստորեն, ընդհատված են եղել: Հեռագրերի առաքումը հնարավոր չի եղել ապահովել Մոսկվայով և գնդապետ Փայքի մի քանի հաղորդագրությունները հենց նոր են միայն ստացվել Պարսկաստանով: Թվում է, թե Թիֆլիսում տիրում է ամենամեծ խառնաշփոթը: Թվում է, թե և ոչ մի անհատ ի վիճակի չէ Կովկասում պարտադրել իր իշխանությունը նույնիսկ միայն մեկ էթնիկական կամ կրոնական խմբի: Ընդհանուր առմամբ, այսպիսին է այն իրադրությունը, որը մեր հյուպատոսը նկարագրել է իր վերջին հունվարի 7-ի գեկուցագրում:

Անգլիացիներն ակտիվ գումարներ են ծախսել, որպեսզի ռազմաճակատում կամ Պարսկաստանում պահեն, հնարավորության սահմաններում, ամենամեծ թվով ռուս և հայ զինվորների: Սրբ Ռ. Գրահամը չգիտեր, թե ինչպիսի արդյունքներ են ձեռք բերվել Կովկասում: Բայց Պարսկաստանում, անգլիական գործակալը կարողացել էր պահել միայն մի քանի հարյուր ռուս: Ուստի՝ հյուսիսային ցեղերը սպառնում են Թեհրանին, ի դեպ, նվազագույն ուժերով, իսկ ձյունը հետաձգում է հարավից եկող անգլիական զինված անձնակազմերի երթը:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 895, ff. 273-274 v).

1 Պ. Ֆրանսիսը:

Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշան՝ պ. Բրանքինգին

Հ. թիվ 35901:
[Պատճենը]:

Տուլուզ, 20-ը ապրիլի [1918 թ.]:

Հայկական ազգային պատվիրակությունը ձեզ մեծապես շնորհակալ է այն ազնվաբար միջամտության համար, որը վերջերս արել եք ի նպաստ հայերի. հայկական նահանգները վերառազմակալող թուրքերի գործած նոր վայրագություններին և նահատակված ժողովրդին սպառնացող անսահման վտանգին ի տես, մենք ձեզ խորապես երախտապարտ կլինենք, եթե ևս մեկ անգամ միջամտեք, փորձելու համար կասեցնել բնաջնջման գործընթացը:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 889, f. 227).

Պաղեստինում և Սիրիայում Ֆրանսիայի Գերագույն կոմիսար պ. Ժորժ-Պիկոն՝ Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին

Հ. թիվ 220:

Կահիրե, 22-ը ապրիլի 1918 թ., ժ. 11-ին:
(*Ստացել է* Զադ. վաթչ. ապրիլի 23-ին):

Հայկական պատվիրակությունը, որը Երուսաղեմ է եկել հայկական վանքի գործերում կարգ ու կանոնը վերասահմանելու համար, ինձ հայտնել է իր ցանկությունը՝ Ռուսահայաստանից ստացված վերջին տեղեկություններն իրեն փոխանցելու շուրջ:

Ես Չերչ գերագնացությանը երախտապարտ կլինեմ ինձ հնարավորություն ընձեռելու համար պատասխանելու այդ խնդրանքին:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 895, f. 276).

Պաղեստինում և Սիրիայում Ֆրանսիայի Գերագույն կոմիսար պ. Ժորժ-Պիկոն՝ Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին

Հ. թիվ 221:

Կահիրե, 22-ը ապրիլի 1918 թ., ժ. 10.55-ին:
(Ստացել է Քաղ. վարչ. ապրիլի 23-ին):

Իմ թիվ 142 հեռագրի՝ շարունակությունը:
Այն պահին, երբ հանգամանքները մեզ (հարկադրում) են սահմանափակել եվրոպական զինված անձնակազմերի ուղարկումը Պաղեստին, ես երջանիկ կլինեմ, եթե իմանամ, թե ի՞նչ շարունակություն կարելի է տալ այս հեռագրում ձևակերպված առաջարկությանը, որը վերաբերում է ամերիկյան բանակում զինվորագրված հայկական զինված անձնակազմերի օգտագործմանը և այն անձանց տեղափոխմանը, ովքեր դեռևս կզինվորագրվեն Միացյալ Նահանգներում:

Բարենպաստ վճիռն արդյունավետորեն կքաջալերի Երուսաղեմի գաղթականների շրջանում տեղի ունեցող շարժմանը, որոնք հենց նոր տվել են ավելի քան 100 նոր կամավոր:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 893, f. 241).

597

**Հայկական ազգային պատվիրակության
քարտուղար պ. Հեքիմյանը՝ պ. Վիետին**

Ն:

Փարիզ, 23-ը ապրիլի 1918 թ.:

Ն{որին} գ{երագանցություն} Պողոս Նուբար փաշան հանձնարարել է ինձ ձեզ տեսակցել և խնդրել՝ կից ներկայացվող նամակներն իրենց հասցեատերերին ուղարկել, եթե հնարավոր է, դիվանագիտական փոստով: Դրանք պարունակում են «Քաղաքակիրթ աշխարհին հղված կոչի» բազմաքանակ օրինակներ, որը տպագրվել է ֆրանսիական մամուլում:

Երկու օր առաջ ես դրանք ուղղակիորեն նրանց եմ հղել փոստով, բայց Նորին գերագանցությունը գտնում է, որ սահմանի փակ լինելու պատճառով, իմ առաքումները կամ ետ կուղարկի գրաքննությունը, կամ շատ ժամանակ կպահանջվի, որպեսզի դրանք նշանակման վայր հասնեն, իսկ նա ցանկանում է, որ այդ կոչերը, որքան հնարավոր է արագ արտատպվեն շվեյցարական մամուլում:

Ես անձամբ եմ եկել, բայց երկյուղելով, որ կարող եմ ձեզ չհանդիպել, պատրաստել եմ սույնը, որը հանձնում եմ ձեր լուսնապահին:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 889, f. 228).

1 Մարտի 9-ի տե՛ս վերը թիվ 552 փաստաթուղթը:
2 Տե՛ս "Le Temps", 20 avril 1918, N 20741; "Journal des Débats", 20 avril 1918, N 110.

598

**Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնը՝ Պաղեստինում
և Սիրիայում Ֆրանսիայի Գերագույն կոմիսար պ. Ժորժ-Պիկոյին**

Հ. թիվ 158:

Փարիզ, 24-ը ապրիլի 1918 թ., ժ. 22.15-ին:

Ես պատասխանում եմ թիվ 220 ձեր հեռագրին:

Ռուսահայաստանի հետ հաղորդակցությունները հուսալի չեն և մենք ստույգ տեղեկություններ չունենք: Թվում է, թե անգլո-ֆրանսիական առաքելության աջակցած հայկական կորպուսները կռվում են քաջարար և քայլ առ քայլ թուրքերից պաշտպանում հողի ամեն մի քիզը: Որոշ տարածաշրջաններում նրանք, բացի դրանից, գործ ունեն թաթարների հետ: Թվում է, թե հայերի հանդեպ վրացիները լավ են տրամադրված, բայց նրանց զինված անձնակազմերը, թվում է, թե չեն կայող հսկայական լինել:

Անգլիական ստորաբաժանումներն առաջ են ընթանում Համադանից Ղազվին, որպեսզի կարողանան Կովկասի և Ալքքեջանի ժողովուրդներին աջակցել իրենց դիմադրության ընթացքում:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 895, f. 279).

599

**Թեհրանում Ֆրանսիայի նախարար պ. Ռայմոն Լոկոնտը՝
Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին**

Հ. թիվ 50:

Թեհրան, 25-ը ապրիլի 1918 թ., ժ. 11.20-ին:
(Ստացել է Քաղ. վարչ. ապրիլի 26-ին):

Թորիսից հեռագրում եմ, որ 400 թուրք Կոյի [sic]² մոտ և, հավանաբար, 4000-ը, որոնք գտնվում են սահմանում, շարժվում են, ինչպես ասում են, դեպի Թիֆլիս՝ Ջուլֆայով:

Ռադիոգիրը Թիֆլիսից հայտնում է, որ կառավարությունն Անդրկովկասը հռչակել է Դաշնային հանրապետություն և թուրք գլխավոր հրամանատարից՝ պահանջել դադարեցնել պատերազմական գործողությունները:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 895, f. 281).

1 Ապրիլի 22-ի տե՛ս վերը թիվ 595 փաստաթուղթը:
2 Իմա՝ Խոյ:
3 Վեհիթ փաշան:

Թիֆլիսում Ֆրանսիայի հյուպատոս պ. Նիկոլան պ(արոնայ)ք Արտաքին գործերի նախարար Ստեֆան Պիշոնին, Ռուսաստանում Ֆրանսիայի դեսպան Նուլենսին

Ճ. քիվ 41, 46:

Թիֆլիս, 25-ը ապրիլի 1918 թ.:
(Ստացել են Կար. հուլիսի 15-ին,
Քաղ. վարչ. հուլիսի 16-ին):

Ռուսաստանում գործերն առաջ մղող նախախնամությունը Կովկասի համար սահմանել է անխտոսափելի ճակատագիր: Թուրքիայի հետ շուտով կստորագրվի հաշտություն:

Որքան էլ ողբերգական լինի այս առնչի ավարտը, այն, այդուհանդերձ, ներկայացնում է բավական հետաքրքիր տեսարան: Միանգամայն ակնհայտ էր, որ եթե հաշվի առնենք գորացրումը և նրան հաջողրած խառնաշփոթը, տիրող անհավատալի անկարգապահությունը, թաթարների, հայերի և բուլղարների միջև պայքարը, եթե նկատի ունենանք, որ նրանք չունենին ո՛չ զենքեր, ո՛չ հրացաններ, ո՛չ ռազմամթերքներ, ո՛չ հաց, պատերազմը Թուրքիայի հետ անհնար էր:

Այնուամենայնիվ, պ. Գեգեչկորին և նրա կառավարությունը կանգ առան պատերազմի վճիռ կայացնելու վրա: Կովկասի սեյմը (արդյո՞ք դա անխտեմություն էր, արդյո՞ք՝ իսկական խիզախություն) միաձայն քվեարկեց պատերազմը շարունակելու օգտին:

Տասներկու ժամ անց Բաթումն ընկավ, մի բան, որը զանգվածների շրջանում խորը տպավորություն գործեց:

Չխենկենկելին [sic]¹, որն ինչպես ասում են, իր լիազոր ներկայացուցչի կարգավիճակով Տրապիզոնում Թուրքիայի հետ պայմանագիր է ստորագրել, զայրացել է տեսնելով, թե ինչպես են իրեն ծաղրում, ինչպես են իր պաշտոնական ստորագրությունից հրաժարվում և ձեռնամուխ է եղել Անդրկովկասի կոմիսարիատի նախագահին գահընկեց անելուն: Նա պայքարի մեջ է մտել, իսկ պատերազմի օգտին՝ միաձայն քվեարկությամբ սեյմի հանդես գալուց ութ օր անց, այդ ժողովը, ոչ պակաս հանդիսավոր հավաքում, քան նախորդը, կատարելապես հրաժարվել է իր կարծիքից և ճնշող մեծամասնությամբ հռչակել Անդրկովկասի անկախությունը, որը կազմավորել է Դաշնային դեմոկրատական հանրապետություն (մի պայման, որը Տրապիզոնում պահանջել էր Թուրքիան), հայտարարել Թուրքիայի հետ հաշտության անհրաժեշտության մասին, հանձնարարել Չխենկելիելուն [sic] կազմավորել նոր կառավարություն, որի մեջ մտել են որոշ քվով նախարարներ Գեգեչկորու նախարարների խորհրդից, բայց որից անձամբ Գեգեչկորին խնամքով վտարվել է:

Նոր կառավարությունն ընդգրկում է.
Ներքին գործերի նախարար Ռամիշվիլուն,
Ռազմական նախարար Գեորգաձեին,
Գյուղատնտեսության նախարար Խոմերիկին,
Ֆինանսների նախարար Խատիսովին (Թիֆլիսի նախկին քաղաքապետ),
Կրթության նախարար Հասանբեկովին,

1 Իմա՝ Չխենկելի:

Հաղորդակցությունների նախարար Մելիք-Ասլանովին,
Արդարադատության նախարար Խոյսկուն,
Մտակարարումների նախարար Սասկյանին [sic]¹,
Առևտրի նախարար Հաջինսկուն,
Աշխատանքների նախարար Երսինգյուանին [sic]²,
Խնամատարության նախարար Քաջասնունուն [sic]³,
Վերահսկողության նախարար Հայրարովին:

Այս հաշտությունն ակնհայտորեն կենտրոնական տերությունների համար հաղթանակ է, հենց այն իսկ փաստով, որ գոյություն ունի: Բայց ես ներողություն եմ խնդրում Չերո գերագնացությունից, որ համարձակվում են նրա դատին հանձնել իմ անձնական կարծիքը. դա շատ ավելի առերևույթ, քան իրական հաղթանակ է: Եթե Թուրքիան համաձայնվել է Վեհիբ փաշայի բերանով պատասխանել՝ «Մենք միշտ պատրաստ ենք ձեզ լսելու», ապա՝ այդ արվել է այն պատճառով, որ նա նույնիսկ ի վիճակի չէ իր հաղթանակն ապահովելու համար անհրաժեշտ քանակությամբ զորքեր ուղարկել Կովկաս: Թվում է, թե Բաթումի անկումը շատ ավելի պայմանավորված է դավաճանությամբ և ամենևին էլ օսմանյան բանակի սխրանքը չի մատնացույց անում: Այդ քաղաքն արդեն, հավանաբար, գրավել էին հաջարները [sic]⁴, որոնք մերձակա արվարձաններում ապրող վրացական մահմեդական ազգություն են:

Շարունակելով պատերազմը, Թուրքիան կարող էր, գործադրելով որոշ ջանքեր, անխտոսափելիորեն նվաճել Կովկասը, որտեղ կարող էր ռեսուրսներ և, իհարկե, թաթարների շրջանում գորակոչիկներ գտնել:

Հաշտությունը նրան գրկում է նման բնույթի յուրաքանչյուր հույսից, որի հետևանքով ես իրականում չգիտեմ, թե այս հաշտության համար հարկ է ուրբալ, թե դրանից ուրախանալ: Միայն ապագայում դա հայտնի կդառնա և կարճ ժամկետում:

(A.M.A.E., Guerre 1914-1918, Turquie, tome 895, f. 282-283).

Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնը՝ Պաղեստինում և Սիրիայում Ֆրանսիայի Գերագույն կոմիսար պ. Ժորժ-Պիկոյին

Հ. քիվ 163:

Փարիզ, 26-ը ապրիլի 1918 թ., ժ. 21.55-ին:

Ես պատասխանում եմ քիվ 221 ձեր հեռագրին՝
Այն քայլերը, որոնց ես կարգադրել եմ դիմել պ. Ժյուստերանին՝ հայերի զինվորագրումն

1 Իմա՝ Սահակյան:
2 Իմա՝ Երզնկյան:
3 Իմա՝ Քաջազնունի:
4 Իմա՝ աջարներ:
5 Ապրիլի 22-ի. վերն արտատպված է քիվ 596 փաստաթղթում:

ակտիվացնելու և դյուրին դարձնելու համար, չնայած Պետական դեպարտամենտի բարյացակամությամբ, բախվում են Ռազմական նախարարության ընդդիմություններին: Պ. Ժյուսերանը շարունակում է գործել:

(A.M.A.E., Guerre 1914-1918, Turquie, tome 895, f. 235).

**Ասիա-Օվկիանիայի փոխվարչության ծանուցագիրը՝
Կովկասի ընդհանուր իրադրության վերաբերյալ՝**

Ծ:

Փարիզ, 27-ը ապրիլի 1918 թ.:

1917 թ. հուլիսից նոյեմբեր ընկած ժամանակահատվածում և այն դեպքում, երբ չնայած պ. Կերենսկու և նրա համագործակիցների ջանքերին, խառնաշփոթն արդեն տարածվել էր Ռուսաստանի այլ նահանգներում, կարծեցին, թե Կովկասին կհաջողվի, ըստ էության, շրջանցել քաղաքական անկայունությունը և անիշխանությունը: Թիֆլիսի, Քութայիսի, Դաղստանի, Բաքվի, Բաթումի, Կարսի, Ելիզավետպոլի և Երևանի նահանգներն ընդգրկող այս երկրամասի յոթ միլիոն բնակիչ, ռուսական հեղափոխության հենց սկզբնական շրջանում կազմավորվել էին դաշնային հանրապետության մեջ, որի՝ մեծ մասամբ Դումայի նախկին անդամներից բաղկացած կառավարությունն այսուհետև՝ նիստեր էր գումարելու Թիֆլիսում:

Թվում է, թե Գերմանիան կրկնակի շահագրգռվածություն ուներ այս կերպ ձևավորված հանրապետությունը շուտափույթ կազմալուծելու և անդամահատելու հարցում: Առաջին հերթին՝ Կովկասի նահանգները, որոնք մասամբ բնակեցված են մահմեդականներով և XVIII-XIX դդ. պատերազմներին նախորդած ժամանակաշրջանում պատկանել են Թուրքական կայսրությանը, անընդմեջ պահանջվել են այդ կայսրության կողմից: Բեռլինի կառավարությանն այսպիսով, թվացել է, թե Կոստանդնուպոլսում ռազմատենչ խանդավառության ծավալման և այնտեղ՝ Պաղեստինում ու Միջագետքում բրիտանական բանակների նշանակալից հաջողությունների հետևանքով առաջ եկած տագնապների չեզոքացման ամենահուսալի միջոցը Կովկասի՝ առնվազն մասնակի միավորումն է Թուրքիային: Մյուս կողմից, կասկածից վեր է, որ Գերմանիան Կովկասը դիտում է իբրև անցումի վայր, որտեղ տիրապետության հնարավոր հաստատումը նպատակաուղղված է նրան թույլատրելու հասնել Պարսկաստան և այնտեղից՝ Հնդկաստան:

Մեր թշնամիների գործողությունը Կովկասում պետք է բախվեր բազմաթիվ խոչընդոտների: Ամենալուրջ խոչընդոտը սպրդնելու էր այն արդյունավետ դիմադրությամբ, որը հայ և վրացի ժողովուրդները, որոնց այդքան երկար ժամանակ ճնշել են օսմանները և որոնց համար պարտությունը նշանակում էր ամենաանողորք կոտորած, չէին զլանա նրանց հակադրել:

Մյուս կողմից, հարկ է նշել, որ 1917 թ. ամռան սկզբին, Թիֆլիսի կառավարությունը դեռևս միջոցներ ուներ ռազմական տեսանկյունից լուրջ գործողության համար: Բացի վեր-

1 Նախարարի համար է:

ջերս ձևավորված հայկական և վրացական աշխարհագորայիններից, որոնք, նախատեսվող թուրքական գրոհի պատճառով, շատ արագ դրվել էին նրա տրամադրության ներքո, կային նախկինում՝ մեծ դուքս Նիկոլայի բանակներում ռազմարշավներին մասնակցած մեծ թվով ռուս սպաներ և միևնույն բանակներում ընդգրկված կազակների նշանակալից խմբեր, որոնք հենց նոր էին նրան առաջարկել իրենց ծառայությունները: Կուռլանդիայի և Գալիցիայի ռազմաճակատներում դասալքությունները և խուճապը Կովկասի ռազմաճակատում ունեցան միայն թույլ արձագանք, որի մեծ մասը մնաց կազմակերպված:

Վերջապես, հարկ է տեսադաշտից բաց չթողնել, որ Կովկասի բուն ռուսական տարրերն այս դարաշրջանում որևէ ձևով դեռևս չէին առնչվել անարխիստական կամ բուլշևիկյան քաղաքականության հետ և որ նրանց մեծ մասը հակվում էր դեպի «հեղափոխական» սոցիալիզմը, որի շարքում է իրեն դասում պ. Կերենսկին:

Գերմանիան և նրա դաշնակիցներն ունեին, դժբախտաբար, գործելամիջոցներ՝ հակադրելու համար այն գործելակերպերին, որոնք իր տրամադրության տակ ուներ Կովկասի հանրապետությունը:

Նախ՝ Կովկասի ամբողջ տարածքում ցրված թաթարական մահմեդական ժողովուրդները չէին կարող բարյացակամ վերաբերմունք չունենալ դեպի հյուսիս օսմանյան գործողության ծավալման հանդեպ:

Մյուս կողմից, հայերը և վրացիները, որոնք մերձեցել են թուրքի հանդեպ ունեցած ընդհանուր ատելությանը, տարանջատված են որոշ հակամարտություններով և ավանդական թշնամությամբ: Գերմանիային ներկայանում էր դրանից օգտվելու հնարավորությունը:

Հարավային Ռուսաստանում բուլշևիկյան քուչվոր հրոսակախմբերի ներկայությունը մեր թշնամիներին առիթ է միջոցներ էր տրամադրում, մյուս կողմից, Կովկասի հանրապետությունում խառնաշփոթ հարուցելու և այդ պետության կազմալուծումը իրահրելու համար:

Ինչպիսի պայմաններում, հետևելով ինչպիսի եղանակների և ի՞նչ միջոցառումների օգնությամբ է մեր թշնամիների գործողությունը Կովկասում կարողացել իրականանալ: Ամբողջական ձևով և մանրամասնորեն այն նկարագրելը դժվարին կլինի: Պետք չէ, հիրավի, մոռանալ, որ ֆրանսիացի գործակալները, որոնք ի վիճակի են եղել հետևել Կովկասի իրադարձություններին կամ տեղում, կամ Հարավային Ռուսաստանից, կամ վերջապես Պարսկաստանից, իրենց համապատասխան տարածքներում հաղորդակցությունների անկայուն վիճակի պատճառով Դեպարտամենտի հետ հաղորդակցվելու հարցում կրել են ամենամեծ դժվարությունները: Նրանց որոշ հեռագրեր երբեք չեն հասել Փարիզ. այլք այդտեղ են հասել շատ մեծ ուշացումներով կամ գրեթե քացարձակապես անվերժանելի վիճակում:

Այդուհանդերձ, ճշգրտվել է մի էական հարց: 1917 թ. վերջին վեց ամսվա ընթացքում Կոստանդնուպոլսում սկիզբ է առել քաղաքական անեզր, եռանդուն գործունեություն, որն, անկասկած, ներշնչել է և հովանավորել Գերմանիան, բայց ղեկավարել են օսմանյան պետական գործիչները: Այդ եռանդուն գործունեությունը կյանքի է կոչվել փառաբանելու այն ամենն, ինչն, ըստ էության, թուրքական է, և նրա հեղինակները նկատի են ունեցել գլխավորապես թուրքալեզու և թուրքական կամ թուրանական ազգությանը պատկանող բոլոր ժողովուրդների դաշինքը: Հույների հսկայածավալությունը, որին Կոստանդնուպոլսի կառավարությունը տուրք է տվել ռուսների ջախջախման հետևանքով, հավաստել են օսմանյան կիսապաշտոնական մամուլի բազմաթիվ հոդվածները: «Ռուսաստանում գոյություն ունի, գրում էր «Թերոջուման-ի հաքիբաբը», թուրքական աշխարհ, որը Կասպից ծովը եզերելուց հետո, տարածվել է մինչև Չինաստանի և Աֆղանստանի սահմանները և որի բնակչության 90%-ը պատկանում է թուրքական ազգությանը»: Իսկ «Սաբահը» հասնում էր մինչև

այնտեղ, որ հայտարարում էր. «Մահմեդական աշխարհում, մասնավորապես, Թուրքիան, որտեղ իշխում է օսմանյան հարստությունը, որի տիրապետության ներքո է գտնվում խալիֆայությունը, չի կարող, բնականաբար, Ղրիմի թերակղզու մահմեդականների կոչերի հանդեպ անտարբեր մնալ»: Կովկասը, Հարավային Ռուսաստանի ազատ ելումուտի վայրը, այսուհետև՝ հառնում է, կարծես, իբրև ազգայնամուլական Թուրքիայի առաջին նպատակը: Գերմանիայի նպատակը, բնականաբար, այն եռանդուն գործունեության ծավալումն արագացնելն ու դրան նպաստելն է, որին այս տարածաշրջանում շուտով ձեռնամուխ կլինի Կոստանդնուպոլսի կառավարությունը:

Թուրքական ներխուժման համար ավելի հուսալիորեն հող նախապատրաստելու նպատակով, նախ և առաջ՝ նա կջանա ապահովել բուլղարիկյան տեսությունների տարածումն ամբողջ Կովկասում:

Նոյեմբեր ամսի սկզբներին տեղի է ունեցել վճռորոշ նշանակություն ունեցող մի իրադարձություն, որն այդ հարցում շուտով դյուրին կդարձնի նրա մտադրությունների իրականացումը: Հիրավի, այդ ամսաթվին է, որ Տրոցկու և Լենինի առաջնորդած ժայռահեղականներին հաջողվել է տապալել Կերենսկու կառավարությունը և գրավել Պետրոգրադը: Բուլղարիկյան գործողության և պանթուրանական գործողության համակցումը պատրաստվում է ամսիջապես տեղի ունենալ Գերմանիայի հովանու ներքո, որից նա ամենամեծ օգուտը կբաղի: Դեկտեմբերի 8-ին Լենինի կառավարությունը կոչով դիմում է Արևելքի բոլոր մահմեդականներին, հայտնելով նրանց, որ Ռուսաստանն այսուհետև՝ հրաժարվում է այն քաղաքականությունից, որը նրանց նկատմամբ կիրառել են ցարի և պ. Կերենսկու կառավարությունները: Այդ կոչը փառաբանում է և ամրապնդում ժայռահեղականների ու թուրքական Ասիայի մահմեդականների դաշինքը, որն իրականացվել է Բեռլինի կառավարության գերագույն ղեկավարության ներքո: Այս կերպ մերձեցված տարրերի համագործակցությունը որևէ այլ վայրում չի ունենա ավելի նշանակալից հետևանքներ, քան Կովկասում:

Նախ և առաջ՝ այս հեղաշրջումը, որը հենց նոր է իրականացվել Պետրոգրադում, գրեթե անմիջապես իր արձագանքն է գտել Թիֆլիսում: Ժամանակավոր կառավարությունը, որն ինքնակալության անկումից ի վեր այս քաղաքում էր, տապալվել է: Հայերի, վրացիների, թաթարների և ռուսների խմբերը հավաքվում են այդժամ առանձին-առանձին, որպեսզի ձեռնամուխ լինեն իրենց ներկայացուցիչների նշանակմանը Թիֆլիսում: Թաթարները որպես այդպիսիք նախատեսում են չորսի, հայերը՝ երեքի, վրացիները՝ երեքի և ռուսները՝ երկուսի: Այս տասներկու կոմիսարները պետք է կազմավորեն Կովկասի հանրապետության սեյմը կամ խորհուրդը: Ծայրահեղ հեղափոխական և դաշնային այս նոր կազմակերպության թույլ կողմը, ամենայն հավանականությամբ այն է, որ ազգային իշխանությունների չորս մարմինները գտնվելու են կողք-կողքի, սրունք պետք է խանգարեն Հանրապետությունում ընդգրկված տարբեր տարրերի միավորմանը և իբրև հետևանք՝ նրանց զրկեն արտաքին աշխարհից ելնող վտանգից արդյունավետորեն դիմադրելու հնարավորությունից: Գերմանիան և Թուրքիան պատրաստվում են դրանից հմտորեն օգտվել:

Օսմանյան կիսապաշտոնական մամուլը, բացահայտորեն հրահրված հողվածներում, այդ իսկ պահից հաճույքով հիշեցնում է վրացական ազգությունների հանդեպ ցարի կառավարության նախկին վերաբերմունքի, ինչպես նաև այն տարածայնությունների մասին, որոնք նրանց երկար ժամանակ տարանջատել են հայերից: Մյուս կողմից, այն բազմապատկում է բարեհաճությունները թաթարների նկատմամբ: Վերջապես, բուլղարիկների զինված հրոսակախմբերը, որոնց նյութապես ակնհայտորեն աջակցում է Գերմանիան, հայտնվում են Կովկասի հանրապետության տարբեր վայրերում: Այսպիսով, ամբողջ երկ-

րում արագորեն տարածվում է անիշխանությունը և հայկական տարրերն այստեղ մեծապես խիզախում են հայտնվելու կատարելապես մեկուսացված վիճակում:

Մյուս կողմից, ռուսական հեծելազորային գնդերը, որոնք շարունակում էին պահել Կովկասի նախկին ռազմաճակատի տեղանքը, բարոյալքվում են: Գեներալ Պրժևալսկին, որն այս գնդերի հրամանատարն է, դեկտեմբերի 10-ին թուրքերի հետ զինադադար է ստորագրում: Դասալքությունների պատճառով առաջացած թափուր տեղերը մասամբ լրացվել են շնորհիվ հայ կամավորների ժամանման, որոնք խիզախ են, բայց ամենևին ռազմատենչ չեն: Խախտելով զինադադարը՝ օսմանյան բանակը շուտով վերսկսում է հարձակումը և վերագրավում է Թուրքահայաստանի մի մասը:

Հունվարի կեսերին Էմվեր բեյը հաշտության առաջարկություններ է հաղորդում Թիֆլիսի կառավարությանը, որի անդամները հանրապետության համար հետաքրքրություն ներկայացնող բոլոր գործերում դրսևորում են և այդուհետև՝ դրսևորելու են կատարյալ անհամաձայնություն: Ի դեպ, Կովկասի հանրապետությանը վերաբերող տարածքային հողվածները պետք է վճռվեն Բրեստ-Լիտովսկում և ոչ թե Թիֆլիսում: Ըստ Բրեստ-Լիտովսկի պայմանագրի՝ Կարսի, Արդահանի և Բաթումի տարածաշրջանը զիջվում է Թուրքական կայսրությանը:

Կովկասի հանրապետության կառավարության անդամների մեծ մասը բողոքում է պայմանագրի այդ հողվածի դեմ, բայց այն անպտուղ դարձնելու նպատակով, չի մշակում գործողության որևէ ծրագիր:

Նույն պահին (փետրվարի և ապրիլի միջև ընկած ժամանակաշրջանում), արյունալի բախումներ են տեղի ունենում կովկասյան տարածքի բազմաթիվ կետերում, մասնավորապես, Բաքվում և Թիֆլիսում, մի կողմից՝ հայերի և սոցիալիստ-հեղափոխականների, իսկ մյուս կողմից՝ բուլղարիկների և մահմեդական թաթարների միջև: Խառնաշփոթն աստիճանաբար կլանում է ամբողջ երկրամասը: Բաքվից մեկնած բուլղարիկյան տարրերը և թաթարական հրոսակախմբերը շուտով անցնում են Պարսկաստան, որտեղ արտասահմանցիների նկատմամբ ատելությունը հզորանում է, իսկ հաղորդակցությունների անապահովությունն օրեցօր աճում: Թեհրանի կառավարությունն ակնհայտորեն հովանավորում է նրանց անցումը:

Այս վերջին օրերին հայտնել են, թե Կովկասի սեյմը պետք է, որ ետ վերցրած լինի այն բողոքը, որով՝ Հայաստանին վերաբերող Բրեստ-Լիտովսկի պայմանագրի հողվածների շուրջ նախապես գործ էր հարուցել տեղություններին: Տեղեկությունը չի հաստատվել: Հեղինակագուրկ այս կառավարության այժմյան դիրքորոշումը մեծ կարևորություն, ի դեպ, չունի և դժբախտաբար հաստատված է թվում, որ չնայած հայկական ու վրացական աշխարհագրայինների անվեհեր դիմադրությանը, թուրքերին արդեն հաջողվել է տիրապետություն հաստատել Ռուսահայաստանի մեծ մասում: Արդահանը և Բաթումը ռազմակալվել են: Հայկական տարրերը դեռևս կղիմադրեն Կարսում, որի անկումը, թվում է, թե միայն շաբաթների կամ, հավանաբար, օրերի հարց է: Կարելի է ենթադրել, որ թուրքական առաջխաղացումը կտարածվի այս երկրամասից դուրս, և որ օսմանյան զորքերը կփորձեն հարձակվել Կարսի վրա: Մյուս կողմից, այն բազմապատկում է բարեհաճությունները թաթարների նկատմամբ: Վերջապես, բուլղարիկների զինված հրոսակախմբերը, որոնց նյութապես ակնհայտորեն աջակցում է Գերմանիան, հայտնվում են Կովկասի հանրապետության տարբեր վայրերում: Այսպիսով, ամբողջ երկ-

րում արագորեն տարածվում է անիշխանությունը և հայկական տարրերն այստեղ մեծապես խիզախում են հայտնվելու կատարելապես մեկուսացված վիճակում:

ված, նվազագույնը՝ ժամանակավորապես: Օսմանյան կայսրությունը, իրոք որ, գրեթե իրագործել է Ռուսահայաստանի գրավումը և դեպի Հարավային Ռուսաստանի նահանգները տանող մատույցները բուրքերի համար դառնում են մատչելի:

Արյո՞ք դաշնակիցներն ի վիճակի էին արդյունավետորեն օժանդակել Կովկասի հանրապետությանն այն անհավասար պայքարում, որը նա հարկադրված էր միաժամանակ մղել բուլշևիկների, գերմանացիների և բուրքական բանակի դեմ: Այն պահին, երբ բռնկվեց ռուսական հեղափոխությունը, գնդապետ Շարդինյիի՝ երեսուն սպայից բաղկացած ռազմական առաքելությունը և համարժեք կարևորության անգլիական մի առաքելություն գտնվում էին Կովկասի ռազմաճակատում: Այդ առաքելություններին հանձնարարվել էր հետևել միայն այն գործողություններին, որոնք Հայաստանում ձեռնարկել էին մեծ դուքս Նիկոլայի բանակները: Երբ ռուսական կանոնավոր բանակի զինվորները սկսել են լքել Կովկասի ռազմաճակատը, գնդապետ Շարդինյին, նրա սպաները և նրանց բրիտանացի ընկերներն ակամայից դարձել են զինվորագրման գործակալներ և հայկական ու վրացական զինված անձնակազմերի կազմակերպումն ապահովող հրահանգիչներ, որոնք բուրքական հարձակմանը ցուցաբերել են կատաղի դիմադրություն և որոնց մի մասն առ այսօր շարքերում է: Երկարատև ու փայլուն պաշտպանությունը, որը ցուցաբերել են այս զինված անձնակազմերը, դժբախտաբար, չի խանգարել բուրքերին շարունակելու իրենց առաջընթացը դեպի հյուսիս. եթե այն դիտենք ռազմական գործողությունների հետ նրա ունեցած հարաբերակցության կտրվածքով, ապա՝ այն հառնում է, ի դեպ, իբրև շահավետ, քանզի բուրք-գերմանական շտաբին հարկադրել է նշանակալից անձնակազմեր գամել Կովկասի ռազմաճակատում: Հետևաբար, այն մեծապես նպաստել է բրիտանական զորքերի առաջխաղացմանը Պաղեստինում և Բարձր Միջագետքում: Հայերի կազմակերպած դիմադրության հաղթական ելքն ապահովելու համար, հարկ էր, որ դաշնակիցներն ի վիճակի լինեին իբրև օժանդակ ուժեր նրանց ուղարկել հրահանգիչ սպաների և հասցնելին ռազմամթերքներ ու զենքեր: Այդ նպատակով, օսմանյան ուժերի դեմ հայկական և վրացական զորքերի մղած պայքարի ընթացքում, Ֆրանսիան և Անգլիան ձեռնարկել են բազմաթիվ փորձեր, բայց հանգամանքներն անանցանելի էին դարձնում Կովկասը դաշնակիցներից անջրպետող տարածությունները: Անգլիացի զեներալ Դյունսթրիվիլը, որը համաձայն Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի միջև վերջին դեկտեմբերի 23-ին կայացված համաձայնության՝ պետք է Կովկասում ստանձներ դաշնակիցների գործողության ղեկավարումը, ապարդյուն ջանքեր գործադրեց՝ բազմաքանակ շտաբի ուղեկցությամբ Պարսկաստանով այս երկիր մտնելու համար և հարկադրված եղավ ճանապարհից վերադառնալ որքան հնարավոր է արագ, քանզի Ռեշտի մոտակայքում բախվել էր բուլշևիկների զինված հրոսակախմբերին: Ֆրանսիացի սպաների մի առաքելություն, որը նրան էր հետևում և գտնվում էր ի քանի շաբաթվա հեռավորությամբ, ավելի երջանիկ չգտնվեց:

Արևմտյան տերություններն ի վիճակի՞ են քաթարների և բուլշևիկների առաջխաղացումը գոնե կասեցնել, որոնք այժմ փորձում են անցնել Պարսկաստանի տարածքով՝ Հնդկաստանի ուղղությամբ:

Կասկածից վեր է, որ այս առումով, վտանգը հսկայական չափով մեծացել է այն փաստի հիման վրա, որ 1917 թ. դեկտեմբերից մինչև 1918 թ. մարտն ընկած ժամանակաշրջանում անգլիական կառավարությունն ամբողջությամբ անտեպել է որոշ միջոցների կիրառումը, որոնց օգտագործելու հնարավորությունը նրան ընձեռվել է, պարսկական իշխանություններին դեպի Անտանտի տերությունները վերագարձելու համար և որոնց վրա մենք բազմաթիվ առիթներով հրավիրել էինք նրա ուշադրությունը: Այս հանգամանքը բացատրում

է, թե ինչո՞ւ է պարսկական կառավարությունը, որին, ի դեպ, քաջալերել էին մեր թշնամիների՝ նրա նկատմամբ ցուցաբերած սիրալիրությունները, միևնույն ժամանակաշրջանում սկսել բացահայտորեն անվստահություն և նույնիսկ թշնամական զգացումներ ի հայտ բերել դաշնակիցների հանդեպ և ինչպե՞ս է նա վերջնականապես հանգել Բեռլինի ու Կոստանդնուպոլսի կառավարությունների գործողություններին օգնելու գաղափարին՝ վերջ նշած մեր պայմաններով: Հարցն, ի դեպ, արդեն դարձել է մի ծանուցագրի նյութ, որը վերջին ամսի 13-ին հղվել է Նորին գերագանցություն պարոն Պիշունին:

Անգլիական հեծելազորային ուժերը, որոնք առանձնացվել են Միջագետքի բանակից, գնդացիների ուղեկցությամբ թափանցել են Պարսկաստան գրեթե չորս շաբաթ առաջ: Նրանք ռազմակալել են Համադանն ապրիլ ամսի սկզբներին, բայց չի թվում, թե նրանք դրանից հետո առաջ են ընթացել: Ի մի բերված տեղեկություններից բխում է, որ բուլշևիկյան և քաթարական հրոսակախմբերն իրենց հերթին, դեռևս չեն անցել Ռեշտը: Այսպիսով, հիմնավոր է թվում այն կարծիքը, թե անգլիական զորքերը դեռևս ի վիճակի են Ղազվինի ուղղությամբ սրընթաց գործողությամբ դեպի Կովկասի լեռները ետ մղելու թշնամական տարրերին, որոնք այնտեղից են իջել: Հարկ է, որ այդ գործողությունն իրականանա կարճ ժամկետում և կարելի է իրավամբ գարմանալ հեծելավաշտերի ներկայիս անշարժությամբ, որոնք գրավել են Քերմանշահը և Համադանը: Տարօրինակ կլինի, եթե արևմտյան տերությունների թվում Անգլիան վերջինը լինի, հասկանալու համար Հնդկաստանի մարզերը բուրք-գերմանական վարակից պաշպանելու բացարձակ և անսասան անհրաժեշտությունը, որը դեպի արևելք գերմանական ճնշման վերջնական նպատակն է:

Միրիայում կամ Ֆրանսիայի ռազմաճակատում շահած ճակատամարտն ի վիճակի կլինի հատուցել այն վնասը, որն այսօր պատճառվում է Հայաստանին և որը կանխարգելել, ի դեպ, չի թվում, թե արևմտյան տերությունների իրավասության մեջ է մտնում: Այստեղությունը Հնդկաստանում, որն անխուսափելիորեն կավարտվի կաթվածահար անելով կամ առնվազն նշանակալից չափով կասեցնելով Մեծ Բրիտանիայի գործողությունը տաթբեր ռազմաճակատներում, կարող էր փոխարենն ունենալ անամոքելի հետևանքներ: Ուստի, արդյոք մեր թշնամիներն ամենից առաջ հենց այդ ապստամբության հրահրո՞ւմը չէ, որ նկատի են ունեցել, երբ իրենց համար ճանապարհ են հարթել դեպի Կովկաս: Հարկ է, որ Լոնդոնի նախարարների խորհուրդն ամենից առաջ այս մասին հստակ պատկերացում ունենա:

(A.M.A.E., Guerre 1914-1918, Turquie, tome 895, ff. 296-300 v).

Ամերիկյան ռազմական ներկայացուցիչը՝ Ռազմական նախարարության Գերագույն խորհրդին կից Ֆրանսիական ռազմական ներկայացուցչին՝

Թարգմանություն:

28-ը ապրիլի 1918 թ.:

1 Գեներալ Բեյլինը:

1/ Ամերիկյան ռազմական ներկայացուցիչը խոնարհվում է իր գործընկերների առջև և պատիվ ունի նրանց հղել սրան կից ապրիլի 25-ի թվակիր կաբելախեռագրի պատճենը, որը ստացել է իր կառավարությունից՝ Կովկասում տիրող իրավիճակի վերաբերյալ:

2/ Գեներալ Բլիսսը մտադիր է ռազմական ներկայացուցիչների առաջիկա հավաքի ժամանակ իր գործընկերների քննությանը հանձնել այս հաղորդագրության բովանդակության վրա հիմնվող որոշման նախագիծը:

Ստորագրված է՝ Թասքեր Հ. Բլիսս, գեներալ, շտաբի պետ, ամերիկյան ռազմական ներկայացուցիչ:

(A.M.G., 4 N 62).

ՀԱՎԵԼՎԱԾ

Պետական Դեպարտամենտը՝ Փարիզում Միացյալ Նահանգների դեսպան պ. Վիլյամ Շարփին

Հ:

Վաշինգտոն, 25-ը ապրիլի 1918 թ.:

Պետական Դեպարտամենտին՝ դեսպանության հղած թիվ 3675 ապրիլի 20-ի թվակիր հեռագրի կապակցությամբ. Դեպարտամենտը Թիֆլիսից ստացել է մարտի 10-ի, 11-ի և 12-ի թվակիր տարբեր հեռագրեր՝ Թեհրանով: Այս հեռագրերը Կովկասում տիրող իրավիճակը ներկայացնում են իբրև խիստ ճգնաժամային: Թուրքերն առաջանում են և հայերը ենթակա են ոչնչացման: Եթե այս վերջիններս, ինչպես հարկն է, առաջնորդվեն և ֆինանսավորվեն, կարող են ռազմական տեսանկյունից ներկայացնել ահռելի ուժ: Եթե ցանկություն կա փրկելու իրավիճակը, այդ տարածաշրջաններում գործող բրիտանական առաքելությունը պետք է գործադրի ավելի ծավալուն եռանդուն գործունեություն: Մեր հյուպատոսը Թիֆլիսում՝ հաղորդում է, որ գերմանական ծրագիրը հանգում է տեղաբնակ մահմեդական ժողովուրդներին օգտագործելուն և իրականացման ընթացքում է, որ թուրքական և թաթարական զորքերը վերազգեստավորվել են ինչպես տեղաբնակներ, որ թուրքերի նկատմամբ բարեհաճ տրամադրված մահմեդական առաջնորդներին շոայրդեն դրամ է հատկացվում, և որ նրանք տեղազին հապճեպությամբ ձգտում են անկարգություններ հրահրել, որ Թեհրեթի կազակները և մահմեդական ցեղերը պայքարի մեջ են, որ Հայաստանի գյուղերը և նրանց կայազորները մշտապես ենթակա են մահմեդականների՝ գուցե անարյունավետ, հարձակման, որ իրադրությունը սրվել է դաշնակիցների անգործունեության հիման վրա: Թուրքերը ցանկանում են գրավել Կովկասի մի մասը, վրացիները վճռել են համագործակցել հայերի հետ: Հայերն իրենց շարքերում ունեն 15000 օսմանյան հպատակներ և 25000 ռուս, որոնց հետ հույսեր են տածում իրենց ռազմաճակատի պաշտպանության համար: Պատշաճ միջամտությունն ի վիճակի կլինի հանգեցնել 30000 վրացու զորակոչմանը: Նրանց վարչապետը հայցում է օգնություն և միջամտություն: Նա ասում է, որ հայերը և վրացիները կդիմադրեն թաթարական առաջխաղացումներին: Այդուհանդերձ,

1 Պ. Վիլյուգիի Սմիթը:

առանց շուտափույթ ֆինանսական օգնության և առանց հույս տածելու ռազմական օգնության հետ ապագայում, նրանք չեն կարողանա խանգարել վերջիններս՝ այն տարածքների ռազմակալմանը, որոնց նրանք հավակնում են Կովկասում: Եթե անհասպար միջոցներ չձեռնարկվեն, այդ ռազմակալումը, ինչպես նաև ռազմակալված տարածքներում հայերի կոտորածը, գրեթե հավաստի է: Միևնույն վայրագետը հայտարարում է, բացի դրանից, որ Սև ծովի ռուսական նավատորմի նավաստիներն իրեն առաջարկել են գնել իրենց ականակիրները, հաճանավերը, փոխադրամիջոցները և սննդամթերքների պաշարները: Նա ավելացնում է, որ եթե դաշնակիցները ձեռք չբերեն այդ նավերն ու սննդամթերքների պաշարները՝ ռուսները դրանք կվաճառեն թուրքերին:

Մեր հյուպատոսն այն կարծիքին է, որ 2000000 ռուբլի պետք է գետեղվի Լոնդոնի բանկում՝ Թիֆլիսում բրիտանական առաքելության ղեկավարի հաշվին, որը կարողանա օգտագործել այդ գումարն ըստ իր հայեցողության՝ ռազմական բոլոր կարիքների և Սև ու Կասպից ծովերի նավատորմերի հնարավոր գնման նպատակով: Բանակցությունները կարող են վստահվել Դյունսթրիֆիլին, Թափփինգին կամ Իրևե մեկ այլ հմուտ բանակցություններ վարողի: Մեր հյուպատոսն առաջարկում է, որ բացի դրանից, Լոնդոնի բանկում իր հաշվին գետեղվի 2000 (?) ռուբլի: Նա այդ գումարը լավագույնս կօգտագործի հանուն հայ ժողովրդի շահերի և կջանա կամիսել նրա բնաջնջումը: Նրա ծրագիրը հանգելու է գեներալի, ռազմամթերքների և սննդամթերքների պաշարների կենտրոնացմանը Ռուսահայաստանի երեք մեծ լեռնային զանգվածներում: Քանի որ այս զանգվածները կվերածվեն հենակետերի, հայկական բանակը, պարտության պարագայում, կկարողանա այդտեղ դիրքեր գրավել և դրանք ձեռքում պահել վեց ամիս շարունակ: Եթե դրանական այս առաքումները կատարվեն, վարչապետը խոստանում է ձեռքից բաց չթողնել Բաքուն, որպեսզի հաղորդակցություններն անգլիացիների և հյուսիսային կովկասցիների հետ մատչելի պահի:

Հայ կաթողիկոսի հատուկ բանագնացը Վաշինգտոնում հայտարարել է, որ եթե Թիֆլիսում ամերիկյան հյուպատոսին թույլատրվի երաշխավորել փոխառությունը, հավանաբար, հնարավոր կլինի դրամ ստանալ հայկական բանկերից կամ գործառնություններից, որոնք այս կերպ հնարավորություն կունենան իրենց դրամը գետեղել սոցիալիստների կամ թուրքզերմանացիների ոտնձգություններից ապահով տեղում:

Բարեհաճեք տեղեկացնել այս հեռագրի բովանդակությանը Ռազմական նախարարության Գերագույն խորհրդին և իրավիճակը նրա ուշադրությունը հայ կամավորների հիշատակված թվի վրա: Դեպարտամենտը տեղեկացել է, որ այն պահից ի վեր, ինչ ինքը Թիֆլիսից ստացել է այս լուրերը, հայ զինվորների թիվն աճել է: Այս հաղորդումները կարող են ճիշտ լինել, եթե հայկական զինված անձնակազմերն, ամենայն հավանականությամբ, վերագրաված լինեն Վանը և եթե կոիվների մեջ ընդգրկված լինեն թաթարների հետ Բաքվում:

(A.M.G., 4 N 62).

Սեպտեմբերի 1918 թ. 10-ի հաղորդումը...

Ռ-ազմական նախարարության Գերագույն խորհրդի ամերիկյան ներքաբաժնի ծանուցագիրը Ռ-ազմական նախարարության Գերագույն խորհրդին կից դաշնակիցների ռազմական մշտական ներկայացուցիչներին

Թարգմանություն:

29-ը ապրիլի 1918 թ.:

Ամերիկյան ռազմական մշտական ներկայացուցիչը պատիվ ունի իր գործընկերների քննությանը հանձնել սրան կից ճեպագիրը, որը հենց նոր է ստացվել Վաշինգտոնի Պետական Դեպարտամենտից.

«Հայ կաթողիկոսի հատուկ բանագնացը Վաշինգտոնում իր հավատարմատարների անունից հենց նոր Դեպարտամենտին հղեց մի հաստատական կոչ: Այդ կոչում նա հաղորդում է, որ 15000 հայից և վրացուց բաղկացած մի բանակ կարող է ոտքի հանվել, այն պայմանով, որ դաշնակիցները ցուցաբերեն էական ֆինանսական օժանդակություն:

Պետական Դեպարտամենտը երջանիկ կլինի, եթե իրազեկ դառնա Ռ-ազմական նախարարության Գերագույն խորհրդի կարծիքներին օգնության հարցի շուրջ, որն, ընդհանուր առմամբ, հարկ է ցուցաբերել հայերին, հաշվի առնելով Կովկասում ստեղծված ծանր կացությունը:

Ստորագրված է՝ Լանսինգ»:

Ամերիկյան ռազմական մշտական ներկայացուցիչը մտադիր է առաջիկա նիստի ժամանակ իր գործընկերներից հարցնել նրանց տեսակետներն այս հարցի շուրջ:

Գեներալ Թասեր Ն. Բլիսս,
Գլխավոր շտաբի պետ,
ամերիկյան ռազմական մշտական ներկայացուցիչ:

(A.M.G., 4 N 62).

Վաշինգտոնում Ֆրանսիայի դեսպան պ. Ժյուսսերանը՝ Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին

Ճ. թիվ 195:

Վաշինգտոն, 29-ը ապրիլի 1918 թ.:

Այս ամսի 24-ի «Օֆիսիալ բյուլետենում» տպագրված մի ծանուցագիր իրազեկ է դարձնում այն վարկերի գումարին, որն ամերիկյան Կարմիր խաչն առանձնացրել է հայերին և

սիրիացիներին օգնելու համար:

Մինչև առաջիկա հուլիսի 1-ը ծախսերը մարելու համար՝ այդ նպատակներով մուծված ամբողջ գումարները հասնում են 1200000 դոլարի:

Օգնության առաքումները կշարունակվեն, քանզի Կարմիր խաչը գտնում է, որ դրանք դադարեցնելն, իբրև հետևանք, կհանգեցնի մահացության սոսկալի աճի:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, Arménie, tome 1, f. 38).

Կովկասում Ֆրանսիայի ռազմական առաքելության ղեկավար, փոխգնդապետ Շարդինյին՝ Ռուսաստանում Ֆրանսիայի ռազմական կցորդ, գեներալ Լավերնյին

Ճ. թիվ 98:

Թիֆլիս, 16/29-ը ապրիլի 1918 թ.:

Ես պատիվ ունեմ ձեզ հղել սրան կից.

1/ Անդրկովկասյան սեյմի պատվիրակության զեկուցագիրը, որը վերաբերում է Թուրքիայի հետ հաշտության բանակցությունների ղեկավարմանը՝

2/ Տրապիզոնի կոմֆերանսի տարբեր փաստաթղթեր և հետագա շրջանի մի քանի հեռագրեր՝:

Այս փաստաթղթերից հետևում է, որ Տրապիզոնի պատվիրակության նախագահ պ. Չիսենկելին, Արտաքին գործերի նախարարը, որը կառավարությունից լիիրավ իրավունքներ է ստացել հաշտություն կնքելու համար, մարտի 28-ին/ապրիլի 10-ին, ընդունել է, ի դեպ, մյուս բոլոր լիազոր ներկայացուցիչների հետ, Կովկասին վերաբերող Բրեստ-Լիտովսկի պայմանագրի պայմանները, որոնց շուրջ թուրքական պատվիրակությունը երբևէ չի համաձայնվել փոխզիջումների միջոցով պայմանավորվածություն կայացնել:

Երեք օր ավելի ուշ, մարտի 31-ին/ապրիլի 13-ին, Բաթումի հանձնման նախօրեին, սեյմը հաշվի առնելով Կովկասի համար Բաթումը, Արդահանը և Կարսը զիջելու անհնարինությունը, գրեթե միաձայն քվեարկել է պատվիրակությանը ետ կանչելու, պատերազմը շարունակելու օգտին և հայտարարել է բանակի նոր գորակոչ:

Պ. Չիսենկելին մի քանի օր անց պատվիրակության հետ վերադառնում է Թիֆլիս և խոցված, որ իրեն զինաթափել են՝, անհապաղ սկսում կառավարության դեմ ուղղված քաղաքային, որին մեղադրում էր Անդրկովկասի բուն շահերը չզիտակցելու համար: Տրապիզոն կատարած այցի ընթացքում, Չիսենկելին և բոլոր լիազոր ներկայացուցիչները հիմնավորապես կրել են թուրքական պատվիրակության ղեկավար Ռեուֆ բեյի՝ օսմանյան Ռ-ազմածովային նախարարության շտաբի պետի ազդեցությունը, որը շատ կիրք մարդ է, շատ

1 Չի հայտնաբերվել:

2 Չեն հայտնաբերվել:

3 Ըստ համատեքստի՝ իր հետ չեն համաձայնվել: (Բնագրում՝ désarmé, իմա՝ désavoué - Ծ. թ.):

հաճելի հարաբերություններ հաստատող և կայացած դիվանագետ: Վերջինիս փաստարկներն անբավարար չեն եղել. մի կողմում՝ խառնաշփոթ մատնված Ռուսաստանն է, որից վաղուց ի վեր ոչինչ չի կարելի հուսալ, Անտանտի տերություններն են և, մասնավորապես, Անգլիան, որն անգործ է Կովկասին օգնության հասնելու, իսկ մյուս կողմում՝ Գերմանիան է, որն այսուհետև՝ ազատ է գրեթե իր բոլոր ուժերն արևմտյան ռազմաճակատում կենտրոնացնելու համար և ամենուր տարածում է ֆրանսիական ռազմաճակատում հրաշալի հաղթանակների լուրը, և Տրապիզոնի ու Էրզրումի տեր ու տնօրեն Թուրքիան, որն սպառնում է Կարսին և Բաթումին:

Մյուս կողմից, Ռեուֆ բեյն ի դեմս պատվիրակության գտնում էր լավ նախապատրաստված հող: Թաթարներն ի սկզբանե նրա կողմն էին անցել: Վերջին հունվարին Ելիզավետպոլում տեղի ունեցած անկարգություններից հետո, որտեղ բեկերի ու խաների բազմաթիվ ընտանիքների կոտորել են նրանց հողը մշակող գյուղացիները, թաթարական ազնվականությունը թուրքական իմպերիալիստական վարչակարգից սպասում է միայն կարգ ու կանոն, որի կարիքն ունի պահպանելու համար իր արտոնությունները և տիրույթները: Վրաց լիազոր ներկայացուցիչներն ի վնաս հայերի, ըստ էության, պատրաստ էին ցանկացած զիջման՝ պահպանելու համար Բաթումի իրենց նավահանգիստը: Այն օրը, երբ Բաթումն անցնում էր թուրքերի տնօրինության տակ, նրանց մնում էր միայն խոնարհվել կատարված փաստի առջև ու տեղ գրավել թաթարների կողքին՝ փոքրիշատե ինքնավար Վրաստանում ստանալու համար առավել բարենպաստ վարչակարգ: Մնում էին հայ լիազոր ներկայացուցիչները: Նրանց հաղթելու համար Ռեուֆ բեյը դիմել է սպառնալիքի, որն ուղղված էր Թուրքիայում, Կոստանդնուպոլսում և Միջագետքում դեռևս կենդանի մնացած 200000 հայի և հենարան չունեցող ու մահմեդական ժողովուրդների շրջապատում մեկուսացված ռուսահայերի դեմ:

Գեգեչկորու կառավարության քաղաքականության իրականացումը, որը հետամուտ է պատերազմի շարունակմանը, հնարավոր էր միայն թաթարների դեմ ուղղված՝ հայերի և վրացիների միջև դաշինքի պայմանով: Եթե հաղթանակներ վրացական հաշտության կուսակցությունը, խաղը տանուլ կտրվեր: Հենց դա էլ տեղի ունեցավ:

Չխենկելու վերադարձից մի քանի օր անց, Վրացական ազգային կոմիտեն խույս տվեց իր տեսակետից և սեյմը, ապրիլի 9/22-ի նիստում, ամբողջությամբ փոխելով իր դիրքորոշումը, միասնաբար, երեք ձայնի պակասով, որդեգրեց միևնույն քաղաքականությունը. «Անդրկովկասի անկախություն: - Բանակցությունների վերսկսում Թուրքիայի հետ՝ «բարեկամության պայմանագիր» կնքելու համար, բանակցություններ, որոնց մասնակից կդարձվեն Թուրքիայի դաշնակիցները»:

Միաժամանակ, պ. Չխենկելին ստանձնում էր նոր կառավարություն ձևավորելու առաքելությունը:

Կարելի էր զարմանալ, որ հայկական դաշնակցական կուսակցությունը նմանապես քվեարկել է անկախության օգտին: Նա քննարկմանը չի մասնակցել: Կուսակցության մի անդամ սահմանափակվել է հայտարարելով. «Սեյմի դաշնակցական խմբավորումը, գիտակցելով այն մեծ պատասխանատվությունը, որը ստանձնում է, միանում է Անդրկովկասի անկախության հռչակմանը»:

Միասնական բողոքը կարող էր թվալ ավելի տրամաբանական և ավելի ազնվաբար: Դաշնակցական կուսակցության ղեկավարներն ինձ բացատրել են, որ իրենց քվեարկությունը պայմանավորված է եղել իրենց ժողովրդի գոյությունը փրկելու անհրաժեշտությամբ: Ես արդեն հիշատակեցի Ռեուֆ բեյի սպառնալիքները Տրապիզոնում: Սեյմի նիս-

տից առաջ թաթարները և վրացիները հայտնել են հայերին, որ նրանցից մերժման պարագայում՝ իրենք կհռչակեն իրենց անկախությունը: «Արևելյան Անդրկովկասի» անկախությունը հռչակելու հարցում վճռականությամբ լի էին, մասնավորապես, թուրքերի հետ համաձայնության եկած թաթարները, որը, բացառությամբ Վրաստանի, ընդգրկում էր Կովկասի թաթարական բոլոր շրջանները և այն շրջանները, որտեղ մահմեդականներն ու հայերը բնակվում են համատեղ: Դա մի նոր ներքին պատերազմ էր, որը դաշնակցական կուսակցությունն անհրաժեշտ չի համարել պարտադրել հայ ժողովրդին: Վերջինս, ի դեպ, չի ընթրնել իր առաջատար կուսակցության դիրքորոշումը և դաշնակցական կոմիտեն ամեն օր հայկական մահաճգններից հեռագրեր է ստանում, որոնք բողոքարկում են Անդրկովկասի անկախության առիթով նրա քվեարկությունը:

«Անդրկովկասի դաշնային և դեմոկրատական հանրապետության» հարցի շուրջ ամբողջական լինելու համար, ես կավելացնեմ, որ Հյուսիսային Կովկասի մահմեդականների լիազոր ներկայացուցիչները՝ չեչենցիները [sic] և դադստանցիները [sic] հենց նոր մեկնել են Կոստանդնուպոլիս. նրանք ևս այնտեղ հռչակել են իրենց երկրի անկախությունը և Անդրկովկասի հետ այն միավորելու ցանկություն են հայտնել:

Թուրք-գերմանական ծրագիրն, այսպիսով, Կովկասին վերաբերող հարցում, շուտով կիրականանա: Կովկասը, ինչպես նաև Ուկրաինան և Ղրիմը, կդառնան կենտրոնական տերությունների խմբակցության կամակատարը: Ես մույնիսկ հավատում եմ ռազմակալման հնարավորությանը: Բաքվի բուլշևիկների դեմ՝ թուրքական զորքերի օգնությունը, որը Տրապիզոնում խնդրել էին մահմեդական լիազոր ներկայացուցիչները, խոստացվել է այն պայմանով, որ այն դառնա կառավարության պաշտոնական խնդրանք: Եթե կառավարությունը չի կարող միայն իր ուժերով հաղթել բուլշևիկներին կամ, եթե նա ի վիճակի չէ պահպանելու կարգ ու կանոնը երկրում, կասկածից վեր է, որ կարող է դիմել թուրքական զորքերին:

Ռազմակալումը տեղի կունենա¹, թե ոչ, Ռուսաստանի հետ խզման և Անդրկովկասի թուրք-գերմանական կողմնորոշման հեռանկարները կլինեն միևնույնը.

- 1/ Գերմանացիների կողմից երկրի օգտագործումը տնտեսական առումով՝ պատերազմական կարիքների համար (նավթ, պղինձ, մանգան):
- 2/ Թուրքական վարկի բարձրացում Կովկասի և Պարսկաստանի մահմեդական երկրներում:
- 3/ Պարսկաստանում անգլիական ազդեցության փոխարինում գերմանական ազդեցությանը:
- 4/ Թուրքեստանում և Աֆղանստանում պանիսլամական² և հակաանգլիական շարժման ան:

(A.M.G., 6 N 220).

1 Փաստաթղթի ծանոթագրությունը. «Կովկասի պղնձի գործարանները ներկայումս ունեն 80000 փուր պղնձի պաշարներ և կարող են տարեկան արտադրել 5-ից 600000 փուր: Այժմ Փոթու նավակայաններում կա 22 միլիոն փուր մանգան»:

2 Փաստաթղթի ծանոթագրությունը. «Ես արձանագրում եմ մի հայտարարություն, որն այսօր ինձ արել է կառավարության անդամներից մեկը:

Գերմանացիները պետք է ջանան դառնալ Բաքվի տեր ու տնօրենը, այնպես, որ կարողանան Կրասնովոդսկով և Մեթվով որոշ թուրքական զորքեր և գերմանական հրամանատարական անձնակազմեր փոխադրել Աֆղանստան՝ երկրում անգլիացիների դեմ ապստամբության բռնկմանն օգնելու և այս ձևով Հնդկաստանում հուզումներ հրահրելու նպատակով: Մահմեդական բանագնացները, որոնք այս տարվա սկզբից ուղարկվել են Թուրքեստան և Աֆղանստան, այս ոգով արդեն խիստ բարենպաստ հող են նախապատրաստել»:

Սենի պատգամավոր պ. Ալբեր Տոմասը՝ Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշային

Ն:

Փարիզ, 30-ը ապրիլի 1918 թ.:

Եթե ես ձեզ զանգահարել եմ, ուրեմն զգացել եմ, որ իմ սիրտը հուզված է այն բոլոր նոր դժբախտություններից, որոնց տակ Հայաստանը կրում է և նպատակահարմար եմ գտնում, որ Հայաստանի բոլոր բարեկամները կրկին շարժում ձեռնարկեն, որպեսզի փորձեն կանխել նոր ողբերգությունները:

Ես ցանկանում եմ գրուցել ձեզ հետ այս հարցի շուրջ: Այդ պահից ի վեր, ես տեսել եմ Վարանդյանին: Մենք պատրաստվում ենք աշխատել մեր հնարավորությունների սահմաններում լավագույն ձևով, բայց ձեր շահավետ խորհուրդները մեզ համար, այնուամենայնիվ, արժեքավոր կլինեն, երբ դուք վերադառնաք Փարիզ:

Զանի որ ձեզ այդտեղ գամողը տիկին Նուբարի առողջական վիճակն է, ես ինձ բույլ եմ տալիս այս նամակին հավելել արագ ապաքինման իմ ամենասակեղձ ցանկությունները:

(A.N., 94 AP 408).

Արտաքին գործերի նախարարը՝ Թիֆլիսում Ֆրանսիայի հյուպատոս պ. Նիկոլային

Հ. թիվ 13:

Փարիզ, 30-ը ապրիլի 1918 թ., ժ. 12-ին:

Բարեհաճեք Նուբար փաշայի անունից Թիֆլիսում փոխանցել՝

- 1/ Էջմիածին՝ կաթողիկոսին.
- 2/ Թիֆլիս՝ Հայկական ազգային մշտական խորհրդին.
- 3/ Թիֆլիս՝ Անդրանիկին.
- 4/ Թիֆլիս՝ դ. Նոկտոյր Չավրիկին.
- 5/ Թիֆլիս՝ գնդապետ Թորգոմին:

«Թուրքերը ձեռնամուխ են եղել լրագրային արշավի, նպատակ ունենալով հավատ ներշնչել, որ հայ զինվորները մեղավոր ճանաչվեն Թուրքահայաստանում բնակվող մահմեդականների հանդեպ գործած վայրագությունների համար: Այդ մեղադրանքների ստահող բնույթը, որի հեղինակներն ակնհայտորեն նպատակ են ունեցել ազդել քաղաքակիրթ հասարակական կարծիքի վրա և այն հակել ընդունելու, որ Հայաստանը մնալու է բուրքական տիրապետության տակ, մեզանում որևէ կասկած չի հարուցում: Մենք, այդուհանդերձ, ձեզ

1 Ստորագրել է պ. Գում:

խնդրում ենք, որքան հնարավոր է արագ, մեզ ուղարկել անհրաժեշտ մանրամասներ, որպեսզի մեզ հնարավորություն ընձեռեք այդ մեղադրանքները հողմացրիվ անել: Այն պարագայում, երբ անհատական բռնություններ են գործադրվել նախորդ հանցանքների համար պատասխանատու մեղավորների դեմ, մենք ձեզ երախտապարտ կլինենք. եթե մեզ ճշգրտորեն տեղեկացնեիք այն հանգամանքներին, որոնցում այդ բռնություններն իրագործվել են:

Սույն հեռագիրը անվավեր է դարձնում այն հեռագրերը, որոնք ձեզ էին հղվել 16 և 25 համարների ներքո ու փոխարինում է դրանց:

(Ստորագրված է) Պողոս Նուբար»:

(A.M.A.E., Guerre 1914-1918, Turquie, tome 889, f. 236).

Պ. Միքայել Վարանդյանը՝ Սենի պատգամավոր պ. Ալբեր Տոմասին

Փարիզ, 30-ը ապրիլի 1918 թ.:

Ահա այն ընկերոջ ազգանունը և հասցեն, որն ինձ կփոխարինի կոմիտեում.

Վ. Նաֆիլյան

9, Մեծ-Շոմիերի փողոց:

Նրան, հավանաբար, կօգնի մեկ այլ ընկեր՝ Ա. Հանեմյանը:

Ես մեկնելու եմ երեքշաբթի կամ չորեքշաբթի, երբ ստանամ ֆրանսիական կառավարության թույլտվությունը:

Խիստ սրտանց ձեր նկատմամբ:

(A.N., 94 AP 204).

Կովկասում Ֆրանսիայի ռազմական առաքելության ղեկավար, փոխգնդապետ Շարդինյին՝ Ռուսաստանում Ֆրանսիայի ռազմական կցորդ, գեներալ Լավերնյին

Ճ. թիվ 99:

Թիֆլիս, 1-ը մայիսի 1918 թ.:

Ես պատիվ ունեմ ձեզ հաշվետու լինել, որ ապրիլի 3-ից 7-ը Կարսի ռազմաճակատում ուղեկցել եմ Կովկասի ռազմաճակատի գլխավոր հրամանատար, գեներալ Լեդեբինսկուն՝ պատկերացում կազմելու համար հայկական գործերի կացության և այն հույսերի մասին, որոնք կարելի է կապել նրանց հետ:

Այդ ճանապարհորդության ընթացքում, ես առիթ ունեցա տեսնել ռազմելության գործերը, Կարս և Ալեքսանդրապոլ բերդաքաղաքները:

1. Ռազմելության գործերը. Էրզրումի գրավումից հետո¹, այն գործերը, որոնք այդտեղ էին գտնվում և այն լքել էին առանց մարտի՝ այնտեղ բողոքելով հսկայական քանակությամբ ռազմամթերքներ (350 ժամանակակից բնդանոթ, որոնք առանձնացրել էին Կարս բերդաքաղաքից 1916 թ.), առանց կարգ ու կանոնի նահանջում էին դեպի Սարիղամիշ:

Նրանք ընդգրկում էին.

1/ Չևափուման ընթացքում գտնվող Էրզրումի գունդը և Երզնկայի գունդը², գնդապետ Մորելի նախկին ստորաբաժանումը, որը բաղկացած էր Թուրքեստանի 4-րդ դիվիզիայի հայ զինվորներից:

2/ Հայ հրաձիգների 1-ին գունդը, որը դասալքության հետևանքով նուրազել էր՝ մինչ 300 սվինի:

3/ Լեռնային մարտկոց՝ բաղկացած 4 հրանոթից:

Սարիղամիշում այս անկազմակերպ գործերը ստացան հրաձիգների 7-րդ գնդի աջակցությունը և մարտ անսի ընթացքում աստիճանաբար հզորացան Քնիս-Քալայից [sic] նահանջած 2-րդ և Երևանից եկած 4-րդ գնդերի շնորհիվ (երկուսն էլ բաղկացած էին միայն երկու գումարտակից):

Ելնելով այն մտավախությունից, որ թուրքերը կարող են վերսկսել 1914 թ. գորաշարժը և շրջանցել իր աջը, 1-ին հայկական դիվիզիայի հրամանատար, գեներալ Արիեշովը, (շտաբը Սարիղամիշում է), հենց որ 36-րդ դիվիզիայի առաջին կանոնավոր գործերը Բարդուսի կողմից հայտնվեցին իր աջում, դեպի Բեգլի-Ահմեդի դիրքերը՝ նահանջելու հրաման արձակեց: Վերջին ստորաբաժանումները դուրս բերվեցին Սարիղամիշից մարտի 23-ին/ապրիլի 4-ին, սննդամթերքային պաշարների և գույքի մեծ մասը ոչնչացնելուց հետո: Նահանջն իրականացվեց կարգ ու կանոնով, առանց թշնամու գործադրած ճնշման:

ա/ Բեգլի-Ահմեդի ստորաբաժանումը. Ապրիլի 6/19-ին, մեր ժամանման օրը Բեգլի-Ահմեդ, գեներալ Արիեշովի ստորաբաժանումը զբաղեցնում էր 20 վերստի հասնող մի ռազմաճակատ, որն ընդհանուր առմամբ անցնում էր բարձրավանդակի եզրով և Սարիղամիշի կիրճերի ելքերի և Բարդուսի ու Կաղզվանի ուղղությունների վրա իշխող մի քանի բարձունքներով:

Այն ընդգրկում էր.

- Մորելի բրիգադայի աջ կողմում Երզնկայի գունդը - 1 գումարտակ
Էրզրումի գունդը - 1 գումարտակ
- կենտրոնում հրաձիգների 2-րդ և 4-րդ գնդերը 4 գումարտակ
- ձախ կողմում հրաձիգների 1-ին գունդը 2 գումարտակ
Քնիս-Քալայի [sic] գունդը 1 գումարտակ

1 Փաստաթղթի ծանոթագրությունը. «27-ը փետրվարի/12-ը մարտի. թուրքերը մուտք էին գործել Երզնկա հունվարի 31-ին/փետրվարի 13-ին»:

2 Փաստաթղթի ծանոթագրությունը. «Էրզրումի գունդը և Երզնկայի գունդը կազմում են հայ հրաձիգների հատուկ դիվիզիայի 2-րդ գումարտակը»:

3 Փաստաթղթի ծանոթագրությունը. «Կարսից 25 վերստ դեպի հարավ-արևմուտք»:

- Բեգլի-Ահմեդի պահեստագործ հրաձիգների 7-րդ գունդը.....2 գումարտակ
ռուսական գումարտակը.....450 ռուս սպաներ
և զինվորներ:

Բացի դրանից, ստորաբաժանումն իր տրամադրության ներքո ուներ.

- 3 դաշտային մարտկոց (12 հրանոթ), մեկ լեռնային մարտկոց և ուսումնական մարտկոցի 2 գնդացիք.

- 3 հեծելազորային լավ գնդեր, հայկական բանակի կորպուսի 1-ին և 2-րդ գնդերը, հրաձիգների հատուկ դիվիզիայի հեծելազորային գունդը (3 հարյուրյակ):

- Սակրավորների մեկ վաշտ:

Ընդհանուր առմամբ.	12 գումարտակ - 6000 սվին
	11 հարյուրյակ - 1100 սուսեր
	4.5 մարտկոց - 18 հրանոթ:

Ապրիլի 6-ին, թուրքական 36-րդ դիվիզիան գրոհ էր ձեռնարկել ռազմաճակատի ամբողջ երկայնքով: Նրա գլխավոր հարվածն ուղղվել էր, մասնավորապես, երկու քեռի դեմ: Սասանելու համար հայկական նուրաստեղծ գործերը, թուրք հրամանատարն առավոտյան ժամը 3-ին զիշերային գրոհ էր ձեռնարկել ձախ քեռի գլխավոր հեռակետի դեմ, որն ընկել էր պաշարողի ձեռքը: Այն պահին, երբ մենք Բեգլի-Ահմեդ էինք ժամանում, պահեստագործ մի մասը, ռուսական գումարտակը և 1-ին հեծելազորային գնդի 4 հարյուրյակներն ուղղություն էին վերցրել դեպի ձախ քեռ՝ իրավիճակն այնտեղ շտկելու համար: Ռուսական գումարտակը մեր առջևից անցավ շատ լավ շարասյունով, նրա անձնակազմի մեկ երրորդը բաղկացած էր սպաներից, հեծելազորը լավ պահված վիճակում էր, կարող էր առաջ ընթանալ միայն քայլքով և սահմանափակ հնարավորություններ ուներ: Այս հակահարձակմամբ հաջողվեց թուրքերից ետ վերցնել դիրքը և այն 2 գնդացիքը, որոնք զիջել էին առավոտյան:

Այն գործերը, որոնց ես առիթ ունեցա տեսնելու գործողության ընթացքում, նյութապես լավ վիճակում էին, բայց նրանք բավարար պատրաստվածություն և համախմբվածություն չունեին, քանի որ մեծ մասը կրակը տեսնում էր առաջին անգամ. նրանք, ինչպես ինձ թվաց, անհրաժեշտ հավատ չունեին իրենց նկատմամբ: Կապի ծառայությունը վատթար վիճակում էր: Մի քանի ստորաբաժանումներ, ինչպես Մորելի բրիգադայի 2 գունդը, որոնք սկսած Երզնկայից և Էրզրումից նահանջում էին, խիստ նվազ ռազմական արժեք ունեին և արդեն բազմաթիվ անգամներ խնդրել էին իրենց փոխարինել: Այս 2 գունդը, անսի 6-ի երեկոյան, թուրքական գրոհի հետևանքով նահանջեցին, առանց անհրաժեշտ դիմադրություն ցուցաբերելու և ստորաբաժանման հրամանատարը, իր աջ քեռի դեմ ուղղված այս սպառնալիքին ի տես, չնայած իր ձախ քեռի հակահարձակման հաջողությանը, հարկադրված եղավ իր գծից նահանջել 3-ից 4 վերստ: Օրվա կորուստները հասան 360 սպանվածի, վիրավորի և անհետ կորածի:

Հորդառատ անձրևը, որը շարունակվեց ապրիլի 7-ի և 8-ի ընթացքում, հանգեցրեց նորաստեղծ այս գործերի բարոյական ոգու սասանմանը: Չնայած թուրքական կանոնավոր ուժերի սակավությանը (36-րդ դիվիզիան և 9-րդի մի մասը, 4-ից 5000 սվին ու լեռնային 3 մարտկոց), որոնց ուղեկցում էին երկրամասի 2000 քուրդ, Բեգլի-Ահմեդի ստորաբաժանումը չկարողացավ պահպանել դիրքերը բաց դաշտում և այս կերպ Կարսի կայազորին հնարավորություն ընձեռել ավարտին հասցնելու բերդաքաղաքի պաշտպանության կազմակերպումը: Ամսի 11-ին, թշնամու ճնշմամբ, ստորաբաժանումը նահանջում էր դեպի բերդամրցի առաջապահ դիրքերը: Թուրքական կառավարությունն ընթրնեց առանց կանգ

առնելու իր հարձակմանը հետամուտ լինելու անկասկածաշուշանը, որպեսզի ավելի ուշ իր առջև չունենա մի թշնամու, որի հետ հարկ կլինի հաշվի նստել:

բ/ *Երևանի ստորաբաժանումը*. Երևանի ստորաբաժանումը (6-ից 7000 սվին և 18 հրանոթ)՝ 2-րդ դիվիզիայի հրամանատար գեներալ Սելիբովի [sic]՝ գլխավորությամբ պահպանում է Կաղզվանի և Արարատի միջև ձգվող սահմանը (Լարաբրիխայի և Բայազետի ուղղությամբ): Այն բաղկացած է 3 խմբավորումից.

1/ Դեպի Կուլա գտնվող պարտիզանների գնդից.

Մահմանապահների գունդը, Մալաբիխուի հրաձիգների 5-րդ գունդը, հայկական 2-րդ և 3-րդ հատուկ բրիգադաների բեկորները (մոտավորապես 2000 թուրքահայ):

Ստորաբաժանման պատակակետերը գրառեցե՛քում են տասնամային շրջայի լեռնանցքները.

3/ Երևանի պահեստագործից 4-րդ գնդի 1 գումարտակ 2 դաշտային մարտկոց:

գ/ *Անկախ վերը թվարկված ուժերից.*

- 6-րդ գնդին (3 գումարտակից բաղկացած) հանձնարարված է Երևանից Ջուլֆա երկաթուղու հսկողությունը և երկու ամսից ի վեր թաքարների ընդհատած երթևեկության վերականգնումը²: Մի գումարտակ Երզնկայում է, 1 գումարտակ՝ Ղամարույում, մի գումարտակ երկայնքաշարանել է Ղամարուի և Շաշթաքթի միջև:

- 1 գումարտակ, մեկ մարտկոց, 2 հարյուրյակ ունեցող մեկ ստորաբաժանում կենտրոնացված է Ջուլֆայում՝ պարսկական սահմանը հսկելու և կարգ ու կանոն այն տարածաշրջանում պահպանելու համար, որը բնակեցված է, գրեթե բացառապես, թաքարներով:

- Երկու միմյանցից կախում չունեցող գումարտակ, յուրաքանչյուրը 600 մարդուց բաղկացած, մեկն Ախալքալաքում, մյուսը՝ Ախալցխայում, ընդգրկված են հայկական և վրացական խառը ստորաբաժանումների կազմում, որոնք գտնվում են վրացական բանակի կորպուսի հրամանատար գեներալի հրամանատարության ներքո:

II. *Կարս բերդաքաղաքը*. Ապրիլի 5-ին, կայագորը բաղկացած էր հետևակային 2 գնդից՝ Կարսի բերդամրոցի հայկական գնդից (նախկին պահեստային 3-րդ գնդից)՝ 22000 սվին ունեցող և հրաձիգների 3-րդ գնդից՝ 1400 սվին, 1800 հրետանավոր, ընդհանուր առմամբ՝ 5400 մարդ ունեցող:

Ես այցելել եմ՝ բերդաքաղաքի 3 ամբոթյունը՝ մի միանգամայն ժամանակակից ամբոթյուն, մի թուրքական հնամենի, վերակառուցված ամբոթյուն, մի ամբոթյուն, որը բաղկա-

1 Իմա՝ գեներալ Միլիկով:

2 Փաստաթղթի ծանոթագրությունը. «Յեւ մարտի 24-ի առաջինի 6-ի 94 գեներալգրքը»:

3 Փաստաթղթի ծանոթագրությունը. «Հրամանատար ղը Բուասաֆորին, որն ինձ ուղեկցում էր և պետք է մտնար Կարսում, բողոք բերդաքաղաքը միայն ապրիլի 9-ին»:

ցած է 1914 թ. կառուցված՝ կիսով չափ մշտական բնույթի ամբոթյուններից կազմված բազմաթիվ պաշտպանողական շինություններից: Յուրաքանչյուր ամբոթյունում տիրում էր կարգ ու կանոն, գույքը խնամված էր և լավ վիճակում, սննդամթերքների և ռազմամթերքների պաշարները լիովին բավական էին 6 ամսվա համար, սակայն յուրաքանչյուր շինության կայագոր՝ բաղկացած մեկ կամ երկու հետևակային (յուրաքանչյուրը 150 սվինից) և մեկ հրետանային վաշտերից, ուներ դեռևս խիստ մակերեսային ուսումնական պատրաստվածություն, որն ավարտին հասցնելու համար անհրաժեշտ կլիներ մեկ ամիս: Մեր աչքերի առջև, տազնապի ազդանշանի հիման վրա անցկացված վարժությունը բացահայտեց նրա թերությունները:

Սակայն ապրիլի 12/25-ին, 7 օր անց, թուրքերը բերդաքաղաքի մատույցներում էին և վերջինս նրանց հանձնեցին Խորհրդի նախագահ պ. Չխենկելու և Ռազմական նախարար, գեներալ Օղիշելիձեի հրամանով, որոնք առանց կառավարությանը հայտնելու, թույլատրեցին թուրքական զորքերին ամբոթյուններին մերձենալ ոչ ավելի, քան 2 կիլոմետր: Նախորդ ամսի ընթացքում զորքերի որևէ դուրս բերում հնարավոր չէր եղել՝ երկաթգծերում տիրող խառնաշփոթի պատճառով, և քանի որ թուրքերը, բնականաբար, մերժել էին զորքերի դուրս բերման համար որևէ ժամկետ, ցանկացած բնույթի ռազմամթերք, որը բերդաքաղաքում կուտակվել էր 40 տարուց ի վեր, ընկավ թշնամու ձեռքը, այդ թվում 868 հրետանային հրանոթ՝ ռազմամթերքներով և հետևակի ութ միլիոն փամփուշտ:

Ընդհանուր առմամբ, Կարսը՝ Թուրքիային դիմակայող ռուսական մեծ բերդամրոցը, մեծ նշանակություն ունեցող բերդաքաղաք էր:

Այն ներառում էր դիմադրության երեք գիծ.

1/ 1877 թ. նախորդած շրջանի թուրքական նախկին ամբոթյունների գիծը, որոնք խիստ մտ էին քաղաքին:

2/ 1877 թ. հետո կառուցված ամբոթյունների գիծը. 11 մեծ ամբոթյուններ, որոնցից մի քանիսն ամբողջությամբ վերակառուցվել են և ամրացվել միջանկյալ ամբոթյուններով ու մարտկոցներով:

3/ Դիմադրության արտաքին գիծը, որը չօգտագործվեց կայագորի թվական սակավության պատճառով և որը բաղկացած էր, իբրև առջևում գտնվող դիրք, հնարավոր գրոհի ուղղությամբ՝ 10 վերստ հեռավորությամբ երկու լեռնազանգվածից: 1914-1915 թթ. Կարս բերդաքաղաքն ամբողջությամբ կարգի էր բերել Ռուսաստանում լայն ճանաչում ունեցող և շատ գնահատված ինժեներային սպա, գեներալ Շվարցը, որն ավելի ուշ պետք է կազմակերպեր Էրզրումի և Տրապիզոնի ամրացված ճամբարները և որին այսօր հանձնարարված է Պետրոգրադի պաշտպանությունը: Աշխատանքներն ընդհատվել են միայն Էրզրումը գրավելուց հետո, 1916 թ. զարմանը:

III. *Ալեքսանդրապոլ բերդաքաղաքը*. Պատերազմի հայտարարման պահին, Ալեքսանդրապոլը մի հիմնավոր, հաշվարկից դուրս բերված բերդամրոց էր: Դեպի Սարիղամիշ թուրքերի գրոհից հետո, Կարսի հետ ունեցած հաղորդակցությամբ, այն վերափոխվեց իբրև 2-րդ գծի բերդաքաղաքի՝ նմանապես գեներալ Շվարցի ղեկավարությամբ: Այն բաղկացած է փակ տեսակի, կիսով չափ մշտական բնույթի հետևակային ռեդուտներից և միջանկյալ մարտկոցներ ունեցող 16² մեծ, անհասանելի պաշտպանողական շինություններ:

1 Փաստաթղթի ծանոթագրությունը. «Օգտագործելու համար միայն հարյուրը դրվեց հիմնական անձնակազմի արամադրության ներքո»:

2 Փաստաթղթի ծանոթագրությունը. «Արփաշայի աջ ափի պաշտպանողական երեք շինությունները հենց նոր են քանդել զորքերը՝ նահանգի պահին»:

րից: Բերդը, որտեղ գեներ չկար, սպառազինության մի մասը պետք է Կարսից ստանար, եթե թուրքական հարձակման սրընթացությունը թույլատրած լիներ դուրս բերել գույքն այս վերջին բերդից:

Փաստորեն, Ալեքսանդրապոլն այս վերջին ամիսների ընթացքում ծառայել է իբրև ուսուցման ճամբար, որտեղ համախմբված էին հայկական բանակային կորպուսի 8-րդ պահեստային գունդը, դաշտային հրետանային մի խումբ և սակրավորների մի գումարտակ:

Թուրքական հարձակումը կանգ է առել Ալեքսանդրապոլի առջև, 1877 թ. նախկին սահմանի մոտակայքում, որն անցնում է քաղաքի մոտերքով հոսող Արփաչայի ձախ ափով: Այս վերջինը, կայսրանը, Երևանի գիծը, որը բազում կիլոմետրերով ձգվում է միևնույն սահմանով, այժմ գտնվում են թուրքերի կրակի տակ, որոնք կարող են առաջին իսկ միջադեպի պարագայում, խափանել ցանկացած երկաթուղային հաղորդակցություն Ալեքսանդրապոլի և Երևանի միջև:

IV. Ժողովրդի բարոյական վիճակը. հայկական ռազմական եռանդուն գործունեությունը: – Ռազմաճակատ կատարած այս հապճեպ այցելության ընթացքում, ինձ ապշեցրել են, մասնավորապես, երկու հանգամանք.

1/ Գյուղերի, ինչպես նաև քաղաքների հայ բնակչության բարոյական բարձր ոգին, Ռուսաստանի հանդեպ չեզոքության, թուրքի դեմ պատերազմելու անհրաժեշտության զգացողությունն ու այս տեսակետի շուրջ կատարյալ միասնությունը՝ ժողովրդի և նրա առաջնորդների միջև:

Երկու հայ եպիսկոպոսներ, որոնցից մեկը՝ Ն (որին սրբազնություն) Մեսրոպը, մեծ ճանաչում ունի Կովկասում, մեզ ուղեկցում էին՝ ռազմաճակատի գործերի մոտ մնալու և այնտեղ հայրենասիրական քարոզչությամբ զբաղվելու համար: Ալեքսանդրապոլով մեր անցնելու օրը, այնտեղ գումարվել էր բոլոր կուսակցությունների ներկայացուցիչներից բաղկացած մի ազգային կոնֆերանս՝ վճռելու, թե համաձայն տեղում անցկացված հարցաքննության՝ ինչպի՞սի վարքագծի է հարկ հետևել պատերազմի հարցում: Ըստ հայկական բանակային կորպուսի հրամանատար, գեներալ Նազարբեկովի կարծիքի՝ այն կայացրեց միաձայն որոշում, որը նախատեսում էր ամեն գնով պաշտպանել Կարսը և շարունակել պայքարը:

Նույն օրը, իբրև վրացիների հանդեպ համերաշխության դրսևորում, գեներալ Նազարբեկովը վրացական բանակային կորպուսի հրամանատար, գեներալ Գաբրակին մի հեռագիր հղեց, նրան վստահեցնելու համար, որ ընդհանուր թշնամու դեմ պայքարում, վրացական բանակային կորպուսը միշտ իր կողքին կունենա հայկական բանակային կորպուսին և կարող է հույսեր տաժել նրա նկատմամբ: Դժբախտաբար, վրաց ժողովուրդն ընդհանրապես, և վրացական ազնվականությունը, մասնավորապես, չունեին, ինչպես հայ ժողովուրդը, բուն հասկացողություն իրենց ազգային պարտքի մասին՝ թե՛ իրենց և թե՛ իրենց հարևանների հանդեպ: Այդ նա է, որ պետք է ամբողջությամբ կրի թուրք-գերմանական միտում ունեցող նոր քաղաքականության պատասխանատվությունը, որի ծավալումը և հետևանքները ես ներկայացրել եմ ապրիլի 16-ի թիվ 98 իմ զեկուցագրում¹: Այդ քաղաքականությունը պետք է հայ ժողովրդի մի մասի նոր փորձությունների պատճառը դառնար, որը թուրք հրամանատարի պարտադրած եռօրյա ժամկետում հարկադրված եղավ դուրս գալ Կարսի ամբողջ տարածքից, չմնալու համար թշնամական երկրում՝ թուրքերի և քրդերի վրիժառությանը ենթակա: Այսօր ավելի քան 100000 զաղթական (թուրքահայեր, ռուսահա-

¹ Ստորև արտատպված է թիվ 606 փաստաթղթում:

յեր, հույներ, ռուսներ՝ Կարսի տարածաշրջանից), որոնք կառավարության անհետատեսության զոհերն են, զանգվածային տեղահանությանը ճողոպրում են Երևանի և Թիֆլիսի ուղղություններով, որտեղ նրանց ընդունելու համար ոչինչ չեն նախաձեռնել:

2/ Այն արդյունքների համար, որոնց հանգեցրել է այդ եռանդուն գործունեությունը, պարտական են ոչ թե Կովկասի կառավարությանը, այլ Հայկական ազգային խորհրդին, որն իր իշխանության փոխարեն՝ ստանձնել է կառավարության իշխանությունը և անհամար դժվարություններից ի տես, ի հայտ է բերել ղեկավարելու ու կազմակերպելու ունակություն: Առանց թաթարների թշնամության, որոնք ամիսներ շարունակ խափանեցին Բաքվից² Թիֆլիս և Ալեքսանդրապոլից Երևան ձգվող գծերը, առանց այն խոչընդոտների, որոնք սկզբնական շրջանում հարուցեց կառավարությունը հայկական գործերի կազմակերպման հարցում, վերջիններս կարող էին անհրաժեշտության պահին կազմակերպել պայքարի մի միջոց, որը բավարար կլիներ պաշտպանելու առնվազն 1914 թ. նախկին սահմանը:

Հրաձիգների հատուկ դիվիզիայի կազմավորումը ձախողվեց ժամանակի սղության պատճառով, թուրքական հարձակման հապճեպության հետևանքով և որովհետև ընտրված մարդը՝ Անդրանիկը, մի գյուղացի, որը դարձել էր սպա և հանգամանքի բերումով՝ գեներալ, ո՛չ կազմակերպիչ էր և ո՛չ ղեկավար: Բայց գեներալ Նազարբեկովի հայկական բանակային կորպուսն իրենից ներկայացնում է իրական ռազմական ուժ, որին չեն բավականացրել միայն մի քանի շաբաթ՝ անձնակազմերը համալրելու, ուսուցումը և կազմակերպումն ավարտին հասցնելու համար:

Սրան կից աղյուսակն՝ ամփոփում է այդ ռազմական եռանդուն գործունեությունը, Հայկական ազգային խորհրդի գործը, որը հայ ժողովրդի համար հայտարարելով առանձին գորակոչ, հաջողության է հասել 25000 մարդուց բաղկացած բանակային կորպուս ուղքի հանելու գործում: Անձայրածիր ռուսական կայսրության ո՞ր մեկ այլ ժողովուրդն է հեղափոխական այս ժամանակաշրջանում ի հայտ բերել հավատարմության և եռանդի այսպիսի օրինակ:

Եթե իրադարձությունները հայկական գործերին չեն թույլատրել թուրքերի դեմ ունենալու այն դերը, որը կարելի էր նրանցից սպասել, նրանք՝ իրենց գոյության պարզունակ փաստով, նվազագույնը կծառայեն հայ ժողովրդի իրավունքներն այլ ազգությունների պահանջախնդրություններից պաշտպանելու և նրա համար այն տեղն ապահովելու համար, որին հավակնելու իրավունքն ունի «Անդրկովկասի ժողովրդավարական և դաշնային նոր հանրապետությունում»:

(A.M.G., 6 N 220).

¹ Փաստաթղթի ծանոթագրությունը. «Խիստ կարևոր գումարներ են ժողովվել պարտադիր հանգամանկության միջոցով Կովկասի և Ռուսաստանի հարուստ հայերից՝ ռազմական կազմակերպության կարիքների համար»:

² Փաստաթղթի ծանոթագրությունը. «Ռուսական ռազմաճակատից եկած, զինված և հանդերձավորված 5000 հայ զինվորներ մեկ ամսից ի վեր պահվում են Բաքվում»:

³ Փաստաթղթի ծանոթագրությունը. «Կուղարկվի հետագայում, քանի որ շտաբն ինձ ժամանակին անհրաժեշտ տեղեկություններ չի հաղորդել այն համայրելու համար»:

Տեղեկություններ անգլիական սկզբնաղբյուրից

3-ը մայիսի 1918 թ.:
(Ստացել է ԲԸ-ի 2-րդ բաժանմունքը մայիսի 10-ին):

Թուրքիա
«Համընդհանուր ներում» հայերի օգտին

Թիվ 22/24: Գաղտնի:

«Բեռլինի բազերլաթի» (ապրիլի 30-ի)¹ Կոստանդնուպոլսում գտնվող թղթակիցը հայտնում է, թե ինքը քաջատեղյակ թուրքական շրջաններից ստացել է հավաստումն այն բանի, որ.

«Թուրքական կառավարությունը նախապատրաստում է համընդհանուր ներում բոլոր խաղաղասեր հայերի համար: Նրանց վերադարձը հայրենիք տեղի կունենա որքան հնարավոր է արագ և նրանք, ովքեր զուրկ են գոյության միջոցներից, օգնություններ կստանան»:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, *Arménie*, tome 1, f. 40).

Լոնդոնում Ֆրանսիայի ռազմական կցորդ, գեներալ դը Լա Պանուսը՝ Խորհրդի նախագահ, Ռազմական նախարար պ. Կլեմանսոյին

Վ. թիվ 2028: Գաղտնի:

Լոնդոն, 6-ը մայիսի 1918 թ.:
(Ստացել են ԲԸ-ի Առաջապահ խումբը մայիսի 8-ին, ՉՆԳԽ-ն մայիսի 10-ին):

Բարձրում բրիտանական հյուպատոսը² հեռագրել է ապրիլի 28-ին, որ այդ քաղաքի հայերն իրեն իրագել են դարձրել, թե կապիտան Նոելն իրենց խոստացել է 5000000 ռուբլի, և որ իրենք ի վիճակի են բոլշևիկներից թույլտվություն ստանալու՝ Էնգելիից եկող գեներալ Դյունսթերվիլի երկու զրահապատ ավտոմեքենաների ազատ մուտքն ապահովելու համար³: Հայերի և մահմեդականների միջև առկա թշնամանքը հաստատվել է: Թվում է, թե հայերը լի են վճռականությամբ թուրքերին մինչև վերջ դիմադրելու հար-

1 Տե՛ս «Թուրքական ներումը հայերի համար» հոդվածը 1918 թ. ապրիլի 30-ի «Բեռլինի բազերլաթում», թիվ 218:
2 Պ. Մակ Դեմեյլը:
3 Փաստաթղթի ծանոթագրությունը. «Կասկածելի է թվում, որ այդ ավտոմեքենաները կարողանան անցնել ծանգալիսների տարածքով»:

ցում, թեպետ նրանց թիկունքից սպառնում են թաթարները, որոնց հետ նրանք, չի թվում, թե հաշտվելու են:

Թուրքերի դեմ ուղղված իրենց գործողություններում հայերը կարող են հույս տաձել բոլշևիկների օգնությանը և ասվում է, որ նրանք հույս են տաձում կրկին բաց անել Բաքու-Թիֆլիս ճանապարհը, որը մահմեդականները կտրել են:

Տարբեր զեկուցագրեր իրագել են դարձնում, որ թուրքական զորքերը հյուձվել են և որ լուրջ դիմադրության համդիպելու պայագայում, կրած կորուստների պատճառով, նրանք չեն կարողանա շարունակել առաջխաղացումը դեպի արևելք:

Թավրիզում բրիտանական հյուպատոսն¹ ասում է, որ իրադրությունը Թիֆլիսում բարելավվում է և որ հույս է տաձվում Թավրիզի և Ջուլֆայի միջև երկաթուղային հաղորդակցությունները փոքր անց վերականգնել:

(A.M.G., 4 N 62).

Բեռնում Ֆրանսիայի հավատարմատարը՝ Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին

Վ. թիվ 524:

Բեռն, 8-ը մայիսի 1918 թ.:
(Ստացել են Կաթինետը և Զաղ. վարչ. մայիսի 12-ին):

Կոստանդնուպոլսի որոշ հայեր, թուրքական ներքին փոխառության առիթով, հենց նոր տուրք են տվել օսմանյան հայրենասիրության բացահայտ դրսևորմանը: «Ժամանակը» հրապարակել է մի կոչ, որտեղ չի սահմանափակվում, մասնավորապես, ջերմագին արտահայտություններով, իր համակրոնակիցներին խորհուրդ տալով բաձնեզրվել այդ փոխառությանը, այլև վերջինս ներկայացնում է իբրև մի առիթ, դրա չեզոքությունն ապացուցելու համար: Թուրքերը կտեսնեն, այսպիսով, եզրափակում է նա, թե որքան ենք մենք կապված մեր հայրենիքի հետ և կզղջան, որ մեզ ցանկացել են պատասխանատու ճանաչել «ստոր կոմիտեականների» արարքների համար:

Թուրքական թեթերն, ի դեպ, թվում է, թե ամենևին էլ բարձր գնահատականի չեն արժանացրել այս ստորացուցիչ դրսևորումը, որը նրանք չեն զլացել մեկնաբանել շահադիտական նպատակով. եթե հայերն ի հայտ էին բերում փոխառությանը բաձնեզրվելու ցանկություն, ապա այդ արվում էր բացառապես ձեռնառու ձևով այն օգտագործելու մտադրությամբ:

Չելդ գերագանցությունը կբարեհաձի գտնել այս ծրարում «Ժամանակում» լույս ընձայված խնդրո առարկա հողվածի թարգմանությունը, ինչպես նաև «Հիլալի» պատասխանը¹:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, *Arménie*, tome 1, ff. 42-42 v).

1 Պ. Բրիսթոուն:
2 Պ. Շոմերսը:
3 Խնդրո առարկա հողվածները տես ստորև թիվ 626 փաստաթղթում (և հավելվածներում):

**Կովկասում Ֆրանսիայի ռազմական առաքելության ղեկավար,
փոխգնդապետ Շարդինյին՝ Ռուսաստանում Ֆրանսիայի ռազմական
կցորդ, գեներալ Լավերնյին**

Ճ. թիվ 102:

Թիֆլիս, 12-ը մայիսի 1918 թ.:

Ես պատիվ ունեմ ձեզ հղել սրան կից, իբրև ապրիլի 16/29-ի թիվ 98 իմ գեկուցագրի¹ շարունակություն, այն հանգամանքները ներկայացնող երկու փաստաթուղթ, որոնց պատճառով Բաթումը և Կարսն ընկել են թուրքերի ձեռքը:

1/ Անդրկովկասի կառավարության պաշտոնական հաղորդագրությունը²:

2/ Գեներալ Նազարբեկովի հեռագիրը³ ռազմաճակատի գլխավոր հրամանատարին⁴:

Այս փաստաթղթերից առաջինում կառավարությունը փորձում է իրեն արդարացնել այն մեղադրանքի կապակցությամբ, որը նրա դեմ հարուցվել է սահմաններից բնակչությանը դուրս բերելու հարցում անհրաժեշտ միջոցներ չկիրառելու համար: Մակայն հարկ է չանտեսել, որ մի կողմից թուրքերն ունեին առաջնահերթ ռազմական շահադիտություն, որը պետք էր անհապաղ իրականացնել, այն է՝ ռազմակալել իրենց զիջված տարածքները, մյուս կողմից՝ այդ տարածքների բնակիչները ոչ մի գնով չէին համաձայնվելու ապրել թուրքական երկրում, որը միաժամանակ ենթակա էր թե՛ քղերի հարձակումներին և թե՛ թուրքական բռնություններին:

Կարսի տարածաշրջանի բնակիչների անկազմակերպ փախուստը կպահանջեր, փաստորեն, ավելի մեծ թվով մարդկային կյանքեր, որոնց պատճառ, սակայն, պատերազմի հարատևումը երբեք չէր դառնու:

Պ. Չխենկելու և նրա կառավարության կողմից Բրեստ-Լիտովսկի պայմանագրի պայմանների ընդունումն ունեցել է ավելի ծանր հետևանքներ.

1/ Մոտալուտ զինադադարի մասին տեղեկությունը, որը հաջորդեց կառավարության քաղաքականության թուրք-գերմանական կողմնորոշման լուրին, նորաստեղծ հայկական զորքերի համար դարձավ բարոյալքման մի նոր պատճառ: Ըստ ինձ հասած տեղեկությունների՝ զորքերի մահանջը Կարսից Ալեքսանդրապոլ իրականացվել է առանց կարգ ու կանոնի և տեղ են գտել դասալքության բազմաթիվ դեպքեր: Ընդհանրապես արդյունավետ միջոցառումների, կարգը բարեբախտաբար հասցնելուրեն վերահաստատվել է, և զորքերն այսօր ռազմական դիրքեր են գրավել Ալեքսանդրապոլի շուրջը:

2/ Բաթումի անկումը, ըստ հրամանի՝ Կարսի լքումը, որն առաջնակարգ բերդաքաղաք է և կարող էր դիմադրել ավելի քան մեկ ամիս ու թուրքերի առաջխաղացումը դեպի Ալեքսանդրապոլ, որն այդ ամենի հետևանքն է, ռազմական տեսակետից թուրքերին դարձրել են Կովկասի տերն ու տնօրենը և կառավարությանը կանգնեցրել Բաթումում իրեն պարտադրված «բարեկամության պայմանագրի» բոլոր պայմաններն ընդունելու անհրաժեշտության

1 Վերն արտատպված է թիվ 606 փաստաթղթում:

2 Տե՛ս ստորև I հավելվածը:

3 Տե՛ս ստորև II հավելվածը:

4 Գեներալ Լեբեդինսկին:

առջև:

Ներկա պահին, եթե կառավարությունը, Բաթումում գերմանական պահանջներին ի տես, հրաժարվում է հաշտություն ստորագրելուց, հնարավոր չէ որևէ այլ բան նախատեսել, քան պարտիզանական պատերազմը՝ մի կողմից՝ Վրաստանում և մյուս կողմից՝ Երևանի հայկական մահանգում:

Դեռևս հարկ կլինի, որ կառավարությունը վերադառնա Ռուսաստանի հետ դաշինքին՝ ապահովելու համար նրանից գեներլի, գույքի ստացումը և նրա ռազմական համագործակցությունը, որքան էլ վերջինս թույլ լինի Հյուսիսային Կովկասի և Ելիզավետպոլի մահմեդականների առջև, որոնք այս պահին ջանում են վտարել բոլշևիկյան ուժերը Բաթվից:

(A.M.G., 6 N 224).

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

I

**Անդրկովկասի կառավարության
պաշտոնական հաղորդագրությունը**

Անդրկովկասյան կառավարությունը հնարավորություն ունի հաղորդել հետևյալ հանգամանքների մասին, որոնք համընթաց են ռազմաճակատների վերջին իրադարձություններին.

1918 թ. մարտի 29-ին/ապրիլի 11-ին, այն է՝ անդրկովկասյան պատվիրակության՝ Բրեստ-Լիտովսկի պայմանագրի ճանաչման անմիջապես հստորդած օրը, Կովկասի ռազմաճակատում թուրքական բանակների հրամանատար Ֆերիկ Վեհիբ Մեհմեդը, մի հեռագիր է ուղարկել Բաթումի բերդամրցի հրամանատարին, որով նրան հաղորդում էր Բաթումի դեմ թուրքական զրոհը դադարեցնելու վերաբերող իր հրամանի մասին, խնդրելով նրանից գործել միևնույն ձևով և նախազգուշացնելով, որ եթե երեկոյան ժամը 6-ից հետո կրակը մեր կողմից չդադարի, ապրիլի 11-ին ռազմական գործողությունը կվերսկսվի:

Անդրկովկասյան պատվիրակության ղեկավար Ա. Ի. Չխենկելին, իր կողմից, խնդրեց բերդամրցի հրամանատարին դադարեցնել կրակը:

Սակայն, չմայած դրան, երկու կողմից տեղական հրաձգությունը շարունակվեց դեռևս որոշ ժամանակ:

Մարտի 30-ին/ապրիլի 12-ին, թուրքերը մեր հրամանատարին վերջնագիր ներկայացրին, որով հայտարարվում էր, թե քանի որ Բրեստ-Լիտովսկի պայմանագրի հիման վրա Բաթումից մեր զորքերը պետք է դուրս բերվեին և մահանջեին 1877 թ. սահմանից այն կողմ, «թուրքական զորքերը պետք է, որքան հնարավոր է արագ, ռազմակալեին Բաթումը շրջապատող ամրությունները՝ իրենց բոլոր մթերային պաշարներով հանդերձ»: Մրա համար էր, որ թուրք հրամանատարը մեզ առաջարկում էր լքել ամրությունները մինչև մարտի 31-ը/ապրիլի 13-ը (կեսօրից հետո ժամը 4-ը) և մեզ նախազգուշացնում, որ հակառակ դեպքում, կհրամայի զրոհել բերդամրցը: Իբրև պատասխանի վերջին ժամկետ, նա նշել է մարտի 31-ի/ապրիլի 13-ի կեսօրը: Միաժամանակ մարտի 31-ին/ապրիլի 13-ին, անդրկովկասյան պատվիրակության նախագահ Ա. Ի. Չխենկելին երկու անգամ հեռագրել է Բաթու-

մում գտնվող Արտաքին գործերի նախարարին, որ ինքը միանգամայն անհրաժեշտ է համարում, շատ լուրջ մտորումներից հետո, Բաթումի ամբողջություններից գործերի դուրս բերումը:

Բաթումի բերդամրոցի հրամանատարը թուրք հրամանատարից խնդրել է 24 ժամանոց նոր ժամկետ՝ Թիֆլիսից ժամանակին անհրաժեշտ պատասխան ստանալու անհնարինություն պատճառով: Բայց Վեհիբ փաշան մերժել է երկարաձգել ժամկետը և Բաթումը գրավել է զենքի ուժով ապրիլի 1-ից լույս 2-ի գիշերը, ռազմական գործողությունների դադարից հետո, որը տևել է 48 ժամ:

Միաժամանակ, մարտի 31-ի/ապրիլի 13-ի գիշերը կառավարությունը ետ է կանչել պատվիրակությանը, որն ապրիլի 1/14-ին մեկնել է Թիֆլիս:

Ռազմական գործողությունները շարունակվում էին ծավալվել առափնյա շրջանի ուղղությամբ և առանձնահատուկ ուժգնությամբ Կարսի բերդամրոցի ուղղությամբ: Ռազմական գործողության այս ծավալումն Ա. Ի. Չխենկելյան հոլած՝ ապրիլի 9/22-ի հեռագրում թուրքական բանակների գլխավոր հրամանատարը մեկնաբանել է իբրև անդրկովկասյան պատվիրակության՝ հաշտության բանակցություններն ընդհատելու հետևանք:

Ապրիլի 10/23-ին, հաշվի առնելով հաշտության բանակցությունները շարունակելուն վերաբերող սեյմի որոշումը, վարչապետ Չխենկելյան, նախքան նախարարների նոր խորհրդի վերջնական ձևավորումը, հաղորդակցություն է հաստատել թուրք հրամանատարի հետ՝ նույն ապրիլի 10/23-ին, երեկոյան ժամը 5-ից սկսած ցանկացած ռազմական գործողության դադարեցման հետ կապված և միաժամանակ օսմանյան կառավարությանը տեղեկացրել է Անդրկովկասի անկախության հռչակմանը: Ապրիլի 11/24-ին, այն զեկուցագրերի շնորհիվ, որոնք հայկական բանակային կորպուսի հրամանատարի շտաբի պետ, զենեքավ Վիշինսկին հղել էր զենեքավ Օղիշելիձեին, վարչապետն իրագել է դարձել այն պայմաններին, ըստ որոնց, թուրքերը համաձայնվում էին կասեցնել իրենց հարձակումը Կարսի վրա: Այդ պայմանները հետևյալներն էին.

Մեր գործերը պետք է նահանջեին դեպի Կարս և կանգ առնեին ամբողջությունների առջև երկու վերստ հեռավորությամբ ու կրակ չբացեին թուրքական գործերի դեմ, որոնք ապրիլի 11/24-ին պետք է գրավեին վերը նշված գիծը:

Այդ զեկուցագրերը ստանալուց հետո, վարչապետն անմիջապես հրաման է արձակել թուրքերի պարտադրած պայմաններին համաձայնվելու և ռազմական գործողությունները դադարեցնելու մասին: Վարչապետի այդ հրամանը հաղորդվել է հայկական բանակային կորպուսի հրամանատար, զենեքավ Նազարբեկովին: Այդ հրամանը ստանալուց անմիջապես հետո, ստացվել է Վեհիբ փաշայի հեռագիրը, որը հայտնում էր, թե թուրքերը դադարեցնում են ռազմական գործողությունները բերդամրոցից երկու կիլոմետր հեռավորությամբ: Նույն ապրիլի 11/24-ին, զենեքավ Նազարբեկովը հրաման է ստացել Կարսից գործերի դուրս բերման ժամկետը և պայմանները սահմանելու նպատակով կեսգիշերին թուրքերի մոտ բանազնացներ ուղարկելու մասին, որոնք պետք է գործադրեին բոլոր ջանքերն ապահովելու համար, հնարավորության սահմաններում, ամենաերկարատև ժամկետը, որպեսզի անհրաժեշտ ժամանակ ունենային հարցի վերջնական լուծման շուրջ կառավարության հետ պայմանավորվածություն կայացնելու համար:

Միաժամանակ, վարչապետը և Ռազմական նախարարի պաշտոնակատար, զենեքավ Օղիշելիձեն հեռագրել են Վեհիբ փաշային, որ անհրաժեշտ էր Կարսի տարածաշրջանից դուրս գալու համար մեր գործերին հատկացնել 7 օր, [որպեսզի] այդ դուրս բերումը կատարվի հանդարտ և առանց բռնությունների, որ ամբողջություններից գործերի դուրս բերման

համար հարկ էր հատկացնել ոչ թե մեկ, ինչպես պահանջում էին թուրքերը, այլ ավելի շուտ երկու կամ երեք օր, որ Կարսից ամբողջ բնակչության դուրս բերումը կպահանջի նվազագույնը մեկ ամիս, և որ թուրքերը պետք է ապահովեն պետական ունեցվածքների դուրս բերման հնարավորությունը: Քրիստոնյա բնակչության դուրս բերումը, որը լքում է ամբողջ տարածաշրջանը, պահանջում է նվազագույնը 15 օր և այդ ընթացքում երկաթգծի պաշտպանությունը պետք է վստահվի մեր գործերին:

Այդուհանդերձ, Կարսի մոտակայքում գտնվող թուրքական բանակի գլխավոր հրամանատարն ապրիլի 11/24-ին մեր գործերի հրամանատարին՝ Վեհիբ փաշայի պայմանները պարունակող մի նամակ ուղարկելուց անմիջապես հետո, որոնք դեռևս հայտնի չէին Կարսի բերդամրոցի հրամանատարին և առանց սպասելու դրանց հաստատման Անդրկովկասի կառավարության կողմից, ձեռնամուխ է եղել դրանց ի կատար ածելուն:

Բերդամրոցի հրամանատարը, որը կրում էր այս վերջինիս պատասխանատվությունը և ժամանակ չունենալով ապրիլի 11/24-ի օրվա ընթացքում ստանալու իր կառավարության հրամանը՝ բերդամրոցն առանց մարտի թուրքական բանակին հանձնելու մասին, ստիպված է եղել ձեռնարկել ամենաարդյունավետ միջոցները թուրքական հարձակումը կասեցնելու համար, մինչ պայմանները կարող էին լուսաբանվել:

Մրանով է բացատրվում թուրքերի դեմ ուղղված մեր հրետանու ուժգին կրակը, «այն կրակը, որն ընդհատվեց այն իսկ պահից, երբ կասեցվեց օսմանյան բանակի առաջխաղացումը»:

Այս թյուրիմացությունը հրահրվել է նաև երկու կիլոմետր առաջ ընթանալուն վերաբերող թուրքական պայմանների մշուշապատության պատճառով, որի մասին վերը խոսվեց (պարզ չէ, թե արդյոք անդրկովկասյան գործերը պետք է նահանջեին, թե թուրքերն առաջանային՝ երկու կիլոմետր):

Կարսի դեմ ապրիլի 11/24-ի առավոտյան տեղի ունեցած թուրքական բանակի միևնույն վաղաժամ գրոհը Կարս քաղաքի բնակչության շրջանում հրահրել է խուճապ, որին հաջորդել են այդ բնակչության անկանոն փախուստը, բռնությունները և քաղաքի հրկիզումը: Կարսն առանց մարտի թուրքերին հանձնելու հրամանը բերդամրոցի հրամանատարը ստացել է միայն ապրիլի 11-ին, երեկոյան ժամը 7-ին, և այդ ժամանակ էր, որ նա բանազնացներ է ուղարկել թուրքական բանակների գլխավոր հրամանատարի մոտ: Ապրիլի 12/25-ի առավոտյան, ըստ մշակված պայմանների՝ կայագործի ստորաբաժանումները լքել են ամբողջությունները, որոնք այնուհետև՝ գրավել են թուրքական գործերը, որը տեղի է ունեցել թուրք հրամանատարի և բերդամրոցի հրամանատարի միջև կայացված համաձայնությամբ: Ներկայումս մեր գործերը, որոնք ամենախիստ հրաման են ստացել թուրքերի դեմ հարձակողական գործողություններ չձեռնարկելու մասին, նահանջել են Արփաչայից այն կողմ: Մենք պայթեցրել ենք Ալեքսանդրապոլի բերդամրոցի՝ Արփաչայի աջ ափին գտնվող ամբողջությունները, որպիսեան այդ ամբողջությունները գտնվում են Կարսի տարածաշրջանում: Չինքիլի և Քարավանսարայի լեռնանցքների տարածաշրջանում, անդրկովկասյան հանրապետության տարածքում (Երևանի կառավարության), թուրքական գործերն ապրիլի 14/27-ին և 15/28-ին անցել են սահմանը, առաջ ընթացել դեպի Իգդիր ու ռազմակալել Օրգով գյուղը: Ներկայումս նրանք կրկին նահանջել են դեպի սահմանը: Առափնյա շրջանի ուղղությամբ թուրքերը շարունակում են ռազմակալված պահել Օզուրդեթի տարածաշրջանը, որտեղից նրանք մտադիր են, ըստ Վեհիբ փաշայի վերջին հաղորդագրության՝ դուրս բերել գործերը, այն հանձնել անդրկովկասյան կառավարությանը՝ հենց որ Բաթումի բանակցությունները հանգեցնեն նպաստավոր արդյունքների:

Ինչ վերաբերում է թուրքերի ռազմակալած տարածաշրջանների բնակչության ճակատագրին, կառավարությունը, ինչպես այդ ի հայտ է գալիս հենց վերը նշվածից, ձեռնարկել է մի շարք միջոցառումներ, որպեսզի այդ բնակչությանն անհրաժեշտ ժամկետ հատկացնի դուրս գալու համար և նրան ապահովի թշնամու յուրաքանչյուր բնույթի ուսնձգություններից:

Կառավարությունը բազմաթիվ անգամներ Կովկասի ռազմաճակատում թուրքական բանակների հրամանատար Վեհիբ փաշային է դիմել հայտարարություններով, ապացուցելով, որ հայրենիքը լքող բնակչությունը մեծ տառապանքներ է կրում, մի բան, որը տարբեր ազգերի միջև կարող է հրահրել բռնություններ ու առաջ բերել բարդություններ և որ բոլոր դժբախտությունները, որոնք կարող են դրան հետևել, կանխելու միակ միջոցը բնակչության դուրս բերման դադարեցումն է և նրանց վերադարձը, ովքեր արդեն ճանապարհին են: Կառավարությունը հայտարարել է, որ դեպի տարբեր վայրեր կատարվող անընդմեջ տեղահանությունների այս շարժումը կարող են կասեցնել հետևյալ երաշխիքները.

«Բնակչության նկատմամբ որևէ բռնություն չգործադրելու վերաբերող՝ թուրքական զորքերին տրված խիստ հրամանները, զինված հրոսակախմբերի գրոհներին խոչընդոտելը, հաղորդակցության գծերի պաշտպանությունը, ժողովրդական կազմակերպությունների գործունեության թույլատվությունը՝ գյուղերում կարգ ու կանոնին աջակցելու և դուրս բերվածների հարցը կարգավորելու նպատակով»: Ըստ կառավարության կարծիքի՝ այս միջոցները կարող էին հանդարտեցնել այն բնակիչներին, որոնք դեռևս չեն թողել իրենց հողը և կնպաստեին նրանց վերադարձին՝ ովքեր այդտեղից արդեն գնացել են: Կառավարությունը խնդրում էր միամսյա ժամկետ հատկացնել (և ոչ 15 օրվա, ինչպես կարծում էին առաջ) նրանց, ովքեր ցանկանում էին ամբողջությամբ կարգավորել իրենց գործերը:

Ըստ վարչապետին հղված՝ Վեհիբ փաշայի ապրիլի 16/29-ի թվակիր նամակի և այլ հաղորդագրությունների, Կարսի տարածաշրջանը լքող բնակչությանը թույլատրվել է իր հետ տանել տնային բոլոր իրերն ու անհրաժեշտ սննդամթերքները և վաճառել կամ նվիրաբերել շարժական կամ անշարժ գույքը, որը նա կամուփին լքում էր:

Բացի դրանից, թուրք հրամանատարը ձեռնարկել է բոլոր միջոցները բնակչությանը հրոսակախմբերի հարձակումներից պաշտպանելու համար և ընդգծել իր ցանկությունը՝ հայ ժողովրդին ցանկացած հնարավոր օգնություն հատկացնելու հարցում:

Վեհիբ փաշայի՝ մայիսի 2-ի՝ այս հարցին առնչվող վերջին հեռագրից հետևում է, թե Կարսից բնակչության դուրս բերման պայմաններում, ասվել է, որ քաղաքում մնալ ցանկացող բոլոր բնակիչները կարող են կայսրական կառավարության հովանու ներքո մնալ այդտեղ, անկախ կրոնական կամ ազգային պատկանելության զանազանությունից և կօգտվեն միևնույն իրավունքներից, ինչ մյուս հպատակները:

Չնայած այս բանին, հայ բնակչությունը փախուստի է դիմել. դրանից հետևում է, որ այդ հայտարարությունը բնակչությանն անհայտ է մնացել և կամ նրա վրա օտար ազդեցությունների թողած պատճառով, նրա շրջանում որևէ տպավորություն չի գործել:

Բացի դրանից, այն պահին, երբ մեր զորքերը ռազմակալել են Էրզրումը, մենք կարողացել ենք հավաստել, որ մեր բանակի հրամանատարի՝ համանման որևէ հայտարարություն քաղաքում չի հրապարակվել. մեր հրամանատարը ձեռնարկել է բոլոր միջոցները խոչընդոտելու բնակչության փախուստին, բայց հայերը, արված քարոզչության հետևանքով, լքել են իրենց օջախները և ճողապրել, չնայած հասարակական կարծիքի հանդարտեցման նպատակով ձեռնարկված բոլոր ջանքերին և հակառակ մեր կամքին:

Այսպիսով, այն բանից, ինչը նախորդում է, բխում է, որ օսմանյան կառավարությունը

հայերի փախուստի պատճառ չի դարձել և որ այն ջանքերը, որոնք նա գործադրել է կասեցնելու համար այդ փախուստը, եղել են անարդյունավետ. հետևաբար, ոչ մի պատճառ չկա, որպեսզի բնակիչներից նրանք, ովքեր մնացել են տեղում, երկյուղներ տածեն իրենց անվտանգության համար: Ինչ վերաբերում է նրանց, ովքեր լքել են իրենց երկիրը, իմ նամակից հետևում է, որ մեր առաջադրած միջոցները (և որոնք վերը թվարկվել են) սկսում են արդեն իրականացվել: Չինված հրոսակախմբերի գործողությանն առնչվող հարցում, ես ինձ պարտավոր եմ համարում ձեզ տեղեկացնել, որ օսմանյան կառավարությունը և բանակը խիստ հուզված են դրանց կազմակերպման առիթով և մեծ եռանդ են դրսևորում դրանք կազմալուծելու համար:

Հարկ է, բացի դրանից, նշել, որ անձնական բանակցություններ սկսելու անհրաժեշտության հետևանքով, ինչպես նաև ռազմական նկատառումներով, նրանց վերադարձն այս պահին անհնար է, հատկապես Կարսի տարածաշրջանում, բացառությամբ Օգուրդեթի բնակիչների: Այս հարցի լուծումը պետք է կրկին հետաձգվի մինչև Բաթումում բանակցություններ սկսվեն, որոնք, կասկածից վեր է, կհանգեցնեն արագընթաց և բոլորի ցանկություններին համապատասխանող արդյունքի:

(A.M.A.E., Europe 1918-1929, *Russie*, tome 833, ff. 375-382).

II

Հայկական բանակային կորպուսի հրամանատարը՝ Կովկասի բանակի գլխավոր հրամանատարին՝

Հ. թիվ 36:

15-ը ապրիլի 1918 թ., ժ. 18-ին:

Ես ձեզ տեղեկացնում եմ ինձ հայտնի՝ Կարսից զորքերի դուրս բերմանն առնչվող մանրամասներին: Բացի դրանից, ես հաղորդում եմ, որ ապրիլի 18-ի երեկոյից ի վեր, Կարսի հետ այլևս կապ չեմ ունեցել և ահա թե ինչու, իմ զեկուցագիրը հեռու է կատարյալ լինելուց և կարող է համալրվել միայն զեներալ Դեյլի ժամանումից հետո, որն իմ թույլտվությամբ, կոմիսար Արզումանովի հետ, մնացել է Կարսում՝ կարգավորելու բերդամրոցից զորքերի դուրս բերումը: Սկսած ապրիլի 10-ից, ռազմական գործողությունների դադարեցման հրամանը և Բրեստ-Լիտովսկի պայմանագրի հիման վրա Թուրքիայի հետ հաշտություն կնքելուն վերաբերող՝ Անդրկովկասի կառավարության որոշումը, այնուհետև՝ Կարսում զինադադարի շուրջ թուրքերի առաջադրած բոլոր պայմանների ընդունումը կառավարության կողմից, վերջնականապես վճռել են բերդամրոցի ճակատագիրը: Եթե պատերազմի շարունակման կանոնավոր պայմաններում, բերդամրոցը կարող էր, հավանաբար, դիմակայել նվազագույնը մեկ ամիս և ամենայն հավանականությամբ՝ ավելի երկար, նոր պայմաններում այդ դիմադրությունը դառնում էր անհնար:

Արդեն բանազնացներ ուղարկելու մասին առաջին իսկ տեղեկությունները, ապրիլի 10-ին, և ռազմական գործողությունները դադարեցնելու շուրջ ասեկոսները հանգեցրել էին

1 Գեներալ Լեբեդնիսկին:

անկարգությունների Բեզլի-Աիմեդի ստորաբաժանման միավորումներում, որն այդ ժամանակաշրջանում զբաղեցնում էր Ալ Բաբա-Գարամ Վարդանի դիրքը: Սկսած ապրիլի 11-ի գիշերվանից, առանձին զինվորներ և նույնիսկ փոքր խմբեր՝ սեփական նախաձեռնությամբ սկսեցին հորդալ դեպի քիկունք և դիրքերի այդ լքումն ավելի ծավալվեց՝ երբ թուրքերը Կարսի ամրություններին մերձենալու նպատակով՝ ապրիլի 11-ի առավոտյան հարձակում նախաձեռնեցին ամբողջ ռազմաճակատում: Այդ պատճառով ստորաբաժանման հրամանատարը հարկադրված եղավ սկսել նահանջը դեպի բերդամրոց, թուրքերի մոտ ուղարկելով բանազնացների՝ նրանց առաջարկելու համար դադարեցնել հարձակումը, որը հավանության չարժանացավ: Միաժամանակ, ստորաբաժանման ղեկավարը, բերդամրոցի հրամանատարի համաձայնությամբ, թուրքական հրամանատարի մոտ իբրև բանազնացի ուղարկեց հրամանատար Մորելին, Կարսի ամրություններից երկու վերստ տարածությամբ սահմանազատման գիծ հաստատելու շուրջ (դեպի որը և մեր զորքերը նահանջում էին) մեր համաձայնությունը և միաժամանակ Ալ Բաբա-Գարամ Վարդան գծի վրա (Կարսից 10 վերստ դեպի հարավ-արևմուտք) թուրքերի կողմից սահմանազատման գծի հաստատմանը վերաբերող մեր պահանջը թուրքերին հաղորդելու հանձնարարությամբ:

Միաժամանակ, ես կարգադրեցի բերդամրոցի հրամանատարին, որ թուրքերի՝ գրոհը շարունակելու պարագայում, այն կասեցնեն մեր կրակով, որովհետև կարելի էր երկյուղել, որ թուրքերը կջանային գրավել Կարսն առանց մարտի: Քանի որ թուրքերը, չնայած մեր բանազնացների նախազուշացումներին, շարունակում էին առաջ ընթանալ, բերդամրոցի հրամանատարը կարգադրել է ամրություններից կրակ տեղալ: Այդ կրակը, որը տեղացել է միաժամանակ բոլոր ամրություններից, արևմտյան և հարավային, եղել է, ինչպես այդ հավաստում են բոլոր զեկուցագրերը, խիստ արդյունավետ ու հարկադրել է թուրքերին ընդհատել իրենց հարձակումը և այնուհետև՝ դադարեցնել ռազմական գործողությունները: Այդ-ժամ, ես կարգադրեցի ստորաբաժանման ղեկավարին տանել զորքերը, շրջանցելով բերդամրոցը, դեպի Մարտու-Վերին Քեյ [sic] նոր դիրքը, ինչն ի կատար ածվեց ապրիլի 12-ի առավոտյան: Ամսի 11-ից 12-ի գիշերը մեր բանազնացները թուրքերի հետ բանակցություններ վարեցին Կարսից զորքերի դուրս բերման պայմանների շուրջ, համաձայն այն հրահանգների, որոնք այդ ամսաթվին ստացվել էին կառավարությունից:

Համաձայն ընդունված պայմանների, բերդամրոցի արևմտյան ամրությունները պետք է հանձնվեին թուրքերին ապրիլի 12-ի կեսօրին, իսկ արևելյան ամրությունները՝ ապրիլի 13-ին, ժամը 17-ին: Ապրիլի 12-ի առավոտյան, բերդամրոցի հրամանատարը հրահանգներ տվեց արևմտյան ամրություններից զորքերը դուրս բերելու մասին, որից հետո այն ստորաբաժանումները, որոնք գտնվում էին արևելյան ամրություններում, նմանապես և առանց հրամանների լքեցին իրենց դիրքերն ու նահանջեցին Ալեքսանդրապոլի ուղղությամբ: Գնդապետ Եֆրեմովի ռուս կամավորների ստորաբաժանումը նույնպես նահանջեց դեպի Մարտու-Վեզին Քեյի [sic] դիրքը:

Ապրիլի 12-ից ի վեր հեռագրային հաղորդակցությունները Կարսի հետ ընդհատված էին, և այդ բերդաքաղաքի հետ ես այլևս կապ չունեի, քանի որ քաղաքի ռադիո-հեռագրային կայանն այլևս չէր պատասխանում:

Համաձայն Կարսից ժամանած անձանց վկայությունների՝ քաղաքը պետք է այրված լինի: Ապրիլի 12-ին և 13-ին երկաթուղային գծի շրջանում թուրքերի հետ ունեցած մարտերի հետևանքով, Կարսի հետ երկաթուղային հաղորդակցությունը փաստորեն ընդհատված էր ապրիլի 12-ից ի վեր:

Դժվար է ասել, թե արդյո՞ք թուրքերը կհամաձայնվեն գույքի և սրտարների դուրս բեր-

մանը. անձամբ ես դրանում կասկածում եմ:

Ներկայումս ցանկալի կլինի վերականգնել Կարսի հետ հեռագրային հաղորդակցությունները, մի բան, որի համար ես միջոց չունեմ. գտնում եմ, որ այդ հնարավոր կլինի անել Բաթումով:

Ես ենթադրում եմ, որ երկաթուղային հաղորդակցությունները վերականգնելու, Կարսից մարդկանց դուրս բերելու համար, հաշվի առնելով մեր զորքերի նահանջը դեպի Արփաշայ, հարկ կլինի ձևավորել բանվորների և պահակների հատուկ ստորաբաժանումներ՝ ռուս սպաների ստորաբաժանման և թուրքական զորքերի օգնությամբ: Այդուհանդերձ, ես կցանկանայի վճռել այս հարցը միայն այն բանից հետո, երբ պարզ դառնա, թե արդյոք թուրքերը թույլատրո՞ւմ են Կարսից դուրս բերել մարդկանց:

Ես ձեզ խնդրում եմ պարզություն մտցնել այս հարցում թուրքական գլխավոր հրամանատարի հետ բանակցությունների ընթացքում:

Կորպուսի հրամանատար
Ստորագրված է՝ Նազարբեկով:

(A.M.G., 6 N 224).

Կովկասում Ֆրանսիայի ռազմական առաքելության ղեկավար, փոխգնդապետ Շարդինյին՝ Ռուսաստանում Ֆրանսիայի ռազմական կցորդ, գեներալ Լավերնյին

Ճ. քիվ 103:

Թիֆլիս, 13-ը մայիսի 1918 թ.:

Մայիսի 6-ին, կառավարության նախագահ պ. Չխենկելու գլխավորությամբ, անդրկովկասյան պատվիրակությունը մեկնեց Բաթում, ուր նույն օրը ժամանեցին օսմանյան և գերմանական պատվիրակությունները:

Օսմանյան պատվիրակության ղեկավարն Արտաքին գործերի նախարար Հալիլ բեյն է, որի անդամներից է Կովկասի թուրքական ռազմաճակատի հրամանատար, գեներալ Վեհիբ փաշան: Գերմանական պատվիրակության նախագահն է Կոստանդնուպոլսում ռազմական առաքելության ղեկավար, գեներալ ֆոն Լոստվը: Պատվիրակության կազմում է նախապատերազմական շրջանում Գերմանիայի նախկին գլխավոր հյուպատոսը Թիֆլիսում՝ կոմս Շուլենբուրգը:

Նույն օրը, մայիսի 6-ին, Վեհիբ փաշան Կովկասի կառավարությանն էր հղում հետևյալ հեռագիրը. «Իբրև ապրիլի 29-ի իմ նամակի լրացում և Նորին գերագանցություն, կայսրական բանակի գլխավոր հրամանատարի տեղակալի արած հաղորդագրության շարունակություն՝ ես պատիվ ունեմ ձեզ տեղեկացնել, որ Օզուրդեթի տարածաշրջանում թուրքական զորքերի գրաված՝ 1878 թ. ռուս-թուրքական սահմանից այն կողմ գտնվող տարածքից զորքերը դուրս կբերվեն և այն Անդրկովկասին կհանձնվի, երբ բանակցությունները Բաթումում բարենպաստ արդյունքների հանգեցնեն»:

Այս հայտարարությունը, որն արվել է նախքան պատվիրակությունների միջև որևէ

գրույցի կայացումը, փաստորեն, սպառնալիք է, որը տեղիք է տալիս խորհրդածելու այն մասին, որ թուրքերը պատրաստ են ուժի դիմելու, եթե իրենց պահանջները չբավարարվեն:

Ի դեպ, նրանք կան այդ հնարավորության, կան հետազայում դեռևս անհայտ օգտագործման մտադրությամբ Կովկասի ռազմաճակատում են պահել այն ուժերի գերակշռող մասը, որոնք այդտեղ էին գտնվում ձմռան ընթացքում:

Այս ուժերը, որոնց ինքնությունը ճշգրտվել է, ներկայումս տեղաբաշխված են հետևյալ ձևով.

Բաթումի տարածաշրջան
Կովկասի 10-րդ դիվիզիա,
37-րդ դիվիզիա,
Ռիզեում (Տրասխիզոն) գտնվող 42-րդ
դիվիզիայի մի մասը:

Ալեքսանդրապոլի տարածաշրջան
5-րդ դիվիզիա,
9-րդ դիվիզիա,
Կովկասի 11-րդ դիվիզիա,
36-րդ դիվիզիա:

Մայիսի 11-ին, Բաթումում բանակցությունները դեռևս չէին սկսվել, քանի որ ավստրո-հունգարական և բուլղարական պատվիրակությունները դեռևս չէին ժամանել: Համաձայն որոշ տեղեկությունների՝ գերմանացիներին և թուրքերին դեռևս չէր հաջողվել համաձայնության հանգել Կովկասի նկատմամբ ունեցած իրենց համապատասխան հավակնությունների շուրջ: Բայց սպասելով՝ գերմանական ու թուրքական գործակալներն ակտիվորեն աշխատում են այն ծրագրի իրականացման ուղղությամբ, որի հիմնական գծերը ես ներկայացրել եմ ապրիլի 16/29-ի թիվ 98 իմ զեկուցագրում:

Բաթումում բռնագրավված սննդամթերքների պաշարները և ապրանքներն ուղարկվել են Կոստանդնուպոլիս: Չաթուրիի մանգանի հանքերը գնելու և շահագործումը վերակազմակերպելու համար Թիֆլիս են ժամանել գերմանացի երկու ինժեներ: Գործակալները գնում են Երևանի ու Ելիզավետպոլի նահանգների բամբակի պաշարները: Կառավարության բույլտվությամբ գերմանացի մի սպա պաշտոնապես եկել է Թիֆլիս՝ գերիներին Բաթում տանելու հարցը՝ կարգավորելու պատրվակով: Ես գիտեմ, որ այդ սպան պետք է առաքելությամբ անհապաղ մեկնի Աֆղանստան: Մյուս կողմից, գերի թուրք զինվորները հավաքագրվել են մահմեդական կորպուսում, որտեղ, թուրք սպաների հրամանատարությամբ, նրանք կազմավորում են առանձին ստորաբաժանումներ, իսկ գերմանացի նորաբնակները կազմակերպվել են վաշտերում, որոնց հանձնարարվել է կարգ ու կանոնի պահպանումը Ելիզավետպոլի արվարձանների գերմանական գաղութների տարածաշրջանում:

Մի մասնավոր գրույցի ընթացքում ես այս բոլոր փաստերը հայտնել եմ կառավարության ժամանակավոր պաշտոնակատար պ. Ռամիշվիլուն և նրան ցույց տվել Անդրկովկասի կառավարության համար՝ չեզոքությունը խախտող որևէ պայմանի հետ կամովին չհամաձայնվելու անհրաժեշտությունը: Ես նրան նաև բացատրել եմ, որ Բաթումի պայմանագիրը կարող է լինել միայն ժամանակավոր, և որ Անդրկովկասի ճակատագիրը կկարգավորի հաշտության հետագա կոնֆերանսը:

1 Փաստաթղթի ծանոթագրությունը. «Ըվեդիայի հյուպատոս, գերմանական հանրահայտ գործակալ, կապիտան Ռոզենը, որը Թիֆլիս էր ժամանել երկու ամիս առաջ և տեղավորվել Գերմանիայի հյուպատոսության շենքում, մինչ այժմ զբաղվում էր այս հարցով»:

Ես պետք է նմանապես նշեմ մեկ այլ փաստ, ինչը կարևորություն է ներկայացնում. ռուս բնակչության գաղթը գյուղերից, որը մահմեդական ժողովուրդների շրջապատում իրեն անվտանգության մեջ չի զգում: Մուղանի տափաստանի բնակիչներն արդեն Բաքու են հասել: Կարսի և Թիֆլիսի կառավարությունների բնակիչները Հյուսիսային Կովկաս են հասնում կամ վրացական ճանապարհով, կամ Փոթիով: Ռուսական ազգային կոմիտեն՝ արդեն իրենց օջախները լքած գաղթականների թիվը սահմանում է հարյուր հազարի շրջանում:

Այս գաղթը, որը հետազայում, հավանաբար, կշարունակվի, իբրև հետևանք կհանգեցնի հավասարակշռության էլ ավելի մեծ խախտմանը քրիստոնյա բնակչության և արդեն մեծամասնություն կազմող մահմեդական բնակչության քանակների միջև: Դա նպաստում է այն քաղաքականությանը, որը Թուրքիան չի զլանա որդեգրել, եթե Անդրկովկասը երկար ժամանակ մնա իր ազդեցության ներքո և որը կարելի է ամփոփել այսպես. վտարել ռուսներին, նվազեցնել (այն միջոցներով, որոնք հայտնի են) հայերի քանակը, այս ծրագիրն իրականացնելուց հետո վրացիներին պարտադրել իսլամը կամ վտարել Կովկասից:

Երզնկայի, Ալեքսանդրապոլի և Վանի միջև՝ ավելի քան 600 կիլոմետր տարածությամբ, երկիրը դարձել է արդեն մի իսկական անապատ, որտեղ ոչ մի հայ կամ քրիստոնյա չի մնացել և որտեղ, քաղաքներից դուրս, կարելի է հանդիպել միայն քուրդ բնակչության, ի դեպ, խիստ սակավաթիվ: Այնպես, ինչպես հին վարչակարգի օրոք ռուսական կառավարությունը ցանկացավ իր գորքերի գրաված հայկական սարահարթի ծայրամասում հիմնավորել ռուս և կազակ բնակիչների, Թուրքիան ևս կնպաստի դեպի այս անապատային տարածաշրջանները մահմեդականների տեղահանությանը Պարսկաստանից, Կովկասի և Օսմանյան կայսրության այլ վայրերից: Հավանաբար, նույնիսկ Գերմանիան կջանա ավելի ուշ, ամենուհարուստ շրջաններում՝ Մուշի, Վանի, Կարսի հարթավայրերում ստեղծել գաղութաբնակեցման մի քանի կենտրոններ, ինչպիսիք արդեն ունի Կովկասում:

Ամեն դեպքում, Կովկասի ռուսների՝ դեպի Ռուսաստան տեղափոխվելու նպատակ հետապնդող շարժումն սկսվել է. այն կարող էր շատ ավելի մեծ ծավալներ ընդունել, հատկապես սպաների, պաշտոնյաների, ինժեներների, պրոֆեսորների և այլոց շրջանում, եթե հաղորդակցությունը Բաքվի երկաթգծով հնարավոր լիներ: Այս շարժումը ոչ միայն մեծ վնաս կպատճառի երկրի շահերին, նրա բուն իսկ կյանքին, որն այս պահին արդեն այդչափ տագնապալից է, այլև կարող է բավական երկար ժամանակով հետաձգել նրա զարգացումը տնտեսական բարգավաճման ուղիով և ռուսական իշխանության վերահաստատումը:

(A.M.G., 6 N 226).

615

Թորիսում Ֆրանսիայի հյուպատոս պ. Մորիս Սոգոնը Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին

Հ. թիվ 011:

Թորիս, 14-ը մայիսի 1918 թ., ժ. 14.30-ին:
(Ստացվել է 15-ին, ժ. 19.50-ին,
Քաղ. վարչ. կողմից մայիսի 16-ին):

Ես պատասխանում եմ 18 ձեր հեռագրին¹:

Այստեղ իրավիճակը շարունակում է մնալ անորոշ, մոտավորապես 1000 թուրք ...² Թուրքի ստրաժաշտանում. մի քանի խմբեր Սուջ Բուլարում են, Ուշնույում և Սուլթուզում. եզակի սպաներ են այցելում գլխավոր կենտրոնները: Հավակներով միայն Ուրմիայի տարածաշրջանի քաղղեացիների դեմ մարտնչելուն, նրանք իրականում, թվում է, թե հետապնդում են երկակի նպատակ. նախ՝ գրավել Ուրմիա լճի հյուսիսային և արևելյան՝ վաղուց ի վեր վիճելի գոտին, այնուհետև՝ մեր թշնամիների՝ դեպի իրենց հակած դեմոկրատների խռովարար խմբակցության համաձայնությամբ, աջակցել Թուրքիայի գերիշխանության ներքո անկախ մահմեդական պետության ստեղծմանը, որը կընդգրկի Ալլիբեջանը, Հարավային Կովկասը և Հայաստանի մի մասը: Պարսկական կառավարությունը և բնակչությունը սարսափում են մնան հնարավորությունից, բայց պաշտոնական իշխանությունն անգոր է այս դեմոկրատ ահաբեկիչների առջև: Մեզանում տիրում է կատարյալ անիշխանություն, Անգլիայի հյուպատոսը³, Ռուսաստանի հյուպատոսը⁴ դուրս են բերել իրենց գաղութների մի մասը, ես ինքս, Թեհրան եմ ուղարկել 9 քույրի և 1 կրոնավորի:

Միայն անգլիացիներին երթարշավը [դեպի] Ռ-կանդոզ ի գործ կլինի վերացնել թուրքական սպանալիքը և փրկել 50000 տեղաբնակ քրիստոնյաների:

Քանի որ Կովկասի ճանապարհն օգտագործելն անհնար է, մեր դաշտային հիվանդանոցն Ուրմիայում, դեմոկրատների բազմաթիվ դառնությունները ճաշակելուց հետո, հինգ-շաբթի օրը թողել է Թավրիզն՝ ուղղություն վերցնելով դեպի Ղազվին, Համադան, Բաղդադ:

Ալլիբեջանի իշխանությունը վճռել է հաշտություն կնքել Ուրմիայի քաղղեացիների հետ, որպեսզի վերացնի օսմանյան ներխուժման պատրվակը:

Ապրիլի 23-ից ի վեր Թիֆլիսից որևէ տեղեկություն չկա:

(A.M.A.E., E-Asie, Perse, tome 23, f. 56).

Կովկասում Ֆրանսիայի ռազմական առաքելության ղեկավար, փոխգնդապետ Շարդինյին՝ Ռուսաստանում Ֆրանսիայի ռազմական կցորդ, գեներալ Լավերնյին

Ճ. թիվ 104:

Թիֆլիս, 16-ը մայիսի 1918 թ.:

Երեկ, մայիսի 15-ին, Անդրկովկասի կառավարությունը հրապարակեց հետևյալ պաշտոնական հաղորդագրությունը. «Թուրքերը հարձակում են սկսել Ալեքսանդրապոլի ուղղությամբ: Մարտը սկսվել է մայիսի 15-ին, արավոտյան ժ. 7.15-ին: Թուրքերը ներկայաց-

1 Արտատպված չէ:
2 Վերծանման բացթողում:
3 Պ. Բրիսթոուն:
4 Պ. Ստոլիտսան:

րել են հետևյալ վերջնագիրը. «Անգլիացիները ճնշում են գործադրում Ջուլֆայի վրա՝. Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթուղին անհրաժեշտ է թուրքերի համար, որպեսզի տեղափոխեն իրենց զորքերը. և թուրքերը պահանջում են, որ մինչև հաշտության կնքումը. մեր զորքերը 25 վերստ նահանջեն երկաթուղուց: Երբ հաշտությունը ստորագրվի, քաղաքը և երկաթուղին կվերադարձվեն անդրկովկասյան կառավարությանը»:

Կառավարությունն այս փաստը հաղորդել է Բաթումի պատվիրակության նախագահին¹, որպեսզի նա թուրք գլխավոր իրամամատարին², օսմանյան և գերմանական պատվիրակություններին ամենաեռանդազին բողոքը ներկայացնի ու պահանջի ռազմական գործողությունների անհապաղ դադարեցում:

Միաժամանակ, կարգադրություն է արվել Ալեքսանդրապոլում մեր իրամամատարին, մինչև Բաթումում հարցի լուծումը՝ հարձակումը կասեցնելու համար բանագնացներ ուղարկելու կամ, հակառակ դեպքում, մարտն ընդունելու մասին:

Այսօր, մայիսի 16-ին, շտաբը հայկական բանակային կորպուսի հրամանատար, գեներալ Նազարբեկովից ստացավ հետևյալ հեռագիրը, որը ես կարծում եմ՝ պարտավոր եմ քարզմանել *ամբողջությամբ*.

«Առավոտյան ժամը մեկին ես ժամանել եմ Ղարաքիլիսա, գալով Ալեքսանդրապոլից, ուր մեկնել էի երեկ երեկոյան ժ. 5-ին: Այն պահին, երբ ես լքեցի այս վերջինը, իրադարձություններն արդեն որևէ հույսի տեղ չէին թողնում: Մեր ձախ կողմում, թուրքերը գրավել էին Օրթաքիլիսան, հատել երկաթգիծը և շարունակում էին իրենց հարձակումը Սջաջուրի [sic] վրա: Մեր աջ կողմում թուրքերը գրավել են Փոքր Ղարաքիլիսան և հայտնվել Ալեքսանդրապոլի թիկունքում: Բոլոր պաշարները սպառված էին: Թուրքերի՝ զինադադարի անսպասելի և անժամանակ խախտումը քաղաքում և շրջակա գյուղերում տեղիք է տվել անհավատալի խուճապի: Ամբողջ բնակչությունը ճողոպրել է, իր հետ տանելով զինվորներին, որոնք լքել են շարքերը՝ փրկելու համար իրենց ընտանիքները: Տեսնելով, որ իրադրությունը միանգամայն անհուսալի է, մինչև Ալեքսանդրապոլը թողնելը, ես հրաման արձակեցի, թուրքերի մոտ բանագնացներ ուղարկելու մասին, որոնք պետք է լինեին միաժամանակ գորքերի և քաղաքի բնակչության ներկայացուցիչներից, պայմանավորվածություն կայացնելու համար, որքան հնարավոր է ձեռնառու պայմաններով, քաղաքը հանձնելու միջոցառումների շուրջ: Միաժամանակ, ես կարգադրեցի գեներալ Արիեշովին՝ զիջելով ընթացքում նահանջել դեպի Ջաջուրի լեռնանցքը³, դեպի նախօրոք պատրաստված դիրքը: Ահա 1-ին դիվիզիայի շտաբի պետից զիջելովս ընթացքում ստացված հայտագրի բնագիրը. «Բերդամյուցի և քաղաքի հանձնման պայմանները»:

- 1/ Ամբողջ ռազմամթերքը պետք է մնա տեղում և գեներալ պետք է հանձնվեն:
- 2/ Թուրքական զորքերի մի մասը կմտնի քաղաք՝ այնտեղ կարգ ու կանոն հաստատելու համար, մյուս զորքերը կշարունակեն իրենց հարձակումը դեպի արևելք:
- 3/ Մեր զորքերը պետք է 25 կիլոմետր նահանջեն Արփաչայից:
- 4/ Կայարանը, մեքենաների նստգակայանը, վերանորոգումների շինարարական հրա-

1 Փաստաթղթի ծանոթագրությունը. «Ես որևէ տեղեկություն չունեմ անգլիական զորքերի ներկայության մասին Ջուլֆայում, ոչ էլ Թավրիզում, որտեղից մայիսի 7-ին ստացել եմ ծածկագրված հեռագիր, որն այդ մասին ոչինչ չի հիշատակում: Ինձ թվում է, որ պատրվակը համանման է այն պատրվակին, որի վրա 1914 թ. հիմնվել էին գերմանացիները՝ խոսելով Նյուրնբերգի վրա ֆրանսիական սավառնակների հարձակման մասին»:

2 Պ. Չխենկելին:
3 Վեհիք փաշան:
4 Փաստաթղթի ծանոթագրությունը. «Հայ հրաձիգների 1-ին դիվիզիայի հրամանատարը»:
5 Փաստաթղթի ծանոթագրությունը. «Բրդամյուցի տասներկու վերստ դեպի հ (յուսիս) ա (րևելք)»:

պարակները, գնացքաքարշերը և վագոնները, ինչպես նաև ամբողջ քաղաքն ու բերդամյուցը պետք է մնան անվնաս:

Իրադրությունը մայիսի 15-ի երեկոյան. աջ թևում թուրքերը, չնայած մեր ջանքերին, անբացրել են Օրթաքիլիսան և հյուսիսային բարձունքները. կենտրոնում, նրանք խրամատավորվել են բերդամյուցի առջև. ձախ թևում, նրանք գրավել են Թափաղալաքը և Փոքր Ղարաքիլիսան, որտեղից շարունակել են շարժվել դեպի արևելք. աջ թևում, թուրքերը մեզ շրջանցել են լեռներով:

Հրածիզների 4-րդ գունդը չի կարողացել կասեցնել թուրքական հարձակումը և նահանջել է դեպի Ջաջուռ:

3-րդ գունդն ուղղություն է վերցրել դեպի Դյուսպետի տարածաշրջան, դրա մի մասը՝ դեպի Օրթաքիլիսա, մյուս մասը՝ ձախ թևին աջակցելու համար:

Ձախ թևում 1-ին և 2-րդ գնդերը նահանջել են դեպի Մեծ Կապանաքի բարձունքները:

8-րդ գունդը շարունակում էր դժվարությամբ պահպանել դիրքերն Ալեքսանդրապոլի հյուսիսում և հյուսիս-արևելքում:

Այլ միավորումների և բազմաթիվ այլ ստորաբաժանումների կացությունն անհայտ է: Չորքերին հրաման է տրվել դիմադրելու Ջաջուռ-Խամվալի բարձունքի գծում:

Կեսգիշերին ստացվեցին թուրքերի պայմանները, որոնք ներկայացվել են վերը:

Հաշվի առնելով զորքերում տիրող խառնաշփոթը և մարտնչելու նրանց նվազ կարողությունը, ինչպես նաև Ալեքսանդրապոլի կայազորի ստորաբաժանումների՝ Ջաջուռի լեռնանցքի հյուսիսային հատվածը գրավելու անհնարինությունը, կարծելով, բացի դրանից, որ այս պատճառներով, անհնար է պահպանել Ջաջուռ-Նատաղիլի բարձունքները, ես վճռեցի համաձայնել թուրքերի պայմաններին և կարգադրել զորքերին նահանջել դեպի Գեկ Էկհուր, Բեքանո, Ավդիբեկ, Փամբակ՝ գիծը՝ ունենալով ռազմաճակատում պաշտպանող զորամաս և թևերում՝ հսկող ստորաբաժանումներ, այնպես որ զորքերում պահպանվի կարգը և նրանք ի վիճակի լինեն ընդունել մարտը և այս ոգով հրամաններ տվեցի: 16-ը մայիսի, ժ. 4.35-ին»:

«Նկատի ունենալով զորքերում տիրող խառնաշփոթն ու մարտն ընդունելու և Ջաջուռի դիրքերը պահպանելու կատարյալ անհնարինությունը՝ ես ընդունեցի դիվիզիայի հրամանատարի առաջարկությունները և հրամայեցի գրավել վերը նշված գիծը:

16-ը մայիսի, ժ. 9.30-ին: Ստորագրված է՝ Նազարբեկով»:

Չինադադարի այս խախտումից, ես հանգում եմ հետևյալ եզրակացություններին.

1/ Ռազմական տեսակետից լինելով Անդրկովկասի տերն ու տնօրենները, թուրքերը, ինչպես ես ներկայացրել եմ մայիսի 13-ի թիվ 103 իմ գեկուցագրում, այժմ Անդրկովկասի կառավարությունը համարում են իբրև մի երաշխիք, որը կարելի է հաշվի չառնել:

2/ Թուրքերի ակնհայտ մտադրությունն այն է, որ հայկական զորքերին վերջնականապես և մեկը մյուսի ետևից գրկեն պայքարը շարունակելու հնարավորությունից, ներքին նահանգների հետ յուրաքանչյուր հաղորդակցությունից, որտեղից նրանք այլևս չկարողանան ո՛չ սննդամթերքներ, ո՛չ ռազմամթերքներ ստանալ և գրավեն ռազմամթերքների ու սննդամթերքների այն հսկայական քանակությունը, որը պահվում է Ալեքսանդրապոլի պահեստներում²:

Բացի դրանից, թուրքերի՝ Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթուղուց հյուսիս գտնվող 25 կիլոմետրանոց գոտու գրավումը նրանց տնօրինությանն է հանձնում Արաքսի ամբողջ հո-

1 Փաստաթղթի ծանոթագրությունը. «Ալեքսանդրապոլից մոտավորապես 25 վերստ դեպի արևելք»:
2 Փաստաթղթի ծանոթագրությունը. «Ռազմամթերքների միայն մի մասն է տարվել դեպի Ղարաքիլիսա, որտեղ ներկայումս գտնվում է հայկական բանակային կորպուսի շտաբը: Սննդամթերքների պաշարներն ընկել են բոթորների ձեռքը: Բեղդում կային պաշարներ, որոնցով կարելի էր մեկ տարի կերակրել երկու բանակային կորպուսի»:

վիտը, որը հայկական սարահարթի ամենաբերրի հովիտն է և սովի հետ մեկտեղ կհանգեցնի հավտի հայ բնակչության գաղթին՝ պատճառելով նոր զոհեր:

3/ Այս ձևով, գրեթե ամբողջությամբ մեկուսացնելով Հայաստանը Վրաստանից, թուրքերը հետագայում կկարողանան հեշտությամբ հաղորդակցվել Թիֆլիսից հարավ ընկած տարածաշրջանի թաթար բնակչության հետ, որը գտնվում է Կուրի հարթավայրի հարևանությամբ և հայերն ամբողջությամբ կշրջափակվեն մի կողմից՝ թուրքերով, մյուս կողմից՝ թշնամի մահմեդական բնակչությամբ:

Ես հավանական և, հավանաբար, խիստ մոտալուտ եմ համարում անդրկովկասյան խնդրի հետևյալ, կարծում եմ, ժամանակավոր լուծումը.

Վրաստանի ինքնավարության հռչակումը՝ թուրքական պրոտեկտորատի ներքո, Թիֆլիս մայրաքաղաքով:

Հարավային Կովկասի մյուս բոլոր տարածաշրջանների՝ և Հյուսիսային Կովկասի մահմեդական լեռնականների միացումն ուղակիորեն Թուրքական կայսրությանը, որին անհապաղ կհաջորդի Բարվի բուլշևիկների դեմ ռազմարշավը, իսկ հետագայում՝ Հարավային Կովկասի մահմեդականների զինված անձնակազմերի ռազմական օգտագործումը թուրքերի կողմից:

Անդրկովկասի կառավարությունը եղել է փաստորեն միայն անցումային կառավարություն, որը կարող էր ծառայել Անդրկովկասի անցումը ռուսական տիրապետությունից թուրքական տիրապետության ներքո դյուրին դարձնելուն:

Ինչ վերաբերում է Ռուսահայաստանին, ես վախենում եմ, որ այն կարող է գտնվել այնպիսի մի ողբերգության նախաշեմի (հավանաբար, նվազ արյունալի), որը համանման լինի 1915 թ. Թուրքիայում տեղի ունեցած ողբերգությանը: Վախճանը կախված է այն եռանդից, որը հայ ժողովուրդը և նրա առաջնորդները, ապավինած միայն իրենց միջոցներին, կկարողանան ի հայտ բերել իրենց գոյության պաշտպանության համար:

(A.M.G., 6 N 226).

Պաղեստինում և Սիրիայում Ֆրանսիայի Գերագույն կոմիսար պ. Ժորժ-Պիկոն՝ Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին

Ճ. թիվ 256:

Կաեփե, 17-ը մայիսի 1918 թ., ժ. 1.20-ին:
(Ստացել է Քաղ. վարչ. մայիսի 17-ին):

Բաղդադում մեր հյուսպատուսի՝ միջնորդությամբ, հայկական կոմիտեներն ինձ հարցնում են, թե ինչպի՞սի շարունակություն կարելի է տալ այն ծրագրին, որը նրանք նրան են ներկա-

1 Փաստաթղթի ծանոթագրությունը. «Ելիզավետպոլի և Շամախու (Բարվի մոտակայքում) մահմեդական բնակչության մի պատվիրակություն այս պահին Բաթումում է, ուր գնացել է խնդրելու համար ընդգրկել այս տարածաշրջանները Թուրքական կայսրության կազմում: Այդ պատվիրակությունը գլխավորում է «Մուսավաթ» կոչվող մահմեդական ռազմական կազմակերպության առաջնորդ դոկտոր Սուլթանովը»:
2 Պ. Ռուն:

յացրել Արևելյան լեզունի համար նախատեսվող կամավորների զինվորագրման շուրջ:

Ես երախտապարտ կլինեմ Ձերո գերագանցությանը, եթե ինձ իրավասու դարձնեք պատասխանելու այս հարցին:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, *Turquie*, tome 68, f. 31).

618

**Կովկասում Ֆրանսիայի ռազմական առաքելության ղեկավար,
փոխգնդապետ Շարդինյին՝ Ռուսաստանում Ֆրանսիայի
ռազմական կցորդ, գեներալ Լավերնյին**

Ճ. քիվ 106:

Վլադիկավկազ, 20-ը մայիսի 1918 թ.:

Թիֆլիսից իմ մեկնելու նախօրեին, մայիսի 17-ին, ես այցելեցի Հայկական ազգային խորհուրդ՝ հրաժեշտ տալու նրա նախագահ պ. Ահարոնյանին ու տարբեր անդամների, որոնց հետ հարաբերություններ ունեի ավելի քան 6 ամիս:

Այդ այցի ընթացքում, պ. Ահարոնյանն ինձ հաղորդեց ռազմաճակատից ստացված վերջին լուրերը, որոնք կարելի է ամփոփել այսպես.

Ալեքսանդրապոլի արվարձաններում հայկական զորքերը գրավում են այն դիրքերը, որոնք գտնվում են Ալեքսանդրապոլից 25 վերստ դեպի արևելք, որի մասին ես հիշատակել եմ մայիսի 16-ի քիվ 104 իմ զեկուցագրում¹: Թուրքական զորքերի ժամանումը հրահրել է տարածաշրջանի և Արաքսի հովտի ամբողջ հայ բնակչության համընդհանուր փախուստը: Սուրմալուի, Ալեքսանդրապոլի և Էջմիածնի մարզերից բնակչությունն արդեն ամբողջությամբ դուրս է եկել, սկսվել է բնակչության հեռացումը Երևանի մարզից: Զանի որ նախքան պատերազմն այս կառավարության ռուսահայերի քիվը հասնում էր 668000-ի, շուտով դեպի Թիֆլիս՝ կամ ուղղակիորեն Ալեքսանդրապոլից Թիֆլիս ձգվող ճանապարհով, Բորչալուի գավառով, կամ այն ճանապարհով, որը Թիֆլիս է հասնում Ղազախով ու Աղստաֆայով, կհորդա գրեթե մեկ միլիոն գաղթականների ալիքը: Հայկական ազգային խորհուրդն այն կարծիքին է, որ հարկ է վրացական ճանապարհով գաղթականների այս բազմությունն ուղղել դեպի Հյուսիսային Կովկաս, հավանաբար, դեպի Ստավրոպոլի կառավարություն: Այդուհանդերձ, որևէ հաստատուն վճիռ այս առթիվ դեռևս չի կայացվել: Հյուսիսային Կովկասի իշխանություններին դիմելով՝ ես կանեմ այն ամենն, ինչ կարող եմ՝ գաղթականների այս շարժումը դյուրին դարձնելու և օգնություն ցուցաբերելու ուղղված պարտադրվող միջոցառումները, նրանց հետ համաձայնեցված ձևով, կարգավորելու համար: Ես անհրաժեշտ եմ համարել, որ այս առթիվ Ժողովրդական կոմիսարների խորհրդի կառավարությունը ևս հրահանգներ ուղարկի Հյուսիսային Կովկասի իշխանություններին և կարծում եմ, որ ձեր միջամտությունը Մոսկվայում գտնվող կառավարությանը կարող է այս առումով շատ օգտակար լինել: Հենց որ ես տեղեկանամ Հայկական ազգային կոմիտեի ընդունած վերջնական որոշմանը, ձեզ այդ մասին հեռագրով հաշվետվություն կներկայացնեմ: Եթե հայ

¹ Տես վերը քիվ 616 փաստաթուղթը:

բնակչությունը կարողանա հաստատվել Հյուսիսային Կովկասում և եթե պատերազմից հետո ռուսներն իրենց տիրապետությունը վերահաստատեն Անդրկովկասում, հավաստի է, որ հայերը կրկին ուղղություն կվերցնեն դեպի Ռուսահայաստանի իրենց հողերը: Բայց եթե երկիրը մնա թուրքերի տնօրինության տակ, նրանք կփնտրեն մի տարածաշրջան, որտեղ կարողանան մշտապես հաստատվել:

Ես կարծեցի, որ նման հնարավորության պարագայում, կարելի է նախատեսել նրանց օգտագործումը Հյուսիսային Աֆրիկայի, մասնավորապես, Մարոկկոյի մեր գաղութներում, որտեղ նրանցից գաղութաբնակեցման լուրջ տարր կձևավորվի: Արդյո՞ք ֆրանսիական կառավարությունն այս լուծումը կդիտի իբրև ձեռնառու և արդյո՞ք հակված կլինի պաշտոնապես նպաստել արտագաղթի նման ալիքին¹: Եթե այո, ապա ցանկալի կլինի, որ ինձ այդ մասին տեղեկացնեն, որովհետև կարծում եմ, որ Ամերիկյան կամ Անգլիան չեն հապաղի Հայկական ազգային կոմիտեին այլ խոստումներ տալ:

Նույն օրը, մայիսի 17-ին, հավաստի սկզբնաղբյուրից ես իրագեկ դարձա, որ թուրքերը Բաթումում այլևս չեն բավարարվում 1878 թ. սահմաններով, այլ բացի դրանից, պահանջում են Ախալքալաքի և Ախալցխայի մարզերը (Ախալցխայի նախկին փաշայությունը), Ալեքսանդրապոլի մարզը և Երևանի ու Նախիջևանի նախկին խանությունները, այն է՝ 1828 թ. սահմանը և որոշ կետերում՝ նույնիսկ ավելին: Բացի դրանից, նրանք պահանջում են Բաթում-Թիֆլիս-Բաթու գծի ազատ տնօրինումը և տնտեսական տարբեր առավելություններ, որոնք ինձ համար չեն ճշգրտվել:

Ռազմագերիների փոխանակման հարցն արդեն կարգավորվել է, Անդրկովկասի կառավարությունը մայիսի 15-ին հավանություն է տվել այս առիթով օսմանյան և անդրկովկասյան պատվիրակությունների՝ Բաթումում մշակած համաձայնագրին, անկախ այն բանից, թե ինչպիսին կլինի հաշտության բանակցությունների ավարտը:

Այս պայմաններում, ես կարծում եմ, ինչպես այդ մասին հիշատակել եմ մայիսի 16-ի քիվ 104 իմ զեկուցագրում, որ Բաթումում տեղի ունեցած «բարեկամության պայմանագրի» բանակցությունները կավարտվեն, անկասկած, Անդրկովկասը Թուրքական կայսրության կազմում ընդգրկելով, իսկ Վրաստանը կպահպանի իր ինքնավարությունը: Հյուսիսային Կովկասի մասնազանգված լեռնականները, հրահրված թուրքական ակտիվ քարոզչությամբ, կմիանան Անդրկովկասին, կգրավեն Վլադիկավկազը և կջանան Թերեքի կազակներից ետ վերցնել այն հողերը, որոնք վերջիններս նրանցից զավթել են մեկ դար առաջ, և որոնք իրենք չեն դադարել պահանջելուց: Այդժամ, Հյուսիսային Կովկասը հարկադրված կլինի պատերազմելու երկու ռազմաճակատներում, գերմանական ռազմաճակատում՝ դեպի Ռոստով և թուրքական ռազմաճակատում՝ Թերեքի տարածքում:

(A.M.G., 6 N 226).

¹ Փաստաթղթի ծանոթագրությունը. «Ես այս հարցն առաջադրում եմ տեղեկատվության կարգով: Մա անձնական կարծիք է, որի շուրջ որևէ մեկի հետ չեմ գրուցել»:

Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշան Արտաքին գործերի նախարարությունում Ասիայի փոխտնօրեն պ. Ժան Գուին

Ն:

Փարիզ, 21-ը մայիսի 1918 թ.:
(Ստացել է Ասիայի փոխվարչ (ությունը) մայիսի 22-ին):

Ես պատիվ ունեմ ձեզ հայտնել մայիսի 16-ի ձեր նամակի ստացման մասին, որով դուք բարեհաճել էիք ինձ փոխանցել Արտաքին գործերի դեպարտամենտի Պարսկաստանի իր նախարարից ստացած հեռագիրը:

Ես ձեզ առավել ևս երախտապարտ եմ այդ տեղեկության համար, քանի որ դա, անտարակույս, լավագույնն է վաղուց ի վեր մեր ստացածների թվում: Հիրավի, բուլղարները խոչընդոտել էին դաշնակիցների առաքելություններին մուտք գործել Կովկաս և շատ ուրախալի է, որ այսօր նրանք են խնդրել բրիտանական օգնությունը: Մյուս կողմից, ես համոզված եմ, որ ներկա պարագայում բուլղարներ ասելով, հարկ է նկատի ունենալ հայերին, և որ առնվազն այդ հայերի դրոշմամբ է, որ բուլղարները խնդրել են անգլիացիների օգնությունը:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, *Caucase-Kurdistan*, tome 1, f. 60).

Արտաքին գործերի նախարարը՝ Պաղեստինում և Սիրիայում Ֆրանսիայի Գերագույն կոմիսար պ. Ժորժ-Պիկոյին

Հ. թիվ 201:

Փարիզ, 21-ը մայիսի 1918 թ., ժ. 23-ին:

Ես պատասխանում եմ ամսի 17-ի թիվ 256 ձեր հեռագրին²: Այդ ծրագրին չի կարող շարունակություն տրվել Միջագետքի բրիտանական իշխանությունների դրսևորած դիմադրության պատճառով, որոնք, անկասկած, ցանկանում են օգտագործել հայերին Կովկասի ուղղությամբ:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, *Turquie*, tome 68, f. 38).

1 Ստորագրել է պ. դը Մարտերին:
2 Տե՛ս վերը թիվ 617 փաստաթուղթը:

Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշան Արտաքին գործերի նախարարությունում Ասիայի փոխտնօրեն պ. Ժան Գուին

Ն:

Փարիզ, 21-ը մայիսի 1918 թ.:
(Ստացել է Ասիայի փոխվարչ (ությունը) մայիսի 22-ին):

Հիմնվելով այն նամակի վրա, որը դուք բարեհաճել եք ինձ հղել ը(նթացի)կ (ամսի) 17-ին՝ թշնամական բանակների դասալիք հայերի կապակցությամբ, որոնց՝ Արևելյան լեզեռնին զինվորագվելու շուրջ համաձայնություն էր կայացվել, ես պատիվ ունեմ ձեզ տեղեկացնել, որ ձեր հաղորդագրությունը փոխանցել եմ Մարսելի Հայկական ազգային միության նախագահ պ. Սահատջյանին, որպեսզի նա ընդունի այս կամավորների ինքնությունը պարզելու շուրջ Արտաքին գործերի դեպարտամենտի կայացրած որոշումները, որոնք համաձայնեցված են Ռազմական նախարարության հետ:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, *Turquie*, tome 68, f. 40).

Ռազմական նախարարության Գերագույն խորհրդի ծանուցագիրը՝ Կովկասի և Պարսկաստանի վերաբերյալ

Վերսալ, 22-ը մայիսի 1918 թ.:

I

Թուրք-գերմանական նպատակները. Այն հաջողությունները, որոնց հասել են թուրքական բանակները Հայաստանում, Կովկասում և Ադրբեջանում, բորբոքել են օսմանյան մոլեռանդությունն ու թուրք ղեկավարների շրջանում նպաստել պանթուրանական գաղափարների բուռն տեղաշարժին, որը նպատակ ունի կազմավորել Արևելյան Հայաստանի հետ մեկտեղ Դրիմը, Անդրկովկասը, Թուրքեստանը, Պարսկաստանը և, հավանաբար, նույնիսկ Վոլգայի ավազանն ընդգրկող լայնածավալ կայսրությունը:

Այս ճանապարհով, Գերմանիան կապահովի գերիշխանությունը մեծ ռեսուրսներ ունեցող երկրների նկատմամբ: Նա կամբողջացնի Ռուսաստանի քաղաքական և տնտեսական շրջափակումը և ուղղակիորեն կսպառնա Անգլիական Հնդկաստանին:

Այն իրադարձությունները, որոնք տեղի են ունեցել վեց ամսից ի վեր, ապացուցում են,

1 Արտատպված չէ: Պ. Գուն հայտնում է Պողոս Նուբար փաշային, թե Ռազմական նախարարը մայիսի 4-ին հայտնել է XV օկրուգի հրամանատար գեներալին, որ հայ կամավորների քննության հարցում պ. Սահատջյանին կարելի է բույլատրել գործելու ինքնուրույնաբար, ռազմագերիների ծառայության հսկողության ներքո:

որ այս ծրագիրն իրականացման ընթացքում է և, որ դրան հակադրվելու հարցում Անտանտի ջանքերը պետք է առաջ մղվեն որքան հնարավոր է արագ և ծայրահեղ արդյունավետությամբ:

II

Ներկա իրադրությունը: Թուրքական կողմը. 1918 թվականի սկզբից ի վեր, թուրքական բանակները, որոնք ավելի քան մեկուկես տարի կանգնեցվել էին այն ռազմաճակատում, որին 1916 թ. հասել էին մեծ դուքս Նիկոլայ Նիկոլաևիչի բանակները, առաջ են ընթացել չնայած ռուսական, վրացական կամ հայկական որոշ ստորաբաժանումների ցուցաբերած տեղական դիմադրություններին, նրանք առաջ են շարժվել մինչև Բաթում-Բորժոմ-Բայազետ-Մարանդ-Մարաղա-Մաքիզ գիծը: Ռազմերթի ընթացքում նրանց օգնել են այն նահանգների մահմեդական տարրերը, որոնցով նրանք անցել են կամ դեպի ուր ուղղություն են վերցրել: Արարատ-Երևան տարածաշրջանում նրանց միացումը թաթարների հետ անխուսափելի է:

Նրանց ակնհայտ նպատակները՝ Թիֆլիսը, Բաթում և Կասպից ծովի հարավային ափերն են, որպեսզի գրավեն Հարավային Կովկասի ամբողջ տարածաշրջանը և այն կտրեն Միջագետքի ու Պարսկաստանի բրիտանական բանակների հետ՝ դեպի հարավ ձգվող յուրաքանչյուր հաղորդակցությունից:

Օսմանյան բանակը համեմատաբար թույլ է, դա հավաստի է (մոտավորապես 25000 մարդ), այն վատ է կերակրվում, վատ է հանդերձավորված և պետք է, որ բավական մեծ կորուստներ կրած լինի այն մարտերում, որոնք մղել է ճանապարհին, բայց իր անվանն արժանի և ոչ մի կազմակերպված ուժ, թվում է, թե չի կարող դիմակայել նրա ռազմերթին:

Ռուսական կողմը. 1917 թ. նոյեմբերի վերջերին Թիֆլիսում կազմակերպվել է մի ժամանակավոր կառավարություն, որի կազմում ընդգրկվել են ռուսներ, հայեր, վրացիներ, թաթարներ՝ կարգ ու կանոնը վերահաստատելու և բուլշևիկյան մեքենայություններին դիմադրելու համար: Նախ և առաջ՝ այն ջանացել է կազմավորել ազգային զորքեր. այդ փորձը ձախողվել է:

Իր կամքը պարտադրելու համար չունենալով կազմակերպված ուժ, այս տարատեսակ տարրերի միջև ընթացող պայքարի հետևանքով ներքուստ մասնատված, Կովկասի ժամանակավոր կառավարությունն արագորեն մատնվել է կատարյալ անզորության և այժմ թվում է, թե մոտ ապագայում անհետանալու է:

Հայերը, շնորհիվ դաշնակիցների օժանդակության, կարողացել են կազմակերպել մի քանի ազգային ստորաբաժանումներ:

Թեպետ փոքրաքանակ և վատ հանդերձավորված, հենց այս զորքերն են, որ դիմակայել են թուրքերին և նրանց պատճառով զգալի կորուստներ: Հայերին միացել են որոշ ասորիներ, որոնք կազմավորել են միայն 3 գումարտակ: Մյուս կողմից, թվում է, թե ներկա պահին հայերը կարող են թուրքերի դեմ ուղղված իրենց գործողություններում հույսեր կապել Մոսկվայի կառավարության աջակցության հետ: Թուրքական բանակներին դիմադրելու համար վրացիները ևս կազմակերպել են մի քանի ստորաբաժանումներ, բայց նրանց և հայերի միջև բարդություններ են ծառայել էնվեր փաշայի առաջարկած հաշտության առիթով, և այժմ նրանք հակված կլինեն պայմանավորվածություն կայացնելու թաթարների հետ, չնայած՝ կրոնական տարբերությունը շարունակում է նրանց միջև մնալ իբրև դաշինքի հանգելու ամենամեծ խոչընդոտը. նրանց դիրքորոշումը կասկածելի է:

Ինչ վերաբերում է թաթարներին, նրանք հստակորեն ի հայտ են բերել իրենց բարեհամբույր թուլքերի հանդեպ: Թուրք-գերմանական քարոզությունը նրանց մեծապես երահել է, քանի որ նրանք ևս մահմեդական՝ են, որոնք՝ թվում է, թե մերձեցում են փնտրում թուրքական ընտանիքի այլ բեկորների հետ: Առաջնահերթ նպատակը լինելու է Թուրքիայի հովանու ներքո գտնվող թաթարական պետության ստեղծումը, որը կընդգրկի Ադրբեջանը և Գիլանից հյուսիս ձգվող տարածքների մի մասը:

Պարսկաստան. Պարսկական կառավարությունը, որը ներքուստ թույլ է և գտնվում է խռոնաշփոթ իրավիճակում, արտաքին աշխարհում ունի շատ ավելի գերմանամոլական միտում: Նա իրոք թույլատրում է, որ թշնամական քարոզությունն ազատորեն բարգավաճի մի երկրում, որտեղ թուլքերը և գերմանացիները կարող են բացահայտորեն հենվել բուլշևիկների, դեմոկրատների՝ քաղաքական մի տարրի վրա, որը հզոր է հատկապես քաղաքներում, Թուրիսի տարածաշրջանում, խռովություն բարձրացրած ցեղերի, մասնավորապես, ժուճգալիսների վրա:

Թեհրանի կառավարությունն ակնհայտորեն ցուցաբերում է վնասակար, եթե ոչ թշնամական վերաբերմունք բրիտանական կառավարության հանդեպ, որին վերջերս կոչել է դուքս բերել զորքերը Պարսկաստանի հարավից: Այդ պահանջն, ի դեպ, մերժվել է:

III

Անտանտի արդեն ձեռք բերած արդյունքները

Կովկաս. 1917 թ. դեկտեմբերի 23-ի ֆրանս-բրիտանական համաձայնագիրը ճշգրտել է Հարավային Ռուսաստանի այն տարածաշրջանները, որտեղ Ֆրանսիան և Անգլիան համապատասխանաբար կծավալեն իրենց գործունեությունը: Այն, մասնավորապես, Անգլիային է հատկացնում Կովկասի, Հայաստանի, Վրաստանի և Զրդստանի տարածքները:

Այդ համաձայնությունը նպատակ ուներ ներդաշնակություն սահմանել ֆրանսիական և բրիտանական առաքելությունների արդեն ներդրած տարանջատ ջանքերի միջև:

Հայկական ազգային կոմիտեի խնդրանքով, Ֆրանսիան համաձայնվել է դեկտեմբերի 15-ի շրջանում 20 միլիոն ռուբլու մի փոխառության՝ հայկական զորքեր կազմակերպելու համար: Ռուսաստանից և Ռումինիայից առանձնացված ֆրանսիացի սպաները դրվել էին գնդապետ Շարլինյի ենթակայության ներքո՝ զեներալ Շորի համաձայնությամբ այդ կազմակերպումը սկսելու համար՝ սպասելով բրիտանացի սպաների ժամանմանը:

Իր կողմից, անգլիական կառավարությունը Բաղդադից Թիֆլիս էր ուղարկում մի առաքելություն, որի ղեկավար էր նշանակել զեներալ Դյունսթերվիլին, ում հանձնարարված էր հայկական, վրացական, ասորական և այլ ուժերի վերակազմավորումը: Ժուճգալիսների խռովության հետևանքով զեներալ Դյունսթերվիլը կանգ է առել Համադանում և չի կարողացել դեռևս Կովկաս հասնել:

Ինչ վերաբերում է հայկական և վրացական ազգային զորքերի կազմակերպմանը, ապա այդ հանգեցրել է միայն աննշանակալից արդյունքների. ըստ էության, կազմավորված ստորաբաժանումները, չխոսելով այն տարրերի մասին, որոնք ձևավորվել են առանց դաշնակիցների օգնության և դիմադրում են ռազմաճակատում, ընդգրկում են առավելա-

1 Փաստաթղթի ծանոթագրությունը. «Այդուհանդերձ, նրանց թվում կան որոշ քանակությունը շիաներ, որոնք ավելի հակված են կողմնորոշվելու դեպի Պարսկաստանի շիական թագավորությունը, քան դեպի սուննիական Օսմանյան կայսրությունը»:

գույնը քսան հազար մարդու՝ հայերի և ասորիների:

Պարսկաստան. Բրիտանական կառավարությունը վճռել է գործել Պարսկաստանում ուժի միջոցով, կազմակերպել է ռազմարշավ, որի նպատակն է ապահովել Աֆղանստանի և Հնդկաստանի պաշտպանությունը, բաց անելով Բաղդադ, Համադան, Էնզելի, Բաքու ճանապարհը: Բայց այս ռազմարշավը, որի առաջին տարիները ժամանել են Համադան, կկարողանա անկաշկանդորեն ծավալվել միայն այն ժամանակ, երբ կլիմայական պայմանները դառնան նվազ դաժան:

IV

Ինչպի՞սի վարքագիծ է հարկ որդեգրել Անտանտին

Ինչպես քարոյական, այնպես էլ ռազմական և տնտեսական շահերի տեսանկյուններից, Անտանտը պարտավորություն է ստանձնել աջակցելու քարոյապես և, եթե հնարավոր է, նյութապես այն բոլոր տարրերին, որոնք ցանկություն են դրսևորում դիմադրել թուրքերին և դրանով իսկ՝ գերմանացիներին: Նա պետք է նմանապես փորձի իր գաղափարների շուրջը համախմբել նրանց, ովքեր դեռևս տատանվում են և իր քաղաքականության կողմն անցնելու հարցում վերջնականապես չեն կողմնորոշվել:

Անտանտն այդ նպատակներին կհասնի նախ և առաջ՝ ակտիվ քարոզչության միջոցով, որը կամրապնդի արդեն գոյություն ունեցող հակաթուրքական զգացմունքները և կչեզոքացնի թշնամական քարոզչությունը: Անտանտի քարոզչությունն ազգությունների համար կընդգծի այն առավելությունները, որոնք նրանց կընձեռնվեն դեպի Ռուսաստանի հետ դաշնային միության շրջանակները, հենց որ այդ հնարավոր լինի, վերադառնալու դեպքում:

Այդ գործունեությունը կամրապնդվի նյութական աջակցությամբ, որը մենք ի վիճակի ենք նրանց տրամադրել. ռազմական աջակցությամբ՝ ազգային գործեր կազմակերպելու համար, ֆինանսական աջակցությամբ՝ գործերին և, անհրաժեշտության դեպքում, նրանց հովանավորող քաղաքական կազմակերպություններին օժանդակելու համար: Ֆինանսական այդ աջակցությունը նրանց համար արդեն ձեռք է բերվել. հարկ է այն շարունակել, քանզի հասկանալի է, որ Անտանտի հատկացրած դրամական օժանդակությունները զինված ուժերի կազմակերպմանը կհատկացվեն միայն այն պայմանով, որ այդ ուժերը նախատեսված լինեն Թուրքիայի և Գերմանիայի դեմ կռվելու համար:

Հաշվի առնելով 1917 թ. դեկտեմբերի 23-ի համաձայնագիրը և, անկախ այն բանից, թե որ դաշնակցի նկատմամբ՝ զանազան ազգությունների դրսևորած ջերմությունից ու համակրանքից բխող շահավետությունը, ցանկալի կլինի, որ բոլոր դաշնակիցներին կոչ արվի օժանդակել այդ քարոզչությանը և այդ աջակցությանը:

Մասնավորապես Պարսկաստանում, Մեծ Բրիտանիան բախվել է Թեհրանի կառավարության բացահայտ թշնամանքին, որին թուրք-գերմանական քարոզչությունը քրիտանական ռազմական ներխուժումը ներկայացնում է ինչպես մի վտանգ Պարսկաստանի ամբողջականության և անկախության համար, որին սակայն իրականում սպառնում են բացառապես մեր թշնամիների մեքենայությունները: Այսպիսով, հարկ կլինի Թեհրանի կառավարությանը վստահություն ներշնչել, նրան հասկացնել, թե որտե՞ղ է Պարսկաստանի համար իրական վտանգը, նրան միջոցներ տրամադրել (տեխնիկական խորհրդատուներ, հրահանգիչներ ...), զինված ուժեր կազմակերպել, որոնք նրան անհրաժեշտ են ապահովելու համար ներքին կարգ ու կանոնը, արգելել Գերմանիայի վարձկան, տազնապ հարուցող

գործակալների մուտքը նրա տարածք:

Միաժամանակ քաղաքական և ռազմական դաշնակցային առաքելությունների ուղարկումը Պարսկաստան, որոնց կտրամադրվեն բավարար միջոցներ, թվում է, թե պատեհորեն կպատասխանի նման անհրաժեշտությանը:

Վերջապես հարկ է, որ կրկնապատկելով գործողությունը Փոքր Ասիայի գործողությունների քատերաբեմներում, քրիտանական բանակներն իրենց կողմը գրավեն թուրքական ուժերը Կովկասից և Պարսկաստանից՝ Կովկասի ազգություններին սեփական գործեր կազմակերպելու նպատակով ժամանակ հատկացնելու և Պարսկաստանի ճանապարհների վրա գերիշխանությունն ապահովելու համար:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

I

Հարավային Ռուսաստանում գործողությունների շուրջ Ֆրանսիայի և Անգլիայի միջև 1917 թ. դեկտեմբերի 23-ի կայացված համաձայնագիր

Վերսալ, 22-ը մայիսի 1918 թ.:

I/ Թշնամու դեմ ուղղված՝ Ֆրանսիայի կողմից ղեկավարվող գործողությունը ծավալվում է Սև ծովի հյուսիսում: Թուրքերի դեմ ուղղված՝ Անգլիայի կողմից ղեկավարվող գործողությունը ծավալվում է Սև ծովի հարավ-արևելքում:

II/ Քանի որ գեներալ Ալեքսեևը Նովոչերկասկում առաջարկել է կենսագործել մի ծրագիր, որը նպատակ ունի կազմակերպել թշնամուն դիմակայելու համար նախատեսված մի բանակ, և քանի որ այդ ծրագիրը հաստատել է Ֆրանսիան, որն այդ կապակցությամբ հարյուր միլիոնի հասնող վարկ է տրամադրել ու պահանջել միջոցառակցային հսկողության կազմակերպում, տեղին կլինի շարունակել վերը նշված ծրագրի ի կատար ածումը մինչ այն պահը, երբ Անգլիայի հետ համաձայնեցված նոր որոշումներ կայացվեն:

III/ Այս վերապահությունն ընդունելուց հետո, կառավարություններից յուրաքանչյուրին որամադրվող ազդեցության գոտիները կլինեն հետևյալները.

Անգլիական գոտի. կազակական տարածքներ, Կովկասի տարածքներ, Հայաստան, Վրաստան, Զրդստան:

Ֆրանսիական գոտի. Բեսարաբիա, Ուկրաինա, Դրիմ:

IV/ Ծախսերը, որոնք կկարգավորի միջոցառակցային կենտրոնացնող օրգանը, կկատարվեն համատեղ:

II

Կովկասի ազգային բանակների համար դաշնակիցների՝ արդեն հաստատած ֆինանսական օգնություն

Վերսալ, 22-ը մայիսի 1918 թ.:

1917 թ. դեկտեմբեր: Դեկտեմբերի 25-ի շրջանում, գեներալ Նիեսելի միջնորդությամբ,

փոխզնդապետ Շարդինյին տեղեկացրել են, որ Կովկասի ազգային բանակների կազմակերպման համար հատկացվել է վարկ՝ 20 միլիոն ռուբլու սահմանում:

3-րդ հունվարի 1918 թ.: [Փոխ]զնդապետ Շարդինյին հույս է տածում, որ Կովկասի ռուս հրամանատարությունը, որը շարունակում է գործել ելնելով բարոյական հիմունքներից և որը թույլատրել է կազմավորել հայկական կանոնավոր զորքերի դիվիզիա, միակն է, որն ունակ է կազմակերպել ազգային զորքեր: Նա հայկական ազգային զորքերի կարիքների համար կօգտագործի այն վարկերը, որոնք իրեն են հատկացվել ռուսական հրամանատարության միջնորդությամբ (Նիեսեյի 1918 թ. հունվարի 3-ի թիվ 7567 հեռագիրը):

1918 թ. հունվարի 1-ից 6-ը: Քանի որ անգլիացի զեներալ Մակ Դոնոգոն խնդրել է, որ Կովկասի դրամական միջոցների կանխավճարներն արվեն այդ տարածաշրջանի բրիտանական ռազմական ներկայացուցչի միջնորդությամբ, Արտաքին գործերի նախարարությունը պատասխանում է, որ ֆրանսիական կառավարությունը հակված է Կովկասում գտնվող բրիտանական ռազմական [ազմական] ներկայացուցիչների տրամադրության ներքո դնել հայկական ուժեր կազմակերպելու համար, փոխզնդապետ Շարդինյին հատկացված 20 միլիոն ռուբլին, եթե բրիտանական կառավարությունը հակված է միևնույն ձևով վարվել Հարավային Ռուսաստանում գտնվող ֆրանսիական ազդեցության գոտում ծախսված դրամական միջոցների հետ (զեներալ Մակ Դոնոգոի 1918 թ. հունվարի 1-ի թիվ 49115 հեռագիրը՝ և Արտաքին գործերի նախարարության [1918 թ.] հունվարի 6-ի թիվ 37 հեռագիրը):

(A.M.G., 4 N 2).

**Խորհրդի նախագահ, Ռազմական նախարար պ. Կլեմանսոն՝
Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին**

Ճ. թիվ 3714-9/11:

Փարիզ, 25-ը մայիսի 1918 թ.*:
(Ստացել է Ասիայի փոխվարչությունը)
մայիսի 25-ին):

Ի պատասխան 1918 թ. փետրվարի 5-ի թիվ 480 ձեռագրի¹, որը վերաբերում է բուլղարական ու թուրքական զնդերից եկող և սերբական զորքերի մոտ ապաստանած փախստականներին, ես պատիվ ունեմ ձեզ հաղորդել հետևյալ տեղեկությունները, որոնք, նրանց կապակցությամբ, հենց նոր ինձ է հղել Մակեդոնիայում դաշնակցային բանակները գլխավորող հրամանատար զեներալը:

- 1/ Հայ դասալիքներ. Հայ դասալիքներին, ինչպես նաև, ի դեպ, մյուս բոլոր դասալիքներին, սերբական հրամանատարությունը հանձնել է ֆրանսիական ռազմական իշխանություններին:
- 2/ Հայ գերիներ. սերբական բանակը մինչ այժմ գերեվարել է 39 հայի: Նրանց թվում

1 Տես վերը թիվ 475 փաստաթղթի հավելվածը:
2 Արտատպված չէ:
* Դեպարտամենտի ծանոթագրությունը. «Հաղորդեք Նուրբար փաշային»:
3 Արտատպված չէ:

4-ը, իրենց իսկ խնդրանքով, 1916 թ. օգոստոսին, իբրև ռազմիկներ ընդգրկվել են սերբական բանակում:

Հայ գերիները չեն համախմբվել, այլ ցրվել են ռազմագերիների տարբեր ստորաբաժանումներում:

Սերբական հրամանատարությունը նրանց մինչ այժմ օգտագործել է միայն ոչ այնքան ծանր աշխատանքներում: Նա մտադիր է նոր հրահանգներ տալ՝ նրանց վիճակն էլ ավելի բարելավելու համար:

Այս գերիներից և ոչ մեկն Արևելյան լեզեոնում ծառայելու խնդրանքով չի դիմել և մյուս կողմից, սերբական իշխանությունները նպատակահարմար են գտնում նրանց պահել՝ սերբական բանակում՝ աշխատուժի սակավության պատճառով:

Սերբական զորքերի ձեռքն ընկած հայերին ընձեռված կացությունը, այնպիսի վիճակով, ինչպես դա բացահայտվում է վերոհիշյալ տեղեկություններից, թվում է, թե ի գործ է հանդարտեցնելու Պողոս փաշայի մտավախությունները, որոնք առնչվում են այն վարչակարգին, որի ենթակայության ներքո նրանց դրել են սերբական իշխանությունները:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, *Turquie*, tome 68, ff. 45-45 v).

**Կովկասում Ֆրանսիայի ռազմական առաքելության ղեկավար,
փոխզնդապետ Շարդինյին՝ Ռուսաստանում Ֆրանսիայի
ռազմական կցորդ, զեներալ Լավերնյին**

Ճ. թիվ 107:

Վլադիկավկազ, 25-ը մայիսի 1918 թ.:

Ես պատիվ ունեմ ձեզ հաշվետվություն ներկայացնել Անդրկովկասում տեղի ունեցած վերջին իրադարձությունների մասին, որոնց ես իրազեկ եմ դարձել Թիֆլիսից՝ մայիսի 18-ին իմ մեկնելուց ի վեր:

I. Թուրքերի հետ ռազմագերիներ փոխանակելու համաձայնագիր:

Իբրև վարչապետի լիազոր ներկայացուցիչ, զեներալ Օդիշելիձեն մայիսի 15-ին թուրքական բանակի գլխավոր հրամանատար Վեհիբ փաշայի հետ կնքել է ռազմագերիների փոխանակման մասին մի համաձայնագիր, անկախ այն բանից, թե ինչպիսին կլինի հաշտության բանակցությունների ավարտը: Այդ համաձայնագրից հետո, զեներալ Օդիշելիձեն հեռագրով խնդրել է վարչապետից:

1/ Եթոբյա ժամկետում իրեն իրազեկ դարձնել, այդ մասին Վեհիբ փաշային տեղեկացնելու համար, Անդրկովկասում գտնվող թուրք զենիների՝ սպաների, ենթասպաների ու զինվորների և այլոց ճշգրիտ թվին, նշելով նրանց գտնվելու վայրը:

2/ Մինչև Բաթում եկող զնացքներով անհապաղ կազմակերպել թուրք գերիների հայրենադարձությունը Բաթում. հարկ է, որ առաջին զնացքն այդ քաղաք ժամանի ոչ ավելի ուշ,

քան մայիսի 21-ը: Առաջինը պետք է հայրենիք վերադառնան Ալեքսանդրապոլի տարածաշրջանում տեղակայված գերիները և նրանց փոխադրումը մինչև Թիֆլիս պետք է պաշտպանվի յուրաքանչյուր վտանգից:

3/ Ռուս գերիները Բաթում կուղարկվեն միևնույն գնացքներով: Բոլոր թուրք գերիները մինչև Բաթում պետք է ապահովվեն սննդամթերքներով: Ռուս գերիները նույնպես մինչև Թիֆլիս պետք է սննդամթերքներ ստանան: Յուրաքանչյուր փոխադրագնացքի համար պետք է կազմվի անվանական ցուցակ: 200 մահճակալ ունեցող մի սամիտարական գնացք պետք է այժմվանից իսկ ուղարկվի Բաթում՝ հիվանդ ոռուսներին դուրս բերելու համար: Հարկ կլինի տեղեկացնել, թե որքան հիվանդ թուրք գերիներ կան Անդրկովկասում: Բոլոր թուրք գերիները, նախքան ճանապարհ ընկնելը, պետք է պարտադիր ձևով անցնեն Նավթուղի (Թիֆլիսի մոտակայքում) էվակուացման կենտրոնով և այնտեղ նախնական աղտահանման ենթարկվեն: Նույնը ձևով կվարվեն ոռուս գերիների հետ Բաթումում: Գերիների փոխանակումը պետք է տեղի ունենա որքան հնարավոր է սեղմ ժամկետում՝ Թուրքիայում գտնվող ոռուս գերիների, որքան հնարավոր է արագ, վերադարձի ծայրահեղ անհրաժեշտության պատճառով:

Կասկածից վեր է, որ թուրքական ռազմական իշխանությունն անհապաղ կօգտագործի հայրենիք վերադարձած գերիներին, համալրելու համար Կովկասի ռազմաճակատում գործող դիվիզիաների անձնակազմերը:

II. Կառավարության պաշտոնական հաղորդագրությունը՝ Ալեքսանդրապոլի անկման կապակցությամբ:

Թուրքական զորքերի՝ Ալեքսանդրապոլի գրավմանը նախորդած և հաջորդած հանգամանքների կապակցությամբ Անդրկովկասի կառավարությունն անհրաժեշտ է համարում հրապարակել այն, ինչը հաջորդում է:

«Մայիսի 15-ին, առավոտյան ժամը 6-ին, Բաթումում անդրկովկասյան պատվիրակության նախագահ պ. Չիսենկելին օսմանյան պատվիրակության նախագահ Հալիլ բեյից ստացել է մի ծանուցագիր, որով վերջինս, վկայակոչելով Կովկասի ռազմաճակատի թուրքական բանակների գլխավոր հրամանատարի իրեն հանձնած նամակը՝ տեղեկացնում էր, որ նույն օրն առավոտյան, թուրք հրամանատարությունն Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթգծով սկսել է զորքերի փոխադրումը՝ Պարսկաստանում գտնվող անգլիացիների դեմ նրանց ուղարկելու համար: Գերմանական պատվիրակության նախագահ ֆոն Լոսսովին և թուրքական պատվիրակության նախագահ Հալիլ բեյին հղած մի ծանուցագրով, Անդրկովկասի կառավարության անունից, որի անկախությունը Թուրքիան ճանաչել է, մեր պատվիրակության նախագահն անմիջապես բողոքել է ամենաեռանդազին ձևով: Մեր պատվիրակության կողմից Հալիլ բեյի վերահիշյալ ծանուցագիրը ստանալուց անմիջապես անց, առավոտյան ժ. 7.18-ին, թուրքական զորքերը սկսել են իրենց գրոհն Ալեքսանդրապոլի վրա, նախապես մի վերջնագիր՝ ուղարկելուց հետո, որով հատկացվում էր երեք ժամանոց ժամկետ զորքերը Կովկասի հանրապետությունից՝ Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթգծից 25 վերստ այն կողմ դուրս բերելու և պատերազմի ամբողջ ընթացքում Ալեքսանդրապոլ քա-

1 Փաստաթղթի ծանոթագրությունը. «Այս վերջնագիրը կազմված էր ֆարսի լեզվով, այն դեպքում, երբ թուրքերը ռուսական ռազմական իշխանությունների հետ իրենց հարաբերություններում մինչ այժմ օգտագործում էին միայն ֆրանսերեն լեզուն: Մինչև կարողացան թարգմանի գտնել, որն է վիճակի էր թարգմանելու վերջնագիրը, երեք ժամյա ժամկետն սպառվեց»:

ղաքն ու վերը նշված երկաթգիծը թուրքական ռազմական իշխանություններին հանձնելու համար: Նույն օրը թուրքական զորքերը գրավեցին Ալեքսանդրապոլ քաղաքը: Վերը նշված փաստերից հետո, Անդրկովկասի պատվիրակության նախագահը մայիսի 17-ին օսմանյան պատվիրակության նախագահին մի ծանուցագիր հղեց, որով բողոքեց թուրքական զորքերի հրամանատարի որդեգրած վարքագծի առիթով և Հալիլ բեյի ուշադրությունը հրավիրեց նման գործելակերպի անընդունելիության ու ցավալի բարդությունների հնարավորության վրա»:

III. Ռազմական գործողություններ:

Ալեքսանդրապոլի գրավումից հետո, թուրքական ուժերը շարունակել են իրենց շարժումը 4 շաբասյունով, որոնց կազմն ինձ անհայտ է:

1/ Ախալցխայի ճանապարհով: Մայիսի 20-ին այս շաբասյունն անցել է Կարախանի լեռնանցքը և նրա առաջապահ ջոկատը նույն օրը գրավել է Վորոնցովկան¹, որտեղ միացել է տարածաշրջանի թաթարական զինված անձնակազմերին, այս կերպ ուղղակիորեն հատելով Ալեքսանդրապոլ-Ղարաքիլիսա-Թիֆլիս ճգվող ճանապարհը:

2/ Ղարաքիլիսայի ճանապարհով, որը ձգվում է երկաթգծի հարևանությամբ: Մայիսի 21-ին, զենքի բոլոր տեսակներն ունեցող այս շաբասյունն ուղղություն է վերցրել դեպի Նալբանդի մոտ գտնվող Աղբուլաղ և ժամը 10-ին հասել Գեյ Էկիուր-Բեքանդ գծին, որը հիշատակված է թիվ 104 իմ գեկուցաբրում²: Նույն երեկոյան այն գրավել է Ամամլին [sic]³ և շարունակել իր հարձակումը: Հայկական ստորաբաժանման հրամանատարը, դեպի Գեգուրան-Թափանլի-Վարտնավ գիծը նահանջելու հրաման արձակելուց հետո, որոշել է հեռանալ դեպի Ղարաքիլիսայի⁴ արվարձաններում գտնվող Ղլաղ, առանց ընդունելու մարտը:

3/ Ապարանի ճանապարհով՝ ուղղակիորեն դեպի Երևան:

4/ Այն ճանապարհով, որը ձգվում է Ալեքսանդրապոլից Երևան տանող երկաթգծի հարևանությամբ:

Այս 4 զորասյուններին դեմ հանդիման գտնվող հայկական զորքերը հրաման են ստացել դիմադրություն չցուցաբերելու մասին և կատարել են այդ հրամանը:

Միաժամանակ, թուրքական ստորաբաժանումը, որը վերջերս խախտել էր սահմանն Իգադիրի [sic]⁵ մոտ և Անդրկովկասի կառավարության բողոքից հետո նահանջել, մայիսի 19-ի կեսօրին, Կուլպի և Իգադիրի [sic] կողմից կրկին հարձակում է ձեռնարկել, հզորացած՝ տարածաշրջանի բողոքական և թաթարական զինված անձնակազմերով:

Հայկական ստորաբաժանման հրամանատարը զորքերը տեղակայել է իր Արաքսի վրա գտնվող Մարքարայում և վճռել խանգարել թշնամուն անցնելու գետը: Ըստ ինձ հասած տեղեկությունների՝ հայկական 2-րդ դիվիզիայի հրամանատար, գեներալ Սելիկոֆֆը [sic]⁶, պետք է որոշած լինի շարունակել պայքարը Երևանի կառավարությունում:

1 Փաստաթղթի ծանոթագրությունը. «Թիֆլիսից 80 վերստ հեռավորությամբ»:

2 Տե՛ս վերը թիվ 616 փաստաթուղթը:

3 Իմա՝ Համամլու:

4 Փաստաթղթի ծանոթագրությունը. «Հ-ի Ը-ն բողոքել է Ղարաքիլիսան և եկել Դիլիջան»:

5 Իմա՝ Իգդիր:

6 Իմա՝ գեներալ Սիլիկով:

IV. Բանավեճեր գերմանացիների և բուրքերի միջև Բաթումում:

Ես արդեն ակնարկել եմ այս բանավեճերի մասին մայիսի 13-ի թիվ 103 իմ զեկուցագրում¹: Գերմանացիները դժգոհ կլինեն բուրքերի կողմից Բրեստ-Լիտովսկի պայմանագրի խախտումից, որի նկատմամբ նրանք կակնկալելին հարգալից վերաբերմունք և դեմ կլինեն Ալեքսանդրապոլի գրավմանը:

Գեներալ ֆոն Լոստովը պետք է Բեռլին հեռագրած լինի այս ոգով և այն մտավախությունից դրդված, որ իր ծածկագրված հեռագրերը կարող էին բուրքական իշխանությունները հափշտակել, պետք է հանձնարարած լինի Չխենկելուն՝ դրանք Սևաստոպոլ ուղարկել Թիֆլիսի կառավարության միջնորդությամբ: Արդյո՞ք նրա դիրքորոշումն անկեղծ է կամ արդյո՞ք հարկ է այդ դիտել իբրև միայն դիվանագիտական խորաճանկություն: Ես չգիտեմ:

Ինձ միայն պաշտոնապես հայտնի է, որ մայիսի 23-ին, Արդահանից եկող Վեհիք փաշան պետք է ժամանի Ալեքսանդրապոլ, որտեղ ամսի 24-ին հանդիպում կունենա հայկական կորպուսի հրամանատար, գեներալ Նազարբեկովի² և նրա շտաբի պետ, գեներալ Վիշինսկու հետ՝ բուրքական և հայկական զորքերի միջև սահմանազատման գիծ հաստատելու և դեպի Դիլիջան բուրքական զորքերի տեղափոխման մանրամասները կարգավորելու համար:

Ձիջելով գեներալ ֆոն Լոստովի կրկնակի համար խնդրանքներին, բուրք հրամանատարը պետք է, որ համաձայնվի ժամանակավորապես կասեցնել հարձակումը Երևանի և Թիֆլիսի վրա:

V. Գերմանիայի պրոտեկտորատը Վրաստանի նկատմամբ:

Ես նմանապես պետք է նշեմ մի միտումի մասին, որը որոշ ժամանակից ի վեր նկատելի էմ վրացիների շրջանում և որը հավաստվել է Բաթումի բանակցություններից հետո: Վրացիները, մասնավորապես, ազնվականությունը, փորձում են շահել Գերմանիայի բարյացակամությունը և հանձին նրա Թուրքիային դիմակայող նեցուկ գտնել: Նրանք նույնիսկ հաճույքով կընդունեն, որ իրենց ինքնավարությունը դրվի գերմանական պրոտեկտորատի ներքո: Բաթումում գերմանական պատվիրակության սպաներից մեկն արել է հետևյալ հայտարարությունը, որն ինձ են հաղորդել. «Կովկասում վրացիները մեր միակ բարեկամներն են»:

Հավանական է, որ գերմանական պատվիրակությունը կփորձի օգուտ քաղել վրացիների այս միտումից, որին բուրքերը բավական խորթ աչքով են նայում: Ինչպես հանքերի, այնպես էլ գյուղատնտեսության տեսակետից Վրաստանը Կովկասի ամենահարուստ շրջանն է: Վրացիների բարեկամությունը կարող է միայն նպաստել գերմանացիների կողմից երկրի բռնագրավմանը:

Հ. Գ. - 27-ը մայիսի: Թիֆլիսի շտաբից ուղղակիորեն ստացված տեղեկության շնորհիվ, ես այսօր իրազեկ եմ դառնում, որ Անդրկովկասի սեյմը երեկ, մայիսի 26-ին, իր նիստում

1 Տես վերը թիվ 614 փաստաթուղթը:
2 Փաստաթղթի ծանոթագրությունը. «Մնամատարության նախարարը, այն դժվարությունների պատճառով, որոնք կապված են արդեն ճանապարհին գտնվող 300000 հայ զաղթականներին տեղափոխելու հետ, խնդրել է գեներալ Նազարբեկովին բանակցությունների մեջ մտնել բուրք հրամանատարի հետ՝ զաղթականներին բուրքական զորքերի գրաված գոտի վերադարձնելու համար»:

հռչակել է.

- 1/ Վրաստանի անկախությունը գերմանական պրոտեկտորատի ներքո:
- 2/ Երևանի, Ելիզավետպոլի և Բաքվի կառավարությունների ընդգրկումը Թուրքական կայսրության կազմում, որոնք միավորվել են «Ադրբեջանի խանություն» անվամբ: Հայաստանի ճակատագրի մասին որևէ հիշատակություն չի արվել:
Ես կանխատեսել եմ այս լուծումը մայիսի 16-ի թիվ 104 իմ զեկուցագրում¹:

(A.M.G., 6 N 226).

625

Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշան՝ Արտաքին գործերի նախարարությունում Ասիայի փոխտնօրեն պ. Ժան Գուին

Ն:

Փարիզ, 28-ը մայիսի 1918 թ.:
(Ստացել է Ասիայի փոխվարչությունը) մայիսի 29-ին):

Ես պատիվ ունեմ ձեզ հայտնել ընթացիկ ամսի 26-ի ձեր նամակի ստացման մասին, որով դուք բարեհաճել եք փոխանցել Պաղեստինում և Սիրիայում Հանրապետության պ. Գերագույն կոմիսարի² ճեպագիրը:

Ես երջանիկ էի հավաստելու, որ ֆրանսիական կառավարության ներկայացուցիչը գնահատում է այն զոհաբերությունները, որոնց իմ հայրենակիցները, հանուն իրենց երկրի ազատագրման, չեն զլանում դիմելու՝ իրենց ծառայությունները Ֆրանսիային մատուցելու և նրա հովանու ներքո անցնելու համար:

Մենք բոլորս համոզված ենք, որ վերջնական հաղթանակի օրը նրանց համար դա նկատի կունենան, և որ, մասնավորապես, Ֆրանսիան իր ամբողջ աջակցությունը կցուցաբերի՝ հանուն նրանց ազգային ձգտումների իրականացման:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, *Caucase-Kurdistan*, tome 1, f. 89).

626

Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշան՝ Արտաքին գործերի նախարարությունում Ասիայի փոխտնօրեն պ. Ժան Գուին

Ն:

Փարիզ, 28-ը մայիսի 1918 թ.:

1 Վերն արտատպված է թիվ 616 փաստաթղթում:
2 Պ. Ժորժ-Պիկոն:

(Մտացել է Ասիայի փոխվարչ (ուրբունը) մայիսի 29-ին):

Ես պատիվ ունեմ ձեզ վերադարձնել սրան կից, քանի որ դուք ինձ մնան ցանկություն էիք հայտնել, «Ժամանակում» և «Հիլալում» լույս տեսած հոդվածների թարգմանությունները¹:

Ես կարիք չունեմ ձեզ ասելու, թե ի՞նչ եմ մտածում՝ այսպես կոչված հայկական թերթի այս հոդվածի մասին, որը բացահայտել է, կարելի է դրանում չկասկածել, իր թուրքական ծագումը:

Ես ձեզ երախտապարտ եմ ինձ այդ մասին տեղեկացնելու համար և խնդրում եմ ընդունել, պարոն մախարար, իմ խորին հարգանքի նոր հավաստիացումը:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, *Caucase-Kurdistan*, tome 1, f. 90).

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

I

Փոխառությունը և հայերը

Ապրիլի 15-ին «Ժամանակը» տպագրում է հետևյալ կոչը.

«Մի քանի օրից ի վեր Ֆինանսների մախարարը հետամուտ է մի գործառության, որը շատ մեծ կարևորություն կունենա Թուրքիայի ֆինանսական պատմության համար: Խոսքը վերաբերում է օսմանյան խորհրդարանի թուլտվության հիման վրա, հատուկ օրենքով, մի ներքին փոխառություն շրջանառության մեջ դնելուն: Նկատի ունենալով նրա շատ նպաստավոր պայմանները և մեր երկրի տնտեսական կացությունը, մենք այժմվանից իսկ կարող ենք վստահ լինել այդ փոխառության հաջողության հարցում:

Եվ մենք կարող ենք նաև առանց որևէ այլևայության հաստատել, որ նրա բաժնետոմսերը կլինեն ամենավստահելիքն այն բոլորից, որոնք ներկայումս շրջանառության մեջ են դրված Եվրոպայում: Նրանք կարող են միաժամանակ համարվել ամենաշահավետները՝ իրենց նպաստավոր պայմանների հետևանքով: Այսպիսով, գործառության մեծ հաջողության համար ոչ միայն գոյություն չունի որևէ խոչընդոտ, այլև այդ հաջողության օգտին հանդես են գալիս մեծ թվով գործոններ: Ֆինանսների մախարարը հաստատակամորեն հույս է տածում, որ բաժնետոմսերը շատ բարեհաճ ընդունելության կարժանանան օսմանյան ազգի կողմից: Մենք միևնույն հույսն ենք տածում և մեր պարտքն ենք համարում այս առթիվ մի քանի խոսք ուղղել մեր հայրենակիցներին:

Եվ մախ՝ այս փոխառությունը հայերի համար ամենանպաստավոր առիթներից է իրենց բուն շահի տեսակետից: Սակայն, բացի դրանից, գոյություն ունի նաև ազգային տեսակետ, որովհետև այդ փոխառությունը մի գործառություն է, որը կապահովի օսմանյան ազգի վերջնական հաղթանակը: Այսպիսով, որքան լայնածավալ չափերով այս փոխառությանը մասնակցեն հայերը, այնքան նրանք ի հայտ կբերեն իրենց ջերմագին զգացմունքները հայրենիքի հանդեպ և իրենց նվիրվածությունը նրան: Այսպիսով, նրանք այն կերպ կմպաստեն այն թյուրիմացության փարատմանը, որը երևան է եկել վերջին իրադարձությունների ընթացքում:

¹ Այս հոդվածների մասին տես նաև վերը թիվ 612 փաստաթուղթը:

Մեկնաբանենք: «Կոմիտեականների» գործադրած բռնությունները, որոնք մտածում էին միայն իրենց սեփական շահերի մասին և գործում ուսմաների ու անգլիացիների օգտին, դարեր ի վեր՝ իբրև եղբայրներ ապրող թուրքերի և հայերի միջև առաջ բերեցին թյուրիմացություններ: Եվ հենց այս նպատակով էր, որ մեր պատվարժան գործակից «Թամինն» իր համարներից մեկում անմեղ հայերին խորհուրդ էր տալիս յուրաքանչյուր առիթով ի հայտ բերել իրենց անմեղության ապացույցները: «Ժամանակն», ի դեպ, ինչպես միշտ պատասխանել էր «Թամինին», ասելով, որ բուն օսմանյան հայերը որևէ առնչություն չունեին հիշատակված փաստերի հետ: Նա նույնիսկ պնդել է, որ այդ փաստերի համար պատասխանատու էին թուրքերը՝ քանի որ այդ չարաղետ «կոմիտեականների» նկատմամբ շատ ներդաժիտ դիրք էին զբաղել:

Այժմ, այն ինչ տեղի է ունեցել՝ տեղի է ունեցել, և խոսքը վերաբերում է այնպիսի գործելակերպի, որ և ոչ մի թյուրիմացություն չծագի երկու եղբայրների միջև և հարաբերությունները վերականգնվեն մախիին ձևով: Այս փոխառությունը լավագույն առիթն է այդ նպատակին հասնելու համար: Ահա թե ինչու, կցանկանալիք, որ հայերը, ոչ միայն խոչոր կապիտալիստները, այլև հատկապես նրանք, ովքեր օգտվում են համեստ միջոցներից, լայնածավալ չափերով մասնակցեն այդ փոխառությանը: Եվ մենք նաև ցանկանում ենք, որ նրանք չբավարարվեն միայն դրան մասնակցելով, այլ իրենց պարտքը համարեն այդ մասնակցությունը վերածելու ցուցադրության: Այս եղանակով, մեր թուրք հայրենակիցները կտեսնեն, թե որքան ենք մենք նվիրված այս հայրենիքին և ձեռնպահ կմնան ստոր «կոմիտեականների» գործողությունների համար մեզ պատասխանատու համարելու ցանկությունից: Այդ նպաստավոր կլինի երկու կողմերի համար, որը մենք մատնանշում ենք պարտականությունը կատարած լինելու համոզմունքով:

«Սուարն» այս կոչը մեկնաբանում է հետևյալ խոսքերով.

«Մեծ իմաստ կա նրանում, ինչը հենց նոր ընթերցվեց: Դա բուն իսկ առողջ դատողության լեզուն է: Եվ կասկածից վեր է, որ «Ժամանակի» որդեգրած մախաձեռնությունը նպաստում է երկու բանի՝ հայ ազգի ամենամեծ մասի անսասանելի հավատարմության և նրա առևտրական զգացողության վկայությանը: Լայնածավալ չափերով մասնակցելով այդ փոխառությանը, հայերը ոչ միայն լավ գործարք կկայացնեն, այլև վերջ կտան այն ասեկոսներից, որոնք նրանց մեղադրում են կայսրության հանդեպ ունեցած ոչ բարեհաճ զգացումների համար:»

(A.M.A.E., E-Levant 1918-1929, *Caucase-Kurdistan*, tome 1, ff. 91-93).

II

Հայերը և ներքին փոխառությունը¹

Բայց մենք «Ժամանակի» հոդվածում առանձնացրել ենք, մասնավորապես, այն հատվածը, որտեղ մեր հայ գործընկերը հիշեցնում է մախիին թյուրիմացությունների մասին և բացահայտում, որ փոխառությունը մի առիթ է, այդ տխուր անցյալը հողմացրիվ անելու համար:

¹ 1918 թ. ապրիլի 17-ին «Հիլալում» լույս ընծայված հոդված:

Մեր գործընկերոջ խոսքերը նույնիսկ ավելի են, քան արդարացի. դրանք շատ խելացի ձևով արտահայտված կարծիքներ են: Ինչպես էլ որ լինի, անցյալի տխուր իրադարձությունների թողած արյունալի հետքերը շարունակում են պահպանել իրենց գոյությունը բոլորի սրտերում: Միաժամանակ, անառարկելի իրականությունն այնպիսին է, որ չնայած անցյալի տհաճ և տխուր հուշերին, թուրքերն ու հայերն այս երկրում պետք է ապրեն կողք-կողքի, ինչպես այդ եղել է մինչ այժմ: Այս պայմաններում, հարկ է անել հնարավոր ամեն ինչ, խանգարելու համար, որ թե՛ մեկ և թե՛ մյուս կողմից հուշերն իրենց ազդեցություններն ունենան մեր հարաբերությունների վրա: Վերջերս մեր հայտնած կարծիքներն այս առթիվ և ներքին փոխառության շուրջ «Ժամանակի»՝ հաջորդ օրը հայտնած միտքն այնպիսի բաներ են, որոնք բխում են այդ նպատակին ծառայելու ցանկությունից: Այժմ ամեն ինչ կախված է այն արդյունքներից, որոնց կկարողանանք հասնել այս խոսքերի իրականացման ընթացքում և մենք կցանկանայինք հույս տաժել, որ փոխառությանը վերաբերող հարցում այս արդյունքներն արժանի լինեն բավարար համարվելու:

Մենք անվարանորեն ընդունում ենք, որ մեր հայրենիքում ապրող հայերի թիվը, որոնք անկեղծ զգացումներ են տածում ընդհանուր հայրենքի հանդեպ, փոքր չէ: Մենք հաճույքով ընդունում ենք նաև, որ նրանք, ովքեր մտածել են և գործել հակառակ ձևով, ընդհանուր առմամբ, եղել են պատրանքների գերի: Միայն, ինչպես մենք վերն ասել ենք, գոյություն ունի հուշերի մի շարան, որոնք դեռևս սրտերն արյունաներկ են անում և այդ հուշերի համար թուրքերն ամենևին պատասխանատու չեն: Հեղփաբար, այդ հուշերը ցաքուցրիվ անելն առաջին հերթին հայերի պարտականությունների մեջ է մտնում:

«Ժամանակը» հայ ազգին մատնանշել է նպատավոր առիթը և այս թերթն այսպիսով, իր ազգի հանդեպ կատարել է իր ամենակարևոր պարտականություններից մեկը, որի համար հարկ է նրան շնորհավորել:

(A.M.E., E-Levant 1918-1929, *Caucase-Kurdistan*, tome 1, ff. 94-95).

627

Կովկասում Ֆրանսիայի ռազմական առաքելության ղեկավար, փոխգնդապետ Շարդինյին՝ Ռուսաստանում Ֆրանսիայի ռազմական կցորդ, գեներալ Լավերնյին

Ճ. թիվ 109:

Վլադիկավկազ, 29-ը մայիսի 1918 թ.:

Ես պատիվ ունեմ ձեզ հղել, փաստագրական կարգով, Օսմանյան կայսրության վերջնագիրն Անդրկովկասի կառավարությանը և Վրաստանի անկախության հրովարտակը.

1/ *Թուրքական վերջնագիրը*. Անդրկովկասի դաշնային հանրապետության նախագահը մայիսի 26-ին, երեկոյան ժ. 8.30-ին, հաշտության օսմանյան պատվիրակության նախագահ Հալիլ բեյից մի վերջնագիր է ստացել, որը խմբագրված է այսպես.

«Չերդ գերազանցությունը հիանալիորեն իրագել է, որ Կովկասի իրադրությունը ճզնա-

ժամային է և տարակուսելի: Դրանում հարկ է պարզություն մտցնել առանց նվազագույն իսկ հապաղման: Հազարավոր մահմեդական թուրքեր Բաքվում և նրա արվարձաններում կրում են անգութ ելուզակների, այսպես կոչված հեղափոխականների, արյունալի լուծը: Այս դժբախտներին սպառնացող սարսափելի աղետն աստիճանաբար դառնում է անխուսափելի: Թուրք մահմեդական բնակչության և Կովկասի այլ շրջանների ճակատագիրը, որտեղ կողոպտիչների և ելուզակների կազմակերպած բազմաթիվ հրոսակախմբեր պարբերաբար գործադրում են չափ ու սահման չունեցող բռնություններ, պատշաճ ձևով ապահովված չէ և արժանի է ոչ պակաս ուշադրության: Դուք կընդունեք, պարոն նախագահ, որ իր անվան արժանի և ոչ մի կառավարություն, չէր կարող անտարբերությամբ դիտել թե ինչպե՞ս են նման հանցագործություններն անընդմեջ բազմապատկվում իր տարածքի հարևանությամբ գտնվող երկրում: Դուք նմանապես կընդունեք, որ Կովկասը ծվատող իրավիճակին ի տես, օսմանյան կայսրական կառավարության կացությունը, մասնավորապես, նրբաբնույթ է: Այդ խառնաշփոթը վնասակար է մի բնակչության անվտանգության համար, որն իր ազգությամբ և կրոնով սերտորեն կապված է կայսրության բնակչության հետ: Մյուս կողմից, համաշխարհային պատերազմի անխուսափելի անհրաժեշտություններն Օսմանյան կայսրությանը կանգնեցնում են իր գործերի ազատ անցումը Կովկասի վրայով ապահովելու անհրաժեշտության առջև, որքան հնարավոր է արագ, երկաթգծով նրանց ռազմական գործողությունների այլ թատերաբեմ տեղափոխելու նպատակով: Այս բոլոր պատճառներով, Օսմանյան կայսրական կառավարությունն իր պարտքն է համարում պահանջել, որ Կովկասի նպատվիրակությունն իրեն հստակ պատասխան տա այն առաջարկությունների առթիվ, որոնք նրան արվել են, ինչպես նաև այն նոր առաջարկության առթիվ, որը վերաբերում է սահմանի ճշգրտմանը, առաջարկություն, որի բնագիրը, Չերդ գերազանցությունը կզմնի սրան կից: Ամփոփելով խոսքը, իմ կառավարությունը գտնում է, որ Անդրկովկասի դաշնային հանրապետության վերը շարադրած առաջարկությունների արագ և ամբողջական ընդունումը, կարող է հանգեցնել Կովկասի համար գոհացուցիչ իրավիճակի: Միայն դրանց ընդունումն է, որն ի գորու է ստեղծել կայուն իրավիճակ, որը հավանաբար, թուրք մահմեդական բնակչության անվտանգության և ապահովության համար, կդիտվի իբրև բավարար երաշխիք: Օսմանյան կառավարությունն ինձ հանձնարարել է խնդրել Չերդ գերազանցությունից 72 ժամանոց (եռօրյա) ժամկետում, որը կսկսվի վաղը, երեկոյան ժամը 8-ին, ինձ տեղեկացնել, թե արդյո՞ք Հանրապետության կառավարությունն, ընդհանուր առմամբ, ընդունում է օսմանյան առաջարկությունները: Ես պետք է նմանապես ավելացնեմ, որ այդ երեք օրվա ընթացքում, մեր երկու կառավարությունների միջև հարաբերությունները կարող են բարեկամական բնույթը պահպանել միայն այն անվերապահ պայմանով, որ Կովկասում թուրքական գործերի գործողությունները, մասնավորապես, Ալեքսանդրապոլի և Ջուլֆայի միջև, չհանդիպեն որևէ դիմադրության»:

Ըստ վերջնագրի պայմանների՝ թուրքերը պահանջում են Օսմանյան կայսրության կազմում ընդգրկել հետևյալ տարածքները. Նախիջևանի մարզը (բացառությամբ Օրդուբադի և մի նեղլիկ սահմանամերձ գոտու), Շարուրդարալագեսկի [sic]՝ մարզի կեսը, Երևանի մարզի կեսը (Երևան քաղաքը մնում է հայկական տարածքում), Սուրմալուի ամբողջ մարզը, Էջմիածնի գրեթե ամբողջ մարզը՝ Էջմիածին քաղաքով հանդերձ, Ալեքսանդրապոլի մարզի մի մասը՝ Ալեքսանդրապոլ քաղաքով հանդերձ, Ախալքալաքի և Ախալցխայի մարզերը: Թուրքերը նմանապես պահանջում են իրենց գործերի ազատ անցումն Անդրկովկասի բոլոր երկաթուղագծերով:

1 Իմա՝ Շարուր-Դարալագյազ:

Նուն օրը, մայիսի 26-ին, երբ երեկոյան ժ. 8.30-ին այդ վերջնագիրը հանձնվեց պ. Չխենկելուն, Անդրկովկասի սեյմը ցրված էր և դրանից անմիջապես հետո, Վրացական ազգային խորհուրդը, կեսօրից հետո, ժ. 4.55-ին հռչակեց Վրաստանի անկախությունը: Թուրքական վերջնագիրն, այսպիսով, հղված էր մի պատվիրակության նախագահի, որն օրինականորեն դադարել էր գոյություն ունենալուց: Հաջորդ օրը, մայիսի 27-ին, պ. Չխենկելին, տեղեկանալով Թիֆլիսի իրադարձություններին, Հալիլ բեյին է հանձնում Վրաստանի անկախության և սեյմի ցրման շուրջ պաշտոնական ծանուցագիրը և մեկնում Թիֆլիս ստանալու նոր հրահանգներ: Չնայած պ. Չխենկելու բողոքներին, Հալիլ բեյը հայտարարում էր, որ վերջնագիրը հղված է նմանապես վրացական կառավարությանը: Միաժամանակ ընդունված, բացառությամբ դաշնակցական կուսակցության երկու ձայնի, սեյմի ցրումը հիմնվում էր հետևյալ պայմանների վրա. «Հաշվի առնելով, որ հաշտության կամ պատերազմի հարցը բացահայտել է Կովկասի անկախ հանրապետությունը ստեղծած ժողովուրդներին տարանջատող արմատական տարածայնությունները և որ այդ իսկ պատճառով անհնար է խոսել Անդրկովկասը ներկայացնող բուն իշխանության դերի մեջ մտած մի կառավարության անունից, սեյմը հավաստում է Անդրկովկասի փաստացի ցրումը և վայր դնում իր լիազորությունները»:

2/ Վրաստանի անկախության հրովարտակը.

«Բազում դարերի ընթացքում Վրաստանը եղել է իբրև ազատ և անկախ երկիր: 18-րդ դարի վերջերին, բոլոր կողմերից սեղմված, Վրաստանը կամովին միացել է Ռուսաստանին, այն պայմանով, որ այս վերջինս պարտավորվի իրեն պաշտպանել արտաքին թշնամիներից: Ռուսական մեծ հեղափոխության ընթացքում, Ռուսաստանում հաստատվել է մի վարչակարգ, որը հանգեցրել է ամբողջ ռազմաճակատի կործանմանը և ռուսական զորքերի կողմից Անդրկովկասի լքմանը: Ապավինելով սեփական ուժերին, Վրաստանը և Անդրկովկասը ստանձնեցին իրենց ճակատագրի կերտումը և այդ նպատակով ստեղծեցին ղեկավար մարմիններ. բայց թշնամական ուժերի ճնշումը հրահրեց Անդրկովկասի ժողովուրդներին միավորող դաշինքի փուլումը և դրա քաղաքական միասնության անկումը: Վրաց ժողովրդի ներկա կացությունը Վրաստանին հրամայաբար թելադրում է ստրկությունից, որի ներքո նրան կղնեն թշնամական ուժերը, խուսափելու համար մի հատուկ կազմակերպության ստեղծումը և նրա ազատ զարգացման համար ամուր հիմքերի հիմնադրումը: Հետևաբար, Վրացական ազգային խորհուրդը, որին ընտրել է Վրաստանի ազգային ժողովը 1917 թ. նոյեմբերի 22-ին, հրապարակայնորեն հռչակում է, որ այս իսկ պահից, վրաց ժողովուրդը գերազույն իրավունքներ ունի: Վրաստանը հռչակվում է անկախ պետություն և ունենալով լիազորություններ, քաղաքական տեսակետից կազմակերպում է ժողովրդավարական հանրապետություն: Միջազգային առճակատումների պարագայում, Վրաստանը միշտ չեզոք կմնա: Վրացական ժողովրդավարական հանրապետությունը կջանա հաստատել արտաքին հարաբերություններ միջազգային հանրության բոլոր անդամների, մասնավորապես, որոշ ժողովուրդների և կայսրությունների հետ: Իր տարածքներում. » երաշխավորում է քաղաքացիական և քաղաքական բոլոր իրավունքները բոլոր քաղաքացիների համար՝ անկախ ազգության, դավանանքի, սոցիալական վիճակի, սեռի տարբերությունից: Իր տարածքում բնակվող բոլոր ազգություններին մա ընձեռում է ազատ զարգացման լայն հորիզոն, մինչև սահմանադիր ժողովի գումարումը: Վրացական ազգային խորհուրդը, համարված ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներով, ղեկավարում է Վրաս-

տանի գործերը: Ժամանակավոր կառավարությունը պատասխանատվություն է կրում Ազգային խորհրդի առջև»:

Կարդալով Վրացական ազգային խորհրդի հռչակագիրը, կարելի է միայն ժպտալ: Եթե թշնամական ուժերի ճնշումը հրահրել է Կովկասի ժողովուրդների դաշինքի խզումը, ապա այդ սխալի պատասխանատվությունն ամբողջովին կրում է Վրացական ազգային խորհուրդը, որը գրեթե մեկ տարուց ի վեր վարում է, իր լավ ըմբռնելի շահի դեմ ուղղված, երկդիմի քաղաքականություն, որը պետք է երկիրը հանձներ թուրքական իշխանությանը և որը վերջին պահին հանգեցրեց գերմանական պրոտեկտորատի:

Ճգնաժամային պահերին, երբ ռուսական բանակը լքում էր ռազմաճակատը, վրացիներն անընդունակ լինելով ոտքի հանելու որևիցե ռազմական ուժերի, նույնիսկ չեն փորձել պաշտպանել Տրապիզոնը: Մի քանի շաբաթ ավելի ուշ, նրանք լքում էին Բաթումը, բայց ոչ թե թուրքական կանոնավոր զորքերի առջև, այլ երկրամասի վրացի մահմեդականների՝ աջարների հրոսակախմբերի ճնշման տակ:

Թուրքական տիրապետությունից Կովկասը կարող էր փրկել միայն վրացիների և հայերի սերտ դաշինքը: Հայերի դեմ ուղղված նախանձի ներքին զգացողությունից դրդված, որը չեն խոստովանում, հայերի, որոնք իրենց աշխատանքով ձեռք բերված հարստությամբ Կովկասում զբաղեցրել են գերակշռող տեղ, վրացիները հայերի՝ իրենց կրոնական եղբայրների համար միշտ եղել են անհավատարիմ դաշնակիցներ, ավելի վտանգավոր, քան թշնամիները: Նրանք հենց նոր մի տխուր էջ են հավելել իրենց հինավուրց պատմությանը: Այն անկախությունը, որը նրանք հռչակում են և որը նրանք չեն կարողացել նվաճել, նրանց փաստորեն տանում է դեպի վատթարագույն ստրկություն:

(A.M.G., 6 N 226).

628

Կովկասում Ֆրանսիայի ռազմական առաքելության ղեկավար, փոխգնդապետ Շարդինյին Ռուսաստանում Ֆրանսիայի ռազմական կցորդ, գեներալ Լավերնյին

Ճ. թիվ 110:

Վլադիկավկազ, 30-ը մայիսի 1918 թ.:

Հայկական ռազմաճակատում ռազմական գործողությունները շարունակվում են.
 ա/ Ղարաքիլիսայի տարածաշրջանում երկրամասի թաթարական հրոսակախմբերով հզորացված թուրքական կանոնավոր զորքերը մայիսի 22-ին գլրավել են Ղարաքիլիսայից հյուսիս գտնվող Ջելալ-Օ[ղ]լին, մտել Վորոնցովկա և Ղարաքիլիսա: {Ամսի} 25-ին այս վերջին քաղաքը վերագրավել են հայկական զորքերը, որոնք վերսկսել են հարձակումը և առաջացել մինչև Ամամլիի [sic]՝ մտ գտնվող Արաշուտ կայարանը:
 բ/ Հնգօրյա կատաղի մարտերից հետո սպանելով բոլոր ռազմամթերքները, Ա[խ]ալքա-

Ի Դմա՝ Համամլու:

լաքի կայազորը մայիսի 23-ին դուրս է եկել քաղաքից և նահանջել դեպի հյուսիս:

գ/ Երևանի ստորաբաժանմանը հաջողվել է ոչ միայն կանգնեցնել թշնամուն Արաքսի անցումի մոտ, Մարբարայի հարևանությամբ, այլև Մարդարապատի մոտ երկօրյա մարտից հետո, հաղթել Կուլայից եկած թշնամու շարայանը և մայիսի 26-ին նրան հետապնդել երկաթուղու երկայնքով մինչև Արաքսի կայարան:

Մայիսի 26-ին հայկական բանակային կորպուսի հրամանատար, գեներալ Նազարբեկովը հրապարակել է հետևյալ կոչը, որը ես արտատպում եմ այն հետաքրքրության պատճառով, որը ներկայացնում է.

«Հայեր:

Մեր ժողովուրդն անցնում է դաժան փորձությունների միջով: Թուրքական ստրկության երկար ու ծիգ դարերից հետո, ժողովուրդը հասկացել է, որ այլևս չի կարող այդպես շարունակել և վճռել է զենքը ձեռքին նվաճել իր ազատությունն ու փայլուն ապագայի իրավունքը կամ պատվով մեռնել: Մեծ դժվարությամբ ստեղծված բանակն իր շարքերում բազմաթիվ անզիտակից տարրեր ունենալու հետևանքով, արագորեն կորցրել է իր ամբողջ եռանդը և դրա արդյունքում կրել է մեկը մյուսից ավելի դաժան մի շարք պարտություններ: Թուրքերի հետ մեր կառավարության սկսած հաշտության բանակցությունները և մեր կնքած զինադադարը՝ թուրքերը խախտել են [sic] ամենաբարբարոսական ձևով: Թուրքերը, առանց փոքր-իսկ նախազգուշացման, օգտվելով զինադադարից հանկարծակի հարձակում են ձեռնարկել և գրավել Ալեքսանդրապոլը: Այդ հանգամանքն ավարտին է հասցրել զորքերի կազմալուծումը: Նույնիսկ առանց թշնամու հետապնդման՝ զինվորները լքել են իրենց շարքերը, անկազմակերպ խմբերով ճողոպրել, ուղղություն վերցնելով դեպի թիկունք և ճակատագրի քմահաճույքին թողնելով ռազմամթերքների ու սննդամթերքների բոլոր պաշարները: Ամեն ինչ թվում էր տանուլ տված, մեր նենգ հակառակորդին ոչինչ այլևս չէր մնում անել, քան շարունակել հարձակումը դեպի հայկական տարածքի ներքին նահանգները, այս կերպ հարկադրելով բնակչությանը թողնելու օջախները և կորցնելու ամբողջ ունեցվածքները, որոնք նա, հավանաբար, լքել է՝ ձեռք բերելով զարհուրելի թշվառություն և թուրքական նոր ստրկություն: Մակայն Աստծո ողորմածությամբ, Երևանի քաջարի ստորաբաժանումը, որի դեմ թուրքերը, չնայած զինադադարին, հարձակում էին ձեռնարկել, մնացել է աներեր, ետ է մղել հակառակորդի հարձակումները, ինքն է դիմել հարձակման և երկօրյա մարտում ստիպել թուրքերին նահանջել: Ներկայումս նա հետապնդում է նրանց: Երևանի ստորաբաժանման հաղթանակը բարձրացրել է Ալեքսանդրապոլի ստորաբաժանման զինվորների բարոյական ոգին: Չնավորվել են վաշտեր, գումարտակներ, գնդեր, որոնք թշնամուն շտապ ետ են նետել: Նրանց համակել էր միայն մեկ գաղափար, միայն մեկ ցանկություն՝ հաղթել կամ մեռնել: Դժբախտաբար, բոլոր սննդամթերքները նահանջի ընթացքում կորստյան են մատնվել, բացի դրանից, զենքերի և փամփուռների հսկայական քանակ ընկել է բնակչության ձեռքը: Սննդամթերքների խանութները կողոպտվել են: Բազմաթիվ զինվորների հաջողվել է տուն վերադառնալ: Բամակ, որ գնում ես մարտի, մահվանն ընդառաջ, եթե դուք ցանկանում եք փրկել ձեր ընտանիքները և ձեր ունեցվածքը, եթե դուք այլևս չեք ցանկանում այն սարսափելի ստրկությունը, որը հանդուրժում են թուրքերի լծի տակ հեծող մեր եղբայրները, եթե դուք չեք ցանկանում, որ հայ ժողովուրդն իր մահկանացուն կնքի, թող որ բոլոր նրանք, ովքեր ի վիճակի են հայրենիքի պաշտպանության համար զենք կրել, մեզ միանան, եկեք ձեր զենքերով ու ձեր փամփուռներով և ձեզ հետ սննդամթերքներ վերցրեք 5 օրվա համար, սպասելով, մինչ կազմակերպվի զորքերի կանոնավոր մատակարարում, բանակի համար գոհաբերեք ձեր հացը, կարտոֆիլը և այլ մթերքները: Հիշեք, այ

ներկայումս յուրաքանչյուր հապաղում մահացու է: Եթե ձեզ այժմ չհաջողվի զենքը ձեռքին պաշտպանել ձեր ազատությունն ու ունեցվածքը, դուք արժանի չեք լինի գոյատևելու իբրև ազատ ժողովուրդ: Եվ վա՛յ մեզ ու մեր սերունդներին: Մեր մասին ավելի ուշ կխոսեն միայն մեզ անիծելով: Մենք պետք է հենվենք միայն մեր ուժերի վրա: Եթե այժմ մենք չօգնենք բանակին՝ տրամադրելով նրան զինվորներ, ռազմամթերքներ ու սննդամթերքներ, մենք կորած ենք: Հիշեք, որ հասել է մեր ապագա ճակատագիրը կռելու պահը՝ հիմա կամ երբեք: Մենք երբեք այլևս չենք գտնի այս պահը, ո՛չ մենք և ո՛չ մեր սերունդները: Ուղարկեք ձեր ընծաները համբարակության և հրետանային խանութներին, տեղական կազմակերպություններին և այդ մասին տեղեկացրեք բանակային կորպուսի շտաբին»:

(A.M.G., 6 N 226).

1918 թ. հունվարից մինչև մայիսի վերջն Անդրկովկասում տեղի ունեցած քաղաքական իրադարձությունների ընդհանուր տեսությունը¹

[31-ը մայիսի 1918 թ.]:

1918 թ. հունվար ամսի վերջերին, իմ Թիֆլիս ժամանելու շրջանում, անդրկովկասյան կառավարությունը բաղկացած էր պ. Գեզեչկորու (վրացի) նախագահության ներքո գտնվող միջազգային կոալիցիոն կառավարությունից, որի կողքին գործում էին երեք ազգային կոմիտե, այն է՝ հայկական կոմիտեն (նախագահ՝ Ահարոնյան), վրացական կոմիտեն (նախագահ՝ Ժորդանիա) և թաթարական կոմիտեն (նախագահ՝ Մուլթանով): Այս տարրեր կազմակերպությունների համար ընդհանուր քաղաքական նրբերանգը մենչևիկյան խիստ չափավոր սոցիալիզմն էր, նրանց առաջիկա նպատակը՝ սահմանադիր ժողովի կամ ազգային սեյմի կազմավորումը, չբացառելով ցանկալի պահին դաշնային և, հավանաբար, նույնիսկ ավելի սերտ մերձեցման հնարավորությունը Ռուսաստանի (ամենայն հավանականությամբ՝ բացառությամբ թաթարական կուսակցության), բայց և ոչ մի պառագայում՝ բուլշևիկյան կառավարության հետ:

Միջազգային տեսակետից, համընդհանուր կարծիքը դաշնակիցների նկատմամբ բարեհաճ էր, խիստ անկեղծ՝ հայերի կողմից, խիստ շրջահայաց՝ վրացիների կողմից և արտաքուստ միանգամայն չեզոք ձևով դրսևորվող՝ թաթարների կողմից: Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը Թուրքիային զիջելով Բաթումի, Կարսի և Արդահանի կառավարությունները և վերադարձնելով Կովկասը 1877 թ. իր սահմանների շրջանակում, ամենքին մեծապես վրդովել էր և կարգադրություններ էին արվել համընդհանուր գորահավաքի մասին՝ ռազմաճակատի ռուսական զորքերն ազգային զորքերով փոխարինելու և եթե ոչ հարձակողական կամպանիան շարունակելու, ապա շարքերը, առնվազն մինչև համընդհանուր հաշտությունը կամ մինչև Թուրքիայի կողմից զիջումները, պահպանելու նպատակով:

Այդ գորահավաքը, որը տեղի չի ունեցել հարկադրաբար, ամենևին էլ այնքան փայլուն չի եղել, որքան կարող էր լինել: Այն տվել է բազմաթիվ ավտոմոբիլիստների և բուժակների,

¹ Այս անստորագիր հաշվետվությունը կազմվել է ըստ Կովկասում Ֆրանսիայի ռազմական առաքելության ղեկավար, փոխգնդապետ Շարդինյիի համատեքստի:

սակայն, այդուհանդերձ, հասել է այն բանին, որ կազմակերպել է բավական հսկայածավալ հայկական կորպուս և վրացական մի խմբավորում, որը բաղկացած էր մինչև ատասները զինված և փամփուշտների լանջագոտիով ծածկված, տարբեր գույների փայլուն համազգեստներ ունեցող զինվորներից ու սպաներից, որոնք, թվում է, թե ցանկանում էին իրենց վրա վերցնել կարգ ու կանոնի պահպանումը ներքին մահաճգնեղում և, մասնավորապես, վրացական ճանապարհի հսկողությունը, որտեղ, անհրաժեշտության դեպքում, կարելի է խուզարկության բողի ներքո կողոպտել բուրժուային: Թաթարները համընդհանուր գորահավաքին մասնակցություն չեն ունեցել: Օգնության կարգով, նրանք կովկասյան բանակին տրամադրել են նախկին վայրի դիվիզիայի թաթարական գունդը, որն, ի դեպ, չէր թվում, թե մտահոգ է ռազմարշավին մասնակցելու հարցում և որի խիստ նվազ երկիմաստ դիրքորոշումը պարզորոշ հասկացնել էր տալիս, որ երբ պահը հասնի, նա կլինի ամենագործողի կողքին: Թուրքահայաստանը նմանապես ընդհանուր գործին է տրամադրել իր զինված անձնակազմը և դաշնակցություն կուսակցության ղեկավար, իշխան Անդրոնիկովի [sic]՝ առաջնորդած զորքերից իրավասու էին սպասելու արդյունավետ դիմադրության:

Բանակն այս կերպ կազմավորելուց հետո, ծառացել է նրա ծախսերը հոգալու հարցը: Փողը չէր բավականացնում: Փոքր ինչ հույս էին տաժում դաշնակիցների ֆինանսական օգնության հետ. դրա հետ հույս են տաժել որոշ ժամանակ. նույնիսկ ասեկոսներ էին տարածվում Թիֆլիսում անգլո-ֆրանսիական բանկի հիմնադրման շուրջ, բայց ոչինչ տեղ չի հասել:

Նենց այդ ժամանակ կառավարությունը որոշում է կայացրել ռուսական Սահմանադիր ժողովի մոտալուտ գումարման հույսով երաշխավորվող՝ 50000000 ռուբլու սահմանում, ռուսերեն, հայերեն, վրացերեն և թաթարերեն լեզուներով տպագրված թղթադրամների թողարկման մասին, ժողով, որն, անկասկած, հաստատուն կդարձներ այդ թողարկումը: Մի քանի միլիոն շրջանառության մեջ է դրվել մինչև Սահմանադիր ժողովի ցրումը և երաշխավորման հարց առժամանակ այլևս չի ծագել:

Այդուհանդերձ, հայկական ստորաբաժանումները, գեներալ Նազար-Բեկովի [sic] գերագույն հրամանատարությամբ, գրավում էին ռուսների լքած գծերը և քանի որ ժամանակ չունեին այս ստորաբաժանումներին ցանկալի ռազմական կրթություն տալու և, մասնավորապես, նրանցից ղեկավար անձնակազմ պատրաստելու համար, հույս են կապել (քանզի հայկական քաղաքականությունը միշտ հենվել է հույսի վրա) դաշնակիցների՝ այս պարագայում, Բաղդադից Պարսկաստան եկող անգլիական զինված անձնակազմերի օգնության հետ և ամբողջ բնակչության շրջանում այս առթիվ լեզուններ են տարածվել: Նախ և առաջ՝ դեպի Կովկաս ուղղություն էին վերցնում զրահապատ ավտոմեքենաները, որոնք գտնվում էին Էնզելիում, այնուհետև՝ Կովկասին օգնության էին շտապում բանակային լիակազմ կորպուսները: Այդուհանդերձ, ռազմաճակատը լքող ռուսական զորքերը կանգ էին առնում Բաքվում, այդտեղ բոլշևիկյան իշխանություն հաստատում, իրենց հայտարարում Անդրկովկասի բուրժուական հանրապետության թշնամիներ և կոտորում քաղաքի թաթարական բնակչությանը, դրա հետ մեկտեղ կտրելով անգլիական զորքերի անցումի յուրաքանչյուր փորձի ճանապարհը: Պարսկաստանում, ի դեպ, դաշնակիցները զինում էին քաղղեական և քրիստոնյա սիրիացիների գումարտակները, որոնք շուտով իրենց դեմ հանդիման են ունեցել պարսկական մահմեդական բնակչությանը և դրա հետևանքով նպաստել են Պարսկաստանում գերմանացիների հակադաշնակցային քարոզչությանը:

1 Անդրանիկը ոչ իշխան էր, ոչ էլ ՀՀԴ կուսակցության ղեկավար: Հայ կառավարների խմբի գլուխն անցած, նա հռչակվել է օսմանյան ռազմական ուժերի և անկանոն հրոսակախմբերի դեմ ցուցաբերած խիզախությամբ:

Այդուհանդերձ, թուրքերը, որոնց օգնում էին քրդական հրոսակախմբերը, կրկին հարձակման անցան, որի հաջողությանը նրանք չլին հավատում, քանզի իրենց գուրքերը շատ էին ընկճված և սակավաթիվ: Սակայն առաջին իսկ բնդանոթային համազարկից հետո, կովկասյան ամբողջ բանակը ճողոպտել է և այլ իսկ պահից թուրքերն առանց դիմադրության և հաճախ նույնիսկ առանց գեներալի վերագրավել են թուրքական առափնյա շրջանի բոլոր քաղաքները, որոնց նվաճումն այդքան մեծ ջանքեր էր պահանջել ռուսական բանակներից: Հայերը ճողոպտում էին առանց որևէ բան ավերելու և առանց որևէ բան դուրս տանելու:

Որքան թուրքերն առաջանում էին, այնքան նրանց օգնություն էին ցուցաբերում տեղական բնակիչները և, մասնավորապես, աջարները՝ մահմեդական վրացիները, որոնք միանում էին նրանց. Անդրոնիկովը [sic] հանդես էր գալիս մոլեգին կոչերով, հրաժարական ներկայացնում, ասելով, որ ինքը չի ցանկանում վախկոտների կրամանատար լինել:

Թիֆլիսում սեյմը կազմավորվել է Չխենկելու նախագահությամբ. այն բաղկացած էր բոլոր կուսակցությունների ներկայացուցիչներից, սկսած դաշնակցականներից մինչև ռուսական կադետները (որոնց ներկայացուցիչը Սեմյոնովն էր), ունենալով, ամենայն հավանականությամբ, թաթարական մեծամասնություն:

Թշնամու շուտափույթ հարձակման առիթով, լիակազմ նխատու նա վճռել է հռչակել Անդրկովկասի անկախությունը և ձեռնամուխ լինել հաշտության բանակցությունների: Դա կատակերգության սկիզբն է դարձել, որի առաջին գործողությունը կայացել է Տրապիզոնում: Այդ քաղաք ուղարկված լիազոր ներկայացուցիչները թվով գրեթե յոթանասունի էին հասնում, որոնք ներկայացնում էին բոլոր կուսակցությունները և ձևավորում տարատեսակ խմբավորում: Առաջին հարցը, որն առաջադրել են թուրքերը, հետևյալն էր. «Ո՞ւմ անունից խմբավորում: Առաջին հարցը, որն առաջադրել են թուրքերը, հետևյալն էր. «Ո՞ւմ անունից եք դուք պատրաստվում մեզ հետ բանակցություններ վարել: Արդյո՞ք դուք անկախ պետություն եք: Արդյո՞ք դուք այս առթիվ անհրաժեշտ քայլեր եք ձեռնարկել միջազգային ասպարեզում: Արդյո՞ք ձեզ ճանաչել են այլ տերությունները»:

Այս առիթով, լիազոր ներկայացուցիչները պատասխանել են. «Մենք անկախ պետություն ենք ազգի կամքով, մենք կդիմենք բոլոր անհրաժեշտ քայլերին, որոնցով ներկայումս դիմում ենք ձեզ և շատ ենք շտապում ձեռնամուխ լինելու բանակցությունների»:

Թուրքերը բացատրել են, որ իրենք չեն կարող ճանաչել Անդրկովկասն առանց դաշնակիցների, որ, ի դեպ, իրենք հաշտություն են կնքել Ռուսաստանի հետ և որ տառացիորեն իրականացնում են Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը, որ ի վերջո, իրենց առջև չեն հանդիպում ռուսական որևէ զորքի և որ հայկական տարրերին կարող են դիտել միայն իբրև ապստամբ հրոսակախմբեր: Բանակցություններ վարելուց մի քանի օր անց, լիազոր ներկայացուցիչները, առանց որևէ արդյունքի հասնելու, վերադարձել են Թիֆլիս, իսկ մյուս կողմից, թուրքերը գտնվում էին Բաթումի առջև, այդ քաղաքից մոտավորապես 20 վերստ հեռավորությամբ:

Կովկասի կառավարությունը հայրենասիրական նոր կոչեր է հղել, բայց դաշնակիցների նկատմամբ տածվող հույսը չքացել էր և թաթարները պարզորոշ ի հայտ էին բերում իրենց թրքամետ զգացումները, հասնելով մինչև այն բանին, որ Թիֆլիսի սրճարաններում բաժակաճառեր էին ասում հանուն թուրք հեծելազորի հաջողության:

Վրացիներն ընդհակառակը, թվում էր, թե մասամբ հակված էին հայերին օգնելու, և մի քանի զինված անձնակազմեր մեկնել են Բաթում: Այս նոր նախապատրաստությունների առիթով, ռազմերթերից և սովից խիստ հյուծված թուրքերը որոշ ժամանակով, ի դեպ, շատ կարճատև, կասեցրել են իրենց առաջխաղացումը: Այդուհանդերձ, սեյմի թաթարական կուսակցությունը բացահայտ թրքամետ քայրզություն էր վարում, այնժամ, երբ վրացա-

կան շրջաններում ի հայտ էր գալիս որոշ գերմանամետ կողմնորոշում, որը պայմանավորված էր մի կողմից՝ դաշնակիցների օգնության հետ կապված հույսերի կատարյալ չքայմամբ, մյուս կողմից՝ և մասնավորապես, գերմանական գաղտնի առաքելությունների ակտիվ և բուռն քարոզչությամբ:

Այսպիսի տրամադրվածության հիմնական հանգամանքներից մեկն ակնհայտորեն բուլշևիկների բռնություններն էին Բաքվում և նրանց հաջողությունները Վլադիկավկազում: Եվ ակներևաբար բուրժուական ռեակցիան նետվում էր նրանց ձեռքերի մեջ, ում հետ ողջագուրվում էր իբրև կարգ ու կանոնը և իր ունեցվածքները պահպանելու միակ ունակ անձանց:

Երբ թուրքերը վերսկսել են իրենց առաջխաղացումը, սկզբնական շրջանում նրանք որևէ դիմադրության չեն հանդիպել: Աջարական հրոսակախմբերը գրավել են Բաթումի առաջին ամրությունները, որը Թիֆլիսում տեղիք է տվել մեծ հուզմունքի և իբրև անմիջական հետևանք հանգեցրել է գերմանամետ կողմնորոշման ամրապնդմանը: Մեյնը կրկին որոշել է ձեռնամուխ լինել բանակցությունների և ստանալով թուրքերի համաձայնությունը, Բաթում է ուղարկել մի պատվիրակություն, որը գլխավորում էր պ. Չխենկելին, որին, բանակցությունները վարելու համար, տրվել էին լիակատար իրավունքներ:

Այս անգամ թուրքերի դիրքորոշումն Անդրկովկասի լիազոր ներկայացուցիչների նկատմամբ փոխվել էր: Ոչ միայն որևէ տարակուսանք այլևս չէր հայտնվում Անդրկովկասյան հանրապետության ինքնավարության մասին, այլև ցանկություն էր դրսևորվում նրա հետ բարեկամության պայմանագիր կնքելու շուրջ: Գերմանացիները, ավատրիացիներն ու բուլղարացիներն ընդունում էին Անդրկովկասի անկախությունը և թուրքական պատվիրակության ղեկավար Վեհիբ փաշան պատվավոր և տևական հաշտություն կնքելու շուրջ հայտնում էր երկու կողմերի համար ամենահամարձակ ցանկություններ:

Կողմնորոշման փոփոխության հետ մեկտեղ, հույսերի քաղաքականության գեղեցիկ օրերը վերադարձել էին Թիֆլիս, չարգելված միջավայրերում խոսում էին մի գործարքի մասին, որը Բաթումը դարձնելու էր ազատ նավահանգիստ, Արդահանը զիջելու էր թուրքերին և Կարսը թողնելու կովկասցիներին: Նույնիսկ բացարձակապես անհնար չէ, որ գերմանացիները, որոնց անձնական նպատակը միայն երկրի տնտեսական նվաճումն էր և շուտափույթ շահագործումը և ոչ մի պահ այս կարծիքի հետ համամիտ եղած չլինեին:

Թաթարները, որոնք ավելի թրքամետ են, քան երբևէ, իրենց կողմից ի հայտ էին բերում որոշ անհանգստություն և Ելիզավետպոլից Բարձր Դուռ ուղարկում լիազոր ներկայացուցիչների՝ Ադրբեջանի համար օսմանյան հպատակություն խնդրելու նպատակով. այս քայլը, մասնավորապես, պատճառաբանված էր այն մտավախությամբ, որը ներշնչում էին Բաքվի բուլշևիկները:

Վերջին պահին տեղի է ունեցել անսպասելի հանգուցալուծում: Թուրքերը և գերմանացիներն ունեցել են բավական խորը տարածայնություններ: Առաջինները հասել են նույնիսկ նրան, որ առարկելի են համարել երկրորդների՝ որևէ պահանջ ունենալու իրավունքը: Չխենկելին խաբվել է, ուրիշներն ասում են, որ կաշառվել է և մայիսյան մի գեղեցիկ առավոտ, Թիֆլիսի կառավարությունն իրագրել է դառնում, որ Չխենկելին՝ իրեն տրված իրավասությունների հիման վրա, հաշտություն է ստորագրել, որն ամբողջովին վավերացրել է Բրեստ-Լիտովսկի պայմանագրի բոլոր պայմանները: Անմիջապես տեղի է ունեցել սեյմի և կառավարության արտահերթ ժողովը, որը կայացրել է ամենամասնապեսելի վճիռը. Անդրկովկասյան հանրապետության համաձայնությամբ՝ պատերազմի հայտարարում Թուրքիային:

Այդ պահին, Գեգեչկորու կառավարությունը կրկին անհանգստացել է ֆինանսական հարցով և հասել այն բանին, որ դաշնակիցների հյուպատոսները ստորագրել են 70000000 ռուբլու սահմանում արժեթղթերի երաշխավորություն, որի հսկողությունն իրականացնելու էին իրենք և որն Անդրկովկասին կթույլատրեր շարունակել պայքարը:

Անմիջապես, ինչպես և կարելի էր այդ սպասել, թուրքերը վերսկսել են հարձակումը, մի կողմից՝ գրավելով Բաթումը և մյուս կողմից՝ առաջանալով դեպի Կարս (Բաթումի բերդամբողջը, որի կայագորը բաղկացած էր գրեթե 3000 մայրուց, որոնք իրենց տրամադրության ներքո ունեին ծանր հրետանի, գրավել են 2 լեռնային թնդանոթ ունեցող 500 մարդ): Կարսի բերդամբողջը, համաձայն այդ ժամանակաշրջանում այն այցելած ֆրանսիացի զինվորականների վկայության, գտնվում էր հիանալի հոգածության ներքո, հրաշալի զինված էր և ուներ ռազմամթերքներ, ինչպես նաև հայկական կայագոր, որը շնորհիվ գեներալ Նազար-Բեկովի [sic] ջանքերի, թողնում էր կարգ ու կանոն ունեցողի տպավորություն: Կարճ ասած, կարծում էին, որ վատթարագույն պայմաններում, նա կարող էր թուրքերին լուրջ դիմադրություն ցուցաբերել մի քանի ամիս շարունակ:

Օգտվելով այն խառնաշփոթից, որը հարուցել էր Բաթումի գրավումը, Թիֆլիս վերադառնալուց հետո, Չխենկելին գնում է սեյմ, այնտեղ կազմակերպում թաթարների և մասամբ վրացիների աջակցության վրա հիմնվող մի կուսակցություն, տապալում Գեգեչկորու կառավարությունը, նշանակվում Խորհրդի նախագահ և Արտաքին գործերի նախարար ու վճռում մի պատվիրակություն ուղարկել Բաթում՝ հաշտության բանակցությունները երրորդ անգամ վարելու համար: Հասարակական կարծիքի մեծ մասն այս անգամ հակված էր նրա կողմը, քանի որ հասարակությունը հոգնել էր այդ կատակերգությունից և ցանկանում էր լիցնել կարգ ու կանոնի և հաշտության վերադարձի ակնատեսը: Այդուհանդերձ, թվում է, թե գերմանացիները դիտում էին Անդրկովկասն իբրև չեզոք երկիր: Նրանք Թիֆլիս են ուղարկում ռազմա-տնտեսական առաքելություններ և մի հյուպատոսի (նրան, ով այդտեղ էր գտնվում նախքան պատերազմը՝ ֆոն Շուլենբուրգին): Նրանք պայմանավորվածություն են կայացնում կառավարության հետ, Վրաստանին ծածուկ իրենց աջակցությունը խոստանում թուրքերի դեմ, վերջիններիս քմահաճույքին թողնելով՝ իրենց կարծիքով չափից ավելի անհնազանդ հայերին ու թաթարներին, որոնք որևէ այլ բան չէին պահանջում: Համազգեստավորված գերմանացի սպաները, նախ՝ կարծեցյալ շվեդական առաքելության պատրվակի ներքո, որը նախատեսված էր գերիների փոխանակությամբ զբաղվելու համար, այնուհետև՝ ավելի բացահայտորեն, մասնակցում են կառավարության նիստերին և դրանք ղեկավարում: Բացի դրանից, նրանք Կովկասի բազմաքանակ գերմանացի գաղութարձակներին ու գերիներին հավաքագրում են գնդերում և նրանց զինելու համար սպաքանակներին ու գերիներին հավաքագրում են գնդերում և նրանց զինելու համար սպաքանակներում ցանկալի պահի: Այդ պահը չի հասպտում հասնել. նոր պատվիրակությունը Բրեստ-Լիտովսկի պայմանագրի հիման վրա Թուրքիայի հետ հաշտության պայմանագիր է կնքել, զորքերը Կարսից դուրս են բերվել, Արդահանը հանձնվել է և ժամանակավորապես սահմանվել է 1877 թ. սահմանները փոքր-ինչ գերազանցող սահմանագատման գիծ: Այդուհանդերձ, մի քանի օր անց, նախ՝ սահմանային միջադեպի պատրվակի ներքո, վերսկսվում է թուրքական հարձակումը, այնուհետև՝ օսմանյան զորքերը գրավում են Ալեքսանդրապոլը, Անդրկովկասին հղելով մի վերջնագիր, որով պահանջում էին Ալեքսանդրապոլ-Ջուլֆա հատվածում զորքերի անհապաղ դուրս բերում ամբողջ երկաթգծից, որպեսզի ի վիճակի լինեն իրենց զորքերն անգլիացիների դեմ ուղարկելու, որոնք (իբրև թե) առաջանում են Պարսկաստանում Ջուլֆայի կողմից: Հայ հրամանատարը բողոքում է, բայց զորքերն

առանց լուրջ մարտի նահանջում են, և թուրքերն իրենց ետևում են թողնում Ալեքսանդրապոլը, առաջանում մինչև Վորոնցովկա, սպառնում ուղղակիորեն Թիֆլիսին, որից գտնվում են շուրջ քառասուն վերստ հեռավորությամբ, չունենալով իրենց առջև որևէ ուժ, որն ունակ լիներ իրենց կանգնեցնելու կամ նույնիսկ հակված դրան մնանակելու:

Հենց այդ ժամանակ էր, որ գերմանացիները պաշտոնապես բեմահարթակ են ելնում. նրանք Թուրքիային վերջնագիր են հղում, կարգադրելով գորքերը դուրս բերել վրացական տարածքից, որն իրենք վերցնում են իրենց հովանու ներքո: Կառավարության օգնությամբ նրանք զինում են իրենց զեռիներին և զադուքաբնակներին, որոնց վստահվում է երկաթգծի հսկողությունը և թուրքերը թողնում են Վորոնցովկան ու նահանջում դեպի Ալեքսանդրապոլ:

Այդ իսկ պահից, գերմանական քաղաքականությունը Թիֆլիսում դառնում է գերակշռող: Գերմանացիները կովկասյան կառավարությունից պահանջում են կամ ուժերն ուղարկել Բաքվի դեմ, կամ դրանք անձամբ ուղարկելու հնարավորություն (ես կարծում եմ, որ վրացիները կանգ են առել այդ երկրորդ լուծման վրա): Բացի դրանից, նրանք հսկայական կոնցեսիաներ են ստանում մանգանի հանքերը և երկրի բնական ռեսուրսները շահագործելու համար և իբրև վերջին գործողություն՝ կազմակերպում են կարծեցյալ հեղաշրջում, հռչակելով ինքնավար Վրաստանը Գերմանիայի բարեկամական պրոտեկտորատի ներքո և թուրքերին զիջելով Հայաստանը, որին նրանք կարող են միայն տիրանալ, որովհետև ես չեմ կարծում, որ հայկական բանակի բեկորներն ի վիճակի լինեն լուրջ դիմադրություն ցուցաբերել: Առավել ևս, որ նրանք իրենց դեմ հանդիման ունեն մի կողմից՝ թուրքերին, իսկ մյուս կողմից՝ թաթարներին:

Հետաքրքիր է իմանալ, թե արդյո՞ք այս գործարքն իրականում վերջ է տվել այն շատ խորը տարածայնություններին, որոնք մինչև այժմ գոյություն են ունեցել գերմանացիների և թուրքերի միջև: Վերջիններս այնպես էին տրամադրված իրենց դաշնակիցների հանդեպ, որ կարող էին «բոլոր վերապահումները հաշվի առնելով», հասնել մինչև այն բանին, որ նրանց սպառնալից Դարդանելը բաց անելու և սեպարատ հաշտություն կնքելու հեռանկարով:

(A.M.G., 4 N 62).

Ռազմական նախարարության Գերագույն խորհրդին կից Ֆրանսիական մշտական ռազմական ներկայացուցիչ, գեներալ Բելինը՝ Խորհրդի նախագահ, Ռազմական նախարար պ. Կլեմանտյին

Ճ. թիվ 573/ՉՆԳԽ: Գաղտնի:

Վերսալ, 5-ը հունիսի 1918 թ.:

Արտաքին գործերի նախարարությանը հղված՝ մայիսի 31-ի թիվ 5219/388 ձեռնարկում, որն ինձ էիք փոխանցել, դուք նախատեսել էիք միաժամանակ քաղաքական, տնտեսական և ռազմական նպատակներ հետապնդող ֆրանսիական մի առաքելություն ուղարկել Պարսկաստան:

Այն ուղարկելուն վերաբերող բանակցությունները, թվում է, թե դեռևս թույլ չեն տալիս իրագործել այդ նախագիծը և մյուս կողմից, քանի որ Ռուսաստանում տիրող իրավիճակի նոր քննարկումն ի հայտ է բերում Անտանտի համար ընդհանրապես, իսկ Ֆրանսիայի համար մասնավորապես, մեր կողմից, անզլիացիների հետ կողք-կողքի, ուղղակի ներխուժման կարևորությունը Պարսկաստան, ես անհրաժեշտ եմ համարում ՉՆ-ին հանձնել կից՝ կոլեկտիվ ծանուցագրի նախագիծը:

Այս նախագիծն ամփոփում է, մասնավորապես, կառավարություններին հղված մի առաջարկություն, որը վերաբերում է դաշնակիցների առաքելությունների ուղարկմանը Պարսկաստան, որոնց կհատկացվեն քաղաքական և ռազմական բավարար միջոցներ:

Ինչպես և ես, ամերիկյան ու իտալական ՉՆ-երն ընդունում են Անտանտի համար Կովկասում և Պարսկաստանում հրատապ գործելու անհրաժեշտությունը, բայց բրիտանական ՉՆ-ը նկատել է, որ իր կառավարությունը չի կարող անել ավելին, քան արդեն արել է և հայտարարել է, որ չի կարող իր հավանությունը տալ ներկայացված ծանուցագրին:

(A.M.G., 16 N 3204).

ՀԱՎԵԼՎԱԾ

Կոլեկտիվ ծանուցագրի նախագիծ

Իրադրությունը Կովկասում և Պարսկաստանում

Գաղտնի:

Վերսալ, 22-ը մայիսի 1918 թ.:

Կովկասում և Պարսկաստանում տիրող ընդհանուր իրադրության քննարկումից հետո, ՉՄՆ-երը հաշվի առնելով.

1/ որ Թուրքիայի քաղաքական և ռազմական գործողությունը վերոհիշյալ տարածաշրջաններում նպաստում է Գերմանիայի ինպերիալիստական նկրտումներին, որը ջանում է ձեռք բերել այս երկրների ցանկացած բնույթի լայնածավալ ռեսուրսները.

2/ որ այդ գործողությունը հարավում ավարտին է հասցնում Ռուսական կայսրության քաղաքական և տնտեսական շրջափակումն ու սպառնալիք է Թուրքեստանից և Աֆղանստանից այն կողմ գտնվող Անգլիական Հնդկաստանի համար.

3/ որ այդ գործողությունը սպառնալից է, մասնավորապես, Պարսկաստանում, որտեղ թուրք-գերմանական գործակալները, բրիտանական ռազմական ներխուժումը ներկայացնելով իբրև վտանգ այդ երկրի ամբողջականության և անկախության համար, հրահրել են Թեհրանի կառավարության իսկական թշնամանքը Մեծ Բրիտանիայի դեմ.

4/ որ գործողությունների բոլոր հնարավոր թատերաբեմերում Անտանտը պետք է բարոյապես և նյութապես պայքարի Թուրքիայի դեմ, որը փաստորեն պարզունակ գործիք է Գերմանիայի ձեռքին.

գտնում են, որ, ամբողջությամբ մնալով Հարավային Ռուսաստանում Ֆրանսիայի և Անգլիայի գործու-

դությանը վերաբերող՝ 1917 թ. դեկտեմբերի 23-ի ֆրանս-բրիտանական համաձայնագրի շրջանակներում.

1/ դաշնակիցները պետք է շարունակեն իրենց նյութական և ֆինանսական աջակցությունը Կովկասի ազգություններին, մասնավորապես, նրանց զորքերի կազմակերպմանն առնչվող հարցում, այն պայմանով, որ այս վերջինները մեծապես օգտագործվեն թուրքերի դեմ պայքարում.

2/ հարկ է հավաստիացնել Թեհրանի կառավարությանը, նրան հասկացնել, որ անհախտության և ամբողջականության հարցում Պարսկաստանին սպառնում են միայն թուրք-գերմանական մեքենայությունները, դրդել նրան վերակազմավորելու իր սեփական ռազմական ուժերը, որը նրա համար միակ միջոցն է ներքին կարգ ու կանոնն ապահովելու և Գերմանիայի՝ տազնապ հարուցող վարձկան զործակալների մուտքն իր տարածք արգելելու համար: Այս նպատակով, ցանկալի կլինի, որ դաշնակցային առաքելություններն ուղարկվեն Պարսկաստան և այդ առաքելություններին միաժամանակ ռազմական և քաղաքական բավարար միջոցներ հատկացվեն.

3/ ռազմական գործողության կրկնապատկումը Փոքր Ասիայի գործողությունների քատերաբեմներում, ծառանում է Կովկասից և Պարսկաստանից թուրքական ուժերը դուրս մղելու, Կովկասի ազգություններին իրենց զորքերի կազմակերպման համար ժամանակ տրամադրելու և Պարսկաստանի ճանապարհների վրա գերիշխանությունն ապահովելու համար:

Այս պայմաններում, ՁՆ-երը, որոնք, մյուս կողմից՝ համոզված են Պարսկաստանում յուրաքանչյուր բնույթի համատեղ գործողության պարտավորվածությունից չհրաժարվելու խնդրում, գտել են, որ այդ համատեղ գործողությանը վերաբերող հարցը պետք է հետաձգվի, բայց որ իրենց թվից, անհատական կարգով, դրան կարող են կրկին ձեռնամուխ լինել նրանք, ովքեր կցանկանան դրա շուրջ գործ հարուցել իրենց կառավարություններին:

Հետևաբար, ես պատիվ ունեմ ձեր քննությանը ներկայացնել այն հետևությունները, որոնք հուշել են ՁՆ-երին:

Ես գտնում եմ, որ հարկ կլինի բրիտանական կառավարության հետ հրատապ, անհրաժեշտ համաձայնություն կայացնել, որպեսզի Պարսկաստանի համար նախատեսված ֆրանսիական առաքելությունը կարողանա ճանապարհ ընկնել ամենասեղմ ժամկետում:

(A.M.G., 16 N 3204).

Խորհրդի նախագահը, Ռ-ազմական նախարարը՝ Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին

Վ. թիվ 3978-9/11:

Փարիզ, 6-ը հունիսի 1918 թ.:
(Մուտքի է Ասիայի փոխվարչ {ուբյունը}
հունիսի 6-ին):

Ես պատիվ ունեմ ձեր ուշադրությունը կրկին հրավիրել Ամերիկայում Արևելյան լեզոն-նին զինվորագրվելու հարցի վրա, որն արդեն դարձել է 1918 թ. ապրիլի 8-ի թիվ 2584-9/11 իմ ճեպագրի² նյութը:

Ամերիկյան զինվորագրումը շարունակում է Արևելյան լեզոնին չտրամադրել և ոչ մի կամավորի: Ամերիկայի հայերն, ի դեպ, թվում է, թե այժմ կընդգրկվեն ամերիկյան բանակում: Սակայն այս զինվորագրման աղբյուրները զգալիորեն ամենակարևորներից են: Եթե դրանք սպրդեն, Արևելյան լեզոնին մատակարարելու համար կմնան միայն Ասիական Թուրքիայի ռազմաճակատներում գերեվարված և ազատ արձակված հայերը: Բայց անգլիական զորքերի նշանակալից առաջընթացն այս պահին կանխատեսելի չի թվում և չնայած մեր քաղաքական առաքելության եռանդուն գործունեությանը, չի թվում, թե այս նետուրները բավարար լինեն 3 գումարտակից բաղկացած երթային զնդի և 3 վաշտից բաղկացած մեկ պահեստային զնդի մարտական անձնակազմն ապահովելու համար: Ես, այսպիսով, հակված կլինեմ նվազեցնելու նախ՝ պահեստային զնդի վաշտերի թիվը և հետագայում՝ հավանաբար, նույնիսկ գումարտակների թիվը:

Ձեր ուշադրությունից չի վրիպի, որ բացի ռազմական առավելությունից, որը հանգում է հենց նոր կազմավորված գունդը պահպանելուն և որից բոլոր հիմքերը կան ռազմի դաշտում մեծ արդյունավետություն ակնկալելու, երբ այն մարզվի ու պատերազմի վտանգներին դիմակայում դառնա, բարոյապես խիստ շահավետ կլինի, եթե Արևելյան լեզոնի անձնակազմերի ազատ արձակումն արգելվի:

Նախ և առաջ՝ հայ կամավորները, իրոք որ, այլևս չստանալով ամենահեռավոր երկրներից եկող իրենց հայրենակիցների աջակցությունն անընդմեջ ժամանումների միջոցով, իրենց կզգան մեկուսացված և կարծեք լքված. բացի դրանից, եթե նրանք հավաստի համարեն, որ Ամերիկայի հայերը զինվորագրվում են ամերիկյան դրոշի ներքո, հակված կլինեն կարծելու, թե Ամերիկյան նույնիսկ պաշտպանելու է իրենց շահերն ինչպես Ֆրանսիան, եթե ոչ ավելի լավ՝ քան Ֆրանսիան և դրանից մեր երկրի վարկն Արևելքում կարող է վարկաբեկվելու վտանգին ենթարկվել:

Արևելյան լեզոնի հնարավոր կրճատումը նախատեսելու հարկը չունենալու համար, ես կարծում եմ, այսպիսով, որ անհրաժեշտ է կրկին համառորեն պնդել ամերիկյան կառավարությանը, որպեսզի նա մի կողմից Միացյալ Նահանգներում բնակվող հայերին ընձեռի մեր դրոշների ներքո զինվորագրվելու համար բոլոր անհրաժեշտ հնարավորությունները և նույնիսկ այդ բարեհաճությանն արժանացնի նաև նրանց, ովքեր արդեն գտնվում են ամե-

1 Ստորագրել է գեներալ Ալբին:
2 Ստորև արտատպված է թիվ 581 փաստաթղթում:

րիկյան բանակում, իսկ մյուս կողմից՝ համաձայնվի, որ այս կամավորները, ֆրանսիական փոխադրամիջոցների սակավության պատճառով, տեղափոխվեն դեպի Ֆրանսիա ուղղությամբ վերցնող ամերիկյան փոխադրամիջոցները:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, *Turquie*, tome 68, ff. 49-49 v).

Բանակի շտաբի 3-րդ բաժանմունքի ծանուցագիրը՝

Թշնամական գործողությունը դեպի Կենտրոնական Ասիա և Պարսկաստան

Թիվ 8848/3: Գաղտնի:

6-ը հունիսի 1918 թ.:

I

Սև և Կասպից ծովերի տարածաշրջանում գերմանա-թուրքական գործողությունը գերմանացիների լայնածավալ ծրագրի իրականացման փուլերից է միայն, այն ծրագրի, որի նշանառության ներքո են գտնվում Կենտրոնական Ասիան, Պարսկաստանը և նրա անցուղիները, Բրիտանական Հնդկաստանը:

Այս տարածաշրջանում մեր թշնամիների հետապնդած նպատակը, թվում է, թե իրենց հովանու ներքո մի լիզա կազմավորելն է, որն ընդգրկի Հարավային Ռուսաստանի, Կովկասի, Թուրքեստանի և Պարսկաստանի թուրքական ազգությանը պատկանող մահմեդական ժողովուրդներին, և միաժամանակ սպառնա Հնդկաստանին, Չինաստանին ու Ճապոնիային², բաց անի նոր տնտեսական անցուղիներ և թույլատրի «Միջույրփային»^{*} տարածելու իր ազդեցությունը՝ ցանկացած բնույթի ռեսուրսների առումով քավականաչափ հարուստ տարածաշրջաններում, որպեսզի այսուհետև՝ կարողանա քավարարվել սեփական միջոցներով և դիմակայել ամեն մի շրջափակման:

Այս ծրագիրն իրականացվում է միաժամանակ Սև ծովի հյուսիսային ափով, հետևելով Սև ծով-Կասպից ծով առանցքին և այս ծովերի հարավային ափերով: Այն հետևողականորեն իրականացվում է քաղաքական գործողության կենսագործման հետ համատեղ՝ ճանապարհի հարթելով ռազմական գործողության համար:

Հարավային Ռուսաստանում Գերմանիայի ենթակայության ներքո գտնվող Ուկրաինայի կազմավորումը թույլատրել է գերմանական զորքերին հասնել Ղրիմ և Ազովի ծով:

Նպաստելու համար Սև ծով-Կասպից ծով առանցքով և անդրկասպյան երկաթգծով ընթացող առաջխաղացմանը, գերմանա-թուրքական քաղաքական գործողությունը փորձել է

1 Ստորագրել է գեներալ Ալբին:
2 Փաստաթղթի ծանոթագրությունը. «Նվազագույնը Մանդոլիայում և Մանջուրիայում նրա ունեցած ազդեցության համար»:
^{*} Բառացի բարգմանությամբ նշանակում է Կենտրոնական Եվրոպա: Գերմանիայում այս անունն է տրվել 1915 թ. դոկտոր Նաումանի մշակած քաղաքական մի համակարգի, որը նախատեսում էր տնտեսական դաշինքի մեջ ընդգրկել Գերմանիային ու Ավստրիային և իբրև ազդեցության ոլորտ, Արևելքում նրանց ենթակայության ներքո դնել Թուրքիայից և Սև ծովից մինչև Պարսից ծոցն ընկած պետությունները: - Մ. Բ.:

խանգարել Անտանտի ազդեցությանը ենթակա՝ անդրկովկասյան միասնական պետության ձևավորմանը:

Այս նպատակով, նա ձգտել է Կովկասի տարբեր ժողովուրդներին հակադրել մեկը մյուսին և օգտագործել նրանց տարածայնությունները՝ թուրքական գործի շուրջ համախմբելու համար մահմեդական կամ քրքամետ տարրերին, որոնք անդրկովկասյան տարածաշրջանի բազմատարր բնակչության կարևոր մասն են կազմում: Այս մտածողությունից ելնելով, Կասպից ծովի արևմտյան ափին տեղակայված թաթարները շուտափույթ օգտակար աջակցություն են ցուցաբերել թուրքերին՝ Անդրկովկասի վրայով իրենց ձեռքը պարզելով վերջիններիս:

Այս մեքենայությունների օգնությամբ, թուրքական զորքերը, չնայած իրենց հյուծվածությանը և անձնակազմերի թուլությանը¹, հասել են Բաքունի հյուսիսային և հյուսիս-արևելյան տարածաշրջանին ու Ալեքսանդրապոլի (Կարսից դեպի արևելք գտնվող) երկաթուղային կարևոր հանգույցին: Այս երկու կետերից նրանք կկարողանան համախմբված՝ առաջ ընթանալ դեպի Թիֆլիս և այնտեղից շարունակել ճանապարհը դեպի Բաքու:

Կասպից ծովի հարավում, թուրք-գերմանացիները ձգտում են իրենց ձեռքը զցել Պարսկաստանը: Այդ նպատակով նրանք նախ և առաջ՝ հռչակել են այս կայսրության անկախությունը (Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը), այնուհետև՝ ջանացել այդտեղ տարածել իրենց քաղաքական ազդեցությունը, հենվելով պարսկական ժողովրդավարական կուսակցության վրա:

Ռազմական տեսակետից թուրքական զորքերը հենց նոր են թափանցել պարսկական տարածք²: Նրանց առաջին նպատակն Ադրբեջանի մահանգի գրավումն է, ժանգալիսների խռովարար ցեղի հետ արդյունավետ հաղորդակցության մեջ մտնելը, որը Կասպից ծովի հարավ-արևմտյան ափում խաղում է Կովկասի թաթարների իրականացրած դերին համարժեք դեր և այս կերպ Կասպից ծովի ավազանում և նրանից դեպի արևելք ու Իրանի հարթավայրեր տանող անցուղիների վրա գերիշխանության ապահովումը:

II

Վերը հիշատակված փաստերը ցույց են տալիս, որ կենտրոնական կայսրություններն արդեն լուրջ առաջընթաց են ունեցել դեպի Կենտրոնական Ասիա և որ Պարսկաստանի վրայով նրանց սպառնալիքը Հնդկաստանի նկատմամբ հստակորեն ընդգծված բնույթ է ստացել:

Ներկայումս Անտանտի համար անհնար է խաչընդոտել Հարավային Ռուսաստանով գերմանական առաջխաղացմանը դեպի Թուրքեստան, բայց փոխարենը, համեմատաբար դյուրին է թվում դեպի Պարսկաստան և Հնդկաստան ուղղված սպառնալիքին խաչընդոտելը:

Վերջինս Անգլիայի համար ներկայացնում է այնպիսի վտանգ, որ բրիտանական կառավարությունը շտապ որոշում է կայացրել Պարսկաստանում գործելու անհրաժեշտության շուրջ: Այդուհանդերձ, այն միջոցները, որոնք նա այս նպատակով գործի է դրել, անբավարար են թվում՝ հասնելու համար ցանկալի արդյունքին:

Ներկայումս, և քանի դեռ Միջազգետքի բանակի 190000 մարդ մնում են անգործունյա,

1 Փաստաթղթի ծանոթագրությունը. «25000 մ (արդ)՝ ներառյալ քրդերը»:
2 Փաստաթղթի ծանոթագրությունը. «Փոքր ստորաբաժանումներ են ուշադրության արժանացել Խոյ-Ուր-միա-Սուջ Բուլարում: Թուրքական շտաբը որոշ ժամանակ կանգ է առել Թավրիզում»:

բրիտանական կառավարությունը շատ քույլ միջոցներով (հեծելագորային մեկ գունդ և հետևակային մեկ գունդ) է հետամուտ Խանիքին-Համադան-Ռեշտի ռազմաճակատում (դեռևս նախնական) մի արգելափակոցի ստեղծմանը, որը եթե նույնիսկ ամբողջությամբ տեղադրվի, ամենայն հավանականությամբ, անգոր կլինի խանգարել գերմանա-բուրժական գործողության առաջխաղացումներին և թողնել բավարար ուժի տպավորություն, որպեսզի փոփոխության ենթարկի պարսկական կառավարության թշնամական դիրքորոշումը:

III

Հստակորեն զանազանվող այն առաջնահերթ շահավետության պատճառով, որն անգլիացիների համար ունի Հնդկաստանի ճանապարհի պաշտպանությունը, կարելի է ենթադրել, որ միայն իրականացման առեղծվածի դժվարություններն են (լեռնային երկիր, առանց ռետուրսների, առանց հաղորդակցության միջոցների), որ մինչ այժմ անգլիացիներին խանգարել են Միջագետքում գտնվող իրենց զինված ուժերից առանձնացնել այն ռազմարշավային կորպուսը, որն անհրաժեշտ կլինի Թեհրանում բրիտանական ազդեցությունը հիմնավորապես հաստատելու համար, և Պարսկաստանի ռազմարշավն իր բնականոն զարգացումը կունենա, հենց որ Խանիքից Համադան ճանապարհն ավտոմոբիլային փոխադրամիջոցների համար մատչելի դառնա:

Սակայն ամենամեծ շահավետությունն այն կլինի, որ բրիտանական առաջխաղացումը Թեհրանի ճանապարհի վրա արդյունավետ դարձնելու նպատակով չսպասեն այդ ժամկետին և, հետևաբար, ուժերի մատակարարման համար, ջորիների միջոցով հրատապ հաղորդակցության անհրաժեշտ զիծ կազմակերպեն, որի կարևորությունը կարելի կլինի ճշգրտել ըստ առաջադրած նպատակի:

Ամեն դեպքում, Պարսկաստանով արգելափակոցի ստեղծումը և նույնիսկ մայրաքաղաքի հիմնավոր գրավումը չպետք է դիտվեն իբրև բավարար միջոցներ թշնամու ճնշմանը խոչընդոտելու համար, որն օգտվում է Միջագետքի անգլիական բանակի անգործությունից, որպեսզի կատարյալ անվտանգության պայմաններում հետամուտ լինի իր զինված ներխուժումներին Պարսկաստանի ռազմաճակատ, չնայած գոյություն ունեցող ուժերի առեղծվածի անհամաչափությանը (Բաղդադի շուրջ կենտրոնացված են 167000 բրիտանական մարտիկներ, որոնց դիմակայում են Տիգրիսի ու Եփրատի հովիտներում և Ուրմիա լճի տարածաշրջանում տեղակայված 33000 թուրք մարտիկներ):

Ռազմարշավային կորպուսը, որին հարկ է Պարսկաստան ուղարկել, հենց որ այդ հնարավոր լինի, կատարի քաղաքական գործողությանը, որը պետք է ամբողջական դառնա և աջակցվի գեներալ Մարշալի բանակի հարձակմամբ. վերջինիս առաջին նպատակը, պետք է Ուրմիա լճի տարածաշրջանում գործող թուրքական զինված անձնակազմերի մատակարարման գծերի վրա Մոսուլի հաղորդակցությունների կենտրոնն *անհասպաղ խոցել լինի*:

Այսպիսի հարձակումը, որի հաջողությունը ենթակա չէ կասկածի, կշեղի թուրքերին իրենց ներկայիս նպատակներից և բրիտանական բանակների համար բավարար հեղինակություն կապահովի, որը քույլ կտա Պարսկաստանում գործող ոստիկանական ստորաբաժանումներին դյուրին ձևով հաղթահարել թշնամու մեքենայությունները և պարսկական կառավարության թշնամական միտումները:

Եզրափակում

Անտեղյակությունը, որն իշխում է ֆրանսիական շտաբում այն պայմանների շուրջ, որոնցով կարելի է դեպի Պարսկաստան ռազմարշավ նախապատրաստել, նրա համար անհնար է դարձնում շրջահայաց առաջարկություններով հանդես գալն այն ռազմարշավային կորպուսի կազմին և կազմավորմանը վերաբերող հարցում, որին հարկ է ուղարկել դեպի Խանիքին-Համադան ճանապարհը, Ռեշտ և Թեհրան: Նա կարող է միայն ուշադրություն հրավիրել համանման ռազմարշավի հրատապության և անհրաժեշտության վրա և ցանկություն է հայտնում, որ բրիտանական կառավարությունը, որքան հնարավոր է արագ, հանգի այս խնդրի լուծմանը, որը չնայած իր հանրահայտ կարևորությանը, մինչ այժմ քննարկվել է անբավարար ձևով:

Բացի դրանից, նա գտնում է, որ վերոհիշյալ գործողությունը դյուրին դարձնելու լավագույն միջոցը Միջագետքի բանակն անհասպաղ դեպի պարսկական սահմանին մերձեցած թուրքական ուժերի հաղորդակցության գծերն առաջ մղելն է:

Մույն ծանուցագիրը պետք է դիտվի իբրև մի պարզունակ ցուցում, որի հետևությունները բառացիորեն ընդունելու հարկը չկա:

(A.M.G., 4 N 62).

Ռուսաստանում Ֆրանսիայի դեսպան պ. Նուլենը Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին

Հ. թիվ 409:

Վոլոգդա, 10-ը հունիսի 1918 թ., ժ. 20.08-ին:
(Ստացել է Քաղ. վարչ. հունիսի 19-ին):

Մոսկվայում գտնվող մեր գլխավոր հյուպատոսից՝ ես ստանում եմ հունիսի 9-ի թվակիր հետևյալ հեռագիրը.

«Մոսկվայի Հայկական կոմիտեն իրագել է Կովկասի ճգնաժամային և անհուսալի կացությանն ու համառորեն խնդրում է դաշնակիցների ռազմական օգնությունը: Ըստ նրա՝ եթե անգլիացիները կարողանան Բաքու ուղարկել երկու կամ երեք հազար մարդու և 6000-ի՝ Ջուլփուս, ապա դա բավարար կլինի:

Այս երկրամասի միակ ժողովուրդը, որը դաշնակիցներին հավատարիմ է եղել (հայերն) են: Նրանք գործել են բուլշևիկների հետ, որովհետև վերջիններս ռուսական միակ ուժն էին, որը դեռևս գոյություն ուներ, իսկ խորհուրդները շարունակում էին գտնվել դաշնակիցների կողմում և թուրքերի դեմ: Վրացիներն իրենց թուլության, (քաթարները) և Դադստանի լեռնականները կրոնի պատճառով հակառակորդի կողմն են անցել:

Թուրքերն ունեն ոչ ավելի, քան 15000 մարդուց բաղկացած կանոնավոր զորքեր: Լեռ-

1 Պ. Բերտրանը:

նականների քվում կարելի է հաշվել 20000 մարդու, որոնցից 5000-ը (կազմակերպված են), քաթարները ոտքի են հանել տասնհինգ հազար մարդու, որոնք ավելի շուտ ելուզակներ են, քան զինվորներ: Բայց գերմանացի սպաները կկարողանան կարգի բերել այս ելուզակներին և նրանց քիվը (մեծապես) ավելացնել:

Բաքվի, Դ(երբեմնի) և Պետրոսկի¹ ...² տեր ու տնօրեն հայերն այդտեղ ունեն 10000 կազմակերպված և 15000 անկազմակերպ մարդիկ: Մեկ այլ խումբ կազմավորված է շուրջ քսան հազար մարդուց, որոնք Կարսի բանակային կորպուսի բեկորներն են, որը պատասպարվել է Երևանի լեռներում, մեկ միլիոն 600000 բնակչով բնակեցված՝ բացառապես հայկական մարդու: Բայց այն այստեղ մեկուսացված է, ի վիճակի չլինելով (քարմացնելու) իր մթերային պաշարները (և) ռազմամթերքները: Հարկ կլինի գրավել Ելի(զա)վետալովը [sic]³ քաթարական շտաբի նստավայրը, որը տարանջատում է երկու խմբերին: Դրա համար անհրաժեշտ է անգլիական օգնությունը: Բացի դրանից, այն կթույլատրի ռազմական առումով կազմակերպել հայ բնակչությանը և նրան զինել: Այն կապերը, որոնք հայերն ունեն Պարսկաստանում, դյուրին կդարձնեն զորքերի ժամանումը և այս կերպ կարելի կլինի հսկողություն սահմանել Հնդկաստանի ճանապարհի վրա: Հայկական կոմիտեն հրատապ աղերսում է Անտանտի տերություն(ների) պատասխանը»:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, *Caucase-Kurdistan*, tome 1, ff. 202-203).

Բեռնում Ֆրանսիայի դեսպան պ. Դյուտաստան՝ Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին

Ճ. Չհամարակալված:

Բեռն, 12-ը հունիսի 1918 թ.*:
(Ստացել են Կաթինետը և Զաղ. վարչ. հունիսի 14-ին):

Բեռնում Ֆրանսիայի դեսպանությունը պատիվ ունի այս ծրարում Արտաքին գործերի նախարարությանն ուղարկել հայերի դեմ ուղղված և թուրքական քարոզչությանից ելնող մի գրքույկ, որը կրում է «Համաշխարհային պատերազմն ու թուրք-հայկական հարցը» խորագիրը. այն գրել է Վաշինգտոնում նախկին դեսպան Ամնեդ Ռուստեմ բեյը:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, *Arménie*, tome 1, f. 48).

1 Խոսքն, անկասկած, վերաբերում է Դեպարտեմանտի նախահանգստին:
2 Վերժանման բացթողում:
* Դեպարտամենտի ժամոթագրությունը. «Հունիսի 19-ին պ. Գուն գրքույկը հանձնել է պ. Պիշոնին»:

Հնչակյան սոցիալ-դեմոկրատական կուսակցության նախագահ պ. Գարգեն Թահմազյանը՝ Մեհի պատգամավոր պ. Ալբեր Տոմասին

Ն:

Փարիզ, 17-ը հունիսի 1918 թ.:
(Ստացվել է հունիսի 21-ին):

Մենք պատիվ ունենք ձեզ հղել «Օրիան իլյուստրե» հանդեսի վերջին համարը, որտեղ պաշտպանում ենք Թուրքիայի ճնշված ազգությունների վեհաժողովի գաղափարը:

Այդ կապակցությամբ մենք հարցում ենք անցկացնում Օսմանյան կայսրության ճնշված ժողովուրդների բարեկամ՝ ֆրանսիացի երևելի անձանց շրջանում:

Մեզ համար, մասնավորապես, հաճելի է դիմել ձեզ, ով Ֆրանսիայում իր ձեռքն է վերցրել ազգությունների սկզբունքի պաշտպանությունը, չնայած ֆրանսիացի սոցիալիստների մի մասի ընդդիմությանը: Դրանով իսկ դուք շարունակում եք մեր մեծ և հանգուցյալ Ժորժիսի հիասքանչ գործը:

Դուք, որ Հայաստանի անկեղծ բարեկամն եք, մեզ երախտապարտ կդարձնեք, եթե բարեհաճեք հայտնել ձեր կարծիքն այսպիսի վեհաժողովի նպատակահարմարության և օգտակարության, ինչպես նաև գումարման հնարավորությունների շուրջ:

(A.N., 94 AP 204).

Միջազգետրում Ֆրանսիայի հյուպատոսության հավատարմատար պ. Ռուն՝ Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին

Հ. թիվ 123:

Բասսորահ, 19-ը հունիսի 1918 թ. ժ. 7.25-ին:
(Ստացել է Զաղ. վարչ. հունիսի 20-ին):

Միջազգետրում հայերի պրելատ, Ն(որին սրբազնություն) Սեզեբյանը [sic]¹ ժամանեց Բասսորահ: Նա ինձ այցելեց: Նա երեկ մեկնեց իր նստավայրը Բաղդադում:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, *Mésopotamie-Irak*, tome 11, f. 1).

1 Իժմ՝ Ն(որին սրբազնություն) Սերոբյան:

**Անգլիական տեղեկատվական ծառայության հղած գեկուցագիրը՝
Ռ-ազմական նախարարությանը**

Թիվ 23602: Գաղտնի:

19-ը հունիսի 1918 թ.:
(*Ստացել է ԲԸ-ի 2-րդ բաժանմունքը
հունիսի 27-ին*):

Օսմանյան հույների տառապանքները

Թերթերը տպագրում են թուրք դասալիքների տրամադրած հետևյալ տեղեկությունները, որոնք վերաբերում են Թուրքիայում հունական տարրի հալածանքին.

«Հունական տարրի լիակատար ոչնչացումը նախատեսված է պարտադիր զինվորագրման, բռնագրավումների և տեղահանությունների միջոցով: Մինչև 1917 թ. վերջերը, մոտավորապես 200000 հույն, 15-ից 48 տարեկան, զինվորագրվել են, որոնց մեծ մասը մահացել է հիվանդությունից, սովից ու վատ վերաբերմունքից: Թրակիայից և Փոքր Ասիայից տեղահանված բնակիչների թիվը գերազանցում է 1500000-ը. նրանց կեսը մահացել է գրկանքներից կամ կոտորվել է: Թուրք պաշտոնյաները և սպաներն անվարանորեն հայտարարում են, որ քրիստոնյաներին այլևս չի թույլատրվելու ապրել Թուրքիայում և հույներին բռնությամբ հարկադրել են ընդունել մահմեդականությունը: Թուրքերի բռնագրաված հույների ունեցվածքների արժեքը գերազանցում է 5000 միլիոն ֆրանկը»:

(A.M.G., 7 N 1653).

**Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնը՝
Լոնդոնում Ֆրանսիայի դեսպան պ. Պոլ Կամբոնին**

Հ:

Փարիզ, 21-ը հունիսի 1918 թ., ժ. 12-ին:

Ստորև ես ձեզ եմ հղում Կովկասում հայերի կացությանը վերաբերող՝ Ռուսաստանում Ֆրանսիայի դեսպանի՝ հեռագիրը.

(պատճենել՝ Վոլոդյա, 10-ը հունիսի, թիվ 409)¹:

Ես ձեզ երախտապարտ կլինեմ, եթե դուք քրիտանական կառավարության հետ զրուցեք Մոսկվայի Հայկական կոմիտեի փոխանցած խնդրանքների շուրջ և ինձ տեղյակ պահեք, թե նա ինչպիսի վերաբերմունք ունի այս կացության հանդեպ և արդյոք ի վիճակի է, մաս-

1 Պ. Նույննը:
2 Տե՛ս վերը թիվ 633 փաստաթուղթը:

նավորապես, արդյունավետորեն օգնության հասնել Բարվի հայերին:

Կասկածից վեր է, որ հակաբուլշևիկյան շարժումների գոյության պայմաններում, որոնք վերջին ժամանակներս հավաստվել են գրեթե ամենուր, դաշնակիցները պետք է փորձեն աջակցել նրանց, ովքեր, ինչպես և հայերը, չեն լքել պայքարը գերմանական ազդեցության դեմ Ռուսաստանում:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, *Caucase-Kurdistan*, tome 1, ff. 239-239 v).

**Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար
փաշան՝ Արտաքին գործերի նախարարությունում
Ասիայի փոխտնօրեն պ. Ժան Գուին**

Ն:

Փարիզ, 21-ը հունիսի 1918 թ.:
(*Ստացել է Ասիայի փոխվարչությունը
հունիսի 25-ին*):

Ամերիկայի մեր Հայկական ազգային միության նախագահ պ. Սևասիից ես մի հեռագիր եմ ստացել, որով նա ինձ տեղեկացնում է այն մեծ հույսերին, որոնք տաժում է կամավորների նոր զինվորագրումների հարցում վերջապես բավարարող արդյունքների հանգելու հետ, եթե այն քայլերը, որոնք կատարում է Վաշինգտոնի կառավարության համաձայնությունը ձեռք բերելու համար և որոնք, դժբախտաբար, դեռևս որևէ արդյունքի չեն հանգեցրել, պսակվեն հաջողությամբ:

Բայց միաժամանակ, ես պ. Սևասիից մի նամակ ստացա, որով նա կրկին իմ ուշադրություն է հրավիրում կամավորներին և նրանց ընտանիքներին հատկացված նպաստների վրա, որոնց կանոնակարգը դուք բարեհաճել եք ինձ հաղորդել 1917 թ. դեկտեմբերի 20-ի ձեր նամակով¹: Նա ինձ տեղեկացնում է, մասնավորապես, ստորև նշված չորս պարագաներին, որոնց առթիվ Ռ-ազմական նախարարության կանոնակարգը որևէ բան չի նախատեսել կամ հատկացրել է միանգամայն անբավարար նպաստներ.

- 1/ Կամավորների ընտանիքների համար ամսական նպաստներ.
- 2/ Հիվանդ կամավորների համար բժշկական ծախսեր.
- 3/ Տարիքի բերումով ծառայությունից ազատ արձակված կամավորների հարուցած ծախսեր.
- 4/ Չնախատեսված ծախսեր, որոնք կարող են ծագել հիվանդությունների կամ ֆիզիկական այլ անկարողությունների հետևանքով ծառայությանը ոչ պիտանի դարձած՝ ծառայության շուրջ պայմանավորվածություն կայացրած որոշ կամավորների համար:

Ընդհանուր առմամբ, հատկացված նպաստների չնչիությունը թևաթափ է անում շահագրգիռ անձանց և եթե խնդրո՞ւ առարկա նպաստներին վերաբերող կանոնակարգում որոշ բարելավում չկատարվի՝ եթե ոչ մեր դրոշների ներքո արդեն գտնվող կամավորների, ապա՝

1 Վերն արտատպված է թիվ 406 փաստաթղթում:

առնվազը նրանց օգտին, ովքեր կզինվորագրվեն ներկայումս, հարկ կլինի երկյուղել հայրենասիրական պոռթկումի նվաղումից ու մեր կոչին նվազ ոգևորությամբ պատասխանելուց:

Ես ձեզ խիստ երախտապարտ կլինեմ, եթե դուք ձեր բարեհաճ ուշադրությանն արժանացնեք այս հարցը և ելնելով ընդհանուր նպատակի միևնույն շահից, որին մենք հետամուտ ենք, այդ մասին հարց հարուցեք Ռազմական նախարարությանը:

Ես գրել եմ պ. Սևակին, նրան տեղեկացնելու համար ձեր Դեպարտամենտին կատարած իմ քայլին և նրան նաև կոչել իր կողմից ուղղակիորեն դիմելու Միացյալ Նահանգներում ֆրանսիական կառավարության ներկայացուցիչներին, որպեսզի այս հարցին, հրատապության պատճառով, հմարավոր լինի անհապաղ լուծում տալ:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, *Turquie*, tome 68, ff. 57-58).

Պ. Միքայել Վարանդյանը՝ Սենի պատգամավոր պ. Ալբեր Տոմասին

Ն:

Լոնդոն, [անթվակիր]:
(*Մտացվել է* 1918 թ. հունիսի 22-ին):

Ես տեսա Հենդերսոնին, Բարնեսին, Հյուսմանսին և այլ ընկերներին: Ինչ վերաբերում է պ. Մանտուին, նա ինձ հանդիպում էր նշանակել, բայց հաջորդ օրը, ինչպես նրա տիկինն ինձ հաղորդեց հեռախոսով, հիվանդացավ:

Ի մեծ զարմանս, ո՛չ Հենդերսոնը, ո՛չ Հյուսմանսը և ո՛չ էլ, հավանաբար, Մանտուն դեռևս չեն ստացել ձեր նամակները, որոնք առաքվել են տասնհինգ օր առաջ:

Ես այլ քայլեր կատարեցի ազդեցիկ անձանց, որոնց հետ զրուցեցի Կովկասի ողբերգական իրավիճակի, մասնավորապես, Ռուսահայաստանի մասին: Դժբախտաբար թվում է, որ մեր հարևան վրացիները մեզ ամբողջությամբ լքել են: Հիրավի, անգլիական թերթերը հաջորդ օրն արտատպում էին «Ֆորվերթսի» հաղորդումը, որտեղ ասվում էր, թե վրաց նախարար Չիսենկելին եկել է Բեռլին և այդտեղ բանակցություններ վարել սեպարատ հաշտության շուրջ: Վրաստանը, համաձայն այդ գործարքի, կորցնելու էր միայն Բաթումը, այնժամ, երբ թուրքերն ամբողջությամբ գրավելու էին Ռուսահայաստանը...

«Թայմսի» մեկ այլ ճեպագիր, երեկ չէ առաջին օրը հաղորդում էր, որ Ռուսահայաստանը նվաճելուց հետո, թուրքերը գրավել են նաև Թավրիզը՝ Պարսկաստանում: Այս կերպ, ուրեմն, մենք ամբողջությամբ մեկուսացվել ենք, լքվել բոլորի, և դժբախտաբար, նաև դաշնակից մեծ տերությունների կողմից, որոնք կարող էին փրկել իրավիճակը, եթե ժամանակին մեզ և վրացիներին օգնություն ուղարկած լինեին:

Թե՛ բուլղարների և թե՛ գերմանացիների դեմ տրամադրված Չիսենկելու ժամանումն իհարկե հուսալքությունից բխող արարք է: Ի՞նչ են պատրաստվում անել իմ հայրենակիցները: Ես այդ մասին ոչինչ չգիտեմ: Նրանց կզինաթափեն թուրքերը և վաղ թե ուշ նրանք կարվեն նրանց զինվորների վրեժխնդրությամբ: Եվ մենք, հավանաբար, կտեսնենք Անատլիայի սարսափների կրկնությունն ամենամեծ չափերով:

Սա նաև տազնայ է, իմ քանկազին Տոմաս, ես մեծ ցանկություն ունեմ ձեզ և ձեր միջնորդությամբ ֆրանսիական հասարակայնությանը նախագուշացնելու: Կովկասի կորուստը կհանգեցնի Պարսկաստանի կորստին, գերմանա-թուրքական «Դրանգը»* կծավալվի մինչև Հնդկաստան: Պարսկական կառավարությունը, ես կասեի ամբողջ ինտելեկտուալ Պարսկաստանը, կուլտրեն մնանակում է Կոստանդնուպոլսի տեր ու տնօրեններին:

Հյուսմանսն ինձ մղում է այստեղ մնալու մինչ լեյթոքիստական կուսակցության համաժողովը: Ես առավել ևս հաճույքով եմ հետևում նրա խորհրդին, քանի որ այդպիսով, ձեզ տեսնելու և մի քանի բույե ձեր, ինչպես նաև Ռենոդելի, Լոնգյուեի, Բրանթինգի և Թրոտերսթրայի հետ զրուցելու հաճույքը կունենամ:

Ընդունեք, իմ քանկազին Տոմաս, իմ եղբայրական ողջույնները:

Հ. Գ. – Իմ բացակայության ժամանակ կարևոր հարցերով, ես ձեզ խնդրում եմ դիմել պ. Հովհաննես խանին, Բեռլինում Պարսկաստանի նախկին նախարարին և Նուբարի համագործակցին: Դուք նրան ճանաչում եք: Մենք միասին նախաճաշել ենք:

(A.N., 94 AP, 204).

Բեռլինում ֆրանսիական գործակալի հունիսի 23-ի թվակիր հաղորդագրությունը

Թիվ 1017:

Թարգմանություն գերմաներենից:

Փարիզ, 18-ը հուլիսի 1918 թ.:
(*Մտացվել է* Ասիայի փոխվարչությունը)
հուլիսի 21-ին):

Մայիս ամսի սկիզբը նշանավորվեց Անդրկովկասյան հանրապետության վախճանով: Սա գերմանա-թուրքական գործակալների աշխատանքի արդյունքն է, որը նրանց մեքենայությունների հետևանքն է: Գերմանական և թուրքական կառավարությունները գիտակցել են, որ իրենց համար շատ ավելի ոյուրին կլինի առանձին-առանձին հպատակեցնել հանրապետության բնակչությունը կազմող յուրաքանչյուր ազգության (թաթարներին, հայերին և վրացիներին), որոնց տարածքային շահերը հակադիր են: Շնորհիվ Վրաստանի հետ ունեցած իր ուղղակի հարաբերությունների, Գերմանիային հաջողվել է ստեղծել Վրացական ինքնավար հանրապետությունը, որի նախագահ՝ Դոմայի նախկին պատգամավոր Չիսենկելին, Վրաստանին վերաբերող տարածքային և վարչական հարցերի շուրջ բանակցություններ վարելու համար կանչվել է Բեռլին: Հարկ է երբեք չմոռանալ, որ Բեռլինը և Կոստանդնուպոլիսը, բոլոր միջոցներով ջանում են Կովկասի ազգություններից յուրաքանչյուրին առանձին-առանձին հավատացնել, որ դաշինքն իրենց հետ կատարելապես անհ-

* Նկատի ունի «Դրանգ մախ Օսթեն» («Առաջխաղացում դեպի Արևելք») գերմանական քաղաքական հայեցակարգը, որը հետամուտ էր դեպի Արևելք ծավալվելու գերմանական զավթողական նկրտումներին: – Ծ. ք.:

լաժեշտ է և որ միայն դա կարող է բարեհաջող ավարտի հասցնել ազգային պահանջները:

Նախքան ռուսական հեղափոխությունը, Անդրկովկասի մահմեդական բնակչությունը մեծ համակրանք էր դրսևորում պանիսլամական և պանթուրքական շարժումների հանդեպ, որոնք Կոստանդնուպոլսի միջոցով դեկավարում էր Բեռլինը: Նա ջերմեռանդորեն հաղորդակցվում էր այդ շարժումներին և նրանց արդյունավետորեն օժանդակում, մասնավորապես, բալկանյան պատերազմների ընթացքում, երբ անդրկովկասյան մահմեդական կամավորները մարտնչում էին օսմանյան բանակի շարքերում: Պատերազմի ընթացքում այս մահմեդականները ցանկացած բնույթի ծառայություններ են մատուցել թուրքական զորքերին Կովկասի ռազմաճակատում և նպաստել նրանց հաջողություններին:

Ինչ վերաբերում է տալլամաշրջանի հայ բնակչությանը, ապա ռուսական հեղափոխությունից առաջ նա երբևէ վստահություն չի տածել Գերմանիայի և Թուրքիայի հանդեպ, քանի որ հայերի կոտորածները նրան շարունակում էին թշնամաբար տրամադրել Թուրքիայի նկատմամբ: Միայն հեղափոխությունից հետո է, որ շնորհիվ Թուրքիայի հետ փոփոխված հնարավորությունն ընդունող որոշ հայ առաջնորդների քաղաքականության և Ռուսահայաստանի որոշ քաղաքական գործիչների ընդհատակյա աշխատանքի, որոնց գերմանական կառավարությունն իր գործի կողմն էր գրավել իբրև ծախս գործակալների, Բեռլինին և Կոստանդնուպոլսին հաջողվեց հայերի հետ ուղղակիորեն հարաբերություն հաստատել՝ «Հայկական հարցի համար խաղաղ լուծում գտնելու» նպատակով:

Քաջազնունին, որն ինժեներ է, «Դաշնակցություն» կուսակցության անդամ, Ալեքսանդր Խատիսյանը (նույն ինքը Խատիսովը)՝ նախկինում Թիֆլիսի քաղաքագլուխը և Պապաջանյանը (նույն ինքը Պապաջանովը)՝ նախկինում Դումայի պատգամավոր, ծառայում են գերմանական քաղաքական Դեպարտամենտին: Հայկական շրջաններում հմտորեն օգտագործելով գաղափարի մարդու և հայրենասերի համբավը, այս անձինք չարաշահում են դիրքն ի վնաս իրենց հայրենիքի և իրականում միայն գերմանական հրահանգների կատարածուներն են, որոնք աշխատում են Գերմանիայի օգտին, որպեսզի տարածում տան գերմանամետ հոսանքին ու ազդեցությանը և գերմանական գործի կողմը հակեն հայ ժողովրդի համակրանքը: Քանի որ գերմանական կառավարությունը նրանց է տրամադրել բոլոր անհրաժեշտ տեխնիկական միջոցները և բազմաթիվ միլիոնների հստակ գումարներ, այս երեք անձինք հունիս ամսի վերջերին Բեռլինից գնացել են Կոստանդնուպոլիս, որտեղ և գտնվում են ներկայումս:

Նրանց հանձնարարվել է բանակցել օսմանյան կառավարության հետ այն միջոցառումների շուրջ, որոնք հարկ է համատեղ որդեգրել՝ ավարտին հասցնելու համար Գերմանիայի ընդհանուր քաղաքական նախագիծը, որը հետապնդում է նրա իսկ հովանու ներքո՝ միասնական Թուրքահայաստանի ստեղծման նպատակը, որն իր տարածքում կընդգրկի հայերով բնակեցված կովկասյան նահանգները: Գերմանական այս նախագիծն արդեն իրականացման ընթացքում է: Կովկասահայաստանի անկախության հռչակումը և գերմանական երեք գործակալների նշանակումը երկրի վարչության ամենաբարձր պաշտոններում (Քաջազնունուն՝ Խորհրդի նախագահի, Խատիսյանին՝ Արտաքին գործերի նախարարի, Պապաջանյանին՝ Ֆինանսների նախարարի)՝ Բեռլինի քարոզչության առաջին փուլերն են և նրա առաջին արդյունավետ հաջողությունները:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, *Caucase-Kurdistan*, tome 2, ff. 118-120).

Հովհաննես խան Մասսեհյանը՝ Արտաքին գործերի նախարարությունում Ասիայի փոխտնօրեն պ. Ժան Գուին

Ն:

Փարիզ, 24-ը հունիսի 1918 թ.:
(Ստացել է Ասիայի փոխվարչ (ությունը) հունիսի 25-ին):

Ես հաճույքով իրազեկ դարձա, որ հայ կամավորները սկսում են ժամանել Բրազիլիայից¹, ինչպես դուք այդ կտեսնեք կից ներկայացվող նամակից:

Քանի որ նկատի ունեն շաբաթվա վերջերին մեկնել Բրետան, ես ձեզ խիստ երախտապարտ կլինեմ, եթե դուք կարողանայիք իմ մեկնելուց առաջ ինձ ընդունել մի քանի թուփով:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, *Turquie*, tome 68, f. 62).

ՀԱՎԵԼՎԱԾ

Հայ կամավորների կենտրոնական կոմիտեի նախագահ պ. Սևաջյանը՝ Հովհաննես խան Մասսեհյանին

Ն:

[Պատճենը]:

Փարիզ, 22-ը հունիսի 1918 թ.:

Սույնով ես հաճույքով հայտնում եմ ձեզ, որ Բուենոս Այրեսի 13 հայ կամավորներ «Յեյլոն» շոգենավով մայիս ամսին ժամանել են Հավր և արդեն մեկնել Մարսել: Կցվում է այս կամավորների ցուցակը, որին բարեհաճեք ծանոթանալ:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, *Turquie*, tome 68, f. 63).

Լոնդոնում Ֆրանսիայի դեսպան պ. Պոլ Կամբոնը՝ Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին

Հ. թիվ 755:

Լոնդոն, 25-ը հունիսի 1918 թ.:
(Ստացել է Քաղ. վարչ. հունիսի 27-ին):

1 Միսլ է. իմա՝ Արզենտինա:
2 Փոստով, առանց ծածկագրի:

Պատասխան ձեռք թիվ 2819 հեռագրին¹:

Ճորին Օֆիսն ինձ հավաստիացրել է, որ ի նպաստ հայերի գործողության իրականացման՝ Պարսկաստանի հյուսիսում արվել է հնարավոր ամեն ինչ: Սակայն բախվում են ահռելի դժվարությունների, որոնք բխում են տարածություններից, այն երկրի անապատային ու լեռնային բնույթից, որով հարկ է անցնել: Պարսկաստանի հյուսիս են ժամանել անգլիական մի քանի հեծելավաշտ և մի քանի հետևակային: Նրանց առջևից ընթանում են ռուսները, որոնց վարձատրում է Անգլիան և որոնք հյուսիսի ցեղերի հետ ունեցել են բարեհաջող փոքր բախում և ցանկանում են հասնել Բաքու: Բազում շաբաթներ ի վեր Թիֆլիսից չի ստացվել և ոչ մի լուր. հայտնի չէ, թե ինչ է պատահել Կովկասի անգլիացի սպաներին:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, *Caucase-Kurdistan*, tome 1, f. 246).

Պարսկաստանում Միացյալ Նահանգների նախկին նախարար պ. Սփենսեր Փրաքը՝ Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին

Ն:

Մոնտե-Կարլո, 27-ը հունիսի 1918 թ.:
(*Ստացել են* Կար. հունիսի 29-ին,
Զադ. վարչ. հունիսի 30-ին):

Արդարադատության նախկին նախարար և Կոստանդնուպոլսում Պարսկաստանի նախկին դեսպան Իշխան Միրզա Ռիզա խանն ինձ է հղել մի հաղորդագրություն, որը վերաբերում է նախկինում Պարսկաստանին պատկանած Կովկասի նահանգներում ծայր առած ժողովրդական շարժմանը՝ ի նպաստ դրանց վերամիավորմանն իրենց մայր երկրին:

Կարծելով, որ այդ հարցը կարող է ներկա հանգամանքներում Ֆրանսիայի համար հետաքրքրություն ներկայացնել, ես իմ պարտքն եմ համարում սրան կից Չերոզ գերագնացությանը ներկայացնել վերոհիշյալ հաղորդագրությունը:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, *Caucase-Kurdistan*, tome 1, f. 251).

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

I

Կոստանդնուպոլսում Պարսկաստանի նախկին դեսպան, իշխան Միրզա Ռիզա խանը՝ Պարսկաստանում Միացյալ Նահանգների նախկին նախարար պ. Սփենսեր Փրաքին

Ն:

Մոնակո, 26-ը հունիսի 1918 թ.:

¹ Հունիսի 21-ի. վերն արտաստված է թիվ 638 փաստաթղթում:

Օգտվելով մեր նախկին բարեկամական հարաբերություններից և քաջատեղյակ լինելով մեր երկրի հանդեպ ձեր ունեցած վերաբերմունքին, ինչպես նաև Կովկասի տարածաշրջանների ձեր խորին իմացությամբ, ես օգտվում եմ ձեր այցելությունից Մոնակո՝ ձեզ ներկայացնելու հետևյալ փաստը:

Այսամ Պյոտր Մեծի ժամանակներից, ցարերի արտաքին քաղաքականությունը հիմնվում էր դեպի հարավ և արևելք տարածքային էքսպանսիայի վրա: Հասնելու համար իրենց նպատակին, նրանք չէին հարգում իրենցից ավելի թույլ և ոչ մի հարևանի իրավունքը:

Այսպիսով, երկարատև պատերազմից հետո, Բաքվի, Շիրվանի, Շամախու, Գյանջայի, Ղարաբաղի, Շաքիի և Թալիշի խանությունները, որոնք Պարսկական կայսրության անջակտելի մասն էին կազմում, անջատվեցին մայր հայրենիքից (1813 թ. Գյուլիստանի պայմանագրով): Ռուսաստանն այստեղ կանգ չառավ և 1826 թ. պատերազմը վերսկսվեց¹: Չնայած պարսկական զորքերի համառ պաշտպանությանը, որոնց արդյունավետորեն օգնում էին տեղաբնակ ժողովուրդները, Երևանի և Նախիջևանի խանություններն իրենց հերթին գրավվեցին և կցվեցին Ռուսական կայսրությանը, չնայած բնակիչների բողոքին, որոնց մեծամասնությունը մահմեդականներ էին: Օտար տիրապետության մեկ դարը չկարողացավ նրանց մեջ վերացնել նախկին հայրենիքի հանդեպ հավատարմության զգացողությունը և ոչ էլ Պարսկաստան վերադառնալու հույսը:

Ռուսական հեղափոխությունից հետո, Պետրոգրադում միմյանց հաջորդած սոցիալիստական տարբեր կուսակցություններ բազմիցս հայտարարեցին համայն աշխարհին, որ Ռուսաստանի տարբեր ազգություններն ունեն ինքնորոշման իրավունք, ներառյալ ցարերի նախկին կայսրությունից անջատվելու իրավունքը: Կովկասի ժողովուրդները չհապաղեցին կենսագործելու այդ իրավունքը. վրացիները և հայերը ձևավորեցին Անդրկովկասի կառակենսագործելու այդ իրավունքը. վրացիները և հայերը ձևավորեցին Անդրկովկասի կառավարության մեջ: Համընդհանուր ազատագրման այս շարժումը չէր կարող անտարբեր բողոքել ներկայումս Երևանի և Ելիզավետպոլի կառավարությունները կազմող նախկին խանությունների՝ պարսկական ազգությանը և կրոնին պատկանող բնակչությանը:

Այսպիսով, այս տարածաշրջանների բնակիչների շրջանում, առանց սոցիալական դասակարգերի խտրականության, ձևավորվեց Պարսկաստանի հետ վերամիավորվել պահանջող կարծիքների մի մեծ հոսանք: Նրանց հուրիպացող ցանկությունները հիմնվում են հանուն ճնշված ժողովուրդների իրավունքի և ազատագրման կովոդ դաշնակից կառավարությունների ազնվաբար աջակցության ու չեզոք ազգերի բարեհաճության վրա:

Նրանք հույս են տածում, որ համընդհանուր հաշտության կնքման ժամանակ, այս մեծ անարդարությունը կշտկվի:

Դուք մեծ ծառայություն մատուցած կլինեք մարդասիրության գործին, եթե անհրաժեշտ համարեք տեղեկացնել այն մասին, ինչը նախտրոմ է, ձեր ազնվաբար երկրի ու դաշնակից երկրների քաղաքականությունը ղեկավարողներին և նրանց կոչել իրենց մեծարժեք օգնությունը ցուցաբերելու այս խնդրանքին: Ինքնորոշման հարցում ազգերի ազատության բանաձևը, որը հռչակել է ձեր մեծ նախագահ պ. Վիլսոնը և կրկնել են դաշնակից կառավարությունների ղեկավարները, այստեղ կզտնի արդարացի կենսագործում:


Հավատացած եղեք, որ նրանց ասպետական վարքագիծն արձագանք կզտնի մի ամբողջ երախտապարտ ժողովույնի սրտում, որի մասնիկն եմ՝ իբրև Երևանից գաղթածների հետնորդ:

Հ. Գ. - Պարզաբանման համար, կից ներկայացվում է հաջորդ հավելվածը, ինչպես նաև Կովկասի մի քարտեզ, որը մատնացույց է անում պահանջվող տարածքները:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, *Caucase-Kurdistan*, tome 1, ff. 252-253).

¹ Գահաժառանգ Աբբաս Միրզան, առանց նախօրոք պատերազմ հայտարարելու, հարձակվեց ռուսների վրա, հույս ունենալով հեշտությամբ ետ ստանալ 1812 թ. Գյուլիստանի պայմանագրով կորցրած նահանգները:

Հավելված II



III

Որոշ ժամանակից ի վեր թուրքերը ջանքեր են գործադրում Բաքվի, Երևանի և Ելիզավետպոլի կառավարությունների մահմեդական բնակիչներին համադելու, որ նրանք պատկանում են թուրանական ազգությանը և պետք է միանան թուրքերին՝ կազմավորելու համար թուրանական մեծ կայսրություն: Սակայն իրականում, այս ժողովուրդները պատկանում են բացառապես իրանական ազգությանը և նրանց լեզուն պարսկերենն էր մինչև Ջենգուիխ խանի [sic]՝ մոնղոլական ներխուժումը, որը նրանց հարկադրեց ընդունել գավթիչների լեզուն:

Նշանավոր բանաստեղծներ Աբու-Ռուան և Նիզամի Գյանջևին (Ելիզավետպոլից), Խաթանին և Ֆելեթին Շիրվանից որոնք ապրել են մինչև մոնղոլական ներխուժումը (X-XI դարեր), իրենց բանաստեղծությունները գրել են պարսկերենով: Մեր ազգային գրականության այս հուշարձանները մինչև այժմ մնում են իբրև դասական, Չուրուաստրը* ծագումով Ադրբեջանից էր և նրա ուսմունքը տարածող առաջին տաճարների կառուցվել են Սուրախանեի նավթի հանքահորերից վեր:

Բաքվի, Երևանի, Ելիզավետպոլի վերոհիշյալ կառավարությունները, որոնք բաժանված են ութ խանությունների, երկար ու ձիգ դարեր ի վեր, Պարսկաստանի անբակտելի մասն էին կազմում, ինչպես այդ մասին վկայում են պարսկական ճարտարապետական բազմաթիվ հուշարձաններ, որոնց ակունքները սկիզբ են առնում Սասանյաններից և որոնց հանդիպում ենք ամբողջ Արևելյան Անդրկովկասում: Այս կառավարությունները Պարսկաստանին վերադարձնելը կխափանի այս բերրի և նավթաբեր նահանգները յուրացնելուն վերաբերող թուրքերի ծրագրերը, որոնց նկատմամբ նրանք չունեն որևէ իրավունք՝ ոչ պատմական, ոչ ազգագրական և ոչ կրոնական, քանի որ դրանց բնակիչները շիաներ են, այն դեպքում, երբ թուրքերը սուննիներ են:

(A.M.A.E.: E-Levant 1918-1929, *Caucase-Kurdistan*, tome I, f. 254).

645

Միջազգետրում Ֆրանսիայի հյուպատոսության հավատարմատար պ. Ռուն՝ Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին

Հ. թիվ 127: Խիստ գաղտնի:

Բաստրահ, 29-ը հունիսի 1918 թ. ժ. 8.50-ին:
(Ստացել է Քաղ. վարչ. հունիսի 30-ին):

Մյւ երևելի հայ ինձ գանգատվել է՝ հայ կամավորների կապակցությամբ բրիտանական իշխանությունների համառորեն դրսևորած չկամությունից: Հրատապ է, որ իր ժամանումից ի վեր, իրամանատար Սկիարդը, գնդապետ Ռոմիլոյի իետ համաձայնեցված, իր իրավա-

1 Ինս՝ Չինգիզ իւան:
* Իրանական հնադարյան կրոնի բարեմորոգիչ, որն ապրել է մ. թ. ա. VII կամ VIII դարերում: Նրա ուսմունքը, որը բավական մոտ էր իրանական դուալիզմին, մեծ ազդեցություն է ունեցել Արեւմեյան Պարսկաստանում: - Ճ. ք.:

սությունների շրջանակում ունենա հայերի հարցը, առավել ևս, որ Բաղդադի եպիսկոպոս, Ն {որին սրբազնություն} և Սերոբյանի ժամանումն այդ հարցն, անկասկած, շուտով կդարձնի խիստ հետաքրքրական:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, *Turquie*, tome 68, f. 67).

Արտաքին գործերի նախարարը՝ Կալկաթայում Ֆրանսիայի հյուպատոսս պ. Լեֆոլը-Մեոլլին

Հ. թիվ 37:

Փարիզ, 29-ը հունիսի 1918 թ., ժ. 23.30-ին:

Ես հիմնվում եմ իմ թիվ 32 և 35 ու թիվ 28 ձեռնագրերի վրա²:

Դժբախտաբար, թվում է, թե այժմ Արևմտյան Կովկասն ամբողջությամբ թշնամու տնօրինության ներքո է: Փոխարենը, դիմադրությունը թուրքերին և քաթարներին, կարող է արդյունավետ ձևով կազմակերպման ընթացքում լինել Թիֆլիսի և Բաքվի միջև գտնվող տարածաշրջանում: 10000 զինված հայեր ներկայումս պետք է, որ գտնվեին այս վերջին քաղաքի մոտակայքում: Մոտավորապես 15000 ուսից բաղկացած կորպուսը պետք է, որ նրանց միացած լինի:

Թիֆլիսում Ֆրանսիայի հյուպատոսը՝ Մոսկվա է ժամանել մեր գաղութի հետ մեկտեղ:

Հայկական տարրերին և նեստորականներին, վերջին ժամանակներս հաջողվել է լրջորեն խոչընդոտել թուրքական զինված անձնակազմերի առաջընթացին, որոնք ներկայումս շարժման մեջ են Ջուլֆայի և Խոյի երկրամասում: Հունիսի 22-ին, 200 անգլիացի զինվոր գրավել են Ռեշտը: Թուրքերից, գերմանացիներից և ջեմզուելիսներից բաղկացած մի շարասյուն նահանջում է այդ քաղաքի հյուսիսային շրջանում, որին հետապնդում են բրիտանական ինքնաթիռները:

Թուրքեստանում իրավիճակը մնում է խառնաշփոթ և խիստ լուրջ: Այնժամ, երբ Կովկասի բոլշևիկներն անսպասելիորեն փոխելով դիրքորոշումը, թվում է, թե վճռականությամբ են լի, հայերի հետ կողք-կողքի, դիմադրելու թուրք-գերմանացիներին, Բուխարայի և Տաշքենդի տարածաշրջանի բոլշևիկները շարունակում են Պարսկաստանի արևմտյան սահմանի մոտակայքում նպաստել գերմանացի ու ավստրո-հունգարացի նախկին գերիներից բաղկացած հրոսակախմբերի կազմավորմանը:

Թեհրանում և Շիրազի երկրամասում հիշատակության արժանի որևէ նոր բան չկա:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, *Caucase-Kurdistan*, tome 1, ff. 273-273 v).

1 Ստորագրել է պ. Գուն:

2 Արտատպված չէ:

3 Պ. Նիկոլան:

Պ. Լևոն Շանթը՝ Հովհաննես խան Մասսեհյանին

Ն¹:

Լոզան, 30-ը հունիսի 1918 թ.²:

Ես հույս եմ տածում, որ դուք արդեն ստացել եք իմ նամակը, ինչպես նաև Թիֆլիսի հայկական կենտրոնական վարչությունից ելնող կոչը, որը վերաբերում է այն հաջողություններին, որոնք հայերը ձեռք են բերել թուրքերի նկատմամբ: Վերջիններս կոտորվել են և ետ նետվել դեպի սահմանը:

Վրացիները վճռել են շարունակել պատերազմը: Ստորև բերվող տեղեկությունը, որն այդ առիթով գետնից է Մաքսիմ Գորկու «Նովարա ժիտչի» [sic]³ թերթում, հետաքրքրական է. «Թիֆլիսից հեռագրում են, որ թուրքական և գերմանական զնդերը հրաման են ստացել վերսկսելու հարձակողական գործողությունները Կովկասի ռազմաճակատում, հաշվի առնելով, որ հայ-վրացական ուժերը կրկին վերսկսել են իրենց շարժումն ուղղված մինչև Կովկաս առաջացած թուրքական զնդերի դեմ»:

Ըստ ռուսական տեղեկությունների՝ թուրքմենները և չեմգուելները թուրքերի դեմ կելնեն Պարսկաստանի հյուսիսում: Կասպից ծովի կարևոր նավահանգիստը՝ Էնզելին, պետք է, որ ընկած լինի այս նոր հեղափոխականների ձեռքը:

Հայկական անկախությանը վերաբերող հռչակագիրն, անկասկած, հայկական ռազմական հաջողությունների արդյունքն է: Ես ձեզ իրազեկ եմ դարձնում «Գազետ դը Ֆրանկֆուրտում» գետնից մի հեռագրի բնագրին.

Բեռն 29-ը. - Կովկասահայաստանը մի քանի օր առաջ հռչակել է իր անկախությունը: Պ. Կաջազունին [sic]⁴ ընտրվել է Խորհրդի նախագահ և պ. Ալեքսանդր Խատիսյանը՝ Արքարադատության նախարար: Մի պատվիրակություն, որի ղեկավարը Հայկական ազգային խորհրդի նախագահ պ. Ահարոնյանն է, իսկ անդամները՝ Արտաքին գործերի նախարար պ. Խատիսյանը և Դումայի նախկին նախարար պ. Պապաջանյանը, ժամանել է Կոստանդնուպոլիս բանակցելու թուրքական կառավարության հետ:

Հունիսի 20-ի, 21-ի և 25-ի թվակիր թուրքական «Թանին», «Չեման», «Ժամանակ» լրագրերն այդ առթիվ հետևյալ մանրամասներն են հաղորդել. հայ լիազոր ներկայացուցիչները թվով 7-ն են՝ պ {արոնյա} ք Ահարոնյանը, գեներալ Ղորղանյանը, լեյտենանտ Լիզոդյանը, Արթին Աղաբալյանը, լեյտենանտ Չ...-ն⁵, Ալեքսանդր Խատիսյանը, Հակոբ Քոչարյանը (ինչպես դուք տեսնում եք, Պապաջանյանն այստեղ չկա):

Վրաց լիազոր ներկայացուցիչները մույնպես թվով 7-ն են (պնդել են, թե նրանք 8-ն էին, քանի որ նրանցից մեկին ուղեկցել էր նրա կինը): Նրանց նախագահը պ. Գեգեչկորին է: Անդամների թվում է գեներալ Իյա Օթիթիթը [sic]⁶:

Հայ և վրացի լիազոր ներկայացուցիչները հունիսի 19-ին «Քեներալ» նավով ժամանել են Կոստանդնուպոլիս. նրանց ուղեկցել են «Տոքատլիան» հյուրանոց:

1 Հատված՝ հայերեն լեզվով մի նամակից:
2 Ստացել է Ասիա-Օվկիանայի փոխվարչությունը 1918 թ. հուլիսի 27-ին:
3 Իմա՝ «Նովարա ժիտչի»:
4 Իմա՝ Զաջազունին:
5 Հավանաբար՝ լեյտենանտ Ջուրաբովը:
6 Հավանաբար՝ գեներալ Օդիշելիձեն:

Թաթարական ներկայացուցիչները ժամանել են 2 կամ 3 օր անց:

Բանակցություններին մասնակցություն կունենա Արտաքին գործերի նախարար Ահմեդ Նեսսիմի բեյը՝ բուրքական կառավարության անունից և Գերմանիայի դեսպան, կոմս Բեռնստորֆը՝ իր կառավարության անունից: Կենտրոնական չորս տերությունների ներկայացուցիչներն, անկասկած, կմասնակցեն եզրափակիչ կոնֆերանսին:

«Ջեմանը» պ. Ահարոնյանին է վերագրում հետևյալ հայտարարությունները՝ ի պատասխան այն հարցերի, որոնք հարցազրույցի ընթացքում առաջադրել է «Ժամանակի» խմբագիրը. «Բանակցությունների հիմունքների շուրջ արդեն վճիռ է կայացվել Բաթումում. այստեղ որոշում կկայացվի միայն մանրամասների շուրջ: Հաշվի առնելով մեր լավ փոխհարաբերություններն օսմանյան կառավարության հետ, բանակցությունները շուտով կավարտվեն...»:

Թուրքերի՝ մեր հանդեպ անկեղծ վերաբերմունքի հետ հույս տածելը մեզ համար խելահեղություն կլինի: Այս ամենը ոչ այլ ինչ է, եթե ոչ կատակերգություն և հայը շատ լավ գիտի, որ այն, ինչն այս պահին ինքն է անում, ևս սուկ կատակերգություն է, որը պահանջել են հանգամանքները:

Անձամբ ես կարծում եմ, որ այս խաղը չի կարող վճռորոշ ընթացք ստանալ, մույնիսկ առերևույթ կնքված հաշտությունը չի կարող վերջնական լինել, որովհետև մեր և բուրքերի շահերը տրամագծորեն հակադիր են: Հաշտության կոնֆերանսի այս կատակերգությունը տեղի է ունեցել նախ՝ Տրապիզոնի և Բաթումի, այնուհետև՝ Բաթումի և Կոստանդնուպոլսի միջև ու ներկայումս կտեղափոխվի Կոստանդնուպոլսից Բեռլին, իսկ այս վերջին մայրաքաղաքից կրկին Կովկաս: Այսպես, հաջորդաբար, մինչ այն, երբ մեր պայքարի շարունակությամբ զուգընթաց, վրա է հասնում վերջապես գերմանացիների պարտությունը և համաշխարհային մեծ կոնֆերանսը:

Գերմանիան, անտարակույս, կանի հնարավոր ամեն ինչ մեզ իր ազդեցության ներքո դնելու համար՝ զգուշացնելով բուրքերի կողմից կոտորածների սպառնալիքներից: Վրաստանն օրինակ է ծառայում. այն արդեն ենթարկվել է Գերմանիային: Երկու լիազոր ներկայացուցիչներ՝ ֆոն Քրեզենշտայնը և ֆոն Քարդոֆը հունիսի 21-ին արդեն մեկնել են Վրաստան, «որպեսզի մոտ տարածությունից ծանոթանան Կովկասի պայմաններին»:

Ինչպես բուրքերն են երազում Մեծ Թուրքիայի մասին, այնպես էլ գերմանացիներն են ձգտում Կովկասը վերածել նոր Ուկրաինայի:

Վրացիները գործում են նրանց, ինչպես նաև բուրքերի մի մասի հետ միասնաբար: Ինչ վերաբերում է ներկա կացությանը, գերմանացիները ցանկանում են հայերին պահել իրենց ճանկերում:

Ահա թե ինչու են նրանք ճնշում գործադրում բուրքերի վրա և որտեղից է սկիզբ առնում Բեռլինի և Կոստանդնուպոլսի, Կոստանդնուպոլսի և Կովկասի, Կովկասի և Բեռլինի միջև շարունակաբար ետ ու առաջ անելը:

Կովկասին և Սև ծովին առնչվող բուրք-գերմանական քաղաքականության միջև գոյություն ունի խիստ զգալի պայքար: Օրինակ, գերմանացիները կցանկանային բուրքական ուժերին տեսնել մեր դեմ կռվելիս, անգլիացիների դեմ հանդես գալիս, որպեսզի Հայաստանով դեպի Պարսկաստան ձգվող ճանապարհն իրենց համար բաց լինի:

Այն, ինչ ցանկանում են գերմանացիները, հակասում է պատմության ընթացքին: Հայն այն տարբը չէ, որը կարող է փոխել այն դիրքորոշումը, որին մինչ այժմ հետևել է:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, *Caucase-Kurdistan*, tome 2, ff. 129-133).

Խորհրդի նախագահ, Ռազմական նախարար պ. Կլեմանսոն՝ Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին

Ճ. թիվ 4609-9/11:

Փարիզ, 2-ը հուլիսի 1918 թ.:
(Ստացել է Ասիայի փոխվարչությունը)
հուլիսի 2-ին):

Ես պատիվ ունեմ ձեզ հղել սրան կից Դերոկլ քարզմանչի, որը Մարսելի՝ իրենց զնդերից ետ մնացած մայր երկրի զինվորականների հավաքականից է, Արզենտինայում հայ կամավորների հնարավոր զինվորագրման շուրջ հետաքրքիր տեղեկություններ պարունակող մամակի պատճենը՝:

Քանի որ Միացյալ Նահանգների հայերի ընդգրկումն ամերիկյան բանակում գրեթե կատարելապես ցամաքեցրել է զինվորագրման խիստ կարևոր մի աղբյուր, անհրաժեշտ է գտնել մի լուծում, որը թույլատրի դիմակայել այդ կացությանը՝ Արևելյան լեզեոնի անձնակազմերն աստիճանաբար լուծարված տեսնելու երկյուղից դրդված:

Եթե Արզենտինան կարողանա կամավորներ տրամադրել, ապա դա Արևելյան լեզեոնի համար ակնհայտորեն կլինի անհետանալուց խուսափելու լավագույն միջոցը, որը բոլոր առումներով և, մասնավորապես, Լևանտում մեր երկրի հեղինակության համար ցավալի կլինի:

Ես, հետևաբար, պատիվ ունեմ ձեզ խնդրել բարեհաճելու, Հայկական ազգային պատվիրակության համաձայնությամբ, քննության առնել, եթե դուք այդ օգտակար եք համարում, թե ինչպիսի ընդունելության կարելի է արժանացնել քարզմանիչ Դերոկլի առաջարկությունները, ինչպես նաև Արևելյան լեզեոնի համար Արզենտինայում գործնական քարզչության իրականացման հնարավորությունը:

Ես ձեզ երախտապարտ կլինեմ, եթե բարեհաճեք ինձ տեղեկացնել այն շարունակությամբ, որն ըստ ձեզ՝ հարկ է տալ այս հարցին:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, *Turquie*, tome 68, ff. 68-68 v).

Մեծի պատգամավոր պ. Ալբեր Տոմասը՝ Փարիզի Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցության նախագահ պ. Գուրգեն Թահմազյանին

Ն:

Փարիզ, 6-ը հուլիսի 1918 թ.:

1 Արտատպված չէ: Հայկական ազգային պատվիրակության և ֆրանսիական իշխանությունների շրջանում անցկացրած հարցումից հետո, Դերոկլը գտնում է, որ Արզենտինայում հայ կամավորների թիվը հասնում է 2 կամ 3000-ի:

Ես ձեզ շնորհակալություն եմ հայտնում ձեր «Օրիան իլյուստրե» հանդեսի վերջին համարն ինձ ուղարկելու համար¹: Այն գաղափարները, որոնց դուք սատարում եք, դասվում են նրանց թվում, որոնք Ֆրանսիայի և Անտանտի քաղաքականության ասպարեզում, ըստ իս, պետք է աստիճանաբար գրավեն ավելի կարևոր տեղ:

Հանգամանքներն այնպես են դասավորվել, որ ազգությունների քաղաքականությունը, թվում է, թե այսօր ուղղված է հիմնականում Ավստրո-Հունգարիայի դեմ: Սակայն վրա է հասել պահը, երբ հարկ է այդ քաղաքականությանն ամբողջությամբ տալ այնպիսի ծավալում, որն այն ենթադրում է: Վերջին դարի առաջին կեսում արդյոք Թուրքիայի դեմ չէր, որ այդ քաղաքականությունն առաջին անգամ իր հաստատումը գտավ ի դեմս Հունաստանի ազատագրման: Գիշատիչ կայսրությունների թվում, Թուրքիան, որն այսօր Գերմանիայի կամակատարն է և ակնհայտորեն անընդունակ է նպաստելու քաղաքակրթության գործին, զբաղեցնում է նշանակալից տեղ: Մենք ոչ մի բան չպետք է արհամարհենք, որպեսզի այդքան հաճախ դատապարտված ու եվրոպական պետությունների որոշ թուլության կամ որոշ թշնամանքի հետևանքով միշտ փրկված այս կայսրության՝ ճնշած ժողովուրդները կարողանան, իրենք ևս, իրենց ձայնը լսելի դարձնել:

Այն, ինչն իրականացվել է մինչ այժմ, շատ քիչ է այն բանի համեմատությամբ, ինչը դեռևս հարկ է անել: Հավաստի է, որ դաշնակցային բանակների եռանդուն գործողությունը Պաղեստինում և Միջագետքում ազատագրել է այս երկրների ժողովուրդներին: Երուսաղեմի գրավումը նշանավորում է կարևոր փուլ: Հեջազի արաբները կարողացել են կայունացնել իրենց անկախությունը: Բայց որքան այս հաջողություններն ահռելի են թվում, այնքան մենք հիմքեր ունենք ասխոսալու, որ դրանցից օգուտ քաղելու գործընթացն առաջ չի մղվել համաչափ և հիմնավոր ձևով:

Փոքր Ասիայի սիրիացիները և հույները ենթարկվելով դաժան հալածանքների և զուրկ նվազագույն երաշխիքներից, որոնք նրանց տրամադրում էին կապիտուլյացիաները, տագնապով են սպասում դաշնակիցների ժամանմանը: Եվ, հավանաբար, նրանց հանդարտեցնելու համար բավական չի լինի ասել, թե դաշնակիցները միմյանց միջև դիվանագիտական պայմանագրեր են կնքել, որոնք խոստումնալից են այդ ժողովուրդների ապագայի համար:

Վրացիները, Ռուսաստանի և Թուրքիայի հայերը, որոնց Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը զիջել է իրենց հավիտենական թշնամիներին ու կեղեքիչներին, հույս էին տածում ստանալ Անգլիայի և Ֆրանսիայի շուտափույթ օգնությունը: Եթե նրանց հույսերը քաջալերվեն, մենք ասխոսանքով չէինք տեսնի, թե վրացիներն ինչպես են լիազոր ներկայացուցիչներ ուղարկում Գերմանիա: Անտարակույս, իրավիճակը բարելավելու համար դեռևս ուշ չէ: Ֆրանսիան վճռականորեն հավաստել է իր ավանդական քաղաքականությունը Կովկասում ու Փոքր Ասիայում, և անմիջապես կվերագտնի այն համակրանքը, որին արժանացել է պատմության ընթացքում:

Բայց որպեսզի դաշնակիցներին դրդեն արդյունավետ դարձնելու իրենց ռազմական եռանդուն գործունեությունը, որպեսզի համընդհանուր պարտականության զգացողության առջև վեր հանվեն այն խնդիրները, որոնց հարկ է, որ հաշտությունը լուծում տա, անհրաժեշտ է կրքոտությամբ հետամուտ լինել այնպիսի քարոզչությունների, որոնք իրենց բնույթով համանման լինեն այն քարոզչությանը, որին դուք ձեզ նվիրաբերել եք: Հարկ է ժողովել այն վկայությունները, որոնք ամենակողմնակալ աչքերի առջև կփայլատակեցնեն օսմանյան տիրապետության բռնակալական և հրեշավոր բնույթը: Ձեր նամակում դուք հիշատակում եք Ժան Ժորեսի անունը: Նրա մշտական մտադրությունը հանգել է այն բանին,

¹ Այս բրթակցության մասին տես վերը թիվ 635 փաստաթուղթը:

որ եվրոպական ժողովրդավարական անհաղթահարելի պարտականություն ունենա միջամտելու թուրքերի և հալածվող ժողովուրդների գործերին, և ես ցավում եմ, որ կան սոցիալիստներ, որոնք չեն ընդունում այս պարտականության ամբողջ խորությունը:

Մեզնից է կախված, որ հաշտությունը պատրվակ ընձեռի Եվրոպան և Արևմտյան Ասիան այս տևական չարիքից վերջապես բուժելու համար, որի դեմ նախկին դիվանագիտության երկշտաբար օգտագործած դեղամիջոցներն ի հայտ են բերել իրենց խղճալիությունն աստիճանի անարդյունավետությունը: Հարցի էությունն այն է, որ այդ դիվանագիտությունն առաջնորդվում էր տերությունների հավասարակշռության հիմանի հայեցակարգով, որից Թուրքիան հմտորեն օգտվում էր: Բայց եթե ժողովուրդների ինքնորոշման իրավունքի և Ազգերի լիզայի կողմից խորհրդանշվող միջազգային գաղափարը պետք է վերջնականապես հաղթանակի, խոսքն այլևս չի վերաբերվի մարդասիրության վարդապետության անունից՝ գերիշխողից որոշ զիջումներ կորզելուն: Ճնշված ժողովուրդները կհասնեն իրենց հավանությանն արժանացած վարչակարգին և իրենց ճակատագրերի տեր ու տնօրենը կդառնան ամենուր հռչակված իրավունքի հիման վրա և ազգային կառավարություններից վեր գտնվող իշխանության երաշխավորության ներքո:

Այս պահին մեզ հարկ է վերադառնալ այն գործին, որն օրեցօր մեզ հրապուրում է: Հասարակական կարծիքը Ֆրանսիայում բարյացակամորեն է տրամադրված, միայն վատ է տեղեկացված: Հարկ է նրան ասել, թե ի՞նչ են իրենցից ներկայացնում այն ժողովուրդները, որոնք ենթակա են օսմանյան լծին, ինչպիսի՞ն են նրանց ձգտումները: Հարկ է նրան տեղեկացնել թուրքական խնդրի կրոնական, սոցիալական, տնտեսական կողմերին: Այն վեհաժողովը, որի մասին դուք խոսում եք, հիասքանչ ձևով կպատասխանի այս անհրաժեշտությանը:

Ազգությունների միջև համաձայնության սոցիալիստական կոմիտեի իմ բարեկամների հետ մեկտեղ ես արդեն զբաղվում եմ համանման վեհաժողովով: Ավստրո-Հունգարիայի ժողովուրդների վեհաժողովից հետո, որը շուտով տեղի կունենա Փարիզում, մենք մտադիր ենք հրահրել մեկ այլ վեհաժողովի գումարումը, որտեղ ներկայացված կլինեն ռուսական ծայրամասերի ազգությունները՝ լատվիացիները, էստոնացիները (անհրաժեշտության դեպքում՝ լիտվացիները), ինչպես նաև անդրկովկասցիները: Մենք մեր մտադրությանը տեղյակ ենք պահել Փարիզի վեհաժողովի կազմակերպիչներին և սպասում ենք նրանց պատասխանին:

Ձեզ, հավանաբար, շահավետ կթվա ձեր նախագիծը մեր նախագծի հետ համաձայնեցնելը: Դրա համար բավական կլինի:

1/ Այս վեհաժողովում կազմավորել երկու խմբակցություն՝ բալթյան և նախկին ռուսական սլավոնական ազգությունների, ինչպես նաև Թուրքիայի ճնշած կամ նրա սպառնալիքի տակ գտնվող ազգությունների:

2/ Ձանալ այս վերջին խմբավորմանը կցել սիրիացիներին, Փոքր Ասիայի հույներին, և ես չզիտեմ, թե արդյո՞ք նրանք Փարիզում կգտնվեն, Հեջազի արաբների ներկայացուցիչներին:

Դուք, անշուշտ, կկարողանաք համախոհներ հավաքագրելու համար մեզ արժեքավոր ցուցումներ տալ: Ազգությունների միջև համաձայնության սոցիալիստական կոմիտեում մենք ունենք վրացի և հայ անդամներ, բայց ինքնին հասկանալի է, որ վեհաժողովի համար շահավետ կլինի ունենալ ավելի լայնածավալ ներկայացուցչություն:

Ես հույս եմ տածում, որ դուք կբարեհաճեք ինձ տեղեկացնել, որքան հնարավոր է արագ, ձեր տեսակետներին այն առաջարկության շուրջ, որը ես պատիվ ունեցա ձեզ հաղորդել:

(A.N., 94 AP 204).

**Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնը՝
Սենի պատգամավոր պ. Ալբեր Տոմասին**

Ն:

Փարիզ, 10-ը հուլիսի 1918 թ.:

Հունիսի 24-ին դուք բարեհաճել եք՝ իմ ուշադրությունը հրավիրել այն շահավետության վրա, որը շահկապում է ֆրանսիական կառավարության կողմից՝ Ավստրո-Հունգարիային ենթակա ազգություններին, կարծեք թե, մոռացության չմատնելու հետ: Վերջին ցույցերը, որոնք տեղի են ունեցել մեր բանակներում ծառայող լեհական և չեխոսլովակյան զինված անձնակազմերին ազգային դրոշմեր հանձնելու կապակցությամբ, կարող էին նույնիսկ ձեռք հնարավորություն ընձեռել դատելու նրանց հանդեպ կառավարության որդեգրած՝ հստակորեն բարեհաճ վերաբերմունքի մասին: Մեր գործողությունն այստեղ կամ մեր դաշնակիցների շրջանում չի դադարում նմանապես ի հայտ գալ ի նպաստ հարավսլավացիների և Տրանսիլվանիայի ռումինացիների:

Դուք նմանապես բարեհաճել եք ինձ տեղյակ պահել Ռուսաստանի ծայրամասերում բնակվող ազգությունների՝ լատվիացիների, էստոնացիների, լիտվացիների և անդրկովկասցիների մասին:

Առաջինների համար բավական նրբանկատ հարց է իրենց բուն ձգտումները ներկա իրադրության պայմաններում զանազանելը, բայց դուք կարող եք վստահ լինել, որ այն բոլոր ջանքերին, որոնք այս ազգությունները կգործադրեն վերանվաճելու համար իրական ինքնավարությունը, հաճույքով կաջակցի ֆրանսիական կառավարությունը:

Ինչ վերաբերում է Անդրկովկասի ժողովուրդներին, ապա մեզ դեմ հանդիման գտնվում են երեք հիմնական էքսիկական խմբեր. թաթարները, որոնք մահմեդականներ են և իրենց ծագման, ինչպես նաև կրոնի բերմամբ հակված են մեծ հաճույքով պայմանավորվածության հանգելու թուրքերի ու Հյուսիսային Կովկասի տարածաշրջանի մահմեդական այլ տարրերի հետ. վրացիները, որոնք երկարատև մերձեցման հետևանքով մեծապես ռուսացած քրիստոնյաներ են և ավելի շուտ անտանտամետ հակումներ ունեն, թեպետ, թվում է, թե միմյանցից նույնքան տարանջատված են, որքան և իրենք՝ ռուսները. վերջապես հայերը, որոնցից ոմանք ենթակա են Ռուսաստանին, մյուսները՝ գաղթականներ են Թուրքիայից: Ռուսահայերը և թուրքահայերը թվում է, թե գործում են համագործակցված և իրենց սպառնացող վտանգի անխուսափելիության առջև միավորված են՝ դիմադրելու համար. ի դեպ, թե՛ թուրքերի բռնություններին և թե՛ գերմանացիների խարդավանական շողոքաբանություններին:

Վերջին դեկտեմբեր ամսից ի վեր, դաշնակիցները փորձել են դյուրին դարձնել ինքնավար կառավարության և բանակի ստեղծումն Անդրկովկասում: Միջազեռքի ռազմաճակատին համեմատաբար մոտ գտնվելու պատճառով, քրիտանական կառավարությունն իր ավելի առանձնահատուկ հոգածության ներքո է վեցրել այն գործողությունը, որը պետք է իրականացվի այդ տարածաշրջանում: Այդուհանդերձ, ֆրանսիացի գնդապետ Շարդի-նյին և նրա սպաներն ու Թորիսում Ֆրանսիայի հյուպատոսը հրահանգներ են ստացել, ո-

1 Արտատպված չէ:

րոնք նպատակաուղղված են անելու հնարավոր ամեն ինչ՝ օգնելու համար մեր անգլիացի դաշնակիցներին: Գնդապետ Շարդի-նյիի համար բացվել է 20 միլիոն ռուբլու վարկ և կամ նրա, կամ հյուպատոսության միջոցով ուղերձներ են հղվել Անդրկովկասի հիմնական խմբավորումներին՝ նրանց այն աջակցության շուրջ հավաստիացնելու համար, որը Ֆրանսիան և նրա դաշնակիցները հակված են նրանց տրամադրել, ինչպես նաև նրանց դիմադրությանը քաջալերելու համար: Դժբախտաբար, հավաստի է թվում, որ ուղարկված ոչ բոլոր հեռագրերն են հասել իրենց հասցեատերերին: Փետրվար ամսից ի վեր, Թիֆլիսի հյուպատոսի և գնդապետ Շարդի-նյիի հեռագրային թղթակցությունները կանոնավոր ձևով այլևս տեղ չեն հասել, իսկ Կովկասի հարավում և հյուսիսում տեղի ունեցած անցքերի մասին տեղեկություն ստանալը դարձել է դժվարին:

Ես, համեմայն դեպս, փնտրել եմ բոլոր միջոցները, որոնք ինձ հասու էին, քաջալերելու համար ամենախոհեմ տարրերի ձեռնարկված պայքարը: Հայկական ազգային պատվիրակությունը, որը ցանկացած ծագում ունեցող և ցանկացած հայացքների տեր բոլոր հայերին համախմբում է հիասքանչ անխախտ միության մեջ, սերտ և կանոնավոր կապ է պահպանել իմ Դեպարտամենտի հետ և կարողացել իր հայրենակիցներին համոզել այն զգացմունքների մեջ, որոնք Ֆրանսիան տաժում է նրանց հանդեպ և այն ջանքերի հարցում, որոնք նա գործադրում է ապահովելու համար նրանց լավագույն ապագան: Արևելյան լեզուների ստեղծումը, դեպի որը հոսել են հայ կամավորները և որը կազմված է Սիրիայի և Պաղեստինի ֆրանսիական ստորաբաժանմանը կցված երեք զույմարտակից, ի տես ամենքի վկայել է այն մասին, որ Ֆրանսիան հայերին դիտում է իբրև գերմանա-թուրքական ռազմամոլության լուծը թոթափելու համար մարտնչող դաշնակցի:

Իմ Դեպարտամենտն ընդունել է նմանապես Ֆրանսիայում ձևավորված վրացիների խմբավորումներին և ջանացել նրանց հարաբերության մեջ դնել Թիֆլիսում ձևավորված վրացական խմբավորումների հետ: Վրացիներն արտասահմանում, դժբախտաբար, փոքրաթիվ են, նրանք չունեն այն ներքին համախմբվածությունը, ինչ հայերը և եթե հավատանք վերջին լուրերին, որոնք, ի դեպ, տեղ են հասել Կոստանդնուպոլսի կասկածելի ուղիով, Կովկասի վրացական կառավարությունը բանակցությունների մեջ է մտնելու գերմանացիների և թուրքերի հետ:

Ֆրանսիական կառավարությունն, այդուհանդերձ, հակված է հատկացնել իր օգնությունը բոլոր նրանց, ովքեր Կովկասում կցանկանան վերականգնել այս ազգությունների ինքնավարությունը կամ փոքր անկախ պետությունների կազմակերպման, կամ լիբերալ և ժողովրդավարական հիմունքներով վերակազմավորված մեծ Ռուսաստանի հետ միավորվելու միջոցով: Ես, ի դեպ, շատ երջանիկ կլինեմ, զրուցելու ձեզ հետ այն նոր գործնական միջոցառումների շուրջ, որոնք այս առթիվ կարող են նախատեսվել:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, *Caucase-Kurdistan*, tome 2, ff. 83-86 v).

**Ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշան
Խորհրդի նախագահ, Ռ-ազմական նախարար պ. Կլեմանտյին**

Ն:

Հեռագրեր (Մորթիան), 14-ը հուլիսի 1918 թ.*:

Լրագրերից մեկում, ես այս պահին կարդում եմ, որ երեկ Համայնքների պալատում պ. Բալֆուրն ի նպատակ հայերի հանդես է եկել հայտարարությամբ և պնդել, որ նրանք կլինեն այն ազգերի թվում, որոնց ճակատագիրը դաշնակիցները կկարգավորեն ժողովուրդների ինքնորոշման իրավունքի հիման վրա:

Ես գիտեի, որ զիջելով մեր քայլերին, Ֆորին Օֆիսը կանի այդ հայտարարությունը, և անհամբերությամբ սպասում էի դրան:

Եթե այժմ ես ձեզ եմ գրում, չնայած ձեր բոլոր մտահոգություններին և հոգնեցուցիչ գրադմունքներին, ապա խնդրելու համար, որ դուք մեզ չլքեք այս տագնապալից ժամերին, դուք, որ հայերի հանդեպ միշտ հանդես եք բերել այդչափ լավ վերաբերմունք և նրանց սատարել շատ ավելի առաջ, քան պ. Բալֆուրը կարող էր մտածել այդ անելու մասին:

Բոլշևիկների դավաճանության հետևանքով թուրքերի՝ Թուրքիայի հայկական նահանգների վերագրավումից հետո, ահա և Կովկասի հայերն են, իրենց հերթին, ջախջախվել (մինչ անգլիացիները կկարողանային նրանց օգնության հասնել), հարկադրվել են քարկվելու Կոստանդնուպոլսում գումարված կոնֆերանսի պարտադրած պայմաններին և մեկուսանալու կարծեցյալ անկախություն ունեցող փոքրիկ հանրապետության մեջ, որը կարող է միայն Գերմանիայի կամակատարը լինել:

Հայաստանի կոտորածներից վերապրածների միայն մի խումբ է (մոտավորապես 25000 մարդ) դեռևս դիմադրում այս ռազմաճակատում, հուսակտուր եռանդով ու քաջությամբ, որը հարգանք է ներշնչում: 900 հայ կամավորներից, որոնք պատերազմի սկզբից ենք Ֆրանսիայում կամավոր հիմունքներով զինվորագրվել էին Արտասահմանյան լեգեոնին, մնում են հազիվ հիսունի հասնող մարտիկներ: Մյուսները հանդես բերած արիության և քացառիկ ռազմական ունակությունների համար ամենափառապանծ գրավոր շնորհակալությունների արժանանալուց հետո, զոհվել են ֆրանսիական ռազմաճակատում:

Եզիպտոսից և Ամերիկայից շուտափույթ եկած կամավորները ձևավորել են Արևելյան լեգեոնի գումարտակները և այս պահին նույնիսկ առաջ են ընթանում դեպի Պաղեստին, որտեղ պատրաստվում են կռվել ֆրանսիական ռազմական անձնակազմերի շարքերում: Նրանք այդտեղ են զնացել խանդավառությամբ, զուգարեղծելով ամեն ինչ՝ դաշնակիցների կողքին իրենց հայրենիքը վերջապես ազատագրելուն նպաստելու հույսով:

Սակայն նրանք կարիք ունեն, ինչպես Վանի և Էրզրումի նահանգների իրենց եղբայրները, որոնք կռվում են իրենց օջախները պաշտպանելու համար, ... այս աղետալի օրերին բոլոր հայերը կարիք ունեն Ֆրանսիայի կողմից սփոփանքի, քաջալերանքի գեթ մեկ խոս-

* Պ. դը Մարտերիի նախնական ձեռագիր ծանոթագրությունը. «Պ. Դեգրան: Խորհրդի նախագահ[ը] ցանկանում է, որ Պողոսին պատասխան տրվի (որն ինքը կստորագրի) և որ 2 նամակները (Պողոսի նամակը և պատասխանը) տպագրվեն (հարկ կլինի հրատարակման մեջ ջնջել քառակուսի փակագծերում գտնվող արտահայտությունը): Խոսքը վերաբերում է հետևյալ տողին. «...շատ ավելի առաջ, քան պ. Բալֆուրը կարող էր մտածել այդ անելու մասին»: Պ. Կլեմանտյի պատասխանի մասին տե՛ս ստորև թիվ 657 փաստաթուղթը:

քի: Հենց այս է, որ ես ձեզնից խնդրում եմ նրանց հատկացնել:

Ես խնդրում եմ, որ ձեր կառավարությունն օգտագործի մոտալուտ առիթը կամ նույնիսկ նպաստի դրա ի հայտ գալուն, ասելու համար, որ Ֆրանսիան, ճնշված ժողովուրդների ավանդական հովանավորը, չի լքի ինչպես հայերին, այնպես էլ մյուս հպատակ ազգություններին և չընդունելով ինչպես Կոստանդնուպոլսի կոնֆերանսի պարտադրած գործարքները, այնպես էլ Բրեստ-Լիտովսկի և Բուխարեստի պայմանագրերը, հաղթանակի օրն արժանին կհատուցի հայերին, իրականացնելով նրանց ազգային ձգտումները:

Այսպիսին է, իմ թանկագին նախագահ, իմ համեստ խնդրանքը: Ես գիտեմ, որ կարող եմ հույս տա՞ծել մեր գործի հանդեպ ունեցած ձեր համակրանքի ու աջակցության հետ և ձեզ նախապես շնորհակալություն եմ հայտնում:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, Arménie, tome 1, ff. 62-63 v).

**Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար
փաշան՝ Արտաքին գործերի նախարարությունում
Ասիայի փոխանօրեն պ. Ժան Գուին**

Ն:

Հեռագրեր, 16-ը հուլիսի 1918 թ.:
(Unuagh t Բաղ. վարչ. հուլիսի 20-ին):

Ես ձեզ խիստ երախտապարտ եմ բարեհաճելու համար ինձ տեղեկացնել Ֆրանսիայի հանդեպ համակրանքի այն փոքր դրսևորմանը, որը նախագահ Վիլսոնի կողմից Վերնոն սար հրավիրված հայ ներկայացուցիչներն են ի հայտ բերել Վաշինգտոնում գտնվող ձեր դեսպանին՝:

Ասելով ձեր դեսպանին, որ Հայաստանն օրհնում է ու քնքշորեն սիրում Ֆրանսիային և հույսեր տա՞ծում նրա հետ իր անկախությանը հասնելու համար, իմ հայրենակիցները հայտնել են միայն բոլոր հայերի խոհերն ու զգացումները, որոնք բոլոր ժամանակներում ֆրանսիական մշակույթի մեծ ազդեցությունն են կրել և միշտ իրենց հայացքներն ու սրտերն են շրջել դեպի Ֆրանսիան՝ ճնշվածների ավանդական հովանավորը:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, Arménie, tome 1, f. 64).

**Ժնևում Ֆրանսիայի գլխավոր հյուպատոս պ. Պրալոնը՝
Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին**

Ճ. թիվ 123:

1 Պ. Ժյուսսերանը:

Ժն, 17-ը հուլիսի 1918 թ.:
(Ստացել են Կար. հուլիսի 18-ին,
Քաղ. վարչ. հուլիսի 20-ին):

Ես պատիվ ունեմ Ձերդ գերազանցությանն իրագեկ դարձնել որոշ տեղեկությունների, որոնք հնարավորություն են ունեցել ի մի բերելու Հայկական հարցին վերաբերող այն բանակցությունների վերաբերյալ, որոնք ներկայումս պետք է ընթանան Բեռլինում:

Ըստ այդ տեղեկությունների՝ Գերմանիայի կառավարությունը, որը վատ աչքով կնայի այն ռազմական գործողությանը, որը ներկայումս թուրքերն իրականացնում են՝ ծավալվելու համար Բրեստ-Լիտովսկի պայմանագրով իրենց զիջված տարածքներից այն կողմ, մի կողմից՝ ճնշում կգործադրի Կոստանդնուպոլսի վրա՝ պարտադրելու համար պայմանագրի անշեղ կենսագործումը և մյուս կողմից՝ կջանա կարգավորել, կատարելապես շրջանցելով թուրքերին, նախկինում Ռուսաստանում ընդգրկված հայկական տարածաշրջանների ճակատագիրը:

Ինչ վերաբերում է այս վերջին հարցին, գերմանացիները կարող էին հաջողության հասնել վրացիներին ու հայերին հակադրելու հարցում, և նրանք ներկայումս հետամուտ կլինեն հավասարակշռությունը պահպանելուն կոչված՝ կարծեցյալ անկախություն ունեցող, բայց իրականում գերմանական ազդեցությանը ենթակա երկու պետությունների կազմավորմանը. վրացական պետության, որի մայրաքաղաքը կլինի Թիֆլիսը, և, ի դեպ, միայն նախկին Ռուսաստանի մի մասն ընդգրկող հայկական պետության, որի մայրաքաղաքը կլինի Երևանը:

Գերմանացիներն օգտագործելով այն օգնությունները, որոնք, թվում է, թե իրենք են հայթայթել վրացիների համար, կովկասյան հարցը միակողմանիորեն կարգավորելու սպառնալիքի տակ հասել են այն բանին, որ հայկական ներկա կառավարությունը, որը փաստորեն պատկանում է հեղափոխական կուսակցությանը, Բեռլին ուղարկի երկու բանակցություններ վարողի՝ Չուրաբովին և Օանջանյանին [sic], որոնք երեք ամսից ի վեր պետք է, որ ժամանած լինեն Գերմանիա:

Բանակցությունները նրանց և կայսրության նախարարների միջև ընթանում էին եռանդուն ձևով: Հայ պատգամավորները, թեպետ դաժանորեն հիասթափված վրացական պետության հիմնադրումից և խիստ վիրավորված՝ իրենց հանդեպ գերմանացի դիվանագետների կիրառած գործելամիջոցներից, թվում է, թե այդուհանդերձ, հավանաբար, համակերպվել են իրենց առաջարկված հիմունքներով մի համաձայնագրի և կարծել, որ այդ պահին հարկ չկա հույս տածել լավագույն լուծման հետ:

Այդուհանդերձ, Չուրաբովը և Օանջանյանը [sic] վերջերս գրել են Ժնևում բնակվող Դաշնակցություն հեղափոխական կազմակերպության մի քանի անդամների՝ իրավիճակը նրանց ներկայացնելու և խնդրելու համար Բեռլին ուղարկել մի բանագնացի, որն իր խորհուրդներով կարողանար իրենց օգնել: Այս կապակցությամբ, հավանաբար, նախանշվել է հայազգի Իսսակյանը [sic], որը և վերջին կիրակի օրը, հուլիսի 14-ին, պետք է բողած լինի այն քաղաքը, որտեղ իմ նստավայրն է, միանալու համար իր հայրենակիցներին գերմանական մայրաքաղաքում:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, Arménie, tome 1, ff. 68-68 v)

1 Իմա՝ Օհանջանյան:

2 Իմա՝ Իսահակյան:

Բեռնում Ֆրանսիայի դեսպան պ. Դյուտաստան Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին

ճ. թիվ 783:

Բեռն, 17-ը հուլիսի 1918 թ.:
(Ստացել են Կար. հուլիսի 22-ին,
Քաղ. վարչ. հուլիսի 23-ին):

Տանջալից է հավաստելն իսկ այն ստորաքարշությունը, որը Կոստանդնուպոլսի հայկական մամուլը («Բյուզանդիոնը» և «Հայրենիքը») դրսևորում է օսմանյան կառավարության հանդեպ: Այդ տեսակ դիրքորոշումը, բացի դրանից, ընդգծվում է Կովկասի հայ լիազոր ներկայացուցիչ Խատիզոֆի [sic]՝ արած հայտարարություններում, որը բոլոր լրագրերի միջոցով հաճույքով կրկնել է, թե Հայկական հարցի ամբողջ պատասխանատվությունը սխալմամբ վերագրվել է Թուրքիային, թե իրականում չեն եղել ոչ ճնշվածներ, ոչ ճնշողներ, և որ սաղրիչները միշտ եղել են իրենք՝ հայերը:

Թուրքական մամուլը, բնականաբար, խիստ երջանիկ եղավ արտատպելու համանման հայտարարությունները, որոնք ելնում էին մի անձնավորությունից, որը ներկայանում է իբրև Հայաստանի պաշտոնական ներկայացուցիչը: Բարձր Դուռն, այս պայմաններում, դժվարություններ չի կրում ջանալու արդարանալ և հայտարարել է, որ եթե ինքը երբեմն հարկադրված է եղել դիմելու որոշ վճռական միջոցների, ապա օգտվել է միայն պաշտպանության օրինական իրավունքից:

Հայկական այս թերթերից մեկը՝ «Հայրենիքը», այն աստիճանի է բարոյալքվել, որ նույնիսկ ժխտում է այն բոլոր ջանքերը, որոնք տերություններն են գործադրել Հայաստանին հովանավորելու համար: Նրանց միջամտությունը նա անվանում է խաբեբայական արարք և հայտարարում, որ իր համակրոնակիցների կենսական շահերը կապված են թուրքերի շահերի հետ: Այս նույն օրգանը նաև Կոնիայի հայերից մեկի խոսափողն է, որը գովերգում է այն արդարամտությունն ու շռայլությունը, որն օսմանյան կառավարությունն է ի հայտ բերում և անիծում է նրանց, որոնց հաջողվել է խախտել հայ-թուրքական բարեկամությունը, կարծիք հայտնելով, որ շուտով բոլոր հայերը կկարողանան խաղաղ ապրել սուլթանի հայրական հովանու ներքո:

Ձերդ գերազանցությունը կբարեհաճի գտնել այս ծրարում հայկական և թուրքական մամուլից որոշ թվով քաղվածքներ, որոնցում ի հայտ է գալիս այդ տարօրինակ տրամադրվածությունը: Հայկական թերթերի ամոթալի պնդումները միանգամայն պատեհ ժամանակի են երևան գալիս, ոչ այնքան իրագեկ չեզոքների աչքերում ճշմարտանման տեսք տալու համար այն պարբերական արշավին, որն օսմանյան կառավարությունը ձեռնարկել է հայ հայրենասերների դեմ, և որի մասին ես արդեն առիթ եմ ունեցել տեղեկացնելու Ձերդ գերազանցությանը, մասնավորապես, մայիսի 16-ի՝ և հունիսի 18-ի՝ համար 549 և 680

1 Իմա՝ Խատիզով:
2 Չի հայտնաբերվել:
3 Արտատպված չէ: Պ. Դյուտաստան արտոն է, որ հավելում է Կոստանդնուպոլսում գրված քարոզական բնույթի մի նոր գրքույկ, որը, նրա կարծիքով, մի հայի գործն է և նպատակ է հետապնդում հիմնավորելու այն երախտագիտությունը, որով հայկական համայնքը պետք է համակվի «բարեգութ» օսմանյան կառավարության հանդեպ: Մենք այդ գրքույկը չենք գտել:

իմ մամակներում:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, *Arménie*, tome 1, ff. 66-67).

655

Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշան՝ Արտաքին գործերի նախարարությունում Ասիայի փոխտնօրեն պ. Ժան Գուին

Ն:

Հեննեբոն, 18-ը հուլիսի 1918 թ.:
(Ստացել է Ասիայի փոխվարչությունը)
հուլիսի 20-ին):

Ես հենց նոր ստացա ը(նթացի)կ {ամսի} 16-ի ձեռնամակը¹, որով դուք բարեհաճել եք ինձ տեղեկացնել հայկական պատվիրակություն կազմավորելու շուրջ՝ պ. Սևաջյանի Ռազմական նախարարությանն արած առաջարկությանը, որին կհանձնարարվի այցելել բուլղարական գերիների ճամբարները՝ այն հայերին Արևելյան լեզեռնին զինվորագրելու նպատակով, որոնք կարող էին այդտեղ գտնվել:

Ես կարծում եմ, որ այդ պատվիրակությունը կարող է օգտակար լինել և այդ ոլորտներում Արևելյան լեզեռնի համար կամավորների որոշ զինվորագրումներ անցկացնել, մի բան, որին ես մեծ ցանկություն ունեմ քաջալերելու իմ բոլոր ուժերով:

Ես խիստ զգացված եմ այն նրբանկատ ակնածալից ուշադրությունից, որը դուք ցուցաբերել եք Ազգային պատվիրակության հանդեպ՝ նախքան Ռազմական նախարարությանը պատասխանելը խնդրելով իմ համաձայնությունը և դրա համար ձեզ անկեղծորեն շնորհակալություն եմ հայտնում:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, *Turquie*, tome 68, f. 81).

656

Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշան՝ Արտաքին գործերի նախարարությունում Ասիայի փոխտնօրեն պ. Ժան Գուին

Ն:

Հեննեբոն, 20-ը հուլիսի 1918 թ.:
(Ստացել է Ասիայի փոխվարչությունը)
հուլիսի 22-ին):

Ես պատիվ ունեմ ձեզ հայտնել ը(նթացի)կ {ամսի} 18-ի ձեռնակի² ստացման մա-

1 Արտատպված չէ:
2 Արտատպված չէ:

սին, որով դուք բարեհաճել եք ինձ տեղեկացնել այն հիասքանչ տպավորությանը, որը Պաղեստինում Հանրապետության Գերագույն կոմիսարի վրա թողել է հայկական զնդի գեղեցիկ պահվածքը հուլիսի 14-ի տոնի ժամանակ¹:

Այդ հաղորդագրությունն ինձ մեծ ուրախություն է պատճառում, քանզի ցույց է տալիս, որ մեր ջանքերը գուր չեն անցել, և մենք կարող ենք հպարտ լինել այն պատասխանով, որին արժանացել է մեր կոչը: Հայկական այդ զնդերին, ես վստահորեն հույս եմ տածում, շուտով կհաջողվեն այլք, որոնք դրանց համազոր կլինեն:

Ես, մասնավորապես, երջանիկ եմ, որ իմ հայրենակիցների հայրենասիրությունը և գոհաբերվելու տրամադրվածությունն ինձ է հավաստել Պաղեստինում Ֆրանսիական հանրապետության ներկայացուցչի ազդեցիկ ձայնը: Եվ եթե նրանց ռազմատենչ պահվածքը նրա վրա գործել է բարեհաճ տպավորություն, ապա նա կարող է շուտով ունենալ նաև նրանց քաջության ապացույցը: Այս բոլոր երիտասարդները, ինչպես նաև Ֆրանսիայում՝ ճակատամարտերի դաշտերում արդեն վեհանձնորեն ընկած՝ Արևելյան լեզեռնի իրենց եղբայրները, խանդավառված են ուղեկցող ֆրանսիական դրոշին արժանի լինելու և իրենց արյունը դաշնակիցների բանակների զինվորների արյանը խառնելու բուռն ցանկությամբ, որոնց շարքերում պատրաստվում են կռվել (հավանաբար, արդեն կռվում են): Նրանք այս կերպ կնպաստեն իրենց հայրենիքի ազատագրմանը, նրանք նմանապես կնպաստեն (և դա մեզ համար փոխհատուցում կլինի, ինչպես նաև մեր օրինական հպարտությունը) դաշնակիցների վերջնական հաղթանակին, որն արդեն ուրվագծվում է և որի՝ երեկվա այդչափ փառապանձ արդյունքները նախանշաններն են:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, *Turquie*, tome 68, ff. 82-82 v).

657

Խորհրդի նախագահ, Ռազմական նախարար պ. Կլեմանսոն՝ Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշային

Ն:

Փարիզ, 23-ը հուլիսի 1918 թ.:

Ես պատիվ ունեմ ձեզ հայտնել այս ամսի 14-ի մամակի² ստացման մասին, որով դուք ինձ հայտնում եք Համայնքների պալատում պ. Բալֆուրի՝ ի նպաստ հայերի արած հայտարարության մասին:

Հիշեցնելով ձեր հայրենակիցների հերոսական վարքագծի մասին, դուք ինձ խնդրում եք օգտագործել մոտալուտ առիթը, քաջալերելու նրանց ջանքերը և նրանց ասել, որ Կոստանդնուպոլսի կոնֆերանսի պարտադրած պայմանները Հանրապետության կառավարությունը չի ճանաչի: Անարդարացի հարձակումների գոհը դարձած Ֆրանսիան, իր պահանջների թվում է դասել ճնշված ազգությունների ազատագրումը:

1 Խոսքը վերաբերում է 1918 թ. հուլիսի 15-ի թիվ 321 հեռագրին. արտատպված չէ:
2 Տե՛ս վերը թիվ 651 փաստաթուղթը: Պ. Կլեմանսոնի մամակը, ինչպես նաև Պողոս Նուբար փաշայի մամակը, կարտատպվեն մամուլում. տե՛ս "L'Écho de Paris", 24 juillet 1918, N 12395; "Le Petit Parisien", 24 juillet 1918; "Le Temps", 25 juillet 1918, N 20837.

Լինելով այս ժողովուրդների ավանդական հովանավորը, նա բազում առիթներով ի հայտ է բերել իր խորին համակրանքը հայերի հանդեպ: Նա փորձել է անել ամեն ինչ՝ նրանց օգնության հասնելու համար:

Հայերի անձնուրաց ոգին, դաշնակիցների հանդեպ նրանց հավատարմությունն Արտասահմանյան լեզեոնում, Կովկասի ռազմաճակատում և Արևելյան լեզեոնում, ամրապնդել են այն կապերը, որոնք նրանց միահյուսում են Ֆրանսիայի հետ:

Ես երջանիկ եմ ձեզ հավաստելու, որ Հանրապետության կառավարությունը, ինչպես նաև Միացյալ Թագավորության կառավարությունը, շարունակում է հայ ազգությանը դասել այն ժողովուրդների թվին, որոնց ճակատագիրը դաշնակիցները հույս են տաժում կարգավորել ըստ ժողովուրդների ինքնորոշման իրավունքի:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, Arménie, tome 1, ff. 80-80 v).

658

Բանակի շտաբի 3-րդ բաժանմունքի ծանուցագիրը¹

Կովկասում տիրող իրավիճակի վերլուծություն²

Գաղտնի:

24-ը հուլիսի 1918 թ.:

Մայիս և հունիս ամիսների ընթացքում թուրքերը և գերմանացիները հետամուտ են եղել Կովկասի գրավման իրենց ծրագրի իրականացմանը:

Գերմանական գործողությունը, որն սկիզբ է առնում Ղրիմից և Ուկրաինայից, իրականացվում է Կովկասի հյուսիսային և արևմտյան տարածաշրջաններում:

Օսմանյան ծրագիրը ծավալվում է հարավային և հարավ-արևելյան տարածաշրջաններում:

Իրադրությունն Անդրկովկասում. Իրադրությունն Անդրկովկասում բնութագրվում է Կասպից ծովի ուղղությամբ՝ Գերմանիայի և Թուրքիայի՝ գուզընթաց և թշնամական գործողությամբ:

Գերմանական գործողությունը. Այնժամ, երբ թուրքական ուժերը հստակորեն հայտնում էին իրենց հարձակման մասին Անդրկովկասում, գերմանական դիվանագիտությունն աշխատում էր Անդրկովկասյան դաշնության կազմալուծման ուղղությամբ՝ դառնալու համար երկրամասի տեր ու տնօրենը: Նրա ջանքերը հաջողությամբ պսակվեցին: Հենց այն պահին, երբ թուրքերը խախտելով զինադադարը հարձակման էին անցնում Կարսի ռազմաճակատում և Երևանի տարածաշրջանում ու հայտնում Թիֆլիսը գրավելու իրենց մտադրության մասին, անդրկովկասյան սեյմը, ընդունելով, որ Հանրապետության ժողովուրդներին տարանջատում են արմատական տարածայնություններ, վայր էր դնում իր իշխանությունը և հայտարարում, որ *Անդրկովկասյան հանրապետությունը դադարել է գոյու-*

1 Մենք արտասպասում ենք միայն մի հատված, որը վերաբերում է հայերին:
2 Ելնում է գնդապետ Շարդինյի մայիսի 12-ից մինչև հունիսի 2-ը գրված զեկուցագրերից և գեներալ Լավեր-նյի հունիսի 20-ի զեկուցագրից:

թյուն ունենալուց (մայիսի 26-ին):

Միևնույն օրը Վրաստանն այնպիսի պայմաններով էր *հռչակում իր անկախությունը*, որ այս նոր պետությունը դրվում էր Գերմանիայի՝ եթե ոչ պաշտոնական, ապա առնվազն փաստացի հովանու ներքո¹:

Դեռելով Վրաստանն իրենց ազդեցության ներքո, գերմանացիները Կովկասում զբաղեցնում են գերիշխող դիրք. նրանք իսկույն ևեթ կասեցրել են թուրքական գրոհը դեպի Թիֆլիս և ռազմագերիների ու երկրի գերմանացի գաղութաբնակների միջոցով ձեռնամուխ եղել զինված ուժի կազմակերպմանը²:

Գործելով այս կերպ, Գերմանիան մեծապես առաջ է բերել օսմանյան կառավարության դժգոհությունը, սակայն նա համաձայնության մեջ է եղել իր մյուս դաշնակիցների, մասնավորապես, Բուլղարիայի հետ, որը չէր կարող թույլատրել այն բազմապատիկ հզորությունը, որը Թուրքիան կարող էր ձեռք բերել ամբողջ Անդրկովկասի գրավումով:

Թուրքական գործողությունը. Այսպիսի իրադրության պայմաններում, Թուրքիան իր գորքերն ամբողջությամբ պահելով Երևան-Թավրիզ գլխավոր գծի վրա, իր քաղաքական գործողությունն ավելի է մղում դեպի արևելք, հենարան փնտրելով Կասպից ծովի ափերին բնակվող մահմեդական ժողովուրդների շրջանում:

Նրա նպատակը, հավանաբար, կլինի Թուրքական կայսրությունից կախման մեջ գտնվող Ադրբեջանի կազմավորումը:

Այդ պետությունը պաշտոնապես դեռևս չի կազմավորվել: Մահմեդական ազգային խորհուրդը սահմանափակվել է Ադրբեջանի դեմոկրատական հանրապետության անկախության օգտին քվեարկելով, որն ընդգրկում է Երևանի, Ելիզավետպոլի և Բաքվի կառավարությունները: Այս նոր հանրապետության քրքամետ միտումները կամ ուղղակիորեն, կամ պրոտեկտորատի ձևով, կհանգեցնեն, անշուշտ, նրա կախվածությանը Թուրքիայից:

Թուրք սպաներն արդեն ձեռնամուխ են եղել Ելիզավետպոլի կառավարությունում թուրք գերիների և երկրամասի թաթարական զինված անձնակազմերի ռազմական կազմակերպմանը:

Դիմադրական տարրերը. Թուրք-գերմանացիներին դիմադրող միակ տարրը, որը դեռևս գոյություն ունի Կովկասում, բաղկացած է հայերից: Անդրկովկասի քաղաքական միասնության կազմալուծման և Վրաստանի ու Ադրբեջանի անկախության հռչակման հետևանքով ստեղծված նոր իրադրության պատճառով, Հայկական ազգային խորհուրդը հայտարարել է, որ հայկական տարածքների քաղաքական ու վարչական կյանքը դեկավարելու համար, ժամանակավորապես ստանձնում է կառավարման բոլոր պարտականությունները:

Սակայն հայերը, որոնց միաժամանակ ճնշում են թուրքերը, վրացիներն ու թաթարները, մեկուսացված են բոլոր կողմերից: Նրանք իրենց վերջին դիմադրությունը կենտրոնացնում

1 Փաստաթղթի ծանոթագրությունը. «Վրաստանն ընդգրկում է Զուբայիսի ու Թիֆլիսի կառավարությունները և Բաթումի նահանգի մի մասը:

Մայիս ամսի կեսերից ի վեր Թիֆլիսում գործում է գերմանական առևտրի սրահը: Նրա մասնաճյուղերը շուտով բաժանմունքներ կբացեն ժովափին և երկրում:

Բաթումն իր գործողություններն այնպես է կազմակերպել, որ արագացնի և առավել արդյունավետ դարձնի բաթրակի, պղնձի ու մանգանի առաքումները դեպի Օդեսա: Թանկարժեք հումքի հաշվառումն արդեն սկսվել է բոլոր վիլայեթներում:

Գերմանական դեսպան կոմս Շուլենբուրգը ժամանել է Թիֆլիս:
Հենց նոր գերմանական մի դեսպան ափ ելավ Փոթիում:

2 Փաստաթղթի ծանոթագրությունը. «Հյուսիսային Կովկասում և Հարավային Կովկասում կան 50000 մարդ: Նրանց տեղահանությունը, որը 1917 թ. մայիսին էր մեծ դուրս Երևանից, երբեք չի իրականացվել»:

են Բաքվի թերակղզում, որտեղ նրանց թիվը հասնում է 70000 մ {արդու} (որից 12000-ը Կովկասի բանակի նախկին զինվորների շրջանում զինվորագրված զորքերն են): Նրանք խնդրում են անգլիացիների օժանդակությունն Էնզելիի վրայով, բայց վերջիններս շատ հեռու են, որպեսզի կարողանան նրանց արդյունավետ օգնություն ցուցաբերել:

Եզրափակում. Ներկա պահին, գրեթե ամբողջությամբ, Կովկասն ընկել է հյուսիսից և արևմուտքից՝ Գերմանիայի, իսկ հարավից ու արևելքից՝ Թուրքիայի տիրապետության տակ:

Այս իրադրությունը կարող է հանգեցնել հետևյալ հետևանքներին.

1/ Պատերազմական կարիքների համար (նավթ, պղինձ, մանգան) գերմանացիների կողմից երկրամասի օգտագործմանը՝ տնտեսական առումով:

2/ Կովկասի մահմեդական երկրներում և Պարսկաստանում բուրքական հեղինակության աճին:

3/ Պարսկաստանում անգլիական ազդեցության փոխարինմանը գերմանական ազդեցությամբ:

4/ Պանիսլամական և հակաանգլիական շարժման ծավալմանը Թուրքեստանում և Աֆղանստանում:

(A.M.G., 16 N 3184).

Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուրարի փաշան՝ Արտաքին գործերի նախարարությունում Ասիայի փոխտնօրեն պ. Ժան Գուին

Ն:

Փարիզ, 25-ը հուլիսի 1918 թ.:
(Ստացել է Ասիայի փոխվարչ {ությունը}
հուլիսի 26-ին):

Ես պատիվ ունեմ ձեզ հայտնել ը {նթացի} կ {ամսի} 21-ի ձեր նամակի՝ ստացման մասին, որով դուք բարեհաճել եք ինձ փոխանցել Արզենտինայում հայկական զինվորագրում կազմակերպելու հնարավորությանը վերաբերող Խորհրդի պ. նախագահի, Ռազմական նախարարի գրության պատճենը¹:

Ես ձեզ եմ հայտնում իմ շնորհակալություններն այդ հաղորդման համար և այսօր նույնիսկ գրում եմ Բուենոս Այրես, այդ քաղաքի մեր համայնքի կրոնական առաջնորդ, հայր Բաղդասարյանին, ինչպես նաև զանազան երևելի այլ անձանց, որոնց անունները նշված են նախարարության ծանուցագրում:

Ես, ինչպես և դուք, հույս եմ տածում, որ նրանք մեզ կցուցաբերեն արդյունավետ օգնություն, և դուք կարող եք վստահ լինել, որ ես աչալրջորեն կհետևեմ այդ հարցին, իմ պարտքը համարելով հասնելու, հնարավորության սահմաններում, ամենամեծ թվով հայ կամա-

¹ Արտատպված չէ:
² Նույն գործի մասին տե՛ս նաև ստորև թիվ 663 փաստաթուղթը:

վորների զինվորագրմանն Արևելյան լեզեռնին:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, *Turquie*, tome 68, f. 94).

Տոկիոյում Ֆրանսիայի դեսպան պ. Դելաննեյը՝ Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին

Հ. թիվ 322:

Տոկիո, 26-ը հուլիսի 1918 թ., ժ. 12.30-ին:
(Ստացվել է ժ. 17.30-ին):

Արտաքին գործերի նախարարության համար, 38:

Այս պահին Ռուսաստանի ներքին նահանգներից ամեն օր ժամանում են կաթոլիկ հայեր, որոնք կամ նախապատերազմական շրջանի ֆրանսիական (հովանավորյալներ) են կամ հովանավորյալներ չեն և որոնց ռուսական իշխանությունը որևէ աջակցության չի արժանացնում:

Ես ձեզ խնդրում եմ, որքան հնարավոր է արագ, պատասխանել, թե արդյոք ես կարող եմ նրանց մեր հովանու ներքո վերցնել և այդ պարագայում նրանց անձնագիր հանձնել՝ քննության առնելուց հետո հայկական տեղական կոմիտեների տված գրավոր վկայականը:

(A.M.A.E., E-Asie 1918-1929, *Japon*, tome 41, f. 22).

Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնը՝ պ {արոնայ} ք Տոկիոյում Ֆրանսիայի դեսպան Դելաննեյին, Վլադիվոստոկում Ֆրանսիայի փոխտնօրեն պ. Բլանշեին

Հ. թիվ 391, 24:

Փարիզ, 27-ը հուլիսի 1918 թ., ժ. 23.20-ին:

Ես պատասխանում եմ թիվ 322 ձ {եր} {հեռագրին}¹:

Ռուսաստանում կաթոլիկ հայերը խիստ սակավաթիվ են, այսպիսով, եղեք խիստ զգույշ նրանց նկատմամբ, ովքեր իրենց դասում են այդ ազգության շարքը. նրանք, ովքեր ֆրանսիական հովանավորության վկայագրեր ունեն, իրավունք ունեն ձեր հովանավորությանն արժանանալու, բայց հարկ կլինի ստուգել ներկայացված փաստաթղթերի արժանահավատությունը: Ինչ վերաբերում է գրիգորյան հայերին և հովանավորություն չունեցող կաթոլիկներին, եթե տեղական հայկական կոմիտեներից մեկը, ներկայացնելով բոլոր երաշխիք-

¹ Տե՛ս վերը թիվ 660 փաստաթուղթը:

ները, երաշխավորում է նրանց, դուք նմանապես կարող եք նրանց հովանավորել և նույնիսկ ֆրանսիական հովանավորյալի անձնագիր հատկացնել, սակայն միայն Հեռավոր Արևելքի նավահանգիստներից մեկի, բայց ոչ Ֆրանսիայի համար: Եթե, այդուհանդերձ, այդ հայերի շրջանում գտնվում են երիտասարդ մարդիկ, որոնք ցանկություն ունեն զինվորագրվելու մեր դրոշի ներքո Պաղեստինում մարտնչող ֆրանսիական Արևելյան լեգեոնի հայկական գումարտակներին, բարեհաճեք ինձ հայտնել նրանց քանակը և անունները: Ես պայմանավորվածություն կկայացնեմ Ռազմական նախարարի հետ, դյուրին դարձնելու համար նրանց ընդգրկումը:

(A.M.A.E., E-Asie 1918-1929, Japon, tome 41, f. 23).

662

Լոնդոնում Ֆրանսիայի դեսպան պ. Պոլ Կամբոնը՝ Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին

Հ. թիվ 891:

Լոնդոն, [անթվակիր]:
(Ստացվել է 1918 թ. հուլիսի 30-ին, ժ. 19.18-ին, Քաղ. վարչ. հուլիսի 31-ին):

Անգլիական գործերը ժամանել են Կասպից ծովի ափին գտնվող Էնգելի: Ֆորին Օֆիսը հույս ունի, որ նրանք շուտով Բաքու կհասնեն, որտեղից բուլշևիկներին բնակչությունը, հավանաբար, վնդել է:

(A.M.A.E., E-Asie 1918-1929, Perse, tome 35, f. 12).

663

Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնը՝ Բուենոս Այրեսում Ֆրանսիայի նախարար պ. Գոսսենին

Հ. թիվ 266:

Փարիզ, 31-ը հուլիսի 1918 թ., ժ. 22.30-ին:

Խորհրդի պ. նախագահը, Ռազմական նախարարը հենց նոր ինձ հայտնեց, թե որքան նպատակահարմար կարող էր լինել Արգենտինայում հայկական զինվորագրման կազմակերպումը:

Այն պահին, երբ Միացյալ Նահանգների հայերի ընդգրկումն ամերիկյան բանակում գրեթե կատարելապես ցամաքեցնում է Արևելյան լեգեոնի կամավորների զինվորագրման հիմնական աղբյուրներից մեկը, մի պարտադրող շահագրգռվածություն է ծառանում, այն է՝ հարկ է շատ շտապ շարունակություն տալ պ. Կլեմանտյի՝ այս հարցի շուրջ դրսևորած

ցանկությանը, որին ինձ տեղեկացրել է:

Հայկական պատվիրակության նախագահը, որին ես հոգացել եմ այս հարցը հարուցել, ինձ տեղեկացրեց, որ հենց նոր է գրել՝ Բուենոս Այրեսի հայկական համայնքի կրոնական առաջնորդ, հայր Բաղդասարյանին և պ. {արոնայ}ք Հակոբյան Հմայակին, Մեծատուրյան Մեծատուրին և Ջեյթունյանին՝ ձեր նստավայրում գտնվող երևելի հայ վաճառականներին, որպեսզի նրանց հանձնարարի զինվորագրման համար հայկական կոմիտե ստեղծել:

Այս հարցի շուրջ անձամբ ես ձեզ հղել եմ մի ճեպագիր՝ հուլիսի 21-ի թվակիր և 56 համարի ներքո²: Առանց սպասելու այդ ճեպագրի տեղ հասնելուն, բարեհաճեք հաղորդակցվել վերոհիշյալ անձանց հետ, որքան հնարավոր է արագ, զինվորագրման կոմիտե կազմավորելու նպատակով, որին նվիրված է սույն հեռագիրը:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, Turquie, tome 68, f. 99).

664

Ասիա-Օվկիանիայի փոխվարչության ծանուցագիրը³

6-ը օգոստոսի 1918 թ.:

Ես կարծում եմ, որ դուք հետաքրքրությամբ կընթերցեք սրան կից նամակները, որոնք ինձ է հանձնել Պողոս Նուբարը: Կարելի է ենթադրել, որ դու կտոր Բարթոնի կովանները գնահատել է պ. Վիլսոնը և որ այս վերջինը կորդեզրի «միսիոներների» տեսակետը:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, Turquie, tome 138, f. 48).

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

I

Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշան՝ Արտաքին գործերի նախարարությունում Ասիայի փոխտնօրեն պ. Ժան Գուին

Ն:

Փարիզ, 3-ը օգոստոսի 1918 թ.:
(Ստացվել է Ասիայի փոխվարչ. (ությունը) օգոստոսի 5-ին):

Ես հաճույքով պատասխանում եմ ձեր խնդրանքին, ձեզ փոխանցելով սրան կից, իբրև

1 Այդ բորակցության մասին տե՛ս վերը թիվ 659 փաստաթուղթը:
2 Արտատպված չէ:
3 Նախատեսված է պ. դը Մարթերիի համար:

զաղտնիք, այն նամակի պատճենը¹, որը դիտարկելու համար հարկադրված եմ նաև իմ պատասխանը²:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, *Turquie*, tome 138, f. 49).

II

Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշան՝ դոկտոր Ջեյմս Բարթոնին

Ն: Գաղտնի:

Հեռագրեր, 7-ը հուլիսի 1918 թ.:

Ես պատրաստվում էի գրել ձեզ՝ շնորհակալություն հայտնելու համար մայիսի 21-ի ձեր նամակի առիթով, երբ այսօր մի գրություն ստացա դոկտոր Գիբբոնսից, որով նա ինձ տեղեկացնում է գնդապետ Ռուզվելտին հղած ձեր նամակի մասին և ինձնից հարցնում իմ կարծիքը:

Ես կարիք չունեմ ձեզ ասելու, թե ինչպիսի մեծ հետաքրքրությամբ եմ ընթերցել ձեր հիասքանչ նամակը, որը մեկ անգամ ևս ինձ հավաստում է հայերի հանդեպ ձեր հոգածությունը և նրանցից կոտորածների ցանկացած նոր սպառնալիք վանելու մտահոգությունը:

Ինչ վերաբերում է Թուրքիային պատերազմ հայտարարելուց խուսափելուն ուղղված ձեր ջանքերին, ես ամբողջությամբ գնահատում եմ այն կովանները, որոնց վրա դուք հիմնվում եք և անձամբ ընդունել եմ, ի դեպ, առաջին իսկ օրերից և հատկապես այդչափ չեզոքաբար արված այն բացատրությունները ստանալուց հետո, որոնք դուք բարեհաճել եք ինձ տալ, որ հսկառակ որոշ կարծիքների, որոնք թվում է, թե ձեր դեմ են ուղղվել և որոնց արձագանքները գտել եմ մամուլում, Միացյալ Նահանգների Թուրքիային պատերազմ հայտարարելուն խոչընդոտելու ձեր ցանկությունը բացարձակապես ձեզ չի ներշնչվել թուրքական կառավարիչների կամ նրանց հանցանքների հանդեպ ունեցած փոքրագույն իսկ ներողամտությամբ, և որ անկախ այն բանից, թե Միացյալ Նահանգները Թուրքիայի հետ պատերազմի մեջ կլինեն, թե ոչ, դուք մտադրվել եք վերջնական կարգավորման ժամանակ խնդրել, որ հայերը, ինչպես և ոչ մահմեդական բոլոր ազգությունները, կատարելապես ազատագրվեն բուրքերի յուրաքանչյուր գերիշխանությունից, նույնիսկ անուղղակի:

Ձեր ծրագրից, ես դրանում համոզված եմ, միաժամանակ ձեր նշանավոր հախազակի ծրագիրն է և հենց այս է, որ մեզ հավատ է ներշնչում ապագայի հանդեպ, չնայած այն սարսափելի դժբախտություններին, որոնք մեզ ընկնում են, և չնայած բուրքերի նոր ներխուժմանը Հայաստանի ու Կովկասի ներկայումս ազատագրված նահանգները:

Ես հենց նոր ձեզ ասացի, որ գնահատում եմ այն կովանների հզորությունը, որոնց վրա դուք հիմնվում եք. այդուհանդերձ, դուք պետք է համաձայնվեք ինձ հետ, դրանք բոլորը չէ, որ համարժեք են և ոչ էլ հավասարապես անառարկելի: Բայց դրանցից մեկը գերազանցում է մյուս բոլորին և միայն դա բավական է, ամբողջությամբ արդարացնելու համար ձեր այն

1 Արտատպված չէ:
2 Ստորև հավելվածում է:

թեզը (դա ձեր տասներորդ փաստարկն է), որից բխում է, թե պատերազմական ներկա իրավիճակում Միացյալ Նահանգների համար անհնար է գորքեր ուղարկել որևէ այլ վայր, քան արևմտյան ռազմաճակատ, որտեղ վճռվում է աշխարհի ճակատագիրը: Միանգամայն օրինաչափ է, որ Միացյալ Նահանգների դաշնակիցները՝ Անգլիան, Ֆրանսիան և Իտալիան համառեն, որպեսզի նրանց տրամադրության տակ գտնվող բոլոր ուժերն ամենահրատապ ձևով իրենց օգնության հասնեն Ֆրանսիայի և Իտալիայի երկու ռազմաճակատներում, քանզի դրանք ներկայումս կենտրոնական տերությունների առեղծվածի ճնշման տակ են, որոնք բուլրովին վերջերս հզորացել են բուլշևիկների դավաճանության հետևանքով Ռուսաստանից վերադարձած մեկ միլիոն զինվորներով:

Այս պայմաններում, Թուրքիային պատերազմ հայտարարելը և այդ պարզունակ հայտարարությամբ սահմանափակվելը, մնալով անգործունյա մինչ այն պահը, երբ նրան հաղթելու համար հնարավոր կլինի նրա դեմ բավարար ուժեր ուղարկել, կլինի ոչ միայն սխալ, ինչպես դուք այդ մասին միանգամայն իրավամբ ասում եք, այլև ամենավտանգավոր քայլերից մեկը, որին և ոչ մի կառավարություն չի ցանկանա ձեռնամուխ լինել, առանց իրադարձությունների թելադրանքով հարկադրված լինելու դրան դիմել: Բայց փոխարենը, գործողություններն այլ ընթացք կընդունեն այն օրը, երբ այդ իրավիճակը փոփոխություն կրի և այն հրաշալի եռանդը, որը Միացյալ Նահանգներն այժմ գործադրում են և որի արդյունքները գերազանցել են անգամ ամենավատեսական կանխատեսումները, փոքր անց դաշնակիցներին ընձեռի օգնության կի մեծ գերակշռում: Քանի որ նույնիսկ այդ գերազանցությունը չի բույլատրի, հավանաբար, ջախջախել գերմանական ռազմաճակատը, այնպես, ինչպես գերմանացիները չկարողացան ջախջախել դաշնակիցների ռազմաճակատը վերջին գրոհների ընթացքում, ուր նրանք կենտրոնացրել էին իրենց բանակների ամբողջ ուժը, ես չեմ վարանի վստահեցնել, որ այդժամ շահավետ կլինի Թուրքիային պատերազմ հայտարարելը՝ ուղարկելով ոչ թե 500000, այլ 2-ից 300000 մարդու, որոնք լիովին բավարար կլինեն Միջագետքի և Պաղեստինի անգլիական բանակների հետ մեկտեղ հաղթելու թուրքերին: Դա կլինի ամենասուրազ և ամենաարդյունավետ միջոցը համաշխարհային պատերազմին վերջ տալու համար:

Այսօր Թուրքիային իրեն համարում է հաղթանակած կողմ: Բուլշևիկների դավաճանության և ռուսական զորքերի նահանջի հետևանքով հայկական նահանգները, ես չեմ ասում վերանվաճելուց, այլ վերագրավելուց հետո, թուրքերը վերագրավել են Կովկասի ամբողջ արևմտյան մասը և ամեն օր ավելի են առաջանում Պարսկաստանում: Նրանց հավակնություններն այլևս սահմաններ չունեն: Միայն ուժն ու նրանց բանակների պարտությունն է, որ կկարողանան նրանց պարտադրել դաշնակից տերությունների հաշտության պայմանները և միայն այդ ժամանակ է, որ վերջիններս կարող են հասած լինել իրենց նպատակներից մեկին՝ Թուրքիայում՝ ճնշված ժողովուրդների ազատագրմանը: Սակայն թուրքական պարտությունը պատերազմից դուրս կմղի ոչ միայն Թուրքիային: Իբրև առաջին հետևանք, այն կարող է հաշտության հանգեցնել Բուլղարիայի հետ, որովհետև այն, ինչ պ. Ռուզվելտին հղած ձեր նամակի երրորդ պարագրաֆում դուք ասում եք բուլղարացիների մասին, կիրառելի է նաև թուրքերի նկատմամբ, և եթե ճիշտ է, որ Բուլղարիային դուրս բերելով պատերազմից, դրանից դուրս կբերվի Թուրքիան, նույնքան էլ ճիշտ է, որ Թուրքիայի պարտությունից ու գործին անհաղորդ դառնալուց հետո, Բուլղարիան իր հերթին հաշտություն կխնդրի, որը կվճռի պատերազմի ելքը: Ինձ համար դա այնքան ակնհայտ է, որ ես, գրելով ձեզ, զգում եմ, թե ինչպես է սիրտս սեղմվում այն մտքից, որ այս պահին դա միայն երազ է, և որ արևմտյան ռազմաճակատի համառ պահանջները ձեր կառավարությանը թույլ չեն

տա ունենալ 2-ից 300000 մարդ՝ հաղթելու համար թուրքերին: Բայց ևս մեկ անգամ ես ընդունում եմ այդ անհնարիմությունը ներկա հանգամանքներում և դրանից, ձեզ հավաստիացնում եմ, սարսափելի տագնապ եմ ապրում:

Ընդունեք, իմ քանկազին դ{ոկտո}ր Բարթոն, իմ վերին աստիճանի նվիրական զգացումների նոր հավաստիքը:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, *Turquie*, tome 138, ff. 54-57).

Վաշինգտոնում Ֆրանսիայի դեսպան պ. Ժյուստերանը՝ Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին

Հ. թիվ 1058:

Վաշինգտոն, [անթվակիր]:
(*Ստացել է Քաղ. վարչ.* 1918 թ. օգոստոսի 8-ին):

Թիվ 964 իմ հեռագրի շարունակությունը¹:

Ես պետական քարտուղարի տեղակալին² համապատասխան լույսի ներքո ներկայացրի այն կարևորությունը, որը Խորհրդի նախագահը հատկացնում է Արևելյան լեզոնի համար Միացյալ Նահանգներում հայերի զինվորագրման հարցի բարենպաստ կարգավորմանը:

Պետական քարտուղարի տեղակալը, որի շնորհիվ պետական Դեսպարտամենտի և Ռազմական նախարարության իրավասու ծառայությունները ձեռնամուխ են եղել այդ գործի ուսումնասիրությանը, ինձ ասաց, թե, ցավոք, շատ է երկյուղում, որ հնարավոր չլինի մեզ բավարարել: Միացյալ Նահանգները Թուրքիայի հետ պատերազմի մեջ չեն գտնվում, և դաշնային կառավարությունը չի ձեռնարկի որևէ գործողություն, որը նրա նկատմամբ թշնամական բնույթ կրի: Մենք կկարողանանք, ասաց նա ինձ, թույլատրել Միացյալ Նահանգներում բնակվող հայերին մեկնել՝ ընդգրկվելու Արևելյան լեզոնի կազմում³, բայց չենք կարող հրապարակայնորեն նրանց քաջալերել, ոչ էլ մեր բանակից ազատ արձակել նրանց, ովքեր ընդգրկվել են օրինականորեն, և թույլատրել գնալ մարտնչելու օսմանյան հողի վրա:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, *Turquie*, tome 68, f. 107).

1 1918 թ. հուլիսի 25-ի. արտատպված չէ:

2 Պ. Ֆրանկ Լ. Փոլը:

3 Ամերիկյան բրեական օրենսգրքի 10-րդ հոդվածն արգելում է Միացյալ Նահանգներում արտասահմանյան զինծառայության համար զինվորագրում անցկացնել. այս հոդվածը, որում լրացումներ է մտցրել 1917 թ. մայիսի 7-ի օրենքը, բացառություն է անում այն արտասահմանցիների համար, որոնք չեն հայտարարել ամերիկացիներ դառնալու իրենց մտադրության մասին:

Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշան՝ Արտաքին գործերի նախարարությունում Ասիայի փոխտնօրեն պ. Ժան Գուին

Ն:

Փարիզ, 10-ը օգոստոսի 1918 թ.:
(*Ստացել է Ասիայի փոխվարչ{ությունը}* օգոստոսի 10-ին):

Ես շտապում եմ անհուն անկեղծությամբ ձեզ շնորհակալություն հայտնել այն ճեպագիրն ինձ փոխանցելու համար, որը մեզ տեղեկացնում է, թե անգլիացիները վերագրավել են Ռետշը¹, իսկ հայերը Բաքվում շարունակում էին դիմադրել մինչև օգոստոսի 3-ը:

Այնժամ, թող Աստված կամենա, որ անգլիացիները կարողանան ծովով ժամանել նրանց օգնության հասնելու համար:

Ինձ հայտնել են Կովկասին վերաբերող մի հոդվածի մասին, որը լույս է տեսել «Զրոյց-ցայթունգում» վերջին հուլիսի 16-ին և որի թարգմանությունը տվել է ձեր «Բյուլետեն դը լա պրես էտրանժերը» հուլիսի 26-ին (թիվ 877):

Արդյոք անհամեստ կլինի ձեզնից խնդրել այդ թարգմանության փոխանցումն այն պարագայի համար, երբ մեզ համար շահավետ լինի դրա մասին խոսել մեր «Լուս դը Լ'Արմենի» հանդեսում:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, *Caucase-Kurdistan*, tome 2, f. 141).

Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշան՝ Արտաքին գործերի նախարարությունում Ասիայի փոխտնօրեն պ. Ժան Գուին

Ն:

Փարիզ, 10-ը օգոստոսի 1918 թ.:
(*Ստացել է Ասիայի փոխվարչ{ությունը}* օգոստոսի 12-ին):

Իբրև այն տեղեկության շարունակություն, որը դուք բարեհաճել եք ինձ հայտնել Ամերիկայի հայ կամավորների առիթով, ես ձեզ եմ հանձնում սրան կից Միացյալ Նահանգներում գտնվող մեր ներկայացուցիչ պ. Սևալիից հենց նոր ստացված նամակի պատճենը²:

1 Sic. Իմա՝ Ռեշտ:

2 Արտատպված չէ: Պ. Սևալին գրում է անգլերեն լեզվով, որ Ամերիկայի հայկական ազգային միությունը սպասում է Ֆրանսիայի կառավարության, և անհրաժեշտության դեպքում, Բրիտանիայի կառավարության հրապարակային հայտարարությանը, որը ճանաչի հայերի իրավունքներն ազգային ինքնավարություն ստանալու հարցում:

Ինչպես դուք այդ կտեսնեք, կան 4-ից 5000 հայ, որոնք ընդգրկված են ամերիկյան բանակում և, դժբախտաբար, Միացյալ Նահանգների Ռազմական նախարարությունը հակադրվում է, որ այս հայերը և բացի դրանից՝ ինչպես նրանք, ովքեր դեռևս միայն քաղաքացիություն ընդունելու խնդրանքով են դիմել, այնպես էլ նրանք, ովքեր արդեն քաղաքացիություն են ընդունել, թողնեն ամերիկյան գնդերն Արևելյան լեգեոնում ընդգրկվելու համար:

Վաշինգտոնում Ֆրանսիայի դեսպանությունը, որին մեր լիազոր ներկայացուցիչները դիմել են այս կապակցությամբ, նրանց պատասխանել է, որ ինքն այս հարցի շուրջ որևէ հրահանգ չի ստացել ձեր Գեպարտամենտից:

Ճիշտ է, որ ամերիկյան Ռազմական նախարարությունը չի հակադրվում այն հայերի տեղափոխմանն Արևելյան լեգեոն, որոնք ամերիկյան բանակում ծառայում են իբրև կամավոր զինվորագրվածներ, բայց ըստ պ. Սևասլիի գրածի՝ նրանք, դժբախտաբար, խիստ սակավաթիվ են:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, *Turquie*, tome 68, ff. 109-109 v).

668

Բեռնում Ֆրանսիայի դեսպան պ. Դյուտաստան Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին

Ճ. թիվ 850:

Բեռն, 10-ը օգոստոսի 1918 թ.:
(*Ստացել են* Կաբինետը օգոստոսի 12-ին, Զադ. վարչ. օգոստոսի 13-ին):

Վերջին հուլիսի 17-ին¹, Ժնևում մեր գլխավոր հյուպատոսը² գերմանա-հայկական բանակցությունների հարցի շուրջ սրոշ տեղեկություններ է ուղարկել Ձերդ գերազանցությամբ, որոնց դուք ինձ տեղեկացրել եք:

Այդ տեղեկատվությունները շարունակելու համար, ես պատիվ ունեմ Ձերդ գերազանցությանն իրազեկել, որ Բեռնի օսմանյան պաշտոնական շրջաններում ասեկոսեներ են տարածվում, թե մի քանի ամիս առաջ Գերմանիայի կառավարությունը, տազմապաժ Կոստանդնուպոլսում տարածված զավթողական գաղափարներից, վճռել է անհաջողության մատնել Կովկասում պանթուրքական քաղաքականությունը: Այդ նպատակով, նա գեներալ Քրեսի գլխավորությամբ մի առաքելություն է ուղարկել Թիֆլիս: Վերջինս Կովկասի հայկական, վրացական և նույնիսկ մահմեդական առաջնորդներին հասկացրել է, որ եթե հաշվի առնենք նրանց մեկուսացումը, թուլությունն ու ներքին տարածայնությունները, ապա նրանք չեն հասպաղի դառնալ թուրքերի զոհը: Բայց եթե նրանք ցանկանան դիմել Գերմանիային, վերջինս կարող է հակված լինել նրանց գործն իր ձեռքը վերցնելու և այն թուրքերից պաշտպանելու: Այս գրույցների արդյունքում, կովկասյան առաջնորդները պետք է ընդունած լինեն, որ այս տարածաշրջանների համար կառավարման ամենատրամաբանական եղանակը դաշնային հանրապետությունն է՝ բաղկացած Հայաստանի, Վրաստանի և

¹ Տե՛ս վերը թիվ 653 փաստաթուղթը:
² Պ. Պրավունը:

Ադրբեջանի երեք հանրապետություններից:

Այնուհետև՝ Գերմանիայի կառավարությունը ցանկանալով, այդուհանդերձ, խնայել իր բուրբ դաշնակիցներին, կարող է հուշած լինել այս երեք հանրապետությունների ներկայացուցիչներին՝ Գերմանիայի միջնորդությունը հայցելու առաքելությամբ Բեռլին ուղարկել լիազոր ներկայացուցիչների. որպեսզի իմնավորի, որ այս գործում վերջինս որևէ նախաձեռնություն չի ունեցել, այլ իրեն խնդրել են հետաքրքրվել դրանով: Դեռ ավելին, շարունակելով փայփայել միևնույն գաղափարը, Գերմանիայի կառավարությունը, կովկասյան լիազոր ներկայացուցիչների՝ Բեռլին ժամանելուն եթ, հուշել է, որ նախատեսված կոնֆերանսը պետք է ավելի շուտ գումարվի Կոստանդնուպոլսում, որպեսզի դրանով իսկ ընդունի այն գերակշռող դերը, որն այդտեղ իրականացնելու համար կոչված էր Թուրքիան:

Այդուհանդերձ, թուրքերն այս խորամանկությունից չեն կարող խաբված լինել և այդ ժամանակից սկսած, նրանց անվստահությունը Գերմանիայի հանդեպ միայն աճել է:

Ամեն դեպքում, ներկայումս Բեռլինում կարող են գտնվել կովկասյան երեք պատվիրակություններ. մի վրացական, որի ղեկավարն Արտաքին գործերի նախարար Չխենկելին է, մի հայկական և վերջապես մի պատվիրակություն Ադրբեջանից: Նրանց բուն նպատակը գերմանացիների հետ Կովկասի վերակառուցման հիմունքները սահմանելն է, այնուհետև՝ Կոստանդնուպոլիս գնալը՝ մասնակցելու համար մի կոնֆերանսի, որտեղ ներկայացված կլինեն դաշնակցային բոլոր խմբավորումները, բայց որն իրականում լինելու է միայն ներկայացում՝ նախատեսված Թուրքիայի ինքնասիրությունը պահպանելու համար:

Ես այս ճեպագրին եմ հավելում թուրքական մամուլից արված տարբեր քաղվածքներ, որոնք վերաբերում են կովկասյան հարցին¹, ինչպես նաև նշումներ որոշ անձանց մասին, որոնց անունները հղվում են այս առիթով:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, *Caucase-Kurdistan*, tome 2, ff. 145-146).

ՀԱՎԵԼՎԱԾ

1918 թ. հունիսի 27-ին «Վաքիթում» լույս տեսած հոդված

Հայաստանը

Ըստ որոշ հայերի դիրքորոշման՝ Հայկական հարցը հանգում էր Կովկասից Աղանա ձգվող Մեծ Հայքի կազմավորմանը: Անգլիացիների համար, որոնք հայերի հովանավորների դերի մեջ էին մտել, Հայկական ուղիքը չունեի որևէ այլ նպատակ. քան դեպի Ալեքսանդրետ և Պարսկաստան՝ ռուսների ստաջիտացման համար խոչընդոտ ստեղծելը: Փոխարենը, Ռուսաստանը մտորում էր նախ՝ մինչև Ալեքսանդրետ ձգվող մեր տարածքը Հայաստանի վերածելու և այնուհետև՝ այս նոր պետությունը տրորելու մասին, որպեսզի վերջապես հասնի Սյեբերկական ծովի ափին: Հայերը դարձան այս երեք ծրագրի առաջին զոհը: Մենք դարձանք երկարը գոհը: Եթե հայերը տուրք չտային ռուսների և անգլիացիների սադրանքներին, եթե նրանց միտքը բոլոր եղանակներով չպղտորվել, նրանք տարիներ ի վեր իրենց չէին ենթարկի աստիճանական ինքնասպանության և այսօր երկրում կձևավո-

¹ Մենք արտատպել ենք միայն հայերին վերաբերվող հոդվածը. տես ստորև հավելվածում:

րեին բազմաքանակ, երջանիկ ու հարգանքի արժանի տարր:

Մենք գրեթե նույնքան, որքան և հայերը տառապել ենք բոլոր մեքենայություններից. վերջիններս խախտելով երկրում տիրող խաղաղությունը, խանգարում էին ոստիկանությանն իր ներկայությունն անհրաժեշտ դարձնելու հեռավոր վիճակներում և խոչընդոտելու միևնույն տարածաշրջանի տարրերի միջև, որոնք սկսում էին մեկը մյուսի հանդեպ վստահություն չտածել, յուրօրինակ թշնամանքների հարուցող քաղաքացիական պատերազմների բռնկմանը: Այսպիսով, պետք չէ այս փաստերի պատասխանատվությունը բարդել այս կամ մեկ այլ կուսակցության վրա: Այս իրավիճակի բուն պատասխանատուները նրանք են, ովքեր այս երկպառակության հարուցիչներն էին սերմանում և նպաստում դրանց բարգավաճմանը, այն է՝ նախ՝ անգլիացիները, ռուսները և հայ հեղափոխականները, իսկ այնուհետև՝ նախկին վարչակարգը: Եթե երեսուներեք տարի շարունակ երկրում չգործեր այնպիսի կույր կառավարություն, ինչպիսին էր Աբդուլ Համիդի կառավարությունը, հավանական է, որ երկու տարրերի միջև հնարավոր լիներ վերածնել վստահությունը, որոնց դավադիր մեքենայությունները դարձրել էին թշնամի: Իրավիճակն այդ թույլ էր տալիս. երկու տարրերը միմյանց ճանաչում էին և ընտելացել էին մեկը մյուսին: Եթե նրանց համար հնարավոր լիներ միասնաբար պայմանավորվածության հանգել հրապարակային քննարկումների միջոցով, ոչ մեկը չէր կարողանա նրանց տարանջատել: Այս անհնարինությունն էր, որն այդքան երկար ժամանակ խախտեց խաղաղությունն ու անվտանգությունը Թուրքիայում:

Բայց այս հարցի պատճառած միակ վնասը դրան չէր հանգում: Հայկական հարցի ծագումը գրկում էր երկիրն ամենաարժեքավոր և ամենակարող տարրի օգնությունից: Ոչ ոք չի կարող ժխտել, որ հայերը բազում ծառայություններ են մատուցել մեր երկրում եվրոպական գաղափարների և հաստատությունների տարածմանը:

Չնայած մեր երկրի հասարակական կյանքում Հայկական հարցի ունեցած վատթար հետևանքներին, մենք հայերի հանդեպ որևէ թշնամանք չունենինք: Առ այսօր ի հայտ եկած բոլոր իրադարձությունները եղել են երկու կողմերի հսկողության բացակայության, ինչպես նաև օտարերկրացիների իրահրած գերլարվածության արդյունքը: Եթե այդչափ դառը փորձություններից հետո գործն ավարտին հասցվի երկու կողմերին պայմանավորվածության հանգեցնելով, և ամբողջ հարցը լրջորեն ու վերջնականապես կարգավորելու ցանկության դրսևորմամբ, այդ կնշանակի, որ վերջ է տրվել օտարերկրյա մեքենայությունների ազդեցությանը: Լավագույն փաստը, որ մենք հայերի նկատմամբ որևէ թշնամանք չենք տածում, հենց այն է, որ մենք առաջիններն ենք քաջալերում հայկական անկախ պետության կազմավորումը: Այսօր մենք ուրախությամբ և ողջամտորեն սատարում ենք հայկական ձգտումները, որոնք դեռևս երեկ, մեր շրջանում համընդհանուր կասկածամտության պատճառն էին իրենց անհեթեթ և ցնորական տեսքով:

Հայերն առաջինները պետք է ըմբռնած լինեն այն չարիքները, որոնց հանգեցնում է հնազանդությունը սաղրանքներին և անիրազորելի քնահաճույքներին: Նրանք հասկացել են, որ տերությունները, որոնք նրանց հրահրում էին, չունեին որևէ այլ շարժառիթներ, քան իրենց սեփական շահերը:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, *Caucase-Kurdistan*, tome 2, ff. 170-172).

Պ. Մկրտչյանը՝ Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշային

Հ. թիվ 161՝:

Ալեքսանդրիա, 11-ը օգոստոսի 1918 թ.,
ժ. 11.35-ին:

Արդյո՞ք դուք կարծում եք, որ հայկական բոլոր գաղութները պետք է բողոք ներկայացնեն Ազգային պատվիրակությանն այն հաշտության առիթով, որը գերմանա-թուրքերն են պարտադրում Թիֆլիսի Ազգային խորհրդին: Խնդրվում է հեռագրով հրահանգներ ուղարկել:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, *Caucase-Kurdistan*, tome 2, f. 195).

Պաղեստինում Ֆրանսիայի Գերագույն կոմիսարի պարտականությունների ժպ, կապիտան Կուլոնդրը՝ Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին

Ճ. թիվ 79:

Երուսաղեմ, 15-ը օգոստոսի 1918 թ.:
(Ստացել են Կաբինետը և
Զաղ. վարչ. սեպտեմբերի 2-ին):

Հուլիսի 14-ի շքերթի հաջորդ օրը, որին մասնակցեց Արևելյան լեգեոնի զունդը, ես նպատակահարմար գտա մի ուղերձ հղել Եգիպտոսի հայկական կենտրոնական կոմիտեին, որպեսզի շնորհավորեն նրան այս ստորաբաժանման գեղեցիկ պահվածքի կապակցությամբ և նրան հայտնեն այն ցանկությունները, որոնք Հանրապետության կառավարությունը տածում է Հայաստանի մոտալուտ ազատագրման առիթով:

Ես պատիվ ունեմ այս ծրարով Ձերը գերագանցությանը փոխանցել այն շնորհակալական հեռագրի պատճենը, որն ինձ է հղել այդ կոմիտեի նախագահը²:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, *Turquie*, tome 68, ff. 114-114 v).

1 Պողոս Նուբար փաշան Քեղ'Օրսեին է հանձնել օգոստոսի 14-ին:
2 Դոկտոր Ներսիսը: Մենք չենք արտասպան խնդրո առարկա՝ 1918 թ. հուլիսի 17-ի թվակիր հեռագիրը:

Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշան Խորհրդի նախագահ, Ռ-ազմական նախարար պ. Կլեմանտյին

Ն:

Փարիզ, 16-ը օգոստոսի 1918 թ.:
(Ստացել է Քաղ. վարչ. օգոստոսի 16-ին):

Լրագրերն այսօր հայտնում են, որ քրիտանական բանակի առաջին զինված անճնակազմը, որին այդչափ տանջալից անհանգստությամբ էին սպասում Կովկասի հայ մարտիկները, ափ է ելել Բաքվում: Մերոնց վիճակն, այսպիսով, մեծապես կբարելավվի պաշտպանության տեսակետից: Բայց այն հեռագրերը, որոնք ես ստանում եմ, մեզ իրազեկ են դարձնում, որ բնակչության կենսական պայմանները սարսափելի են, և նա ամբողջությամբ սովից կոտորվելու սպառնալիքի տակ է:

Բոլոր երկրների հայերը, պատերազմի չորս տարվա ընթացքում դիմելով ամենամեծ զոհաբերությունների, ուղարկել են այն բոլոր դրամական միջոցները, որոնք մարդկայնորեն հնարավոր է եղել ժողովել իրենց շրջանում: Եվ Կովկասի իմ հայրենակիցները կարող են այսօր օգնություն ակնկալել միայն դաշնակիցներից:

Դուք հենց նոր, պարոն նախագահ, այնքան գեղեցիկ նամակով, որն ինձ հղելու պատվին եք արժանացրել և որը խրախուսել է բոլոր հայերին, հայ ազգի դրսևորել եք ձեր հոգածության նոր վկայությունը, և ես ցանկանում եմ հույս տաձել, որ դուք իրավացի կհամարեք դրամական այն միջոցներից, որոնք Ֆրանսիան և նրա դաշնակիցներն արդեն վճռել են հատկացնել հայերի միջոցով Կովկասի ռազմաճակատի պաշտպանությանը, առանձնացնել բավականաչափ գումար՝ հանուն այն բնակչության փրկության, որը հազիվ խույս տալով կոտորածների սպառնալիքից, առանց այդ միջոցի կոչնչանա սովից:

Ես նույն խնդրանքն եմ հղում Բրիտանական Նորին մեծության կառավարությանը, որը, ես վստահորեն հույս եմ տաձում, չի ցանկանա, ինչպես և ձեր կառավարությունը, հրաժարվել իր օգնությունը ցուցաբերել Անդրկովկասի միակ ազգությանը, որը դեռևս կռվում է դաշնակիցների հետ միասին և որոնց հաղթանակը նրան կընձեռի նրա ազատագրումը:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, Arménie, tome 1, ff. 100-100 v).

**Խորհրդի նախագահը, Ռ-ազմական նախարարը՝
Կովկասում ֆրանսիական ռազմական առաքելության
ղեկավար, փոխգնդապետ Շարդինյիին**

Հ. քիվ 11197/3: Գաղտնի:
[Պատճենը]:

1 Ստորագրել է գեներալ Մարզոն:

Առաջին. դեկտեմբերի 17-ին ձեր տրամադրության ներքո է դրվել 20000000 ռուբլու վարկ՝ Կովկասում հայկական զորքեր կազմակերպելու համար:

Երկրորդ. այս վարկերի օգտագործմանն ինձ տեղեկացնելու համար, իրազեկ դարձրեք հեռագրով:

ա/ այն ընդհանուր գումարներին, որոնք դուք առձեռն ի մի եք բերել:

բ/ ըստ կետերի՝ արդեն արված ծախսերին:

գ/ ձեր ներկա հնարավորություններին:

Հաստատեք այս տեղեկությունները նամակով, դրանք համալրելով ապացուցող փաստաթղթերով:

Երրորդ. հետագայում ուղարկեք միևնույն հիմունքներով կազմված ամսական բալանսը հեռագրով և փոստով:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, Arménie, tome 1, f. 101).

**Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշան՝ Արտաքին գործերի նախարարությունում
Ասիայի փոխտնօրեն պ. Ժան Գուին**

Ն:

Հեններոն (Մորքիան), 18-ը օգոստոսի 1918 թ.:

Դուք գալով պ. Պիշոնի մոտից՝ ես հարկադրված եղա անմիջապես կայարան գնալ, որպեսզի հասնեմ իմ գնացքին: Դա ինձ թույլ չտվեց, որ գամ ձեզ մոտ՝ շնորհակալություն հայտնելու այս ընդունելությունը կազմակերպելու կապակցությամբ, որով հիացած էի:

Պ. Պիշոնն ինձ հավաստիացրեց հայերի հանդեպ տաձվող իր ամբողջ շահագրգռվածության հարցում և ասաց այնպիսի բաներ, որոնք ես երջանիկ եղա լսելու:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, Arménie, tome 1, ff. 104-104 v).

Պ. Վահե Նաֆիլյանը՝ Սենի պատգամավոր պ. Ալբեր Տոմասին

Ն:

Լո Վալ-Անդրե, 28-ը օգոստոսի 1918 թ.:

Այն հուշագիրը, որը հարկ էր ներկայացնել պ. Պիշոնին, պատրաստ էր նրան հանձնելու համար: Եթե ես այն դեռևս ձեզ չեմ ուղարկել, ապա այն պատճառով, որ Վարանդյանից հրահանգներ եմ ստացել, համաձայն որոնց նա դրանում որոշ փոփոխություններ անե-

լու կարիքն ունի, քանզի Կովկասից ստացել էր միանգամայն քարն տեղեկություններ:

Ես շատ եմ ափսոսում, որ ձեզ տեսակցելն անհնար եղավ նախքան Վալ-Անդրե մեկնելը, որտեղ նկատի ունեմ մնալ դեռևս հինգ կամ վեց օր և ներողություն եմ խնդրում հուշագրի հանձնումն ուշացնելու համար, որն, ի դեպ, իմ անփութությամբ չէ պայմանավորված:

Փոփոխության ենթարկվող քաղաքականության հետևանքով ես մոռացության չեմ տվել Համաձայնության սոցիալիստական կոմիտեի քաղաքականությունը և հղում եմ իմ ողջույնները նրա բոլոր անդամներին, իսկ անձամբ ձեզ, ընկեր՝ իմ նվիրական համակրանքի հավաստիքը:

(A.N., 94 AP 409).

**Արտաքին գործերի նախարարը՝ Խորհրդի նախագահ,
Ռազմական նախարար պ. Կլեմանտյին**

Ճ. թիվ 3368: Հրատապ:

Փարիզ, 29-ը օգոստոսի 1918 թ.:

(Ստացել է Կարիները օգոստոսի 30-ին):

Հիմնվելով, մասնավորապես, հունիսի 6-ի ձեռնագրի¹ և այս ամսի 3-ի մի հաղորդագրության² վրա, ես պատիվ ունեմ ձեզ հղել սրան կից Վաշինգտոնում Ֆրանսիայի դեսպանի հեռագրի³ և Հայկական պատվիրակության նախագահի նամակի պատճենները, որոնք վերաբերում են Միացյալ Նահանգներում հայկական զինվորագրման հարցին⁴:

Դժբախտաբար, թվում է, թե այս փաստաթղթերում պարունակվող վկայություններից հետևում է, որ բացառությամբ կամավոր հիմունքներով զինվորագրվածների, Վաշինգտոնի կառավարությունը հակված չէ դաշնային բանակում արդեն ընդգրկված հայերին, և նրանց, ովքեր դրսևորել են ամերիկյան քաղաքացիներ դառնալու ցանկություն, թույլատրել ծառայելու Արևելյան լեզեոնում:

(A.M.G., Levant 2 L.O.).

1 Ստորագրել է պ. Գուն:
2 Վերն արտատպված է թիվ 631 փաստաթղթում:
3 Չի հայտնաբերվել:
4 Խոսքը վերաբերում է թիվ 1058 հեռագրին, որը ստացվել է օգոստոսի 8-ին: Ցեւ ստորև թիվ 665 փաստաթուղթը:
5 Այս գործի մասին տե՛ս վերը թիվ 667 փաստաթղթում արտատպված նամակը:

**Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնը՝
Սենի պատգամավոր պ. Ալբեր Տոմասին**

Ն:

Փարիզ, 30-ը օգոստոսի 1918 թ.:

Դուք բարեհաճել եք տեղեկացնել Արխանգելսկում դաշնակիցների գորքերի ափ ելնելու պահին կազմավորված ժամանակավոր կառավարության հռչակագրի ընթերցման հետևանքով ռուսական ծայրամասերի ժողովուրդներին պատկանող տարրեր անձանց համակած անհանգստության մասին:

Ձեզ ակնհայտ է թվում, որ այս ժողովուրդների ապագա կարգավիճակը կարող է սահմանվել միայն ժողովուրդների ինքնորոշման իրավունքին համապատասխան և դուք երկյուղում եք, որ գերմանական քարոզչությունը վերոհիշյալ ժողովուրդների շրջանում դաշնակիցների դեմ կօգտագործի խնդրո առարկա հռչակագրում և նույնիսկ անգլիացիների հռչակագրում պարունակվող այն արտահայտությունները, որոնք հետամուտ են ռուսական միասնության վերականգնմանը:

Ձեր կարծիքով ռուսական ծայրամասերի ազգություններին պատկանող Համաձայնության սոցիալիստական կոմիտեի անդամների տրամադրվածությունը հաշվի չառնելը խիստ սպառնալից կլինի, որովհետև կիսիզախենք տեսնելու, թե ինչպես են նրանք տատանվում դաշնակիցների կողմն անցնելու հարցում:

Այս պայմաններում, դուք ինձ խնդրում եք ճշգրտել Ֆրանսիայի կառավարության տեսակետն այս կապակցությամբ:

Քանի որ ֆրանսիական քաղաքականությունը հիմնվում է ամենակնհայտ սկզբունքների վրա, ամբողջությամբ հաշվի առնելով պատերազմի փաստը և գաղափարական բնույթի անզոչություն թույլ չտալու անհրաժեշտությունը, որն ի գործու լինի վարկաբեկելու վերջնական հաջողությունը (որն ազատության, արդարության և իրավունքի մեր սկզբունքները կիրառելու հիմնական պայմանն է), ես որևէ անվճռականություն չեմ դրսևորում այն հարցին պատասխանելու համար, որը դուք ինձ եք հղում:

Դաշնակիցների գործողության հիմունքները Եվրոպական Ռուսաստանում, ինչպես նաև Ասիական Ռուսաստանում (տարածքային ամենակատարյալ անշահախնդրությունից բացի), Ռուսաստանի ներքին գործերին չմիջամտելն է, ռուսական ժողովուրդների ինքնորոշման ազատությունը կատարելապես հարգելը (նրանց կամքի արտահայտությունն, ի դեպ, պետք է դրսևորվի ճշգրտության անառարկելի պայմաններում): Քանի որ դա հնարավոր չէր խառնաշփոթով և հալածանքներով լի այն կացության պատճառով, որին հանգել էր Ռուսաստանը՝ օրինական հիմք չունեցող և տերությունների չճանաչած կառավարության փաստի հիման վրա, դաշնակիցները գտան, որ իրենց առաջնահերթ պարտականությունը, հենց իրենց դաշնակից Ռուսաստանի շահավետության առումով (որի բոլոր խոհեմ տարրերն, իրենց հնարավոր միջոցների շրջանակում նրանց էին դիմում՝ սոսկ իրենց ներքին գործունեությամբ ազգային հավասարակշռությունը վերահաստատելու հարցում իրենց անգործությունն ընդունելուց հետո), ռուս ժողովուրդին այնպիսի կացություն հատկացնելն է, որ նա կարողանա հստակորեն ձևակերպել ժողովուրդների մեծամասնության կամքը:

Այսպիսին են մեր գործունեության կայուն, անշահախնդիր և անառարկելի հիմունքները:

րը: Սակայն այս սկզբունքներին զուգընթաց, մեր հրամայական պարտքն է փաստերը, ինչպես նաև մեր քաղաքական շահերով առաջնորդվելու անհրաժեշտությունը, որոնք ազգային պարտականություններ են, հաշվի առնելը, պատերազմի պայմաններով մտահոգվելը, որը մենք իրավասու չենք երկրորդ հարթություն մղելու, քանզի մեր սկզբունքների կիրառման առաջին պայմանը հաղթանակն է: Ժողովուրդների ինքնորոշման ազատության շուրջ սկզբունքական բանավեճերը չեն կարող հաշվի չառնել այս ժողովուրդների համար միասնական կազմակերպություն և բավական ամուր հիմք ապահովող քաղաքական գերագույն անհրաժեշտությունը, որպեսզի հնարավոր լինի պահպանել այն ազատությունը, որը նրանց կտրվի և նրանց՝ բռնակալական տերությունների գործարքների զոհը դառնալուց անպաշտպան չթողնել:

Մեր դաշնակից Ռուսաստանի միասնությունը մնում է անսասան մինչ այն ժողովուրդների կամքի դրսևորումը, որոնցից այն քաղկացած է: Նրա արժեքը մեզ համար հենց այն պաշտպանողական ուժն է, որը կենտրոնացված է նրա տարբեր մասերի միասնության շնորհիվ: Այն հեղափոխության աջակցությամբ, որի ժողովրդավարական սկզբունքները ներշնչում էին ազատության և հավասարության՝ մեր գաղափարներին համարժեք գաղափարներ, որը սակայն շուտով շեղվեց իր հունից, տուրք տալով գերմանական գերիշխանական պատվախնդրությունների համար նպաստավոր խառնաշփոթի և բռնակալության, բոլոր կապերն արձակվեցին և հարյուր ազգություններից մի քանիսը, որոնց միասնությունը ձևավորում է ռուսական ինքնությունը, ի հայտ բերեցին դեպի անկախություն տանող փոքրիշատե հստակ և ձևավորված ձգտումներ:

Արդյո՞ք մենք պետք է առանց տարբերակման, առանց քննության նպաստենք բոլորի ձգտումներին: Արդյո՞ք մենք իրավունք ունենք սատարել յուրաքանչյուրի, ով իրեն ներկայացնում է իբրև այս ազգություններից որևէ մեկի ներկայացուցիչը: Արդյո՞ք արդարացի է, արդյո՞ք խելամիտ լիազորություն չունեցող անձանց անհատական նկրտումները քաջալերել (որքան էլ որ խանդավառ և պատվարժան լինի նրանց հայեցակետը) ու Ռուսաստանի մասնատմանը նպաստելը, որը հողմացրիվ կանի այս մեծ պետության հզորությունը և, հավանաբար, այս ժողովուրդների հայեցակետին ու մթնոլորտին հակառակ՝ այն կդնի արևմուտքի նրա հարևանների տիրապետության տակ և վերջնականապես կխախտի ուժերի հավասարակշռությունը՝ նույնիսկ պարտված Գերմանիայի օգտին: Ես չեմ կարող այդ ընդունել և չեմ կարծում, որ հավասարակշռված ու խորապես հայրենասիրական փիլիսոփայական միտքը, ինչպիսին դուք ունեք, կթույլատրի տուրք տալ իրականությունից այդչափ հեռավոր ազնվաբարո տեսություններին:

Միայն հաշտությունը կթույլատրի վերահաստատել նպաստավոր պայմաններ ժողովուրդների ձգտումների ազատ, կատարյալ և վերջնական քննության համար: Որոշ հստակ պարագաներից զատ, որոնք վերաբերում են պատմական հարատևություն, ճշգրիտ սահմաններ, համախմբված ժողովուրդներ ունեցող պետություններին (ինչպես, օրինակ, Լեհաստանը), մենք չենք կարող այժմվանից իսկ, առանձին անհատների կամ թույլ խմբավորումների կոչի հիման վրա, ըստ մեր քմահաճույքի, պատվախնդրություն ունենալ սահմանազատելու Էստոնիան, Լիտվան, Ուկրաինան, կովկասյան պետությունը, ազգություններ, որոնք ո՛չ պատմական սահմաններ ունեն և ո՛չ հստակ ազգագրական անջրպետներ:

Այս պահին մենք ո՛չ իրավունք ունենք և, ո՛չ շահավետություն այս կամ այն առումով ռուսական միավորմանը, ֆեդերալիզմին կամ մասնատմանը նպաստելու հարցում մեկի կամ մյուսի կողմն անցնելու համար, քանի որ նույնիսկ հնարավորություն չկա կազմակերպելու այդ ազգությունների ազատ խորհրդակցությունները: Մենք չենք կարող քաջալերել

անհատական նկրտումները, որոնց անկեղծությունը և անշահախնդրությունը մենք նույնիսկ հազիվ ենք տարբերակում, օգնել ազգային խորհուրդների կամայական կազմակերպմանը, հրահրել կիսաանկեղծ երախտագիտություններ և տալ այնպիսի հույսեր, որոնք ապագայում, հավանաբար, չեն իրականանա: Այս բոլոր հարցերը չպետք է առաջադրվեն ո՛չ շատ շուտ և ո՛չ անորոշ պայմաններում. մեզ թույլատրված չէ վաղաժամ խոստումներ պայմանավորել ապագայի հետ՝ նույնիսկ ամենաազնվաբարո տեսությունների անունից:

Դաշնակիցները, ինչպես նաև իրենք՝ ժողովուրդները, պետք է հետևեն գործությունների տրամաբանական ընթացքին, դիտեն Ռուսաստանի միասնությունն իբրև անսասան, մինչ այն օրը, երբ ժողովուրդները, որոնց մենք այդ անելու սահմանագծին կնոտեցնենք, կարողանան հստակորեն ու անկաշկանդ դրսևորել իրենց կամքը:

(A.M.A.E., Europe 1918-1929, *Russie*, tome 608, ff. 7-10).

Ասիա-Օվկիանիայի փոխվարչության ծանուցագիրը¹

Ծ: Հրատապ:

Փարիզ, 1-ը սեպտեմբերի 1918 թ.:

Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշան օգնություններ է խնդրում Ֆրանսիայի կառավարությունից՝ օգնության շտապելու համար Բաքվի մոտակայքում ապաստանած և մատակարարումների բացակայության հետևանքով սպառնալիքի տակ գտնվող Կովկասի հայերին:

Հայ ժողովրդի կրած՝ հավասարը չունեցող տառապանքները, այն խոստումները, որոնք Ֆրանսիայի կառավարությունը բազում առիթներով նրան է տվել բարելավելու համար նրա ճակատագիրն ապագայում, այն ավանդական հովանավորությունը, որը Ֆրանսիան բոլոր ժամանակներում ցուցաբերել է Թուրքիայի հայ ազգության հանդեպ, այն շահագրգռվածությունը, որը մենք ունենք մի ժողովրդի հետ մեզ մտերմացնելու հարցում, որի նշանակալից խմբերը բնակվում են օսմանյան տարածքներում, որտեղ, ըստ Անգլիայի հետ ունեցած մեր համաձայնությունների, պետք է տարածվի մեր ազդեցությունը, այն շահավետությունը, որն է՝ պատերազմից անմիջապես հետո դեպի մեր տնտեսական շահերը մի ազգության հրապուրելը, որի անդամները ցուցաբերել են առանձնահատուկ առևտրական ունակություններ, ամեն ինչ՝ մեզ պարտադրում է անել ազնվաբարո մի քայլ ի նպաստ Կովկասում սովի զոհը դարձած հայերի:

Հետևաբար, թվում է, թե այս առթիվ մի նշանակալից վարկ պետք է տրամադրվի գնդապետ Շարդինյիին, որը Բաքվում գտնվող մեր փոխխույսատոսի² և այդ քաղաքի հայկական խմբավորման առաջնորդների օգնությամբ այն բաշխելու համար գտնվում է ամենահայրենասիրական դիրքում: Կարելի է այժմվանից իսկ նրան կարգադրել տնօրինելու այդ նպատակով 500000 ֆրանկ և Նուբար փաշային տեղեկացնել ընդունված կարգադրությունների մասին:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, *Arménie*, tome 1, ff. 108-108 v).

1 Նախարարի համար է:
2 Պ. Գաժին:

Պետրոգրատում Ֆրանսիայի դեսպան պ. Նուլենը՝ Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին

Հ. թիվ 702:

Արխանգելսկ, 8-ը սեպտեմբերի 1918 թ., ժ. 20.02-ին:
(Ստացել է Քաղ. վարչ. սեպտեմբերի 13-ին):

Գնդապետ Թորգոմից՝ Պողոս Նուբար (փաշայի) համար, Վիլսոնի պողոտա (12), Փարիզ. «Ես Արխանգելսկ եմ ժամանել գլխավորելու հայկական ռազմական առաքելությունը: Հայաստանին վերաբերող (փաստաթղթերը) ուղարկվել են փոստով: Ռուսաստանում դաշնակիցների գերագույն հրամանատարության համաձայնությամբ, մենք այստեղ կազմակերպում ենք բոլոր հայերին, որոնք ունակ են (զենքեր) կրելու: Ես կմեկնեմ դաշնակից երկրներ, հենց որ Ռուսաստանում կազմակերպչական աշխատանքն ավարտվի: Ես այստեղ դաշնակիցների և չեզոքների դեսպաններին եմ հանձնում բողոքի մի վճռական (ծանուցագիր), ուղղված Գերմանիայի կառավարության նենգության (և) Թիֆլիսի հայկական ազգային խորհրդի երկչուության դեմ: (Վերջինս) (տապալվել է): Մենք հրաժարվում ենք այն ճանաչել. Կովկասի հյուսիսում, Սև ծովի ափի և Բաքվի տարածաշրջանում, (թուրքական կառավարության) դեմ՝ մենք պարտիզանական պատերազմ ենք կազմակերպել: Բարեհաճեք, Արխանգելսկի դեսպանության միջոցով, ինձ հեռագրել հայերի ռազմական կացության մասին դաշնակցային (երկրներում) և զաղորդելու: Հայաստանը շատ է տառապել, բայց ես համոզված եմ, որ մենք կարող ենք վերակազմավորել մեր ուժերը դաշնակիցների (օգնությունների) միջոցով: Հարկ է հասնել այն բանին, որ անգլիական զորքերը Բաքվում հզորանան և բոլոր հեղափոխական կամ այլ հայկական կոմիտեները հեռացվեն (ռազմական) գործերից:

Չեզ ի գիտություն. ռուսական խառնաշփոթի հետևանքով այլասերված դաշնակցություն կուսակցությունը փորում է Հայաստանի գերեզմանը: Մենք կորսանք դավաճաններին, որպեսզի կարողանանք փրկել մեր դժբախտ հայրենիքը և նոր կյանք պարզեցնել նրան»:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, Arménie, tome 1, ff. 110-111).

Ռուսաստանում Ֆրանսիայի ռազմական կցորդի տեղակալը՝ Խորհրդի նախագահ, Ռազմական նախարար պ. Կլեմանտյին

Հ. թիվ 114-116: Գաղտնի:

Արխանգելսկ, 10-ը սեպտեմբերի 1918 թ., ժ. 19.23-ին:
(Ստացել է ԲԸ-ը սեպտեմբերի 14-ին):

Դեսպանի հավանությունը ստանալուց հետո, ես պաշտիվ ունեմ ձեզ փոխանցել

1 Գնդապետ Դոնոպը:

հետևյալ հեռագիրը, որն ինձ է տվել մեր հայերի դեկավար՝ զնդապետ Թորգոմը, դաշնակիցների բոլոր բանակների հրամանատար, պարոն մարշալ Ֆոշի [համար].

«Ամենահամեստ, բայց դաշնակից տերությունների թվում ոչ ամենանվազ խանդավառված դաշնակից տերության՝ հինավուրց Հայաստանի անուցից, որը պատերազմի առաջին խկ օրից ի վեր նետվել է արյունալի ասպարեզ՝ հստակ դաշնակիցների ճշմարիտ գործի, որը նաև նրա գործն է, ես ձեզ խնդրում եմ, պարոն մարշալ, բարեհաճել ընդունելու ձեր և ձեր հրամանատարության ներքո գտնվող քաջարի բանակների հանդեպ, իմ հիացմունքն ու հուզմունակից երախտագիտությունը: Ռուսական խառնաշփոթը մեզ չի թույլատրել հայկական ռազմաճակատ տանել մեր 100000 զինվորին, որոնք պատերազմի առաջին 3 տարվա ընթացքում կոկում են բոլոր ռազմաճակատներում՝ Ռիզայից մինչև Սև ծով: Լքված՝ Կովկասի ռուսական բանակներից, հեռու գտնվելով Արևմուտքի ազնվաբարո դաշնակցից, դավաճանված իր հարևաններից, Հայաստանն ասպատակվեց, բայց հայկական զորքերը չլքեցին պայքարը:

Երևանում, ինչպես նաև Բաքվում, Կովկասի հյուսիսում, ինչպես նաև Սև ծովի ափին, մենք դժվարին պայմաններում շարունակում ենք մարտնչել ընդհանուր թշնամու դեմ:

Չեք գերագույն հովանավորությամբ, մենք մեկ կորպուսում կմիավորենք բոլոր հայկական զորքերը, որոնք դաշնակիցների բանակներում իրենց պարտքն են կատարում գրեթե ամենուր:

Մենք նրանց կտանենք դարավոր տառապանքների դասական երկիրը և մեր դաշնակիցների օգնության շնորհիվ, սվիններով՝ ֆրանսիական եղանակով, ավերված Հայաստանից դուրս կվտարենք թուրք-գերմանական մարդասպաններին:

Կեցցե՛ք Ֆրանսիան, կեցցե՛ք դաշնակից երկրները: Կեցցե՛ք դաշնակիցների փառապանձ բանակները»:

(A.M.G., 16 N 3186).

Խորհրդի նախագահը, Ռազմական նախարարը՝ Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին

Ճ. թիվ 6708-2/II.

Փարիզ, 11-ը սեպտեմբերի 1918 թ.:
(Ստացել է Քաղ. վարչ. սեպտեմբերի 12-ին):

1918 թ. սեպտեմբերի 4-ի թվակիր ձեր թիվ 3437 նամակով¹, դուք բարեհաճել եք ինձնից հարցնել իմ կարծիքն այն օգնությունների շուրջ, որոնք հարկ է բաշխել Բաքվի մերձակայքում ապաստանած Կովկասի հայերին:

Ես պատիվ ունեմ ձեզ տեղեկացնել, որ նկատի ունենալով հայ ժողովրդի այդպիսի ճգնաժամային կացությունը և այն ավանդական քաղաքականությունը, որին Ֆրանսիան հետամուտ է եղել այս ճնշված ազգի նկատմամբ, ես ամբողջությամբ բաժանում եմ ձեր տե-

1 Ստորագրել է գեներալ Ալբին:
2 Արտատպված չէ:

սակետը և ինձ խիստ նպատակահարմար է թվում գնդապետ Շարդինյի համար 500000 ֆրանկի վարկ բաց անելը՝ օգնություններ բաշխելու նպատակով, որոնց անհրաժեշտությունը բացահայտորեն պարտադրվում է:

Սակայն Ռազմական նախարարության բյուջեն չունի որևէ վարկ՝ հոգալու համար մեծ ծախսերը, որոնք քաղաքական բնույթ են կրում: Ես կարող եմ, այսպիսով, միայն կարծիք հայտնել, ըստ որի վերոհիշյալ գումարը հարկ է առանձնացնել Արտաքին գործերի նախարարության տրամադրության ներքո դրված դրամական միջոցներից:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, Arménie, tome 1, ff. 113-113 v).

681

Պ. Վահե Նաֆիլյանը՝ Սենի պատգամավոր պ. Ալբեր Տոմասին

Ն:

Հեշ, 14-ը սեպտեմբերի 1918 թ.:

Ես ձեզ գրում եմ Բարձր Պիլեներներից, որտեղ կարգավորում եմ ջրաբաշխական կայանը:

Ես հարկադրված էի հապճեպ մեկնել և չկարողացա ձեր նամակին պատասխանել Փարիզից¹:

Այդուհանդերձ, Մասսեյանուզ Հանը [sic]² հանձնարարություն է ստացել ձեզ ուղարկելու հայկական պահանջներին վերաբերող փաստաթուղթը: Ես ծանուցագիրը կազմել էի ավելի քան մեկ ամիս առաջ և այն չկարողացա ձեզ ուղարկել ավելի վաղ միայն այն ուղղումների պատճառով, որոնք Վարանդյանը և պատվիրակության այդ պարոնայք պարտադիր համարեցին այդտեղ անել:

Ամեն դեպքում, այժմ դուք պետք է ստացած լինեք հանրաքվեի արդյունքները և ձեզ խնդրում եմ ինձ ներել կամ ավելի շուտ մեզ ներել՝ հիրավի չափազանց արևելյան այս ուշացման համար:

Մյուս կողմից, ես ստացա պ. Պիշոնի պատասխանը, որը վերաբերում է անգլիացի և ռուս ռեֆորմիստների հռչակագրին. ես ձեզնից չեմ թաքցնի, իմ թանկագին ընկեր, որ չնայած խիստ չափավոր հայեցակետերին, որոնց ես հետևել եմ փոքր ժողովուրդների նկատմամբ մեծ տերությունների գերազանցությանը վերաբերող հարցում, պ. Պիշոնի փաստաթուղթը մնում է արեկեզ նրանց համար, ովքեր դեռևս որոշ պատրանքներ ունենին:

Ինչո՞ւ է հարկ, որ իրավունքի զինվորների հաղթական յուրաքանչյուր առաջընթացի պարագայում, պաշտոնական անձինք կարողանան ճեղ և եսասիրական նպատակով օգուտներ քաղել զոհաբերություններից:

Մեզ՝ այլ հայերիս համար, չնայած, որ Կովկասի խնդիրը կարող է որոշ տատանումներ ունենալ, Թուրքահայաստանի խնդիրը մնում է և՛ պետք է մնա անփոփոխ. «Ազատագրվել թուրքական լծից, օգտվել Ազգերի լիգայի երաշխավորած ինքնավարությունից»:

1 Այստեղ արտատպված չէ: Օգոստոսի 31-ի թվակիր այս նամակում, Սենի պատգամավորը պ. Նաֆիլյանից մի հուշագիր է խնդրում Հայաստանի մասին՝ այն Ջեդ Պոսեին հանձնելու համար:
2 Ինձ՝ Մասսեիյան խան:

Վերադարձին, երեքշաբթի կամ չորեքշաբթի օրը, ես Փարիզում կլինեմ, այնժամ կգամ ձեզ տեսնելու և փոքր-ինչ զրուցելու մեր ամենքի (ճնշված ազգերի) պահանջած այս բոլոր խղիղների շուրջ, որոնք թվում է, թե աստիճանաբար մոռանում են, որ հատուցումների օրը մոտենում է:

Ա{(նհրաժեշտ) է ն {կատել}: – Ես առիթ եմ ունեցել զրուցելու ամերիկյան մի քանի սպաների հետ: Հետաքրքիր է հավաստել, թե որքան են նրանք իրազեկ հայկական գործերին:

(A.N., 94 AP 409).

682

Հայկական տեղեկատվական բաժանմունքի հաղորդագրությունը Դեպարտամենտին՝

Իրադրությունը Կովկասում

Փարիզ, 17-ը սեպտեմբերի 1918 թ.:

Հենց նոր իրեն կենտրոնական օրգան հռչակած Բաքվի հայկական ազգային խորհրդի նախագահ, դ {ոկտո}ր Արարատյանից մենք հենց նոր ստացանք հետևյալ հեռագիրը.

«Թուրքերն Ալեքսանդրապոլից տեղահանել են 8000 հայ, նրանք զինաթափել են Ելիզավետպոլ քաղաքը, բայց չեն կարողացել գրավել Ղարաբաղի տարածաշրջանը: Գյուլբաջի և Շամախու հայերը գաղթել են Բաքու: Հայերի վիճակը շատ ծանր է: Նրանք միակն են, որոնք Կովկասում կարող են օժանդակել դաշնակիցներին:

Հայ գեներալ Նազարբեկովի և կամավորների առաջնորդ Դրոյի շտաբի կայանը Երևանում է, գեներալ Անդրանիկինը՝ Նախիջևանում: Նրանք պահպանում են երկաթուղային գիծն Ալազոզի և Ջուլֆայի միջև:

Բաքվի հայկական զորքերն անհամար զոհաբերությունների գնով ետ են մղել թուրքական զորքերը չորս ամիս շարունակ, մինչ քրիտանական զորքերի ժամանումը: Նավթահորերը փրկվել են:

Թուրքերի չգրաված տարածաշրջաններում հայերի բարոյական ոգին հիասքանչ է: Հայերի իրականացրած՝ այսպես կոչված կոտորածներին վերաբերող ասեկոսեներն ամբողջությամբ ստահող են, որոնք տարածել են թշնամու գործակալները: Նույնիսկ այժմ, և նոր կոտորածների իրականացումից հետո, հայերը հովանավորել են թուրքերին ու թաքարներին և ջանում են հանգել համաձայնության»:

(A.M.A.E., Europe 1918-1929, Russie, tome 831).

1 Ծանուցագիրը ստորագրել է պ. Համբարձում:

**Ռազմածովային նախարար պ. Ժորժ Լեյզյուն՝
Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին**

Փարիզ, 17-ը սեպտեմբերի 1918 թ.:

Ես գտնում եմ, որ պարտավոր եմ համառոտեմ, բազմիցս պնդել այն անիրաժեշտության շուրջ, որն այսօր, շատ ավելի, քան երբևէ, պարտադրվում է Լևանտում մեր քաղաքական և բարոյական կացության անկումն արգելելու և Սիրիայում մեր իրավունքները վճռականորեն պահպանելու համար:

Այն տեղեկությունները, որոնք ես ստանում եմ, ինձ թույլատրում են պնդելու, որ Լյոյո Ջորջի ճանապարհորդության ընթացքում Մանչեսթերում սրբ Մարկ Սայքսի կազմակերպած սիրիական, հայկական և սիանիստական ցույցերն անմիջապես արձագանք են գտել սիրիական շրջաններում և որ շիամակչովելով համապատասխան ֆրանսիական գործողությամբ, մեր ամենամասսան կողմնակիցների շրջանում առաջ են բերել զարմանք ու տանջալից հուզումներ:

Մանչեսթերի ցույցերն ընդգրկվում են անգլիացի որոշ գործակալների կազմակերպած քարոզչական ծրագրում, որի նպատակն է, ի վնաս մեր վարկի, բարձրացնել Անգլիայի վարկն այն երկրամասերում, որոնք մեր համաձայնագրերով [ենթակա են] մեր ազդեցությանը:

Բազում առիթներով ես արդեն նշել եմ այն մեծ խոչընդոտները, որն այս քարոզչությունը ենթադրում է Ֆրանսիայի և Բրիտանիայի կառավարությունների համար:

Ելնելով բացառապես ռազմածովային տեսակետից, ես պնդում եմ, որ Ֆրանսիայի շահերը Միջերկրական ծովի արևելյան տարածաշրջանում ունեն կենսական բնույթ: Այդ շահերը մեր դաշնակիցները չեն կարող վիճարկել:

Ես ձեզ խնդրում եմ պատմական բոլոր հանգամանքներում Ֆրանսիայի հետ իրենց անսասան կապվածությունն ի հայտ բերած ժողովուրդներին հանգստացնել և նշել, որ ոչ մի պատրվակի ներքո մենք չենք հրաժարվի մեր ավանդական ձգտումներից և իրավունքներից Փոքր Ասիայում:

(A.C.M., SS E a 200).

**Աթենքում Ֆրանսիայի նախարար պ. Ռոբեր դը Բիլլին՝
Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին**

Ճ. թիվ 275:

Աթենք, 17-ը սեպտեմբերի 1918 թ.:
(Ստացել են Կար. հոկտեմբերի 2-ին,
Քաղ. վարչ. հոկտեմբերի 3-ին):

Կոստանդնուպոլսի լրագրերը հայտնում են հայկական նախկին պատրիարք, Ն{որին

սրբազնություն) Օրմանյանին արտրից ետ կանչելու մասին, և նրա ժամանումը մայրաքաղաք համընկնում է նախկին Ռուսահայաստանի լիազոր ներկայացուցիչների ժամանմանը, որոնք, ըստ թուրքական մամուլի՝ ավարտին կհասցեն Բաթումի բանակցությունները և կսկզբնավորեն թուրք-հայկական բարեկամությունը:

Կարելի է որոշ հիպոթեզներ առաջադրել այս իրադարձությունների շուրջ, որոնք չեն զարմացնի նրանց, ովքեր ծանոթ են Ն{որին սրբազնություն) Օրմանյանի բանասարկուողուն և Ռուսաստանի հանդեպ նրա տածած թշնամական վերաբերմունքին: Վերջինս, բազում տարիներ ի վեր, նշանակվել է Էջմիածնի պատրիարք, որը հայկական հոգևոր կյանքի կենտրոնն է: Սակայն ցարի կառավարությունը նրան շարունակ արգելել է մուտք գործել Ռուսաստան՝ իր նստավայրում դրության տերը դառնալու համար: Կարելի է ենթադրել, որ իր ազգի համայնքը վերականգնելու և Էջմիածնի վրա հսկողություն սահմանելու նպատակով, ծեր պրելատը չի զլանում մոռանալ անցյալը և այն կոտորածները, որոնք պատերազմի սկզբից ի վեր արյունաներկ են արել Հայաստանը: Թվում է, թե նա կզիջի թուրքերի մեքենայություններին, որոնք 1878 թ. ռուսների գրաված տարածաշրջաններն էլ ավելի լավ թափանցելու համար զիջումների կդիմեն և հետևելով իրենց ավանդական քաղաքականությանը, կհենվեն հայերի վրա, երկյուղելով պատերազմից հետո հելլենիզմի նշանակալից հզորացումից:

Աթենքի արքեպիսկոպոսը, որը Կոստանդնուպոլսում շատ լավ է ճանաչել Ն{որին սրբազնություն) Օրմանյանին, հիանում է նրա իմացությամբ, որը տարիների ընթացքում չի նվազել, բայց վախենում է նրա խղճմտանքի բացակայությունից: Այս առթիվ, նա ինձ պատմում էր, որ ընդունելով կաթոլիկությունը և լինելով Հռոմում կաթոլիկ հայերի սեմինարիայի առաջնորդը, Ն{որին սրբազնություն) Օրմանյանը, խուսափելու համար իր վարչությունում պապական աթոռի հետաքննությունից, 1870 թ. իր սեմինարիայի վրա բարձրացրել է պրոսակական դրոշը և գեներալ Կադորնայի Հռոմ մուտք գործելուց* հետո ընդունել ուղղափառությունը:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, Arménie, tome 1, ff. 116-116 v).

Ասիա-Օվկիանիայի փոխվարչության ծանուցագիրը՝

Կովկասի հայերին ցուցաբերվող օգնության առիթով

Ծ: Հրատապ:

Փարիզ, 18-ը սեպտեմբերի 1918 թ.:

1916 թ. ֆրանս-անգլիական համաձայնագիրը ճանաչում էր Ֆրանսիայի գերակշռող ազդեցությունը «Փոքր Հայքում» (Բարձր Կիլիկիայում), Սվազի և Մամուրեթ-ու Ազիզի վիլայեթներում, տարածաշրջաններ, որոնք բնակեցված են մեծ թվով հայերով, թեպետ

* Նկատի ունի 1870 թ. սեպտեմբերի 20-ին Իտալիայի թագավոր Վիկտոր Էմանուել II-ի գործերի մուտքը Հռոմ, որին հաջորդել են պապի աշխարհիկ իշխանության անկումը և Պապական պետության միացումը Իտալական թագավորությանը հոկտեմբերի 2-ին: - Ծ. թ.:

1 Նախարարի համար է:

նրանք այդտեղ միայն փոքրամասնություն են կազմել նույնիսկ մինչև 1916 թ. գերմանաթուրքական կոտորածները: Ֆրանսիան Արևելքում ձեռնարկելիք քաղաքակրթչական գործի համար որպեսզի կարողանա հանձնինս շահի ետևից ընկնող, բայց աշխատասեր հայ բնակիչների ձեռք բերել խիստ պիտանի համագործակիցներ՝ անհրաժեշտ է, որ օգտագործի յուրաքանչյուր առիթ՝ դրսևորելու իր համակրանքն ամբողջ հայ ազգի հանդեպ: Ահա քե ինչու, Արտաքին գործերի նախարարը սեպտեմբերի 4-ին Խորհրդի նախագահին, Ռազմական նախարարին խորհուրդ է տվել հավանություն տալ այն գրավոր խնդրանքին, որն ի նպաստ Կովկասի սովյալ հայերի նրան ներկայացրել է Նուբար փաշան, որն առաջարկել է զնդապետ Շարդինյի միջոցով նրանց բաժանել 500000 ֆրանկ՝:

Ռազմական նախարարը համաձայնվում է առաջարկությանը, բայց պահանջում, որ այդ գումարն առանձնացվի Արտաքին գործերի նախարարության բյուջեից: Ավելի տրամաբանական կինի դա առանձնացնել 20 միլիոն ռուբլու սահմանում այն վարկից, որը նախարարների խորհրդի որոշմամբ, 1917 թ. դեկտեմբերի 17-ին բացվել է զնդապետ Շարդինյի համար՝ բոլշևիկների [sic] խառնաշփոթին և Ռուսաստանում գերմանական գերիշխանության հաստատմանը դիմադրելու ցանկություն ունեցող Կովկասի ժողովուրդներին օգնության հասնելու նպատակով: Հանգամանքները չեն բույլատրել զնդապետ Շարդինյի ծախսելու այս ամբողջ վարկը: Այն ծախսելու, որոնք նա այսօր հարկ կունենա անել կազմակերպելու համար Կովկասի տարածաշրջանում գտնվող չեխոսլովակյան տարրերին, պետք է որ, ինչպես թվում է, կատարվեն այն վարկերի հաշվին, որոնք բացվել են չեխոսլովակյան բանակի համար: 20 միլիոն ռուբլու վարկի մնացորդը չի կարող, այսպիսով, ավելի լավ օգտագործվել, քան հայերին օգնություն ցուցաբերելու միջոցով: Հարկ է, հիրավի, նկատի ունենալ, որ եթե ծախսերը պետք է արվեն Կովկասի ժողովուրդների զինված դիմադրությունը կազմակերպելու համար, ապա դրանք, Վերսալում ձեռք բերված համաձայնությունների հիման վրա, բաժին են ընկնում Բրիտանիայի կառավարությանը: Գթասիրտ աջակցության այս քայլը, որը մենք նախատեսում ենք ի նպաստ Կովկասի հայերի, ռազմական կազմակերպության մասը չի կազմում, և մեր անգլիացի դաշնակիցները կարող են միայն ծափահարել այս դժբախտների հանդեպ մեր մեծահոգությանը:

Անհրաժեշտ կլինի գործել արագ, որովհետև արդեն Բաքվից Պարսկաստան են տարել կանանց և երեխաներին. այս դժբախտ ժողովրդին պետք է անհապաղ օգնության հասնել:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, Arménie, tome 1, ff. 117-117 v).

Լոնդոնում Ֆրանսիայի դեսպան պ. Պոլ Կամբոնը՝ Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին

Հ. թիվ 1078:

Լոնդոն, 19-ը սեպտեմբերի 1918 թ., ժ. 20-ին:
(Ստացել է Քաղ. վարչ. սեպտեմբերի 20-ին):

1 Պողոս Նուբար փաշայի խնդրանքի մասին տե՛ս վերը թիվ 677 փաստաթուղթը:

Պատասխան սեպտեմբերի 17-ի 3605 ձեռագրին՝
Բրիտանիայի կառավարությունը տեղյակ է Պարսկաստանի հյուսիսում տիրալ ծանր կացությանը: Թուրքերը մտել են Բաքու: Կասպից ծովի և Միջագետքի միջև հաղորդակցություններն ապահովելու նպատակով, պաշտպանության գիծը կազմակերպվել է այն զինված անձնակազմերի միջոցով, որոնք փոխ են վերցվել Միջագետքից:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, Perse, tome 35, f. 45).

Պաղտնի արձանագրություն. 1918 թ. սեպտեմբերի 23-ին ստորագրել են Գերմանիան և Օսմանյան կայսրության անունից գործող Թալեաթ փաշան

1/ Թուրքիան ճանաչում է Վրաստանը, Հայաստանը և Ադրբեջանը: Գերմանիան ճանաչում է միայն Վրաստանը, բայց Հայաստանում և Ադրբեջանում կնշանակի հյուսիսատոմաներ: Թուրքիան իր գործերը դուրս կբերի Հայաստանից և Ադրբեջանից: Գերմանիան կմիջանոր, որպեսզի Ռուսաստանը ճանաչի այս երկու հանրապետությունները, հենց որ թուրքական գործերը բողոքեն այն տարածքները, որոնք նրանց ենթակայության ներքո են անցնում, բացառությամբ այն գործերի, որոնք պահպանում են Ալեքսանդրապոլ-Ջ...² երկաթուղին:

2/ Թուրքիան կջանա ...³ պետություններ կազմավորել Կովկասի հյուսիսում և Թուրքիայում: Գերմանիան գորավիզ չի լինի այս շարժմանը, բայց և դրան չի խոչընդոտի:

3/ Թուրքիան և Գերմանիան կանեն ամեն ինչ, որպեսզի Քառյակ դաշինքը Կովկասի հումքից ձեռք բերի, հնարավորության սահմաններում, ամենամեծ օգուտը: Թուրքիան համաձայն է, որ Բաքվում նավթի արդյունահանումը, Բաքու-Թիֆլիս երկաթուղին և խողովակաշարը գտնվեն Գերմանիայի ենթակայության տակ: Նավթը կբաժանվի չորս դաշնակիցների՝ Ռուսաստանի և Կովկասի երկրների միջև:

4/ Թուրքիան կմիջնորդի Ադրբեջանին, որպեսզի գերմանական գաղութներին այստեղ վերաբերվեն այնպես, ինչպես նախկին Ռուսաստանի այլ վայրերում:

5/ Պարսկաստանի քաղաքական և տարածքային ամբողջականությունը կրկին կճանաչվի: Թուրքիան իր գործերը Պարսկաստանից դուրս կբերի, հենց որ գործողություններն Անգլիայի դեմ ավարտին հասնեն: Սպասելով, նա կբարելավի հարաբերությունները Պարսկաստանի և Գերմանիայի միջև:

Ստորագրելով արձանագրությունը, Թալեաթ փաշան բանավոր հայտարարել է, որ ինքը համոզված է Թուրքիայի և Կովկասի կառավարությունների միջև լավ փոխհարաբերությունների անհրաժեշտության հարցում և կանի այն ամենն, ինչն ինքն ունակ է, որպեսզի Թուրքիայի կառավարությունը հաշվի առնի Կովկասի կառավարությունների տարածքային ցանկությունները և բարեկամաբար պայմանավորվածություն կայացնի վերջիններիս

1 Արտատպված չէ:
2 Անունը բացակայում է: Հավանաբար՝ Ջուլֆա:
3 Բառը բաց է թողնված:

**Կովկասում ֆրանսիական ռազմական առաքելության ղեկավար,
փոխգնդապետ Շարդինյին՝ Խորհրդի նախագահ,
Ռազմական նախարար պ. Կլեմանտյին**

Հ. թիվ 33, 34: Գաղտնի:

Էնգելի, 24-ը սեպտեմբերի 1918 թ., ժ. 12.45-ին:
(Ստացել է ԲԸ-ի Առաջապահ խումբը
սեպտեմբերի 26-ին):

Վարամեսի և Սալմասի տարածաշրջանի քրիստոնյա բնակչությունը, ինչպես նաև Վա-
նի տարածաշրջանի հայերը, բոլորը միասին՝ գրեթե 50000 անձ, հուլիսի վերջին Սենքալա-
Բիջարի վրայով նահանջել են դեպի Համադան, ուր նրանք ժամանել են օգոստոսի կեսե-
րին: Անգլիացի հրամանատարը բնակչությանը դուրս է բերում Քերմոշաքի [sic]¹ ուղղու-
թյամբ դեպի Բաղդադ և զենք կրելու ունակ տղամարդկանց, մոտավորապես 7000-ի, որոն-
ցից 3000-ը հայ են, պահում Թազաքենդի ճամբարում՝ Համադանի մոտակայքում: Անգլիացի
հրամանատարին խնդրվում է ներկայումս Ղազվինում գտնվող կապիտան Գասֆիդին
նշանակել այս կազմավորումները վերակազմավորող սպայի տեղակալ: Պուադեբարը նա-
մակով ինձ հավաստում է Ն {որին սրբազնություն} Սոնտագի և ֆրանսիացի միսիոներնե-
րի սպանությունը Ուրմիայում: Նրանք քաղաքում էին գտնվում բնակչության դուրս բերու-
մից հետո: Այս լուրը Միանեում սեպտեմբերի 5-ին նրան է հաղորդել Իսպանիայի նախա-
րարի² հետ Թավրիզից Թեհրան գնացող հայր Քլարիսը:

(A.M.G., 16 N 3186).

**Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնը՝
Արևմտյան Ֆրանսիայի դեսպան պ. Ռոբեր դը Բիլլին**

Ճ. թիվ 296:

Փարիզ, 26-ը սեպտեմբերի 1918 թ.:

Օգոստոսի 5-ի թվակիր, նախարարների խորհրդի կնիքը կրող, ձեր նամակով³, դուք բա-
րեհաճել եք ինձ փոխանցել մի ծրար, որն Արևմտյան հայկական համայնքի էֆորիայի* նա-
խագահ պ. Նիկողոսյանը հղել է Հայկական ազգային պատվիրակության նախագահ, Նո-
րին գերագանցություն Պողոս Նուբար փաշային: Ես շտապում եմ ձեզ իրազեկ դարձնել, որ
ապահովել եմ այդ ծրարի հանձնումն իր հասցեատիրոջը:

1 Ինձ՝ Քերմանշահ:

2 Պ. Դյուամեն:

3 Արտատպված չէ:

* Հատուկ ծառայություն, որը հաստատում էր հարկերը և հսկում դրանց գանձմանը: - Մ. ք.:

Ես օգտվում եմ այս հանգամանքից, խնդրելու համար ձեզ ինձ տրամադրել, Ասիա-Օվ-
կիանիայի կնիքի ներքո, այն տեղեկությունները, որոնք դուք կկարողանաք ի մի բերել հա-
յերի՝ Հունաստանում ձեռնարկած գործողության մասին: Պողոս փաշային հղած՝ պ. Նիկո-
ղոսյանի նամակից հետևում է, որ հայերը, հավանաբար, մտադրություն են ունեցել Արևմ-
քում հիմնադրել Հայկական ազգային պատվիրակության կոմիտե, այդտեղ ստեղծել հայ-
հունական լիգա և քննարկել հայերի հետագա հարաբերությունները Սև ծովի թուրքական
առափնյա տարածաշրջանի ուղղափառ հույների հետ:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, Arménie, tome 1, ff. 122-122 v).

**Խորհրդի նախագահ, Ռազմական նախարար պ. Կլեմանտնի՝
Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին**

Ճ. թիվ 12499-/3: Գաղտնի:

Փարիզ, 26-ը սեպտեմբերի 1918 թ.:
(Ստացել է Քաղ. վարչ. սեպտեմբերի 26-ին):

Ի պատասխան սեպտեմբերի 20-ի 3536 ձեր նամակի¹, որը վերաբերում է Կովկասի հա-
յերին օգնություն հատկացնելուն, ես պատիվ ունեմ ձեզ տեղեկացնել, որ քանզի 20 միլիո-
նի վարկը, որը Ռազմական նախարարության կոմիտեն, դեկտեմբերի 17-ի նիստում, դրել է
փոխգնդապետ Շարդինյի տրամադրության ներքո, նախատեսված է եղել Կովկասում
հայկական զորքեր կազմակերպելու համար, ապա՝ ինձ հնարավոր չի թվում, որ այն կարե-
լի է օգտագործել բարեգործության նպատակով, ինչպիսին էլ, որ լինի նման գործի բարո-
յական նշանակությունը և քաղաքական շահագրգռվածությունը:

Բացի դրանից, Բաքվի անկումը մեզ համար անհնար է դարձնում այն հայերին օգնու-
թյուն ցուցաբերելը, որոնք ապաստանել են այդ տարածաշրջանում: Մեզ համար մատչելի
են մնում միայն նրանք, որոնց բրիտանական իշխանությունները տարել են Արևմտյան
Պարսկաստան: Սակայն մեզ հասնող հաղորդագրությունները, դժբախտաբար, հիմնավո-
րում են, որ Կովկասի ժողովուրդների աղետը բխում է ոչ թե դրամի սակավությունից, այլ
պատերազմի հետևանքով ամայացած այս երկրամասի մթերային ռեսուրսների ծայրահեղ
անբավարարությունից:

Այս պայմաններում, ինձ թվում է, որ հայերին արդյունավետ օգնություն ցուցաբերելու
միակ միջոցը Կովկասը թուրք-գերմանական զրավումից ազատագրելն է, այնպիսի ձևով,
որ Կասպից ծովում ապահովվի մեր գերիշխանությունը և այսպիսով, մեզ հաղորդակցու-
թյուններ ունենալու հնարավորություն ընձեռվի այն երկրների հետ, որտեղից հնարավոր է
նրանց վիճակը բարելավելու համար անհրաժեշտ ռեսուրսներ ձեռք բերել:

Ինձ թվում է, այսպիսով, որ ավելի քան երբևէ, անհրաժեշտ է գնդապետ Շարդինյի
գործունեությանն ուղղություն տալ տեղական այն տարրերին ուղի հանելու և կազմակեր-
պելու ոգով, որոնք ի վիճակի են զորավիզ լինել բրիտանական ուժերին նրանց ռազմական

1 Արտատպված չէ:

գործողության ընթացքում և, հետևաբար, չնվազեցնել նրանց վճարելու համար նախօրոք նախատեսված՝ նրան հատկացված ֆինանսական միջոցները:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, *Arménie*, tome 1, ff. 123-123 v).

693

**Կահիրեում Ֆրանսիայի նախարար պ. Լեֆեր-Պոնտալիսը՝
Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին**

Ճ. քիվ 251:

Ալեքսանդրիա, 26-ը սեպտեմբերի 1918 թ.:
(*Ստացել են* Կար. հոկտեմբերի 21-ին,
Քաղ. վարչ. հոկտեմբերի 22-ին):

Գնդապետ զը Պիեպպը հենց նոր ինձ է հղել մի հետաքրքիր նամակ, որի պատճենը կից ներկայացվում է¹, այն դերի մասին, որը ՊՄՖՄ-ն ունեցել է վերջին հարձակման ժամանակ Պաղեստինում:

Հետաքրքրական է նշել, որ Արևելյան լեզեոնն իրեն դրսևորել է արժանավայել այն ջանքերի համեմատ, որոնք գործադրվել են լեզեոնը կազմակերպելու համար: Հարկ է, հիրավի, մոռացության չտալ, որ մինչ այժմ, մեր բրիտանացի դաշնակիցներն ի հայտ էին բերել որոշ կասկածամտություն այդ գործի վերաբերյալ: Ուստի, ինձ պատեհաժամ թվաց տեղական մամուլում հրապարակել կից ծանուցագիրը:

Եթե ֆրանսիական զորքերի դերը, բրիտանական բանակների դերի համեմատությամբ, համեստ է Պաղեստինի ռազմաճակատում, թվում է, թե քաղաքական տեսակետից մենք կարող էինք շահագրգռվածություն ունենալ Եգիպտոսի սիրիացիների երևակայությունը շանթահարելու և Սիրիայի ազատագրման գործում մեր զինվորների և սիրիացի ու հայ կամավորների զբաղեցրած տեղի շուրջ նրանց ճշգրիտ տեղեկություն հաղորդելու հարցում:

Մեր զորքերի գործողությունն, ի դեպ, վերջին իրադատությունների ընթացքում իրեն օգտակար ձևով զգալ է տվել այս ռազմաճակատի մեկ այլ տեղամասում: Այսպես, օրինակ, Եգիպտոսի ռազմական առաքելության անդամ, կապիտան Պիզանին՝ անգլիացի գնդապետ Լաուրանսի ընկերակցությամբ, բեդուինների հետ, Դերասայի հյուսիսում, ամենահամարձակ հարձակումն իրականացնելիս, կարողացել է հատել երկաթուղին և ահռելի չափով խոչընդոտել թուրքական տարրերի մահանջին դեպի Ժուրդենի ձախ ափը:

Անկասկած, աննրբանկատ կլինի համառելը Պաղեստինում գտնվող անգլիական ուժերի հետ մեր ստորաբաժանումների ունեցած՝ անխուսափելիորեն երկրորդական բնույթի համագործակցության շուրջ: Չերդ գերազանցությունն, այդուհանդերձ, հավանաբար, կզտնի, որ մենք որոշ առավելություններ կունենայինք, եթե հասարակությանն ուղղակիորեն տեղեկացնեինք, որ գեներալ Ալլենբիհն, հենց նոր ինձ հղած մի հեռագրով, բարեհաճել

¹ Արտատպված չէ: 1918 թ. սեպտեմբերի 21-ի այս նամակում, գնդապետ զը Պիեպպը մեծարում է Արևելյան լեզեոնը: Նա, մասնավորապես, գրում է. «... Արևելյան լեզեոնն ի հայտ է բերել ամենամեծ խիզախության վկայություն, պահպանելով իր գրաված դիրքերը, չնայած Արարայից տեղացող սարսափելի կրակին. այն այդտեղ կրել է զգալի կորուստներ» [18 սպանված և մոտավորապես 80 վիրավոր]:

է պաշտոնապես ընդունել իր գերագույն հրամանատարության ներքո դրված ֆրանսիական զորքերի ցուցաբերած քաջությունն ու անվեհեխությունը:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, *Turquie*, tome 68, ff. 142-142 v).

ՀԱՎԵԼՎԱԾ

**Ֆրանսիայի դիվանագիտական գործակալության
պաշտոնական հաղորդագրությունը**

29-ը սեպտեմբերի 1918 թ.: - Գեներալ Ալլենբիհի գերագույն հրամանատարության ներքո դրված ֆրանսիական զորքերը Պաղեստինի հարձակման ժամանակ ցուցաբերել են ցանկացած գովեստից վեր կանգնած մեծ տոկոսություն և խիզախություն. որոնց գլխավոր հրամանատարը բարեհաճել է մատուցել հարգանքի առանձնահատուկ տուրք:

Հրածիզների գունդը գրավելով Երեք մացառուտների և Սուրի բլուրի դիրքերը, մեկ ժամանատարի, 200 գերու և գրավել է մեծ քանակությամբ զնդացիներ:

Մյուս կողմից, Արևելյան լեզեոնն ի հայտ է բերել ամենամեծ խիզախություն՝ պահպանելով իր դիրքերը, չնայած Արարայում տեղակայված թուրքական մարտկոցներից տեղացող ահարկու կրակին: Սիրիական վաշտն ի հայտ է բերել մեծ արժանիքներ՝ դիմանալով Ռաֆայում մահ սփռող ոմբակոծությանը:

Եգիպտոսում Ֆրանսիայի դիվանագիտական գործակալությունը հայարտ է, քանի որ կարող է հիացմունքի տուրք մատուցել հայերին ու սիրիացիներին, որոնք ֆրանսիական բանակի շարքերում հենց նոր դրսևորել են իրենց հայրենասիրությունն ու ռազմական անվեհեխությունը:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, *Turquie*, tome 68, f. 146).

694

**Հայկական ազգային պատվիրակության նախագահ
Պողոս Նուբար փաշան՝ Խորհրդի նախագահ,
Ռազմական նախարար պ. Կլեմանտին**

Ն:

Փարիզ, 27-ը սեպտեմբերի 1918 թ.:
(*Ստացել է* Քաղ. վարչ. սեպտեմբերի 29-ին):

Ես պատիվ ունեմ ձեզ հայտնել քիվ 12485-/3 ձեր նամակի ստացման մասին, որով դուք բարեհաճել եք ինձ փոխանցել զնդապետ Շալիյինի միջոցով Էնգելիից ուղարկված ձեռագրի պատճենը¹: Այս հեռագիրը ստորագրել է հայ գեներալ Բագրատունին, ու՛շ նախքան բուլղարի վարչակարգը եղել է Պետրոգրադում ռուսական բանակների Գլխավոր

¹ Սեպտեմբերի 23-ի վերն արտատպված է քիվ 688 փաստաթղթում:

շտաքի պետը:

Ինչպես դուք կարող էիք տեսնել, այս հեռագիրը մեզ տեղեկացնում է որ հայկական գորքերի մեծ մասը, որոնք պաշտպանում էին Բաքուն, կարողացել են տեղափոխվել Պետրովսկ և Էնգելի: Դա մեզ ցույց է տալիս, որ այս գորքերը, հակառակ այն բանի, ինչ հայտնել էին անգլիական թերթերը, դիմադրել են մինչև վերջ և անձնատուր չեն եղել:

Ըստ մեր ունեցած հավաստի տեղեկությունների՝ եթե բրիտանական զինված անձնակազմը, որի օգնությանն անձամբ հայերն էին դիմել, բավարար լիներ, դիմադրությունը Բաքվում կարող էր շարունակվել և քաղաքը կփրկվեր: Դժբախտաբար, այս զինված անձնակազմը բաղկացած էր միայն երեք հարյուր մարտից և հայ պաշտպանները, հիասթափված իրենց սպասելիքներից, հյուժված և գտնվելով մեծաքանակ ուժերի կողմից ջախջախման սպառնալիքի տակ, հարկադրված են եղել նահանջել: Ես համոզված եմ, պարոն նախագահ, որ դուք, ինչպես և ես, կզտնեք, որ այս պայմաններում, նվազագույնն անարդարացի է ծանր մեղադրանք հարուցելը, որը երևան է եկել անգլիական մամուլում, այն կամավորների դեմ, որոնք կռվում էին իրենց գոյության և օջախների պաշտպանության համար և որոնք, չորս ամսվա ընթացքում, դիմակայել են թվական ահռելի գերակշռության ունեցող թշնամուն:

Քանի որ խնդրո առարկա հեռագրի հաղորդագրությունն ինձ է տրվել «զադտնի» նշումով, գեներալ Բագրատունու խնդրանքը Ֆորին Օֆիսին ներկայացնելու համար ես այլ միջոց չունեի, քան ձեր Դեպարտամենտի պատրաստակամությանը դիմելը և ձեզ խիստ երախտապարտ կլինեմ, եթե բարեհաճեք սրան կից իմ նամակը պ. Բալֆորին ուղարկել ձեր փոստի միջոցով¹:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, *Arménie*, tome 1, ff. 124-124 v).

Կահիրեում Ֆրանսիայի նախարար պ. Լեֆևր-Պոնտալիսը՝ Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին

Ճ. թիվ 255:

Կահիրե, 2-ը հոկտեմբերի 1918 թ.:
(*Unwghy t Բաղ. վարչ. հոկտեմբերի 21-ին*):

Ես պատիվ ունեմ Ձեր գերազանցությանը փոխանցել այն պատասխանի պատճենը, որը հենց նոր ստացա Եգիպտոսի հայկական ազգային միության նախագահից այն շնորհակալությունների շուրջ, որոնք նրան էի հղել Պաղեստինում Հանրապետության Գերագույն կոմիսարի ժյ-ի² կողմից՝ այն փառապանձ դերի առիթով, որն Արևելյան լեզեոնի հայկական զինված անձնակազմն է ունեցել Պաղեստինում բուրքերի դեմ հարձակման ընթացքում:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, *Turquie*, tome 68, f. 150).

¹ Քե դ'Օրսեն, թվում է, թե չի պահպանել այս նամակի պատճենը, որի քննադրը, հավանաբար, պ. Բալֆորին է փոխանցվել հոկտեմբերի 2-ին, թիվ 1964 ճեպագրին կից, որը չի արտատպվում:
² Կապիտան Կուլմորը:

ՀԱՎԵԼՎԱԾ

Եգիպտոսի հայկական ազգային միության նախագահ պ. Մկրտչյանը՝ Կահիրեում Ֆրանսիայի նախարար պ. Լեֆևր-Պոնտալիսին

Ալեքսանդրիա, 1-ը հոկտեմբերի 1918 թ.:

Ես պատիվ ունեմ ձեզ հայտնել անցած սեպտեմբերի 26-ի ձեր նամակի ստացման մասին, որն ինձ է հասել այս առավոտյան և ձեզ ավելի քան երախտապարտ եմ այն գովասանական գնահատականների համար, որոնցով դուք բարեհաճել եք մեծարել Արևելյան լեզեոնի իմ հայրենակիցներին:

Ես, հիրավի, դրանով հպարտ եմ, պարոն նախարար, ինչպես և հպարտ եմ եղել կոմիտեի իմ գործընկերներն ու Եգիպտոսի հայկական գաղութի անդամները:

Ես չէի կասկածում, պարոն նախարար, հայ լեզեոնականների քաջության և հայրենասիրության շուրջ, սակայն հավաստի է, որ եթե իմ հայրենակիցները ռազմական արվեստի ասպարեզում կարողացել են ձեռք բերել առանձնահատուկ ունակություններ, ապա դա եղել է շնորհիվ Ֆրանսիական անգուգական ուսուցման, որը բոլոր ռազմաճակատներում իր անհամար բարերարություններն է շոայլորեն սփռում, որոնք աշխարհում խաղաղության հաստատման նախակարապետներն են:

Բացի դրանից, դուք բարեհաճել եք ակնարկել Արևելյան լեզեոնի կազմավորման և այն համեստ ներդրումի մասին, որը ես կարողացել եմ այդ գործում ունենալ:

Ձեզ հայտնելով իմ երախտագիտությունը ձեր բարեհաճ գնահատականի առիթով, ես մեծ ցանկություն ունեմ, պարոն նախարար, ձեզ հավաստելու, որ գրեթե բացառապես հայկական տարրերից բաղկացած Արևելյան լեզեոնը, որը զգուշության և բռնություններից երկուդելու պատճառով, մենք իր ժամանակին չենք կարողացել որակել իբրև «Հայկական լեզեոն», մեծ մասամբ գնդապետ Ռոմիոյի աշխատանքի արյունքն է:

Հիրավի, այդ ազնվաբար զինվորի հոգածության և կուսակցություններից ներգրավված ներկայացուցիչներին դիմադրելու նրա համառ ջանքերի շնորհիվ էր, որ վերջիններիս սրբազան դաշինքը դուրսին դարձավ և Հայկական ազգային միության կոմիտեները կարողացան ձևավորվել: Հենց սա էր, որ իր հերթին, հնարավոր դարձրեց Արևելյան լեզեոնի ստեղծումը:

Ուստի, ես ձեզ խիստ երախտապարտ կլինեմ, պարոն նախարար, եթե նախ՝ դուք բարի գտնվեիք գնդապետ Ռոմիոյին փոխանցել մեր կոմիտեի ամենաջերմագին շնորհավորանքները Պաղեստինում վերջին հարձակման ընթացքում Արևելյան լեզեոնի փայլուն հաջողությունների առիթով:

Այնուհետև՝ ես ձեզ խնդրում եմ, պարոն նախարար, բարեհաճել մեր կոմիտեի երախտագիտությունը հայտնել Հանրապետության կառավարությանն այն բարերարության առիթով, որն ինչպես մեր զինվորների, այնպես էլ մեր ազգային գործի հանդեպ դրսևորել է գնդապետ Ռոմիոն:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, *Turquie*, tome 68, ff. 151-152).

**Միջազեւոքում Ֆրանսիայի հյուպատոսության հավատարմատար
պ. Ռ-ուն՝ Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին**

Հ. թիվ 219: Խիստ գաղտնի:

Բաղդադ, 3-ը հոկտեմբերի 1918 թ. ժ. 9.35-ին:
(Ստացել է Քաղ. վարչ. հոկտեմբերի 4-ին):

Հայերի (լատինական) ...¹ ինձ հայտնել է անգլիական շտաբի՝ այն հայերի նկատմամբ ունեցած առնվազն կասկածելի դիրքորոշման մասին, որոնց, թվում է, թե ցանկանում են դարձնել քավության նոխագ: Նա դրանից գանգատվում է խիստ դառնորեն:

Ներկայումս Բաքուբայում գտնվող մի քանի հայրուր գաղթական (տե՛ս իմ 217 հեռագիրը)² խնդրում են զինվորագրվել Արևելյան լեգեոնին, այլ ցանկանում են հետևել ...³: Այս առթիվ ես կարող եմ միայն հիշեցնել 127 իմ հեռագրի⁴ մասին:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, *Turquie*, tome 68, f. 153).

**Կովկասում ֆրանսիական ռազմական առաքելության ղեկավար,
փոխգնդապետ Շարդինյին՝ Խորհրդի նախագահ,
Ռազմական նախարար պ. Կլեմանտյին**

Հ. թիվ 48, 49: Գաղտնի:

Էնգելի, 5-ը հոկտեմբերի 1918 թ., ժ. 11.20-ին:
(Ստացել է ԲԸ-ի Առաջապահ խումբը
հոկտեմբերի 6-ին):

Հեռագիր Պողոս փաշայի համար.

«Դեռևս չեն ստացել Պարսկաստանում հայկական դիվիզիա կազմակերպելուն վերաբերող սեպտեմբերի 23-ի հեռագրի՝ պատասխանը: Այսօր, հոկտեմբերի 3-ին, Բաղդադում գտնվող բրիտանական զերագույն հրամանատարության ներկայացուցիչները հայտարարել են, որ չեն կարող համաձայնվել մեր առաջարկությանը՝ դրամի, սպառազինության և ռազմամթերքների բացակայության պատճառով: Սակայն մեր երկրի վիճակը դառնում է ավելի ծանր, մեր օգնության անհրաժեշտությունը Երևանին՝ ավելի հրատապ: Ըստ վերջին լուրերի՝ Բաքվի գրավումից հետո, թուրք-թաթարները սկսում են իրագործել հայկական

1 Վերձանման բացթողում:
2 Արտատպված չէ:
3 Վերձանման բացթողում:
4 Տե՛ս վերը թիվ 645 փաստաթուղթը:
5 Տե՛ս վերը թիվ 688 փաստաթուղթը:

տարածաշրջանի ամայացման ծրագիրը, Սզանդական, Շուրը դիտում իբրև Ադրբեջանի կառավարության անբաժանելի մասեր: Նուրա Արեշը [sic]¹ մեր բոլոր գյուղերի հետ միասին այդեն կողոպտվել է, բնակչությունը՝ կոտորվել: Երիտասարդները գորակոչվել են՝ ուղարկվելու համար ներքին նահանգներ, հեռավոր վայրեր, ուրտեղ նրանք կարժանանան 1915 թ. տեղահանվածների ճակատագրին: Մեծամասնությունը փախչում է լեռները, որտեղ դիմադրությունը կատարի է լինելու: Անգլիացիների հաջողությունները Պաղեստինում և Կոստանդնուպոլսի նկատմամբ՝ բուլղարական իրադարձություններին հաջորդած սպառնալիքը, կարող են արագացնել վերոհիշյալ ծրագրի իրականացումը:

Կրկնում ենք, որ հարկ է ուշադրության արժանացնել մեր խնդրանքը և անել հնարավոր ամեն ինչ, ստանալու համար դաշնակիցների օգնությունը՝

1/ Համադանում (5000), Էնգելիում (1500), Կրասնովոդսկում (1000) համախմբված, սպառազինության սպասող հայ զինվորների ծախսերը հոգալու համար.

2/ Երևանի դիվիզիային ռազմամթերքներ ուղարկելու համար:
Նույնիսկ Թուրքիայի սեպարատ հաշտության պարագայում, եթե վերջինս հարկադրված լինի գորքերը դուրս բերել Կովկասից, նախատեսվող դիվիզիայի ազդեցությունն իրադարձությունների ընթացքի վրա չի դադարի շատ կարևոր լինելուց:

Միևնույն ստորագրությունները, որոնք կրում են թիվ 31 և 32 հեռագրերը²:

(A.M.G., 16 N 3186).

**Պողոս Նուբար փաշայի հաղորդագրությունը
Դեպարտամենտին**

Հուշագիր³

7-ը հոկտեմբերի 1918 թ.:

Այն պահին, երբ իրադարձությունները սրընթաց զարգանում են, և երբ անձնատրոյան դռանը հասած Թուրքիան միանում է կենտրոնական կայսրություններին՝ խնդրելու համար զինադադար և հաշտություն, հայերը կոչով դիմում են դաշնակից տերություններին, որպեսզի Հայաստանի ճակատագիրը կարգավորվի համաձայն իրավունքի և արդարության այն սկզբունքների, որոնք խարսխված են հաշտության պայմանների հիմքում:

Հայերը շատ են տառապել օսմանյան լծի տակ, իսկ թուրքերը, մյուս կողմից, բազմիցս ապացուցել են իրենց անընդունակությունը ոչ թուրք ազգություններին կառավարելու հարցում, որպեսզի հնարավոր լինի, այս պատերազմից հետո, նրանց պահել օսմանյան տիրապետության տակ, անկախ այն բանից, թե ինչպիսի ձևով:

Սակայն բացի այս հիմնական պայմանից և այն պայմաններից, որոնք պետք է կար-

1 Իմա՝ Նուխա-Արեշ:
2 Վերն արտատպված են թիվ 688 փաստաթղթում:
3 Նույն օրը Պողոս Նուբար փաշան համանման բովանդակությամբ մի հեռագիր է հղում պ. Կլեմանտյին: Ռազմական նախարարությունն այն կփոխանցի Քե դ'Օրսեին՝ 1918 թ. հոկտեմբերի 16-ի ճապագրին կից, որը չի արտատպվում:

գավորի հաշտության վեհաժողովը, Հայկական ազգային պատվիրակությունը հույս է տա-
ծում, որ այն, ինչ վերաբերում է զինադադարին, տերությունները կբարեհաճեն պահանջել
հետևյալ հոդվածների ամփոփումը.

I. Դաշնակցային զորքերի հովանու ներքո՝ բոլոր հայ գաղթականների և տեղահան-
վածների վերադարձն իրենց օջախները: Այդ նպատակով, դաշնակցային ուժերի կողմից
վեց վիլայեթների և, մասնավորապես, Կիլիկիայի բոլոր ռազմավարական կետերի գրավու-
մը, որտեղից ծագում է իրենց հայրենի հողի ազատագրման հույսով ներկայումս Պաղես-
տինում մարտնչող Արևելյան լեգեոնի կամավորների մեծ մասը:

II. Արգելել օսմանյան կառավարությանը կազմակերպելու թուրք բնակչության վե-
րաբնակեցումը Հայաստանում, այստեղ թուրքերի արհեստական մեծամասնություն ստեղ-
ծելու նպատակով, ինչպես նա արդեն այդպես վարվել է բազմաթիվ առիթներով:

III. Կարգադրություններ, որոնք հարկ է անել ոչ միայն այս ժողովուրդներին օգնելու և
նրանց գոյության առաջին կարիքները հոգալու, այլ դաշնակիցների հովանու ներքո՝ երկ-
րի վարչական և տնտեսական վերակառուցմանը հնարավորություն ընձեռելու համար:

Ազգային պատվիրակությունը, վստահությամբ լի այն հավաստիացումների հանդեպ,
որոնք նրան են տվել Չերոզ գերագնացությունը և, ի վերջո, պ. Ժորժ Կլեմանսոն, որը հայ-
տարարել է, թե Հայաստանի ճակատագիրը կկարգավորվի համաձայն մարդկության և
արդարության գերագույն կանոնների՝ չի կասկածում, որ Հանրապետության կառավարու-
թյունը կբարեհաճի լրջորեն հաշվի առնել վերոհիշյալ կետերը, որոնց վրա նա մեծ ցանկու-
թյուն է ունեցել հրավիրել նրա բարեհաճ ուղադրությունը:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, Arménie, tome 1, ff. 128-128 v).

**Միջազգետրում բրիտանական ուժերի հրամանատարություն գործուղված
հրամանատար Սկիարդը՝ Խորհրդի նախագահ,
Ռազմական նախարար պ. Կլեմանսոյին**

Հ. թիվ 64: Գաղտնի:

Բաղդադ, 10-ը հոկտեմբերի 1918 թ., ժ. 9.55-ին:
(Ստացել է Կաբինետը հոկտեմբերի 11-ին,
ժ. 14.45-ին):

1/ Ըստ Բաքվի լուրերի՝ թուրքերը, հավանաբար, կոտորել են 15000 հայի, կողոպտել են
զրեթե բոլոր խանութները. նավթահորերը, հավանաբար, մնացել են անվնաս: Թուրքերը
կջանան հաշտվել բնակչության ռուսական տարրերի հետ: Աղրբիջանի [sic] ժամանակա-
վոր ռուսական կառավարությունը Ելիզավետպոլից տեղափոխվել է Բաքու:

2/ Հավանաբար, Կովկասի բանակի թուրքերը գրավել են Դերբենդը:

3/ Ասեկոսեններ են տարածվում բուլղարիկների դեմ Տաշքենդում բռնկված ապստամբու-
թյան մասին:

(A.M.G., 5 N 209).

**Սենի պատգամավոր պ. Ալբեր Տոմասը՝
Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին**

Ե:

Փարիզ, 10-ը հոկտեմբերի 1918 թ.:
(Ստացել են Կաբ. հոկտեմբերի 12-ին,
Քաղ. վարչ. հոկտեմբերի 13-ին):

Ես պատիվ ունեմ ձեզ հղել սրան կից մի հուշագիր, որը կազմել է Ազգությունների միջև
համաձայնության սոցիալիստական կոմիտեի անդամ պ. Վարանդյանը:

Պ. Վարանդյանն այդտեղ ամփոփում է Ռուսահայաստանի և Թուրքահայաստանի
իրավիճակը, Հայկական սոցիալիստական կուսակցության անունից առաջարկում Հայկա-
կան հարցի մի լուծում, որը հիմնվում է ժողովուրդների ինքնորոշման իրավունքի վրա և
հարկ ունի կենսագործման Ազգերի իրգայի երաշխավորության ներքո:

Այս փաստաթուղթը նախատեսված է համալրելու հուշագրերի այն շարքը, որոնք ձեզ
են հղել Համաձայնության կոմիտեի անդամները, այն ընդունելությունից հետո, որին դուք
բարեհաճել եք նրանց արժանացնել:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, Arménie, tome 1, f. 131).

ՀԱՎԵԼՎԱԾ

Հայկական սոցիալիստական կուսակցության հուշագիրը

Փարիզ, [?-ը] սեպտեմբերի 1918 թ.:

Ըստ Նորին գերագնացություն, Արտաքին գործերի նախարար պ. Պիշոնի հայտնած
ցանկության (այն ընդունելության ընթացքում, որին նա բարեհաճել է արժանացնել Ազգու-
թյունների միջև համաձայնության սոցիալիստական կոմիտեի պատվիրակությանը)՝ հայ
լիազոր ներկայացուցիչը պատիվ ունի Նորին գերագնացությանը ներկայացնել Հայկա-
կան հարցի և հայկական սոցիալիստական «Դաշնակցություն» կուսակցության նախա-
տեսած հնարավոր լուծման հիմնական գծերի մի հակիրճ ակնարկ:

Բարենորոգումների փորձերը. Հայերի ճակատագրի բարելավման համար եվրոպական
դիվանագիտության քառասուն տարուց ի վեր արած բոլոր փորձերը, որոնք որոշակի տեսք
են ստացել Սան-Ստեֆանոյի, Բեռլինի, Կիպրոսի պայմանագրերում, 1895 թ. հուշագրում
և, ի վերջո, 1913 թ. բարենորոգումների նախագծում, բախվել են թուրքերի անողոք թշնա-
մանքին և, դժբախտաբար, ձախողվել են: Պանիսլամիզմի և պանթուրանիզմի երազանքով
ղեկավարվող հին կամ երիտասարդ Թուրքիան միշտ ջանացել է Արևելյան Անատոլիայից
դուրս մղել միակ օտար տարրին՝ հային, որպեսզի Տավրոսից մինչ կովկասյան լեռնաշղթա
հաստատի միատարր մահմեդական բնակչություն:

Թուրքական բոլոր կառավարությունները, առանց նրբերանգների զանազանության,
ստեղծել են եվրոպական կառավարությունների քայլերին անշեղորեն զիջելու պատրանք,

այդուհանդերձ, բոլորը հաստատականորեն լի են եղել ոչ թե բարենորոգում չիրականացնելու, այլ Հայկական հարցի լուծման ելքն ավելի շուտ հայերին ոչնչացնելու միջոցով լուծելու վճռականությանը:

Բավական է վերհիշել 1895-1896 թթ., 1909 թ. սարսափելի կոտորածները և ի վերջո. համայն պատմության ընթացքում կազմակերպված, մարդկության տարեգրությունների մեջ նմանը չունեցող՝ ճկուն դաժանությանը իրականացված ամենամեծ կոտորածը:

Անցյալի այդ ողբերգական փաստերը և թուրքական մտայնության խորին իմացությունը համոզել են հայերին բարենորոգումների յուրաքանչյուր նախագծի ապարդյունությունը և յուրաքանչյուր լուծում, որը հակված կլինի ապագա Հայաստանում պահպանել թուրքական տիրապետության սուկ ստվերը՝ հայ ազգը չի ընդունի: Եվրոպական ո՛չ մի վերահսկողություն չի խոչընդոտի թուրքերին շարունակելու իրենց հալածանքները, ո՛չ մի միջազգային պարտավորություն չի կարողանա երաշխավորել հայ ազգի անվտանգությունը, ամբողջականությունը և ազատ զարգացումը թուրքական պետության շրջանակում:

Երկու ազգությունների միջև գոյություն ունի, ի դեպ, անհաղթահարելի անջրպետ. թուրքը շարունակում է մնալ նախապատմական հասարակարգերին բնորոշ կենսակերպի մեջ, հայն ունենալով մշակույթ, գրականություն, քսան դարերի պատմություն, անընդմեջ փորձում է յուրացնել քաղաքակրթության նվաճումները: Գոյություն ունի, վերջապես, բարոյական փաստարկ. ոչ միայն պաշտոնական Թուրքիայի, այլև օսմանյան ժողովրդի լայնածավալ խավերի՝ 40 տարուց ի վեր իրականացրած սարսափները հայի և թուրքի միջև փոքրել են մի անդունդ, որը կարճ ժամանակում հնարավոր չի հաղթահարել: Հայերին թուրքական տիրապետության ներքո թողնելը համագոր է քաղաքակրթ ի հասարակարգերը դեկավարող բարոյական օրենքներին մարտակոչ նետելուն:

Թուրքիայից բաժանումն, այսպիսով, հայկական խնդրի իրական և արդարացի լուծման միակ հնարավոր հենքն է. ոչ մի տեղ ազատ ինքնորոշման ուսմունքն այնքան սուրբ և հրամայական չէ, որքան Հայաստանի պարագայում:

Ազատ ինքնորոշման սկզբունքը. Հայաստանի ներկա կացության պայմաններում անհեթեթ կլինի դիմել հանրաքվեի. մասամբ ոչնչացված, մասամբ Սիրիայի և Միջագետքի անապատները տեղահանված կամ Կովկասում, Եգիպտոսում, Պարսկաստանում, Ամերիկայում սփռված հայ բնակչությունն իր օջախները վերադառնալու համար սպասում է արդարության և անվտանգության գերիշխանությանը:

Ֆրանսիան, որն իր թանկագին մարզերի՝ Էլզասի և Լոթարինգիայի ազատագրման համար հանրաքվեի անցկացում չի թույլատրի, կլինի, մենք դրանում համոզված ենք, հայրենի հողում հայերի իրավունքի առաջին պաշտպանը, որտեղ բազում սերունդներ հեղել են հայկական արյունը, որը սփռված է հուշարձաններով և ահռելի ավերակներով, որոնք երկարատև ու հուզիչ պատմության վկաներն են հայկական այս հողում, որն, այսպիսով, ազգային մշակույթի, քսան դարերի հուզող գանձերի պահպանն է: Եթե կա մի պարագա, երբ «մեռածները պետք է խոսեն», այդ Հայաստանի պարագան է:

Հայկական տարածքը, որի համար մենք ինքնավարություն ենք խնդրում, բաղկացած է վեց վիլայեթներից (Էրզրում, Վան, Բիթլիս, Սվազ, Խարբերդ, Դիարբեքիր) և Կիլիկիայից: Նախքան պատերազմը և տեղահանությունները, հայերն այս տարածքում այդտեղ գտնվող երկու այլ տարրերի (քրդերի և թուրքերի) հարաբերակցությամբ, որոնց մեծ մասը վերաբնակեցված է բռնի միջոցներով և հայկական բնակչությանը հակադրելու համար, ոչ միայն մեծամասնություն են կազմել, այլև եղել են դրա միակ մշակութային, առևտրական և արդյունաբերական տարրը: Մենք խնդրում ենք, որ այս երկիրը, որն ազգի օրրանն է, վե-

րածվի հայկական պետության և որ Կովկասում ու աշխարհի չորս անկյուններում սփռված հայերին թույլատրվի վերադառնալ իրենց երկիրը և վերականուցել իրենց ավերված օջախները:

Գաղթականների և վտարանդիների վերադարձից հետո, Թուրքիայում կլինի մոտավորապես մեկուկես միլիոն շնչից բաղկացած հայկական բնակչություն. Կոստանդնուպոլիսի (200000), Չմյունիայի հայերի մեծ մասը և նրանք, ովքեր սփռված են Օսմանյան Անատոլիայի ամբողջ տարածքում, կթողնեն թուրքական երկիրը և կհամախմբվեն մայր հայրենիքում: Բացի դրանից, տեղի կունենա ռուսահայերի և պարսկահայերի շարունակական վերաբնակեցում, որոնք այնտեղ նեղություն կրելով հողի սակավությունից, կգան հաստատվելու Թուրքահայաստանի լայնածավալ տարածաշրջաններում՝ նրա անսպառ հարստությունների օգտագործման և այսպիսով, նոր պետության առաջընթացին ու բարգավաճմանը խթանելու համար: Ո՛չ, բնակիչների թիվը չէ, որը կխոչընդոտի հայկական այս պետության ստեղծմանը: Հիշենք, որ Հունաստանը, Սերբիան, Բուլղարիան չունեին, համապարհան ստեղծման ժամանակ: Հիշենք, վերջապես, որ այն, ինչը կարևոր է պետությունների պահպանման և առաջադիմության համար՝ այնքան բնակիչների քանակը չէ, որքան, մասնավորապես, նրանց քաղաքական հասունությունը, մտավոր ունակությունները, մշակույթի մակարդակը: Սրանք տվյալներ են, որոնցից մեր հարևանները՝ թուրքերը, քրդերը, եգիպտացիները և նեստորականները, դժբախտաբար, զուրկ են այս պահին:

Մենք խնդրում ենք, որ չեզոք հայտարարված այս հայկական երկիրը, մի քանի տարի շարունակ դեկավարի արևմտյան տերություններից մեկը, որն ունենա Ազգերի լիգայի մանդատը, որպեսզի հայերին ժամանակ հատկացվի իրենց վերքերը վիրակապելու, անկախ ձևով ինքնակառավարվելու նպատակով կազմակերպվելու համար: Այս նախագիծն ամենևին անբարենպաստ չի լինի Հայաստանում բնակվող մահմեդական ժողովուրդների համար, որոնք ևս կօգտվեն արդարացի վարչակարգից: Դաշնակից տերությունների կամ Ազգերի լիգայի հոգածությամբ մշակված մի հիմնարար կանոնադրություն կճշգրտի այդ տարածքի սահմանները և նրա ժամանակավոր վարչությունը կվստահվի տերություններից մեկին, որը կլինի նրանց լիազոր ներկայացուցիչը:

Ռուսահայաստանի (Կովկասի) խնդիրը. Ինչ վերաբերում է Հայաստանի այն մասին, որն ընդգրկված է Ռուսական կայսրությունում, նրա մոտալուտ ապագան մեծապես կախված է իրադարձությունների զարգացումից, որոնք տեղի կունենան մոտալուտ ապագայում:

Այս տարածաշրջանում 2000000 հայ սպասում են նոր դարաշրջանի արշալույսին: Եթե Ռուսաստանում հաստատվի դաշնային միասնական վարչակարգ, Ռուսական դաշնային հանրապետության մեջ Կովկասի հայերի՝ իբրև ինքնավար և առանձին ազգության չընդգրկվելն անիմաստ կլինի: Ընդհակառակը, այն պարագայում, երբ Ռուսաստանում ներկա իրավիճակը լուծում ստանա նախկին կայսրության ընդգծված ձևով տեղի ունեցող մասնատման միջոցով՝ միանգամայն անկախ, փոքր պետությունների և կամ դեռ ավելի՛ն՝ այն պարագայում, երբ ինքնակալական նախկին վարչակարգը վերականգնվի, այլև անիմաստ կլինի, որ Կովկասի հայերը չպատասխանեն ամբողջ հայ ազգության միասնական ցանկությանը և չմիավորվեն Թուրքիայի հայերի՝ իրենց եղբայրների հետ: Նրանք, այսպիսով, կկազմավորեն մի լրացուցիչ ուժի աղբյուր, որը մինչ որոշ աստիճան, կփոխհատուցի այն մեծ կորուստների հետևանքները, որոնք պատճառել են Թուրքիայի՝ միմյանց հաջորդած կառավարությունների կազմակերպած կոտորածները և տեղահանու-

թյունները:

Կովկասի հայերը միշտ հանդես են եկել իբրև միասնական Ռուսաստանի և ռուսական համադաշնության անկեղծ կողմնակիցներ: Այս փաստն ունի որոշակի կարևորություն: Նախկին վարչակարգն անընդմեջ հալածել է հայերին, այն դեպքում, երբ հաճախ հովանավորել է և գուրգուրել այլ ժողովուրդների: Եվ, այդուհանդերձ, ամենամեծ փորձության օրը, երբ բուլշևիկյան դավաճանությունից հետո Ռուսաստանը հանձնվեց թշնամական հյուրաններին, և երբ թուրքերն ասպատակեցին Կովկասը, միայն հայերը հավատարիմ մնացին Ռուսաստանին, ասպատակչի դեմ մղելով անհավասար պայքար:

Դեռևս հեղափոխությունից առաջ, ռուսների շարքերում 160000 հայ կռվում էին Գալիցիայում, Բուկովինայում և Արևելյան Պրուսիայում: Բացի դրանից, 20000 հայ կամավորներ կռվել են Կովկասի ռազմաճակատում, ազգային հերոս Անդրանիկի և նրա քաջարի զինակիցների՝ Վարդանի, Քեռու, Դրոյի, Համազասպի, Սեպուհի, Մուրադի, Աշոտի, Արամի, Ռուբենի և այլոց ղեկավարությամբ, որոնց բոլորին գերագույն հրամանատարությունն արժանացրել է շքանշանների, ամենքը լինելով այն կուսակցության մարտիկները, որի անունից այս հուշագիրը ներկայացված է:

Հարկ է նաև նշել, որ պատերազմի սկզբից ի վեր 800-ից 1000 հայ կամավորներ ընդգրկվել են ֆրանսիական բանակում և արիարար մարտնչել տարբեր ռազմաճակատներում, հաճախ առաջին շարքերում: Նրանք՝ գրեթե բոլորն ընկել են: Ռազմական իշխանությունները մեծ մասին արժանացրել են շքանշանների:

Վերջապես այսօր, Արևելքում, ֆրանսիական դրոշմերի ներքո, կան բազմաթիվ հայկական գումարտակներ, որոնք մասնակցում են Պաղեստինի և Սիրիայի մարտերին ու հաղթանակներին:

Այս բոլոր փաստերը մեզ թույլատրում են մտորել, որ Ֆրանսիան և նրա մեծ դաշնակիցները չեն զլանա ընդունել հայկական պահանջների արդարացիությունը և չեն մերժի այն հատուցումները, որոնք անհրաժեշտ են մի ժողովրդի, որն այս համաշխարհային պատերազմի ամենամեծ զոհն է:

Իբրև ամփոփում. Ամբողջ հայ ազգության եռանդագին ցանկությունը ժողովուրդների ինքնուրուշման ազատ իրավունքի հիման վրա և Ազգերի լիզայի երաշխավորության ներքո՝ համապատասխանաբար Թուրքահայաստանի և Ռուսահայաստանի երկու հարցերը վերջնականապես կարգավորված տեսնելն է:

Մենք խնդրում ենք. 1/ որ Էրզրումի, Վանի, Բիթլիսի, Խարբերդի, Դիարբեքի, Սվազի վեց վիլայեթները և Կիլիկիան վերջնականապես անջատվեն Թուրքական կայսրությունից և Ազգերի լիզայի երաշխավորությամբ օգտվեն լիակատար ինքնավարությունից:

2/ որ Ռուսահայաստանի հարցն իր լուծումը գտնի երկրի այնպիսի կարգավիճակով, որը Ռուսական դաշնային հանրապետության կազմում նրան երաշխավորի ազգային լիակատար զարգացում: Վերջապես, եթե Ռուսաստանի մասնատման գործընթացը հարատևի, Ռուսահայաստանը պետք է կրկին կցվի Թուրքահայաստանին և իբրև ամբողջություն դրվի Ազգերի լիզայի երաշխավորության ներքո:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, Arménie, tome 1, ff. 132-138).

Կովկասում ֆրանսիական ռազմական առաքելության ղեկավար, փոխզնդապետ Շարդինյին՝ Խորհրդի նախագահ, Ռազմական նախարար պ. Կլեմանտյին

Հ. թիվ 50: Գաղտնի:

Էնգելի, 11-ը հոկտեմբերի 1918 թ., ժ. 18.35-ին:
(Մտացի է ԲԸ-ի Առաջապահ խումբը հոկտեմբերի 13-ին):

Հեռագիր Պողոս (փաշայի ?) համար.

«7000 գաղթական տեղավորվել են Ռեշտ-Էնգելիում. իշխանությունները և պարսիկ ժողովուրդը ցուցաբերել են բարեհաճ ընդունելություն: Մենք ունենք միայն 20000 թուման, որոնք փոխանցվել են Արարանով: Ռուսական ռազմական իշխանությունը որբանոցի համար տվել է 100000 ռուբլի, որտեղ դեղամիջոցների, սննդի և հագուստի բացակայության պատճառով մահացությունն ահռելի է: Բրիտանական հրամանատարությունն իր ծախսերով վերափոխում է բժշկական և սանիտարական անձնակազմը: Պետրոպոլսում կան 12000 գաղթական, որոնցից 7000-ը ծածկ չունի. բացի դրանից, գաղթականների չորս մավ այստեղ չեն ընդունվել և այնտեղ են ուղարկվել: Անտանտի հաջողությունները տեղիք են տալիս համընդհանուր խանդավառության: Մենք կարծում ենք, որ Անտանտի համար հասել է Հայաստանի կոտորածների հեղինակների պատասխանատվությունների հարցին վերաբերող՝ 1915 թ. մայիսի հռչակագիրը կենսագործելու պահը: Նույն ստորագրությունները»:

(A.M.G., 16 N 3186).

**Խորհրդի նախագահը, Ռազմական նախարարը՝
Կովկասում ֆրանսիական ռազմական առաքելության ղեկավար, փոխզնդապետ Շարդինյին**

Հ. թիվ 13132/3: Գաղտնի:

Փարիզ, 12-ը հոկտեմբերի 1918 թ.:

Մտացին. – ըստ տրամադրված տեղեկությունների՝ թուրքերը պետք է այժմ ձեռնամուխ լինեն Կովկաս-Ուրմիա տարածաշրջանից չորս դիվիզիա ետ կանչելուն, որպեսզի անբացնեն Թրակիայում և Կոստանդնուպոլսի տարածաշրջանում պահվող անձնակազմերը:
Երկրորդ. – այս նոր իրավիճակին ի տես, իրազեկ դարձրեք ձեր կարծիքին այն հնարա-

1 Տե՛ս վերը թիվ 688, 697 փաստաթղթերը:
2 Ստորագրել է գեներալ Մարզոն:

վարությունների շուրջ, որոնք կրճատվեն Միջագետքի բրիտանական բանակին՝ Կովկասում թշնամական ուժերի նվազեցման փաստի հիման վրա:

Երրորդ. – միաժամանակ հայտնեք ինձ ձեր կարծիքը գեներալ Բագրատունու՝ սեպտեմբերի 23-ի և հոկտեմբերի 5-ի 31-32 և 48-49 հեռագրերում՝ ներկայացրած նախագծի կենսագործման շուրջ, որը նպատակ ունի Բաքվից դեպի Պարսկաստան տեղափոխված տարրերից կազմակերպել հայկական դիվիզիա և համագործակցել Երևանի տարածաշրջանի հայկական ուժերի հետ:

Եթե ձեր կարծիքը բարեհաճ է, ֆրանսիական կառավարությունը մտադրություն ունի բրիտանական կառավարությանը քայլեր ձեռնարկել՝ օժանդակելու համար վերոհիշյալ հեռագրերում ներկայացված նախագծերին:

(A.M.G., 4 N 62).

703

**Ռուսաստանում Ֆրանսիայի դեսպան պ. Նուլենը՝
Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին**

Հ. թիվ 852:

Արխանգելսկ, 13-ը հոկտեմբերի 1918 թ., ժ. 2.11-ին:
(Ստացել է Բաղ. վարչ. հոկտեմբերի 14-ին):

Ես փոխանցել եմ 702 համարը կրող մի հեռագիր¹, որով «գեներալ» Թորգոմը, ներկայանալով իբրև հայկական բանակ կազմավորելու շուրջ հանձնարարություն ունեցող, դիմում է Ազգային կոմիտեին, որի նախագահը Պողոս Նուբար փաշան է և հայտնում է իր մտադրություն ժամանման մասին Ֆրանսիա: Բանի որ այս քայլին որևէ պատասխան չի տրվել դեսպանության միջնորդությամբ, ես խնդրում եմ Ձերդ գերագանցությանը հարցաքննել կոմիտեի ներկայացուցիչներին գեներալ Թորգոմի անձի և հայերի անունից խոսելու համար փոքրիշատե լիազորություն ունենալու մասին:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, *Arménie*, tome 1, f. 140).

704

**Ռուսաստանում Ֆրանսիայի դեսպան պ. Նուլենը՝
Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին**

Ա. թիվ 67:

¹ Տե՛ս վերը թիվ 688 և 697 փաստաթղթերը:

² Սեպտեմբերի 8-ի. վերն արտատպված է թիվ 678 փաստաթղթում:

Արխանգելսկ, 13-ը հոկտեմբերի 1918 թ.:
(Ստացել են Կար. նոյեմբերի 2-ին,
Բաղ. վարչ. նոյեմբերի 3-ին):

Երեկ տեղի ունեցավ մի արարողություն, որի ընթացքում գործերի տարբեր ստորաբաժանումների ներկայությամբ, որոնց թվում ես թույլ չտվեցի տեղ գրադեցնել ֆրանսիական ստորաբաժանմանը, գեներալ Թորգոմը, որն այդ կոչումն իրեն վերագրելուց հետո, իրեն ներկայացնում է որպես «հայկական առաքելության ղեկավար» (տե՛ս թիվ 702 և 852 իմ հեռագրերը)¹, ցույց տվեց մի դրոշ, որը բնորոշեց իբրև «ազնական» և որը հայկական դրոշը չէ:

Գեներալ Փուլը, որը Հայաստանի նկատմամբ անգլիական հավակնությունների պատճառով, թվում է, թե քաջալերում է գեներալ Թորգոմին և, որին, հավանաբար, վերջինիս վարկաբեկված պաշտոնական հեղինակությունը բավարար չափով չի մտահոգում, ղեկավարում էր արարողությունը:

Դաշնակից գործերի գլխավոր հրամանատարը նույնիսկ համաձայնվեց մի շքանշան ընդունել գեներալ Թորգոմից: Վերջինս, որն իբրև բուլղարական սպա, նախկինում իր մարտավկաներին ուղարկել էր Պիեռ Լոտիի* մոտ, ինչպես ինձ թվաց, անհրաժեշտ երաշխիքներ չէր ցուցաբերում, որպեսզի նրան վստահությամբ վերաբերվեի՝ առանց իրագեկ լինելու, թե ինչպիսի հարաբերությունների մեջ է Հայկական ազգային կոմիտեի հետ: Ես, այսպիսով, Ձերդ գերագանցությանը խնդրում եմ բարեհաճել զաղտմաբար տեղեկություններ ստանալու Պողոս Նուբար փաշայից, որպեսզի ճշգրտեմ, թե որքանով է կարելի վստահությամբ վերաբերվել գեներալ Թորգոմին:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, *Arménie*, tome 1, f. 141).

705

**Ռուսաստանում Ֆրանսիայի դեսպան պ. Նուլենը՝
Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին**

Ա. թիվ 68:

Արխանգելսկ, 13-ը հոկտեմբերի 1918 թ.:
(Ստացել են Կար. նոյեմբերի 2-ին,
Բաղ. վարչ. նոյեմբերի 3-ին):

Ես պատիվ ունեմ այս ծրարում ձեզ ուղակել. Հայաստանում տիրող իրավիճակին վերաբերող մի ծանուցագիր, որի հեղինակը գեներալ Թորգոմն է:

Ես առիթ եմ ունեցել, թիվ 852 իմ հեռագրում² տեղեկություններ խնդրելու նրա անձի և այն առաքելության վերաբերյալ, որին նա հավակնում է: Այն տեսակետը, որին հարում է գեներալ Թորգոմը և այն կարծիքները, որոնք նա հայտնում է Կովկասի իրադարձություն-

¹ Տե՛ս վերը թիվ 678 և 703 փաստաթղթերը:

* Պիեռ Լոտի (1850-1923) – ֆրանսիացի վիպասան, Ֆրանսիական ակադեմիայի անդամ (1891), որը հայտնի էր թրքամետ տրամադրվածությամբ և ժխտում էր Հայոց ցեղասպանության փաստը: – Ծ. թ.:

² Հոկտեմբերի 13-ի. վերն արտատպված է թիվ 703 փաստաթղթում:

ների շուրջ, Փարիզի Հայկական ազգային կոմիտեի ներկայացուցիչների միջոցով արժանի են ստուգման:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, Arménie, tome I, f. 142).

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

I

Ռուսաստանում հայկական ռազմական առաքելության ղեկավար, գնդապետ Թորգոմը՝ Ռուսաստանում Ֆրանսիայի դեսպան պ. Նուլենսին

Ն՛:

Արխանգելսկ, 25-ը սեպտեմբերի 1918 թ.:

Արևմտյան Հայաստանի (Էրզրումի, Մուշի, Վանի, Բիթլիսի, Դիարբեքիի նահանգներ) և Փոքր Հայքի հայերի անունից, որոնք կռվել են իմ հրամանների ներքո, ես հանձնարարություն եմ ստացել ձեզ հանձնել բողոքի հետևյալ ծանուցագիրը՝ խնդրելով ձեզանից այն շտապ փոխանցել ձեր կառավարությանը:

Այս ծանուցագիրը վերջին հուլիսի 5-ին ես հանձնել եմ Մոսկվայում գտնվող բոլշևիկյան կառավարությանը կից Հայկական գործերի կոմիսարին², որպեսզի փոխանցվի Մոսկվայում Գերմանիայի կառավարության ներկայացուցչին՝ դաշնակից և չեզոք երկրների ներկայացուցիչներին հղված պատճենով հանդերձ:

Մոսկվայում այս ծանուցագիրը հանձնելուց ի վեր, Կովկասում տեղի են ունեցել առաջնակարգ նշանակություն ունեցող իրադարձություններ, որոնք ուշադրությունն ավելի են բևեռում մեր բողոքի վրա և այն դարձնում ավելի ուժգին:

Բաքվի հայերը բուռն ձևով բողոքել են այն բանի դեմ, ինչն իրենք անվանում են «Թիֆլիսի հայկական ազգային խորհրդի դավաճանական գործողություն»: Բաքվի հայկական գործերը, որոնց թիվը հասնում է մոտավորապես 25000 մարդու, տապալել են Բաքվի բոլշևիկյան կառավարությունը և օգնության կոչով դիմել անգլիական գործերին: Ըստ պաշտոնական հաղորդագրությունների՝ անգլիացի հրահանգիչ սպաների և ենթասպաների առաջին ստորաբաժանումն ափ է ելել Բաքվում:

Երևանի և Դիլիջանի մարզերում, ուր Թիֆլիսի մարդկանց դավաճանության պատճառով հայկական գործերն էին քշվել, վերջիններս հարձակման են անցել և ետ մղել բուրք-գերմանացիներին՝ նրանց սրտճառելով լուրջ կորուստներ:

Այս երկու տարածաշրջանների հայկական գործերը հրաժարվել են նաև ճանաչել Թիֆլիսի հայկական ազգային խորհրդի իշխանությունը: Մյուս կողմից, Սև ծովի առափնյա տարածաշրջանում, Մուխոմի և Նովորոսիսկի միջև, հայ գաղթականները վրացիների, բուրքերի և գերմանացիների դեմ կազմակերպել են պարտիզանական պատերազմ:

1 Այս նամակը կրում է գնդապետ Թորգոմի կնիքը:
2 Պ. Վաղամ Ա. Ավանեսովը:
3 Պ. Միրբախ-Հարֆը: Կոմս Միրբախ-Հարֆը սպանվել է 1918 թ. հուլիսի 6-ին Մոսկվայում մահափորձի հետևանքով: 1918 թ. հուլիսի վերջին նրան հաջորդել է պ. Հելֆերիխը:

Վերջապես, Կովկասի հյուսիսում (Արմավիրի, Եկատերինոդարի, Տիխոբեցկի տարածաշրջան), որտեղ թե՛ Արևմտյան Հայաստանից և թե՛ Կարսի, Ալեքսանդրապոլի, Թիֆլիսի տարածաշրջաններից, ապրիլ ամսից ի վեր, գաղթել են ավելի քան 200000 հայ, զենք կրելու ունակ մարդիկ ստացել են կազմակերպվելու մասին հրաման:

Ըստ վերջին տեղեկությունների՝ գեներալ Դենիկինի զորքերը հենց նոր ռազմակալել են Կովկասի հյուսիսային այս տարածաշրջանները, մի բան, որն ավելի դյուրին կդառնա իր կազմակերպումը:

Այն բանից, ինչը նախորդում է և հետևում, թխում է.
1/ որ Թիֆլիսի հայկական ազգային կոմիտեն, որին Արևմտյան Հայաստանի հայերը երբևէ չեն ճանաչել ու արհամարհել են՝ միահամուռ ձևով մերժվել է Կովկասի բոլոր շրջանների հայերի կողմից.

2/ որ այս պայմաններում, Թիֆլիսի հայկական ազգային կոմիտեն տապալվել է և նրա քաղաքական գործողություններն անվավեր են:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, Arménie, tome I, ff. 143-144).

II

Ռուսաստանում հայկական ռազմական առաքելության ղեկավար, գնդապետ Թորգոմը՝ ռուսական ազգային կոմիսարներին կից Հայկական գործերի կոմիսարին՝

Ն՛:

Մոսկվա, 5-ը հուլիսի 1918 թ.:

Ես ձեզ խնդրում եմ ազգային կոմիսարներին փոխանցել, Մոսկվայում գտնվող գերմանական կայսրական կառավարության ներկայացուցչին² հանձնելու նպատակով, պատերազմող և չեզոք երկրների ներկայացուցիչներին հղված՝ պատճենով հանդերձ, հետևյալ բողոքը:

Գերմանական լրագրերում լույս տեսած, գերմանական սկզբնաղբյուրից ելնող կիսապաշտոնական ծանուցագրում նշվում է. «Կովկասահայաստանը հռչակել է իր անկախությունը: Հայկական մի պատվիրակություն ժամանել է Կոստանդնուպոլիս: Գերմանիան ճանաչել է Հայաստանի անկախությունը և այլն...»:

Այս ձևով ներկայացված տեղեկությունը կատարելապես հիմնագուրկ է: Խոսքն իրականում վերաբերում է ոչ թե Կովկասահայաստանի անկախության հռչակմանը, այլ Թիֆլիսի հայկական ազգային խորհրդի անձնատրական գործողությանը, որին բուրք-գերմանացիները բարեհաճել են թողնել, ձևի համար, Երևանի և Էջմիածնի հայկական մարզերը, մի տարածք, որը մեծ է այնքան, որքան թաշկինակը, բավական մեծ, անկասկած, այդտեղ ընդունելու համար Թիֆլիսի հայկական ազգային խորհրդին և նրան ղեկավարող «Դաշնակցություն» կուսակցության ողորմելի անդամներին:

Թիֆլիսի հայկական ազգային խորհուրդն ընտրել են Կովկասի հայերն անցյալ տարի:

1 Պ. Վաղամ Ա. Ավանեսովը:
2 Պ. Միրբախ-Հարֆը:

Թուրքիայի հայերը կտրականապես հրաժարվել են նրան ճանաչելուց: Նրանք չեն մասնակցել նրա ընտրությանը: Ի դեպ, այդ ընտրությունն իր խալդայի բնույթով, տեղիք է տվել բուռն քննադատությունների և հիմնավոր բողոքների, մասնավորապես, հիրավի ժողովրդավարական հայկական կուսակցությունների (բանվորական, սոցիալ-դեմոկրատական կուսակցության) կողմից: Իրենք՝ սոցիալիստ-հեղափոխականները, երես են շրջել «դաշնակցականներից», որոնք սակայն պատրաստվում էին մի ձևափոխման միջոցով, որի գաղտնիքը միայն իրենց է հայտնի, իրենց մինչ այժմ «ազգային գերհայրենասիրական» վաճառատան ցուցանակներին անսպասելիորեն ավելացնել «սոցիալիստ-հեղափոխական» մակագրությունը:

Դա միայն դատարկ խոսք էր: Բայց դա բավական էր, մեկ տարի առաջ դժբախտ հայ ժողովրդին մոլորեցնելու համար: Ահա թե ինչպես ազգային-սոցիալիստական-հեղափոխական... «Դաշնակցություն» կուսակցությունը, նենգության և բռնության միջոցով դաշինք կայացնելով բուրժուական կուսակցության հետ, Թիֆլիսի հայկական ազգային խորհրդի կազմում ձայների մեծամասնություն ստացավ:

Այս «Ազգային» խորհրդի (նույն «Դաշնակցություն» կուսակցության) գործունեությունը կարող է ամփոփվել մի քանի տողում: 1917 թ. սեպտեմբեր-հոկտեմբերին նա մերժել է ֆրանսիացի հրահանգիչ սպաների օգնությունը, որն այդչափ համառորեն պահանջում էին Թուրքիայի հայերը՝ կազմակերպելու համար իրենց երկրի պաշտպանությունը և որը Ֆրանսիայի կառավարությունը նրանց էր հատկացնում:

1917 թ. նոյեմբեր-դեկտեմբերին, նա մերժել է այն օգնությունը, որը Շա[ի]ումյանի միջնորդությամբ Հայաստանին էին առաջարկում ազգային կոմիսարները: Հայերն այդ օգնությունն արհամարհելու հարկը չունեին: Խոսքն առնվազն վերաբերում էր Հայաստանի ռազմաճակատը լքող ռուսական զորքերի մի մասը պահելուն, սպասելով մինչև հայերը կարողանային կազմակերպվել: Բազմաթիվ մասնավոր օրինակներ վկայել են, որ ռուս զինվորներն անտարբեր չէին իրենց հղված այդ կոչի հանդեպ: Շահումյանի նախագիծը միանգամայն իրագործելի էր:

1917 թ. հոկտեմբեր-նոյեմբերին, Թիֆլիսի հայկական «ազգային» խորհուրդն իր նախագահ Ավետիս Ահարոնյանի բերանով (որը դաշնակցական էր) մերժել է Թուրքահայաստանի հայերին կազմակերպվելու հարցում՝ նրանց խնայելու պատրվակի ներքո:

Երբ վերջիններն ուշադրություն չեն դարձրել և ցանկացել են զինվել, այնուամենայնիվ (թեպետ, դժբախտաբար, արդեն շատ ուշ էր), «Դաշնակցություն» կուսակցությունը փութացել է օգտվել Թուրքիայի հայերի այդ մասնակի գորահավաքից, կուսակցությանը գովելու համար: «Դաշնակցություն» կուսակցության բոլոր միջակ բժիշկները և անբաններն իրենց ներկայացրել են իբրև հմուտ ռազմավարների, հինգերորդ կարգի բոլոր զրչակները զբաղվել են մեծ քաղաքականությամբ: Ռազմական գործի կամ այլ մասնագետները շրջանցվել են, իսկ նրանց հորդորներն ու խորհուրդներն արհամարհվել:

Թիֆլիսի հայկական «ազգային» խորհուրդը երբևէ որոշում չի կայացրել Թուրքիայի հայերի պահանջած և հանգամանքների բերումով համառորեն պարտադրված՝ Կովկասի հայերի հանընդհանուր զորահավաքի վերաբերյալ:

Թիֆլիսում նա համատեղ է գործում թաթարական «Մուսավաթ» կուսակցության և Թուրքիայի սուլթանի ու Գերմանիայի Նորին մեծություն կայսրի ողորմածությամբ՝ այժմ «անկախ» Վրաստանի ազնվաբարո ղեկավարների հետ:

Հանրահայտ էր, այդուհանդերձ, որ թաթարական ղեկավարները, ինչպես Վրաստանի նշանավոր դեմոկրատները, բազում ամիսներ ի վեր, դավաճանում էին Հայաստանին՝

նրան քիկունքից դաշույնի հարված հասցնելով:

Թաթարները, որոնց պարոնայք վրացիները բավական մեծ քանակությամբ գեներ և ռազմամթերք էին տրամադրում, Ելիզավետպոլում, ինչպես և այլուր, կոտորում էին հայերին, ինչպես նաև ռուսներին: Նրանք պայթեցնում էին ռազմաճակատից վերադարձող ռուսական զնացքաշարերը, ինչպես նաև այնտեղ գնացող հայկական զնացքաշարերը:

Վրացական ողջախոհ հայրենասիրությամբ, մի վրացի գեներալ՝ Էրզրումի բանակի հրամանատար Օղիշելիձեն, առանց խղճմտանքի Հայաստանը վաճառում էր նրա թշնամուն՝ Վեհիբ փաշային՝ թուրքական բանակների հրամանատարին: Վրացի այս գեներալի աջակցությամբ, Էրզրումի թուրքական լրտեսության ղեկավարները՝ թաթարներ Սեիդովը և Սուլթանովը, նախապատրաստում էին Հայաստանի՝ մինչև ատամները զինված քուլդ և թուրք ժողովուրդների ապստամբությունը:

1918 թ. հունվարին, գեներալ Օղիշելիձեն, ում Թիֆլիսի «սեյմը» պաշտոնապես հանձնարարություն էր տվել Հայաստանի պաշտպանության վերաբերյալ, մերժում էր Էրզրումի հայկական կայազորի ղեկավարի՝ պաշարողական վիճակ սահմանելուն վերաբերող բազմիցս արած՝ զինված քրդերին և թուրքերին զինաթափելու առաջարկը: Այդ նույն գեներալը պետք է հետագայում հրավիրեր Վեհիբ փաշային թուրքական զորքերով Կելկիթ քաղաքը գրավելու, որտեղ իր նիստերն էր գումարում ռուս-թուրքական ռազմական միացյալ հանձնաժողովը, այս կերպ առանց պաշտպանության թողնելով Երզնկայի աջ թևը, որտեղից բնակչությունը պետք է հապճեպ դուրս բերվեր:

Վերջապես, այդ վրացի գեներալ Օղիշելիձեն էր, որը ճգնաժամային պահին պետք է խափաներ Էրզրումի բերդամրոցի հրետանային ռուս սպաների գործունեությունը, նրանց հայտարարելով, որ «ինքը երբեք մարտի մեջ չի մտնի թուրքերի հետ ո՛չ Մամախաթունի առջև, ո՛չ Էրզրումի մոտ, ո՛չ այլուր...»:

Փաստորեն, Էրզրումի ճակատամարտի նախօրեին (1918 թ. փետրվարի 21-ին), բերդամրոցի ռուս սպաների կորպուսը, փոխգնդապետ Թվերդեկիլիարովի հրամանատարությամբ, հրաժարվել է կրակել թուրքերի վրա՝ բանակի հրամանատար Օղիշելիձեի տված հրամաններին համապատասխան: Էրզրում բերդաքաղաքում կային բոլոր տրամաչափերի ավելի քան հինգ հարյուր թնդանոթ, որոնցից ոչ մեկը հնարավոր չի եղել ո՛չ օգտագործել թշնամու դեմ, ո՛չ մասնատել:

1918 թ. փետրվարի 27-ին, Էրզրումից բնակչությանը դուրս բերելու օրը, փոխգնդապետ Թվերդեկիլիարովը և բերդամրոցի հրետանային գնդի սպաների մեծ մասը կամովին հանձնվել են թուրքերին:

Վրաց գեներալի՝ թշնամուն հանձնած Էրզրումի պլացդարը և դրա հետ մեկտեղ ամբողջ Թուրքահայաստանը, ինչպես ավելի ուշ (1918 թ. ապրիլին) վրաց նախարար Չեհենկելլու [sic]՝ նողկալիորեն թուրքերին հանձնած Կարսի պլացդարը (որն այդուհանդերձ պաշտպանվում էր) և դրա հետ մեկտեղ ամբողջ Կովկասահայաստանը, այն երկու թանկարժեք ծառայությունները կամ երկու կարևորագույն դավաճանություններն էին, որոնք Վրաստանի համար պետք է ապահովեին նրա անկախությունը:

Թիֆլիսի կառավարության և Էրզրումում գտնվող բանակի հրամանատարի դավաճանությունը ոչ մեկի համար գաղտնիք չէր Կովկասում:

Ահա թե ինչու, իսկույններ, սպառնալիքի ներքո հայտնված Թուրքիայի հայերը, որոնք, անկասկած, իրենց ողբերգական փորձի հետևանքով նաև ավելի խորաթափանց էին դարձել, մի հուսակտուր ջանք են գործադրել ազատագրվելու կովկասյան դավաճաններից, որոնք էին «Մուսավաթ» կուսակցությունից՝ թաթարները, «Դաշնակցություն» կուսակցու-

թյունից հայերը կամ վրացիներ Չխեիձեն, Ծերեթելին, Չեհենկելլին [sic], Պամասշվելլին՝ որոնցից ոմանք, ոչ այնքան հեռավոր անցյալում (անցյալ տարի, այդ ժամանակաշրջանում), գտնվում էին ոռոսական մեծ ժողովրդավարության դեկին և ցանկանում ուղղություն տալ համայն աշխարհին:

1918 թ. հունվարի 31-ին, ժողովրդի և հայկական գործերի ներկայությամբ, Էրզրումում Թուրքիայի հայերը, որոնք այդչափ սակավաթիվ էին, ավա՞ղ, այդքան կոտորածներից հետո, հռչակել են իրենց դժբախտ երկրի անկախությունը, Էրզրումի ավերակների վրա ծածանել հայկական դրոշը և վերջին անգամ կոչով դիմել ոռոսական ժողովրդավարությանն ու Արևմուտքի բարեկամ ժողովուրդներին, նրանցից օգնություն խնդրելու համար:

Բայց վրացի գեներալ Օղիշելիձեի հոգածության շնորհիվ, որին աջակցում էին Էրզրում ուղարկված «Դաշնակցություն» կուսակցության մի քանի ելուզակներ՝ նրա պահեստները կողոպտելու համար, հոգևարքի մեջ գտնվող Հայաստանի վատության ճիշտ խլացվել է: Անդրկովկասյան հեռագրային ծառայությունը հրաժարվել է հայերի վերջին կոչը փոխանցել քաղաքակիրթ աշխարհին: Մի քանի օր անց, Էրզրումի հայկական կայազորի ղեկավարը, որն ընդդիմանում էր գեներալ Օղիշելիձեի դավաճանությանը, ազատ է արձակվել հրամանատարությունից և հայկական դրոշը մերժվել է:

Այդ պահից ի վեր, դժբախտ Հայաստանի ճակատագիրը վճռված էր: Ամբողջությամբ արյունաներկ, իբրև մատուցվող զոհ, նա պետք է նվիրաբերվեր թուրք-գերմանացիներին, որպեսզի Կովկասում լինեին «անկախ» վրացական օլիգարխիան և ֆեոդալական Ադրբեջանի Թաթարստանը:

Նման հանցագործ գործունեությունից հետո, ամենևին էլ զարմանալի չէ, որ Թիֆլիսի հայկական «ազգային» խորհուրդը (նույն «Դաշնակցություն» կուսակցությունը) այդչափ ամոթալի ձևով անձնատուր է եղել թուրք-գերմանացիներին: Բայց նվազագույնը տարօրինակ է, որ խիստ հզոր Գերմանիայի կառավարությունը բանակցել է, այսպես կոչված, Թիֆլիսի հայկական ազգային խորհրդի հետ, որը երեք ամիս առաջ, իր նախագահի բերանով հայտնել էր սեփական լուծարման մասին:

Իրականում, վերջին մարտին Թիֆլիսում կայացած կոնֆերանսի ժամանակ, Ավետիս Ահարոնյանը (դաշնակցական) հրապարակայնորեն խոստովանել է, որ «հայկական գործերը կատարել են իրենց պարտքը» և «եթե Հայաստանը կործանվի, ապա դրա համար պատասխանատու են ինքը՝ Թիֆլիսի հայկական «ազգային» խորհրդի նախագահն ու իր գործընկերները...»:

Հրապարակային այս խոստովանությունից հետո, որտեղ դավաճանությանը հավելվում էր կեղծավորությունը, թվում է, թե Ահարոնյանը և «Ազգային խորհրդի» նրա գործընկերները ոչինչ չունեին անելու, քան ինքնասպան լինելը: Նրանք համանման ոչինչ չեն արել:

Թիֆլիսի ազգային խորհրդի այս պարոնայք մեծ ցանկություն ունեին, ըստ երևույթին, վերջին ստոր արարքով ավարտին հասցնելու իրենց դավաճանությունը հայ ազգի հաղեպ:

Թուրքահայաստանը կորստի մատնելու համար ամեն ինչ անելուց և ձեռքերն ու ոտքերը կապված Կովկասահայաստանը թուրք ասպատակիչներին հանձնելուց հետո, Ահարոնյանը և «Դաշնակցություն» կուսակցության նրա մանկլավիկներն այժմ վազում են Կոստանդնուպոլիս՝ սուլթանի ոտքերն ընկած ստորաքարշություն անելու համար, որպեսզի հայկական մի երկրում, որն այնև գոյություն չունի, նախապատերազմական պաշտոններն իրենց տրվեն:

Խոսել այս պայմաններում, հայկական, այսպես կոչված, «անկախության» մասին, դժնի ծաղրածանակ է, որի ամբողջ պատասխանատվությունը պատմության առջև կրելու է Գերմանիան:

Այսքանը Կովկասահայաստանի մասին:
Գերմանական կիսապաշտոնական ծանուցագիրը լուրջան է մատնում Թուրքահայաստանը:

Գուցե այն պատճառով, որ Մեծ Հայքի այս կեսը, ինչպես նաև Կիլիկյան Հայաստանն այժմ ոչ այլ ինչ են, եթե ոչ ավերակների հսկայածավալ կույտեր, որտեղ չորս տարուց ի վեր, ի տես ամենքի, հաճախ գերմանացի գործակալների օգնությամբ, թուրքերը կոտորել են մեկ միլիոն հինգ հարյուր հազար հայ:

Ես վերադառնում եմ այդ Թուրքահայաստանից: Մի քանի ամսից ի վեր, ես կրել եմ նրա տառապանքները: Ես ներկա եմ եղել նրա հոգևարքին: Նախկինում այդչափ կենսունակությամբ լի հայկական այդ բարգավաճող երկրից մնում են միայն Ռուսաստան գաղթած քան հազար ութ և երեսուն հազար կին ու ծերունի:

Լինելով Մոսկվայում Թուրքահայաստանի այս տանջահար բեկորների ներկայացուցիչը, ես իմ ամբողջ ուժերով բողոքում եմ թուրք-գերմանացիների կողմից հայ ժողովրդի վերջնական ոչնչացման դեմ:

Ես բողոքում եմ Գերմանիայի կառավարության ստորության դեմ, որը դրդել է սրախող անելու Հայաստանը և որն այժմ համարձակություն ունի խաբելու աշխարհին, հռչակելով, ես չգիտեմ, թե հայկական ինչպիսի անկախությունը:

Ո՛չ: Հայկական անկախություն գոյություն չունի:
Հայաստանը վախճանված է:

Դավաճանված իր հարևաններից, հեռու իր բարեկամներից, հայ ազգը հենց նոր է կնքել իր մահկանացուն, առանց ի վիճակի լինելու գեների դիմելու հանուն ինքնապաշտպանության:

Բայց այս քաջարի փոքրաքանակ ժողովրդի գործը, որն այդչափ սեր ունի մշակույթի և առաջադիմության նկատմամբ և որը դարեր ի վեր կոչվում էր իր գոյության համար, չի վախճանվի: Պատերազմը հայերի և թուրք-գերմանացիների միջև միայն նոր է սկսվել: Եթե Հայաստանը վախճանվել է, աշխարհում դեռևս մնում են ցիլուցան եղած բավականաչափ հայեր՝ վրեժխնդրության բանակ կազմավորելու համար: Եվ եթե վերջինս բավականաչափ բազմաքանակ չէ, բարեկամական բոլոր երկրներում մենք կզինվորագրենք հայասերների բանակ:

Մենք նրանց կտանենք դարավոր տառապանքների դասական երկիրը, դեպի հինավուրց հայկական հողերի ավերակները, փտաբելու համար այդտեղից թուրք-գերմանական մարդասպաններին:

Հայաստանը վախճանված է: Կեցցե՛ Հայաստանը:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, Arménie, tome 1, ff. 145-151).

1 Մխալ է. իմա՝ Ռամիշվիլի:

**Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնը՝
Ռուսաստանում Ֆրանսիայի դեսպան պ. Նուլենսին**

Հ. թիվ 771:

Փարիզ, 19-ը հոկտեմբերի 1918 թ.:

Ես պատասխանում եմ թիվ 852 ձեր հեռագրին¹:

Նուրբար փաշան ճանաչում է Թորգոմին միայն նրա ունեցած ռազմական անձնուրաց համբավի շնորհիվ: Կովկասի և Թուրքահայաստանի հայկական կազմակերպությունների հետ ունենալով միայն անկայուն հարաբերություններ, Ազգային պատվիրակության նախագահը չի կարող իմանալ, թե տեղական կազմակերպությունը Թորգոմին լիազորե՞լ է, թե ոչ:

Գաղտնի. – Համաձայն Թիֆլիսի մեր հյուպատոսության թղթակցության, Թորգոմը թվում է ավելի շուտ միայնակ, եռանդուն և քաջարի, բայց գտնվում է պաշտոնական խմբերից դուրս:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, *Arménie*, tome 1, f. 156).

**Հայկական ազգային պատվիրակության նախագահ
Պողոս Նուբար փաշան՝ Սենի պատգամավոր պ. Ալբեր Տոմասին**

Ն:

Փարիզ, 19-ը հոկտեմբերի 1918 թ.:

Իտալիայից եկած իմ հայրենակիցներից մեկը, պ. Չարյանը, ինձ ասում է, որ դուք խտնելով Թուրքիայի կողմից ճնշված ազգությունների համար վեհաժողովի նախագծի մասին, նրան պետք է, որ պատասխանած լինեիք, թե կարող էիք հակված լինել նրան ձեր օգնությունը ցուցաբերել այն պայմանով, որ այդ հարցը համաձայնեցվի Ազգային պատվիրակության հետ: Դրանում, ես տեսնում եմ ձեր բարյացակամության և բարեկամության դրսևորումը հայերի նկատմամբ, բայց չեմ ցանկանում այդ շարաշահել, և եթե դուք կարողանայիք օրերից մի օր ինձ տրամադրել մի քանի թույլ, ես հաճույքով կգայի գրուցելու ձեզ հետ այդ նախագծի մասին, որը կարիք ունի հասունացման:

Ֆրանկլին-Բույոնը, որը երեկ ներկա էր Արևելքի կոմիտեի նիստերից մեկին, որին ես հրավիրված էի, ինձ հետ գրուցեց նաև արտասահմանում գտնվող խորհրդարանական գործողության կոմիտեի, որի նախագահն ինքն է, նախաձեռնությամբ համանման բնույթի վեհաժողովի նախագծի շուրջ: Բայց ես չգիտեմ, թե արդյո՞ք նա դրան շարունակություն կտա:

Պ. Չարյանն ինձ ասաց, որ դուք նրան ընդունելու եք երեքշաբթի օրը և առաջարկեց ինձ զավ իր հետ: Ես մերժեցի նրա առաջարկը, կարծելով, որ եթե դուք բարեհաճեք ինձ կարճատև գրույցի հնարավորություն ընձեռել, ավելի լավ կլինի, որ մենք տեսնվեինք առանց

¹ Հոկտեմբերի 13-ի վերն արտատպված է թիվ 703 փաստաթղթում:

նրա, որպեսզի գրուցենք ավելի ազատ:

Ես ձեզնից չեմ խնդրում, որ նախաձեռնեք միասին, իրազեկ լինելով, թե որքան սուղ է ձեր ժամանակը, բայց առանց ասելու ինքնին հասկանալի է, որ եթե դուք հանգստի ժամանակ ունենայիք (որովհետև հարկ է որևէ տեղ նախաձեռնել), ձեզ համար բավական կլինի ինձ համար սչել ձեզ հարմար օրը:

(A.N., 94 AP 408).

**Կովկասում ֆրանսիական ռազմական առաքելության ղեկավար,
փոխգնդապետ Շարդինյին՝ Խորհրդի նախագահ,
Ռազմական նախարար պ. Կլեմանտյին**

Հ. թիվ 54, 55: Գաղտնի:

Թեհրան, 20-ը հոկտեմբերի 1918 թ., ժ. 17.30-ին:
(*Unsubtyl* է ԲԸ-ի Առաջապահ խումբը
հոկտեմբերի 21-ին):

Հայկական տարրերը Պարսկաստանում ներկայումս կրճատվում են մինչև 3000-ի Համադանում, որից 1500-ն արդեն կազմակերպվել են և ուղարկվել Բիջար ու 1000-ի Էնգելյում, որոնք կազմակերպված չեն:

Գեներալ Բագրատունին նկատի ունի Պարսկաստան կանչել 4000 զինվորի, որոնք ներկայումս անհրաժեշտ են Պետրոպոլսում. 500-ի՝ Լենքորանից, 1000 գաղթականի՝ Կրասնովոդսկից և հետագայում օգտագործել Արմավիրի տարածաշրջանում գտնվող 2500 գաղթականի:

Դիվիզիայի կազմակերպումն, այսպիսով, ներկայումս անհնար է: Բայց հույս եմ տալով, որ կարող է առաջադրվել հետևյալ սկզբունքը. Պարսկաստանում և Կովկասում բոլոր հայկական զինված անձնակազմերի ռազմական կազմակերպումն անգլիական հրամանատարության կողմից, հայկական այս ստորաբաժանումների կազմավորումը և օգտագործումը տեղում՝ սպասելով Հայաստանում նրանց համախմբելու հնարավորությանը*:

Անհրաժեշտ համազգեստի, ռազմական հանդերձանքի և սպառազինության ի մի բերումն ամենադժվարին գործն է: Հաղորդել են Թեհրան, ուր ես եկել եմ 2 օրով**:

(A.M.G., 16 N 3186).

* Նախարարի՝ լուսանցքում արած ծանոթագրությունը. «Դա տրամաբանական է թվում»:

** Նախարարի՝ լուսանցքում արած մեկ այլ ծանոթագրությունը. «Ստույգ ինձ հետ այդ մասին (հարցը կապված է Ալեքսանդրոսի հարցի հետ)»:

**Խորհրդի նախագահ, Ռ-ազնական նախարար պ. Կլեմանտնո՝ Կովկասում
Ֆրանսիական ռազմական առաքելության ղեկավար,
փոխգնդապետ Շարդինյին՝**

Հ. թիվ 13.512/3: Գաղտնի:

Փարիզ, 23-ը սեպտեմբերի 1918 թ.՝

Անձամբ ձեզ ուղղված՝ տեղեկատվության կարգով:

Առաջին. – Ես հավանություն եմ տալիս 54-55 ձեր հեռագրում՝ ներկայացված սկզբունքին, որը վերաբերում է բրիտանական բանակի կողմից Պարսկաստանում և Կովկասում հայկական զինված անձնակազմերի կազմակերպմանն ու օգտագործմանը: Դա ներկայումս գործնականորեն իրագործելի միակ լուծումն է:

Երկրորդ. – Այդուհանդերձ, ես անհրաժեշտ եմ համարում տեսադաշտից բաց չթողնել այս բոլոր զինված անձնակազմերը հետագայում Հայաստանում համախմբելու հանգամանքը:

Երրորդ. – Անգլո-ֆրանսիական համաձայնությունը և ներկայումս ընթացքի մեջ գտնվող գործողությունները Ֆրանսիային կընձեռեն Բեյրութը, Ալեքսանդրետը, Ադանան, Սվազն ու Դիարբեքիրն ընդգրկող ազդեցության գոտին:

Քանի որ Ալեքսանդրետի նավահանգիստը Հայաստանի բնական ելուստն է, Ֆրանսիան, այսպիսով, հետագայում նույնիսկ ուղղակիորեն աջակցություն կցուցաբերի հայկական բանակին:

(A.M.G., 4 N 62).

710

**Մեհի պատգամավոր պ. Ալբեր Տոմասը՝ Հայկական ազգային
պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշային**

Ն:

Փարիզ, 23-ը հոկտեմբերի 1918 թ.:

Ես հիրավի ուրախ կլինեմ, որքան հնարավոր է արագ, ձեզ հետ գրուցելու համար թե՛ Ջարյանի հետ իմ գրույցի շուրջ և թե՛ այն մասին, թե ինչ է հարկ, որ անի Ֆրանկլին-Բույոնը:

Եթե դուք ցանկանաք բարյացակամություն ունենալ գալու հինգշաբթի օրը, կեսօրվա շրջանում, ես հաճույքով ձեզ կընդունեմ:

Այս շաբաթ ես ազատ չեմ, բայց մենք կկարողանանք պայմանավորվել մեկ այլ օրվա

1 Փոխգնդապետ Շարդինյին այդ ժամանակ զանվում է Էնգելիում՝ Պարսկաստանում:
2 Ի գիտություն նախարարի՝ պատճենը փոխանցվել է Արտաքին գործերի նախարարությանը: Ասիա-Օվկիանիայի փոխվարչությունն այն ստացել է 1918 թ. հոկտեմբերի 23-ին:
3 Հոկտեմբերի 20-ի. տե՛ս վերը թիվ 708 փաստաթուղթը:

համար, որպեսզի ընդունեմ նախաճաշի ձեր սրտաբուխ հրավերը:

(A.N., 94 AP 408).

711

1918 թ. հոկտեմբերի 23-ին «Ժուրնալ դ'Օրիենտ» լույս տեսած հոդված

Մեղավորները

Ներքին գործերի նախարար Ֆեթի բեյը՝ հայերի դեմ ուղղված հալածանքներում ներգրավված բոլոր պաշտոնյաների (առանց հաշվի առնելու նրանց պաշտոնն ու աստիճանը) վարքագծի արդարացի և անկողմնակալ հետաքննության սկզբնավորմանը ձեռնամուխ լինելու մտադրությամբ՝ հրահանգներ է տվել իրավասու պաշտոնյաներին:

Խոսելով կառավարության որդեգրած լիբերալ միջոցառումների մասին, «Աբշամը» հայտարարում է, որ այս հատուցումները մեծ մասամբ հայերի օգտին են: Այսօր կառավարությունն ուղղում է նախկին սխալը: Մենք ասում ենք կառավարություն, որովհետև թուրք ազգն անցյալում որևէ սխալ, որևէ հանցանք չի գործել և իր անցյալի վրա որևէ բիծ չունի: Նա, այսպիսով, հաշվետվություն չունի ներկայացնելու մեծ դատարանին, որն ազգերի կողմից կազմավորման ընթացքում է: Եթե անցյալում, կարճատև ժամանակաշրջանում, մեր հայրենակիցների մի մասի օջախները քանդվել են, ազգն այդ որոշումների ընդունմանը մասնակցություն չի ունեցել: Թող որ նրանք, ովքեր իրականացրել են այդ արարքները, մասնակցություն չի ունեցել: Թող որ նրանք, ովքեր իրականացրել են այդ արարքները, բացատրեն դրանց շարժառիթները և եթե ցանկանում են, դրա համար պատասխանատվություն չկրեն: Բայց այս պահին, երբ արդարությունը վերականգնման, վերահաստատման ընթացքում է, թող որ թուրք ազգի անունը չհնչի:

Չմոռանանք սակայն, որ մեր կանայք և երեխաները ևս կոտորվել են, չնայած ազգն իր ձեռքերն արյունաներկ չի արել: Ասենք նաև, որ հայերի արտաքսման ընթացքում, թուրքերը ևս լալիս էին նրանց հետ:

Այսօր, ամերիկյան դատարանի առջև, թուրք ազգի վրն է բարդվել մի քանի հրոսակախմբերի գործած հանցանքների բարոյական և նյութական պատասխանատվությունը: Նա չպետք է այդ վերաբերմունքին արժանանա: Եթե նրան պատասխանատու դարձնեն, նա ևս հաշիվ կպահանջի իր շարքերում գտնվող այն մայրերի և երեխաների համար, որոնց կոտորել են: Մեր անմեղ ազգը պատրաստ է վկայելու, որ ինքը հանցագործ չի, որովհետև շատ դյուրին է զանազանել այդ հանցանքների հեղինակներին:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, *Turquie*, tome 14).

712

**Խորհրդի նախագահի անձնական քարտուղարության ղեկավար
պ. Ժան Մարտեն՝ Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին**

Ճ. 8210: Փ {նստային} ք {աժանույն}:

Փարիզ, 24-ը հոկտեմբերի 1918 թ.:
(Ստացել է Կարինետը և
Զադ. վարչ. հոկտեմբերի 25-ին):

Խորհրդի նախագահին հղված՝ «Փարիզի հայ մտավորականների միության» (9, Սայ փողոց, Փարիզ) նամակը:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, Arménie, tome 1, f. 160).

ՀԱՎԵԼՎԱԾ

**Փարիզի հայ մտավորականների միության նախագահ
պ. Արշակ Չոպանյանը՝ Խորհրդի նախագահ,
Ռ-ազմական նախարար պ. Կլեմանսոյին**

Ն:

Փարիզ, 20-ը հոկտեմբերի 1918 թ.:

Բոլոր հայերը բաժանում են մեծ ուրախությունը, որով համակվել է համայն Ֆրանսիան այն ժամին, երբ նրա սուրբ հողն ազատագրվել է, երբ փայլատակում է նրա գործի հաղթանակը: Մեր եղբայրները, որոնք այնտեղ տառապում են, դեռևս սուզված ամենադաժան խավարի մեջ, և նրանցից այն անձինք, ովքեր համառորեն շարունակում են մեր երկրի լեռներում կատարել իրավունքի բանակի առաջապահի դերը, ինչպիսի խանդավառությամբ պետք է իմանան այն ազատարար իրադարձությունների մասին, որոնք տեղի են ունենում Ֆրանսիայի հողի վրա: Որքան է նրանց հավատը և խիզախությունը կրկնապատկվելու համընդհանուր ազատության հաղթանակի մոտեցումն ազդարարող այս լուսաշող լուրերի առիթով: Որքան նրանք պետք է ուրախանան, իմանալով, որ Ֆրանսիայի վեհագեղ քաղաքներն ազատագրվել են, որոնք՝ նրանց ֆրանսիական ոգով հագեցված սրտերի համար նույնքան թանկագին են և նույնքան սուրբ, որքան և իրենց հարազատ հողի քաղաքները:

Թող օրհնվեն ֆրանսիացի հերոս, վեհապանձ զինվորները, որոնք իրագործել են այս ազատարար հրաշքը: Թող օրհնվի Ֆրանսիան, որը ցանկանում է (դուք հենց նոր եք մեկնաբանել նրա ոգին ձեր հիասքանչ ելույթում), որ իր ազատագրումը վերածվի մարդկության ազատագրման:

Մեր միության հայ գրողները և դերասանները, երախտագիտությամբ և խորին հիացմունքով են ողջունում հանձին ձեզ, պարոն նախագահ, մեծ գրողին և մեծ հայրենասերին, որը կարողացել է դեկավարել ազատագրման այդ գործն այնպիսի հիասքանչ հզորությամբ, եռանդով ու հավատով, որպիսին է զարմանահրաշ հերոսամարտը:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, Arménie, tome 1, f. 161).

Ասիա-Օվկիանիայի փոխվարչության ծանուցագիրը¹

Ծ:

Փարիզ, 25-ը հոկտեմբերի 1918 թ.:

Հայկական ազգային պատվիրակության նախագահը² Դեպարտամենտին է հանձնել հոկտեմբերի 18-ի թվակիր մի գրություն³, որը դաշնակիցներին հանգեցնում է այն եզրակացության, թե հայկական զորքերը պատերազմող կողմ են: Մի կողմից՝ այս զորքերն այն հայկական զույմարտակներն են, որոնց հրամանատարական կազմով ապահովել են րանսիացի սպաները և որոնք կազմում են Արևելյան լեզեոնի մասը, մյուս կողմից՝ Կովկասից Պարսկաստան գալիս՝ այն մի քանի հազար հայերն են, որոնք կազմակերպվում են Օսմանյան Հայաստանում և Կովկասում թուրքերի դեմ պայքարը վերսկսելու համար:

Նույն խնդրանքն է հղվել Անգլիայի և Իտալիայի կառավարություններին: Կասկածելի է, որ Անգլիայի կառավարությունը կարողանա մերժել այդ խնդրանքը, որովհետև նա բոլորովին վերջերս է, առանց մեզ հետ խորհրդակցելու, Պաղեստինի և Եփրատի միջև գտնվող անապատի արաբ ցեղերին, որոնք զենք են բարձրացրել թուրքերի դեմ, ճանաչել իբրև պատերազմող կողմի: Մյուս կողմից, մենք կարող ենք իբրև հավաստի ընդունել այն, որ Իտալիայի կառավարությունը, որն ամեն կերպ փորձում է իր համար Արևելքում կողմնակիցներ գտնել, աճապարանքով կօգտվի այդ առիթից բավարարելու համար հայերի խնդրանքը:

Այսպիսով, թվում է, թե տեղին կլինի ամմիջապես պատասխանել Հայկական ազգային պատվիրակության նախագահին, որ Ֆրանսիայի կառավարությունը, ինչ վերաբերում է իրեն, հակված է ճանաչել հայկական զորքերին՝ ամենուր, որտեղ նրանք կկազմակերպվեն կանոնավոր պատերազմի սկզբունքներին համապատասխան, իբրև պատերազմող կողմի, այն պայմանով, այլուհանդերձ, որ այդ հանգամանքը ճանաչեն նմանապես դաշնակից մյուս տեղությունները:

Կարելի է միաժամանակ Ռ-ազմական նախարարության հրահանգներն ուղարկել Միլիայում ֆրանսիական զորքերի հրամանատար գեներալին⁴, որպեսզի նա հայկական զույմարտակներին բաշխի հայկական զույմերն ունեցող դրոշմեր, մի բան, որը պարզորոշ մատնացույց կանի, որ այդ ազգի ինքնավար գոյության իրավունքը ճանաչվում է:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, Arménie, tome 1, ff. 162-162 v).

Ղուշագիր Կովկասի իրադրության շուրջ⁵

Ծ. թիվ 6015:

- 1 Նախատեսված է նախարարի համար:
- 2 Պողոս Նուբար փաշան:
- 3 Չի հայտնաբերվել:
- 4 Գնդապետ դը Պիեպասը:
- 5 Հավանաբար՝ հայկական սկզբնաղբյուրից:

ԺճՆ, 25-ը հոկտեմբերի 1918 թ.:

(Ստացել է Հետախուզական գլխավոր ոստիկանության գլխավոր կոմիսարիատը հոկտեմբերի 31-ին):

Մենք տեղեկանում ենք այն բանին, ինչը հետևում է Կովկասի ներքին իրադրության և կենտրոնական տերությունների՝ այնտեղ ծավալած գործունեության մասին:

Կովկասն այժմ բաժանված է երեք մասի: Հեղափոխությունն այստեղ հանգեցրել է երեք տարանջատ հանրապետությունների ձևավորմանը, որոնք են.

1/ Վրաստանը, որն ընդգրկում է Թիֆլիսի ու Քութայիսի նախկին կառավարությունները և Սև ծովի տարածաշրջանների մի մասն ու Սուխումի տարածաշրջանը: Թիֆլիսը մնացել է իբրև Վրաստանի մայրաքաղաք:

2/ Ադրբեջանի հանրապետությունը, որն ընդգրկում է Ելիզավետպոլի և Բաքվի կառավարությունները:

3/ Հայկական հանրապետությունը, որը կազմավորվել է միայն Երևանի կառավարությունից, որովհետև համաձայն Ռուսաստանի կնքած պայմանագրերի՝ Բաքունը, Կարսը և Ալեքսանդրապոլը, որտեղ հայկական տարրն այնուամենայնիվ գերակշռող է, անցել են Թուրքիային:

Քաղաքական իրադրությունը Կովկասում կենտրոնական տերությունները ներկայումս դիտում են իբրև անկայուն: Գերմանիայի կառավարությունն, այդուհանդերձ, դրանում տեսնում է իր քաղաքականության համար նպաստավոր հայտանիշներ և նրա քարոզչությունը, որը հակում ունի մերձեցնելու Կովկասը Գերմանիային, տալիս է զնահատելի արդյունքներ:

Հայկական հարցը գերմանական դիվանագիտությանն է ներկայացնում լուծման կարիք ունեցող ամենադժվարին խնդիրներից մեկը: Գերմանիան Թուրքիայի հետ կապված է տարբեր պարտավորություններով. մի կողմից, նա չի կարող Հայաստանին զրկել իր ճակատագիրն ինքնուրույնաբար, վերջինից անկաշկանդ տնօրինելու իրավունքից, որը ջանում է նրան պարտադրել իր պրոտեկտորատը և այդ արվում է չնայած այս բնակիչների (ներառյալ բուրքական հպատակություն ունեցող հայերը) հստակորեն դրսևորած կամքին դեմ: Գերմանիայի համար խոսքն, այսպիսով, վերաբերում է «ապրելու եղանակ» գտնելուն, որը կարողանա հաշտեցնել երկու կողմերի հակադիր շահերը: Այս երկրնորանքը գտել է հետևյալ լուծումը: Հայ քաղաքական առաջնորդներին Գերմանիան հասկացնել է տվել, որ ինքը կերաշխավորի Հայաստանի փաստացի ինքնավարությունն իր բոլոր՝ թե՛ սոցիալական, թե՛ քաղաքական իրավունքներով, այն պայմանով, որ նա Թուրքիայի նկատմամբ գրավի հաշտվողական դիրքորոշում և չհակադրվի Կովկասում գերմանական քարոզչության տարածմանը: Գերմանիայի կառավարությունն այժմ ամենաբուռն եռանդն է գործադրում կովկասյան բոլոր ժողովուրդների կատարյալ համախմբմանը հասնելու համար, որպեսզի Դոնի կազակների և Դրինի օգնությամբ նրանց միավորի Ուկրաինային: Այդ միությունը նախասահմանված է հակազդելու դաշնակիցների՝ Պարսկաստանից եկող զինված ուժերի միջոցով Կովկասն ազատագրելու մտադրությանը: Այս թևային շարժումը գերմանացիները շատ վատ ընդունելության են արժանացրել, քանզի վախենում են, որ դաշնակիցները կարող են կասեցնել՝ Բաղդադի ճանապարհով դեպի Արևելք գերմանական առևտրական թափանցումը և այդ ասպարեզում իրենց տնտեսական գերակշռությունը՝ շնորհիվ այս կերպ ապահովված՝ Եգիպտոսից Հնդկաստան ձգվող գծի:

Այդ վտանգը կանխելու, ինչպես նաև խանգարելու համար դաշնակիցներին՝ Պարս-

կաստանի կողմից գերմանացիների ներթափանցումը Ռուսաստան կասեցնելու և այդտեղ իրենց ազդեցությունը հաստատելու գործում, գերմանացիներն աճապարել են թե՛ իրենց սեփական գործերում և թե՛ բուրքական տարրերի միջոցով գրավել Բաքուն. նրանք չեն դարձրել այդտեղ օժանդակ ուժեր ուղարկել:

Թիֆլիս քաղաքը Կովկասում գերմանամետ քաղաքականության կենտրոն է և գլխավոր անձը, որին հանձնարարված է այն այդտեղ հաղթական ավարտին հասցնելու գործը, կայսրության Դոմայի նախկին անդամ՝ վրացի Չիսենկելին է: Նրա շուրջը պտույտ են գալիս Կովկասի բոլոր քաղաքական գործիչները և հենց Թիֆլիսից է նմանապես, որ ողջ երկիրը հեղեղվում է ուժգին քարոզչությամբ, ինքնին հասկանալի է՝ ի վնաս դաշնակիցների և ի մեծ դժբախտություն բուն ռուսական շահերի: Չիսենկելու ազդեցությունը, գերմանական գործակալների օժանդակությամբ, դժբախտաբար, խիստ մեծ է և հարկ է ավելացնել՝ վնասակար: Այդ նրան է, որ վստահված են ներկայումս ընթացքի մեջ գտնվող բանակցությունները Դոնի կազակների առաջնորդ գեներալ Կրասնովի հետ: Ինչպես այդ մասին արդեն ասվել է, այդ բանակցությունները նպատակ ունեն միավորել Կովկասը Դոնի տարածքներին:

(A.M.A.E., Europe 1918-1929, Russie, tome 626, ff. 27-29).

Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնը՝ Հոռնում Ֆրանսիայի դեսպան պ. Կամիլ Բարրերին

Ճ. թիվ 1195:

Փարիզ, 26-ը հոկտեմբերի 1918 թ.:

Ես պատիվ ունեմ ձեզ ուղարկել սրան կից մի հեռագրի պատճենը՝ որը Հայաստանի անկախության իտալական կոմիտեի նախագահը հենց նոր է հղել Խորհրդի պ. նախագահին, Ռազմական նախարարին:

Ես ձեզ երախտապարտ կլինեմ, եթե դուք աննպատակահարմար չեք գտնում, այդ հեռագրի պատասխանում հավաստել պ. Կեսարոյին, որ Հանրապետության կառավարությունը երջանիկ կլինի իր ամբողջ աջակցությունը հայ բնակչությանն այսուհետև ցուցաբերելու համար՝ կոտորածների վերսկսմանը խոչընդոտելու և նրան օսմանյան լծից վերջնականապես ազատագրվելու հնարավորություն ընձեռելու մտադրությամբ:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, Arménie, tome 1, f. 166).

1 Այն արտատպելը կարևոր չի թվացել: Հոկտեմբերի 18-ի հեռագրով, պ. Կեսարոն Ֆրանսիական Խորհրդի նախագահից խնդրում է հիմնադրել հայկական անկախ պետություն:

**Խորհրդի նախագահը, Ռ-ազմական նախարարը՝
Ռ-ազմածովային նախարար պ. Ժորժ Լեյզյուի**

Ճ. թիվ 7543-9/11: Գաղտնի:

Փարիզ, 26-ը հոկտեմբերի 1918 թ.:
(Ստացել են Կար. հոկտեմբերի 28-ին,
ԲԸ-ի 1-ին ենթաբաժինը հոկտեմբերի 30-ին):

Լոնդոնում ֆրանսիական դեսպանության ռազմական կցորդին հղված՝ 1918 թ. հոկտեմբերի 24-ի թիվ 7486-9/11 գրության պատճենն Ալեքսանդրետի գրավման առիթով:

(A.C.M., SS Ed 126).

ՀԱՎԵԼՎԱԾ

**Ծանուցագիր Ֆրանսիայում բրիտանական առաքելության ղեկավար,
գեներալ Սփիարսի, Լոնդոնում Ֆրանսիայի ռազմական կցորդ,
գեներալ Կորվիզարի համար**

Թիվ 7586-9/11: Գաղտնի: Հրատապ:

Փարիզ, 24-ը հոկտեմբերի 1918 թ.:

Ֆրանսիական կառավարությունն առանձնահատուկ կաւարություն է տալիս այն բանին, որ Ալեքսանդրետի գրավումն իրագործեն ֆրանսիական և հայկական ստորաբաժանումները, հենց որ այդ հնարավոր լինի, առանց դիմելու ուժային գործողության:

Այդ ստորաբաժանումը հնարավոր կլինի առանձնացնել ներկայումս Բեյրութում համախմբված ֆրանսիական զորքերից և համաձայն այն հաշվարկի, որը գեներալ Ալլենքրիի վիճակի է անել տեղում՝ Սիրիայում ռազմածովային դիվիզիայի հրամանատար, ծովակալ Վարնեյի համաձայնությամբ:

Ցանկալի կլինի, որ Ուոր Օֆիսը, որքան հնարավոր է արագ, համանման բնույթի հրահանգներ հղի Սիրիայում բրիտանական ուժերի հրամանատար գեներալին:

Ստորագրված է՝ Կլեմանսո:

(A.C.M., SS Ed 126).

1 Ստորագրել է փոխգնդապետ Դելման:

Ռ-որեր դը Քեի հաշվետվությունը Քե դ'Օրսեին

Չրույց Հայկական ազգային պատվիրակության հետ

Փարիզ, 26-ը հոկտեմբերի 1918 թ.:
(Ստացել է Ասիայի փոխվարչ (ուրբյունը)՝
հոկտեմբերի 27-ին):

Պողոս Նուբարի մոտ ես երեկ նախաճաշեցի մի խումբ հայերի հետ, որոնցից և կազմված է նրանց ժողովրդի Ազգային խորհուրդն Արևմուտքում: Ես մի քանի դիտողություններ և կարծիքներ հայտնեցի, որոնց, կարծում եմ, որ առավել ևս պարտավոր եմ ձեզ տեղյակ պահել, որովհետև Կամմերերի միջոցով գիտեմ, թե ինչպես է ծառանում Թուրքիայի հետ զինադադարի հարցը:

1916 թ. մայիսի համաձայնագիրը մեզ համար, անտարակույս, հայերի վրա ազդելու գեներ է: Երեկ վերջիններս ձևացրին, թե կարծում են, որ հանգամանքներն այդ համաձայնությունը դարձրել են ուժը կորցրած, և երբ ես կտրականապես հրաժարվեցի ընդունել այդ տեսակետը, նրանք ինձ ասացին, որ քանզի Ֆրանսիան հայկական տարածքների այդչափ մեծ մասում պահանջում է առանձնահատուկ դիրք, պետք է տնօրինի ամբողջ հայ ազգի ճակատագիրը: Կարճ ասած, նրանք ինձ առաջարկեցին մեր գոտուն հավելել արևելքի վիլայեթները, որոնք Ռուսաստանի անհետևողականության պատճառով մնացել են լքված, և ապահովել ամբողջ հայ ազգի զարգացումը մեր հսկողության ներքո, որը նրանք մեծապես հույս են տաժում դարձնել հնարավորին չափ կարճատև ու որքան հնարավոր է կանոնավոր:

Ես, բնականաբար, նրանց շոայեցի գեղեցիկ խոսքեր և հավաստեցի, որ հպարտ կլինեմք մնան դեր ստանձնելու համար: Սակայն խորհելով այս մասին, ես ինձ հարց եմ տալիս, թե արդյո՞ք անհրաժեշտ չէ 1916 թ. մայիսի համաձայնագրից օգուտ քաղելու համար, հիրավի, ստանձնել այդ դերը՝ այն բոլոր հետին մտքերով հանդերձ, որոնք այն ներառում է:

Հայաստանում և նույնիսկ Սիրիայում մեր գործողության դեմ վտանգավոր ձևով դիմախայում են երեք ուժեր. չափազանց բուռն տենչանքը, որն ամենուր առկա է ժողովուրդների ինքնորոշման իրավունքի հարցում, հավատը, որն այդ իրավունքի հանդեպ մեզանում ունեն կամ ձևացնում են, թե ունեն որոշ սոցիալիստական և նույնիսկ այլ միջավայրեր, քաղաքական մալթուսականության այն տարատեսակը, որը ստորաքարշությունը շփոթում է զգուշության հետ և մեր բուրժուազիայի մի մեծ մասին բջնամաբար տրամադրում Փոքր Ասիայում իրականացվող յուրաքանչյուր եռանդուն գործունեության նկատմամբ:

Ոչ մի ժողովուրդ ունակ չէ այնքան, որքան հայերը կազմակերպելու այդ ուժերի օգտագործումը Ֆրանսիայի ազդեցության ծավալման դեմ: Նրանք անզիլացի և ամերիկացի միստիկական բարեպաշտների սիրելի հովանավորյալներն են, որոնց մոտ, իբրև դատապաշտպաններ, ունեն ամերիկյան բոլոր միսիոներներին, ովքեր չեն սիրում Ֆրանսիային՝ Արևելքում «պապականության» ներկայացուցչին: Նրանք շատ լավ գիտեն, թե ինչպես օգտագործեն ժողովրդավարության խոսելաճը, ինչպես քափանցեն այն շրջանները, որտեղ այն գործածվում է: Մամուլի վրա ազդելու համար նրանք ունեն գործակալներ և միջնորդներ: Ինչ վերաբերում է քաղաքական մալթուսականությանը, ապա՝ ոչ մի երկիր չի կարող ավելի, քան լեռնային քառս Հայաստանը, որտեղ իրար են կոտորում, նպաստել դրա-

նով համակվելուն: Կարճ ասած, կան բազմաթիվ հավանականություններ. եթե մենք ժամանակին չկարողանանք գործի դնել մեր երկրի քաղաքականությունը, որպեսզի Հայաստանում (ներառյալ Կիլիկիան) մենք ընկրկենք «ամբոխների ինքնորոշման իրավունքի» առջև:

Հավանաբար, հնարավոր կլինի ջանալ հայերի հետ անհասպաղ մի համաձայնություն կայացնել, որը խարսխված լինի մեր կողմից՝ 1916 թ. համաձայնագրի իրագործումից բխող բաժանումից հրաժարվելու վրա, այն պայմանով, որ նրանք աշխարհին խնդրեն Ֆրանսիային մանդատ հատկացնել իրենց՝ իբրև ազատ ժողովրդի կազմավորման ղեկավարը լինելու համար: Այսպիսով, մենք չենք հրաժարվի դուրսին իրագործելի միջոցից, քանի որ ներկա մթնոլորտում, ես չեմ տեսնում, թե մենք ինչպես ի վիճակի կլինենք իրականացնել 1916 թ. համաձայնագիրը՝ դրսում և բուն Ֆրանսիայում հայերի բարձրացրած աղաղակին և նույնիսկ ֆրանսիական իմպերիալիզմին ի տես, որը կձգտի մասնատել հայ ազգը: Նրանց կաշը կկարողանա կանխորոշել ձեռնարկությունը, դուրսին դարձնել դեպի Կիլիկիա (որի գրավումն ըստ անգլիացիների հետ միջամտողականությունների՝ մենք պետք է մեզ վերապահենք զինադադարի դեպքում) հայկական զինված անձնակազմերի առաքումը, որոնք գեներալ Ալլենբիի բանակում կազմում են մեր դրոշմերի ներքո գտնվող փոքր կորպուսի գրեթե կեսը: Միաժամանակ, հարկ կլինի, որ հայերը դեպի հարավ իջեցնեն Անդրաուիլի [sic]՝ զինված անձնակազմերի մի մասը, որը կդրվի մեր Գերագույն կոմիսարի տրամադրության տակ:

Ես կարծում եմ, որ 1916 թ. համաձայնագրի խոչընդոտը վերացնելու ցանկությամբ տոգորված, որի նկատմամբ ես ցուցաբերեցի ավելի մեծ հավատ, քան իրականում ունեմ, հայերը մեզ հետ մնան բնույթի համաձայնություն կկայացնեն, եթե կարողանանք, մասնավորապես, արագ գործել: Նրանք դրանից առավել նվազ չափով կերկրյուղեն, քանզի համոզված են, որ իրենք երբեք մեզ չեն ծառայի միայն իբրև աննշան ուժեր, չեն ունենա, նույնքան ունայն, որքան և պատվավոր պաշտոններ, որոնք նրանց առնվազն կժառայեն Հայաստանը կազմակերպելու գործում անհրաժեշտ փոխառությունները Ֆրանսիայից հեշտությամբ ստանալու համար: Իմ երեկվա գրուցակիցներն ինձ թվացին խիստ շահագրգռված այս վերջին կետով:

Հարկ չկա, ի դեպ, որևէ պատրանք տածելու: Ի դեմս նրանց, մենք գործ կունենանք շատ ուժգին կողմի հետ: Ես կարողացա նրանց համեմատել սիրիացիների հետ, և նրանք նույնքան համախմբված են, կարգապահ, համբերատար, որքան ուրիշները տարանջատված, անկայուն և օժտված անշահավետ խորամանկությամբ: Հայաստանն արագ կկազմակերպվի, այնպես, որ մենք տեսադաշտից դուրս կմնանք, եթե չկարողանանք օգտագործել մի շատ ուժեղ միջոց՝ փոքրամասնությունների իրավունքը:

Հայաստանում, ի դեպ, այդ կլինի մեծամասնությունների իրավունքը. գրեթե բոլոր վիլայեթներում, նույնիսկ մինչ վերջին կոտորածները, շատ ավելի թուրքեր, քրդեր կամ լազեր կային, քան հայեր: Երեկ ես վկայակոչեցի այն սկզբունքները, որոնք հայերն ընդունում են իրենց համար և նրանց ասացի, որ իրենք ստիպված կլինեն իրենց տարածքում, իբրև դժվարին պարտավորվածություն, ընդունելու փոքրամասնությունների համար երաշխիքների ամրագրումը, երաշխիքներ, որոնք դաշնակիցները չեն զլանա պահանջել այն բոլոր ազգություններից, որոնց պատրաստվում են անկախություն տալ: Իմ գրուցակիցները փոքրամասնությունների հանդեպ իրենց հարգանքի մասին խոսեցին այնպիսի լեզվով, որը կարող էր հուզել պ (արոնայ) ք Կոշենին և Լոնգյուրեին: Ճշմարտությունն այն է, որ նրանք մեծապես հույս են տածում իրենց տնտեսական ուժի գերազանցության շնորհիվ կլանել թուր-

քին և քրդին՝ կարճաժամկետ վարկեր տալով և ի կատար ածելով բավական չափավոր, որպեսզի չցնցեն Եվրոպային, բայց և բավական արյունավետ բռնություններ, հեռացնելու համար մարդկանց, որոնք արդեն խիստ ինասպասիված կլինեն, եթե իրենց տեսնեն գյավուրներին հավասար, եթե ոչ նույնիսկ նրանց ստորադասի վիճակում: Բայց այն տերությունը, որը կվերահսկի հայկական վիլայեթները և որը կկարողանա քաջալերել «փոքրամասնության ներկայացուցիչներին» օգտվելու իրենց դպրոցական, վարչական և այլ իրավունքներից, կգտնի ընդարձակ կլինետուրա՝ հիմնավորապես տարանջատված մի երկրում մնալու համար: Իրենց հարևանների հանդեպ հայերի ունեցած միտումներում, նա, հավանաբար, կգտնի նույնիսկ միջոցը, որպեսզի նրանց ճակատագրի նկատմամբ անտարբեր դարձնի նրանց այն բանակներին, որոնց վերջին սպանդները հակել են հանձնին հայերի տեսնելու սոսկ գառների:

Մենք, ի դեպ, հենց այդ նույն քաղաքականությունն իրականացնելու հարկը կունենանք Սիրիայում: Բայց Սիրիայում գոյություն ունի միասնական լեզու և կան դավանաբանական երկպառակություններ, այն է՝ միավորումներ, որոնց տարբերությունը ժամանակակից աշխարհում հակում ունի նվազելու, այնժամ, երբ Հայաստանում դավանաբանական երկպառակություններին հավելվում են ազգային երկպառակությունները, այն է՝ այնպիսիք, որոնք մեր ժամանակում սաստկանում են ամենամեծ չափով:

Երեկվա իմ հայերն ինձ թվացին վերին աստիճանի մտահոգ Բուլղարիայի վեհությամբ: Նրանք ինձ շատ հարցրին, թե մենք ինչպե՞ս ենք ցանկանում վարվել Անդրիմուպոլսի հետ: Թվում է նաև, թե նրանք ցանկանում են, որ Հոնիան տրվի Հունաստանին: Կարճ ասած, նրանք ձգտում են Թուրքիայից պահանջել որքան հնարավոր է ավելին, որը հակասում է մեր շահին: Եթե, իրոք որ, մեր հսկողության ներքո գտնվող Սիրիայի կողքին, Հայաստանի կողքին, որտեղ մենք կստանձնենք այն դերը, որի մասին ես հենց նոր խոսեցի, մնալ Անատոլիան և Կոստանդնուպոլիսը պահպանող Թուրքիան՝ մնալով մշակույթի և գործերի այն ասպարեզը, որպիսին մեզ համար մինչ այժմ միշտ եղել է Օսմանյան կայսրությունը, մենք արևելյան տիան պատմությունից, որտեղ իրադարձությունների բերումով վարկաբեկվել ենք, շատ վատ վիճակում չէ, որ դուրս կգանք:

Դժբախտությունն այն է, որ մնալ քաղաքականությունը ենթադրում է այնպիսի վճռականություն, աչալրջություն և ճկունություն, որոնց կիրառման համար մեր կառավարությունը չափազանց թույլ և կոպիտ գործիք է, քանզի մենք շահագրգռված ենք օգնելու թուրքերին, ինչպես նաև սիրացիներին ու հայերին՝ հնարավորին չափ նվազ կորուստներով այս իրավիճակից դուրս ելնելու հարցում:

Ամեն դեպքում, ես կարծում եմ, որ հարկ կլինի ջանալ թույլ չտալու Հայաստանին ունեցածություն կատարել դեպի հարավ և դրանից անջատել Ուրֆան և Ալեքսանդրետը, Հալեպի նավահանգիստը: Եթե հարկ է դրան կցել Յուվուրթալիքը, որը Կիլիկիայում է, ծոցի հակառակ ափին, ոչ մի պատճառ չկա Ալեքսանդրետը հայերին տալու համար: Ես այդ քննարկում եմ, որովհետև նրանք պահանջել են այդ նավահանգիստը, ինչպես նաև այն պատճառով, որ Պիկոն, ապշած այն հնարավորություններից, որոնք մախ՝ իր գործին կարող է տալ հայկական կարգապահությունը և անտեսելով այն դժվարությունները, որոնք կարող են մեզ համար առաջանալ ասպազայում, ձգտում է իրեն բնորոշ և ձեռք հայտնի համառությամբ Ալեքսանդրետն ընդգրկել Հայաստանի կազմում: Եթե Կիլիկիա ուղարկվեն գնդապետ դը Պիեպասյի հայկական զինված անձնակազմերը, հարկ կլինի, որ դա տեղի ունենա Մերսի-նում, բայց ոչ Ալեքսանդրետում:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, Arménie, tome 1, ff. 163-165 v).

1 Իմա՝ Անդրանիկ:

**Կովկասում ֆրանսիական ռազմական առաքելության ղեկավար,
փոխգնդապետ Շարդինյին՝ Խորհրդի նախագահ,
Ռ-ազմական նախարար պ. Կլեմանտյին**

Հ. թիվ 57: Գաղտնի:

Էնզելի, [անթվակիր], ժ. 18.30-ին:
(Ստացել է ԲԸ-ի Առաջադահ խումբը
հոկտեմբերի 28-ին):

Պողոս փաշայի համար.

«Յուրաքանչյուր թյուրիմացությունից խուսափելու համար մենք հայտարարում ենք, որ մեր գործերը լքել են Բարուն անգլիական և ռուսական զորքերի դուրս բերման հաջորդ օրը: Շատերը հրաժարվել են մեկնելուց, որպեսզի կռվեն մինչև վերջ: Թշնամու հետ մենք որևէ տարանջատ բանակցություն չենք վարել: Մանրամասն գեկուցագիր կներկայացվի բրիտանական և ֆրանսիական դիվանագիտական առաքելություններին: Նույն ստորագրությունները»¹:

(A.M.G., 16 N 3186).

**Արտաքին գործերի նախարարությունում Ասիայի փոխտնօրեն
պ. Ժան Գուն՝ Փարիզի հայ մտավորականների միության
նախագահ պ. Արշակ Չոպանյանին**

Ն:

Փարիզ, 28-ը հոկտեմբերի 1918 թ.:

Խորհրդի պ. նախագահը, Ռ-ազմական նախարարը խորապես զգացված է այն նամակից², որը դուք բարեհաճել եք նրան հղել Ֆրանսիայի ռազմաճակատում շահած հաղթանակների առիթով:

Ես պատիվ ունեմ ձեզ փոխանցել նրա խիստ ջերմ շնորհակալությունները: Հայ ժողովուրդը կարող է վստահ լինել, որ Հանրապետության կառավարությունը երջանիկ կլինի, եթե նրան երաշխավորի իր ամբողջ աջակցությունը՝ կոտորածների վերսկսմանը խոչընդոտելու մտադրությամբ, որոնց զոհը նա դարձել է և նրանց հնարավորություն ընձեռի վերջնականապես ազատագրվել օսմանյան լծից:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, Arménie, tome 1, f. 167).

1 Տե՛ս վերը թիվ 688, 697 և 701 փաստաթղթերը:
2 Վերմ արտատպված է թիվ 712 փաստաթղթի հավելվածում:

**Միլանում Ֆրանսիայի գլխավոր հյուպատոս պ. Վերշեր դը Ռեֆֆին՝
Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին**

Ն. թիվ 177:

Միլան, 28-ը հոկտեմբերի 1918 թ.:
(Ստացել են Կաբինետը և
Քաղ. վարչ. նոյեմբերի 2-ին):

«Կորրիերե դելլա սերան» երեկվա իր համարում տպագրել է Լուիջի Լուզատտոյի կատաղի հոդվածը, որտեղ հեղինակը հիշեցնում է վերջերս տեղի ունեցած հայերի նահատակության և այն ծառայությունների մասին, որոնք նրանք մատուցել են Անտանտի գործին ու հարցնում է, թե ինչո՞ւ Հայաստանի անկախությունը և նրա անհապաղ վերակազմավորումը դաշնակիցները չեն դնելու միևնույն հողի վրա, ինչ Չեխոսլովակիայի ու Հարավսլավիայի պետությունների ճանաչումը: Անտանտն, այդուհանդերձ, պետք է հայերին հռչակի իբրև պատերազմող կողմ և փոխհատուցի այն երկարատև տառապանքների համար, որոնցով նրանք հատուցել են հանուն իրենց հայրենասիրության և ազգային պահանջների, այն համոզմունքով, որ Հայաստանն այս պատերազմից դուրս կգա թուրքերի լծից ազատագրված և որ Ռուսաստանից, Թուրքիայից ու Պարսկաստանից կախում ունեցող հայկական պետության մասերը կմիավորվեն մեկ առանձին պետության մեջ:

Այս հոդվածին հաջորդում է թուրքերի դեմ ուղղված մի հայի՝ պ. Ստեֆանյանի մեղադրանքը: Հեղինակն այդտեղ հույս է հայտնում, որ դաշնակիցները կկարողանան խուսափել օսմանյան պետական գործիչների բարեկամական, ստահող հայտարարությունների խաբեությանը տուրք տալուց: Նա հայտարարում է, որ վերջիններիս խաբեությունն Անգլիայում և Ֆրանսիայում միշտ գտել է քաղաքական գործիչների, որոնք հավատ են ընծայել բարենորոգումների ու առաջադիմության հարցում թուրքերի անկեղծ ցանկությանը: Նա ավելացնում է, որ ժամանակն է հիմնավորապես և առանց գրասրտության ազատագրվելու մի պետությունից, որը մոլի ատելություն է տածում Եվրոպայի և նրա գաղափարների հանդեպ և որի կողմից պատերազմի հայտարարումն Անտանտին, գրեթե հանգեցրեց վերջինիս հաղթանակի տապալմանը՝ մեկուսացնելով Ռուսաստանին և թույլատրելով Բուլղարիային պայքարի մեջ մտնելու Գերմանիայի կողմում:

Այս պաշտպանողական ճառերն, անտարակույս, արձագանք կգտնեն Իտալիայում և հարկ է նշել, թե որքան է «Կորրիերե դելլա սերան» ի նպաստ Հարավսլավիայի ու Բոսնիայի և այժմ Հայաստանի համար մղվող իր կամպանիաների միջոցով ջանում, խիստ լայն շրջագծով, քննարկել միջազգային հարցերը և դուրս է գալիս Իտալիայի անմիջական հետաքրքրությունների նեղ հայեցակետից՝ անկեղծորեն դառնալու համար Անտանտի ընդհանուր շահերի գլխավոր դերակատարը¹:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, Arménie, tome 1, ff. 168-168 v).

1 Հավանաբար՝ քարոզիչը: {Թնագրում՝ protagoniste, իմա՝ propagandiste: - Ծ. թ.:}

Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշան՝ Արտաքին գործերի նախագահ պ. Ստեֆան Պիշոնին

Ն:

Փարիզ, 29-ը հոկտեմբերի 1918 թ.:
(Ստացել են Կաթ. հոկտեմբերի 31-ին,
Քաղ. վարչ. նոյեմբերի 1-ին):

Ես պատիվ ունեցա ստանալ այն նամակի՝ բնագիրը, որը Եզիպտոսի հայկական ազգային միությունը հղել է Կահիրեում Ֆրանսիայի պ. նախարարին և որի պատճենը Ձերդ գերագանցությունը բարեհաճել է ինձ փոխանցել:

Ես երջանիկ եմ, որ պ. Սկրտչյանը Եզիպտոսի հայկական ազգային միության երախտագիտությունն է հայտնել պ. Լեֆեր-Պոնտալիսին: Բայց ես մեծ ցանկություն ունեմ, Ազգային պատվիրակության անունից, հավաստիացնելու Ձերդ գերագանցությանը, որ բոլոր հայերը կառավարության և Ֆրանսիայի հանդեպ համակված են միևնույն զգացմունքներով: Մենք երբեք չենք մոռանա այն, ինչով նրանց ենք պարտական, և, մասնավորապես, Արևելյան լեզոնի ստեղծմամբ, որը հայերին թույլատրել է գնալ կոփելու ֆրանսիական դրոշի ներքո՝ նպաստելու համար իրենց հայրենի հողի ազատագրմանը:

Ազգային պատվիրակությունը մեծ ցանկություն ունի նաև արժանին հատուցել այն նվիրվածությանը, որով պ. գնդապետ Ռոմիոն իրեն նվիրաբերել է ոչ միայն այդ լեզոնի կազմավորմանն ու հայ կամավորների ուսուցմանը (որոնցից նա պատրաստել է՝ նրանց իսկ կողմից պաշտպանվող գործին արժանի և Պաղեստինի փառապանծ հաղթանակին մասնակցություն ունենալու ունակ զինվորների), այլև հայերի շահերին ընդհանրապես, որոնց նա սատարել է և աջակցել իր ամբողջ սրտով: Նրանք նրա հանդեպ կպահպանեն դրա անսասան երախտագիտության զգացումը, և ես խիստ երախտապարտ կլինեմ Ձերդ գերագանցությանը, եթե նա կամենա նրան հայտնել դրա հավաստիացումն Ազգային պատվիրակության անունից:

Ձերդ գերագանցությանը ես կխնդրեմ նաև բարեհաճել պ. Լեֆեր-Պոնտալիսին հայտնել երախտագիտության միևնույն զգացումներն այն ամենի համար, ինչ նա արել է և շարունակում է անել ի նպաստ Եզիպտոսի մեր հայրենակիցների:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, *Arménie*, tome 1, ff. 169-170).

Կապիտան Դոյնել դը Սեն-Քուենտինի հաշվետվությունը Պողոս Նուբար փաշայի հետ զրույցի մասին

Փարիզ, 29-ը հոկտեմբերի 1918 թ.:
(Ստացել է Ասիայի փոխվարչ {ությունը}
նոյեմբերի 30-ին):

1 Վերն արտատպված է թիվ 695 փաստաթղթի հավելվածում:

Պողոս Նուբար փաշայի հետ կայացավ քառույղ ժամկա զրույց, որին ես ներկայացել էի իբրև Հայկական հարցին տեղեկանալու ցանկություն ունեցող, առանց նրան հայտնելու, ի դեպ, իմ հարցուփորձի շարժառիթը և ոչ էլ ներշնչողի անունը:

«Մենք հիրավի խիստ մտահոգ ենք այն տրամադրվածությունների առիթով, որոնք ներկայումս Քե դ'Օրսեն ունի մեր հանդեպ: Երբ մենք Ֆրանսիային տրամադրեցինք մեր զինված անձնակազմերը՝ նրա դրոշը Սիրիայում ներկայացնելու համար, մենք խոստում ստաված անձնակազմերը՝ նրա դրոշը Սիրիայում ներկայացնելու համար, մենք խոստում ստաված անձնակազմերը իր ազդեցության ներքո ճանաչված գոտու սահմաններում կնպաստի ամենալայն ինքնավարությունից օգտվող Հայաստանի կազմավորմանը: Մենք մտածում էինք մասնագետներ, օրինակ՝ ֆինանսական տեսուչներ ստանալու, բայց մեր ճակատագրերն անձամբ կարգավորելու և, ընդհանուր առմամբ, վարչության բոլոր կադրերին առաջադրելու մասին: Սակայն, խոսում են ահա, եթե ոչ բռնազրավման, ապա՝ նվազագույնն այնպիսի վարչակարգի մասին, որը համանման է Թունիսի վարչակարգին: Իմ հայրենակիցները մեծ անհանգստությամբ են դառնում ֆրանսիական իմպերիալիզմի այս ծավալման ակնհայտեանը:

Եվ այդ այն պահին, երբ Իտալիայի կառավարությունը, պատասխանելով պ. Լուզատտոյի կոչին՝, մեզ առաջարկում է ավելին, քան մենք պահանջում էինք՝ Հայաստանի անկախությունը: Ես չգիտեմ, թե արդյո՞ք մենք հարկադրաբար չենք գործի, և մեզ չեն պարտադրի հռչակել այդ անկախությունը:

Մենք, անկասկած, ընդունում ենք, որ մեր ազգային վերակառուցման համար անհրաժեշտ անցումային ժամանակաշրջանում, տերությունները, որոնց կոչելով երաշխավորությունը մենք պահանջում ենք, խնամակալի և հովանավորի մանդատը կվստահեն իրենցից մեկին: Մենք մեծապես ցանկանում ենք, որ այդ մանդատը հատկացվի Ֆրանսիային: Բայց մենք չենք կարող մեր նախապատվություններին հրապարակում տալ: Դա կնշանակի վտանգավոր ձևով մեզ նետել միջազգային մրցակցությունների ոլորտը, այն է՝ դիմել անհավասար պայքարի: Մեզ այդտեղ խորհելու տեղիք տալիս է մասնավորապես Իտալիան: Նա հավակնություններ ունի Ադալիայի տարածաշրջանի նկատմամբ: Ոչ ոք չի առարկում Սիրիայի պատկանելությունը Ֆրանսիային... Ո՞վ գիտե, թե արդյոք միջանկյալ գոտում տեղի չեն ունենա առուծախեր»:

Պողոս փաշայի հետ բանավեճի մեջ չմտնելու համար, ես վկայակոչեցի իմ անտեղյակությունը հարցին: Ես չկարողացա ինձ զսպել նրան ասելու, որ եթե ֆրանսիական հասարակական կարծիքն ինձ բվում է ոչ այնքան հսկված իմպերիալիզմի նկատմամբ, նա անշուշտ սարսափում է առուծախից...

(A.M.A.E., E-Levant 1918-1929, *Arménie*, tome 1, ff. 297-297 v).

Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշան՝ Խորհրդի նախագահ, Ռ-ազմական նախարար պ. Կլեմանտյին

Ն:

Փարիզ, 30-ը հոկտեմբերի 1918 թ.:

1 Այդ կոչի մասին տե՛ս վերը թիվ 720 փաստաթուղթը:

Ես շտապում եմ ձեզ տեղեկացնել հեռագրի ստացման մասին Էնգելիից, որը դուք ինձ փոխանցելու պատվին եք արժանացրել և դրա համար ձեզ հայտնել իմ ամենաջերմ շնորհակալությունները: Այդ առիթով ես ձեզ առավել ևս երախտապարտ եմ, քանի որ այդ հեռագիրը մեզ քաջալերում է ու ևս մեկ անգամ ապացուցում, թե որքան գրպարտչական էր Բաքվի հանձնումի առիթով հայերի դեմ ուղղված մեղադրանքը:

Նույն առթիվ, թույլ տվեք ինձ, պալոն նախագահ, ևս մեկ անգամ օգտվել Ռազմական նախարարության խիստ բարեհաճ միջնորդությունից, պ. գնդապետ Շարդինյիի հոգածությամբ տեղ հասցնելու այն հեռագրի ներքո ստորագրած անձանց պատասխանը, որը դուք բարեհաճել եք ինձ փոխանցել:

Դա միակ միջոցն է, որը մենք ունենք, որպեսզի մեր ճեպագիրն ապահով և արագ հասնի նշանակման վայր:

(A.M.G., 16 N 3186).

ՀԱՎԵԼՎԱԾ

Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշան Կովկասում ֆրանսիական ռազմական առաքելության ղեկավար, փոխգնդապետ Շարդինյիին

Հ:

Բազրատունու, Գյուլխանդանյանի, Ռոստոմի համար.

Ստացանք հոկտեմբերի 27-ի ձեր հեռագիրը¹: Երջանիկ ենք և դրա համար ձեզ շնորհակալություն ենք հայտնում: Ի դեպ, լուրջ Սեսիլը խորհրդարանում հայտարարել է, որ հայերը համակերպվել են զենելու Դյունսթերվիլի խորհուրդներին և ոչ մի հանդիմանություն հնարավոր չէ նրանց ուղղել:

Ջանի որ հաշվի առնելով մասնակցությունն այդ իրադարձությանն՝ Ազգային պատվիրակությունը վճռել է ամբաստանել Ռուսաստանի, Թուրքիայի, Պարսկաստանի և տարբեր զաղութների հայերից ընտրված որոշ անդամների կցումով, խնդրվում է իրավասու իշխանությունների միջոցով ընտրել և շտապ ուղարկել երեք հայ լիազոր ներկայացուցիչների Ռուսաստանից, երեքին՝ Թուրքիայից, մեկին՝ Պարսկաստանից: Հեռագրեք, թե այդպիսի դուք կարող եք հաղորդակցվել կաթողիկոսի և Թիֆլիսի հետ:

(A.M.G., 16 N 3186).

¹ Խնդրո առարկա հեռագիրը, անկասկած, թիվ 718 փաստաթղթում արտատպված հեռագիրն է:

Զինադադարի պայմաններ¹, որոնք կնքվել են.

Քրիտանիայի կառավարության կողմից՝ դաշնակիցների համաձայնությամբ հավուր պատշաճի լիազորված, բրիտանական գլխավոր հրամանատար, փոխծովակալ, հարգարժան սըր Մոմերեսթ Արթուր Գուզի Քալթորփի

և

Թուրքիայի Ռազմածովային նախարար, Նորին գերազանցություն Ռաուֆ բեյի,

Թուրքիայի Արտաքին գործերի նախարարության պետական փոխքարտուղար, Նորին գերազանցություն Ռեշադ Հիքմետ բեյի,

Օսմանյան կառավարության կողմից հավուր պատշաճի լիազորված, Թուրքիայի գլխավոր շտաբի փոխգնդապետ Սաադուլլա բեյի միջև.

1/ Դարդանելի և Բոսֆորի բացում և ազատ մուտք դեպի Սև ծով:

Դաշնակիցների կողմից Դարդանելի և Բոսֆորի ամրությունների ռազմակալում:

2/ Բոլոր ականային դաշտերի, տորպեդային սարքերի և այլ խոչընդոտների վայրերը պետք է մատնանշվեն և յուրաքանչյուր օգնություն, որը կարող է պահանջվել, կհատկացվի վերոնիշյալ խոչընդոտների ականագերծման և վերացման համար:

3/ Սև ծովում ականների վերաբերյալ բոլոր մատչելի տեղեկությունների հաղորդում:

4/ Բոլոր դաշնակցային ռազմագերիները և բոլոր հայ ներկալվածներն ու գերիները կհամախմբվեն Կոստանդնուպոլսում և առանց պայմանների կհանձնվեն դաշնակիցներին:

5/ Թուրքական բանակի անհապաղ զորացրում, բացառությամբ այն զորքերի, որոնք անհրաժեշտ են սահմանները հսկելու և ներքին կարգ ու կանոնը պահպանելու համար (այս զորքերի անձնակազմերն ու նրանց օգտագործումը հետագայում կնախասահմանեն դաշնակիցների՝ Թուրքիայի կառավարության հետ խորհրդակցելուց հետո):

6/ Այն բոլոր ռազմանավերի հանձնում, որոնք ներկայումս գտնվում են թուրքական ջրերում կամ թուրքերի գրաված ջրերում: Այս նավերը կներկալվեն թուրքական այն նավահանգստում կամ նավահանգիստներում, որոնք կնախասահմանվեն, բացառությամբ փոքր նավերի, որոնք օսմանյան տարածքային ջրերում անհրաժեշտ են ոստիկանության կամ համանման յուրաքանչյուր այլ նպատակի համար:

7/ Դաշնակիցներն իրավունք կունենան ռազմակալել բոլոր ռազմավարական կետերն այն պարագայում, երբ դաշնակիցների անվտանգության համար ի հայտ գա ապառնալից իրավիճակ:

8/ Ներկայումս թուրքերի ռազմակալած բոլոր նավահանգիստների ու խարսխակայանների ազատ օգտագործում դաշնակցային նավերի կողմից և այդ նավահանգիստներից ու խարսխակայաններից օգտվելու արգելք թշնամու համար: Միևնույն պայմանները կկիրառվեն օսմանյան առևտրական նավերի համար, որոնք առևտրի և զորացրման նպատակով գտնվում են թուրքական ջրերում:

9/ Թուրքական բոլոր նավահանգիստներում և զորանոցներում նավերի վերանորոգման բոլոր միջոցների օգտագործում:

¹ Բնագիրն արտատպված է ըստ՝ Ministère des Affaires étrangères, Guerre européenne. Documents 1918. Conventions d'Armistice passées avec la Turquie, la Bulgarie, l'Autriche-Hongrie et l'Allemagne par les Puissances Alliées et Associées, Paris, 1919, pp. 10-12.

10/ Տավրոսի թունելների համակարգի գրավում դաշնակիցների կողմից:

11/ Արդեն հրաման է տրվել թուրքական զորքերի անհապաղ նահանջի մասին Պարսկաստանի հյուսիս-արևմուտքից դեպի նախապատերազմական սահմանների ետևում գտնվող գիծ, և այդ պետք է իրականացվի:

Թուրքական զորքերն արդեն հրաման են ստացել Անդրկովկասի մի մասից դուրս գալու վերաբերյալ. այս երկրի մյուս մասից զորքերը դուրս կբերվեն, եթե դաշնակիցներն այդ պահանջեն՝ այս երկրում իրավիճակն ուսումնասիրելուց հետո:

12/ Ռադիոհեռագրային կայանները և կաբելային հեռագրակայանները կըրվեն դաշնակիցների հսկողության ներքո, բացառությամբ օսմանյան կառավարության հաղորդումների:

13/ Ծովային, ռազմական կամ առևտրական գույքի ավերման յուրաքանչյուր փորձ արգելվում է:

14/ Թուրքական աղբյուրներից բխող ածուխի, մագուրի և ռազմածովային պիտույքների գնման համար պետք է արտոնություններ հատկացվեն, եթե բուն երկրի սպառողական պահանջները բավարարված լինեն:

Վերը թվարկված նյութերից և ոչ մեկը չի կարող արտահանվել:

15/ Դաշնակցային վերահսկողության գործակալները հսկողության ներքո կվերցնեն բոլոր երկաթուղիները, ներառյալ անդրկովկասյան երկաթուղիների այն տեղամասերը, որոնք ներկայումս գտնվում են թուրքերի վերահսկողության ներքո, որոնք հաշվի առնելով բնակչության կարիքները, պետք է դրվեն դաշնակցային իշխանությունների ազատ և բացարձակ տնօրինության ներքո:

Վերոհիշյալ հոդվածը ենթադրում է Բաթումի ռազմակալումը դաշնակիցների կողմից: Թուրքիան ոչ մի առարկություն առաջ չի քաշի դաշնակիցների կողմից Բաքվի գրավման դեմ:

16/ Հեջազի, Ասսիրի, Եմենի, Սիրիայի և Միջագետքի բոլոր կայազորների հանձնում ամենամոտակա դաշնակցային հրամանատարությանը և զորքերի դուրս բերում Կիլիկիայից, բացառությամբ այն զորքերի, որոնք անհրաժեշտ են կարգ ու կանոն պահպանելու համար, այնպես, ինչպես այն կնախասահմանվի համապատասխան 5-րդ հոդվածի:

17/ Տրիպոլիտանիայում և Կիրենաիկայում բոլոր թուրք սպաների հանձնում ամենամոտակա իտալական կայազորին: Թուրքիան պարտավորվում է դադարեցնել մատակարարումների բոլոր առաքումներն իր սպաներին և ընդհատել բոլոր հաղորդակցությունները նրանց հետ, եթե նրանք չենթարկվեն անձնատուր լինելուն վերաբերող հրամանին, որը նրանց կտրվի:

18/ Տրիպոլիտանիայում և Կիրենաիկայում ռազմակալված բոլոր նավահանգիստների, ներառյալ Միզուրատան, հանձնում ամենամոտակա դաշնակցային կայազորին:

19/ Բոլոր գերմանացիները կամ ավստրիացիները՝ նավաստիներ, զինվորներ կամ քաղաքացիական անձինք, մեկ ամիս ժամանակամիջոցում, դուրս կբերվեն թուրքական տարածքներից: Նրանք, ովքեր բնակվում են հեռավոր մարզերում, դուրս կբերվեն, հենց որ այդ հնարավոր լինի, վերոհիշյալ ժամանակամիջոցը լրանալուց հետո:

20/ Այն բոլոր հրամանների կատարում, որոնք կարող են տրվել թուրքական բանակի հանդերձանքի, զենքերի և ռազմամթերքների, ներառյալ տրանսպորտը, տնօրինման վերաբերյալ, որը պետք է գորացրվի համապատասխան 5-րդ հոդվածի:

21/ Դաշնակիցների շահերը պաշտպանելու նպատակով, դաշնակցային մի ներկայացուցիչ կկցվի թուրքական Մատակարարումների նախարարությանը: Այս առիթով, բոլոր անհրաժեշտ տեղեկությունները պետք է հաղորդվեն այդ ներկայացուցչին:

22/ Թուրք գերիները կպահվեն դաշնակից տերությունների տրամադրության ներքո: Այն թուրք քաղաքացիական ներկավածների ազատագրման հարցը, որոնք անցել են զենքեր կրելու տարիքը, կուսումնասիրվի:

23/ Թուրքիային պարտադրվում է դադարեցնել բոլոր հարաբերությունները կենտրոնական տերությունների հետ:

24/ Այն դեպքում, երբ հայկական վեց վիլայեթներում անկարգություններ տեղի ունենան, դաշնակիցներն իրենց իրավունք են վերապահում ռազմակալել վերոհիշյալ վիլայեթների ցանկացած հատված:

25/ Դաշնակիցների և Թուրքիայի միջև ռազմական գործողությունները կդադարեն 1918 թ. հոկտեմբերի 31-ին, հինգշաբթի օրը, տեղական ժամանակով կեսօրից սկսած:

Ստորագրված է երկու օրինակից, Բրիտանական Նորին մեծության «Ազամեմնոն» նավի տախտակամածի վրա, Մուդրոս նավահանգստում, Լեմնոսում, 1918 թ. հոկտեմբերի 30-ին:

Ստորագրված է՝ **Արթուր Քալթոբի** **Ստորագրված է՝ Հուսեյն Ռաուֆ Ռեշադ Հիքմեթ Մաադուլլա:**

Հայ մտավորականների միության նախագահ պ. Արշակ Չոպանյանը՝ Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին

Ն: Փարիզ, 30-ը հոկտեմբերի 1918 թ.:
(Ստացել է Ասիայի փոխվարչ {ությունը}
հոկտեմբերի 31-ին):

Ես ձեզ շնորհակալություն եմ հայտնում այն ազնվաբարո նամակի՝ համար, որը դուք բաեհաճել եք ինձ հղել՝ ի պատասխան Խորհրդի պ. նախագահին ուղղված մեր ուղերձի:

Ես մեծ ուրախությամբ եմ դրանում գտնում՝ հայերին իր մեծարժեք աջակցությունը հատկացնելու հարցում Ֆրանսիայի կամեցողության հավաստումը, որպեսզի նրանց թույլ տրվի վերջնականապես ազատագրվելու օսմանյան լծից: Մեր ազգի՝ դարեր ի վեր երազած ժամը՝ ազատ և անկախ Հայաստանի վերածնության ժամը, շուտով կհնչի: Շուտով կիրականանա մեր հինավուրց ժողովրդի միասնական ցանկությունը: Մենք երջանիկ ենք, որ մեր պատմական հայրենիքի հարությունը տեղի կունենա մեր ինտելեկտուալ հայրենիքի՝ Ֆրանսիայի հովանու ներքո և նրա օժանդակությամբ:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, Arménie, tome 1, f. 171).

1 Տես վերը թիվ 719 փաստաթուղթը:

Ասիա-Օվկիանիայի փոխվարչության ծանուցագիրը¹

Ծ:

Փարիզ, 31-ը հոկտեմբերի 1918 թ.:

Հայկական ազգային պատվիրակությունը հոկտեմբերի 29-ին Արտաքին գործերի նախարարությանն է հանձնել մի ծանուցագիր², որով Հանրապետության կառավարությունից խնդրում էր հայ ազգին ճանաչել իբրև պատերազմող կողմի: Այդ ծանուցագիրը նմանապես փոխանցվել է Բրիտանիայի կառավարությանը և դաշնակցային այլ կառավարություններին:

Հիմնավորելու համար իր խնդրանքը, Հայկական ազգային պատվիրակությունն ուշադրություն է հրավիրում այն բանի վրա.

1/ որ պատերազմի սկզբից ի վեր, հայերն ընդգրկվել են Ֆրանսիայի Արտասահմանյան լեգեոնում, որտեղ շնորհակալությունների են արժանացել իրենց քաջության և նվիրվածության համար.

2/ որ հայ կամավորները կազմավորում են Արևելյան լեգեոնի երեք գումարտակ, որ նրանք մասնակցություն են ունեցել Պաղեստինի և Սիրիայի հաղթանակներին և արժանացել իրենց ֆրանսիացի ղեկավարների և Սիրիայում գտնվող դաշնակցային բանակների զլխավոր հրամանատարի ամենաբարձր գովեստներին³.

3/ որ 15000 հայ զինվորներ կռվել են ռուսական կայսրության բանակների հետ, որ բուլղարական դավաճանությունից հետո, բազմաթիվ ամիսներ շարունակ, հայկական զորքերը միայնակ պաշտպանել են Թուրքիայի և Կովկասի ռազմաճակատները և չնայած քաթարների ու ռուսական զորքերի դավաճանությանը, նրանք միայն քայլ առ քայլ են նահանջել թուրքական բանակների և գերմանական զինված անձնակազմերի գերազանցող ուժերի առջև, որ իրենց առաջնորդներ Անդրամիքի [sic] և Նազարբեկոֆի [sic] հրամանատարությամբ, նրանք դեռևս շարունակում են պայքարը գերմանացիների և քաթարների դեմ, որ հազարավոր հայեր դեռևս համախմբված են Պարսկաստանում՝ պատրաստ աջակցելու դաշնակիցների գործողությանը Կովկասում:

Հավաստի է, որ դաշնակից կառավարությունները չեն կարողանա առանց անարդարացիության հրաժարվել այն իրավունքներից, որոնք հայ կամավորներն են ձեռք բերել վատնելով իրենց ուժերը և հեղելով իրենց արյունը պատերազմի տարբեր թատերաբեմերում: Եթե զուգահեռներ անցկացնենք հայ կամավորների այդ գործողության և այն զազրելի տառապանքների միջև, որոնք նրանց ժողովրդին է պարտադրել Կոստանդնուպոլսի կառավարությունը և թվում է, հենց ըստ Գերմանիայի կայսրական կառավարության խոստովանության, հարկադրված կլինենք հավաստել, որ դաշնակիցները, եթե ցանկանում են ապագայում խուսափել միևնույն ոճրագործությունների կրկնությունից Օսմանյան կայսրությունում, պետք է այժմվանից իսկ հայ ազգի նկատմամբ որդեգրեն մի դիրքորոշում, որը նրան երաշխավորի բոլոր հուսախաբություններից: Պաշտոնապես, հայկական զորքերին՝

¹ Նախարարի համար է:

² Չի հայտնաբերվել:

³ Տե՛ս վերը թիվ 693 փաստաթղթի հավելվածը և թիվ 695 փաստաթուղթը:

իբրև պատերազմող կողմի ճանաչումը, կլինի առաջին քայլը, որը կարվի այս ժողովրդի ազատագրման ճանապարհին: Կարելի կլինի ասել, որ Բեռլինի վեհաժողովից ի վեր, Հայկական հարցն Արևելյան հարցի հիմնական գործոններից է: Քանի դեռ հայ ժողովրդի համար չապահովվի օսմանյան յուրաքանչյուր գերիշխանությունից գերծ և արևմտյան որևէ անշահախնդիր տերության հսկողության ներքո գտնվող կատարյալ ինքնավարության երաշխիքը, կարելի է, առանց սխալվելու գուշակել, որ երկարատև խաղաղության դարաշրջանն Արևելքում չի հասնի:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, *Arménie*, tome 1, ff. 173-174 v).

727

Ռուսաստանում Ֆրանսիայի դեսպան պ. Նուլենսը՝ Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին

Հ. թիվ 943: Հրատապ:

Արխանգելսկ, 31-ը հոկտեմբերի 1918 թ., ժ. 21.25-ին:
(Ստացել է Քաղ. վարչ. նոյեմբերի 1-ին):

Որոշակի է, որ կարծեցյալ գեներալ Թորգոմը, որը բուլղար լինելով՝ իրեն ներկայացնում է իբրև հայ ազգությանը պատկանող, բախտախնդիր է: Նա մեկնում է Անգլիա, շարունակելով մնալ գեներալ Այրոնսայիի հսկողության ներքո: Այս անձնավորությանը, որն ազդարարում է, թե կախում չունի Հայկական ազգային (կոմիտեից), պետք չէ թույլատրել գալու Ֆրանսիա: Ես խնդրում եմ Չերո գերազանցությանն այդ մասին նախազգուշացնել Լոնդոնում գտնվող մեր դեսպանին¹, որպեսզի վստահելով՝ նա հուսախաբ չլինի, եթե գեներալ Թորգոմը նրանից անձնագիր խնդրի:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, *Arménie*, tome 1, f. 172)

728

Հայկական տեղեկատվական բաժանմունքի հաղորդագրությունը Դեպարտամենտին

Թիվ 2078:

Ավաա:

(Ստացել է Ասիայի փոխվարչությունը)
1918 թ. նոյեմբերի 2-ին):

¹ Պ. Պոլ Կամբոնը:

Կասպից ծովն անցած և մինչև Բաքու առաջացած անգլիական զինված անձնակազմերի նահանջին վերաբերող տարբեր պաշտոնական հաղորդագրությունները պարունակում են որոշ հակասություններ, որոնք տեղիք են տվել հայերի դիմադրությանը վերաբերող աղոտ, սխալ և վերին աստիճանի անարդար կարծիքների: Չորս տարյալ ի վեր և չնայած վրացիների դավաճանությանը, հայերը խիզախորեն դիմադրել են թուրքերին ու գերմանացիներին: Պ. Բալֆորը կարողացել է Համայնքների պալատում ասել (հուլիսի 11-ին), որ Բրիտանիայի կառավարությունը «համակրանքով և ամենախորին հիացմունքով է հետևում հայերի քաջարի դիմադրությանը»: Այս պայմաններում, արդյո՞ք կարելի է խոսել վախկոտության կամ դավաճանության մասին: Եթե Բաքվի պաշտպանները տեղի են տվել, ապա որովհետև գրեթե չորս ամսից ի վեր եղել են ջրմուղի խողովակները հատած քաթարների կողմից շրջափակված, սովահար ու ջրից զուրկ և խորապես հիասթափված ափ ելած անգլիական ստորաբաժանման թվական սակավությունից, որի երևան գալը չէր կարող այլևս փրկել քաղաքը: Եթե նրանք զիջել են, ապա որովհետև շնչահեղձ էին լինում, քանզի նրանք չափից ավելի լավ գիտեին, թե ինչպիսի սարսափելի կոտորածներ էին իրենց սպասում: Եթե ուժերի, դյուրըմբռնելի, այդ տեղական անկումը դժբախտաբար ցավալի է, պետք չէ փոխարենը մոռանալ, որ շնորհիվ հայերի, որոնք գեներալներ Նազարբեկովի և Անդրանիկի հրամանատարության ներքո շարունակում են արդյունավետորեն կռվել Երևանի տարածաշրջանում, Կովկասում գոյություն ունի դիմադրողական կարևոր, դաշնակցամետ կենտրոն: Վերջերս, բացի դրանից, ֆրանսիական Արևելյան լեգեոնի հայկական զումարտակներն արդյո՞ք իրենց փառքով չեն պսակել Պաղեստինում՝ դաշնակիցների ամենագեղեցիկ հաղթանակի ժամանակ: Հարկ չէ, այսպիսով, մի բերդաքաղաքի անկումից եզրակացնել մի ամբողջ ժողովրդի բարձիթողի վիճակի մասին և արատավորել նրա պատիվը, որը թեպետ նոսրացած, դեռևս կռվում է:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, Arménie, tome 1, ff. 176-176 bis).

**Հռոմուն Ֆրանսիայի դեսպան պ. Կամիլ Բարրերը՝
Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին**

Հ. թիվ 2593: Գաղտնի:

Հռոմ, 3-ը նոյեմբերի 1918 թ.:
(Ստացվել է նոյեմբերի 4-ին):

Այն հեռագրից, որն այսօր երեկոյան ես ձեզ եմ առաքում փոստով¹, հետևում է, որ ներկայումս Հռոմում գտնվող սըր Մարկ Սայքսը լորդ Ռոբերտ Սեսիլին կրքոտաբար բողոքում է Թուրքիայի հետ զինադադարի որոշ հողվածների կապակցությամբ, որոնք, ըստ իր կարծիքի, հայերին անհրաժեշտ երաշխիքներ չեն շնորհում: Նա բողոքում է նաև Բաթումին վե-

1 Տե՛ս ստորև թիվ 730 փաստաթուղթը:

րաբերող հողվածի դեմ, ասելով, որ դաշնակիցները չպետք է թուլավորություն խնդրեն Թուրքիայից՝ իրենց տիրապետությունը հաստատելու համար:

Այս հողվածը նա դիտում է իբրև զիջում պանթուրանիզմին:

Նախորդող տեղեկությունը գաղտնի բնույթի է: Հարկ չէ, որ Բրիտանիայի կառավարությունն իմանա, որ ես այդ մասին տեղեկացված եմ:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, Arménie, tome 1, f. 177).

**Հռոմուն Ֆրանսիայի դեսպան պ. Կամիլ Բարրերը՝
Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին**

Հ. թիվ 2594: Գաղտնի:

Հռոմ, 3-ը նոյեմբերի 1918 թ.:
(Ստացվել է Բաղ. վարչ. նոյեմբերի 6-ին):

Ես հիմնվում եմ 2593 իմ հեռագրի վրա²:

Սըր Մարկ Սայքսը երեկ ժամանել է Հռոմ: Նա դժգոհ է, որ Թուրքիայի հետ զինադադարի հողվածներում չի գտել պայմաններ, որոնց շուրջ համաձայնության է հանգեցրել Բրիտանիայի կառավարությանը: Նա լորդ Ռոբերտ Սեսիլին է հղել մի հեռագիր, որի բարգձմանությունը ես կարողացա ձեռք բերել կատարյալ գաղտնիության պայմանով:

Հռոմ, 3-ը նոյեմբերի 1918 թ.:

Գաղտնի և մասնավոր տեղեկության համար:

Սըր Մարկ Սայքսից.

Փարիզում ես տեսա Պոդոսին, որը խիստ հուզված էր հայերին վերաբերող զինադադարի հողվածների առիթով: Ես նրան ասացի, որ զինադադարը հաշտություն չի նշանակում, բայց նա ինձ պատասխանեց, որ թուրքերը պարտավոր էին բանակցել դաշնակիցների (որոնք, ինչպես նրանց հայտնի էր, միասնական չէին), բայց ոչ թե միայն մեկ իշխանության հետ և բանակցություններին նախորդած դաշնակիցների հռչակագիրը պետք է ճշգրտեր, որ հայերը չեն մնալու թուրքական գերիշխանության ներքո:

Այն պայմանները, որոնք ես հենց նոր տեսա, ամենավատթարն են, քան ես կարող էի ակնկալել: 16-րդ հողվածն ասում է, որ թուրքերն անմիջապես զորքերը դուրս կբերեն Եմենից, այնժամ, երբ 11-րդ հողվածը, թվում է, թե մինչև համձնաժողովի ժամանումը նրանց պահում է Ռուսահայաստանում³: Հակադրությունը, որն առկա է Եմենի՝ նախապատերազմական շրջանում թուրքական տարածքների արաբներին տրված կացության և թուրքերի

1 Փոստով, առանց ծածկագրի:

2 Տե՛ս վերը թիվ 729 փաստաթուղթը:

3 Զինադադարի պայմանների մասին տե՛ս վերը թիվ 724 փաստաթուղթը:

ասպատակած Ռուսահայաստանի հայերի միջև, չի հապաղի հայերի մեջ ամրապնդել այն գաղափարը, որ իրենց ազգին պատրաստվում են լքել:

16-րդ հոդվածն ամբողջությամբ ապահովելով գործերի կատարյալ դուրս բերումը դաշնակիցների համար տնտեսական ու քաղաքական հետաքրքրություն ունեցող որոշ գոտիներից, գործերը դուրս է բերում միայն Կիլիկիայից և այն էլ պայմանների ներքո ու կարգի պահպանման համար թուրքական գործերը պահում է այն երկրներում, որտեղ նրանք իրականացրել են վատթարագույն կոտորածներ:

5-րդ հոդվածը պահպանում է թուրքական ռազմական վարչության իշխանությունը՝ կառավարելու համար հայկական վիլայեթները:

24-րդ հոդվածը միջամտություն նախատեսում է միայն նոր կոտորածների պարագայում, կարծեք այդպիսիք բավարար չափով արդեն տեղի չեն ունեցել:

Թուրքերի կողմից այն հոդվածի մերժումը, որը վերաբերում է հայերի հայրենադարձությանը, քաղաքացիական ապրանքների մատակարարմանը, դաշնակիցների կողմից Սսի, Չեյթունի և Հաճնի գրավմանը, վկայում է, որ թուրքերը պատրաստվում են շարունակել համառոտն վիճարկելու այդ տեղանքը:

Մամուլի մի ճեպագիր, որն սկիզբ է առնում Լոնդոնից և լույս է տեսել այստեղ, խոսելով Հայաստանում, Պաղեստինում, Սիրիայում և Արաբիայում օսմանյան գերիշխանության պահպանման մասին, մեծացնում է տագնապի զգացումը: Ինձ թվում է, որ Պոզոսի պահանջած՝ դաշնակիցների հռչակագիրը միակ դեղամիջոցն է:

Սիրիայի արարների հայրենիք չվերադառնալուն և Բաքվին վերաբերող այլ հոդվածները չեն կարող արդարացվել:

Փոփոխությունը, որը կատարվել է թուրքերի ձեռք բերած հոդվածներում, համապատասխանում է այն պահանջներին, որոնք նրանք չեն դադարել ներկայացնել Շվեյցարիայում:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, *Arménie*, tome 1, ff. 178-179).

731

Հոռնում Ֆրանսիայի դեսպան պ. Կամիլ Բարրերը՝ Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին

Հ. թիվ 2598:

Հոռն, 3-ը նոյեմբերի 1918 թ., ժ. 21-ին:
(*Ստացվել է* 4-ին, ժ. 4-ին):

Չինադադարի 11-րդ և 16-րդ հոդվածները¹ գրավել են Ռուսաստանի դեսպանության ուշադրությունը: Պ. դը Գիլսն ինձ հետ այդ մասին խոսել է դառնությամբ: ...² Թուրքիայի համար հնարավորություն է նախատեսում շարունակելու Բաքվի ռազմակալումը, որը նրան չի պատկանում ...³ նրա առջև հառնում է իբրև մի փորձ, որի պատասխանատվությունը նա հակված է վերագրելու Անգլիային, զրկելու համար Ռուսաստանին Պարսկաստանի

1 Տե՛ս վերը թիվ 724 փաստաթուղթը:
2 Վերժանման բացթողում:
3 Վերժանման բացթողում:

հետ յուրաքանչյուր հաղորդակցությունից:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, *Perse*, tome 35, f. 48).

732

Հոռնում Ֆրանսիայի դեսպան պ. Կամիլ Բարրերը՝ Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին

Հ. թիվ 2604: Գաղտնի:

Հոռն, 3-ը նոյեմբերի 1918 թ., ժ. 21-ին:
(*Ստացվել է* Զաղ. վարչ. նոյեմբերի 4-ին):

Իտալիայում Հայկական հարցը մինչ վերջին ժամանակներն արժանացել է խիստ նվազ ուշադրության և իրենք՝ հայերը, իրենց մասին շատ խոսելու տեղիք չեն տվել: Ես նշում եմ, որ այս օրերին մամուլը տպագրել է հայերից ելնող տարբեր հոդվածներ, ճամակներ, հրովարտական, ժողովների արձանագրություններ, որոնք կոչում են Իտալիա(յին) իր տեղը գրավել Հայաստանին օգնության հասնող տերությունների շարքում:

Շատ հնարավոր է, նույնիսկ հավանական, որ այս նախաձեռնությունները ներշնչել է Իտալիայի կառավարությունը: Ամեն դեպքում, նա դրանք արժանացրել է բարեհաճ ընդունելության:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, *Arménie*, tome 1, f. 181).

733

Եվրոպայում ՀՀԳ-ի լիազոր ներկայացուցիչ պ. Միքայել Վարանդյանը՝ Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին

Հ. թիվ 154/76:

Լոզան, 3-ը նոյեմբերի 1918 թ.:

Չարմանքով կարդում ենք Թուրքիայի հետ զինադադարի հոդվածները: Թուրքական տիրապետությունն ամենուր վերացված է, բացի Հայաստանից: Կիլիկիան և հայկական վեց վիլայեթները, նույնիսկ Անդրկովկասը և Ռուսահայաստանը հանձնված են թուրքական գործերին [sic], որոնք կշարունակեն վերահսկել հայերին, երկիրը բնակեցնել մահմեդական զանգվածներով: Ե՞րբ, այսպիսով, ժողովուրդներից ամենադժբախտն արդարություն կգտնի: Ինչի՞ց հետո: Շվեյցարիայի և Իտալիայի հայկական գաղութները կատարյալ ցնցման մեջ են:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, *Arménie*, tome 1, f. 182).

Պաղեստինում և Սիրիայում Ֆրանսիայի Գերագույն կոմիսար պ. Ժորժ-Պիկոն՝ Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին

Հ: Չհամարակալված:

Միլո, 4-ը նոյեմբերի 1918 թ., ժ. 11.30-ին:
(Ստացել է Քաղ. վարչ. նոյեմբերի 5-ին):

Այն հապաղումները, որոնք տեղ են գտել իմ տեղափոխությունն ապահովելու հարցում, ինձ չեն բույլատրում Բեյրութ ժամանել մինչ ամսի 6-ը:

Այդուհանդերձ, ես կարծում եմ, որ պարտավոր եմ հրատապ Չերդ գերագանցության ուշադրությունը հրավիրել այն շահավետության վրա, որը Թուրքիայի հետ ստորագրված զինադադարի արդյունքում մենք կարող էինք ունենալ.

1/ հասնել այն բանին, որ այժմվանից իսկ Պողոս Նուբար փաշան հրամաններ տա արևելքում գտնվող հայկական գործերին՝ դեպի Ռոմանական Հայաստան իջնելու մասին, որպեսզի մենք հնարավորություն ստանանք նրանց մատակարարել, ապահովել մեզ համար նրանց համագործակցությունը, որն այս տարածաշրջաններում իր դրոշմը կդնի Ֆրանսիայի գործողության վրա և մյուս կողմից, մեզ կբույլատրի միջոցներ ձեռնարկել երկրի ռազմակալման համար նվազագույն (ծախսերով) և առանց անգլիացի միջնորդների օժանդակության:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, *Arménie*, tome 1, f. 184).

Պաղեստինում և Սիրիայում Ֆրանսիայի Գերագույն կոմիսար պ. Ժորժ-Պիկոն՝ Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին

Հ: Չհամարակալված:

Միլո, 4-ը նոյեմբերի 1918 թ., ժ. 11.30-ին:
(Ստացել է Քաղ. վարչ. նոյեմբերի 5-ին):

Նախորդ համարի¹ շարունակությունը:

2/ Պողոսի միջոցով, ինչպես և պայմանավորվածություն էր կայացվել, նկատի ունենալ մի լիազոր ներկայացուցչի, որը ծանոթ լինի երկրին և ինձ օգտակար ցուցումներ տա:

3/ Վկայակոչել վերջերս Լոնդոնում կնքված այն վարչական համաձայնության հողվածը, որը նախատեսում է այս կարգավիճակի վերանայումը՝ հենց որ իրավիճակը փոփոխություն կրի, անգլիական հրամանատարության նկատմամբ՝ Գերագույն կոմիսարիատից ավելի մեծ ազատություն ստանալու համար ներկայումս, երբ գործողություններն ավարտին են հասել:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, *Arménie*, tome 1, f. 185).

¹ Տե՛ս վերը թիվ 734 փաստաթուղթը:

Լոնդոնում Ֆրանսիայի դեսպանության խորհրդական պ. դը Ֆլորիոն՝ Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին

Ճ. թիվ 834:

Լոնդոն, 4-ը նոյեմբերի 1918 թ.:
(Ստացել են Կաթինետը նոյեմբերի 6-ին,
Քաղ. վարչ. նոյեմբերի 8-ին):

Այսօրվա «Մանչեսթեր գարդիանը» տպագրում է մի երկար հարցազրույց լոյդ Բրայսի հետ այն վտանգների մասին, որոնք շուտով Հայաստանի համար կառաջանան Թուրքիայի հետ զինադադարի կնքման հետևանքով:

Վաշինգտոնում Անգլիայի նախկին դեսպանը նշում է, որ օսմանյան բանակի գորացրումը դժբախտ հայ ժողովրդի համար կստեղծի նոր վտանգ: Նա հանդես է գալիս, այսպիսով, համոզող զանգվածների կողմից նրանց երկրի նկատմամբ խիստ հստակ վերահսկողության սահմանման, վերահսկողություն, որին պետք է նեցուկ լինեն բավարար ուժեր՝ օսմանյան իշխանություններին հարկադրելու համար իր հետ հաշվի մատել: Այս տեսակետից, զինադադարի պայմանագրի 5-րդ և 24-րդ հոդվածները, ինչպես նրան է թվում, անհրաժեշտ երաշխիքներ չեն ներկայացնում և դժվարին են դարձնում նախագուշակյալ միջոցների դիմելը:

Լոյդ Բրայսն ավելացնում է, որ հայ ազգությանը պետք է նույնիսկ հնարավորություն տրվի զարգանալու ազատության և անկախության ուղղությամբ: Նա ափսոսանք է հայտնում օսմանյան կառավարության շնորհած և տերությունների հսկողության ներքո գործող յուրաքանչյուր ինքնավարության համար: Անգլիացի պետական գործիչը հանդես է գալիս համոզող հայերի խնամակալությունը եվրոպական ազգերից մեկի հովանու ներքո դնելու, որը մեկընդմիջտ վերջ կտա դիվանագիտական՝ այն վարչակարգին, որի գոհը դարձել են Արևելքի բոլոր քրիստոնյա ազգերը, կապահովի երկրից օգուտներ քաղել և մի քանի տարում կկերպարանափոխի ինքնուրույնաբար վերածնվելու անընդունակ այս տարածաշրջանները:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, *Arménie*, tome 1, ff. 186-187).

Խորհրդի նախագահը, Ռ-ազմական նախարարը՝ Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին

Ճ. թիվ 7818-9/11:

Փարիզ, 5-ը նոյեմբերի 1918 թ.:
(Ստացել է Ասիայի փոխվարչությունը)

¹ Միսլ է. հավանաբար՝ բռնակալական: (Բնագրում՝ diplomatique, իմա՝ despotique: - Ճ. թ.):
² Ստորագրել է փոխզննարկատ Դելման:

նոյեմբերի 5-ին):

Առաքելությամբ Միջագետքում գտնվող հրամանատար Սկիարդի՝ 1918 թ. նոյեմբերի 2-ի թիվ 94 հեռագրի պատճենը:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, *Turquie*, tome 68, f. 174).

ՀԱՎԵԼՎԱԾ

Միջագետքում բրիտանական ուժերի հրամանատարությունը գործուղված հրամանատար Սկիարդը՝ Խորհրդի նախագահ, Ռ-ազմական նախարար պ. Կլեմանսոյին

Հ. թիվ 94:

Բաղդադ, 2-ը նոյեմբերի 1918 թ.:

Իբրև թիվ 7275-9/11 ձեռնարկի՝ շարունակություն:

Ն (որին արբազնություն) Սերոբյանն Արևելյան լեզեռնի համար ի մի է բերել մոտավորապես 500 կամավորի անուն: Թվում է, թե անգլիական իշխանությունները նրան որևէ դիմադրություն չեն ցուցաբերել. նրանք, ընդհակառակը, հակված կլինեն կամավորների ընտանիքները Եգիպտոս ուղարկելու: Բայց նախքան վերջնական միջոցներ ձեռնարկելը, արքեպիսկոպոսը ցանկանում է իմանալ, թե արդյո՞ք զինադադարը Թուրքիայի հետ չի ընդհատել այս հավաքագրումը, որովհետև կամավորները զինվորագրվում են բուլքերի դեմ կռվելու և անկախ Հայաստանի կազմավորմանը նպաստելու համար:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, *Turquie*, tome 68, f. 175).

738

Խորհրդի նախագահ, Ռ-ազմական նախարար պ. Կլեմանսոն՝ Պաղեստինում ֆրանսիական ստորաբաժանման հրամանատար, գնդապետ դը Պիեպպային

Հ. թիվ 14004/3: Գաղտնի:

Փարիզ, 5-ը նոյեմբերի 1918 թ.:

Պատասխան թիվ 25/4 հեռագրին²

Առաջին. – Ինչպես և դուք, ես ևս գտնում եմ, որ մեծ առավելություն կունենանք, եթե ապահովենք Տավրոսի ռազմակալումն Արևելյան լեզեռնի միջոցով, այն պայմաններով, որոնք դուք առաջարկում եք:

Երկրորդ. – Հետևաբար, անհրաժեշտ քայլեր ձեռնարկեք գեներալ Ալլենբիին՝ նրա հա-

1 Արտատպված չէ:
2 Վերծանման բացթողում:

մաձայնությունը ստանալու նպատակով:

Երրորդ. – Ես նպատակահարմար չեմ գտնում հրահրել այս առիթով Ֆրանսիայի կառավարության միջամտությունը Բրիտանիայի կառավարությանը, վախենալով, որ նման միջամտությունը ռազմական այն միջոցառումների շուրջ, որոնց պատասխանատվությունը գեներալ Ալլենբիին է կրում, կարող է բորբոքել վերջինիս դյուրագագաղությունը և այս կերպ վարկաբեկել ձեր քայլի հաջողությունը:

(A.M.G., 7 N 2145).

739

Միջագետքում Ֆրանսիայի հյուպատոսության հավատարմատար պ. Ռուն՝ Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին

Հ. թիվ 262:

Բաղդադ, 5-ը նոյեմբերի 1918 թ., ժ. 9.30-ին:
(*Ստացվել է* ժ. 21-ին; Զաղ. վարչ. կողմից նոյեմբերի 6-ին):

Հազարի հասնող (հայ) կամավորներ, այժմվանից իսկ կարող են այստեղ (զինվորագրվել) (մեր) դրոշների ներքո: Ռ-ազմական կցորդն՝ արդեն ունի կամավոր հիմունքներով 600 զինվորագրված: Եթե Միջագետքում ռազմական գործողությունների դադարեցման հետևանքով հրամանատար Սկիարդի առաքելությունը Բաղդադում պետք է, դժբախտաբար, ավարտին հասցվի, ես առաջարկում եմ, որ նրան վստահվի լեզեռնականների մի գումարտակի կազմակերպումը ...², որի ծառայություններից հարկ կլինի օգտվել Մոսուլում:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, *Turquie*, tome 68, f. 173).

1 Հրամանատար Սկիարդը:
2 Վերծանման բացթողում:

**Միջագետքում Ֆրանսիայի հյուպատոսության հավատարմատար
պ. Ռու՛մ Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին**

Հ. թիվ 266:

Բաղդադ, 5-ը նոյեմբերի 1918 թ., ժ. 9.35-ին*:
(Ստացել է Բաղ. վարչ. նոյեմբերի 6-ին):

Քանի որ Նուբար փաշան հեռագրով Բաղդադի զինվորական կառավարչին է ուղարկել ավելի քան 100000 ֆրանկի հասնող մի գումար, Կոմիտեի և Ն {որին սրբազնություն} ն Սերոբյանի համաձայնությամբ՝ իբրև օգնություն հայ զաղթականներին բաժանելու (համար), այս պրելատն ակնհայտ սխալ է (համարել) այն բրիտանական իշխանությանն ուղղակիորեն առաքելը: Նա բողոքել է և դրամը կրճատել առանց արտասահմանյան աջակցության: Փրկելու համար նրանց Բաքուբայի ճամբարի անբարոյականությունից և կաշառքից, արքեպիսկոպոսն արտոնյալ պայմաններ է պահանջել գրեթե 600 այրու և որբի Պորտ-Սաիդի ճամբար տեղափոխելու համար:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, *Mésopotamie-Irak*, tome 11, f. 141).

**Բուենոս Այրեսում Ֆրանսիայի նախարար պ. Գոսսենը՝
Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին**

Հ: Չհամարակալված:

Բուենոս Այրես, 5-ը նոյեմբերի 1918 թ., ժ. 20.40-ին:
(Ստացվել է 6-ին, ժ. 12.30-ին;
Բաղ. վարչ. կողմից նոյեմբերի 7-ին):

Բուենոս Այրեսի հայկական ազգային միությունը, Արգենտինայի իր բոլոր հայրենակիցների անունից ինձ խնդրում է Չերդ գերագանցությանը փոխանցել այն հայտարարությունները, որոնք ամփոփվում են հետևյալ կերպ.

«Մենք այլևս չենք ցանկանում և ոչ մի ուղղակի կամ անուղղակի հարաբերություն ունենալ թուրքական կառավարության հետ: Մենք դաշնակիցներին և, մասնավորապես, Ֆրանսիային ենք ներկայացնում մեր պահանջները, որոնք հանգում են, իր պատմական սահմաններում, ամբողջ Հայաստանի՝ թուրքական, ռուսական և պարսկական, անկախության պահանջին»:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, *Arménie*, tome 1, f. 188).

* Պ. Գուի նախնական ձեռագիր ծանոթագրությունը. «Ես կարծում եմ, որ Պորտ-Սաիդի ճամբարից մարդկանց պետք է շուտով դուրս բերել, բայց հարցրեք պ. ժորժ-Պիկոյից, թե արդյո՞ք հնարավոր չի լինի այս գաղթականներին ապաստան հատկացնել Անտիոքի տարածաշրջանում»:

**Աթենքում Ֆրանսիայի նախարար պ. Ռորեր դը Բիլլին՝
Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին**

Ճ. թիվ 308:

Աթենք, 5-ը նոյեմբերի 1918 թ.:
(Ստացել են Կաթինետը նոյեմբերի 21-ին,
Բաղ. վարչ. նոյեմբերի 22-ին):

Պատասխանելու համար այն ցանկությանը, որը Չերդ գերագանցությունը բարեհաճել է ինձ հայտնել սույն կնիքի ներքո՝ 1918 թ. սեպտեմբերի 26-ի թիվ 296 իր մամակում¹, ես պատիվ ունեմ նրան հղել սրան կից Հունաստանում հայերի ձեռնարկած գործողությանը վերաբերող զեկուցագրի պատճենը:

Այս զեկուցագիրը բխում է Աթենքում գտնվող մեր տեղեկատվական ծառայությունից:
(A.M.A.E., E-Levant 1918-1929, *Arménie*, tome 1, f. 189).

ՀԱՎԵԼՎԱԾ

**Ծանուցագիր Աթենքում Ֆրանսիայի
դիվանագիտական առաքելության համար**

S {տեղեկատվական} ծ {առայություն}: Թիվ 495:

Աթենք, 2-ը նոյեմբերի 1918 թ.:

Ի պատասխան 1918 թ. հոկտեմբերի 18-ի թվակիր թիվ 333 ձեռ ծանուցագրի², մենք ձեզ հղում ենք մի զեկուցագիր, որը վերաբերում է Հունաստանի հայկական գաղութին և պատերազմի ընթացքում նրա գործունեությանը: Դուք դրանում կգտնեք հայ-հունական լիգայի նախագծին վերաբերող տեղեկությունները, որոնք ցանկանում եք:

Հայերը Հունաստանում կազմավորում են հունական կառավարության կողմից ճանաչված երեք համայնք, որոնց կենտրոններն են Աթենքը, Սալոնիկը և Կանդիին: Այս համայնքներից յուրաքանչյուրն ունի եկեղեցի, որը ղեկավարում է Կոստանդնուպոլսի հայկական պատրիարքությունից կախում ունեցող՝ հինգ անդամներից ընտրված աշխարհիկ խորհուրդը: Եկեղեցու փոխերեցը, որի լիազորությունների ժամկետը չորս տարով է, օրինական հիմունքներով, աշխարհիկ խորհրդի պատվավոր նախագահն է: Աշխարհիկ խորհուրդներն իրենց ղեկավարման համար պատասխանատու են համայնքի ընդհանուր ժողովին, որին նրանք պետք է հաշվետու լինեն յուրաքանչյուր տարվա ավարտին:

Այս երեք համայնքների թվում ամենակարևորը Սալոնիկի համայնքն է: Պատերազմի ընթացքում նրա գործունեությունը եղել է նշանակալից և պարտական աշխարհիկ խորհրդի անդամների, մասնավորապես, պ. Գրոն Շամդանջյանի ջանքերին: Գաղթականների

¹ Տե՛ս վերը թիվ 691 փաստաթուղթը:
² Չի հայտնաբերվել:

հանձնաժողովը ևս, որի նախագահը պ. Լեոն Շիրինն է, ցուցաբերել է մեծ եռանդ և նշանակալից ծառայություններ մատուցել դաշնակիցների բանակներին:

Աթենքի հայկական գաղութն այնքան էլ հաջողակ չի եղել իր խորհրդի անդամների ընտրության հարցում, մի բան, որը խոչընդոտել է նրա գործունեությանը և տեղիք տվել ցավալի երկպառակությունների: Այս խորհրդի նախագահը պ. Նիկողոսյանն էր, քարտուղարը՝ պ. Ղերևանյանը, մյուս երեք անդամները պատկանում էին ժողովրդական դասին: Վերջիններս չեն կարողացել արժանանալ համայնքի երևելի անձանց համակրանքներին, առաջ են բերել այն անձանց դժգոհությունը, ովքեր նրանց ծառայությունների կարիքն ունեին և նրանց պատճառով են ցանկացած բնույթի վնասներ: Այս մեքենայությունների հետևանքով, համայնքի ընդհանուր ժողովը սկսել է վստահությամբ չվերաբերվել աշխարհիկ խորհրդին, որը նոյեմբերի ընթացքում պետք է ընտրական ճանապարհով փոխարինվի:

Կանդիդի համայնքը, որը բաղկացած է առևտրականների ու արհեստավորների՝ տասնհինգի հասնող ընտանիքներից, կատարյալ ներդաշնակության պայմաններում, հանդարտորեն զբաղվում է իր գործերով, քանի որ նրա բոլոր անդամներն ընդհանուր առմամբ խաղաղասեր, հավատացյալ և ազնիվ մարդիկ են:

Հին Հունաստանում և Նոր Հունաստանում գտնվող բոլոր հայերի քանակը կարելի է հաշվել մոտավորապես 1500 անձի սահմանում: Մալոնիկի համայնքում կան նրանցից 500-ից 600-ը, Աթենքի համայնքում՝ մոտավորապես 300-ը և Կանդիդի համայնքում՝ 100-ը: Մյուսները ցրված են Եգեյան, Հոնիական ծովերի կղզիներում, Հին Հունաստանի և Մակեդոնիայի տարբեր քաղաքներում: Այս հայերի մեծ մասը գաղթականներ են Թուրքիայից: Ընդհանուր առմամբ, պատերազմի սկզբից ի վեր հայերի համակրանքն Անտանտի կողմում էր, որի հաղթանակը պետք է ապահովի Հայաստանի ազատագրումը: Հայ կամավորները տարբայնորեն Կովկաս են մեկնել ռուսական բանակի կազմում կռվելու համար: Եվ հայերի ակնհայտ զգացողությունն այնպիսին է, որ մի թուրք դիվանագետ կարողացել է ասել. «Ես համոզված եմ, որ մեր բանակներն ու մեր դաշնակիցների բանակները որոշ անհաջողություններ են կրել՝ երբ հայերին տեսնում են ուրախ և գոհ, ինչպես համոզված են մերոնց որոշ հաջողություններում՝ երբ նրանց տեսնում են տխուր և հուսալքված»:

Հայերի վարքագիծը Հունաստանում եղել է այնպիսին, որ նույնիսկ արժանացել է միապետականների կասկածներին և ատելությանը: Այդուհանդերձ, ճիշտ է, որ հայերի շրջանում գտնվել են անձինք, որոնք շահեր ունենալով Թուրքիայում և վախենալով գերմանաթուրքական լրտեսներից, տուրք են տվել որոշակի զգուշության և ձեռնպահ մնացել անտանտանտ զգացումների յուրաքանչյուր բացահայտ դրսևորումից, մի բան, որը տեղիք է տվել կասկածների: Բայց, ընդհանրապես, չի թվում, թե վերջիններս արդարացված են և այդ դեպքերը, ընդհանուր առմամբ, միայն բացառություններ են:

Վենիզելուսի իշխանության վերադառնալուց հետո, հունական կառավարությունը Հունաստան գաղթած հայերի նկատմամբ ցուցաբերել է միևնույն բարեհաճ վերաբերմունքը, ինչ անհողորդ [sic] հույների: Հայերն այդ առիթով իրենց երախտագիտությունն են հայտնել՝ իրենց նվիրվածությունը ցուցաբերելով հպատակեցված հույների գործին:

Այդ մտադրությամբ էր, որ Աթենքի համայնքի ղեկավարներից ոմանց մոտ հղացավ Աթենքի հայերի և «Անհողորդ [sic] հույների միության» միջև, որի նախագահը պ. Կիրիակիդեսն է, մերձեցում և ավելի սերտ համագործակցություն հաստատելու գաղափարը: Նույնիսկ առաջ է քաշվել Աթենքում հայ-հունական լիգայի կազմավորման գաղափարը: Սակայն, քանի որ հայերը չկարողացան այդ նախաձեռնությունն իրենց ձեռքը վերցնել առանց իրենց ղեկավարի՝ Փարիզում գտնվող ազգի լիգոր ներկայացուցիչ Նուբար փա-

շայի հետ նախապես խորհրդակցելու, նախագիծը հանձնվեց նրա հաստատմանը: Նուբար փաշան իր կարծիքը գաղութին դեռևս չի հայտնել: Մինչ այդ, Կիրիակիդեսի գլխավորությամբ, ազդեցիկ անդամներից բաղկացած անհողորդ հույների պատվիրակությունը մեկնեց Եվրոպա և Ամերիկա ու հայ-հունական լիգայի նախագիծը դրանով իսկ ձախողվեց:

Աթենքի հայկական գաղութը ջանաց հրապարակումների միջոցով տեղեկացնել հույներին հայկական գործի կարևորությանը: «Էթնոս», «Էլեթերոս տիպոս», «Պրոգրես», «Մեսսաթես» լրագրերը հավանություն տվեցին այդ ջանքերին, իրենց սյունակները տրամադրելով մեծան բնույթի հրապարակումներին. որոնց մեծ մասն արտատպվեց Եվրոպայում, Եգիպտոսում և Ամերիկայում լույս տեսնող հայկական և արտասահմանյան թերթերից:

Աթենքի հայկական համայնքը, տեղեկանալով Փարիզում ֆրանս-հայկական լիգայի կազմավորմանը, իր երևելի անձանցից նրան տրամադրեց 24 անդամի, որոնց անունները և հանգանակությունները փոխանցվեցին Փարիզում գտնվող Հայկական պատվիրակության ղեկավարին:

Այդ նույն համայնքը, չնայած իր ունևոր անդամների սահմանափակ քանակին, օգնեց իր դժբախտ եղբայրների կացության բարելավմանը՝ նրանց ուղարկելով նվիրատվությունների հավաքի շահույթը: Նախ 450 դրախմա ուղարկվեց Եգիպտոս. երկրորդ հանգանակությունը, որը տվեց 2460 դրախմա, փոխանցվեց Էջմիածնի հայ կաթողիկոսին. երրորդ հանգանակությունը բերեց 8000 դրախմա, որը հավաքվեց Պելոպոնեսում և Հոնիական կղզիներում և որի ընդհանուր գումարը փոխանցվեց Փարիզ՝ Նուբար փաշային. պ. Լեոն Շիրինի կողմից՝ Աթենքով անցնելու ընթացքում ժողովված 4500 դրախման հատկացվեց հայ որբերի բարեգործական ընկերությանը. վերջապես, մոտավորապես 5000 դրախմայի հասնող մի գումար, որն ի հայտ եկավ Կանդիդի հայերի արված հանգանակության միջոցով, ի նպաստ Կովկասի հայ գաղթականների, ուղարկվեց Փարիզ՝ Պողոս Նուբար փաշային:

Այսպիսին եղավ այն արդյունքը, որին հասավ պ. Նիկողոսյանի ղեկավարած Աթենքի աշխարհիկ խորհուրդը. դրանով պարտական ենք հատկապես որոշ հայ հայրենասերների նախաձեռնությանը և լավագույն ղեկավարության դեպքում, այն կարող էր լինել ավելի փայլուն:

Մալոնիկի համայնքի գործունեությունը շատ ավելի հաջողակ եղավ: Դրա համար պարտական ենք այն աշխարհիկ խորհրդի խելացի ջանքերին, որը ղեկավարում է պ. Գրոն Շամդանջյանը, ում աջակցում էին իր համագործակիցները և Հայ գաղթականների հանձնաժողովի նախագահ պ. Լեոն Շիրինը: Այս վերջինին ենք պարտական բազմաթիվ հայ կամավորների ուղարկումով, որոնք պատերազմի սկզբում, շնորհիվ հաղորդակցությունների բարենպաստ պայմանների, մեկնեցին Կովկաս՝ զինվորագրվելու ռուսական բանակին: Մալոնիկի հայկական համայնքը, բացի դրանից, բազում առիթներով իր հայրենասիրության վկայությունը դրսևորեց, լայնորեն բաց անելով իր քսակն ի նպաստ իր հալածված եղբայրների, ինչպես նաև հույն գաղթականների: Այսպես, նա հավաքեց 10000 դրախմա ի նպաստ Մակեդոնիայում գտնվող հայ գաղթականների: 15000 դրախմայի սահմաններում մի գումար ի մի բերվեց և ուղարկվեց Էջմիածնի կաթողիկոսին՝ Կովկասի հայ գաղթականներին հանձնելու համար: Մեկ տարի անց, միևնույն նպատակով 20000 դրախմայի հասնող մի գումար ուղարկվեց Նուբար փաշային: 4000 դրախմա հանձնվեց հունական իշխանություններին՝ հոգալու հույն գաղթականների կարիքները Մակեդոնիայում: Վերջապես, 7000 դրախմայի հասնող մի գումար, որը հանգանակվել էր ի նպաստ «Հունական զինվորի գուլպա» բարեգործական ընկերության, հանձնվեց Մալոնիկի գլխավոր կառավարչին:

Գաղութի մի քանի երևելի անձինք, ցանկացած բնույթի ուշադրություններով, առանձնահատուկ հոգածություն են ի հայտ բերել դաշնակցային բանակներում և, մասնավորապես, Մակեդոնիայում գտնվող ռուսական բանակում ծառայող հայ զինվորների հանդեպ, զլիավորապես կրոնական մեծ տոների առիթով:

Հայերի գործունեությունն ընդգրկել է նաև Արևելյան լեզեոնի համար կամավորներ հայթայթելու հարցը, որի գտնվելու վայրը Կիպրոսն է:

Նուբար փաշայի հիմնադրած Եգիպտոսի հայկական բարեգործական կազմակերպության նախաձեռնությամբ, մեծ հայրենասիրություն ունեցող մի երիտասարդ հայ առևտրական՝ պ. Արա Միսիրյանը, Եգիպտոսից գնացել է Սալոնիկ, որտեղ իր ջանքերը միավորելով պ. Լեոն Շիրինի ջանքերին, կարողացել է վերակազմակերպել այդ կազմակերպությունը Սալոնիկում և դրան համանման կազմակերպություններ ստեղծել Վլոյում և այլ քաղաքներում:

Շնորհիվ այդ քաղաքների հայերի պատրաստական օգնության՝ հնարավոր է եղել մեկ տարում ժողովել 14507 դրամ, որն առաքվել է Եգիպտոս:

Սալոնիկի առևտրական մեծ հաստատությունները, ինչպես նաև Անգլիայում, Հոլանդիայում կամ Բելգիայում գտնվող մայր ձեռնարկությունները, ինչպիսիք են Սիվրիսսայան և Ազմավորյանը, պ. Միսիրյան որդին, Չիբուխչյանը, Բարսեղյանը և ուրիշներ, կարևոր նվիրատվություններ են արել դաշնակցային բանակների Կարմիր խաչին և կազմավորել են կոմիտեներ՝ իրենց ծախսերով հայ որբերին որդեգրելու և դաստիարակելու համար: Այս դժբախտներից ավելի քան 200-ին, ընդունել են միայն Հաագայում գտնվող Միսիրյան որդի և Չամբերթենյան ձեռնարկությունները:

Սալոնիկի այս համայնքի բարեգործական գործունեությունը վերջին ժամանակներս փոքր-ինչ խափանվել է հյուսիսի ժամանակ կրած կորուստների պատճառով, որը նրան հարկադրել է իր ջանքերը նվիրաբերել աղետյալ հայերին:

Սալոնիկի հայերը միշտ իրենց համակրանքն են ցուցաբերել Մակեդոնիայում գտնվող դաշնակցային բանակներին և միշտ ջանացել են իրենց ծառայությունները դնել վերջիններիս տրամադրության ներքո: Նրանք նրանց են տրամադրել քաղաքացիական և ռազմական պաշտոնյաների, ինչպիսիք են պ {արոնայ}ք Հանջյանը, Ռոզալթը, Աբեղյանը, Խաչատուրյանը, Լեոն Շիրինը և ուրիշներ, որոնք մեծ ծառայություններ են մատուցել:

Այսպիսին է եղել, ընդհանուր գծերով, Հունաստանի հայկական գաղութի գործունեությունը, որի օգնությունն Անտանտի գործին, ամենևին էլ արհամարհանքի չէ, որ արժանի է եղել:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, Arménie, tome 1, ff. 190-196).

Կովկասում ֆրանսիական ռազմական առաքելության ղեկավար, փոխգնդապետ Շարդինյին՝ Խորհրդի նախագահ, Ռազմական նախարար պ. Կլեմանտյին

Հ. թիվ 61, 62: Գաղտնի:

Էնգելի, [անթվակիր], ժ. 13.30-ին:

(Ստացել է ԲԸ-ի Առաջապահ խումբը նոյեմբերի 6-ին):

Բարվի վերագրվումն անխուսափելի է: Անգլիական հրամանատարությունը թուրք զենքային¹ պահանջել է քաղաքն անգլիական զորքերին հանձնել՝ խուսափելու համար քաղաքների կողմից նոր կոտորածներից:

Ուֆայից Գուրիևով եկող ռուսական կապի սպան, անգլիացի մի սպայի և իմ սպաններից մեկի հետ նոյեմբերի 1-ին վերադարձել է զենքային ժամինի մոտ:

Խուսափելու համար այն բռնություններից, որոնք չեն հապաղի տեղի ունենալ թուրք և թուրք ժողովուրդների նկատմամբ, եթե ռուսահայկական կամ թուրքահայկական զորքերը միայնակ վերագրվեն Հայաստանը, ես կարծում եմ, որ պարտավոր եմ հաշվետվություն տալ այն մասին, որ այդ գրավումը պետք է տեղի ունենա՝ իր տրամադրության ներքո անհրաժեշտ եվրոպական զորքեր ունեցող դաշնակիցների ռազմական հրամանատարության ղեկավարությամբ:

(A.M.G., 16 N 3186).

Խորհրդի նախագահը, Ռազմական նախարարը² Միջազգետրում բրիտանական ուժերի հրամանատարություն գործուղված հրամանատար Սկիարդին

Հ.Ճ. թիվ 7858-9/11:

Փարիզ, 6-ը նոյեմբերի 1918 թ.:

Պատասխան 94 ձեռ {հեռագրին}³ և հաջորդներին:

1/ Որդեգրվել է անգլիական հրամանատարության կողմից Պարսկաստանի և Կովկասի հայկական անձնակազմերի ռազմական կազմակերպման և տեղում հայկական ազգային բանակ կազմավորելու համար այդ ստորաբաժանումներն օգտագործելու սկզբունքը:

Հետևաբար, Միջազգետրում և Պարսկաստանում զինվորագրված հայ կամավորները պետք է օգտագործվեն հայկական այդ բանակի համար և չուղարկվեն Արևելյան լեզեոն:

2/ Ինչ վերաբերում է Մոսուլի գոտում առնչվող միջդաշնակցային համաձայնություններին ծանոթանալուն, ձեզ հրահանգներ են ուղարկվել Արտաքին գործերի նախարարության միջոցով:

3/ Ձեր հեռագրերի և զեկուցագրերի միջոցով տրամադրված տեղեկություններն ամենօգտակարներից են և մինչ կարգ ու կանոնի հաստատումը, ձեր ներկայությունը Միջազգետրում մնում է անհրաժեշտ:

(A.M.G., 16 N 3099).

1 Նորի փաշան:

2 Ստորագրել է զենքային Ալբին:

3 Նոյեմբերի 2-ի. տե՛ս վերը թիվ 737 փաստաթղթի հավելվածը:

Ասիա-Օվկիանիայի փոխտնօրենի՝ ծանուցագիրը

Ծ:

[7-ը նոյեմբերի 1918 թ.]:

Պողոս Նուբար փաշան ինձ տեղեկացրել է, որ օսմանյան Արտաքին գործերի նախկին նախարար Նորատունկյանը նշանակվել է Հայկական ազգային պատվիրակության անդամ: Նա շուտով կգա Փարիզ: Նկատի ունենալով Ն.-ի՝ զգուշավորությունը և Թուրքիայում ունեցած կապերը, նրա անդամակցությունն ապացուցում է, որ թուրքերը կանխատեսում են Հայաստանի ազատագրումը:

Նուբար փաշան տեսել է պ. Կլեմանտյին, որը հայերի համար խոստումներ է տեղացել: Պողոս Նուբարն օգտվել է դրանից, որպեսզի հստակ դիրքորոշում չգրավի Ֆրանսիայի հանդեպ:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, *Arménie*, tome 1, ff. 201-201 v).

Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշան՝ Արտաքին գործերի նախարարությունում Ասիայի փոխտնօրեն պ. Ժան Գուին

Ն:

Փարիզ, 7-ը նոյեմբերի 1918 թ.:

Ինչպես դուք ինձնից պահանջել էիք, ես շտապում եմ ձեզ հանձնել սրան կից այն հեռագրի պատճենը, որը գեներալ Ալլենբին է մեզ հղել՝ ի պատասխան այն շնորհավորական ճեպագրի, որը մենք նրան էինք ուղարկել Պաղեստինի հաղթանակի առիթով:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, *Turquie*, tome 68, f. 177).

ՀԱՎԵԼՎԱԾ

Եզիպտոսում քրիստոնեական զինված ուժերի գլխավոր հրամանատար, գեներալ Ալլենբին՝ Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշային

Հ: Չհամարակալված:

1 Պ. Գուն:

2 Ազգանվան սկզբնատառ քնագրում. հարկ է կարդալ՝ Նորատունկյան:

[Պատճենը]:

Ավաա:

Ես ձեզ ջերմորեն շնորհակալություն եմ հայտնում ձեր շնորհավորանքների համար և հպարտ եմ այն բանի առիթով, որ ձեր հայրենակիցներն ակտիվորեն մասնակցել են ճակատամարտին ու դարձել մեր հաղթանակի մասնակիցը:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, *Turquie*, tome 68, f. 178).

Հոռմում Ֆրանսիայի դեսպան պ. Կամիլ Բարրերը՝ Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին

Հ. թիվ 70 (sic):

Հոռմ, 7-ը նոյեմբերի 1918 թ., ժ. 17.15-ին:
(*Ստացել է Զաղ. վարչ. նոյեմբերի 8-ին*):

Սըր Մարկ Սայքսն իմ ուշադրությունը հրավիրում է մի հողվածի վրա, որը Լոտիի ստորագրությամբ լույս է տեսել նոյեմբերի 1-ին «Էշո դը Պարիի» ճակատային մասում: Դա թուրքի ջատագովումն է, որը ներկայացված է իբրև մարդկանցից ամենամարդկայինը, ֆրանսիացիների հանդեպ ամենամեծ համակրանք տաժողը և ուղղակի հարձակում է դժբախտ հայերի դեմ, որոնց ազգությամբ թուրքերը փորձել են բնաջնջել: Սըր Մարկ Սայքսը գտնում է, որ այդ հողվածը կրճեթրցվի Ասիայի բոլոր մահմեդականների շրջանում և ցավալի տպավորություն կգործի մեր հովանավորյալների շրջանում:

Իմ կողմից, ես չեմ (զլանում) որակել այդ հրապարակումն իբրև վրդովեցուցիչ: Մեկ անգամ չէ, որ ես Դեսպարտամենտին զգուշացրել եմ, որ «Էշո դը Պարին» ունի Արտաքին գործերի նախարարության կողմից ոգեշնչվողի համբավ: Անկասկած, հենց այդ զաղափարն է սըր Մարկ Սայքսին դրդել ինձ տեղեկացնել խնդրո առարկա հողվածին:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, *Turquie*, tome 133, f. 219).

Փարիզի հայ մտավորականների միության նախագահ պ. Արշակ Չոպանյանը, պ. Գումուշգյուերդյանը՝ Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին

Ն:

Փարիզ, 7-ը նոյեմբերի 1918 թ.:

1 Տե՛ս «Էշո դը Պարիիում» Պիեռ Լոտիի «Թուրքերը» հողվածը՝ 1918 թ. նոյեմբերի 1-ին, թիվ 12495:

Ֆրանսիական փառապանծ քանակի տարած հրաշալի հաղթանակները մեզ համակում են մեծ ուրախությամբ: Այդ հաղթանակներն ազատության հաղթանակներն են և համայն հայ ժողովուրդն օրհնում է Ֆրանսիայի ու նրա քաջարի դաշնակիցների հերոսական զինվորներին՝ մայրկության բշնամիներին պարտությունների մատնելու կապակցությամբ: Մենք ձեզ ենք հղում, պարոն նախարար, մեր ջերմ ու խանդավառ շնորհավորանքները:

Մենք դուրս հավելում ենք մեր երախտիքի հավաստիացումը՝ Թուրքիային պարտադրված զինադադարի պայմաններում հայերին վերաբերող հողվածների համար: Մենք ուրախ ենք տեսնելու, որ հայ գերիներին և տեղահանվածներին Ֆրանսիան և նրա դաշնակիցները դիտում են իբրև իրենց սեփական ազգությանը պատկանողներ: Դա նշանակում է հայ ազգին ճանաչել իբրև պատերազմող կողմի և դաշնակից ազգի, որը պատերազմի ընթացքում, փաստորեն, այդպիսին է եղել: Այն հողվածները, որոնք վերաբերում են հայկական վիլայեթներին և Կիլիկիային, մեզ թվում են իբրև ժամանակավոր միջոցներ, և մենք հույս ենք տածում, որ Ֆրանսիան և նրա դաշնակիցները, ինչ վերաբերում է Հայաստանին, ավարտին կհասցնեն արդարության իրենց գործը, նրան ընձեռելով նրա ազգային անկախության վերականգնման հնարավորությունը, որը կլինի հայ ժողովրդի նկատմամբ թուրքերի իրագործած անսահման հանցագործությունն ամոքելու միակ միջոցը և այն ահռելի զոհաբերությունների արդարացի փոխհատուցումը, որոնք այս ժողովուրդը կանձն է առել հանուն ազատության գործի:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, Arménie, tome I, ff. 202-202 v).

749

**Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնը
Բուենոս Այրեսում Ֆրանսիայի նախարար պ. Գոսսենին**

Հ. թիվ 425:

Փարիզ, 8-ը նոյեմբերի 1918 թ., ժ. 23-ին:

Ես պատասխանում եմ նոյեմբերի 5-ի ձեր չհամարակալված հեռագրին¹:

Բարեհաճեք շնորհակալություն հայտնել Բուենոս Այրեսի հայկական ազգային միությանը՝ նրա հայտարարության համար և հավաստիացնել, որ Հանրապետության կառավարությունը վճռականությամբ լի է այն վարչակարգին վերջ տալու հարցում, որի գոհերը դարձել են հայերը:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, Arménie, tome I, f. 211).

1 Վերն արտատպված է թիվ 741 փաստաթղթում:

**Ամերիկայի հայկական ազգային միության նախագահ պ. Միհրան
Սևասլին՝ Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին**

Հ. թիվ 92318:

Բոստոն, 8-ը նոյեմբերի 1918 թ.:

Թուրքիայի անձնատրության կապակցությամբ՝ Ամերիկայի հայկական միությունը հենտլյալ ճեպագիրն է հղել Փարիզի, Լոնդոնի¹, Հռոմի² Արտաքին գործերի նախարարներին: Ամերիկայի հայկական ազգային միությունը, Միացյալ Նահանգների և Կանադայի հայերի անունից, ձեզ է հղում իր ջերմագին շնորհավորանքներն ընդհանուր բշնամու դեմ դաշնակիցների տարած փայլուն հաղթանակների առիթով: Նահատակված Հայաստանը, վեհանձն զոհաբերություններից և աշխարհի ազնվաբար ազգությունների կողքին՝ Կովկասում, Պաղեստինում ու Ֆրանսիայում ռազմի դաշտում ակտիվ մասնակցություն ունենալուց հետո, ժամ առ ժամ սպասում է իր վերջնական ազատագրմանը, անկախության հարցում իր անսասան իրավունքների ճանաչմանը: Ամբողջությամբ ընդունելով զինադադարի որոշ պայմանների արդյունավետությունը, Ամերիկայի հայերի ազգային միությունը խնդրում է ձեզ, այդուհանդերձ, նկատի ունենալ, որ զինադադարի պայմանների 24-րդ հոդվածն ի գոյու չէ իրավիճակի պահանջներին լայնախուս բավարարում տալու: Հիսուն տարվա ընթացքում Հայաստանում հայերի հանդեպ դաժանությունների և կոտորածների սաստկացումը թելադրում է զինադադարի ընթացքում այնպիսի երաշխիքների հրատապ անհրաժեշտությունը, որոնք ի գոյու լինեն վեց վիլայեթներում և Կիլիկիայում հովանավորելու հայ բնակչությանը, վստահելով դուրսն ռազմակալումը դաշնակցային հրամանատարության ներքո գտնվող՝ Անդրկովկասի և Պաղեստինի հայկական գոյքերին: Թուրք զինվորների ներկայությունը, կարևոր չէ, թե Հայաստանի որ մասում, իրենց օջախը վերադառնալու հարցում՝ հայ գաղթականների համար սպառնալիք է և միաժամանակ արգելք: Մյուս կողմից, քանի որ դաշնակից տերությունները Բրեստ-Լիտովսկի պայմանագրի՝ Հայաստանի անբաժանելի մասը կազմող Ռուսահայաստանին վերաբերող հողվածները հռչակել են անվավեր, մենք պատկառանքով հայտարարում ենք, որ թուրքական գոյքերի ներկայությունն այս տարածաշրջաններում անիմաստ է: Եզրափակելուց առաջ, Հայկական ազգային միությունը, նահատակված ժողովրդի անունից, կրկին ի հայտ է բերում իր խորին համոզմունքը, որ հայկական հողոքոստի հեղինակներին և իրագործողներին թույլ չի տրվի խուսափել իրենց արժանի պատժից:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, Arménie, tome I, ff. 205-207).

1 Պ. Բալֆուրը
2 Պ. Սոննիսոնը:

**Մեծ Բրիտանիայի դեսպանության
հաղորդագրությունը Դեպարտամենտին**

Հրատապ:

Փարիզ, 9-ը նոյեմբերի 1918 թ.*:
(Մտացել են Կար. նոյեմբերի 10-ին,
Քաղ. վարչ. նոյեմբերի 11-ին):

Նորին մեծության դեսպանը պատիվ ունի Նորին մեծության Արտաքին գործերի գծով պետական քարտուղարի հրահանգով տեղեկացնել Արտաքին գործերի նախարարին, որ Արխանգելսկում գտնվող բրիտանական ռազմական իշխանությունները ցանկանում են այդ նավահանգստից դուրս բերել հայերի փոքրաթիվ խմբավորումը, որն ընդգրկում է մտավորապես հինգ սպայի և տասներկու այլ աստիճանավորների, որոնք պատկանում են գեներալ Թորգոմի գլխավորած հայկական ռազմական առաքելությանը և բողոքում են ռուսական ուժերին միանալու դեմ:

Լոնդոնում Ուոր Օֆիսն առաջարկել է, որ խնդրա առարկա հայերին ընդունեն ֆրանսիական ռազմական իշխանությունները՝ օգտագործելու համար իրենց զինված անձնակազմերի հետ Պաղեստինում, և Ըյլ Դերբին հրահանգ է ստացել պ. Բայֆուրից, խնդրելու Նորին գերագանցություն պարոն Պիշոնից աջակցել իրեն, ըստ նախնական պայմանավորվածության, նաև հաշվի առնելով ֆրանսիական կառավարության տեսակետներն այս առաջարկության շուրջ:

Այս ծանուցագրի պատճենը, այս դեսպանության ռազմական խորհրդականի միջոցով պետք է փոխանցվի Ռազմական նախարարությանը:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, *Turquie*, tome 68, ff. 179-179 v).

**Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար
փաշան՝ Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին**

Ն:

Փարիզ, 9-ը նոյեմբերի 1918 թ.:
(Մտացել է Ասիայի փոխվարչությունը)
նոյեմբերի 12-ին):

Ձեր Դեպարտամենտը բարեհաճել է ինձ հաղորդել Գերագույն կոմիսար պ. Ժորժ-Պիկոյի հեռագիրը՝ որով նա խնդրում է, որ Ազգային պատվիրակության միջոցով հրամաններ տրվեն արևելքում գտնվող հայկական գործերին դեպի Հայաստան իջնելու մասին, որպես-

* Նախարարի ծանուցագրությունը «Նորհրդակցեք հրատապ պ. Պիկոյի հետ, բայց [անընթեռնելի բառ], որ Թորգոնը խանդավառված և անհավասարակշիռ անձնավորություն է»:
1 Նոստը վերաբերում է վերը թիվ 734 փաստաթղթում արտատպված հեռագրին:

զի հնարավոր լինի նրանց մատակարարել և այսպիսով, հայկական տարածքը գրավելու համար ապահովել համագործակցությունը:

Ազգային պատվիրակությունը պատրաստակամորեն ընդունելով այս առաջարկությունը, կազմել է սրան կից հեռագիրը՝ որը հղված է գեներալ Անդրանիկին, և ես խորապես երախտապարտ կլինեմ Ձերդ գերագանցությանը, եթե նա բարեհաճի, դրան հավանություն տալու պարագայում, այն նրան ուղարկել:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, *Arménie*, tome 1, f. 216).

**Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնը
Բուենոս Այրեսում Ֆրանսիայի նախարար պ. Գոսսենին**

Հ. թիվ 431:

Փարիզ, 10-ը նոյեմբերի 1918 թ., ժ. 23.30-ին:

Ես պատասխանում եմ {ամսի} 7-ի թիվ 522 ձեր հեռագրին²:

Ձինվորագրումը պետք է առավել ևս շարունակվի, քանի որ հարկ է նախատեսել ռազմակալող գործերի հանգամանքը, բայց կամավոր զինվորագրման շուրջ պետք է պայմանավորվածություն կայացվի ոչ թե պատերազմի հարատևման ժամանակաշրջանի համար, այլ երկու տարի ժամկետով: Թուրքիայի հայերի շահերից [է] բխում, որ նրանց համակրոնակիցները բազմաքանակ լինեն ֆրանսիական այն գործերում, որոնց հանձնարարված է պահպանել կարգ ու կանոնը տեղում:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, *Turquie*, tome 68, f. 180).

**Սենի պատգամավոր պ. Ալբեր Տոմասը՝ Հայկական ազգային
պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշային**

Ն:

Փարիզ, 10-ը նոյեմբերի 1918 թ.:

Նաֆիլյանը, հավանաբար, ձեզ տեղեկացրել է այն ամենին, ինչը տեղի է ունեցել վրացիների հետ: Վրացիները զանգատվում են «Լա վուա դը Լ'Ամենիի» որոշ հողավածների արտահայտության եղանակից և իրենց դերին տրված գնահատականներից: Նրանք

1 Արտատպված չէ: Ռազմական նախարարությունն այս հեռագիրը մի քանի օր անց կփոխանցի գեներալ Անդրանիկին:

2 Արտատպված չէ: 1918 թ. նոյեմբերի 7-ի այս հեռագրում, Բուենոս Այրեսի հայկական ազգային միության խնդրանքով, պ. Գոսսենն անհանգստացած ցանկանում է իմանալ, թե արդյո՞ք կամավորների զինվորագրումն Արևելյան լեզեոնին դեռևս շարունակվում է:

ճշգրտումներ չեն արել և ոչ էլ նշել են հողավածների բնագրերը, բայց, հավանաբար, Պինոնի երկտողը թույլ կտար կարգավորել իրավիճակը: Մեր բարեկամները փոքր-ինչ ոլորագաց են թվում, բայց հարկ է չարհամարիել նրանց կատարյալ համաձայնությունը, մասնավորապես, թյրքամեաների հետ:

(A.N., 94 AP 408).

755

Հոռոմ Ֆրանսիայի դեսպան պ. Կամիլ Բարրերը՝ Արտաքին գործերի նախարար պ. Ստեֆան Պիշոնին

Հ. թիվ 2693:

Հոռոմ, 10-ը նոյեմբերի 1918թ՝
(Ստացել է Քաղ. վարչ. նոյեմբերի 14-ին):

Պատասխան թիվ 3493 ձեր հեռագրին²:

Անհրաժեշտ չէ համառել Թուրքիայում հալածված ժողովուրդներին վերաբերող՝ պ. Վիլսոնի գաղափարների բացառապես պատրանքային բնույթի շուրջ: Եթե Միացյալ Նահանգների նախագահին չդրոն նրանք փոփոխության ենթարկել, Անտանտի տերությունները կհայտնվեն մեծ դժվարությունների առջև: Հարկ է դրան ձգտել համբերատարությամբ:

Ամենալուրջ փաստարկը, որը հարկ է օգտագործել, հենց այն է, որ Փոքր Ասիայի ժողովուրդները ձգտում են իրենց ճակատագրի խնամակալությունը դաշնակից տերությունների ապավինությանը հանձնել: Այս հավաստի է, մասնավորապես, Ֆրանսիայի և Անգլիայի համար: Նրանց տիրապետությունը կարող է, առանց ապացուցման կարիքն ունեցող մեծ ջանքերի, Վիլսոնի դավանանքի շրջանակներում ընդգրկվել: Իտալիայի համար դա շատ ավելի դժվարին է, քանզի Անատոլիայի մահմեդական և հույն ժողովուրդներն ամենևին հակված չեն հենվելու նրա վրա:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, Syrie-Liban-Cilicie, tome 4, f. 110).

756

Կովկասում ֆրանսիական ռազմական առաքելության ղեկավար, փոխգնդապետ Շարդինյին՝ Խորհրդի նախագահ, Ռազմական նախարար պ. Կլեմանտյին

Ճ. թիվ 2:

Բաքու, 10-ը դեկտեմբերի 1918 թ.:

1 Փոստով, առանց ծածկագրի:
2 Չի հայտնաբերվել:

Ես պատիվ ունեմ ձեզ հղել սրան կից 5 փաստաթղթերի պատճենները, որոնք գրել է Բաքվի հայերի եպիսկոպոս, Ն {որին սրբազնություն} և Բագրատն՝ այն կոտորածների, կողոպուտի և վայրագությունների կապակցությամբ, որոնց մեղավորը դարձել են թուրք-թարական զորքերն այն պահին, երբ քաղաքը գրավվել է և դրան հաջորդած օրերին.

1/ Հոկտեմբերի 23-ի թվակիր (նոր տոմարով) նամակը՝ Ադրբեջանի խորհրդի նախագահ պ. խան Խոյսկուն.

2/ Նոյեմբերի 9-ի թվակիր նամակը՝ Կովկասի մահմեդական բանակի հրամանատար Նուրի փաշային.

3/ Նոյեմբերի 11-ի թվակիր նամակը՝ Ադրբեջանի Ներքին գործերի նախարար պ. Ջիվանջիրին.

4/ Նոյեմբերի 12-ի թվակիր նամակը՝ պ. խան Խոյսկուն.

5/ Մանրամասն զեկուցագիր, որը նոյեմբերի 23-ին ներկայացվել է Բաքվում ափ ելած անգլիական զորքերի հրամանատար, զեներալ Թոմսոնին:

(A.M.A.E., Europe 1918-1929, Russie, tome 626, f. 50).

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

I

Բաքվի հայերի պրելատ, Ն {որին սրբազնություն} և Բագրատը՝ Ադրբեջանի հանրապետության նախագահ Ֆարախի խան Խոյսկուն

Ն: Բաքու, 10/23-ը հոկտեմբերի 1918 թ.:

Թույլ տվեք ինձ՝ իբրև Բաքու քաղաքի հայ բնակչության հոգևոր ներկայացուցչի, ով միշտ իր պարտքն է համարել ապահովել իր համայնքի հանդարտ և խաղաղ կյանքը, ինչպես նաև բարի դրացիական ու համերաշխ հարաբերություններն իր դարավոր հարևանների հետ, թույլ տվեք ինձ լինել այն աղերսների և այն կոչի երաշխավորը, որոնք ինձ են հղել հայկական հասարակության բոլոր դասակարգերը: Ես համարձակվում եմ ձեզ հավաստիացնել, որ ներկա կոչը հրահրվել է բացառապես երկրի կատարյալ խաղաղեցումը և բնակչության բարօրությունը տեսնելու անկեղծ ցանկությամբ:

Ահա այդեն տասներորդ ամիսն է, ինչ օսմանյան բանակը ռազմակալել է Բաքուն և այն հռչակել Ադրբեջանի նորաստեղծ հանրապետության մայրաքաղաք: Կարող եր թվալ, թե սկսած այն արյունալի իրադարձությունների առաջին օրերից, որոնք տեղի էին ունեցել քաղաքը գրավելուց հետո, այնժամ, երբ տեղի հայ բնակչությունը հարկադրված եղավ մարդկային և նյութական շատ մեծ կորուստներ կրել, կարող եր թվալ, թե ի վիճակի էին իրավական կարգ հաստատել, որի շնորհիվ բնակչության տարբեր մասերը կարող էին հավասարապես, առանց ազգային խտրականության, օգտվել կառավարության երաշխավորած և օրենքի վրա հիմնվող հովանավորությունից: Մենք իրավունք ունեինք նման հույսեր փայփայել, առավել ևս, որ Բաքվի գրավումից հետո, առաջին իսկ շաբաթից, այն է՝ սեպտեմբեր:

1 Ն {որին սրբազնություն} և Բագրատ Վարդապարյանը:

րի 19-ից (նոր տոմարով) ի վեր, պ. վարչապետն իր կոչում հանդիսավորությամբ հայտարարեց, որ «Ադրբեջանում ապրող բոլոր քաղաքացիները, անկախ ազգային և կրոնական զանազանությունից, կարժանանան կառավարության միևնույն վերաբերմունքին, որն ամենքի համար հավասար հիմունքներով կապաշտպանի բոլոր քաղաքացիների կյանքը, ունեցվածքը և իրավունքները»: Թուրք հրամանատարն՝ արեց նույն հայտարարությունը: Թող, որ ինձ թույլատրվի ասել, որ յուրաքանչյուր քաղաքակիրթ պետության համար տարրական այս սկզբունքը, որը ներկայացված է վերոհիշյալ կոչում, առնվազն հայ ժողովրդի նկատմամբ, իրականում, դժբախտաբար, չի իրականացվում:

Ասել, որ Բաքվի և նրա արվարձանների հայ բնակչությունը չի դիտվել իբրև քաղաքացիների խումբ, որը պետք է հավասար իրավունքներ ունենար, այլ դրվել է *արտառոց պայմաններում, գտնվելով յուրաքանչյուր օրենքից և հովանուց դուրս վիճակում*, կլինի ոչ թե չափազանցություն, այլ ցավալի իրական փաստ:

Իբրև այն ամենի ապացույցներ, ինչ մենք առաջադրում ենք, բավական կլինի նշել մի քանի անհերքելի փաստեր, որոնք կրում են շարունակական բնույթ.

1/ Մինչ այսօր հայերի շրջանում անընդմեջ շարունակվում են ձերբակալությունները, հաճախ վերածվելով զանգվածային շուրջկալների: Բանտերը լեփ լեցուն են հայերով, որոնց բանտարկությունն ընթանում է անընդմեջ պայմաններում, որոնք շարաթներ շարունակ գուր սպասում են որևէ մեղադրանքի: Մեծ թվով հայեր ձերբակալվել են ու արքայազնի և չնայած ծնողների բոլոր ջանքերին, չնայած բոլոր խնայանքներին, հնարավոր չի իմանալ, թե որտեղ են նրանք և ինչպիսի պայմաններում են ապրում:

2/ Ձերբակալություններին զուգընթաց, հայերի տներում խուզարկություններ են կատարել՝ շատ հաճախ պետական ցածրաստիճան ծառայողներն ու պատասխանատվությունից զերծ մարդիկ, որոնք միշտ օգտվել են առիթից ևս մեկ անգամ՝ առանց այդ էլ արդեն կողոպտված ու սարսափահար բնակիչներին կողոպտելու և նրանց ընտանիքի պատիվը կրկին ոտնահարելու համար: Խուզարկությունների պատրվակով, նրանք միայն հայերի բնակարաններից էին համառոտապես կախույքը և տնային տնտեսության իրերը:

3/ Գերի հայ զինվորները գտնվում են արտառոց պայմաններում: Հայ զինվորները՝ ռուս, վրացի, հրեա և այլ ազգություններին պատկանող զինվորների հետ կազմել են ռուսական կառավարական բանակի զինված անձնակազմի մի մասը: Ուստի, կարելի էր հույս տա՞ծել, որ հայերը կգտնվեին միևնույն պայմաններում, ինչ և հայերը [sic իմա՝ ռուսներ ?]: Այլ ազգությունների բոլոր ռազմագերիներն ազատ են արձակվել: Հայ ռազմագերիները պահվել են և նրանց, ինչպես ստրուկների, հարկադրում են աշխատել սարսափելի պայմաններում: Նրանց հետ, իբրև ռազմագերիների, փողոցներում պատահաբար ձերբակալել են մեծ թվով մարդկանց, որոնք ռազմական գործողություններից որևէ մասնակցություն չեն ունեցել:

4/ Բաքվում և նրա շրջաններում, նավթային արդյունաբերության ասպարեզում հայ բանվորները և մտավոր ծառայողներն ունենին բավական մեծ ներուժ: Այժմ, չնայած մարդկանց դուրս բերմանը, կոտորածին, ձերբակալությանը և արքային, կան, այդուհանդերձ, բավական բանվորական ձեռքեր ու մտավոր ուժեր, որոնք աշխատանք են փնտրում և ձգտում օգտագործել իրենց մասնագիտական գիտելիքներն ու կիրառել իրենց աշխատանքն այնպիսի հովանավորություններում², որոնք համապատասխանում են իրենց: Եվ, այդուհանդերձ, նույնիսկ այս հարցում, դժբախտաբար, կարելի է նշմարել մի արտասովոր տարբերություն. մի կողմից, նվազեցնելով անձնակազմը, մշտապես ազատում են հայերին,

1 Մուրսելի փաշան:
2 Մխալ է. հավանաբար՝ «մասնագիտություններ»: (Բնագրում՝ professions, իմա՝ professions: - Մ. ք.:)

մյուս կողմից, արդյունաբերական շրջաններում հայերի ֆիզիկական գոյության համար տիրում է այնպիսի անընդունելի կացություն, որ ըստ էության, հայ բանվորը որևէ հնարավորություն չունի դուրս գալ և անվտանգ աշխատանքի գնալ:

5/ Իբրև համընդհանուր կարգ, հայտարարվել է՝ ի լուր ամենքի, որ Բաքվի բոլոր բնակիչներն ունեն ազատ մեկնելու և տեղափոխության իրավունք: Այս պահին Բաքվում են գտնվում Թիֆլիսից, Երևանից, Գյանջայից, Ղարաբաղից եկած բազմաթիվ ընտանիքներ, որոնք ցանկանում են վերադառնալ իրենց տեղերը: Բայց հայտնի չէ, թե ինչու, վերը նշված անձանց համար, հարուցվում են անհասկանալի և անբացատրելի դժվարություններ: Տղամարդ լինի, կին թե երեխա, հայր հնարավորություն չունի օգտվելու ազատ տեղափոխությունից, յուրաքանչյուր քաղաքացու համար տարրական այդ մարդկային իրավունքից, պարզապես սոսկ այն պատճառով, որ հայ է:

6/ Բաքվի հայկական բնակչությունից մի քանի հազար ընտանիք ապաստան են գտել Էնզելիում, Պետրովսկում և Կասպից ծովի ափերին գտնվող այլ քաղաքներում, որտեղ նրանք այս պահին ամենասարսափելի պայմաններում են: Օրենքի առջև հավասար իրավունք հայցող սկզբունքին համապատասխան, թվում էր, թե նրանք՝ Ադրբեջանի քաղաքացիների կարգավիճակով, պետք է օգտվեին կառավարության հովանուց և պաշտպանությունից: Այդուհանդերձ, կառավարությունը, դժբախտաբար, նրանց ուշադրության չի արժանացնում, որը պարտավոր է անել և ոչ մի միջոց չի ձեռնարկում հայ քաղաքացիների վերադարձը երկիր դուրսին դարձնելու համար, թեպետ այս առիթով փախստականներն իրենց կողմից հատուկ ուղարկված պատվիրակությունների միջոցով, բազմիցս ներկայացրել են համոզիչ խնդրագրեր:

Ինչպես հայտնի է, Բաքվի բնակչության շրջանում, թվաքանակին վերաբերող հարցում, մահմեդականներից և ռուսներից հետո հայերը զբաղեցնում են 3-րդ տեղը: Բնական էր հույս տա՞ծել այն քանի շուրջ, որ Բաքու քաղաքի բոլոր ազգություններին շնորհված ընդհանուր և ազգային իրավունքներն ու ազատությունները կախող էին տարածվել նաև հայերի շրջանում: Ցավոք սրտի, այսպիսի կարևոր հարցում, հայերի հանդեպ իշխանությունն ի հայտ է բերել բուրբուխի այլ վերաբերմունք: Այնժամ, երբ Բաքվի բոլոր ազգությունները և համայնքները (ռուսները, վրացիները, հրեաները, լեհերը և նույնիսկ լիտվացիները, որոնք այդքան փոքրաթիվ են) ունեն իրենց ազգային կազմակերպությունը, ինչպիսիք են խորհուրդը, կոմիտեն կամ ընկերությունը, հայերին արգելվում է ունենալ նույնիսկ մի կազմակերպություն, որը զբաղվի միայն բարեգործությամբ, թեպետ ավելի, քան մյուս բոլոր ազգությունները, նրանք այս իրադարձությունների ընթացքում վերին աստիճանի շահագրգռված են եղել հատուկ ընկերություններ ստեղծելու հարցում՝ պայքարելու համար այդչափ բազում դժբախտությունների դեմ, օգնելու համար սովյալ ընտանիքներին և լքված անհամար որբերին:

Իբրև հայկական համայնքի հոգևոր ներկայացուցիչ, որին հայ ժողովրդի դժբախտությունների արձագանքը հասնում է ավելի արագ և շատ ավելի, քան այլոց, դիմելով ձեզ այս զեկուցագրով, ես կատարում եմ միայն իմ սրբազան պարտքը:

Վերը նշված կետերում, ես ինձ չեմ թույլատրում տուրք տալ և ոչ մի աչառու նրբերանգի: Դրանցից յուրաքանչյուրը հիմնվում է ամեն օր տեղ հասնող բազմաթիվ փաստերի վրա:

Հայ բնակչությունը, լինելով ողբերգական դժբախտությունների ենթակա և ոտնահարված, ցանկանում է, վերջապես, պարզություն մտցնել իր կացության մեջ Ադրբեջանի հանրապետությունում: Նա կցանկանար իմանալ, թե արդյո՞ք ինքը ևս կարող է օգտվել ազգային փոքրամասնությունների համար նախատեսված՝ պետության քաղաքացիների իրա-

վունքներից, թե հայերը կշարունակեն գտնվել արտառոց պայմաններում, օրենքից և յուրաքանչյուր հովանուց դուրս:

Ավարտելով սույն զեկուցագիրը, ես խնդրում եմ Ձերդ գերագանցությանը հրավիրել իր ուշադրությունը, մասնավորապես, ընդգծված կարևոր կետերի վրա և չհրաժարվելով պատասխանից, արդարացնել հայկական համայնքի հույսերը: Բացի դրանից, ես պատիվ ունեմ Ձերդ գերագանցությանը հաղորդել, որ սույն զեկուցագրի բովանդակությունը, միաժամանակ փոխանցվել է Կովկասի մահմեդական բանակի հրամանատարին¹:

(A.M.G., 6 N 226).

II

Բաքվի հայերի պրելատ, Ն{որին սրբազնություն}ն Բագրատը՝ Կովկասի իսլամական բանակի գլխավոր հրամանատար Նուրի փաշային

Ն:

Բաքու, 9-ը նոյեմբերի 1918 թ.:

Ես պատիվ ունեմ ձեզ հաղորդել, որ մի քանի օր առաջ Ռուշանի բեյին եմ հանձնել Բաքու քաղաքի հայերի կացությանը վերաբերող մի զեկուցագիր՝ այն ձեզ ներկայացնելու համար: Գալով ձեզ մոտ Ի. Օ. Դուկասովի հետ, ես ենթադրում էի, որ հնարավորություն կունենամ ձեզ հետ անձնական զրույց ունենալ, որպեսզի ձեզ համար ավելի մանրամասնորեն և շատ ավելի լավ շարադրեմ իմ զեկուցագրի գլխավոր կետերը, որը ես ներկայացնում եմ Բաքվի հայկական ընկերության անունից, իբրև նրա տառապանքների և անսահման վշտի վկայություն՝ ակնկալելով ձեր օգնությունը: Ցավոք սրտի, Ռուշանի բեյը մեզ հաղորդեց, որ հիվանդությունը ձեզ խանգարում է մեզ ընդունել. ես այնժամ նրան հանձնեցի, անձամբ նրան, խնդրո առարկա իմ զեկուցագիրը:

Հայկական ընկերության անունից, ես պատիվ ունեմ ձեզ խնդրել բարեհաճելու ձեր առանձնահատուկ ուշադրությունը հրավիրել իմ զեկուցագրի երկրորդ և երրորդ կետերի վրա, այն է՝ շարունակական բնույթ կրող՝ պարբերաբար տեղի ունեցող բռնագրավումների և հայերի բնակարանների կահույքի ու տնային տնտեսության իրերի գողության. ինչպես նաև հայ գերիների ծայրահեղ տառապալից դրության վրա: Մեպտեմբերի սկզբից մինչ այս վերջին օրերը, հայերի տներում և բնակարաններում պարբերաբար բռնագրավվել են գրեթե բոլոր կահույքները, զորգերը, հագուստները, թանկարժեք իրերը և այլ արժեքավոր իրեր: Հայկական ընկերությունը զայրմանում է և չի կարող բացատրել, թե ինչու առաջին օրերի՝ նյութական, բարոյական ու ֆիզիկական այդչափ մեծ կորուստներից հետո, իր ունեցվածքները պետք է կրկին ենթակա լինեն անողորմ բռնագրավման և ցանկանում է միաժամանակ իմանալ, թե արդյո՞ք ինքը կկարողանա դառնալ իր ունեցվածքների տերն ու տնօրենը, ներկայացնելով դրանց ցուցակը:

Մեկ այլ կարևոր կետ, որը տեղական հայկական բնակչությանը պատճառում է բարոյական մեծ տառապանք. դա գերիների հարցն է, որոնց գերակշռող մասը երբևէ բանակի մասը չի կազմել, այլ աշխատել է ավելի շուտ նավթարդյունաբերության ոլորտում, գործա-

¹ Նուրի փաշան:

բաններում ու առևտրական հաստատություններում և որոնք վերջին մեկուկես ամսվա ընթացքում ձերբակալվել են փողոցում կամ իրենց բնակարաններում: Այս պահին, այդ գերիների ընտանիքները գտնվում են ծայրահեղ թշվառ կացության մեջ, հուսալքված են և ի վիճակի չեն պահպանելու իրենց գոյությունը:

Բացի նյութական ծանր կորուստներից, այս ընտանիքները կրում են նաև բարոյական տառապանքներ՝ լինելով իրենց ամուսինների, զավակների և հարազատների կալանավորման սարսափելի պայմանների և ձերբակալության ականատեսը: Ամեն օր, մեծ բազմությամբ, նրանք ինձ են ներկայանում հայկական եկեղեցում, այս դժբախտ կանայք և երեխաները, ամբողջությամբ արտասովաբոր ու հուսալքված, նկարագրելով, թե ինչպիսի սարսափելի պայմաններում են ապրում հայ գերիները, թե ինչպիսի մահատակության նրանք պետք է արժանանան հատկապես Սալիանսի գորանոցներում, երկաթուղային կայարաններում կամ շրջակա գյուղերում: Նրանց հարվածում են զավազաններով, նրանցից խլում են դրամը, հագուստները, թողնելով կիսամերկ, սովահար: Ուստի՝ գերիները հիվանդանում են, և զուրկ բժշկական ցանկացած օգնությունից, վերածվում կմախքների: Կան նաև հայ գերիներ, որոնց ինչպես անասունների, լծում են սայլերին, մահատակում ֆիզիկապես ու բարոյապես, երբեմն նույնիսկ նրանց այս կերպ տանում են քաղաքի գլխավոր փողոցներով, դժբախտաբար, ես ինքս դարձել եմ նման տեսարանի ականատեսը:

Կան այլ սարսափելի փաստեր, որոնց նկարագրելն իսկ թվում է ոչ այնքան պատշաճ: Դիմելով ձեր մարդասիրական զգացումներին, բազմաթիվ դժբախտ ընտանիքների անունից ես ձեզ խնդրում եմ բարեհաճել այժմ իսկ ազատ արձակել բոլոր գերիներին, այս պահին, երբ պատերազմն արդեն ավարտվել է, և երբ ամենուր հնչում է մոտալուտ հաշտության ձայնը:

(A.M.A.E., Europe 1918-1929, Russie, tome 626, ff. 51-52).

III

Բաքվի հայերի պրելատ, Ն{որին սրբազնություն}ն Բագրատը՝ Ադրբեջանի Ներքին գործերի նախարար Բեհրուդ խան Ջիվանջիրին

Ն:

Բաքու, 11-ը նոյեմբերի 1918 թ.:

Համաձայն Ադրբեջանի կառավարության կարգադրության՝ բույլատրվել է ստեղծել օգնության կոմիտե՝ հայերին օգնության հասնելու համար, մի բան, որի մասին պաշտոնապես ինձ հաղորդվել է հոկտեմբերի 28-ին: Այս կոմիտեն, իմ նախագահությամբ, առաջին հերթին վճռել է օգնել հայ որբերին, որոնք, ռեսուրսների կատարյալ բացակայության հետևանքով, գտնվում են ամենաանելանելի կացության մեջ և ամեն օր մահանում են տանյակներով: Նվիրատվությունները հավաքելու համար, անհրաժեշտ եղավ օգնության հրատապ կոչի հետ մեկտեղ, դիմել ընկերությանը, և ես, իբրև օգնության կոմիտեի նախագահ, «Ադրբեջան» և «Կասպի» լրագրերի խմբագրությանն ուղարկեցի մի նամակ, որը դուք կգտնեք սրան կից: Այս նամակը պետք է մամուլում տպագրվեր նոյեմբերի 6-ին, բայց համաձայն այն բանի, ինչը հայտարարել է խմբագրությունը, գրաքննությունը դրան ընթացք չի տվել և հիրավի, նշված լրագրերի նոյեմբերի 6-ի համարներում, նամակի տեղը մնացել էր

դատարկ: Այսպես, սկզբից ի վեր, դժվարություններ հարուցվեցին խանգարելու համար օգնության կոմիտեին գործելու, նույնիսկ այնժամ, երբ խոսքը վերաբերում էր որբերին՝ սեպտեմբերի իրադարձությունների անմեղ զոհերին, օգնության հասնելուն:

Գրաքննության միջամտությունը և լրագրերում խնդրո առարկա մամակի լույս ընծայման մերժումը, անկասկած, այն շարունակական հալածանքների և բռնությունների դրսևորումներից է, որոնց հայերն այստեղ պետք է ենթակա լինեն:

Իբրև իմ հավատացյալների նկատմամբ՝ կառավարության գործակալների հարաբերությունների յուրօրինակ արձագանք կարող է ծառայել հարգանքի վիրավորական բացակայությունը, որը դրսևորվել է իմ նկատմամբ, չնայած իմ աստիճանին և դիրքին, այն մարդու, որը Բաքվի քեմի հայերի հոգևոր ներկայացուցիչն է: Չերդ գերագանցությունը ոստիկանության միջոցով ինձ կարգադրել է գալ ձեզ մոտ [sic]. այդ հրավերը, որն ինձ են փոխանցել քրթի մի կտորի վրա՝ գրված է հետևյալ ձևով. «Ներքին գործերի նախարարի հրամանը 5-րդ թաղամասի ոստիկանության կոմիսարին՝ հակտեմբերի 28-ին, կեսօրին, եպիսկոպոս Բագրատին պարտադրել ներկայանալու Ներքին գործերի նախարարություն: Թաղամասի ոստիկանության դասակի հրամանատար»:

Հայկական եկեղեցու եպիսկոպոսին դիմելու նման ձևը, դժբախտաբար, բնութագրում է հայերի հանդեպ դրսևորվող վերաբերմունքի ընդհանուր երանգը և, իրոք որ, թեպետ հոկտեմբերի 23-ին Նորին գերագանցություն, պարոն նախագահին ներկայացվել է գեկուցագիր՝ և չնայած որ 5-րդ թաղամասի ոստիկանության միջոցով, դրան ի պատասխան հետևել է կառավարության հաղորդագրությունը, հալածանքները և բռնություններն, այդուհանդերձ, հայերի հանդեպ դեռևս շարունակվում են: Հայ գերիները ենթարկվել են ցանկացած բնույթի հալածանքի Սալիանսի գորանոցներում ու երկաթուղու կայարաններում, և ես ինքս, այս օրերին տեսել եմ, թե ինչպես են քաղաքով տանում սայլերին լծված հայ գերիներին:

Դեռևս մինչ այսօր, հայերը չեն կարող հայտնվել արդյունաբերական շրջաններում, հատկապես Բալահանիում և Սուրախանում: Այս վայրերում նրանց կյանքը վտանգված է, և այդտեղ ապրող մահմեդականները բացահայտորեն ու աներկբայելիորեն հայտարարում են, որ ոչ մի հայ չի կարողանա մնալ արդյունաբերական շրջաններում և, դժբախտաբար, տեղական կառավարության գործակալները բացարձակապես և ոչ մի համապատասխան միջոց չեն ձեռնարկում, այնպես որ, հազարավոր հայկական ընտանիքներ, երկու ամսից [ի վեր] գրկված են աշխատանքից ու գոյության միջոցներից: Մինչ այժմ կան դեռևս հայեր, որոնք տառապում են բանտերում, առանց որևէ դատավճռի, հարցաքննության, թեպետ նրանց կալանավորման օրվանից անցել է երկու ամիս: Եվ այժմ, դեռևս անողորմաբար շարունակվում են հայերի ունեցվածքների բռնագրավումները, թեպետ նրանք տնտեսական տեսակետից բացարձակապես սնանկացել են և նրանցից շատերը հասել են ամենակատարյալ թշվառության: Կիսամերկ, սովահար, նրանք օրական մահանում են տասնյակներով և ծմռան նախօրեին զանգվածաբար դատապարտված են մահվան:

Շարունակական բնույթ կրող հալածանքների, ինչպես նաև անհավասարության և իմ հավատացյալների հանդեպ դրսևորվող անընչառ հովանավորության՝ վերը նշված բոլոր փաստերն ակնհայտ են, և իբրև նրանց ներկայացուցիչ, ես իմ պարտքը համարեցի ձեզ ներկայացնել այս ամենը, համառորեն խնդրելով անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել՝ հայերի դեմ ուղղված հալածանքները և բռնությունները դադարեցնելու, ինչպես նաև գերիներին ու ձերբակալված մյուս հայերին ազատ արձակելու համար, որոնք դժբախտ մայրերի, կանանց և երեխաների միակ նեցուկներն են:

(A.M.A.E., Europe 1918-1929, *Russie*, tome 626, ff. 53-55).

1 Տե՛ս վերը նույն փաստաթղթի I հավելվածը:

IV

Բաքվի հայերի պրելատ, Ն{որին սրբազնություն}ն Բագրատը՝ Աղբրեջանի Խորհրդի նախագահ Ֆաթալի խան Խոյսկուն

Ն:

Բաքու, 12-ը նոյեմբերի 1918 թ.:

Ի պատասխան հոկտեմբերի 23-ին Չերդ գերագանցությանը ներկայացված իմ գեկուցագրի¹, որը փոխանցվել է 5-րդ թաղամասի ոստիկանության ղեկավարի և ոստիկանության կոմիսարի միջոցով, ձեր տված հրամաններն ինձ են հաղորդվել:

Չնայած բարեհաճ ոգով հետևած պատասխանին, հայերի հալածանքները դեռևս շարունակվում են մինչ այս պահը. դեռ ավելին, բազում սովահար ու կիսամերկ հայ գերիներ հալածանքների են ենթարկվել Սալիանսի գորանոցներում և երկաթուղային կայարաններում, նրանց լծում են սայլակներին և ստրկական այդպիսի ստորացուցիչ վիճակով տանում քաղաքի փողոցներով: Հայ բանվորներին չեն ընդունում արդյունաբերական շրջաններում, ուստի նրանք հազարներով մնում են առանց աշխատանքի և գոյության միջոցների: Հայերի ունեցվածքներն անողորմաբար բռնագրավվել են, իսկ այն գերիները, որոնք մնացել են, տառապում են բանտերում: Կատարելապես հուսալքված նրանց ծնողներն ամեն օր դիմում են ինձ և արցունքն աչքներին խնդրում միջնորդել նրանց համար Աղբրեջանի կառավարությանն ու խնդրել նրանց ազատ արձակել, քանի որ նրանք իրենց միակ նեցուկներն ու մխիթարողներն են: Այս ամենի մասին ես մանրամասն գեկուցագիր եմ կազմել՝ ուղղված Ն{որին} գ{երագանցություն} Նորի փաշային և Ներքին գործերի պ. նախարարին²: Ձեզ ուղարկելով սրան կից այն կոչերի պատճենները, որոնք նրանց եմ հղել գրավոր, ես խնդրում եմ Չերդ գերագանցությանը, ձեր կողմից ևս ձեռնարկել բոլոր համապատասխան միջոցները՝ խնդրո առարկա հալածանքները, բռնություններն ընդհատելու և գերիներին ու ձերբակալված հայերին ազատ արձակելու համար:

Եթե դուք այդ անհրաժեշտ եք համարում, յուրաքանչյուր պահի ես պատրաստ եմ, անձամբ Ի. Օ. Դուկասովի հետ միասին, հայ ժողովրդի անունից Չերդ գերագանցությանը ներկայացնել ավելի մանրամասն բացատրություններ և ավելի բացահայտ փաստեր:

(A.M.A.E., Europe 1918-1929, *Russie*, tome 626, ff. 56-57).

V

Բաքվի հայերի պրելատ, Ն{որին սրբազնություն}ն Բագրատը՝ Բաքվի տարածաշրջանում դաշնակիցների հրամանատար, գեներալ Թոմսոնին

Ն:

Բաքու, 10/23-ը նոյեմբերի 1918 թ.:

1 Տե՛ս վերը նույն փաստաթղթի I հավելվածը:
2 Նորի փաշային ուղղված նամակի առթիվ տես վերը՝ այս փաստաթղթի II հավելվածը. պ. Ջիվանչիրին ուղղված նամակի համար տես նախորդ հավելվածը:

Ողջունելով դաշնակիցների մուտքը Բաքու, որոնց գլխավորում են Անգլիայի, Ամերիկայի և Ֆրանսիայի ներկայացուցիչները, իբրև Բաքվի թեմի հայ բնակչության հոգևոր ներկայացուցիչ, իմ հավատացյալների անունից, վայրագորեն սպանված, մահատակված, հիմնավորապես կողոպտված, մերկ, սովամահ զոհերի անունից, ամենասարսափելի հանցանքների անմեղ զոհերի անունից, ես իմ սրբազան պարտքն եմ համարում ձեզ տեղեկացնել իմ հավատացյալների կրած անհավատալի տառապանքների մասին:

Թուրքիայի և Ադրբեջանի հանրապետության բանակների կողմից քաղաքը գրավելուց հետո, սեպտեմբերի 2/15-ին, ուր Բաքվի հայերի համար ճակատագրական օր դարձավ, սպիտակ դրոշով զորքերին դիմավորելու ուղարկվեց հաշտարար մի պատվիրակություն: Քաղաքի խաղաղասեր բնակչությունը հույս էր տածում և կարծում, որ Թուրքիայի և Ադրբեջանի հանրապետության կանոնավոր զորքերը թույլ չեն տա [sic] ուրև բռնություն ու կվերահաստատեն [sic] քաղաքի կանոնավոր կյանքը: Եվ հիրավի, պատվիրակությունը, որի կազմում էին Պարսկաստանի և Դանիայի հյուպատոսները, թուրքական բանակի նրամանատար Մուրսել փաշայից ստացավ պաշտոնական հավաստում, որ խաղաղ բնակիչների անվտանգությանը վտանգ չի սպառնա և որ ունեցվածքներին ձեռք չի տրվի: Այդուհանդերձ, կիրակի օրը, կեսօրից ի վեր, քաղաք մտնելուն եթ, կազմակերպված հրոսակախմբերը և զինվորները սկսեցին զանգվածային, անմարդկային կոտորած և սանձարձակ կողոպուտ, որոնք շարունակվեցին երեք օր:

Հայերին, առանց խտրականության՝ տղամարդկանց, կանանց, երեխաներին, առողջ և հիվանդ ծերունիներին, անզամ ծծկեր մանուկներին մորթում էին և կոտորում, ակնհայտորեն հետապնդելով ամբողջ հայ բնակչության ոչնչացման նպատակը: Համաձայն ամենաարժանահավատ տեղեկությունների, չհաշված բեռնասայակները և սայլերը, 250 փութ՝ տարողություն ունեցող 25 բեռնատար ավտոմեքենա, 4 օրվա ընթացքում, գիշեր ու ցերեկ, տեղափոխել են դիակներ և այդ աշխատանքը դեռևս ավարտին չի հասցվել: Չանգվածային կոտորածի հետքերը թաքցնելու համար, դիակների ամենամեծ մասն այրվել է Սալիանսի գորանոցների մոտ և ավելի հաճախ այդանոցներում:

Ըստ մոտավոր հաշվարկի՝ սպանված հայերի թիվը հասնում է մինչ քսան հազարի (20000): Միջոցներ են ձեռնարկվել զոհերի թիվը ճշգրտորեն սահմանելու համար:

Այս հրեշավոր կոտորածին զուգընթաց, զինվորները, ինչպես նաև երկրի մահմեդականները, անընդմեջ, պարբերաբար, կարծեք գործելով համաձայն նախօրոք մտահղացված ծրագրի, իրագործում էին խաղաղ բնակիչների ունեցվածքների նույնքան հրեշավոր կողոպուտը: Բոլորից կորզում էին ու հափշտակում դրամը, ոսկե, արծաթե և բոլոր արժեքավոր իրերը: Հայերի բնակարաններից, պահեստներից, խանութներից և կրպակներից տարել են գույքի, ապրանքների, արդյունաբերական արտադրանքների, կահույքի, հագուստի, կոշիկի, սպիտակեղենի և տնային տնտեսության ցանկացած բնույթի իրերի ամբողջ սարեր: Դեռ ավելին, այս կողոպուտների ընթացքում, շատ հաճախ որևէ զանազանություն չէր դրվում հայերի և այլ ազգությունների միջև: Նույնիսկ արտասահմանցիներն են հարկադրված եղել տառապելու:

Ամբողջովին կողոպտվել են երկրի բոլոր հայկական եկեղեցիները, ազգային հասարակական հաստատությունները, եկեղեցիներից հափշտակել են ոսկե ու արծաթե բոլոր իրերը, հազվագյուտ և մեծ արժեք ունեցող հնությունները, քահանայական զգեստները, եկեղեցու զարդարանքները, մի խոսքով այն, ինչը որոշ արժեք էր ներկայացնում: Եկեղեցիների ներքին մասն աղտոտվել է ամենանողկալի ձևով և պղծվել ամենասարսափելի ձևով:

1 Մեկ փութը հավասար է 16.38 կ(իլոգրա)մի:

Մարդասպանները և կողոպտիչները բացահայտորեն հայտարարել են, որ երեք օր շարունակ քաղաքն ամբողջությամբ իրենց էր հանձնվել:

Չանգվածային սպանությունները երբեմն ի կատար են ածվել այնպիսի վայրագության, այնպիսի դաժանությամբ, որ նույնիսկ դժվար է հավատալ նման արյունոտության հնարավորությանը: Տեղի են ունեցել այնպիսի դեպքեր, երբ սարսափահար հայերի աչքերի առջև դահիճները սրում էին իրենց դանակները և հրեշավոր դաժանամոլությանը մնամվող ինչ-որ բանով համակված՝ խանդավառվում էին, դժբախտների համար մանրամասնում և նրանց նկարագրում այն բոլոր խոշտանգումները, որոնց նրանց պատրաստվում էին ենթարկել:

Բալահանիում, Բաքվի նավթարդյունաբերողների բարձրագույն մարմնի խորհրդի հիվանդանոցում, մորթվել են բոլոր հիվանդ հայերը, բոլոր ծառայող հայերը և երեք բժիշկ, դեռ ավելին, բակում ոտքով հազվի քարշ էին տալիս ծանր հիվանդ հայերին:

Փախստական հայ երեխաների ապաստարանում վայրագորեն վերցնում էին վախից սարսափահար երեխաներին և չորրորդ հարկից փողոց նետում: Վայրագությունը և արյունոտությունը հասնում էին այնպիսի աստիճանի, որ երկրի մահմեդականները, բավարարելու համար վրեժի ծարավը, ասկյարներից՝ գնում էին հայ գերիներին:

Երիտասարդ հայ կանայք, երբեմն տղաները, հաճախ ամուսինների և ծնողների աչքի առջև, վայրագաբար բռնաբարվել են: Նրանցից շատերն այս նպատակով տարվել են քաղաքից հեռու, հայտնի չէ, թե ուր, և այս նահատակները, որոնք տեսել են իրենց ամուսինների և հարազատների սպանությունը, անհետ չքացել են:

Այս անհավատալի սարսափները տևել են երեք օր: Դեռ ավելին, շորթումները, կողոպուտները և բռնաբարությունները հավասարապես իրականացրել են թուրքական կանոնավոր բանակները, Ադրբեջանի հանրապետության զորքերն ու մահմեդական քաղաքացիական բնակչությունը, կոտորածը և սպանությունները գլխավորապես իրագործել են Ադրբեջանի հանրապետության զորքերը և երկրի մահմեդական բնակչությունը:

Այս սարսափները վերապրելուց հետո, կենդանի մնացած հայերը, որոնք շնորհիվ երկրի քրիստոնյա կամ հրեա բնակչության և նույնիսկ պարսկահպատակ մահմեդականների փրկվել էին, թաքնվել նկուղներում, մառաններում կամ գաղտնի այլ վայրերում, այդ հայերը ենթադրում էին և հաստատուն հավատ տածում, որ թուրքական իշխանությունը և Ադրբեջանի կառավարությունը մուտք գործելով քաղաք՝ կդադարեցնեին արյունալի անկարգություններն ու բոլոր բռնությունները: Նրանք առավել ևս իրավունք ունեին հույս տակարգություններն ու բոլոր բռնությունները: Նրանք առավել ևս իրավունք ունեին հույս տակարգությունների ավարտի հետ, քանի որ քաղաքի գրավման առաջին օրերին Կովկասի օսմանյան բանակի գլխավոր հրամանատարը, ինչպես նաև Ադրբեջանի հանրապետության վարչապետը պաշտոնապես հայտարարել էին, որ Ադրբեջանում ապրող բոլոր քաղաքացիները, առանց ազգային և կրոնական խտրականության, պետք է կառավարության կողմից արժանանային միևնույն վերաբերմունքին, որն ամենքի համար, հավասար հիմունքներով, պետք է պաշտպաներ բոլոր քաղաքացիների կյանքը, ունեցվածքն ու իրավունքները: Այս հանդիսավոր պաշտոնական խոստումները, ինչպես նաև հաղորդագրություններն ու լրագրային համապատասխան հոդվածները, ինչ վերաբերում է հայերին, միայն դիվանագիտական անհրաժեշտ հնարքներ էին՝ աղաղակող ճշմարտությունն արտաքին աշխարհից քողարկելու համար:

Եվ հիրավի, զանգվածային հանցագործություններից հետո, սկիզբ առավ Ադրբեջանի կառավարության աշխույժ, հարասև գործունեությունը, նախօրոք սահմանված մի գործու-

1 Թուրքերեն բառ, որը նշանակում է «զինվոր»:

խավորելով նրանց ձևական անվտանգությունը դրսից և մարդասիրական վերաբերմունք, խոստանալով վերականգնել նրանց սեփականությունները: Սակայն իրականում, անվտանգությունը և մարդասիրական վերաբերմունքը նրանց հանդեպ դրսևորվել են միայն այն բանում, որ բոլորը ճանապարհին կողոպտվել են ու ծեծվել, կանայք վայրագորեն բռնաբարվել, իսկ սեփականությունները վերականգնելու փոխարեն, կառավարությունը բռնագրավել է խաղողի ամբողջ բերքը և Գյուղատնտեսության նախարարության ու պետական ունեցվածքների վարչության միջնորդությամբ՝ աճուրդի միջոցով վաճառել մոտավորապես 200000 դույլ գինի՝ նրանց վերջին ունեցվածքը. այդ աճուրդներին վերաբերող ազդը, որը կրում էր Գյուղատնտեսության նախարար պ. Սուլթանովի ստորագրությունը, հայկական գյուղերի ցուցակով հանդերձ, տպագրվել է «Կասպի» լրագրում (թիվ 37):

3/ Չեքոսլովաکیայում և կալանավորմանը զուգընթաց՝ կամ կառավարության մանդատի հիման վրա, կամ պատասխանատվությունից զուրկ մարդիկ, իսկ ավելի հաճախ, պետական ծառայողները՝ հայերի բնակարաններում կատարում էին խուզարկություններ, որոնք օգտագործում էին յուրաքանչյուր նպատակահարմար պահ, արդեն կողոպտված մարդկանց ևս մեկ անգամ կողոպտելու և նրանց ընտանիքի պատիվը ոտնահարելու համար:

Մրան ավելացնենք, որ Թուրքիայի և Ադրբեջանի իշխանությունները, ինչ վերաբերում է հայերին, հայտնագործել են կողոպտուտի մի հատուկ եղանակ ու վճիռ կայացրել այդ մասին, որն անվանել են «խուզարկություններ»:

Հայերի լքված բնակարաններից, քանզի սեփականատերերը կամ սպանվել էին, կամ քաքնվել այլ բնակարաններում, կամ դեռ ավելին՝ թողել էին քաղաքը, բացահայտորեն, ամենքի աչքի առջև, գիշեր ու ցերեկ, բեռնատար ավտոմեքենաներով, սայլերով կամ սայլակներով տարել են տնային տնտեսության բոլոր իրերը, ամբողջ կահավորանքը՝ մինչև վերջին թելը: Այս կողոպուտը հետևողականորեն իրականացվել է երկու ամսվա ընթացքում և անընդմեջ շարունակվել մինչև քաղաքը դաշնակիցներին հանձնելու պահը: Հանձնմանը նախորդած վերջին օրերին, բոլոր փողոցները, հատկապես գիշերը, խճողված էին ավտոմեքենաներով, սայլերով, որոնք բեռնված էին կահույքով:

Հայերի բոլոր պահեստները, խանութները և կրպակներն ամբողջությամբ կողոպտվել են: Չտեղարանները բռնությամբ և կամայականորեն զբաղեցրել են մահմեդական առևտրականները, որոնք վաճառում են կամ իրենց իսկ գողացած, կամ չնչին գնով՝ պաշտոնական ու ոչ պաշտոնական կողոպտիչներից գնած ապրանքները: Այս ամենը, բնականաբար, իրագործվել է գերագույն իշխանության կատարյալ անտարբերության պայմաններում և, անկասկած, նույնիսկ նրա գիտությամբ ու համաձայնությամբ՝ ըստ նախօրոք մշակված ծրագրի:

Պաշտոնապես կողոպտված ունեցվածքների մի մասն աճուրդի միջոցով Ելիզավետպոլում բացահայտորեն վաճառել է հենց կառավարությունը. վաճառքներն ազդարարվել են տեղական թերթերում պաշտոնական ազդերի միջոցով:

Այն ամենի արժեքը, ինչը կողոպտվել է (ունեցվածքներ, բռնությամբ շորքված փող, ոսկե և արծաթե իրեր, թանկարժեք իրեր, ապրանքներ, հագուստներ, կոշիկներ, կահույք և այլն), շատ դժվար է ճշգրտորեն սահմանել: Բայց ըստ իրավասու անձանց, ըստ երկրի առևտրականների՝ միայն հայ բնակչության կորուստները կարող են, անշուշտ, գնահատվել ավելի քան մեկ միլիարդ ռուբլու սահմանում:

Ինչ վերաբերում է Բաքվի և նրա շրջանների նավթարդյունաբերությանը, որտեղ հայ ծառայողները և բանվորները (ավելի քան տասնհինգ հազար մարդ) ունեն բավական մեծ ներուժ, Ադրբեջանի կառավարությունը որդեգրել է առանձնահատուկ քաղաքականու-

թյուն՝ արդյունաբերական որևէ գործունեությունից հայերին ամբողջությամբ հեռացնելու համար: Ծառայողների ցուցակների կրճատման հետևանքով միայն հայերն են ազատ արձակվել ու տառապել: Կառավարությունը պաշտոնական հրաման է արձակել, ըստ որի նավթարդյունաբերության ոլորտում և գործարաններում ու ֆաբրիկաներում աշխատող բանվոր դասակարգը, որն աշխատանքի չի ներկայանա հնգօրյա ժամկետում, մինչ հոկտեմբերի 8-ը, պետք է դիտվի ազատ արձակված: Այս դեկրետն ուղղված էր բացառապես հայերի դեմ, որոնք հաշվի առնելով զանգվածային ձերբակալությունները, բանտարկությունը և իրենց կյանքի համար նվազ անվտանգությունը, հարկադրված են եղել ապաստան որոնել ու քաքնվել և չէին կարող, բնականաբար, աշխատանքի ներկայանալ, առանց որոնել ու քաքնվել և չէին կարող, բնականաբար, աշխատանքի ներկայանալ, առանց որոնում ոչ մի հայ աշխատանքի չի ընդունվի: Բոլոր նրանց, ովքեր համարձակություն են ունեցել գնալ Բալասահանի և Ալաշերտն թերակղզու նավթահանության այլ վայրեր, ձերբակալել են այդ վայրերի մահմեդականները, շատ հաճախ ոստիկանության օգնությամբ, մահվան սպառնալիքի տակ տարել են մի հաստատությունից մյուսը, մի պաշտոնյայից մյուսի մոտ և միայն գեյրմարդկային ջանքերից ու խնդրանքներից հետո ազատ արձակել. նրանք կարողացել են քաղաք վերադառնալ, բնականաբար, սարսափելի վախեցած ու սարսակաբար: Տեղի են ունեցել դեպքեր, երբ այդ վայրերը գնացած հայերը սպանվել են կամ անհետ կորել:

Վերը շարադրված փաստերը չնչին պատկերացում են տալիս այդ արյունալի կոտորածի և դաժան վրեժխնդրության հրեշավոր մանրամասների մասին, որոնց ճակատագրական անխուսափելիության շուրջ՝ քաղաքը հանձնելուն վերաբերող գրավոր նախագուշացումներում պաշտոնապես ազդարարվել էր հայերին: Դրանք նախապես առաջադրվել էին հրեշավոր խորաթափանցությամբ և իրագործվել անմարդկային սառնասրտությամբ:

Թուրքիայի և Ադրբեջանի իշխանությունները, գրավար ու բանավոր հայտարարել են և դեռևս հայտարարում են, որ տեղի ունեցած այս սարսափները հրահրվել են մարտի իրավարձությունների, անգլիացի դաշնակիցներին դիմելու և քաղաքի դիմադրության համար վրեժ լուծելու պատճառով:

Այս բացատրությունը, որը բնորոշ է իր կառավարական գործունեության ընթացքում այս նկատառումները որդեգրած Ադրբեջանի կառավարությանը արդարացնելու համար, ոչ մի կերպ չի բացահայտում իրադարձությունների հիմնական պատճառը:

Մարտ ամսի արյունալի պայքարը, որը տեղի է ունեցել ծայրահեղական իշխանության և Մահմեդական ազգային խորհրդի միջև, որևէ առնչություն չունի սեպտեմբերի սարսափների հետ: Մարտ ամսին իշխանության համար զինված պայքար է տեղի ունեցել բուն քաղաքում, պայքար, որն ընդունել է համաշխարհային [sic] հրեշավոր տեսք: Այդ պայքարի ընթացքում սպանվեցին ավելի քան 2000 մահմեդական և մոտավորապես 1200 ռուս ու հայ: Հայ զինվորների մասնակցությունը քաղաքացիական այդ պատերազմին հրահրվել էր բացառապես այս մահմեդականների ուխտադրուժ վարքագծով, որոնք թիկունքում և ռուս-բուլղարական ռազմաճակատում խառնաշփոթ հարուցելու նպատակով, հայերի համար փակել են բոլոր ճանապարհները և Թիֆլիսի ու Բաքվի միջև վագոններից դուրս քարշ տվել խաղաղասելու, անգն հայերին և նրանց վայրագորեն կոտորել ճանապարհորդների աչքի առջև:

Գեյրմանական և պարսկական ռազմաճակատի հայ զինվորները, որոնք շտապում էին

վերադառնալ իրենց տները կամ Կովկասի ռազմաճակատ, ձերբակալված և Բաքվում իրար գլխի թափված, անապաստան, կիսով չափ սովահար, չարացած մահմեդականների դեմ նրանց և մուսաֆաթականների կուսակցության ու «Վայրի դիվիզիայի» հանցավոր արարքների պատճառով, միացել են ծախսահեղականներին՝ նրանց դեմ աղղված այդ պայքարում:

Սակայն այստեղ գտնվող մահմեդականները չեն կարող ժխտել, անշուշտ, որ Բաքվի հայ բնակչության գիտակից և ինտելեկտուալ մասը, ճակատամարտի ամենաթեժ պահին, հաճախ վտանգելով իր կյանքը, փրկել է, թաքցրել և սրտաբաց ընդունել իր մոտ ոչ պակաս, քան 20000 մահմեդականի:

Նույնիսկ մարտի իրադարձություններից առաջ, երկրի մահմեդականների ամենամեծ և անգամ գիտակից մասը, հազվադեպ բացառություններով, որին առաջնորդել են թուրք գործակալները, ամեն կերպ և ակտիվորեն օգնել է Թուրքիայի քաղաքական հայացքների իրականացմանը՝ Կովկասը և Արևելքի մահմեդական այլ նահանգները զավթելու համար: Հայերն ունենալով միանգամայն հակադիր կողմնորոշում և իրենց թույլ ուժերով կռվելով դաշնակից երկրների հետ, բնականաբար, իրենց դեմ են հյուսիսի մահմեդականների կատաղի զայրույթը և Թուրքիայում, ինչպես նաև Կովկասում, դարձել նրանց խելացնոր վրիժառության ու կատաղի մոլեռանդության զոհերը:

Թվում է, թե մարտ ամսի իրադարձություններն ու դրանց հաջորդած անցքերը միայն հարմար պատրվակ են ճշմարտությունը թաքցնելու և հայերի ու մահմեդականների միջև առեւտրյան և հակակրանքի գլխավոր ու հիմնական խնդրից հայացքը շրջելու համար:

Բաքվի սարսափներն, անկասկած, մեզ են ներկայանում իբրև համաշխարհային պատերազմի սարսափագրու պատահար և քրիստոնյա հայ ժողովրդի դարավոր ողբերգության դրվագներից մեկը:

Այդ վատթար, անդառնալի, սարսափելի գործողությունն ի կատար են ածել Թուրքիայի և Ադրբեջանի իշխանությունները ոչ միայն հայ ժողովրդի, այլև իրենց սեփական ժողովրդի նկատմամբ՝ անշքահայեցության, ինչպես նաև վրիժառության և վայրագության չարաբաստիկ քաղաքականության հետևանքով:

Նրանց հանցավոր գործունեության ամենը զոհերը, նրանք, ովքեր մնում են իմ հավատացյալներից, այս պահին գտնվում են աննկարագրելի պայմաններում՝ թե՛ Բաքվում, թե՛ Բաքվի կառավարության Շենախս և Գյուլթեպե մարզերում: Մեծ մասն աղքատության եզրին հասած, մերկ, սովահար ու հիվանդ, ծնունդ ցրտերի հասնելուն ևեթ, նրանք աներկբայելիորեն դատապարտված են մահվան, եթե ժամանակին նրանց օգնություններ ու անհրաժեշտ հովանավորություն չցուցաբերվի:

Իմ հավատացյալները կարծում են և հաստատակամորեն հույս են տածում, որ դաշնակցային բանակների մուտքը Բաքու կդադարեցնի այս հրեշավոր հանցանքները, և ես, հոգևոր ներկայացուցչի իմ կարգավիճակով ու պարտավոր լինելով հայտնելու նրանց կարիքների մասին, դիմում եմ ձեզ, հարգանքով խնդրելով ձեռնարկել այն միջոցները, որոնք կարող են պատշաճ լինել:

1/ Որքան հնարավոր է արագ ազատ արձակել և ետ՝ Բաքու ուղարկել աննկարագրելի պայմաններում գտնվող երեք հազար հայ զերիներին:

2/ Պարսկաստանից, Կրասնովոդսկից Բաքվի փախստականներին ետ կանչել իրենց տուն՝ մոտալուտ ձմռան պատճառով:

3/ Հայերին վերադարձնել այն ունեցվածքները, թանկարժեք իրերը, որոնք բռնագրավել են Թուրքիայի և Ադրբեջանի իշխանությունները և փոխհատուցել հայերին բազում միլիոն-

ների հասնող կորուստների համար:

4/ Բարելավել հայերի ողբերգական կացությունը, մասնավորապես, նրանց, ովքեր գտնվում են Բաքվի կառավարության սահմաններում՝ քաղաքից դուրս:

(A.M.G., 7 N 1649).

Կապիտան Պուադեբարը՝ Խորհրդի նախագահ, Ռազմական նախարար պ. Կլեմանտյին

Երևան, 28-ը ապրիլի 1919 թ.:

Ես ձեզ եմ փոխանցում համառոտ շարադրված մի ուսումնասիրություն՝ 1914-1918 թթ. պատերազմի ընթացքում, ռուսական բանակի կողմից ռազմաճակատը լքելուց հետո, Կովկասի հայերի ունեցած դերի մասին: Այս ուսումնասիրությունն իմ խնդրանքով կազմել է հայկական կորպուսի հեծելազորային ջոկատի շտաբի նախկին պետ, կապիտան Իեզիազարովը՝ իր անձնական և կորպուսի հրամանատար, գեներալ Նազարբեկովի գրառումների հիման վրա: Այս հարցին նվիրված շատ ավելի ամբողջական մի ուսումնասիրություն պատրաստման ընթացքում է Թիֆլիսի հայկական պատվիրակությունում: Այն գրառումները, որոնք հետևում են, որքան էլ համառոտ, արդեն իսկ օգնում են ըմբռնելու այն դժվարին խնդիրը, որն իրենց վրա էին վերցրել Կովկասի հայերը՝ հավատարիմ մնալով դաշնակիցներին: Անբարենպաստ կացությունը, որում ներկայումս գտնվում է հայկական փոքրաբանակ բանակը, մեծապես պայմանավորված է Կովկասն ասպատակող թուրքական բանակի դեմ ուղղված այն անհավասար պայքարով, որում նա անհրաժեշտ է համարել ընդգրկվել: Նա այդտեղ կորցնում էր Սարիղամիշի, Կարսի և Ալեքսանդրապոլի իր բոլոր պահեստները: Սակայն չնայած բոլոր դավաճանություններին և անձնատրություններին, նա մինչև վերջ քաջարար կռվել է, հույս տածելով դաշնակիցների հաղթանակի հանդեպ: Իր կատաղի պայքարում, նա կանգնեցրել է թուրքական բազում դիվիզիաների և հետաձգել նրանց նվաճողական առաջխաղացումը դեպի Բաքու և Հյուսիսային Պարսկաստան: Արդյո՞ք մենք կարող ենք այդ մասին մոռանալ: Սարիղամիշի և Ղարաբաղիսայի ճակատամարտերը, որոնք կատարել են թուրքական առաջընթացը, նրան արժանացրել են հենց թուրք հրամանատարների գովեստներին:

(A.M.A.E., Europe 1918-1929, *Russie*, tome 626, f. 18).

1 Կապիտան Եղիազարովը:

ՀԱՎԵԼՎԱԾ

Կապիտան Եղիազարովի՝ հուշագիրը
Կովկասի հայերի դերը 1914-1918 թթ. պատերազմի ընթացքում՝
ռուսական զորքերի կողմից Կովկասի ռազմաճակատը լքելուց հետո
(1917 թ. դեկտեմբեր-1918 թ. մայիս)

[Պատճենը]:

Երևան, 28-ը ապրիլի 1919 թ.:

Թուրքիայի հայերի վիճակի բարելավման նպատակով Հայկական ազգային կոմիտեի կազմավորումը. 1912 թ. վերջերին, Պետրոգրադում կազմավորվեց Հայկական ազգային կոմիտեն, որը նպատակ ուներ մեծ տերությունների օգնությամբ հասնել Թուրքիայում հայ բնակչության անելանելի կացության բարելավմանը: Ֆրանսիայի, Անգլիայի, Ամերիկայի դեսպանները և Ռուսաստանի Արտաքին գործերի նախարարը համաձայնվեցին մասնակցել ձեռնարկված քայլերին:

Այդ քայլերը որոշակի հաջողություն ունեցան: Թուրքահայաստանի վիլայեթներում նշանակվեցին ազգությամբ հույանդացի և նորվեգացի գլխավոր տեսուչներ¹: Սակայն Թուրքիայի անբարյացակամ վերաբերմունքը վերջիններիս խանգարեց հասնել իրենց պաշտոնավարման վայրերը Հայաստանում: Բանի որ պատերազմ բռնկվեց, այդ հարցի մասին այլևս չխոսեցին:

1914 թ. պատերազմը և հայերի դիրքորոշումը. Կանխատեսելով Ռուսաստանի հետ պատերազմը, երիտթուրքական կուսակցությունը ցանկացավ ապահովագրել իրեն հայերի ռազմական գործողություններից: Նա դիմեց հայկական «Դաշնակցություն» կուսակցությանը և նրան առաջարկեց, Ռուսաստանի դեմ պատերազմի պարագայում, օգնել Թուրքիային. փոխարենը, նա խոստացավ պատերազմից հետո Հայաստանին ինքնավարություն շնորհել: «Դաշնակցություն» կուսակցությունը մերժեց այդ առաջարկը: Այնժամ, Թուրքիան հայերից պահանջեց մնալ չեզոք. ցանկալի պատասխան չտրվեց: Հայերը ցանկացան ակտիվ մասնակցություն ունենալ Թուրքիայի դեմ մղվող այդ պատերազմին: Իրենց կոմիտեների միջնորդությամբ, նրանք դրան մասնակցելու թույլտվություն խնդրեցին: Այսպիսով, նրանք ցանկանում էին պաշտպանել դաշնակիցների շահերի հետ ընդհանուր իրենց շահերը, այնուհետև՝ իրենց օջախները և ընտանիքները, որպեսզի դրանից հետո բարոյական իրավունք ունենային հաշտության կոնֆերանսում պահանջելու այն ժողովրդի ինքնավարությունը, որն այդչափ տառապել է:

Հայ կամավորական զորքերի կազմավորումը. Կառավարությունն իր համաձայնությունը տվեց հայկական ազգային զորքերի կազմավորմանը: 1914 թ. սեպտեմբեր ամսին ազգային հերոսներ Անդրանիկի, Դրայի, Ամազասպի² և Քենի [sic]³ հրամանատարությամբ ձևավորվեցին 4 ստորաբաժանում:

Յուրաքանչյուր ստորաբաժանման մեջ կային 1000-ից 1200 կամավոր: Այս զորքերի կազմակերպումը և մատակարարումը գլխավորում էր «Հայկական ազգային բյուրոն»:

1 Հայաստանի հանրապետության Ռազմական նախարարությունից:
2 Համապատասխանաբար՝ պ(արոնայ)ք Վեստեննեկը և Հոֆֆը:
3 Համազասպ:
4 Իմա՝ Քեոի:

Պահեստային զուցող գտնվում էր Երևանում:

Բացի դրանից, հայերը խանդավառությամբ համալրեցին Կովկասի ռուսական բանակի շարքերը: Ռազմական գործողությունների սկզբից ի վեր, պարտիզանական այս գործերը գործեցին Պարսկաստանում, Ալաշկերտի հովտում և Օլթիի ուղղությամբ ու արժանացան իրենց ռուս ղեկավարների գովասանական գնահատականներին: Ստորաբաժանումների բոլոր ղեկավարները պարզևատրվեցին Սուրբ-Գեորգի խաչով: 1916 թ. ամռանն այս ստորաբաժանումների թիվը հասնում էր 6-ի: Ռուսական բանակում դիտվելով իբրև կանոնավոր զորքեր, նրանք վերակազմավորվեցին հայ հրաձիգների զումարտակների և կազմեցին բրիգադա:

Ռուսական հեղափոխությունը և ռուսական զորքերի մեկնումը ռազմաճակատից. Ռուսական հեղափոխությունից և բուլշևիկյան հեղաշրջումից հետո, Կովկասի ռուսական բանակը 1917 թ. դեկտեմբեր ամսի վերջերին լքեց ռազմաճակատը և վերադարձավ հայրենիք, բողոնելով, որ Կովկասի ժողովուրդները միայնակ պաշտպանվեն առաջ ընթացող թշնամուց: Թուրքական ներխուժումից երկիրը պաշտպանելու համար էր, որ ձևավորվեցին ազգային զորքեր՝ հայկական, մահմեդական, վրացական և ռուսական կորպուսներ, լեհական ու հունական դիվիզիաներ:

Հայկական ազգային կորպուսի կազմավորումը. Գեներալ-լեյտենանտ Նազարբեկովը, 1914 թ., 1915 թ. և 1916 թ. ռուսական պատերազմի ընթացքում՝ Վանի, Մուշի, Բիբլիսի հերոսը, որը պարզևատրվել էր Սուրբ-Գեորգի խաչով և ֆրանսիական զինվորական մեդալով, գործի դրեց իր ամբողջ փորձն ու եռանդը կազմավորելու համար հայկական կորպուս, որի առաջնորդն ինքն էր:

Մահմեդականների, վրացիների և Անդրկովկասի հանրապետության կառավարության դիրքորոշումը. Մահմեդական կորպուսը երկրի պաշտպանությանը որևէ մասնակցություն չունեցավ: Փոխարենը, թուրք բանագնացների կողմից հրահրված մահմեդական բնակչությունը խանգարում էր հայկական կորպուսի կազմավորման աշխատանքներին՝ Սադախլու և Սանդար կայարաններում կանգնեցնելով ու կողոպտելով մատակարարման և ռազմամթերքների գնացքները, Երևանի, Կարաբիլիսայի, Մակուի և Ջուլֆայի ճանապարհներին հարձակումներ գործելով տրանսպորտային միջոցների վրա, կտրելով հեռագրային և հեռախոսային գծերն ու քանդելով երկաթուղային գծերը:

Կառավարությունը ոչինչ չարեց այս անիշխանությանը վերջ տալու համար: Վրացական կորպուսը ստանձնելով Բաթումի պաշտպանությունը, լքեց ռազմաճակատը դեպի Բաթում թուրքերի կատարած առաջին իսկ առաջխաղացումից հետո (1918 թ. ապրիլի 1-ին):

Հայերի նկատմամբ լինելով արտաքուստ բարյացակամ, վրացիներն իրականում ամուսն էին ամեն ինչ խոչընդոտելու համար հայկական կորպուսի կազմավորմանը: Զինվորների սակավության պատճառով, ռուսական կորպուսի և հունական դիվիզիայի կազմավորումն իրական արդյունքների չհանգեցրեց: Լեհական զորքերը մեկնեցին Լեհաստան:

Անդրկովկասի կառավարությունն ամենակարևոր պաշտոնները տվել էր վրացիներին, ուստի՝ չմայած հայկական զորքերի գերակշռությանը, նա խոչընդոտներ էր հարուցում այս զորքերի մատակարարման հարցում, մերժում ռազմամթերքներն ու շարժակազմը:

Այս դժվարին պայմաններում էր, որ ձևավորվեց հայկական կորպուսը և կառավարության, վրացիների ու մահմեդականների դրսևորած անբարյացակամության և երբեմն ատելության պայմաններում էր, որ նա, 5 ամիս շարունակ, միայնակ պայքարեց թուրքերի և թաթարների դեմ: Վերջիններս նրանց թիկունքում կտրում էին հաղորդակցության գծերը,

խանգարելով օժանդակ ուժերը և ռազմամթերքները ժամանակին տեղ հասցնելուն:

Հայկական ռազմաճակատը. Ռուսական զորքերի մեկնումից հետո, ռազմաճակատը պաշտպանվում էր միմիայն հայկական զորքերով: Երզնկայում՝ տեղում կազմավորված Երզնկայի գնդի կողմից, այդտեղից հեռացող ռուսական գնդերի հայ զինվորների հետ մեկտեղ: Երզրումում՝ Երզրումի գնդի կողմից, թուրքահայերից բաղկացած պահեստային գնդի հետ մեկտեղ: Խնուսից դեպի Վան՝ 2-րդ հայկական գնդի կողմից, թուրքահայերից բաղկացած Խնուսի և Ղարաքիլիսայի երկու գնդերի հետ մեկտեղ:

Վանի հարավում՝ 5-րդ գնդի կողմից, Վանի առաջին, 2-րդ և 4-րդ գնդերի (թուրքահայերի) հետ մեկտեղ: Մակուի երկաթուղու հսկողությունը վստահված էր Մակուի գնդին:

1918 թ. հունվարին կորպուսի, ինչպես նաև հատուկ դիվիզիայի և հեծելազորային բրիգադայի շտաբները գտնվում էին Թիֆլիսում:

Ալեքսանդրապոլում էր գտնվում 1-ին դիվիզիայի շտաբը, Երևանում՝ 2-րդ դիվիզիայի շտաբը:

Միաժամանակ կազմավորվեցին Սեպոյի [sic]¹, Մուրադի, Տեր-Ղևոնդյանի, Թորգոմի, Պանդուխտի և այլոց կամավորական զորքերը (խմբերը): 1-ին դիվիզիայի հրամանատարն էր գեներալ Ավերիանովը, 2-րդ դիվիզիայինը՝ գեներալ Սիլվկովը, հատուկ դիվիզիայինը՝ գեներալ Անդրանիկը:

Չորքերի կազմավորմանը զուգընթաց, գնդերն ու մարտկոցներն ուղարկվում էին ռազմաճակատ:

Թուրքական առաջխաղացումը. 1918 թ. հունվար. 1918 թ. հունվար ամսին էր, որ թուրքերը և քրդերը տեսնելով հայերի սարսափելի վիճակը՝ առաջ ընթացան դեպի Երզնկա և այն շրջափակեցին: Մի շարք արյունալի մարտերից հետո, Երզնկայի գունդը ճանապարհի հարթեց Եփրատի հովտով և փետրվարի 1-ին միացավ Երզրումի ստորաբաժանմանը: Այն մարտերը, որոնք հետևեցին Մելիջան-Թաքի Դարասի-Իլիջայում հայերի օգտին չէին. թուրքական հրետանին ավելի ուժգին էր: Ամբողջ փետրվար ամսվա ընթացքում մարտերը շարունակվեցին Երզրումի տարածաշրջանում:

